



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

# ՀԱՄԱՍՏԵՂ

ՄՈՌԱՑՎԱԾ ԷՋԵՐ

Հատոր Դ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՍՏԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2007



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Գիրքը հրատարակվել է  
**ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼ ՊԵՆԿՅԱՆ**  
հիմնարկության հովանավորությամբ

**ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ**

Կազմող՝  
բանասիրական գիտությունների դոկտոր՝  
**Մարգարիտ Մամիկոնի Խաչատրյան**

**Հ 204** **Համաստեղ**  
Մոռացված էջեր: Հատոր Գ: - Եր.: ԵՊՀ-ի հրատ., 2007 թ., 352 էջ:

Գրքում ներկայացված են Մփյուռքի հայ գրականության նշանավոր դեմ-  
քերից մեկի՝ Համաստեղի մի քանի ստեղծագործությունների դրամատիկա-  
կան տարրերակներ, ձեռագիր նյութերից:

ԳՄԴ 84 Հ - 6

ISBN 978-5-8084-0920-0

© ԵՊՀ հրատարակչություն, 2007 թ.  
© Մ. Մ. Խաչատրյան, 2007 թ.

Գրադարաններում եւ թանգարաններում տասնամյակների մեր փնտրտուքը սովորեցրեց, որ Համաստեղի գրականությանը, անձին առնչվող յուրաքանչյուր տող թանկ է ոչ միայն որպես պատմական փաստ, այլև արժեքավոր է ուսումնասիրողի, հետաքրքրասեր ընթերցողի համար: Համոզված ենք՝ Համաստեղի գրականության շատ գաղտնիքներ դեռ բացահայտված չեն, եւ Գուրգեն Մահարու օրինակով՝ մի քիչ նախանձում ենք նրան, ով դեռ նոր պիտի ոտք դնի այս հայաբույր ու հայաշունչ աշխարհը, որ կոչվում է Համաստեղի գրականություն, Համաստեղի Գյուղ:

Հատորում ընդգրկված են Համաստեղի մի քանի պատմվածքների, «Այծետոմար» երգիծական պոեմի դրամատիկական տարրերակներ, հայոց լեզվի, հայ հին եւ միջնադարյան գրականության պատմության հարցերին նվիրված էլույթների, հոդվածների տեքստեր եւ տարրեր առիթներով գրի առած խոհեր:

Համաստեղի ձեռագիրը դժվարընթեռնելի է (անընթեռնելի չասելու համար), բայց հաղթահարեցինք այդ դժվարությունը, որ հրատարակենք նրա ձեռագրերի գոնե մի մասը: Տեքստերում կան կրկնություններ, սակայն որոշեցինք խմբագրական միջամտությունից խուսափել: Հատորի ծանոթագրությունների բաժնում նշում ենք մատիտով ջնջած որոշ հատվածներ, նախադասություններ, բառակապակցություններ ու բառեր:

Ձեռագրերում շատ են բառերի գրության զուգաձեւությունները, կան արեւելահայերեն քերականական ձեւեր: Որոշ կետադրական միջամտություններ ենք արել: Համաստեղն ապաթարց գրեթե չի օգտագործում, եւ-ը գրում է մեկ տառով: Աստղանիշով բառերը բացատրված են գրքի վերջում՝ բառարանում: Եռանկյունի փակագծերում տրված են այն բառերը, որոնց ընթերցանության հարցում կասկածներ կան, կամ հավելել

ենք՝ միտքն ավելի հստակ դարձնելու համար: Նշված են անընթեռնելի բառերը, բառակապակցությունները: Փակագծերում տրված են նաև որոշ հոդվածների վերնագրեր:

2007թ. մարտ-ապրիլ ամիսներին, երբ «Համազգային»-ի հրավերով եղանք ԱՄՆ-ի հայաստան մի քանի քաղաքներում, մասնակցեցինք Համաստեղի մահվան 40-րդ տարելիցին նվիրված բազմաթիվ ձեռնարկների, որոնց գեղարվեստական մասն ընդգրկում էր «Երնէկ այն օրերում»-ի բեմադրությունը (բեմադրիչ՝ Հրանտ Մարգարյան), հատվածներ «Այծետամար» պոեմից, «Աղօթարան»-ից, բանաստեղծություններ, երգեր՝ Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը» երաժշտական դրամայից: Համոզված ենք՝ այս հատորի նյութերը կօգնեն գրողին նվիրված հանդեսների կազմակերպիչներին, ուսուցիչներին:

Ընդհանրապես Հրանտ և Ժանեթ Մարգարյաններին, հատորի խմբագրին ու սրբագրիչին, Հովհաննես Մկրտիչյանին, Ազգային գրադարանի, Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի քանդաքանի աշխատակիցներին:

Հատուկ շնորհակալություն «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժնի տնօրեն Ջավեն Եկավյանին՝ գրքի հրատարակության ծախսը սիրահոժար հոգալու համար:

\* \* \*

Այսպիսով՝ «Համաստեղ. «Մոռացված էջեր» գրքի 4 հատորներով փորձեցինք լրացնել Համաստեղի գրականության պատկերը՝ հաշվի առնելով 1989-ին Երեւանում հրատարակված «Հայաստանի լեռներու սրնգահարը» հատորի նյութերը: Համաստեղի գրականության պատկերն ամբողջական կդառնա դեռևս չվերծանված ձեռագրերի (հիմնականում սեւագիր են, չնայած այս դեպքում դժվար է հստակ տարբերակել գրողի ձեռագրի մաքուր ու սեւագիր տարբերակները) և «Մալիտակ Չիտորը» դյուցազնավեպի հրատարակությամբ: Բայց սա բարդ խնդիր է, և հիմա այդ մասին կարելի է միայն երազել: Փառք Աստծո, մեր կյանքում հրաշքներ դեռ կան. ամեն ինչ առջեւում է:

*Գրքի չորս հատորները նվիրում են մերս՝ Լենա Մարգարյանի, պրոֆեսոր Արշալույս Բարայանի և քարեկամիս՝ Անդրանիկ Ժամկոչյանի պայծառ հիշատակին:*

## ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ



## ՀԱՄԱՐՈՑԻՆ

Թատերգութեան վերածեց՝ Բ. Փափազեան

ԱՐԱՐ Ա

Գիւղական փողոց մը, Կարօ Մարտուպի տան առջև: Զարե նստարան, ցրուած կոճղեր ու քարեր՝ ծառերու տակ, որոնց վրայ կարելի է նստիլ:

Կը մտնէ Կարօ Մարտուպ բեմի ձախէն (ժողովուրդի աջէն): Կարօ Մարտուպ մեծոյի է, կնճռոտ ճակատով: Թաղիքէ գլխարկին շուրջ արախ-չին\* փաթթուած է, որ կը ծածկէ ականջներուն կէտը: Չեռքին՝ գաւազան: Կը նստի իր տան առջև՝ քարէ նստարանին: Նայուածքը՝ գետնին է, գաւազանով գետնին վրայ գիծեր կը գծէ, ապա կը զարնէ գետնին քանի մը անգամ, զայրոյթ կայ ամբարուած իր մէջ:

ԿԱՐՕ ՄԱՐՏՈՒՊ – (Առանց դառնալու դէպի տունը) Ա՛ կնիկ...

ԿԻՆԸ – (Ներսէն) Ի՞նչ է, մարդ:

ԿԱՐՕ ՄԱՐՏՈՒՊ – Եկուր:

ԿԻՆԸ – (Հայկական գիւղական առօրեայ տարազով, լաչակով բերանը ծածկած, կու գայ դուրս) Ի՞նչ է, մարդ:

ՄԱՐՏՈՒՊ (Լուռ զայրոյթով, զսպուած բարկութեամբ) – Էս ճղարայի\* տուփը ա՛ն, մէջը թիւթին լեցուր:

ԿԻՆԸ – (Տուփը առնելով) Ինչո՞ւ բարկացեր ես, մարդ:

ՄԱՐՏՈՒՊ – Թիւթինը պիտի բերե՞ս, թե՞ չէ:

ԿԻՆԸ (Կ՛անցնի ներս ու շուտով կը վերադառնայ ու ծխախոտին լիցուն տուփը կ'երկարէ մարդուն, կը քաշուի մէկ կողմ, ձեռքերը իրարու կապած՝ լուռ կը սպասէ):

ՄԱՐՏՈՒՊ – Եկեղեցիէն դուրս որ կ'ելլի, ի՞նչ տեսնեմ՝ հաւնիս... Էք-նօ Մարկոսին կինը, պասմայով շալվա՛ր ու կապերով կօշիկ հագած, թը-գըր-թըգըր եկեղեցիի ճամբէն տուն կ'երթար... Էնպէս կը քալէր, կ'ըսես քարերուն վրայէն Ս. Մարգարի ձիւն է կ'անցնի:

ԿԻՆԸ – Հա՛, է՛դ էր պակաս, շալվա՛ր, քաղքեմի կօշիկ... Ինչո՞ւ չէ, վաղն ալ շալվարին վրայ թող շանչուլ շարէ: Աստուած վկայ, որ էսպէս եր-թայ, էս գեղը կը փիկ, կը փիկ: (Դրան սեմին կը նստի, ձեռքը ներս երկա-րելով՝ պղնձէ խորունկ ափսէ մը կ'առնէ ու յաջորդ խօսակցութեան ըն-

թացքին մէկ կողմէն ցորեն կը մաքրէ): Գեղին մէջ ո՞վ է տեսեր պասմայով շալվար, գեղի կնկան ձեռքովը գործած կտաւէն շինուած շալվարի՞ն ինչ է եղեր... Կապերո՞վ կօշիկ, մեր Բարսեղ էմմիին կարած կօշիկները չե՞ն քաւեր, հը՞: Տահա էդպէս որ երթայ, այքերուն սիրմէ ըլ պիտի քաշէ: Ին-չո՞ւ չընէ, Նաճար Գրիգորը թող սաղ կենայ:

ՄԱՐՏՈՒՊ – (Դառնալով կնկան) Զա՛, կնիկ, Նաճար Գրիգորի՞ն ինչ:

ԿԻՆԸ – Դուն ալ աշխրըքէն պէխապար, ինչե՛ր կը խօսին, գեղի մը բերան ծամօն է դարձեր:

ՄԱՐՏՈՒՊ – Ինչո՞ւ, ի՞նչ կայ, կնիկ:

ԿԻՆԸ – Ի՞նչ տըլլի. Նաճար Գրիգոր գիշեր ու ցերեկ Մարկոսին տու-նէն դուրս չ'ելլեր: Վարդիկին դոճարա, պասմայով շալվարը Նաճար Գրիգորն է բերեր քաղաքէն: Ես ի՞նչ գիտեմ, մեղքերնին՝ վիզերնին:

ՄԱՐՏՈՒՊ – Ալ ինչո՞ւ կրակ չի տեղայ էս աշխարհքին վրայ, կնիկ. էս ի՞նչ օրերու մնացինք: Գեղացին թող աղօթք ընէ գոմշու էն լէն ճակտին, չէ մը էս Սողոմ Գոմոր է, Սողոմ Գոմոր: Մարկոսը չ'ըսե՛ր, թէ «Զա՛, կնիկ, էս շալվարը քեզի ուրկի՞ց»:

ԿԻՆԸ – Էրիկն ի՞նչ ըսէ, երկան իւլարը\* կնկան ձեռքն է, ուզած տեղը կը կապէ: Էրիկն ալ Վարդիկը տէի՛ խուր ու խուրպան կ'ըլլի: Անցեալ օր խնամի Մարանը կը պատմէր, որ կալ ու կուտի ատեն աղա, խաս տղա, շայնա ու գգիր թոփուեր էին Էքնոյենց արտը, կալը կը չափէին. է՛դ կուտ ու կրակ ատեն էս Մարկոսը քաղաք կ'երթայ, որ կնկան փորթուքալ\* քե-րէ, գուխը կը ցաւի տէի՛ կնիկը փորթուքալ ուզեր է: Որ աղբրտոք բաժնուեցան՝ գեղ մի գեղով Մարկոսը մեղադրեցին:

ՄԱՐՏՈՒՊ – Կնիկ, էս մարդ է՛ն՝ կ'ըսեմ, որ քթին տակ բուսած պե-խերուն արժեքը գիտնայ: Մարկոսին պեխերէն մէյ-մէկ շանձազ կը կախուի, պեխերէ՞ն ըլ չամչնար: Կնկան իւլարը, որ իր զլխին փաթթես ու ինքն իր հալին ձգես, Աստուած մի արասցէ, աշխարհը մրեղ-մրեղ\* կ'ընէ: Մինակ Էքնոյենց տունը չէ, կնիկ, Թաթուկենց տունը մրեղողն ըլ կնիկ էր. Բալուրցոնց տունը վերան ընողն ըլ էն պզտիկ հարսն էր, ալ ո՞ր մէկը ըսեմ:

ԿԻՆԸ – Է՛դ կողմէն մեր Մարուշին քախար լաւ է:

ՄԱՐՏՈՒՊ – Հէլպէթ լաւ է: Ես Մուրատ Ակոբի տղուն աղջիկ չէի նշա-նեթ, եթէ հօր ու մօր մէկ հատիկը չըլլար: Մեր աղջիկը վաղը, Մուրատենց տունը որ երթայ, աներոջ ու տաքերոջ ցաւ չունի քաշելիք. կեսուր մը ու կեսուր մը ունի: Էտկից գատ էս կինէ՞ ամեն հալով աղջիկ տուտը չէի. Մուրատ Ակոբը քառսուն մարդ որկեց գիս համոզելու, որ տղան մեր Մա-րուշին նշանէ: Դուն ըլ գիտես, որ տէրտէրն եկաւ, մերժեցի, Խոճապաշին

եկաւ, ըսի, որ «Բարի եկար, հազար բարի, ֆախաթ\* էղ մասին մի՛ խօսիք, աղջիկս տահա պզտիկ է»: Ալ ո՞վ ըսեմ. մինչև որ գնաց Չոփուրենց Մարգիսը գտաւ: Էղ բոլոր խօսքերը ականջս չէին թրջեր: Օր մը Մարխոնին երթած ատենս տեսայ, որ էս Մուրատը վար կ'ընէր: Իրիկունը եզներս ճամբու դրի ու գացի Մուրատին վարը տեսայ: Աֆէրիմ տղայ, խաթերը ենքան մանր ու խորունկ էր ձգեր, կ'ըսես մրճան է շարեր: Հա՛, էն օրը միտքս դրի, որ ալ չմերժեմ: Նուրիկ, Աստու աչքը Մուրատին վրայ ըլլայ. էնպէ՛ս վար մը կ'ընէ... Տեսնելու բան է, տեսնելու:

**ՄԱՐՄՈՒՑ** (Հազի 15 տարեկան աղջիկ մը, գիղական զգեստներով):  
**Չեռը՝** կաթին դոյլը լեցուն, կու գայ ձախէն ու կ'երթայ դէպի տան դուռը):

**ՄԱՐՍՈՒՊ** – Մարո՛ւշ: (Մարուշ կանգ կ'առնէ): Ալ նշանուած աղջիկ ես, առանց լաչակի դուրս չելլես, հասկցա՞ր:

**ՄԱՐՈՒՑ** (Առանց խօսք մը ըսելու, լաչակը կը շտկէ ու կ'երթայ ներս):

**ՄԱՐՍՈՒՊ** – Մուրատին անունը լսեց, ներս էկաւ, էղ լա՛ւ չէ, Նուրիկ, լա՛ւ չէ:

**ՆՈՒՆԻԿ** – Չէ՛, մա՛րդ, կովը կթած, կաթը ներս կը տանի եփելու:

**ԱԿՈՔ** – (Խնամի Ակոք կ'երեւայ բեմի ձախ կողմէն): Բարե՛ւ, խնամի:

**ՄԱՐՍՈՒՊ** – Աստու՛ւ բարին: Էս կողմ հրամմէ՛, խնամի՛ Ակոք: Մարո՛ւշ, խնամի Ակոքին մինտէր մը բեր:

**ՄԱՐՈՒՑ** (Մինտէրը կը բերէ, կը տեղադրէ հօր կողքին՝ քարէ նստարանին վրայ, կը քաշուի մէկ կողմ, ձեռքերը ծալած կը սպասէ, Ակոք կը մօտենայ, կը նստի, Մարուշ կը մօտենայ ու իր ապագայ կենտրոն ձեռքը կը համբուրէ, կը քաշուի մէկ կողմ):

**ՄԱՐՍՈՒՊ** – Տունով- տեղով ինչպէ՛ս են, խնամի՛:

**ԱԿՈՔ** – Փա՛ռք տիրոջ, լա՛ւ են, Մուրատն էսօր Հողդարի արտը կը ցանէ:

**ՄԱՐՈՒՑ** (Շարժումով մը իր ներքին յուզումը կը մատնէ Մուրատի անունը լսելուն, սակայն, անշուշտ, լուռ կանգնած է):

**ՄԱՐՍՈՒՊ** – Հա՛, խնամի՛, անցեալ օր տեսայ՝ Մուրատ շէնք-շնորհք սերմ կը նետէր: Էնոր տարիքին մենք սերմ ցանել ի՞նչ գիտէինք...

**ՆՈՒՆԻԿ** – Մարո՛ւշ, աղջիկս, խնամի Ակոքին զինի մը բեր:

**ՄԱՐՍՈՒՊ** – Նուրիկ, ինձի ըսիր՝ զինին թմներ է:

**ՆՈՒՆԻԿ** – Էղ զինին խնամի Ակոքին համար իմ պահեր:

**ՄԱՐՍՈՒՊ** – Զա՛, կնիկ, ես կ'ըսէի ծերութեանս ատեն Նուրիկ տահա ինձի հոգ պիտի տանի, խնամի ունեցար-չունեցար, զիս երեստ ձգեցիր հա, էխ, էխ, էխ: (Կը խնդան երկու խնամիներն ալ, Մարուշ զինին կը բերէ դրամով ու երկու պղնձէ թաս, կը դնէ հօր առջեւ, կը քաշուի մէկ կողմ):

**ՄԱՐՍՈՒՊ** – (Կը լեցնէ խնամիին ու իր թասերը, կը հրամցնէ խնամիին): Իշտէ՛ տպէս, խնամին պիտի գայ, որ մենք ալ խնամուն սեպապով\* զինի խմենք, էս խնամին ի՞նչ շուտ սիրուն եղաւ, էխ, էխ, էխ... Դէհ, բարի՛ եկար, Աստուած խերլին ընէ:

**ԱԿՈՔ** – Չեզ ողջութիւն, Աստուած Մուրատ ու Մարուշին շնորհն ատեցնէ: (Կը խմեն, Ակոք պիտերը սրբելով կը խօսի) Դէհ, ալ աշուն եկաւ, վաղը մէկալ օր այգեկութքն ալ կ'անցնի: Ես կ'ըսեմ հիմակուց հարսնիքի պատրաստութիւն տեսնեմ: Փա՛ռք Աստու, էս տարի ձեռքս կէյնի՛ք է, կ'երեւի՛ Մարուշի բախտն է: Հըմը, հըմը, 110 չէրէկ ցորեն վերցուցինք կալէն: Հաշի ըրէ, խնամի՛, հաշի ըրէ, մինակ Մարխոնիէն 40 չէրէկ ցորեն եկաւ. ես ինձի գիտեմ՝ էղ արտէն էղքան ցորեն հանած չէինք: Հեղ մը տեսնայիր, խնամի՛, էղ արտը փրփրեր, դուրս կը թափէր, հասկերն էնպէ՛ս ծանր, գուխնին էնքա՛ն ցած... Կ'ըսես՝ մեզմէ աղէկներ, հուրի-փերիներ հարսնիք են բռներ:

(Մարուշ կանգնած տեղը կ'երեւայ, կը ճօճուի՝ տարուած ներքին երեւակայութենէն):

**ՆՈՒՆԻԿ** – Մարո՛ւշ: (Մարուշ կ'անշարժանայ կրկին):

**ՄԱՐՍՈՒՊ** – Արտորնայու պէտք չունիս, խնամի՛, տահա ատեն շատ կայ հարսնիքի, այգեկութքն ըլ ներս կ'առնենք: Աստուած ողորմած է: Իսնակին\*, խնամի՛, Իսնակին:

**ԱԿՈՔ** – Հա՛, Իսնակին, էղ լաւ ըսիր, խնամի: Խերլին թող ըլլի, Իսնակին թող ըլլի: (Թաւը շրթներուն տանելով) Փա՛ռք Աստու, դուրսը մէկ փարա պարտք չունիմ: (Գաւաթը դնելով վար ու պիտերը սրբելով ձեռքին կռնակովը): Խնամի՛, ալ մենք մեզի ենք, մեջերնիս օտար մարդ չկայ, հալերնիս, վախտերնիս հիմա շատ լաւ է, հարսնիք ընելէն վերջ ձեռքս տահա եզան մը փարա կը մնայ: Հիմակուց հիմա եզայ պէտք չունիմ, եզներս կէնճ\* են: (Գինիի գաւաթը նորէն վերցնելով): Ըսել է՝ Իսնակին, հա՞:

**ՄԱՐՍՈՒՊ** – Հա՛, հա՛, Իսնակին, բամպակներն ալ ներս կ'առնենք:

**ԱԿՈՔ** – Էս տարի, որ տէրը ողջ պահեց, եօթը կարաս զինի պիտ լեցնեմ: Էնպէս հարսնիք մը ընեմ, որ գեղ մը գեղով ափ ի բերան մնան: (Կը պատրաստուի ելլելու, կը շտկուի, կօշիկները կը հագնի): Ըսել է էղպէս, Իսնակին: Է՛հ, մնա՛ք քարով, խնամի՛:

**ՄԱՐՍՈՒՊ** – Երթաս քարով, խնամի՛, Աստուծով՝ Իսնակին: (Ակոք կ'ելլէ դուրս): Կնիկ, էս թասերն ու զինին վերցուր, գեղացիք ո՛ր է, ուր չէ՛ կը հաւաքուին: Ես մեր դրացի Բարսեղին հալը հարցնեմ, գամ, տանիքէն իյնալէն ի վեր անկողինն է: (Դուրս):

ՆՈՒՆԻԿ – (Իր աման–չամանը հաւաքելով ու ներս երթալով): Մարո՛ւ, էդ թասերն ու գինին ներս բեր:

ՄԱՐՈՒԹ (Կը մնայ առանձին, աչքերը՝ գետին, մտածմունքի մէջ է):

ՆՈՒՆԻԿ – (Ներսէն) Աղջի՛ Մարո՛ւ, կիճէ՛ ի՞նչ եղաւ քեզի, էդ ամանները հաւաքէ՛:

ՄԱՐՈՒԹ (Կը ցնցուի, կ'երթայ թախտին քով, կը վերցնէ խնամի Ակոբին թասը, կը նայի մէջը ու կրկին կ'անշարժանայ: Բեմի ձախ կողմէն կը մտնէ իրեն տարեկից աղջիկ մը՝ Շուշիկ):

ՇՈՒՇԻԿ – Մարո՛ւ, (Մարո՛ւ կը ցնցուի) Մարո՛ւ, գիտե՛ս՝ Մուրառը Հողարի արան է:

ՄԱՐՈՒԹ – Հա՛, գիտեմ:

ՇՈՒՇԻԿ – Զալէ՛ երթանք ջուր բերելու, կարելի է՛ կը տեսնէք իրար:

ՄԱՐՈՒԹ – Չէ՛, չէ՛, Շուշիկ: Ա՛խ, էնպէ՛ս կ'ուզեմ հեղ մ'ալ տեսնեմ Մուրառը, հոգ չէ, թող հեռուէն ըլլայ: Անգամ մը միայն հանդիպեցայ իրեն, աղբիւրին ճամբան էր, լաւ է՛ կուժը չիճկաւ ուսէ ու չկոտորուեցաւ, էնպէս կը դողայի:

ՇՈՒՇԻԿ – Որ էդպէս է, քեզի կ'ըսեմ՝ քալէ՛ երթանք աղբիւր ջուրի:

ՄԱՐՈՒԹ – Չէ՛, Շուշիկ: Գեղին մէջ՝ հազար աչք, հազար լեզու: Մեր նշանաւորէն ասդին Մուրառ մեր տան դռնովն անցած չէ, վերջը պիտի ըսեն՝ Մուրառ ու Մարո՛ւ աչք-ուճք կ'ընեն իրարու, է՛հ, հայրս ալ որ իմանայ... Չէ՛, Շուշիկ, չէ՛, չ'ըլլար:

ՆՈՒՆԻԿ – (Ներսէն) Աղջի՛ Մարո՛ւ, էդ գինին ու թասերը ի՞նչ եղան: (Շուշան կը փախչի դուրս: Դրան մէջ կ'երեւայ Նուսիկ) Աղջի՛, ի՞նչ է եղեր քեզի, շո՛ւտ ըրէ:

ՄԱՐՈՒԹ (Գինիի դրոմն ու թասերը առնելով՝ ներս կ'երթայ):

(Խորքէն կու գան Կարօ Մարսուպ, Սրապ Դուկաս, Արգար Թումաս, Արեւիկ Դուկաս, Չիչօ Գրիգոր, Մելքոն: Կու գան իրարու հետ, իրարու ետեւ, խօսակցելով: Կը նստին Մարսուպի տան առջեւի նստարանին ու զանազան քարերուն):

ՄԱՐՍՈՒՊ – Որ տպէս երթայ, էս գեղը պիտի փլի, պիտի փլի: (Կը տեղաւորուի, սիկարա մը կը փաթթէ, կը վառէ, ուրիշներ ալ կը հետեւին իր օրինակին) Վախտին, էդէ՛, իշխան, մեծ ու պզտիկ կար գեղին մէջ, խէր, պէրէքթ կար:

ԱՐԵՎԻԿ ԴՈՒԿԱՍ – Ի՞նչ կայ, Մարսու՛պ:

ՄԱՐՍՈՒՊ – Տահա ի՞նչ ըլլի: Էսօր էնպէ՛ս քաներ տեսայ, էնպէ՛ս քաներ լսեցի: Ինչպէս ըսի, էտէ՛ց խէր, պէրէքթ կար: Զանի մը չէրէկ ցորեն կը ցանէինք, կալին լեռայ շափ չէճ կը վերցնէինք: Պարտքն ինչ է, չկար:

Թագաւորին կու տայինք, աղային կու տայինք, եկեղեցիին կու տայինք, նորէ՛ն փեթակ ամպար ցորենով կը լեճար: Հաշի ըրէ՛, Թորկանց տունը քառսուն հոգի սեղան կը նստէին: Վախտին ար-մամուս\* կար, ամէն մարդ իր նամուսին տէրն էր:

ԱՐԳԱՐ ԹՈՒՄԱՍ – Ախր ի՞նչ է եղեր, Մարսու՛պ:

ՄՐԱՊ ԴՈՒԿԱՍ – (Հասկնալ ձեւացնելով Մարսուպի խօսքերը) Ըսել է՛ տահա չհասկցա՞ք:

ՄԱՐՍՈՒՊ – Ալաֆրանկա՛, ալաֆրանկա՛... Չը ըլ ամչնար, իրիկուն-առտու ժամ կու գայ, խաչհամբոյրի կը մօտենայ: Ճահիլ կնիկ ըսածդ մինչի քքին ծէրը կը ծածկէ լաշակով: Էսօրը մինչի ճակտին կէտը քաց է: Կ'ըսես մէյտան է, մէյտա՛ն: Ալ ի՞նչ ըսեմ՝ պասմայով շալվա՛ր, կապերով դոճարա՛յ...

ԱՐԵՎԻԿ ԴՈՒԿԱՍ – Ես քան չհասկցայ:

ՄԵԼՔՈՆ – Ծօ՛, ալ ի՞նչ ըսէ, լուս որ ըսէ՛ լուսկայ հասկցիր:

ՉԻՉՕ ԳՐԻԳՈՐ – Էսօր ես ըլ տեսայ, Մարսու՛պ: Էդ ի՞նչ կէտիշ\* է: Էդ հարսին չըրածը չմնաց, էքնօյեճ շէն տունը տակնուվրայ ըրաւ: Ես ի՞նչ գիտեմ, ելաւ ձէճձեճ, քէ տէքը իրեն ծուռ աչքով կը նայի:

ՄԱՐՍՈՒՊ – Էս կնկան երեսէն կ'ելլէ, Գրիգո՛ր, երես մը ունի, կ'ըսես մեռն չէ տեսեր:

ՄԵԼՔՈՆ – Հիմա ըլ ուզածին պէս կ'երկնայ–կը կարճնայ: Չիչօ՛ Գրիգոր, էն օրը, որ Մարկոս ջրտուրի կ'երթայ, էն օրը, որ քաղաք քամ-պակ կը տանէ, մութն ու լուսուն մարդը քը՛սդ ներս կը մտնէ:

ԱՐԳԱՐ ԹՈՒՄԱՍ – Ի՞նչ կ'ըսես, Մելքո՛ն, գիտե՛ս:

ՄԵԼՔՈՆ – Արգա՛ր Թումաս, ինչ ըսեմ, աչքովս տեսայ:

ԹՈՒՄԱՍ – Ի՞նչ... Մա՛րդ կը սիրէ:

ՉԻՉՕ ԳՐԻԳՈՐ – Հա՛, հա՛, երկն ըլ գիտէ, կ'ըսեն: Կիճէ կնիկը տէի՛ խենդ կ'ըլլայ:

ԹՈՒՄԱՍ – Չըլլի, որ ... Աղբիւրին դիմացինը...

ՄԵԼՔՈՆ – Հա՛, հա՛, գիտցածդ է...

ԱՐԵՎԻԿ ԴՈՒԿԱՍ – Ես ձեզի քան մը ըսեմ: Ես քան չհասկցայ:

ՄԵԼՔՈՆ – Իրա՛ւ չես հասկնար, Արեւիկ Դուկաս:

ԴՈՒԿԱՍ – Կը խօսաք, քաներ մը կ'ըսէք, ես քան չեմ հասկնար:

ՉԻՉՕ ԳՐԻԳՈՐ – Չեմ հասկնար՝ ինչու կը ցանէք, իշտէ՛ Նաճար Գրիգորն է, հասկցա՞ր, Արեւիկ Դուկաս, գեղ մը գեղով գիտէ:

ԱՐԵՎԻԿ ԴՈՒԿԱՍ – Հիմա Նաճար Գրիգորը Մարկոսին կնի՛կը կը սիրէ, էդպէ՛ս: Ա՛, հասկցա՛յ, հա՛ս... կը՛... ցա՛յ...

**ՄԱՐՍՈՒՊ** – Իմ ասեմս, եղա՛, իշխան, կը բռնեին եղ տեսակ կնիկը ու սելին վրայ նստեցուցած՝ գեղին չորս կողմը կը դարձնեին... Մեռելին ետեմն խօսալը լաւ բան չէ, ֆախաթ եղած բան է, ես Չիւիտ Գոգոյին մօրը, հեռու ձեր օճախէն, լէչէկը գլխէն հանեցին, գլխիբաց սելին վրայ նստեցուցին:

**ՄՐԱՊ ՂՈՒԿԱՍ** – Ողորմած հոգի մէրս կը պատմէր, որ Բալուրցոնց տունը լաւ գումնա փչող մշակ մը կու գայ. ամա ի՛նչ մշակ... Մէկ չէրէկնոց ճուալը մէկ ձեռքով կը վերցնէ եղեր: Չիւիտին մեծ մայրը եղ մշակին գումնա փչելուն ու ուժին է վառեր:

**ՄԱՐՍՈՒՊ** – Էտնք իմ օրով եղած բաներ են, ես շատ բան չեմ յիշեր, մինակ կը յիշեմ, որ եղ կնիկը սելին վրայ երեսն ի վար ինկեր, մազերով երեսը ծածկեր, կու լար, սելը քաշողը Պոգոյեմց երկու գոմէշներն էին: Հիմա որո՛ւն ինչուն պէտքն է:

(Հեռուէն կ'երեւայ Նաճար Գրիգոր ու կը մօտենայ նստողներուն: Արեւիկ Ղուկաս կը հազայ ու նիւթը կը փոխէ):

**ԱՐԵՒԿ ՂՈՒԿԱՍ** – Ըսել է՛ տօր Մարխոնին կը վարէիր, Սրա՛յ: Բարե՛ւ, Նաճար Գրիգոր, բարե՛ւ:

**ՆԱՃԱՐ ԳՐԻԳՈՐ** – Աստճո՛ւ բարին:

**ԱԲԳԱՐ ԹՈՒՄՍՍ** – Նաճար, վաղը եղ արօրը բերեմ, շինէ՛:

**ՆԱՃԱՐ ԳՐԻԳՈՐ** – Հա՛, Թումաս, բեր, շինեմ: (Կը նստի: Ինք հազի նստած՝ Կարօ Մարսուպ ոտքի կ'ելլէ ու կը հեռանայ):

**ՆԱՃԱՐ ԳՐԻԳՈՐ** – (Չարմացած կը նայի ետեւէն) Ի՞նչ է եղեր, ի՞նչ կայ:

## ՎԱՐԱԳՈՅՐ

### ԱՐԱՐ Բ

#### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Գիւղին դաշտերը տանող ճամբան. խորքի վարագոյրը արտեր կը ներկայացնէ՝ հնճուելու վրայ: Տեղ-տեղ՝ մէկ-երկու ծառ, խորքը՝ հեռուն՝ լեռներ:

Մարուշ կը մանէ մէկ կողմէն: Չեռքին կայ հօրը տարուելիք հացի ծրարը: Կանգ կ'առնէ, ձեռքը ճակտին դրած՝ կը դիտէ հեռուն, երկու քայլ կ'առնէ, կողքէն ու ետեւէն կը լսուի Մուրատի փսփսուցով ձայնը:

**ՄՈՒՐԱՍ** – Մարու՛շ, Մարու՛շ:

**ՄԱՐՈՒՇ** (Արտորանքով երկու քայլ կ'առնէ, փախչելու պէս):

**ՄՈՒՐԱՍ** – Մարու՛շ, կեցի՛ր, Մարու՛շ: (Մարուշ կանգ կ'առնէ՝ կռնակը դարձուցած տղուն: Կ'երեւայ Մուրատ: Մարուշ կը դառնայ տղուն, կը մնայ անշարժ արձանի պէս) Հօրդ հա՛ց կը տանիս: (Մուրատ երկու քայլ կ'առնէ, բաւական կը մօտենայ Մարուշին) Մարու՛շ, եզներս Հողդար ձգեցի, ճամբադ պահեցի: (Լռութիւն: Մուրատ կ'առնէ վերջին քայլն ալ ու արդէն կանգնած է Մարուշին շատ մօտ՝ ճիշդ դիմացը՝ աչքերուն մէջ համրոյրին ծարաւը, ծարաւին կրակը): Մարու՛շ:

**ՄԱՐՈՒՇ** – Մուրատ, մա՛րդ կը տեսնէ, Աստուա՛ծ իմ, մա՛րդ կը տեսնէ, գեղ մը գեղով խայտառակ կ'ըլլամ:

**ՄՈՒՐԱՍ** – Մարու՛շ (Թեւերուն մէջ կ'առնէ Մարուշը, Մարուշ կը դիմադրէ): Հեղ մը, Մարու՛շ:

**ՄԱՐՈՒՇ** – (Թայրտալով տղու թեւերուն մէջ) Չէ՛, չէ՛, Մուրատ, ամօ՛ք է, ա՛խ, Աստուած իմ, հա՛յրս, Մուրատ, հա՛յրս... (Մուրատ կը համբուրէ Մարուշը: Մարուշ ե՛ւ կը դիմադրէ, ե՛ւ կը յանձնուի: Կողքի ծառերուն մէջէն լը լսուի խշրտուք մը: Մարուշ կը ցնցուի, կը հրէ Մուրատը, մտիկ կու տայ):

**ՄԱՐՈՒՇ** – Մուրատ, տեսա՛ն մեզ: Մուրատ, աւելի լաւ էր՝ ես մեռնէի:

**ՄՈՒՐԱՍ** – Չէ՛, չէ՛, եղպէս մի՛ ըսեր, եղպէս մի՛ ըսեր:

**ՄԱՐՈՒՇ** – Հայրս որ իմանա՛յ...

**ՄՈՒՐԱՍ** – Մարդ չկար, Մարու՛շ, մարդու ոտքի ձայն չէր, երեւի այժմ երես:

**ՄԱՐՈՒՇ** – Չէ՛, չէ՛, մարդ էր, ես գիտեմ, կը զգամ: Գնա՛, Մուրատ,

չո՛ւտ գնա:

**ՄՈՒՐԱՍ** – Մարու՛շ:

**ՄԱՐՈՒՇ** – Չէ՛, գնա՛, Մուրատ:

**ՄՈՒՐԱՍ** (Կ'անհետի թուփերուն մէջ):

**ՄԱՐՈՒՇ** (Կը մնայ անշարժ ու աչքերը սեւեռած՝ Մուրատի գացած կողմը: Գլխու լաչակին ձեւը արուած է քիչ մը. աչքերուն մէջ սակայն կրակը կայ չյագեցած սիրոյ):

**ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ** – (Չայնը բեմի աջ կողմէն) Աղջի՛ Մարուշ... (Մարուշ կը ցնցուի, կռնակը կը դարձնէ Մուրատի գացած կողմը, ձեռքէն ինկած հացի ծրարը կը վերցնէ ու կը պատրաստուի քալել դէպի հօր ձայնին կողմը: Կ'երեւայ Մարսուպ, բեմի աջէն: Քրտնած, յոգնած, ձեռքին մանգաղ Աղջի՛, եղ հացը ո՛ր մնաց: (Մարուշ ծրարը կ'երկարէ) Աղջի՛, եղ մէրդ ինչո՛ւ չեկաւ ու քեզ դրկեց:

**ՄԱՐՈՒՇ** – Մայրս տունը գործ ունէր, ըսա՛ւ տօր հացը դու տար:

**ՄԱՐՍՈՒՊ** – Տա՛ր ծրարը, հէ՛, հո՛ն, ծառին տակ դիր: Ետքը գնա, բամպակի վարի կորիին մէջի դրունը փրցուր, տո՛ւն տար, տօր տեսայ՝ բաւական ժրեր\* է:

ՄԱՐՈՒԸ (Կը մնայ կանգնած, աչքերը՝ հեռուն՝ Մուրատի զացած կողմը):  
ՄԱՐՍՈՒՊ – Մարուշ, քեզի կ'ըսեմ, ի՞նչ է, հիւս՛նդ ես, ինչո՞ւ սառել  
կայնեք ես:

ՄԱՐՈՒԸ – (Կը շարժի դեպի դուրս՝ քեմին աջը, հոր եկած կողմը, կանգ  
կ'առնէ, կը դառնայ հորը) Դժուրն ո՞ր կորիքին մէջ է:

ՄԱՐՍՈՒՊ – Վարի՛ կորիքին, վարի՛ կորիքին, ըսել է՝ չլսեցի՞ր, Մարու-  
քեմն արտին կողմը: (Մարուշ կը քալէ, երբ կը հասնի քեմի կողքին) Մա-  
րուշ (Մարուշ կանգ կ'առնէ ու կը դառնայ հորը), տուն որ երթաս, էդ թեւ-  
բուր շաւաները հանէ: Ի՞նչ է, հարսնի՞ք է, թէ Չատիկ: Էդ տեսակ ճիլի-  
պիլի բաները ամօք բաներ են: Էդ լաչակդ աղէկ շտկէ: (Մարուշ կ'ելլէ  
դուրս: Մարսուպ երկար կը նայի ետեւէն: Բեմի ձախ կողմէն՝ գիւղի կող-  
մէն, կը լսուի Մարուշի մօր ձայնը):

ՆՈՒՆԻԿ – Աղջի՛ Մարուշ... Ո՞ր մնաց էս աղջիկը: Մարուշ (Ու կ'ե-  
րեսայ քեմին վրայ): Արիմա՛րդ, էդ աղջիկը հացդ քերա՞ւ: (Մարսուպ լուռ է,  
հերստտած) Քեզի եմ, արիմա՛րդ:

ՄԱՐՍՈՒՊ – (Չոր) Հա՛, քերաւ:

ՆՈՒՆԻԿ – Հերստտեք ես, մարդ, ի՞նչ է եղեր:

ՄԱՐՍՈՒՊ – Հէլպէք կը հերստտիմ, բանի, գործի ատեն շաւաները  
թեւէն պակաս չեն: Ի՞նչ է, հարսնի՞ք է, թէ՞ Չատիկ:

ՆՈՒՆԻԿ – Ի՞նչ կ'ըլլայ, արիմա՛րդ, նշանուած աղջկայ հաւաս է:

ՄԱՐՍՈՒՊ – Հա՛, հա՛, նշանուած աղջիկ ըսելով՝ էսօր շաւաները թող  
թեւէն չհանէ, վաղն ըլ նշանածը դրան վրայէն կ'անցնի տէյի, թող փարշն  
առնէ, աղբիւր վազէ:

ՆՈՒՆԻԿ – Մարդ, ճահել աղջիկ է:

ՄԱՐՍՈՒՊ – Չէ՛նդ, ճահել աղջի՛կ է, քու ժամանակդ դուն ճահել աղ-  
ջիկ չէի՞ր: Հայտէ՛, գնա՛ վարի կորիքն, աղջիկդ հոն է, դժուրն խոշորցեր, ժը-  
րեր է, ըսի, որ տուն տանի:

ՆՈՒՆԻԿ – (Կը քալէ դեպի դուրս, վարագոյրը կ'իջնէ արտերուն ու  
դաշտերուն վրայ):

### ՎԱՐԱԳՈՅՐ

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՒՂԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ, ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԿԸ

Նախորդ տեսարանի խորքի պաստառը, որ գիւղի դաշտերը կը ներ-  
կայացնէր, արագօրէն վեր կը քաշուի: Երեսան կու գայ պաստառ մը, որ  
գիւղի եկեղեցին կը ներկայացնէ՝ իր բաց դուռով: Եկեղեցիին քովը բաց  
տարածութենէ մը ետք տուներ կ'երեւին: Հեռուն դաշտերն են մտրէն ու  
լեռները: Բեմի կողքին նախորդ տեսարանի կողքի խաւաքարտերն են,  
կամ այլ խաւաքարտեր՝ ծառեր ներկայացնող: Մրահէն դիտած՝ եկեղե-  
ցին պաստառին աւելի ձախ կողմը կ'իյնայ: Մրահէն դիտած՝ քեմի առա-  
ջամասին մօտերը երկու պառաւ կը խօսակցին: Եկեղեցիէն դուրս ելած ու  
դրան առջեւ են, ու կամաց-կամաց խօսակցող պառաւներուն կը մօտե-  
նան ուրիշ կիներ՝ զանազան տարիքի:

ՉԱՐԴԱՐ – Ախր կը խօսին, Հոռո՛ւ, ես ի՞նչ գիտեմ (Քթախտտին տու-  
փը կ'երկարէ):

ՀՈՌՈՓ – Չահար Կարօ Մարսուպն ըլ կ'ըսէ՛ ես աղջիկ ունիմ:

ՉԱՐԴԱՐ – Մարուշէն ո՞վ ումնիշ կ'ընէր\*, մէրս, քուրս. սուրբի պէս  
աղջիկ էր:

ՀՈՌՈՓ – Մի՛ ըսեր, Չարդա՛ր, խելօք կատուն է գողցեր ժամուն մտը:  
Հիմակու աղջիկնե՛րը... (Քթախտտը քքին ծակերէն վեր խոռացելով) Հի-  
մակու աղջիկները պոյ մը գետնին վրայ են, պոյ մը գետնին տակ: Մուս  
ըլլայ, Չարդա՛ր:

ՉԱՐԴԱՐ – Մո՛ւտ ... Տեսնող կայ եղեր, Հոռո՛ւ, էնպէս գրկուեր են, որ  
մէջերնին հով չ'անցնիր եղեր:

ՀՈՌՈՓ – Թո՛ւ, սէր է եկեր սոխնոցներ: Ես ի՞նչ գիտեմ, մէ՛րս, քո՛ւրս,  
տարի մը նշանուած մնացի, նշանածիս երեսը չտեսայ: Հիմակուայ աղ-  
ջիկները չեն ըլ պարտկուիր: Աստուած օճախ-պուճախէ հեռու ընէ, աղջ-  
կայ ու տղի տէր ենք:

ՍՈՒԳԻԿ ԽԱԹՈՒՆ – (Կը մօտենայ իրենց: Յաջորդ խօսակցութեան  
ընթացքին կին մը ես կը մօտենայ խումբին ու ունկնդիր կ'ըլլայ՝ գուլսը  
շարժելով միշտ, իբրեւ հաւանութեան կամ ցաւի նշան: Մէկ-երկու կին ալ  
առանց խումբին քով գալու, քեմի ձախ կողմէն դուրս կ'ելլեն, մէկ-երկու  
տղամարդ ալ կը սկսին եկեղեցիէն դուրս գալ ու կու գան քեմին աջ կողմը՝  
ծառի մը տակ, քիչ մը ետեւօք):

ՉԱՐԴԱՐ – Ողորմի՛ Աստուած:

ՍՈՒԳԻԿ ԽԱԹՈՒՆ – Ողորմի՛ հոգուդ, Չարդա՛ր, էսօր ուշ մնա-  
ցեր ես:

ՉԱՐԴԱՐ – Հոռո՛ւին հետ խօսքի քննուեցանք:

ՍՈՒԳԻԿ – Լսեցի, որ տղադ կը նշանես:

**ՉԱՐԴԱՐ** – Է՛հ, ո՞ր է, ադամորդու աղջիկ մը որ ըլլի... Հիմակու աղ-  
ջիկները մինչև երկանցը տունը երթալու չափ սապր\* չունին: Լսեցի՞ր  
Կարօ Մարսուպին աղջկան շնորհքը:

**ՍՈՒԳԻԿ** – Ի՞նչ կայ, Չարդար:

**ՉԱՐԴԱՐ** – Գեղին բերանն է ինկեր, դուն ըլ բանէ լուր չունիս: Երէկ  
նշանուեցան, էսօր ճամբուն վրայ չախչախ լէլի կը խաղան. փշերու ճամ-  
բուն վրայ պաչպչուկի ձէնը եայլան է բռներ: Երթամ, մէ՛րս, քո՛րս, երթամ,  
աղէկ միտքս ինկաւ, կովը տահա չեմ կթեր, խեղճ հայուանը հիմա աչքը  
հայոց եղաւ:

**ՍՈՒԳԻԿ** – Ո՞վ է տեսեր, Չարդար:

**ՉԱՐԴԱՐ** – Ես ի՞նչ գիտեմ, գեղին բերանն է, գեղին բերանը, Սուգիկ:  
(Կ'երթայ: Միս կիններն ալ իրարու հետ խօսելով, կամաց-կամաց կ'ելլեն  
բեմի ձախէն, մինչ անդին մէկ-երկու տղամարդ եւս եկած կանգնած են աջ  
կողմի ծառին տակ: Կարօ Մարսուպ կ'ելլէ եկեղեցիէն, հետը՝ գիւղացի մը:  
Կու գան, կը միանան ծառին տակ կանգնողներուն):

**ՄԱՐՍՈՒՊ** – Ողորմի՛ Աստուած:

**ԾԱՌԻՆ ՏԱԿ ԵՂՈՂՆԵՐԸ** – Ողորմի՛ հոգուդ, Մարսուպ:

**ՄԱՐՍՈՒՊ** – Էդ Մարգարենց ջուրի խնդիրը ինտո՞ր վերջացաւ:

**ՄԷԿԸ** – Անցեալ օր նորէն կռուեր են ջուրին համար:

**ՄԱՐՍՈՒՊ** – Աղուոր բան չէ, ամօք է: Չեւ մը գտնալու, հաշտեցնելու  
է: (Եկեղեցիէն դուրս կու գայ Էքնոյենց հարսը՝ Վարդեր՝ զարդարուն,  
բարձր կօշիկ հագած, պասմայով շալվար: Երկուքի հիւսած երկար մա-  
զերու ծայրերէն կախած է պոյմաղ: Կը քալէ շորորուելէն: Կարօ Մար-  
սուպ ալ չի կրնար ինքզինք զսպել: Արախչիին ծայրը ծալքին մէջ տեղա-  
տրելու պահուն կը նշմարէ Վարդերն ու անոր շորորալով քալելը. շար-  
ժունը կը մնայ օդին մէջ. նայուածքով կը հետեւի Վարդերին, որ դէպի բե-  
մին ձախը կ'երթայ):

**ՄԱՐՍՈՒՊ** – Շորորա՛, խանը՛մ հարս: Էդ քի՛չ է, քի՛չ, տահա՛ շորորա:

**ՎԱՐԴԵՐ** – (Կանգ կ'առնէ, ետ կը նայի ու...) Ջեզի ի՞նչ, խոֆած\*:

**ՄԱՐՍՈՒՊ** – Անամօթին նայէ՛, հապա որո՞ւ ինչ: (Աչքերը լայն կը բա-  
նայ, ձեռքերը կը դողան): Ջեզի համար Աւետարանին մօտենալ հարա՛մ  
է, հարա՛մ: Ես էդ տերտերին ինչ ըսեմ, որ...

**ՎԱՐԴԵՐ** – Դուն գնա՛, աղջկանդ փշերուն տէր եղիր: Ջեզի ի՞նչ իմ  
շորորալս: Հեղ մը ականջդ ետեւ ըրէ, թէ աղջկանդ վրայ ի՞նչ կը խօսին:

**ՄԱՐՍՈՒՊ** – Թը՛գ-թը՛գ, հմա՛ որ հասնիմ, էդ լեզուդ քոքէ՛ն կը քաշեմ,  
անամօթին բանը նայէ՛:

**ՎԱՐԴԵՐ** – Է՛, դուն ի՞նչ գիտես, խոֆած: Աղջկանդ լաչակը ծառին  
գլուխն է ելեր: Գեղ մը գեղով գիտեն: Փշերուն ճամբուն վրայ նշանածին  
հետ պաչպչուկին ձէնը գեղն է բռներ:

**ՄԱՐՍՈՒՊ** – (Ինքնիրմէն ելած՝ կ'ուզէ վազել հարս Վարդերին վրայ,  
դրացի Մարգար կը բռնէ զինք):

**ՄԱՐԳԱՐ** – Դուն քեզի եկ, դրացի՛, կնկայ հետ չափուիլը լաւ բան չէ:  
Եկ երթանք: Կնկայ հետ կռիւ բռնելը ամօք բան է:

**ՄԱՐՍՈՒՊ** – Մարգար, Կարօ Մարսուպ նամուսով ապրող մարդ է:  
Էդպէս անամօթին բերանը իյնալը ինձի համար մեռնի՛ լ է, մեռնի՛ լ:

## ՎԱՐԱԳՈՅԻՐ

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Վարագոյրը կ'իջնէ, ու տեսարանը կը փոխուի, որքան որ կարելի է  
արագ: Տեսարանը կը ներկայացնէ Կարօ Մարսուպենց տան ներսիդին:  
Մէկ կողմը, կերակուրի ցած, տախտակէ կլոր սեղանը՝ վրան կերակուրը՝  
պղնձէ ամանով, հողէ պնակներ: Պատերը, կահկարասին հայկական գի-  
ղական տան մը կահկարասին են: Մարուշ կանգնած է բեմին աջ կողմը եւ  
սեղանի պատրաստութեան վրայ է: Նունիկ բեմին ձախ կողմն է՝ դարձեալ  
զբաղած բանով մը: Բեմի ձախ կողմի ետեւէն կը մտնէ Կարօ Մարսուպ՝ դա-  
ժանացած դէմքով: Դանդաղ կ'առաջանայ դէպի բեմին աջ կողմը, տախ-  
տակէ ցածիկէ ստիտիին վրայ կը նստի ու լուռ իր ծխամորճը կը քաշէ:

**ՆՈՒՆԻԿ** – (Մարսուպի դէպի ստիտիը քալած ժամանակ, Նունիկ,  
առանց մարդուն դէմքին նայելու): Պէ՛ մարդ, չե՛ս ըսեր, թէ կերակուրի  
ատեն է, էսքան ատեն ի՞նչ կ'ընես դրսերը: (Անուսինին չպատասխանե-  
լուն զարմացած՝ Նունիկ կը դառնայ ու կը նշմարէ Մարսուպի զայրոյթը:  
Մարուշ՝ նոյնպէս: Նունիկ կ'անցնի բեմին աջ կողմը՝ Մարուշի քով):

**ՆՈՒՆԻԿ** – Մարուշ, երկու հաց թրջէ՛:

**ՄԱՐՈՒԸ** – Վրաս դող մը կայ, հիւանդ եմ, մայր: Հացերը թրջուած են, մայր:

**ՆՈՒՆԻԿ** – Ի՞նչ ունիս, աղջիկս, ո՞րտեղդ կը ցաւի (ձեռքը աղջկան  
ճակատին դնելով):

**ՄԱՐՈՒԸ** – Չեմ գիտեր, գլուխս կը ցաւի, սրսփուք կայ վրաս:

**ՆՈՒՆԻԿ** – Ճակատդ կը վառի, գնա՛ ներս, պառկէ՛: (Մարուշ դուրս  
կ'ելլէ բեմի աջէն):

**ՆՈՒՆԻԿ** – Ախր ի՞նչ է պատահեր, մարդ: (Մարսուպ չի պատասխա-  
ներ): Կերակուրդ առջեւդ բերե՛մ:

ՄԱՐՍՈՒՊ – Էդ աղջիկը ո՞ր գնաց, կնիկ:

ՆՈՒՆԻԿ – Էսօր ամբողջ օրը քիթը ծուռ էր, հիւանդ եմ՝ ըսաւ, ճակատը կրակի գնաց կը վառէր, անկողին գնաց:

ՄԱՐՍՈՒՊ – Թաքարխամի՞ն կալի: Խորոզկնչուն\* դագաղը տան առջեւ կայնի:

ՆՈՒՆԻԿ – (Մարտուպի անձծքէն սարսափահար) Աստուած իմ, ի՞նչ է պատահէր, մարդ:

ՄԱՐՍՈՒՊ – Թէ՛զ գնա՛, Մուրատ Ակոբը հոս կանչէ՛, քէ՛զ եկէ՛ք: (Կինը տեղէն չի շարժիր) Հայտէ՛, գնա՛: (Նունիկ պահին ալ չի կրնար չինազանդիլ լաչակը կը շտկէ ու դուրս կ'ելլէ):

ՄԱՐՍՈՒՊ – (Կը մնայ նստած, ծխամորճը կը քաշէ իրարու ետեւ: Ապա կ'ելլէ, անկողիններու տակէն Աստուածաշունչը կը քերէ, ետեւի թերթերը կը բանայ, պզտիկ մատիտով մը անուն մը կը սրբէ: Գիրքը բովը կը դնէ ու կը շարունակէ ծխել: Ներս կը մտնեն Մուրատ Ակոբն ու Նունիկ):

ԱԿՈՔ – Բարե՛ւ, խնամի՛ Մարտուպ: (Իր սովորական ժպտով կը մօտենայ ու կը մատի աթոռակի մը՝ Մարտուպի ձախին): Էսօր հարսնիքին համար քաղքէն մեծ սէյնի մը առի: Ամա ի՞նչ սէյնի: Երեք ոսկի տուի, ֆախաթ աչքիս հինգ ոսկի կ'արժէ: Իշտէ բան մըն էր, ռաստ եկաւ: Հը՛, էսքա՛ն կայ: (Կ'ելլէ տեղէն, մատով լայն բուրբակ մը կը զծէ ու կը մատի): Քաղքի բարեկամս՝ Մարտիրոս աղան, պղնձէ լաւ կը հասկնայ. էնոր միջոցով առի: Ես ինչ գիտնամ, վրան ալ ի՞նչ թիրլի պատկերներ՝ աղուրնկայ, փեխիվանի պատկեր, էտահարի պատկեր: Խնամի, մէջտեղն ըլ մեծ պատկեր մը կայ՝ տղան, ջէրանի ձիուն վրայ հեծած, ետեւն ըլ աղջիկ մը, կը փախցնէ. էս տղան, զէնկին տուեր, ձին էտահարին վրայ կը քշէ: Իրաւ որ տեսնելու բան է, խնամի՛: Գալ շարքուն ըլ երթամ աման-շաման առնեմ, հարսնիքը կը մօտենայ. հը՛, վաղը, մէկալ օր Իսնակ է:

(Մուրատ Ակոբը կը նկատէ, որ միմակ ինքն է խօսողը, Նունիկն ալ չի խօսիր, Մարուշ մէջտեղ չկայ: Լռութիւն պահ մը):

ՄԱՐՍՈՒՊ – Ակո՛ք, խօսքը երկուք չեմ ուզեր ընել, էսօր քսուրդ ա՛ն ու գնա՛, ես աղջիկ չունիմ տալիք:

ԱԿՈՔ – Ի՞նչ կը խօսիս, խնամի՛, կատա՛կ է, ի՞նչ է:

ՄԱՐՍՈՒՊ – Չէ՛, Ակո՛ք, Կարօ Մարտուպ կատակ չի ըներ, էս իրիկուն մատնին կ'առնես ու կ'երթաս, է՛ս իրիկուն, Ակոբ, է՛ս իրիկուն, երկու խօսք չեմ ուզեր:

ԱԿՈՔ – Խնամի՛, կ'երեսայ խալխի խօսքին ականջ ես դրեր: Հա՛, հա՛, խալխի աչքը չի վերցնեք, որ Մուրատ Ակոբը արտ կ'առնէ, եզներ կ'աւելցնէ, տղան կը նշանէ: Մուրատը նշանեցի թէ չէ, ըսին, խօսեցան, որ Մու-

բառեց մէջ մէկը ինքզինք կախեր է: Խնամի, եղածը էս է, իմ պապիս մեծ հօր քույրը է՞ծի ականջներ ունի եղեր, օր մըն ալ ախոռը կ'երթան, որ ինքզինք կախեր է: Էսքան բան: Ալ ինչե՛ր ըսես որ չխօսեցան: Հա՛, հա՛ խալխի խօսքին ականջ ես տուեր...

ՄԱՐՍՈՒՊ – Ակո՛ք, էդ բաները իմ ականջը չեն քրջեր: Ես մամուսի տեր մարդ եմ: Էսօրս իմ պատիս էլին\* անամօթին քերանն է ինկեր: Ինձի համար մեռնիլ է, Ակո՛ք, մեռնի՛լ:

ԱԿՈՔ – Ի՞նչ է եղեր, Մարտուպ, ի՞նչ է եղեր. պատմ՛ տեսնենք, է՛:

ՄԱՐՍՈՒՊ – Գնա՛, Ակո՛ք, գնա՛ տղուդ հարցուր: Էդ մատնին ո՞ր է, կնիկ:

ՆՈՒՆԻԿ – Մատնին Մարուշին մատն է:

ՄԱՐՍՈՒՊ – Ես շատ երկար խօսելու գլուխ չունիմ: Գնա՛, էդ մատնին քեր, Ակոբին տու՛ր, որ տանէ:

ՆՈՒՆԻԿ – Մարդ, աղջիկը կրակներու մէջ կը վառի, մեղք է, ել մէյ մը հայը հարցուր:

ՄԱՐՍՈՒՊ – Ես քեզի կ'ըսեմ էդ աղջկան անունը մի՛ տար, կնիկ, թող երթայ սատկի:

ՆՈՒՆԻԿ – Հիա՛նդ է, տնաշէն, անկողնին մօտեցիր, տես՛ ի՞նչ հալի է:

ՄԱՐՍՈՒՊ – Չէ՛, չէ՛, որ սատկի՛ գերեզմանը չեմ երթար, էդ իմ աղջիկը չէ: (Ոտքի ելած է վերջին խօսքերուն հետ): Ինձի աղջիկ չկայ: Գնա՛, մատնին քեր ու տուր Ակոբին, որ տանէ: (Նունիկ դուրս կ'ելլէ աջէն):

ԱԿՈՔ – Խնամի՛, էս բանը մի՛ ըներ, մեղք են Մարուշն ալ, տղաս՝ Մուրատն ալ, մի՛ ըներ, խնամի՛:

ՄԱՐՍՈՒՊ – Ակո՛ք, խնամի-մնամի չկայ, մամուսը կայ: Էնոք իմ մամուսիս մեղքցա՞ն: Երբ իմ պատիս էլին քերանն է, ինձի համար մա՛հ է, մա՛հ, կը հասկնա՞ս: (Դուրս կ'ելլէ ձախէն) Քսուրդ ու մատնին Նունիկը կու տայ քեզի, կ'առնես ու կ'երթաս: Ես աղջիկ չունիմ այլևս:

(Երբ Մարտուպ դէպի դուրս կ'ելլէ, վարագոյրը կ'իջնէ):

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐ Գ  
ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Կարօ Մարտուպի տան բակը: Տունը այնպէս շինուած է, որ կարելի է ցած տանիքին վրայ կանգնել կամ քալել: Մարտուպեցն տան կողքին, աւելի ցած

տանհրով, սենեակ մը կայ: Ապա ուրիշ տուններ կ'երեւին, պաստառին վրայ կամ, եթէ կարելի է, ցցուն ձեռով կառուցուած: Վերջալոյսի պահեր են:

Նուրհիկ կ'աշխատի տան առջեւ (Բուրդ կը զգէ կամ հագուստ կը կարկըտէ, որեւէ բնական գիւղական գործ):

ՉԱՐԴԱՐ – (Չեղքը հողէ աման մը կը մտնէ: Նայուածքը չորս կողմ պտտեցնելով, զննելով ամէն ինչ): Բարի՛ երեկոյ, Նուրհիկ, օ՛ֆ, ոտքերս կարտեցան, ծերացեր եմ, ծերացեր: Քիչ մը թթխմոր ունի՞ս, Նուրհիկ:

ՆՈՒՆԻԿ – Բարի՛ իրիկուն, Չարդար, հա՛, ունիմ, քիչ մը նէֆէս\* քաշէ, նստի՛ր քիչ մը:

ՉԱՐԴԱՐ – (Մէկ կողմէն տեղափոխուելով քարէ նստարանին) Ուշը կը մնամ, Նուրհիկ, բայց անանկ յոգնած եմ... Հա՛, կարճ շունչ մը առնեմ: Մարուշն ինչպէ՞ս է. իմացայ՝ ոտքի ելեր է:

ՆՈՒՆԻԿ – Ինչպէ՞ս տըլլի. ամիս մը կ'ըլլայ՝ պառկած էր, երեք օր է հա, իշտէ՛, ոտքի է ելեր... Հալեցա՛ւ, մաշեցա՛ւ միմուճար աղջիկս: Տասը օր ինքնիք դէմ կը խօսար, մարմինը կրակներուն մէջ. երեք օր քերանը հէշ բան չդրաւ, մնացեալ ատենն ալ քիչ մը կաթ, ու ջո՛ւր, ջո՛ւր, ջո՛ւր ... Բոցերու մէջ վառեցաւ աղջիկս:

ՉԱՐԴԱՐ – Հա՛, իմացեր էի, շատ սիրոս ցաւաց. Մարուշը լաւ աղջիկ է, դարդս իրեն հալալ չէր: Մարդո՞ւր է, ի՞նչ կ'ընէ: Հէշ գեղամէջէն չի անցնիր, եկեղեցի ըլ չի գար այլեւս:

ՆՈՒՆԻԿ – Մի՛ հարցներ, Չարդար, մի՛ հարցներ. դարդս մեծ է, մե՛ծ: Մարդս ալ կը մաշի օրէ օր: Էն օրէն, որ նշանը ետ է ըրեր, մարդու հետ չի խօսար, մարդու երես չի նայիր, եզներուն հետ է շարունակ, եզներն ու դաշտը: Ա՛լ տանը չի նայիր, թիթիւնն ու եզները, եզներուն հետ կը խօսայ, ինծի հետ գրեթէ չի խօսար:

ՉԱՐԴԱՐ – Մեղք է, իրեն ալ մեղք է, Մարուշին ալ մեղք է: Հեղ մը որ նշանուեր էին, ալ ի՛նչ պէտք կար նշանը ետ ընելու, թող շուտով պսակեր ու վերջանար:

ՆՈՒՆԻԿ – Ես ըլ եղ է կ'ըսիմ շարունակ, լսել չի ուզեր. «Էդ աղջկան անունը մի տար, - կ'ըսէ, - թող երթայ սատկի»: Կ'ըսէ. «Որ սատկի, գերեզման չեմ երթար»: Մարուշի հիւանդութեան ժամանակ օր մը աղջկան անկողնին չմտեցաւ... Ա՛խ, իմ քաշածս թշնամիս թող չտեսնէ:

ՉԱՐԴԱՐ – Հա՛, Նուրհիկ, դժուար բան է. փա՛ռք Աստծու, որ աղջիկդ առողջացաւ, էդոր փառք տուր. կամաց-կամաց լաւ կ'ըլլի:

ՆՈՒՆԻԿ – Չէ՛, Չարդար, չէ՛, էդ աղջիկը հիմա որ լաւացեր է, ու խելք գլուխն է, օր-ատուր արեւի կը մաշի, կը հալի: Աչքերը շարունակ դաշտերուն է, լեռներուն է... Պուտ մը քան ես՝ կ'ուտէ, ես՝ չի ուտեր: Հայրն ալ

միս կողմէն... Կերակուրները եփածիս նման կը թափեն: Աստուած վերջը բարին ընէ: Հա՛, թթխմորդ տամ, Չարդար: (Նուրհիկ ներսէն թթխմորը կը բերէ, կու տայ Չարդարին, որ ոտքի կ'ելլէ, կ'առնէ խմորը):

ՉԱՐԴԱՐ – Վերջը լաւ կ'ըլլի, Նուրհիկ, լաւ կ'ըլլի, մի՛ մտածեր: Մնա՛ք բարով:

ՆՈՒՆԻԿ – Երթա՛ւ բարով, Չարդար, բարի եկար, եթէ էդ խմորը քիչ է, քիչ մըն ալ տամ:

ՉԱՐԴԱՐ – Չէ՛, Նուրհիկ, լա՛ւ է, կը բաւէ: (Դուրս):

(Նուրհիկ պահ մը միմակ է, իր գործին. ապա դրան մէջ կ'երեւայ Մարուշ՝ գունատ, նիհարած, տրտում: Կամաց մը կը նստի քարէ նստարանին ու նայուածքը կը գամէ հեռուին, դաշտերուն, երկնքի կապոյտին, հեռաւոր լեռներուն):

ՄԱՐՈՒԸ – Մարէ՛, էդ հեռուի երեւցածը Հողդարի արտն է, չէ՞:

ՆՈՒՆԻԿ – Հա՛, Մարուշ, հա՛... Էդպէս չմըսի՞ս:

ՄԱՐՈՒԸ – Չէ՛, մարէ՛, արեւն աղուոր կը տաքցնէ: Էն ճերմակ գիծը, որ կ'երեւայ...

ՆՈՒՆԻԿ – Հա՛:

ՄԱՐՈՒԸ – Փշերու ճամբա՞ն է:

ՆՈՒՆԻԿ – Աչքերս լաւ չեն տեսներ, Մարուշ: Բան մը բերեմ քեզի, կե՛ր:

ՄԱՐՈՒԸ – Չէ՛, մարէ՛, բան չեմ ուզեր: Ըսէ՛ ինծի՝ դուրմները տանի՞քն են:

ՆՈՒՆԻԿ – Հա՛, արեւուն տակ արեւի կը կարմրին:

ՄԱՐՈՒԸ – Ա՛խ, հեղ մը տանիք ելլե՛ի: Էդ դիմացի տանիքին վրայ ո՞վ է, մարէ՛:

ՆՈՒՆԻԿ – (Կը նայի դէպի իր աջը՝ բեմին ձախը, խորքը) Ես բան չտեսայ:

ՄԱՐՈՒԸ – Հա՛, հիմա չկայ, կարծես մէկը տեսայ:

ՆՈՒՆԻԿ – Ես երթամ կաթը կթեմ, դուն ալ ներս անցի՛ր, կը մսիս:

ՄԱՐՈՒԸ – Թո՛ղ ինծի, մարէ՛, ես արեւը լա՛ւ է, տա՛ք է, բարի՛ է:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նուրհիկ կ'անցնի ներս: Տեսարանը պահ մը պարապ է: Մարուշ կը նայի հեռուի դաշտերուն: Բեմի ձախ կողմը՝ Մարուշի դիմաց գտնուող տուներէն մէկուն տանիքին վրայ, կ'երեւայ Մուրատի գլուխը, ապա՝ կիսանդրին (կամ ալ այդ տուներէն մէկու պատի կողքին): Մարուշ կը նշմարէ, կը ցնցուի, ոտքի կ'ելլէ ու կը նստի կրկին՝ ձեռքերը ծունկերուն թոյլ մը ինկած:



ՄՈՒՐԱՍ – Մարո՛ւշ:

ՄԱՐՈՒԹ – Մո՛ւս, Մուրա՛տ, սո՛ւս, մի՛ գար քովս. հա՛յրս որ տեսնէ, կը սպաննէ ինձի:

ՄՈՒՐԱՍ – Մարո՛ւշ, տեղէդ մի՛ շարժիր, տանիքէ տանիք ձեր քովի տանիքը պիտի գամ: (Մուրատ ետ կը քաշուի, Մարուշ կը մնայ անշարժ, ձեռքերը՝ կուրծքին. քիչ ետք Մուրատի գլուխը կ'երեսայ Մարուշենց կողքի ցած տանիքին վրայ: Մուրատ պառկած է տանիքին վրայ ու պառկած ալ կը խօսի):

ՄՈՒՐԱՍ – Մարո՛ւշ: (Մարուշ կը ցնցուի՝ ձայնը անելի մօտէն լսելով): Մարո՛ւշ, ե՛լ, պատին տակ կայնէ՛: (Մարուշ պատին տակ կը կայնի: Իր գլուխը ցած տանիքէն քիչ մը վար կը մնայ): Մարո՛ւշ, գլուխդ վեր մի՛ դարձնե՛ր, քայց խօսա՛, ձէնդ լսեմ:

ՄԱՐՈՒԹ – Կամա՛ց, Մուրա՛տ, ձէն մը առի:

ՄՈՒՐԱՍ – Հայրդ տո՞ւնն է:

ՄԱՐՈՒԹ – Չէ՛, դեռ չէ եկած դաշտէն:

ՄՈՒՐԱՍ – Դրացի Նուխիկն ըսաց, որ Մարուշն ելեր է անկողնէն: Ախր, ի՞նչ պիտի ըլլի, Մարո՛ւշ, օր արեսս հատաւ: Երեք օր է՝ նե՛ լուծքի կ'երթամ, նե՛ ըլ եզներուն կը մայիմ, օրը քառսուն հեղ տանիք կ'ելլեմ: Տնաշէն, երբեմն տանիք ել, պոյդ տեսնամ: (Լռութիւն) Մարո՛ւշ, ի՞նչ եղաւ քեզի, խօսէ՛, ձէնդ լսեմ:

ՄԱՐՈՒԹ – Ա՛խ, Մուրատ, ի՞նչ պիտի ըլլի իմ քաշելիքը: Ազատ՝ զիս, Մուրա՛տ, ազատ՝ զիս այս տունէն, տա՛ր, ճեղճնէնդ տա՛ր զիս...

ՄՈՒՐԱՍ – Մարո՛ւշ, Խօս ինձի շիտակ ըսի, որ Մարուշն գատ ուրիշ աղջիկ թող ինձի հարամ ըլլի. որ չըլլի, երեսս կ'առնեմ կ'երթամ էս գեղէն:

ՄԱՐՈՒԹ – (Արցունքներուն կամ հեծկտոցին մէջէն) Ես ըլ կու գամ, Մուրա՛տ, տա՛ր զիս:

ՄՈՒՐԱՍ – Հէրս ըսաց՝ Խօս քաղաք պիտի երթայ, առաջնորդ սրբազանին պիտի խօսայ: Եթէ պսակի հրամանի զիրը տայ, մեր գեղի քահանան՝ Տէր Բենիկ, պարտաւոր է պսակել: Էս գիշեր ես կիսն կու գամ, դուն տանիքը ել. եթէ լուրը բարի է, քեզ կը տանիմ շիտակ մեր տունը, Տէր Բենիկն ալ կը կանչենք, պսակը կ'ընէ, հա՞, Մարո՛ւշ:

ՄԱՐՈՒԹ – Հա՛, Մուրա՛տ, տա՛ր ինձի, ճեղճնէնդ տա՛ր, միմակ թէ տա՛ր ինձի:

ՄՈՒՐԱՍ – Ես հիմա կ'երթամ, հայրս քաղաքէն ո՛ր է, ուր չէ կու գայ: Չմոռնաս էս գիշեր տանիք ելլելու:

ՄԱՐՈՒԹ – Չեմ մոռնար, Մուրա՛տ, չեմ մոռնար, գնա՛:

(Լայրը պակսած է, մթնալու վրայ է. ներսէն կը լսուի Նուխիկի ձայնը):

ՆՈՒՆԻԿ – (Ներսէն) Աղջի Մարո՛ւշ, պաղ է դուրսը, ներս եկո՛ւր:

ՄԱՐՈՒԹ – Եկա՛յ, մարէ՛, եկա՛յ: (Անգամ մըն ալ կը մայի հեռուի դաշտերուն, տանիքներուն ու կ'անցնի ներս):

ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ – (Հեռուէն կ'երեսայ Կարօ Մարսուպ՝ հացի ծրարն ու մանգաղը ձեռքը: Դանդաղ քայլերով կու գայ, կը նստի դրան առջեւի քարէ նստարանին. կօշիկները կը հանէ, կը թօթուէ, ապա դառնալով ներս) Նուխիկ, եղ սատկելուն տահա կովերը չէ կթեր: (Նուխիկ կ'երեսայ դրան մէջ) Կենդանիներուն քառաչը գեղն է բռներ. գետինը մտնելիքը թող երթայ, կթէ:

ՆՈՒՆԻԿ – Արիմա՛րդ, աղջիկդ նոր ելած է անկողնէն, տահա երեք օր չեղաւ, տկար է, թող քիչ մը ուշ ըլլի, ես կ'ընեմ գործը:

ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ – Ես աղջիկ չունիմ՝ ըսի քեզի, աշխատցո՛ւր, թող երթայ սատկի: Կը լսե՛ս:

(Նուխիկ լուռ կանգնած է, լայր կը պակսի արագօրէն, ու վարագոյրը կ'իջնէ ու կը բարձրանայ գրեթէ մութ բեմին վրայ. բոլոր մը լռութիւն. ապա կը լսուի հաջոցը հեռաւոր շան, որ շուտով կը լռէ: Մարսուպենց տանիքին վրայ կ'երեսայ Մարուշ, աչքերով խաւարը կը խուզարկէ, ականջով ոտնաձայն կը փնտռէ: Ցախի տանիքին վրայ կ'երեսայ Մուրատ):

ՄՈՒՐԱՍ – (Փսփսուքի տպաւորութիւն ձգող ձայնով) Մարո՛ւշ:

ՄԱՐՈՒԹ – Մո՛ւս, Մուրա՛տ, Պալիկ Խաթունի դրան ձէնը կ'առնեմ:

ՄՈՒՐԱՍ – Չէ՛, Մարո՛ւշ, ձէն չկայ: Ծրարդ վար ձգէ:

ՄԱՐՈՒԹ – Առաջնորդը ի՞նչ կ'ըսէ, Մուրատ, ես առանց պսակի տեղ չեմ երթար:

ՄՈՒՐԱՍ – Ես առանց պսակի քեզ տեղ չեմ տանիր, Մարո՛ւշ: Տէր Բենիկ մեր տունն է, հայրս-մայրս իրենց հարսնցուին կը սպասեմ, որ պսակը ընեն:

ՄԱՐՈՒԹ – (Ծրարը կը նետէ Մուրատին): Մուրա՛տ, կը վախճամ:

ՄՈՒՐԱՍ – Մի՛ վախճար, Մարո՛ւշ, ես հո՛ս եմ, եկո՛ւր:

ՄԱՐՈՒԹ – Հայրս ի՞նչ պիտի ըսէ:

ՄՈՒՐԱՍ – Երբ որ իմանայ, որ օրէնքով ու տերտերով պսակ եղած է, պիտի ներէ, Մարո՛ւշ, ի՞նչ պիտի ընէ: Նե՛ ուրիշ տղայ ունի, նե՛ ըլ աղջիկ:

ՄԱՐՈՒԹ – Չէ՛, Մուրա՛տ, չէ՛, դուն հայրս չես ճանչնար: Վախճամ՝ ամբողջ կեանքս հարամ ըլլի իր անէծքով:

ՄՈՒՐԱՍ – Որ կը վախճաս ու չես ուզեր, գօռով չեմ տանիր քեզ, Մարո՛ւշ:

ՄԱՐՈՒԹ – Չէ՛, չէ՛, տա՛ր ինձի, Մուրա՛տ, տա՛ր ինձի, կու գամ: (Պատէն կը դառնայ վար դէպի անելի ցած պատը՝ Մուրատի օգնութեամբ: Մուրատ այդ տանիքէն կը կախուի փողոց ու կը ցատկէ մնացեալ կէս մեթրը: Մարուշն ալ կը կախուի վար, Մուրատ կը բռնէ մէջքէն ու կ'իջեցնէ

վար ու այդպես, մէկ ձեռքով մէջքէն բռնած եւ միւսով՝ ծրարը, կը տանի Մարուշը քեմէն դուրս, խորքէն):

(Վարագոյրը կ'իջնէ ու կը բարձրանայ դանդաղօրէն: Բեմին լոյսերը արեւցած են ու առտու կանուխ մթնշաղի տպաւորութիւնը կը ձգեն: Կը լսուի քանի մը տարբեր արքաղաղներու կանչը, քանի մը հաջոց, մէկ-երկու դրան ճոխնչ, ու կը բացուի նաեւ Մարսուպենց տան դուռը):

ՆՈՒՆԻԿ – (Դուրս կու գայ, տաշտը մէջտեղ կը քաշէ ու դուլներով գրադած ատեն՝ ձայն կու տայ ներս) Աղջի՛ Մարուշ, էս ատեն քնանալ կ'ըլլի՞: Հիմա արեւը էրոզոց վրայ կու գայ: (Դադար) Մարո՛ւշ... հիմա հայրդ վեր կ'ելլէ. որ քնած տեսնէ... Էսօր լուացք պիտի ըլլի, ներս-դուրս պիտ արուի. ելի՛ր, անկողնիդ երեսը քակէ, որ ջուրը ձգենք: (Դադար) Աղջի Մարո՛ւշ... (Նունիկ ներս կը մտնէ, ապա դուրս կը վազէ, կ'երթայ ցած տանիքով սենեակի ետին, կրկին քնմ կու գայ, քեմի ձախէն դուրս կ'ելլէ: Կարօ Մարսուպ դուրս կու գայ տունէն՝ ձեռքին յարդի տոպրակը, կ'ուղղուի դէպի քեմի աջը: Նունիկ ներս կը վազէ ձախէն):

ՄԱՐՍՈՒՊ – Էդ սատկելուն տահա տեղէն չէ՞ ելեր: Ըսէ՛, որ երթայ Չիփտենց, ճուլները քերէ, էսօր քաղաք բանապակ պիտի տարուի:

ՆՈՒՆԻԿ – (Կանգնած տեղէն, տժգոյն ու ջղային) Մարուշը չկա՛յ, արհմարդ:

ՄԱՐՍՈՒՊ – Ինչպէ՛ս չկայ, ո՞ր չկայ:

ՆՈՒՆԻԿ – Արհմարդ, Մարուշի անկողնինը կը մնայ ենպես, ինչպէս երէկ զիշեր ձգուած էր: Մարուշը զիշերով զացն'ր է, զացն'ր: (Կը փղձկի ու կը նստի դրան սեմին) Վա՛յ, Մարո՛ւշ, հարա՛մ ըլլայ իմ տուած կաթը:

ՄԱՐՍՈՒՊ – Ի՞նչ կը գրուցես, Նունիկ, դուն քեզի եկու՛ր: (Մօտեցած է Նունիկին):

ՆՈՒՆԻԿ – Մարուշը փախցուցեր են, արհմարդ: Սիրտս կը վկայէ, Մուրատենց տունն է, Մուրատենց տո՛ւնը:

ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ – (Շանթէն զարնուածի նման ինքն իր վրայ կը ցնցուի ու կը փլի քարէ նստարանին: Ներս կը մտնէ դրացի Սուրբիկ քեմի ձախէն):

ՍՈՒՐԲԻԿ – Բարի՛ լոյս, Նունիկ. բարի լոյս, Կարօ՛ Մարսուպ: Նունիկ, եկայ քեզի իմացնեն: Աղջիկդ Մուրատենց տունն է: Մուրատը զիշերով եկեր է, աղջիկդ հետը զացեր է:

ՂՈՒԿԱՍ – (Դրացի Ղուկասն ալ ներս կը մտնէ, առանց բան մը ըսելու, բարի լոյսովը միայն, կ'երթայ նստիլ Կարօ Մարսուպի կողքին) Բարի՛ լոյս, դրացի՛:

ՆՈՒՆԻԿ – Սիրտս վկայեց, Սուրբիկ, որ Մարուշը Մուրատենց է: Վա՛յ, Մարո՛ւշ, վա՛յ. հարա՛մ ըլլի տուած կաթս: Էս ի՞նչ ըրիր դուն:

ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ – Դրացի Ղուկաս, տահա էսքան ատեն է՛ իմ կռնակս գետին եկած չէր. աղջիկս զիս չամուռնի՞ն\* մէջ խոթեց, չամուռնի՛ն:

ՂՈՒԿԱՍ – Չէ՛, Կարօ՛ Մարսուպ, չէ՛, չամուռնի բան չկայ, կարգով ու կանոնով պսակ պիտի ըլլի էս առաւօտ: Աղջիկդ ալ իր կամքով զացած է ու սուրբ պսակի պայմանով:

ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ – Հա՛, որ իր կամքով զացած է, Մուրատին ու Ակոբին ըսելիք չունին: Գիտեն՝ բան ըսելու իրաւունք չունին, էնոք յանցանք չունին. յանցաւորը իմ աղջիկն է, է՛ն է նամուսս չամուռը խոթողը: Էս տունը ինչո՞ւ չի փլիք մեր զլխուն ու մեզ իր տակը թաղեր, Աստուա՛ծ իմ:

## ԱՐԱՐ Դ ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Կարօ Մարսուպենց տան ներսը: Վարագոյրը բացուելուն՝ Նունիկ տան գործի վրայ է, անկողնինները կը դարսէ կամ կներակուր եփելու վրայ է կամ զուլպայ կը կարկտէ, բուրդէ հաստ զուլպայ: Կը մտնէ Ջարդար:

ՋԱՐԴԱՐ – Ողորմի՛ Աստուած:

ՆՈՒՆԻԿ – Ողորմի՛ հոգուդ, Ջարդար՛ր, էս ի՞նչ լաւ բան ըրիր եկար. իմ ալ սիրտը կը ճաքեր:

ՋԱՐԴԱՐ – Ժամէն որ ելայ, ըսի հեղ մը հանդիպիմ Նունիկին, բարեւ մը տամ, հալը-խաթրը հարցնեն, հիմա որ աղջիկն ալ տունը չկայ, սիրտը նեղ կ'ըլլի:

ՆՈՒՆԻԿ – Հա՛, Ջարդար՛ր, հա՛, հոգուդ դուրպան, նե՛ղ է, նե՛ղ: Կաթ տուր, արցունք թափէ, մեծցուր ու երեսը մի՛ տեսներ... Հեղ մը տեսնէի՛, կարօտս առնէի՛... Մա՞յր եմ, չէ՞:

ՋԱՐԴԱՐ – Մարդդ ի՞նչ կ'ըսէ:

ՆՈՒՆԻԿ – Հարսնիքին օրը բարկացեր էր ամբողջ աշխարհին ու ինք իր դէմ, հետը խօսալ չէր ըլլար: Հետոյ կռուեցաւ, պոռաց-կանչեց, երեսն առաւ ու զիւղէն դուրս գնաց՝ մարագի կտուրը շինելու: Զո՛ւրս, էս ինչ յանցանք ունին:

ՋԱՐԴԱՐ – Աղջիկը իր սիրածն է առեր, եկեղեցով, կարգով պսակ է եղեր, ի՞նչ կ'ըլլի. տաճիկ չէ՛ առեր, ես՛:

ՆՈՒՆԻԿ – Ա՛յ, ի՞նչ ըսես, ի՞նչ գիտնամ, ենպէս ամուր կապուած է պապենակամ օրէնքին... Կ'ըսես աշխարհը փլիք է: Էն օրէն անցեր է երկու ամիս, մարդս ոչ ոքի հետ կը խօսայ: Եկեղեցի որ կ'երթայ, ոչ ոքի երես կը մայի. եկեղեցիէն շիտակ տուն կու գայ ու կ'երթայ եզներուն քով: Ինձի հետ ըլ չի խօսար: Ես ըլ միմակս կը մաշիմ: Աղջկանս կարօտը կը քաշեմ.

ինչ մեղքս պահեմ, փեսաս ըլ կարօտցեր եմ, հեղ մը պոյը տեսնեմ. տղայ չունիմ, Չարդաբ, տղայ չունիմ. Մուրատը ինձի տղայ պիտի ըլլեր:

**ՉԱՐԴԱՐ** – Մարդո՞ւր է էսօր:

**ՆՈՒՆԻԿ** – Քաղաք է գացեր, ցորեն տարաւ:

**ԽՆԱՄԻ ԹՈՒՐԻԿ** – Նունիկ, տո՞ւնն ես: (Խնամի Թուրիկին ձայնը կը հասնի դուրսէն):

**ՆՈՒՆԻԿ** – Էդ ո՞վ է: Հա՛, տունն եմ, հրամէ՛:

(Կը մտնէ խնամի Ակոբի կինը՝ Թուրիկ):

**ՆՈՒՆԻԿ** – Ա՛յ, խնամին է, բարո՞վ եկար, խնամի՛, հազա՛ր բարով: Է՛ս կողմ հրամէ՛:

(Թուրիկ կը նստի սեւիքին, Նունիկ բարձեր կը տեղատրէ անոր կոնակին):

**ԹՈՒՐԻԿ** – (Քթախտտի տուփը կը հանէ ու խօսած ատեն մէկ կողմէն քթախտտ կը քաշէ) Քեզի ի՞նչ եղաւ, տնաշէ՛ն, օր մը չես շտկիր աղջիկդ տեսնել զալ:

**ՆՈՒՆԻԿ** – Չեմ կրնար, դուրպա՛ն Թուրիկ, էրիկս որ կայ... (Կոպերուն տակ հաւաքուած արցունքները սրբելով): Էսօր լման երկու ամիս է՛ աղջկանս կարօտը կը քաշեմ: Ինչպէ՛ս է աղջիկս, խնամի՛:

**ԽՆԱՄԻ ԹՈՒՐԻԿ** – Լա՛ւ է, Նունիկ, շա՛տ լաւ է: Ինչ մեղքս պահեմ, Մարուշ հօր անունը չի տար. ֆախաթ մայր տէյի խենդ կ'ըլլի: Իմ ալ սիրտս չդիմացաւ, տանիքէն տեսայ՝ մարդը քաղաք կ'երթայ, Մարուշը բերի, որ տեսնաս, կարօտդ առնես:

**ՆՈՒՆԻԿ** – (Յուզուած) Մարուշը հո՞ս է, ո՞ր է, ո՞ր է: Մարո՛ւշ, Մարո՛ւշ: (Կը վազէ դէպի փողոցի դուռը: Մարուշ կը մտնէ ներս ու դիմացը կ'ելլէ) Մարո՛ւշ:

**ՄԱՐՈՒՇ** – Մայրի՛կ: (Կը գրկընդխառնուին: Ապա կը բաժնուին, մայրը կը դիտէ աղջկան դէմքը, հասակը, քիչ մը լեցուած փորը...): Ինչպէ՛ս ես, աղջիկս, հանգի՞ստ ես:

**ՄԱՐՈՒՇ** – Ըստ հանգիստ եմ, մա՛ր: (Մօրը լաչակին ձեռը շտկելով): Կեսուրս ու կեսրարս չեն ձգեր, որ վրաս փռոյն իջնայ:

**ՆՈՒՆԻԿ** – Ինտո՞ր է Մուրատը:

**ՄԱՐՈՒՇ** – Չեղբերդ կը համբուրէ: Ըորախը մուկ հանել գացեր է էսօր:

**ՆՈՒՆԻԿ** – (Կը քաշէ աղջկան գլուխը կուրծքին ու կը համբուրէ մազերէն, երեսներէն, մինչ քեմը կը մթնայ արագօրէն, ամբողջական մութին հետ դուրս կու գան դերակատարները):

Լոյսը կամաց-կամաց կ'աւելնայ նոյն սենեակին մէջ: Սէւիքին նստած է Կարօ Մարտուայ ու չիպուխը կը քաշէ: Պոստած\* են յօնքերը: Կը մտնէ Նունիկ անապարանքով ու կ'երթայ բուխերիկին (օճախին) քով՝ կերակուրին նայելու:

**ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ** – Էսքան ատեն ո՞ր էիր, կնիկ. էս ատեն նե՛ ժամ կը մնայ, նե՛ աղօթք:

**ՆՈՒՆԻԿ** – Ժամուն ճամբան Խաթուն մամային հետ խօսքի բռնուեցանք:

**ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ** – Ճեղնե՛նե՛մը, չես ըսեր, որ տունի տէր եմ: Կ'երեւայ՝ մէր ու աղջիկ Կարօ Մարտուայի ծերանալուն կը սպասէիք: Չէ՛, չէ՛, տահա ծերացած չեմ:

**ՆՈՒՆԻԿ** – Ի՞նչ կը խօսիս, ա՛յ մարդ, ի՞նչ աղջիկ, ժամուն ճամբան Խաթուն մամային...

**ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ** – Կնիկ, լեզուդ քեզի քաշէ, թէ ոչ... Ի՞նչ է, ինձի քե՞ն, չէ նէ ապուշ կը կարծես: Ըարաթը հեղ մը աչքկապ կ'ընես ու կ'երթաս. որո՞ւ տունն է կ'երթաս... Ասեղը քեզի շուք ըրած կը վազես, կը կարծես՝ չե՛մ տեսեր:

**ՆՈՒՆԻԿ** – Մա՛րդ եմ, մա՛րդ, աղջի՛կդ է, աղջի՛կս է:

**ՄԱՐՍՈՒՊ** – Չէ՛նդ. հեղ մըն ալ չտեսնեմ, էս վերջին անգամը թող ըլլի: Չես ալ ամչնար, աղջիկ տէյի անունը կու տաս: Էդ աղջիկը քու կաթը չէ կերեր, շան կաթ է կերեր, շա՛ն կաթ:

**ՆՈՒՆԻԿ** – Մա՛րդ, աղջկանդ մեղքը մի՛ մտնար, նամուսով-պասակով է կարգուեր իր սիրածին հետ:

**ՄԱՐՍՈՒՊ** – Չէ՛նդ, դեռ կը համարձակիս պաշտպանել նամուսս ցեխը նետողը:

**ՆՈՒՆԻԿ** – Մա՛րդ, Մարուշ ծոցուեր է, շուտով տղաբերքն է, սիրտդ մի՛ չարացներ, թոռան տէր տի ըլլիս:

**ՄԱՐՍՈՒՊ** – Ես աղջիկ չունիմ, ըսի, լսեցի՞ր, հեղ մըն ալ անոր անունը չի տաս:

(Դուռը կը զարնուի, ու կը մտնէ գիւղի քահանան):

**ՔԱՀԱՆԱՆ** – Աստուա՛ծ պահապան, Մարտուայ:

**ՄԱՐՍՈՒՊ** – (Ոտքի կ'ելլէ ու պատուոյ տեղը կը հրամցնէ քահանային: Նունիկ ափսէի վրայ դրուած թիթիւնի տուփն ու սիկարէթի թուղթերը կը հրամցնէ ու կը քաշուի մէկ կողմ՝ թեով աչքերէն արցունքը սրբելով):

**ՔԱՀԱՆԱՆ** – Մարտուայ, եկեր եմ, որ սիրտդ կակղեցնես: Քուրս, աղջիկդ ու քեզի ըլ պարապ տեղը չչարչրկես: Մուրատ Ակոբն որ ըսաւ՝ պեղք

է պսակեմ Մուրատն ու Մարուշը, ես ըլ դէմ եղայ, օրհնած: Ըսի, թէ առանց ծնողքի հաւանութեան աղջիկը ձեր տունն է եկեր, էղի մե՛ղք է, մե՛ղք: Էղ պսակը Աստծոյ ու մարդոց դէմ է, մեծածանց էսպէս ենք տեսեր: Բայց, Մարսուպ, առաջնորդի կնիքով հրաման բերած էր ինձի, որ պսակեմ. առաջնորդ սրբազանը չէր կրնար հրաման չտալ, քանի որ Մարուշ իր կամքովն էր գացեր: Է՛հ, օրհնած, սուրբ եկեղեցիի պսակը վրանին է, սիրածն է առեր, մերող եղի՛ր:

ՆՈՒՆԻԿ - (Դուրս կ'ելլէ դէպի բակը):

ՄԱՐՍՈՒՊ - Չէ՛, տէ՛ր պսպ, չէ՛, որ օրհնաւոր պսակ է, հա՛, որ իր կամքով է գացեր, հա՛, ես մարդ չունիմ մեղադրելիք, բացի իմ աղջիկէս, է՛ն է, է՛ն շունն է, որ իմ մամուսս գեղին ծամոց ըրաւ: Ներել չեմ կրնար, տէ՛ր պսպ, ես աղջիկ չունիմ:

ՔԱՀԱՆԱՆ - Մարսուպ, կնկանդ մեղքցի՛ր, ես ինը ամիս է՛ աղջիկը տեսնել չի կրնար, գողտուկ-գողտուկ, վախով-վախով խելով պիտի տեսնէ: Միսը եղունգէն գատել դժուար է, Մարսուպ, ախր, տարիքը առած մայր է, Մարուշն ալ իր մէկ հատիկն է:

ՄԱՐՍՈՒՊ - Չէ՛, չէ՛, տէ՛ր պսպ, է՛ն մայրն ըլ յանցաւոր է, է՛ն ըլ պիտի ընկնու էր. երե՛կ ծնած չըլլար:

ՔԱՀԱՆԱՆ - Օրհնած, Մարուշ տղաբերքի մէջ է, ո՛ր է, ուր չէ՛ Աստծով թոռան տէր ըլ տի ըլլիս. խնամիներն ա՛լ մեղք են, աղջիկդ ա՛լ, Նունիկն ա՛լ... Դո՛ւ ալ մեղք ես, Մարսուպ. մերէ՛, որ սիրտդ ուրախութեամբ լեցուի, մերէ՛, Աւետարանը եղպէս կ'ուզէ:

ՄԱՐՍՈՒՊ - Չէ՛, չէ՛, որ գերեզմանիս վրայ մէկ թիզ խոտ բուսնի, գիտցի՛ր, որ էղ բաները չեմ մոռցեր:

ՆՈՒՆԻԿ - (Ներս վագելով) Մա՛րդ, ա՛ջըդ լոյս, Մարուշը ազատուեր է, Չարդարն ըսաց, խնամիեց տունէն կու գայ, Մարուշ ազատուեր է, թոռան տէր ես հիմա:

ՄԱՐՍՈՒՊ (Պեխերուն հետ կը խաղայ՝ յօնքերը պստած):

ՔԱՀԱՆԱՆ - (Ոտքի կ'ելլէ) Մա՛նչ է, թէ՛ աղջիկ, քուրս:

ՆՈՒՆԻԿ - (Ուրախ) Մա՛նչ է, մա՛նչ, տէ՛ր պսպ: Դայեակն ըսեր է, որ իթքն ու բերանը Կարօ Մարսուպին կը նմանին:

Կարօ Մարսուպ կը շտկուի, քիչ մը հետաքրքրութիւն, քիչ մը հայարտութիւն կայ, ու կնոջ կը նայի, կարծես սպասումով լի: Ապա յօնքերը կը պստէ կրկին ու գլուխը անդին կը դարձնէ:

Տեսարանը կը մթննայ արագօրէն:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Բենը նոյնն է: Մութին մէջ քահանան դուրս գացած է: Նունիկ գործի վրայ է: Մարսուպ նստած է տարբեր անկիւն մը:

ՆՈՒՆԻԿ - Էսօր թոռնիկդ տեսայ, արիմա՛րդ, լոյսի կտոր է, էնպէ՛ս մեծցեր է, էնպէ՛ս կը խնդայ:

ՄԱՐՍՈՒՊ - (Չայն չի հաներ. կօշիկները կը թօթու ու մտիկ կ'ընէ):

ՆՈՒՆԻԿ - Իրաւ, որ քթդ է ընկեր, արիմա՛րդ, ամէն տեսնող կ'ըսէ.

«Ճիշդ տեսնե՛ք է ելեր»:

(Կը մթննայ ու կը լուսաւորուի արագօրէն):

ՆՈՒՆԻԿ - Մա՛րդ, թող ազնաներն է հաներ, գետին կը քաշկռտուի, էնպէ՛ս կը խնդայ, էնպէ՛ս կը խնդայ: Խնամի Ակորը կ'ըսէր, որ կալ պիտի տանի թող, միմակ քալել որ սկսի, կօշիկ որ հագնի, կալ պիտի տանի: Լուսի՛ կտոր է, լուսի՛ կտոր:

ՄԱՐՍՈՒՊ - (Չայն չի հաներ, սակայն երբ կիներ կը լսէ քիչ մը երկար, նայուածքը կը վերցնէ ու կնոջ կը նայի՝ սպասումով):

ՆՈՒՆԻԿ - Ինձի որ տեսնէ, թաթիկները կ'երկարէ, գիրկս գալ կ'ուզէ: Մարուշն ալ էնպէ՛ս հասունցեր, աղուորցեր է:

Տեսարանը կը մթննայ դանդաղօրէն:

## ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Երբ կը լուսաւորուի բենը, Նունիկը միմակ է՝ տան գործով մը գրադած: Կը մտնէ Կարօ Մարսուպ, բաւը ուտն վար կ'առնէ, կը դնէ անկիւնը, կը նստի, տրեխներուն փոշին կը թօթու. կոնակը կու տայ սիւնին ու սիկարէթ մը կը վառէ: Այս գործողութեան ամբողջ տեսողութեան Նունիկ անխօս մնացած է:

ՄԱՐՍՈՒՊ - Նունիկ, էսօր ո՞ր էիր գացեր:

ՆՈՒՆԻԿ - Էսօր տունը լուացք ըրի:

ՄԱՐՍՈՒՊ - Տեղ չէի՞ր գացեր:

ՆՈՒՆԻԿ - (Մէկ կողմէն իր գործին համար երթելեկելով ու կանգ առնելով) Չէ՛:

ՄԱՐՍՈՒՊ - Հէջ տեղ չէի՞ր գացեր:

ՆՈՒՆԻԿ - Չէ՛, արիմա՛րդ, ո՞ր ունիմ, որ ո՞ր երթամ:

(Դադար ու լռութիւն, Մարսուպ անհանգիստ է, յայտնի է՝ կը սպասէ, որ կիներ իր թոռան մասին խօսի):

ՄԱՐՍՈՒՊ - Նունիկ:

ՆՈՒՆԻԿ – Ի՞նչ է, արհմա՛րդ:

ՄԱՐՍՈՒՊ – Էսօր Կարուկենց հարսին երախան տեսայ: Էնպէ՛ս աղուր է:

ՆՈՒՆԻԿ – Աղուր է, արհմա՛րդ:

(Լռութիւն դարձեալ):

ՄԱՐՍՈՒՊ – Նու՛նիկ:

ՆՈՒՆԻԿ – Ի՞նչ է, արհմա՛րդ:

ՄԱՐՍՈՒՊ – Նու՛նիկ, թոռնիկդ տեսա՞ր էսօր:

ՆՈՒՆԻԿ – (Յանկարծ անդրադառնալով մարդուն մէջ անցած-դարձածին ու ուրախ) Տեսա՛յ, արհմա՛րդ, տեսա՛յ. կ'ըսես՝ Աստուած եօթն օր թոռնիկիդ վրայ է աշխատեր: Մարուշն ըսաց «ախ» ըրէ. տեսնեմ ձեռքը վերցոց ու ինձի զարկաւ: Ոտքի կ'ելլէ հիմա, բռնուելով կը քալէ, կօշիկ տի հագնի:

(Վերջին խօսքերուն հետ Կարօ Մարտուպի դէմքը ուրախութիւն մը ու հպարտութիւն մը առած է, մինչ լոյսը կամաց-կամաց կը պակսի, ու ամբողջովին կը մթնէ):

### ՏԵՄԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Լոյսը քացուելուն քեմի ձախ կողմն են Նու՛նիկ, Մարուշ. Մարուշի գրկին մէջ՝ մէկ տարեկանը անց մանչուկ մը: Նու՛նիկ ալիւր կը մաղէ, Մարուշ կանգնած է. կը խօսակցին:

ՄԱՐՈՒՑ – Մայրիկ, եկայ, որ օգնեմ քեզի, օգնեմ, մայրիկ, կեսուրս դրկեց:

ՆՈՒՆԻԿ – Շատ լաւ ըրաւ. որ եկար, արեւն ալ հետդ եկաւ, կը բաւէ, օգնութեանդ պէտք չունիմ. երեսդ ու թոռանս երեսը տեսնել կ'ուզեմ, էդ որ տեսնեմ, կը բաւէ:

ՄԱՐՈՒՑ – Երախան սկսեր է խօսիլ, ամմու կ'ըսէ, տէտէ կ'ըսէ, բաներ-բաներ իրար կը խառնէ:

ՆՈՒՆԻԿ – Մուրատն ի՞նչ կ'ընէ:

ՄԱՐՈՒՑ – Արտը կը հերկէ, մա՛յր: Տուն որ գայ, երախայի նման խաղի կը նստի տղուն հետ:

ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ – (Ալիւրի պարկ մը կռնակը կը մտնէ խորքէն) Նու՛նիկ, էդ ալիւրը քերի:

(Նու՛նիկ ու Մարուշ կը ցնցուին ձայնէն: Մարտուպ ինք ալ կը շտկուի ռոպէ մը: Յօնքերը կը կիտէ, ապա լուռ կ'անցնի քեմին աջ կողմը, ալիւրի պարկը կը դնէ գետին, կը սկսի զբաղիլ պարկը քակելու աշխատանքով. կռնակը կիսովին դարձուցած կ'նոջ ու Մարուշին):

ՆՈՒՆԻԿ – (Կը մխտէ՞ Մարուշը ու զլիտով կը հասկցնէ երթալ հօրը քով):

ՄԱՐՈՒՑ – (Հեղ մը կը նայի մօրը, հեղ մը՝ հօրը, ապա անհամարձակ քայլերով կը մօտենայ հօրը՝ կռնակէն) Հայրի՛կ:

ՄԱՐՍՈՒՊ – (Լուռ է, ձեռքերը կը դողան քիչ մը արեւի):

ՆՈՒՆԻԿ – (Գլուխը կը կախէ ու աչքէն արցունքները կը սրբէ):

ՄԱՐՈՒՑ – (Չախ ձեռքով երախան գրկած է, աչով աչքերը կը սրբէ, պահ մը լուռ մնալէ ետք՝ կը դառնայ դէպի խորքի դուռը ու սկսի քալել՝ դուրս ելլելու համար):

ՄԱՐՍՈՒՊ – (Երկարատեւ լռութենէ մը ետք, ետին կը դառնայ, կը տեսնէ Մարուշի դէպի դուռը երթալը, թոռնիկին անոր ուսերէն, թաթիկներով իրեն քաներ մը ըսելը ու) Մարու՛շ...:

ՄԱՐՈՒՑ – (Կանգ կ'առնէ, կը դառնայ ետին):

ՄԱՐՍՈՒՊ – Ի՞նչ տեսակ կօշիկներ, Մարու՛շ:

ՄԱՐՈՒՑ – (Կը վազէ ու հօրը գիրկը կ'իյնայ):

ՄԱՐՍՈՒՊ – (Թոռնիկը առնելով իր գիրկը) Ինչքա՛ն մեծցեր է, Մարու՛շ: Հա՛, պզտի՛կ կօշիկներ, կարմի՛ր կօշիկներ: (Թոռնիկին տոտիկները ափին մէջ առնելով): Տէտէն վաղը Մարտիկին պզտիկ կօշիկներ պիտի քերէ, հա՞...

### ՎԱՐԱԳՈՅՐ ԵՒ ՎԵՐՁ

## ԱՂԱՒՆԻՆՆԵՐԸ

Թատերգության վերածննդ՝ Բ. Փափազեան

### ԱՐԱՐ Ա ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Վարագոյրի քացուելուն՝ տեսարանը կը ներկայացնէ տնակ մը՝ կէս մը քայքայուած պատերով, փորփորուած տանիքով, որուն վրայ կուտրտած աղանետուն մը կայ, աղանետծիրտերով ծածկուած ձողեր կան աստիճանդին երկարած. փեթակներ՝ տանիքին մէկ կողմը:

Տնակին առջեւ՝ զիւղական փողոց մը կամ քաց տարածութիւն մը:

Հեռուն՝ զիւղական տեսարան մը հերկուած դաշտերու, բլուրներ՝ անլի հեռուն: Տան առջեւ 7 տարեկան տղեկ մը ժամգոտած սղոցով տախտակի կտորներ կը կտրէ կամ կը զամէ իրարու:

Բեմին մէկ կողմէն կը մտնեն երկու կիներ՝ իրարու հետ խօսակցելով:

ՄԷԿԸ – Է՞ս է տունը:

ՄԱՆԱՆ – Հա՛, էս է: Աւերակ է դարձեր:

ՄԻԻՍԸ – Որի՞ տունն է, Մանա՛ն պաճի:

ՄԱՆԱՆ – Հա՛, նոր հարս ես, չգիտես: Էսի Թորիկ Օվանենց շէն տունն էր: Իր տղաներէն Խաչիկին քածին ինկաւ: Էդ տղուն՝ Խաչիկին, տարտէն\* մեռան Թորիկ Օվանն ալ, իր կի՛նն ալ՝ Նունիկ պաճին:

ՄԻԻՍԸ – Էդ տղան ո՞վ ի, Մանա՛ն պաճի:

ՄԱՆԱՆ – Թորիկ Օվանի թոռն է՝ Խաչիկի տղան: Մայրը ուրիշներուն դռները հաց կ'սփէ, լուացք կ'ընէ, քաղհանքի կ'երթայ, որ իր գաւակը մեծցնէ: Մարտիկ, (Տղան գլուխը կը դարձնէ կիներուն) մայրիկդ տո՛ւնն է:

ՄԱՐՏԻԿ – Չէ՛, Մարսուպենցն է գացեր՝ լուացքի:

ՄԱՆԱՆ – Հա՛, որ գայ, ըսէ՛ Մանան պաճին եկաւ, նոր հարսենց տունը լուացք կայ, վաղը թող հանդիպի: (Վերջին խօսքերուն եւ յաջորդող քառերուն հետ լոյսը կը նուազի ու բոլորովին կը մթնմայ) Հե՛յ, էսօրուայ պէս կը յիշեմ, ես ու Մնուշը եկեր էինք Նունիկ պաճիին քով, քանի՛ տարի առաջ էր, եօ՞քը, ո՞րքը...

(Մտիքին մէջ փոխուելիքը տնակին պաստառն է միայն, որ պիտի փոխարինուի նոյն տնակը ներկայացնող, սակայն անլի նոր պատերով, առանց ամբողջացած աղանետունի: Շինուելու վրայ եղող ու դեռ չլրացած աղանետուն մը միայն կայ, կան նաեւ փեթակներ: Երբ լոյսը կը վա-

ռի, տան առջեւ նստած են Նունիկ եւ իր դրացուհիներէն Մանան ու Մնուշ):

ՄԱՆԱՆ – (Խօսքը Նունիկին ուղղելով) Նունիկ պաճի, մեծ տղադ՝ Մարգիսը, Աստուած պահէ, հոր տեղն է անցեր, դաշտի բոլոր գործերը ինքն է կ'ընէ. հա, խէրով տղայ է:

ՆՈՒՆԻԿ – Հա՛, Մանա՛ն պաճի, հա՛. հօրը ծերացած ոսկորներուն հանգիստ տալ կ'ուզէ, ամա մարդս հանգստացող տեսակէն չէ, օրն ի բուն կը քանի:

ՄԱՆԱՆ – Թորիկ Օվան աշխատանքը սիրող, քրտինքով շահուած հացին հաւատացող մարդ է, մեծ տղադ՝ Մարգիսն ալ անանկ է, հօրն է եկեր: Պզտի տղադ՝ Խաչիկը, ի՞նչ կ'ընէ, Նունիկ պաճի:

ՆՈՒՆԻԿ – Ան ալ կ'աշխատի, հօրը կ'օգնէ, կաւառները\* շտկել կ'երթայ պազի\*:

ՄԱՆԱՆ – Հա՞, Խաչի՞կն ալ կ'աշխատի:

ՆՈՒՆԻԿ – Ինչո՞ւ կը հարցնես, Մանա՛ն պաճի, հէլպէթ\* կ'աշխատի, պէտք է աշխատի: Նոր հարս ունի, աշխատի պիտի, որ տունը շէն պահէ:

ՄԱՆԱՆ – Հա՛, հա՛, աշխատի պիտի, Իւղաբեր հարսդ անուշ, խելօք հարս է:

ՆՈՒՆԻԿ – Մեծ հարսս՝ Եղսան ալ խելօք ու անուշ հարս է, Մանա՛ն:

ՄԱՆԱՆ – Հա՛, քիչ մը լեզուն երկար է, սերթ է, սերթ:

ՄՆՈՒՅ – Խոթի Գեւոյի աղջիկը, հէրը շարունակ կը խմէ ու զինով է, աղջիկն ալ սերթացեր է, տունը տեսածն ի՞նչ էր որ՝ էդ Խոթի Գեւոյի գիճուվութիւնն ու կոխները:

ՆՈՒՆԻԿ – Ճիշդ ես, դրացի՛ Մնուշ, քիչ մը սերթ է մեծ հարսս, քայց էրկան, տան ու երախաներուն շատ լաւ հոգ կը տանի, ինծի ալ լաւ կ'օգնէ: Մանա՛ն պաճի, Խաչիկին խօսքն որ եղաւ, քիչ մը զարմացար, երբ ըսի, որ հօրը կ'օգնէ. ի՞նչ կայ:

ՄԱՆԱՆ – Հե՛յ, Նունիկ պաճի, քան չկայ:

ՆՈՒՆԻԿ – Չէ՛, լեզուիդ տակ քան մը կայ, չես ըսեր: Թորիկ Օվանի տունը թէ որ կը սիրես, պէտք է ըսես, Մանա՛ն:

ՄՆՈՒՅ – Էդ Մանոյի ու Խաչիկի մասին է, Նունիկ պաճի:

ՆՈՒՆԻԿ – Ի՞նչ Մանօ, ո՞ր Մանօն:

ՄՆՈՒՅ – Աղանի խաղցնող Մանօն:

ՆՈՒՆԻԿ – Հողեմ գլուխը աղուրնիկ խաղցնողին, մեր Խաչիկին հետ ի՞նչ գործ ունի:

ՄԱՆԱՆ – Նունիկ, չըսեմ՝ ըսի, քայց չի ըլլար: Խաչիկն ու Մանօն առտուրնէ մինչեւ իրիկուն իրարու հետ են, դաշտ որ կ'երթան, կ'ըսէ, շիտակ

Մանոյին քովն է, Նունիկ պաճի, պզտի տղադ՝ Խաչիկը, աղանիներու սետայեն\* բռնուեր է, լաւ չէ:

ՆՈՒՆԻԿ - Իրա՞ կ'ըսես, քո՛րս:

ՄԱՆԱՆ - Հա՛, Նունիկ, հա՛, սրտես արիւն կ'երթայ, ամա իրաւ է:

ՆՈՒՆԻԿ - Խաչիկն ու Մանօն... Անօրի Մանօն, չորցած Մանօն, որ մէկ հազայ, գօտին եօթը տեղէ կը փրթի:

ՄՆՈՒԹ - Հա՛, էդ Մանօն է, էդ անտուն Մանօն, աղուրնիկ խաղցնողին ո՞վ աղջիկ կու տայ: Ամա տղադ՝ Խաչիկը, կարգուած է, Իւղաքերին մեղք է, Նունիկ պաճի:

ՄԱՆԱՆ - Աղուրնիկ խաղցնողէն խէր չ'ելլեր, Նունիկ. էդ Մանոյի գօտին դանակն անպակաս է, կռիւ կը փնտռէ, փորձանք է, փորձա՛նք, Նունիկ: Ինչ կ'ընես, ըրէ՛, տղադ ազատէ՛ ե՛նոր ճանկերէն:

ՆՈՒՆԻԿ - Հա՛, Մանա՛ն, ճիշդ կ'ըսես, թէ որ իրաւ է, ես դեռ չեմ հաւատար, թէ մեր Խաչիկը հօր անունը ցելսը կը ձգէ ու աղուրնիկ խաղցնողի հետ բարեկամութիւն կը կապէ:

ՄԱՆԱՆ - Հաւատալը դժուար է, Նունիկ, հարկաւ, տղադ է, պզտի տղադ, բայց մեղք է, պզտի հարսն ա՛լ մեղք է, աս տունն ա՛լ: Աղուրնիկ խաղցնողին տունէն խէր-պէրէքէքը կը փախի: (Ոտքի ելլելով) Երթանք, Մնա՛ջ:

ՄՆՈՒԹ - (Նոյնպէս ոտքի ելլելով) Հա՛, երթանք. շտապը՝ սրտիս վրայ բեռ էր եղած, կ'ուզէի որ ըսեմ. ըսի՛նք, հիմա ալ քու գիտնալիք բանդ է, Նունիկ: (Կ'ելլեն դուրս բեմի ձախէն: Նունիկ պաճ մը կը մնայ շուարած, աչքերը՝ զացողներուն ետեւէն, ապա ներս կը դառնայ ու կը կանչէ):

ՆՈՒՆԻԿ - Աղջի՛ Իւղաքեր, Իւղաքե՛ր:

ԻՒՂԱՔԵՐ - (Դուրս կու գայ) Ի՞նչ է, մայրիկ:

ՆՈՒՆԻԿ - Մարդդ՝ Խաչիկը, ո՞ր գնաց:

ԻՒՂԱՔԵՐ - Չեմ գիտեր, մարէ՛, ըսաւ՝ գործ ունի:

ՆՈՒՆԻԿ - Բահ կա՞ր ուսին:

ԻՒՂԱՔԵՐ - Չէ՛, մարէ՛, չկար: (Կը դառնայ ետ, որ ներս մտնէ): Էդ անկողինները պիտի վար տայիր, որ քակէի, մարէ՛:

ՆՈՒՆԻԿ - Հա՛, կու գամ հիմա:

(Իւղաքեր ներս կ'անցնի: Նունիկ կ'ելլէ տեղէն, կը մայի չորս կողմը, կը մայի տանիքին. կ'անցնի բեմին աջ կողմը, առաջամաս, այսինքն՝ իրենց տան պատին ետին կը գտնուի խորքէն եկողներու համար: Խորքէն կու գան Մանօ ու Խաչիկ:

Մանօ նիհար երիտասարդ մըն է, հազած է կտրտած էմբարի\* մը, ոտքերուն՝ մաշած կօշիկներ: Փրթրտած գօտի մը կապած է, որուն մէջ դաշոյն մը կայ խրուած: Խաչիկ երիտասարդ գիւղացի է՝ աւելի լաւ ու մաքուր

հագուած, քան Մանօ: Խորքէն մտնելէ ետք՝ Մանօ կանգ կ'առնէ, զլուխը վեր կ'ընէ, ձեռքը ճակատին դրած՝ կը դիտէ երկինքը: Խաչիկ քայլ մը անցնելէ ետք՝ կանգ կ'առնէ, կը մայի ընկերոջ, ու

ԽԱՉԻԿ - Էդ ի՞նչ է կը դիտես, Մանօ:

ՄԱՆՕ - Էդ գլխիվար դարձող աղանին կը տեսնե՞ս, մա՛, մա՛, է՛ն, որ հիմա դէպի արեւը կը բարձրանայ. է՛ն իմ անճաման Կապուտիկն է, հիմա կ'երթայ, Աղաճանի աղանիներուն կը խառնուի ու աղուար էգ մը հետը առած՝ իմ աղանետունը կու գայ:

ՆՈՒՆԻԿ - (Լսած է Մանոյի ու Խաչիկի ձայնը, պատին տակ կծկուած, տառապազին դէմքով, մտիկ կ'ընէ անոնց խօսակցութիւնը):

ՄԱՆՕ - (Կը շարունակէ դիտել ու կը խօսի մոյն ատեն) Հա՛, տե՛ս, տե՛ս, մտաւ Աղաճանի աղանիներուն մէջ, կը դառնան միասին ... Նայէ՛, մայէ՛, Կապուտիկը զատուեցաւ խումբէն, տե՛ս, միմակը չէ, հետը հատ մը առած՝ կը դառնայ:

ԽԱՉԻԿ - Աղաճանը չի՞ մեղուիր, որ իր աղանիները քու աղանետունը կու գան:

ՄԱՆՕ - Պա՛հ, որո՞ւ հոգ: Ջանի անգամ ուզեց հրացանով Կապուտիկը վար առնէ... (Չեօքը դաշոյնին դնելով) Էտոր վախը որ չ'ըլլար, Աղաճան շատոնց Կապուտիկը զարկած կ'ըլլար:

ԽԱՉԻԿ - (Որ նոյնպէս աղանիները կը դիտէ) Հա՛, աղուար աղանի է էդ Կապուտիկը:

ՄԱՆՕ - Աղուրնիկներուն էն խասը, որ ըսես, Միրանն է, Խաչիկ. էդ ձեռք Լոզդարի քարիին\* հետ չեմ փոխիր: Երէկ տեսա՞ր, թէ ինձոր թել կ'առնէր: Էնպէս քախայ\* կու գայ, որ կ'ըսեն երկինքէն կախուած քարման կը դառնայ:

ԽԱՉԻԿ - Եկ, էդ Միրանն ինձ տո՛ր, Մանօ: Ջանի չէրէկ ցորեն որ ըսես՝ կու տամ քեզի: Խաս աղուրնիկ է, աչքս վրան է:

ՄԱՆՕ - (Յառաջանալով դէպի բեմի կեդրոնը, դէպի Թորիկ Օվանի տունը, Խաչիկն ալ քովէն քալելով) Խե՞նդ ես, Խաչիկ, ես ցորենն ինչ ընեմ: Էդ ջուխտ աղուրնիկները՝ Միրանն ու Կապուտիկը, իմ հոգին են: Քարուանով լեցուն խութիին ու խումաշ թէ որ ինձի տաս, ես էդ աղուրնիկները չեմ տար: Հա՛, տե՛ս, ես քեզի կու տամ Չըտչըտը, Տորոնը: Երէկ էդ Չըտչըտը Աղաճանի աղուրնիկներէն մէկը աղուրնոցս քերած էր: Իրկուունը, Չէք քարին քով Աղաճանը տեսաւ զիս: Էն գիտէ, որ իրեն աղուրնիկը իմ քովն է, էնպէս մայեցաւ... Կ'ըսես՝ ճիկերս դուրս պիտի քաշէ: Որ քերանը քանար... Էն վախը Մանօն գիտէր իր ընկիթը: Էն միմակ Կապուտիկէն կը վախնայ. ֆախաթ էս անգամ քերողը Չըտչըտն էր: Ես ի՞նչ մե-

դառնոք են, Խաչիկ, իրեն աղուրնիկը իմ Չըաչըտին սետայ է ձգեր, իմ տունն է եկեր:

**ԽԱՉԻԿ** – Անանկ է նը, եղ Չըաչըտը ու վեց ջուխտ ըլ որձ ու եզ աղուրնիկ որ ինձի տաս, ես քեզի կալին՝ երեք չերէկ ցորեն կու տամ:

**ՄԱՆՕ** – Էհ, եղպէս վնաս չունի, Խաչիկ, կ'ըլլայ: (Նայելով տանիքին վրայ դեռ չաւարտած աղուրնոցին) Հա՛. եղ կողմը լաւ է, Խաչիկ. մեղունքին մօտ որ ըլլին, լաւ չէ: Էսքան տեղը աղուրնոցի համար հերիք է, Խաչիկ: Էն կողմը կը շինես դուրը, էն միւս ճակատին վրայ հինգ-վեց պատուհան կը բանաս. ցուրտն\* դէպի եղ ծառը կ'երկնցնես երկու սրբըխ\*:

**ԽԱՉԻԿ** – Ինձ էնպէս կու գայ, թէ էսքան տեղը պզտիկ է, Մանօ:

**ՄԱՆՕ** – Ի՛նչ պզտիկ, Խաչիկ, եղպէս կ'երեւայ: Ֆախաթ շինէ, որ տեսնաս: Հըմը՛, հըմը՛, իմ աղուրնոցիս չափ տեղ է. եղ տեղ պոլ-պոլ հարիւր խանատ\* աղուրնիկ կ'առնէ:

**ԽԱՉԻԿ** – Անանկ է նը, էսօր տախտակները կը թափեմ հոս, միասին կը շինենք:

(Նայուածքնին կը դարձնեն կրկին երկինք, ու աղանիները կը դիտեն, անոնց շարժումներուն հետեւելով՝ կռնակնին կը դարձնեն տանը, շեղակի, կը դիտեն այս անգամ քեմի ձախ անկիւնի վերելը):

**ՆՈՒՆԻԿ** – (Իր կծկուած, ճզմուած վիճակէն դուրս գալով՝ քայլ մը առաջ առնելով դէպի տան պատի անկիւնը) Խաչի՛կ, Խաչի՛կ:

**ԽԱՉԻԿ** – (Ետ դառնալով) Կի՞նէ ի՛նչ կայ:

**ՆՈՒՆԻԿ** – Ի՛նչ տըլլի, եսվրոս\*, աղանիները փոր չեն կշտացներ, դուն կարգըուն մեծ տղայ ես. եղբայրդ՝ Սարգիսը, աղօթողմը ծայր չտուած՝ գործի է սկսեր: Գեղը մեծով-պզտիկով գործի վրայ է, եսւրոս: Հըլէ տես, քեզ պէս մըն ալ կա՞յ: Իշտէ՛ Մանօն, իշտէ՛ դուն:

(Մանօն աչքերը երկինք տնկած՝ շատ բարձրէն անցնող աղանի մը կը դիտէ, Խաչիկ հիացումով կը հետեւի Մանոյին, առանց մօրը ուշադրութիւն դարձնելու):

**ՆՈՒՆԻԿ** – Խաչիկ, Խաչիկ, քեզի կ'ըսես. քերանս բանալ մի տար, որ չանիծես: (Խաչիկ աչքերը վար չ'առնելու երկնքէն):

**ՆՈՒՆԻԿ** – Խաչիկ, Խաչիկ, քեզի ի՛նչ եղաւ. մայրդ է խօսողը, Խաչիկ: Էկուր եղ բառը առ, թարլան գնա՛: Պապդ ըսաց, որ երթաս Մարխոնի թարլին կաւառները շտկես. վաղը ջրտուրի օրն է:

**ԽԱՉԻԿ** – (Բոպե մը դառնալով մօրը) Հիմա պապուն ըլ՛ պիտի ըսին, քեզի ըլ: Ի՛նչ է, հաւի պէս՝ կըռ-կըռ-կըռ (Կրկին կը դիտէ երկնքը):

**ՄԱՆՕ** – (Չեղբը վար առնելով) Նտա՛ն, նտա՛ն, աղուրնոցիս պատիս նստա՛ն Կապուտիկն ու Աղանանի աղանիներէն մէկը (Կը վազէ դուրս):

**ԽԱՉԻԿ** – Կեցի՛ր, Մանօ՛, կեցի՛ր, ե՛ս ըլ կու գամ: (Կ'ելլէ դուրս ետեւէն):

(Նունիկ կը մնայ քարացած, կը նայի տղուն ետեւէն, կը նայի տանիք գամուած քանի մը ցիցերուն. լոյսը քիչ-քիչ կը պակսի, օրը իրիկուն կ'ըլլայ, ո՛չ գիշեր սակայն, ո՛չ բուրբուկն մութ. իրիկնադէմ միայն: Նունիկ նստած է տան շեմին: Բահ մը ուսին՝ կու գայ Սարգիս՝ մեծ տղան. արեւէն այրած դէմքով, քրտնաթոր ճակատով):

**ՍԱՐԳԻՍ** – Մարէ՛, մեր Եղսային ըսէ՛, որ եկայ, կերակուրը թո՛ղ պատրաստէ. ես եզներուն կերը տամ, գամ:

**ՆՈՒՆԻԿ** – Պապդ ո՞ր մնաց, Սարգիս:

**ՍԱՐԳԻՍ** – Արթոյնաց պաղչին քովէն գատուեցաւ: Ըսաւ՝ երթամ Մարխոնի թարլին կաւառները նային: (Սարգիս տան ետեւէն կ'անցնի: Նունիկ կը կանչէ՛)

**ՆՈՒՆԻԿ** – Աղջի Եղսա՛, Սարգիսը եկաւ, կերակուրը կ'ուզէ. եզներուն քովն է, կերը տայ, գայ:

(Թորիկ Օվան, վաթսուննոց, պողպատեայ դէմքով, հաստ պիխերով, ալիխառն մազերով մարդ մը, ուսին՝ բահ: Բահը կը դնէ պատին, գրակը կը հանէ, կը սրբէ քրտինքը):

**ՆՈՒՆԻԿ** – (Կ'ելլէ նստած տեղէն, կը մօտենայ Թորիկ Օվանին ու ժպիտով մը, որուն մէջ ցաւ ալ կայ) Բարեւ, մարդո՛ւկս: (Ուսէն խտաի շիւղ մը վերցնելով): Ի՛նչ է, արեւը տուիր, լուսնկա՞ն առիք: Անօթութի՛ւնդ ըլ մոռցար:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – (Նեղսրտած) Նունիկ, եղ տղուն ըսի՞ր, որ երթայ եղ կաւառները շտկէ:

**ՆՈՒՆԻԿ** – Հըլէ կերակուրդ քերես, կե՛ր, ե՛ս ըլ տահա բան չեմ դրեր քերանս:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Կերակուրն ի՛նչ ընիմ, կնիկ, կը թողո՞ւն, որ նստիս հալալ կերակուր ուտես: Վաղը ջուրին օրն է: Էսօր նայեցայ, եղ կաւառները շտկուած չէին... Էս ի՛նչ պիտի ըլլի ես տղուն վիճակը, մէկ օր չէ, երկու օր չէ...

(Թորիկ Օվան կը նստի, տրեխները կը հանէ, կը թօթուէ. հետագայ խօսակցութեան ժամանակ Նունիկ կանգնած է երկան կողքին՝ ձեռքերը դիմացը կապած):

**ՆՈՒՆԻԿ** – Զանի չըսիմ, ինձի տէրտ պիտի ըլլի, արիմարդ, էսօր եղ տղան կերակուրի ըլ չեկաւ:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Ո՞ր է գացեր:

**ՆՈՒՆԻԿ** – Ո՞ր պիտի երթայ, առտուրնէ իրիկուն Թըլկանց Մանոյի հետ է:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Մանոյի՞ հետ:



ՆՈՒՆԻԿ - Հա՛, Մանոյի հետ: Դրացիները ըսին՝ չհատացի, ետքը պքերովս տեսայ. ականջովս ալ լսեցի:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Ի՞նչ կ'ըսեին, Նունիկ:

ՆՈՒՆԻԿ - Մեղումներու ձայնէն շատ բան չիմացայ: Խաչիկը կ'ըսէր որ Չըտչըտը ու վեց ըլ որձ ու էգ աղանի տաս, կալին քեզի երեք չէրէկ ցոռն կու տամ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - (Դեմքը արեւի լոջացած) Ի՞նչ, աղուընի՞կ:

ՆՈՒՆԻԿ - Հա՛, աղուընիկ, աղուընիկ, արիմա՛րդ. Խաչիկը աղուընիկ խաղցնող կ'ըլլի:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Թորիկ Օվանի՞ն տղան... Ի՞նչ տղաս:

ՆՈՒՆԻԿ - Ըսի իրեն, որ երթայ կաւառները շտկէ. ինձ ականջ չտուտ երեսս պիլէ՞ չնայեցաւ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Մանոյին հետ ընկեր ըլլողին խէրը չկայ, Նունիկ հէլպէք երեսդ ըլ չի նայիր, մայր ըլ չի ճանչնար:

ՆՈՒՆԻԿ - Մեր տղան էդ տանիքի կիսապատին քով աղուընկատուն պիտի շինէ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Ի՞նչ կ'ըսես, Նունիկ:

ՆՈՒՆԻԿ - Ականջովս լսեցի, արիմա՛րդ, ականջովս: Հեղ մըլ տեսայ քթերնին երկինք վերցուցին ու ալ վար շառին: Օ՛ խէ, աղուընի՞կ տեսեր են:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - (Կռնակը պատին տալով, բարձ մը տեղաւորելով կռնակին տակ) Էս տղան անէժք պիտի բերէ մեր գլխուն: Ես կը վախնամ, Նունիկ, աղուընկայ թելը տան վրայ անէ՛ժք է, անէ՛ժք: Ալ ի՞նչ բանի համար է Էս մեր չարչապալան\*: Մեր ըխթիար\* հալով դու ու դադար չունինք: Որո՞ւ համար, Նունիկ. հետերնիս չպիտի տանէինք ա: Իրենց համար է չորն իմ ընկեր, ծառ կը անկեմ, թարլա կ'առնեմ, տաւար կ'աւելցնեմ: Իրենց համար է, Նունիկ. իրենց համար: Սարգիսը որ չըլլի, էս տունը կը փլի, Նունիկ: Էնոր փէշերուն վրայ խունկի հոտ կայ: Էսի ջրտուք է, կը վազէ. էսի ջաղացք է, կը հասնի. էսի լուծք է, էսի հունձ է, էսի կալ ու կուտ է. բոլորին հասնողը էդ Սարգիսն է: Էն տղան՝ Խաչիկն ըլ, ձեռքը մոխիրը չի թաթխեր: Կարգըուն մեծ տղայ է, հիմա ըլ ելեր աղուընիկ կը խաղցնէ: Գեղացիք, դու ու դրացի ի՞նչ պիտի ըսեն, Նունիկ: Պիտի ըսեն, որ Թորիկ Օվանի տղան աղուընիկ կը խաղցնէ: Էդ ինձ համար մեռնի՞լ է, մեռնի՞լ:

(Վերջին խօսքերուն հետ ոտքի ելած է ու քահը ուսին կը գարնէ՝ դուրս ելլելու համար):

ՆՈՒՆԻԿ - Ո՞ր կ'երթաս, արիմա՛րդ, մատի՛ր, քրդոն մը հաց ծամէ՛:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Երթամ, էդ կաւառները շտկեմ, գամ, վաղը ջրտուքի օր է: (Դուրս):

Նունիկ ներս կը մտնէ, խոնջան դուրս կը բերէ, ճաշի սեղանը կը պատրաստէ սեպիքին առջեւ: Խաչիկ ներս կու գայ, ուսին՝ տախտակներ, կ'անցնի քեմին աջ անկիւնէն տանը ետելը՝ քեմէն դուրս. քիչ վերջ այն կողմէն պիտի լսուի սողոցի ձայն: Լոյսը կը պակսի, գրեթէ մթնած է արդէն: Թորիկ Օվան ետ կը դառնայ, քահը կը դնէ պատին, կը մտնի սեղանին առջեւ (ցած, կլոր սեղան), խաչը կը հանէ, քրդոն մը հաց կը նետէ քերանը. կը լսուի սողոցի ձայնը տան ետելէն. Թորիկ Օվանի երկրորդ պատանոջ օղին մէջ կը մնայ, ականջ կու տայ ձայնին կողմը, պահ մը մտիկ կ'ընէ սողոցի ձայնին, ապա՝ օգտուելով սողոցի ձայնին մէկ դադարէն)

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Խաչի՞կ:

ԽԱՉԻԿ - (Տան ետելէն քեմ գալով ու հորը մօտենալով) Ի՞նչ կայ, արա՛ք\*:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Ի՞նչ տըլլի, օղո՛ւլ. նէ՛ հացի կու գաս, նէ՛ ըլ տան տղայ կ'ըլլիս: Լսեցի՞ Թըլկանց Մանոյին հետ ընկեր ես եղեր, աղուընիկ կը խաղցնես: Մանկ մօտ էկո՛ւր, երեսդ տեսնեմ. աչքերս շատ չեն գատեր: Էհ, էս ըխթիար տարիքիս մէջ է՞դ ըլ պիտի տեսնայի: (Խաչիկ լուռ է): Էդ ի՞նչ է՛ կը շինես, Խաչի՞կ:

ԽԱՉԻԿ - Աղուընկատուն:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Աֆէրի՛մ օղո՛ւլ, աֆէրի՛մ. չես ըլ ամչնար, տահա կ'ըսես ըլ: Մենք էնդին դատինք, բանինք. տղան էտղին քունը ծախեր, աղուընկատուն կը շինէ: Էս տարիքիս մէջ կը տեսնես, որ քահը փէճու\* չեմ ձգեր: Տուն որ կու գամ՝ մէջքս չեմ կրնար շտկել: Էն տղան՝ Սարգիսն ըլ, գիշեր-ցերեկ, շըլլին\* ծոներ, կ'աշխատի: Դուն էստեղ աղուընկատուն կը շինես: Ալ դուն պզտիկ տղայ չես, կարգըուն մեծ տղայ ես, Խաչիկ: Պարապ տեղ էլին աղջկան սէպապ եղանք, քեզի կին քերինք: Արգար Ակոն՝ Թորիկ Օվանի տղան տեյի քեզի աղջիկ տուաւ: Չես ըսեր, որ Խաչիկ աղուընիկ խաղցնող կ'ըլլի, կնիկն ի՞նչ ընէ: Մի շիներ, Խաչիկ, ետարուս, ձգէ՛ ուրագո, կուտրէ՛ տախտակներդ. էդ աղուընկատունը մի՛ շիներ: Թորիկ Օվանի տան վրայ աղուընկայ թել մի՛ բանար: Թորիկ Օվանի տունը սրբատան պէս արեւակ մի՛ դարձներ: Աղուընկայ թելը տան վրայ անէ՛ժք է, ետարուս, անէ՛ժք: (Պահ մը լռութիւն): Ըսէ՛, տեսնեմ, Մանոյին ի՞նչ բանին հաւաստեցար: Մանօ ըսածդ՝ գեղին երեսէն ինկած անօթիին մէկը, տուն-տեղ չունի, արիմն երեսը քսեր, կ'ոլորի: Անցեալ տարի էն մեր պաղչին չթիւր կուտողը Մանօն էր:

ԽԱՉԻԿ - Մանօն էս բանն լուր չունի, արա՛ր:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ - Մանօն ի՞նչ բանի լուր չունի, որ էդ բանին ըլ չունեմայ, Խաչիկ: Էքուկենց հարսին խոտի ծրարը խզոտո՞ղն ալ Մանօն չէր:

Աղաճանին տունը կրակ ձգողն ալ Մանօն չէր: Ալ ո՞րը ըսեմ, բոլոր գեղացիներուն բերնին ծամոց է դարձեր: (Լոռիփին): (Վեր քաշելով իր չիպուխը) Էնդին Աղաճանը կայ, Խաչիկ: Կնիկը ասդին կ'իյնայ, անդին կ'իյնայ, հաց բանալ կ'երթայ, քաղհանք կ'ընէ, որ տուն ապրեցնէ: Ինքն ալ ըսես, չամչնար, տահա աղուընիկներէն վազ չի գար: Կինէ անօթի, կինէ անօթի. տան մէջ խեր-պերէք չկայ: Աղուընիկ պահողին տունը ի՞նչ պերէքը ըլլի: Աղուընիկ ըսածը վանքերու մէջ կ'ապրի, սրբանոցի քարերուն վրայ կը թառի: Լաւ խուշ է, նախշուն խուշ է, ֆախաթ տան մէջ պահելը անէ՛ծք է, եւրոնս, անէ՛ծք: (Թորիկ Օվան կը փոխտ իր չիպուխի թութունը, կը վառէ կրկին): Էդ աղբիւրի քովի ծակ քարը գիտն'ս, Խաչիկ: Ատենօք էդտեղ Կըլկըլ Չաքարին աղուընկատունն էր: Աղբիւրը ամաջ էս եկեղեցիին քով կը վազէր: Էտնք իմ պապուս եւ իմ օրով եղած քաներ են: Ողորմած հոգի պապս կը պատմէր, որ տարի մը էդ աղուընիկները կը շատնան, ես ըսեմ հազար, դուն ըսէ երկու հազար խանաւա աղուընիկ. որ երկինք թռէին, արեւը կը խափանէին. գեղը անոնց շուքով կը լեմար: Էն տարին դաշտին վրայ պուտ մ'անձրեւ չի կաթիր: Այլուխի\* չափ ամալ մը որ տեսնային, գիւղացիները իրենց աչքերը երկինք կը տնկէին: Էն պզտիկ ամալը կու գար գեղին վրայէն ու Հազար Պապայի լեռան կողմը կ'անցնէր: Հսկում, մատաղ չմնաց, որ չընէին: Էն տարին էգիները\* չորցան, թարլաները ճեղքուեցան: Ես երազի պէս կը յիշեմ. կ'ըսէին, որ Կըլկըլ Չաքարի աղուընիկներուն անատութիւնն էր, որ գեղին մէջ սով ձգեց: Ո՞վ գիտէ: (Պահ մը լռութիւն) Ես տեսայ Կըլկըլ Չաքարը: Էն պիչիմ\* մարդ կեանքիս մէջ տեսած չեմ: Անոր գլխին մազերը ուղտի մազերու պէս էին. պոյը բարձր. աչքեր մ'ունէր, ես բիրը սոխնակի մէջ խանտիլի պէս կախ էր: Գեղին մէջ կապոյտ աչք չկար. միմակ Կըլկըլ Չաքարի աչքերն էին կապոյտ: Կ'ըսէին, որ մութին մէջ կընար տեսնել. ո՞վ գիտէ: Ֆախաթ Սուրբ Սարգսի լեռնէն աղուընիկ մ'որ անցնէր, մէկ անգամ նախելով կընար ըսել, թէ ի՞նչ պիչիմ աղուընիկ է ո՞րձ է, թէ էգ, նախշո՞ն է, թէ մրէգ: (Լոռիփին): Կըլկըլ Չաքարի աղուընիկներուն մէջ սոն սոնը ինկու չու: Էդ խուշերը խանաւ խանաւի վրայ թափեցան: Ատուտ մըն ալ ելանք, որ Կըլկըլ Չաքարը աղանետան տանիքէն իր գօտիով ինքզինքը կախեր է: Հա՛, Խաչիկ, աղուընիկ խաղցնողին վախճանը եղապէս է: Էս բաները կը պատմեն քեզի, որ լաւ հասկնաս, վազ գաս սետայէն: Մանոյին ույմիշ մ'ըլլիր, էն ան՛ մէր, պապ ունի, ան՛ կնիկ: Ֆախաթ դուն հէ՛մ ծնողը ունիս, հէ՛մ կնիկ: Էսօրս Թորիկ Օվանին տունը խանէտէն, արօրով ու մեծկակ ախտով տուն է: Է՛հ, որ չաշխատինք ո՞րտեղէն էս քառուն փեթակ մեղուները, էս ամբարներով ու փեթակներով ցորենը, ո՞ր-

տեղէն էս նախըր մի տաւարը: (Լոռիփին): Ես իլէն մերդ ըխթիարցեր ենք: Էսօր կանք, վաղը չկանք: Էս տունը դարձնողը դուք պիտի ըլլիք. ես վաղը ամի մը հող կ'ըլլիմ, ֆախաթ կ'ուզեմ, որ Թորիկ Օվանին տունը ա՛լ անիլի չէննայ, երկու աղբարներդ սէր սիրով ապրիք. ձեր պապերուն պէս դաշտի աշխատանքի նուիրուիք: Է՛հ, էս պիչիմը որ բռնես, աղուընիկ որ պահես, Մանոյի հետ որ ըլլիս, եղբօրդ՝ Սարգսին հետ խելք խելքի, կոնակ կոնակի որ չտաս, էս տունը էսպէս շէն չի մնար, Խաչիկ: Օր մը էս տան ճրագը կը մարի, աղային հողը կ'երթայ ձեռքերնուս. այն ատեն վա՛յ իմ գլխին, վա՛յ իմ գերեզմանին:

(Պահ մը լռութիւն: Հաւու կրկնոց, շան հաջոց, հեռաւոր աքաղաղի մը ձայնը):

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Խաչիկ, եւրոնս, կը ձգես էդ ուրագդ ու խզարդ: Վաղը բահը կ'առնես ու կ'երթաս էդ Կարմուճի թարլին, մուկերը կը հանես: Էսօր տեսայ, ամբողջ թարլան փորփոր են ըրեր: Դե՛, հիմա էլ պատկէ. կէսգիշերն անցաւ:

## ՎԱՐՍԳՈՅԻՐ

### ԱՐԱՐ Բ

Արար երկրորդը ունի երեք տեսարան, անաջինն ու վերջինը տեղի կ'ունենան Թորիկ Օվանեց գիւղական տան ներսը, երկրորդը՝ ցորենի չէ՛ծի մը քով՝ հնձուած արտի մը մէջ, գիւղէն դուրս:

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Թորիկ Օվանի տան ներսը, գիւղական սենեակ մը՝ իր դարսուած անկողիններով, սեւիթներով, կլոր սեղանով, կուժ ու կուլայով, ճրագկալով ու ճրագով: Թորիկ Օվան, կոնակը տուած սիւնի մը, նստած միմտէրին՝ մտահոգ կը ծխէ իր չիպուխը: Նունիկ տան գործի վրայ է, անկողինները կը հաւաքէ կամ կը դարստ: Կը նայի Թորիկ Օվանի մտածկոտ երեսոյթին, կը շարունակէ գործը:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Է՛հ, տնաշէ՛ն, մինչեւ հիմա դատանք-բանանք, ի՞նչ շահեցանք: Մէջքդ գետինն է կպեր, կինէ կ'աշխատիս:

ՆՈՒՆԻԿ – Ի՞նչ է, արիմա՛րդ, երեսիդ գոյնն ինչո՞ւ է փոխուէր, հիւա՞նդ ես:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Ափ մը հո՛ղ, Նունիկ, ափ մը հո՛ղ... Էս օրերո՞ւն պիտի մնայինք: Աստուած էդ ափ մի հողը ինչո՞ւ կ'ուշացնէ: Էլի՞ն Կիլիմ մէջ մեզ պէս մէկ մըլ կա՞յ: Հէ՛յ կիտի Թորիկ Օվան, տէրտ, աշխատանք, զաւակ մեծցուր...

**ՆՈՒՆԻԿ** – Ի՞նչ կայ, արիմա՛րդ, ի՞նչ է եղեր:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Անցած օր Կարուկենց էգուն թուփերը քաշեր են, գեղացիք կը խօսան, թէ Մանօն է ընողը, Մանոյի հետ մեր տղու անունն ըլկու տան, թէ Խաչիկն ըլ կետն է եղեր: Վերջացաւ, Նունիկ, վերջացաւ, էս տունը կը փլի, Խաչիկը Մանոյի ու Աղաճանի նման աղուընիկ խաղըընող է դարձեր, վերջացա՛ւ: Գեղացիները երես կը դարձնեն ինձմէ, Նունիկ, երես կը դարձնեն: Երէկ Չէք քարին քով խնամի Ակոբին հանդիպեցայ: Ուրիշ անգամ որ ըլլար, ճղարայ կը հրամցնէր, հալ-քէֆ կը հարցնէր, գինի խմել կը հրաւիրէր... Երէկ չոր քարու մը տուաւ միմակ, կը դժուարանար խօսիլ, լեզուին տակ բան մը կար, ըսելիք մը ուներ ու չըսաւ: (Պահ մը լռութիւն): Է՛հ, իրաւունք ունի խնամի Ակոբ, իրաւունք ունի... Մեր տղան զնաց սեպեպ եղաւ անոր աղջկան, տուն հարս քերաւ, կինէ մարդ չեղաւ, խելքն ու միտքը աղուընիկներուն ու Մանոյին է. տունն ալ մեծ հարսին հետ խօսք-կռիւ... Հէլա՛յէ տի նեղուի խնամի Ակոբ:

**ՆՈՒՆԻԿ** – Ինչ մեղքս պահես, արիմա՛րդ, էդ միւս, մեծ հարսին չըխըըն ալ չըխըըն չէ: Էսօր շաքաթ մըն է, մատը մատին վրայ չի դներ: Փռչման եղայ, թռնիկիս ըսի, թէ հորթերը էգին տար: Էդ ըսելս գիտցայ, հեղ մըլ տեսայ պիծեկի պէս վրաս թառաւ: Ի՞նչ ըսէ աղէկ. «Ես չեմ ուզեր, որ զակիս բան ըսես: Էրիկս կ'աշխատի՝ հերիք չէ, զաւա՛կս ըլ աշխատի: Աղա տղադ՝ Խաչիկը, տեներն է, կանչէ՛, որ տանէ: Ալ հերիք եղաւ, ես են էրկան ինչ ըսեմ, որ գլուխը ծռեր, կ'աշխատի, էնդի Խաչիկն ըլ Մանոյին հետ գիշեր-ցերեկ աղուընիկ խաղցնէ»:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Է՛հ, ի՞նչ ըսեմ Նունիկ. մարդու երես չեմ կրնար մայիլ: Մեծ հարսին լեզուն հէլա՛յէ երկար կ'ըլլի: Աստուած էդ տղուն՝ Սարգիսին, համբերանքը չհատցնէ: Է՛հ, որ Սարգիսը երես դարձնէ, Թորիկ Օվանի տունը կը փլի, Նունիկ: Ես ա՛լ հին Օվանը չեմ, էսօր ջրտուրք զօռով գլխեցի: Ես ինտո՞ր ընիմ, Նունիկ. ըսելէն, խրատելէն քերանս մազ բուսաւ: Օգուտ չ'ընէր, մարդը տարուէր է Մանոյին: Աստուած Սարգիսին համբերանքին պակասութիւն չտայ... Բայց Սարգիսին ալ հալը հալ չէ. փոխուե՛ր է, փոխուե՛ր...

**ՆՈՒՆԻԿ** – Ի՞նչ չփոխուի, արիմա՛րդ, էդ մեծ հարսը որ կայ ... Կ'ըսես՝ օճը գլխէն է խածեր: Անէն հեղ, որ Սարգիսը թարլէն կու գայ, կը սկսի քրփըսը: Էսօր ըլ պուպուկ-պուպուկ կիբակնատը լաթերը հագեր մատեր էր:

Խռիկ Գետոյի տո՛ւնն էր տեսեր... Հիմա ըլ վիրա-վիրա\* մերանցը կը վազէ, տան եղած բախին, զինին պապուն՝ Խռիկ Գետոյի փորը կը լեցնէ: Փա՛ռք Աստծու, երեք շաքաթ է, որ Խռիկ Գետոյի ոտքը մեր դռնէն է կտրեր:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Էդ լաւ նշան չէ, Նունիկ, Խռիկ Գետն մեր սեղանէն ու զինիէն վազ անցնող չէր: Կ'երեսայ մէջերնին խօսք է դարձեր: Ես քա՛ծիքէ կը վախնամ, կնիկ, բաժիքէ:

**ՆՈՒՆԻԿ** – Էդ հարսը, անցեալ օր շիտէկ շիտակ «բաժիքը կ'ուզեմ» կը պոռար: Ես քեզի ըսի, արիմա՛րդ, որ էն սարխոն\* Խռիկ Գետոյի աղջիկը Սարգիսին համար կին չէ: Էսօր գայ, վաղը բաժիքը կը ձգէ:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Հարսն ի՞նչ ընէ, Նունիկ, օտարի աղջիկ է, հոգը չէ՛ տունն ի՞նչ կ'ըլլի: Բաժիքը որ ըլլի, սեպեպ էդ տղան է, աղուընիկներն են, Նունիկ, աղուընիկները:

(Կ'ելլէ ոտքի):

**ՆՈՒՆԻԿ** – Ո՞ր, արիմա՛րդ:

**ԹՈՐԻԿ ՕՎԱՆ** – Երթամ կալը, տեսնեմ՝ ի՞նչ ըրին: Սարգիսը ջրտուրքի էր գացեր գիշերը, կալը պառկողն ըլ Խաչիկն էր. երթամ տեսնեմ՝ ի՞նչ ըրին, էդ ցորենը ե՞րբ պիտի տուն նետուի:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

Վարագոյր կամ մութ: Տեսարանը արագօրէն պէտք է փոխուի ու ներկայացնէ դաշտերուն մէջ կալադաշտ մը, ցորենի չեմ մը մէկ կողմը, որուն աջին պառկած է Խաչիկ՝ խոտի շիւղ մը քերնին մէջ, աչքերը՝ գոց: Բեմին խորքը՝ ձախ կողմը, եռաժանին ձեռքը՝ կ'աշխատի Մարտուպ: Բեմի ձախէն կը մտնէ Մարգիս՝ քահը՝ ուսին:

**ՍԱՐԳԻՍ** – Բարի՛ լոյս, Մարտուպ:

**ՍԱՐՍՈՒՊ** – Աստճո՛ւ բարին, Մարգիս:

**ՍԱՐԳԻՍ** – (Կը մօտենայ ցորենի դէզին, կը նկատէ, որ մէկ կողմը չորած է ու փայտէ թիւրով, որոնք դէզին մօտերն են, աշխատած են հաւասարեցնել դէզը: Յայտնի է, որ գողցուած է դէզէն: Սարգիսի մտահոգ մայուածքին ու կատարած քննութեան մէջ կը զգացուի գողութիւնը: Մարտուպ քիչ մը կը մօտենայ Մարգիսին):

**ՍԱՐԳԻՍ** – (Բարկացած) Ծօ՛ Խաչիկ:

**ԽԱՉԻԿ** – (Զուներն նոր արթննալ ձեւացնելով ու տեղէն ցատկելով) Ի՞նչ է, արա՛ր:

ՄԱՐԳԻՍ – Էս ցորենին ձեռք զարնուած է:

ԽԱՉԻԿ – (Մտնեալով եղբօր) Հը...

ՄԱՐԳԻՍ – Էս չեճին ձեռք զարնուած է, կ'ըսես, գողցեր են, ցորեն են գողցեր:

ԽԱՉԻԿ – Ես հոս էի, քիչ առաջ աչքս խփեցի: Ո՞վ պիտի գողնայ:

ՄԱՐԳԻՍ – Չգիտես, չեճը արուած է:

ԽԱՉԻԿ – Հո՞վը...

ՄԱՐԳԻՍ – Հովի քան չէ, Խաչիկ:

ՄԱՐՍՈՒՊ – (Այս խօսակցութեան առեւ Մարսուայ շարունակ Խաչիկին երեսը կը նայի) Որչա՞փ են տարեր, Մարգիս: (Խաչիկ կամաց-կամաց, դէզին չորս կողմը դառնալու պէս քալելով, դէզին առջեւէն անցնելով, քեմէն դուրս կը սողոսկի):

ՄԱՐԳԻՍ – Ես ի՞նչ գիտեմ, Մարսուայ... Չո՞րս... Հի՞նգ չեճէ, պէքի են:

ՄԱՐՍՈՒՊ – Է՛հ, հոգ մի՛ ընեք, Մարգիս, եղածը եղած է:

ՄԱՐԳԻՍ – Ի՞նչ հոգ ընես, Մարսուայ: Մէկ գիշեր մի եկաւ կալ պառկաւ, եկան ցորենը գողցան: Ամա ի՞նք չէ աշխատէր, որ յարգը գիտնայ, եղածը պահել գիտնայ: Ալ ամէն քանի չափ ու սահման կայ: Հիմա ըլ ելաւ գնաց, ով գիտէ՞ ո՛ր: Չ՛ըսեր, թէ կալ պիտի խառնուի, խուրձ պիտի թափուի, լոտա պիտի նետուի: Էճի կիճէ Մանոյին ու աղուընիկներուն գնաց: Դուն չես գիտեր էս աղուն ըրածը, Մարսուայ. ալ հոգիս եկաւ, թէ՛ քերանս հասաւ: Հելպէթ, տան պէրէքթը որ փախի, գողն ըլ կը տանէ, հո՞վն ըլ կը տանէ: Խէրով-քարով սա կալը տուն ձգէինք...

ՄԱՐՍՈՒՊ – (Քիչ մը դանդաղօրէն, վարանքով) Ես քեզի քան մը ըսի՞մ, Մարգիս... Էդ ցորենը գողցողը Խաչիկն ու Մանօն էին:

ՄԱՐԳԻՍ – (Գունափոխուած, ցնցուած) Ինչպէ՞ս:

ՄԱՐՍՈՒՊ – Հա՛, համբերէ՛, որ պատմես: Դուն էստեղէն գացիր (Ծխախոտի տոպրակը մէջքէն քաշելով ու չիպուխը լեցնելով), դուն որ էստեղէն գացիր, ես արթուն էի (Ծխախոտի տոպրակը նորէն գօտիին մէջ տեղադրելով, ձեռքը քանի մը անգամ գօտիին տանելով՝ ապահով ըլլալու համար, որ տոպրակը տեղն է), դուն որ էստեղէն գացիր...

ՄԱՐԳԻՍ – (Անհամբեր) Դե՛հ, Մարսուայ, հոգի մի՛ հանիր, պատմէ՛, տեսնենք:

ՄԱՐՍՈՒՊ – Համբերէ՛, համբերէ՛, որ պատմես: Դուն որ էստեղէն գացիր, ես արթուն էի: Քունս չէր գար: Ինքնիրենս կը մտածէի, թէ ինչքան հաստ կապով են կախուեր էս աստղերը, որ հատ մըն ալ վար չ'իյնար: Հեղ մըլ տեսայ, էդ ձեռք կողմէն քրսփըս մը փրթաւ: Ըսի, որ էս Խաչիկին հետ ո՞վ է գիշերով: Մտեցայ: Տեսայ, որ Մանօն ու Խաչիկը, հը՛, ճիշդ էս-

տեղ՝ չեճին քով, աղուէսի պիչին պազեր-նստեր էին: Մանօն կը հարցնէր. «Ե՞րբ կու գայ»: «Է՛ն մինչեւ առտու չի գար», - կը խօսէր Խաչիկ, ու ցորենը չուայնեւրուն՝ մէջ կը լեցնէին: Մեծ չուայներ էին: Էս Մանօն երեք անգամ շալակը նետեց, գեղը գնաց ու եկաւ: Հըմը՛, հըմը՛, հինգ չեճէ կար: Կ'ուզէի ձէն տալ: Է՛հ, որ կային տէրը՝ Խաչիկը, հոն է, ես ի՞նչ ձէն տայի:

ՄԱՐԳԻՍ – Մարսուայ, դուն տեսա՞ր էս բոլորը:

ՄԱՐՍՈՒՊ – Տեսայ, Մարգիս, էս աչքովս տեսայ: Լուսնկային լոյսին տակ շատ աղէկ տեսայ: Մանօն ու Խաչիկն էին:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – (Որ նոր հասած էր դաշտ) Ի՞նչ է եղեր, Մարգիս, ի՞նչ կայ:

ՄԱՐՍՈՒՊ – Չեճէն ցորեն են գողցեր:

ՄԱՐԳԻՍ – Հելպէթ կը գողնան, ինչո՞ւ չգողնան: Աղուէսը հարուստն ենք ուր ընես...

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – (Չեճին չորս կողմը դառնալէ ետք) Հա՛, գողցուած է: Ի՞նչ աղուէս, ի՞նչ հարուն, Մարգիս:

ՄԱՐԳԻՍ – Ալ ո՞վ պիտ ըլլի, Մանօն ու Խաչիկը:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Խաչիկը իր կալին մէջ...

ՄԱՐԳԻՍ – Իր կալին մէջ, իր տան մէջ. Բամսպակ Մարսուայն է տեսեր: Էդ էր պակաս: Ալ ի՞նչ մնաց, որ չընէր: Մանոյին հետ ընկեր ըլլողին, աղուընիկ խաղցնողին հալը է՞դ է, է՞դ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Փճանա՛ս դուն, ա՛յ փուն գաւակ:

ՄԱՐԳԻՍ – (Պահ մը լռութենէ ետք) Արա՛ր, էսպէս տուն չ'ըլլիր, արար, էս աղուն սէպէպէն՝ մէ՛ ուտածնիս ուտած է, մէ՛ ըլ խմածնիս խմած: Դուն ըլ գիտես, որ տան մէջ կոխը անպակաս է: Թորիկ Օվանին տունը շէն տուն էր, տան մէջ սիրութիւն կար, մեծի ու պզտիկի խօսք կար, կարգ ու աշխատանք կար: Էն տան տնեցին, որ ցորեն կը գողնայ, էն տան մէջ խէր-պէրէքթ չի՛ մնար, արար, չի՛ մնար:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Ես ինտոր ընիմ, եարո՛ւս: Էսքան խօսեցայ, կիճէ օգուտ չըրաւ: Էդ Մանոյէն ու աղուընիկներէն վազ չկրցանք բերել:

ՄԱՐԳԻՍ – Բաժի՛նք կ'ուզեմ, արար, բաժի՛նք, ես ըլ երթամ իմ գաւակներով, հալալ աշխատանքովս հալալ հաց ուտեմ: Կը տեսնես արդէ՛ն՝ Եղսան մերանցը տունէն էտղին չի գար. էս տուն չէ, դժո՛խք է, դժո՛խք:

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Վարագոյր՝ արագօրէն վերադառնալու համար առաջին տեսարանի տեսքներուն. Թորիկ Օվանենց տան ներսի կողմը:

Բեմին աջ ու ձախ կողմերը հաւարուած են տան կահ-կարասիներ, բարձեր, անկողիներ, երկրագործական գործիքներ, մանգաղ, խոփ, պտուկ, կարաս, սաղմոսաց գիրք: Բեմին մէջտեղը կը մնան դեռ քանի մը շիշ, պտուկ ու կարաս:

Թորիկ Օվան նստած է մէջտեղը, քովը՝ քահանան, միւս կողմը՝ Բամպակ Մարտուպ, գեղացիներ, Չատուրը, երեցփոխը, վարժապետը, Սարգիսը, Խաչիկը: Կրներն ալ բաժնուած են երկուքի, մէկ կողմը Սարգիսի կիներ՝ Եղսան եւ Մնուշ, միւս կողմը՝ Իդարեր, Նունիկ, Սանան: Խոիկ Գեւոն ոտքի վրայ է, ոտքի վրայ է եւ վարժապետը, որ մէջտեղի իրերէն կը վերցնէ հետզհետէ մաս-մաս եւ կը տեղաւորէ աջ ու ձախ կողմը: Խոիկ Գեւոն խմած է:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – (Լուռ, աչքերը սեւեռած գետին, կը ծխէ):

ՔԱՀԱՆԱՆ – Հոգ մի՛ ըներ, Օվան: Աստուած մեծ է: Է՛հ, ալ տարիքդ առերեսս ինձի պէս: Աստուած քեզի ու Նունիկին բարի մահ մը տար...

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Էդ լաւ ըսիր, տէ՛ր պապ, բարի մահ մը, որ էս քաները չտեսնայի. էս տունին քանդուիլը չտեսնայի, տէ՛ր Թաթիկ, չտեսնայի:

ՔԱՀԱՆԱՆ – Է՛հ, ի՞նչ ընես, օրհնած, Աստուած քեզ ըլ տղայէս խըսմէք է ըրեր: Աստուծոյ ըսածը կ'ըլլի: Առանց Աստուծոյ հրամանին տերեւը ոչ շարժեցին: Ի՞նչ ըսիր, վարժապետ:

ՎԱՐԺԱՊԵՏ – Դի՛շո՛ է, տէ՛ր հայր:

ՉԱՏՈՒՐ – Լսեցի՞նք՝ ձեր տղային հողը Մարթո Նուկասը կ'առնէ, ճի՞շդ է:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Է՛հ, ո՞վ պիտի աշխատի, Աստու՛ր, Թորիկ Օվան չկայ, Թորիկ Օվանի տուն չկայ, Թորիկ Օվանի տունը աղուընկատուն է եղեր, աղուընկատուն:

ՔԱՀԱՆԱՆ – Ես ձեզի բան մը ըսե՛մ. աղուընկի ըսածդ տան մէջ պահելը լաւ բան չէ: Մենք՝ մահկանացուներս, էտնց ձեռք դպցնելու անարժան ենք: Երկնքի սուրբ թռչուններն են, օրհնածներ, հոգին սուրբ աղանակերպ իջեալ ի վերայ կուտոյ. ի՞նչ ըսիր, վարժապետ:

ՎԱՐԺԱՊԵՏ – Դի՛շո՛ է, տէ՛ր պապ:

ՉԱՏՈՒՐ – Թորիկ Օվան, դուն ու Նունիկ պահին որո՞ւ տուն պիտի մնար:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Չե՛ս տեսներ, Չատու՛ր, որ բաժինք է, բաժի՛նք, Թորիկ Օվանի տունն է կը բաժնեն, կը քանդեն... Սարգիսը կ'ուզէ, որ ես ու մայրը իրենցը մնանք, բայց Նունիկ պիտի մնայ Խաչիկենց, ես պիտի երթամ, Սարգիսենց մնամ: (Երկինք նայելով) Ա՛խ, դուրպա՛նդ ըլլին, Աստուած, ափ մը հո՛ղ, ափ մը հո՛ղ...

ՎԱՐԺԱՊԵՏ – (Իր բաժանման աշխատանքին մէջ հասած է օղիի մեծ շիշին, շիշը ձեռքը բռնած) Տէ՛ր պապ, էս շիշը Խաչիկենց բաժնին մէջ պիտի դնես:

ՔԱՀԱՆԱՆ – Հա, օրհնած, հա. արդար է:

ԽՈՒԻԿ ԳԷՒՕ – (Իր կեցած տեղէն՝ սինի մը տակէն) Չէ՛, չեղա՛ւ, արդարութիւն չէ: Էդ շիշը լեցուն օղի է, իմ աղջկանս բաժնին մէջ պէտք է դրուի: (Ներկաները կը խնդան): Չէ՛, չեղա՛ւ, չեղա՛ւ:

ՔԱՀԱՆԱՆ – (Ոտքի կ'ելլէ) Է՛հ, էս ըլ վերջացաւ. տաւար, արտեր, հիմա ըլ տան առարկաներ, արդարութեամբ բաժնեցինք. խէրո՛վ ըլլայ, Տէր ընդ ձեզ:

## ՎԱՐԱԳՈՅՐ

### ԱՐԱՐ Գ

Տեսարանը կը ներկայացնէ Թորիկ Օվանենց տունը. առաջին արարի տեսարանն է, միայն թէ տանիքին վրայ շինուած աղանետուն մը կայ, տանիքին կոթնցուած է ելարան մը, ուրկէ կարելի է վեր ելլել ու տանիքին վրայ կանգնիլ, քալել: Տեսարանէն մաս մը տանիքին վրայ տեղի պիտի ունենայ: Տան առջեւը, տանը ետեւի պատին կոթնած, կայ մաւ տախտակէ թախտ մը: Լոյսերը յաճախակի պիտի մարին ու վառին՝ դէպքերուն ծաւալունը կարենալ տալու համար արագօրէն: Իւրաքանչիւր լոյսի մարումէն ետք դերակատարները իրենց տեղը պիտի փոխեն քիչ մը յաջորդ տեսարանին համար՝ երթալով քիչ մը աջ կամ ձախ, կամ գալով դէպի տունը, կամ հեռանալով տունէն՝ նայած ըսուած խօսքերուն կամ քեմական ու լոյսի յարմարութեանց:

ՆՈՒՆԻԿ – (Նստած է տան առջեւ: Խորքէն կու գայ Թորիկ Օվան. ծերացած է, գաւազանով է. կը մօտենայ կնոջ, որ նոյնպէս ծերացած է: Նունիկ ոտքի կ'ելլէ, կը բերէ անուսինը թախտին կը մատեցնէ, ինքն ալ քովը կը նստի ու կարօտով կը նայի մարդուն ճերմկած մազերուն):

ՆՈՒՆԻԿ – Երէկ ժամ եկած չէիր, արհմարդ, աչքս ճամբան մնաց. նայեցայ, նայեցայ, չեկար:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Երէկ քիչ մը գլուխս կը ցաւեր: Չես ըսեր՝ մէյ մը երթամ քովը, էդ մարդը մեռա՛ւ, թէ՛ մնաց:

ՆՈՒՆԻԿ – Ի՞նչ մեղքս պահես, ես էդ Խոիկ Գեւոյի աղջկան երեսը չեմ ուզեր տեսնել:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Ինտո՞ր եմ հարսը, Խաչիկը:

ՆՈՒՆԻԿ – Հարսը գաւակ բերելու մօտ է: Խաչիկն ըլ կիներ էնպէս: Հիմա տունը վրան ինկաւ, կիներ քիչ մը կ'աշխատի: Գիտես ես, ջուլհակութիւն կ'ընէ, որ տունէն չհեռանայ. աչքը աղուընկներուն ըլլայ:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Ա՛խ, եղ Մանօն, Մանօ՛ն:

ՆՈՒՆԻԿ – Լսելովս՝ հիմա Մանոյին հետ ալ չի խօսիր, գժտուեր են:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Իրա՛ւ կ'ըսես, Նունիկ:

ՆՈՒՆԻԿ – Մեր բաժինքէն ասոյին Մանօն մեր տունը ոտք դրած չունի:

ԹՈՐԻԿ ՕՎԱՆ – Է՛հ, փա՛ռք Աստուծոյ: Անանկ է նը, Խաչիկ խելը զլուխը ժողվեր է: Ախր, Թորիկ Օվանին տղան է, Նունիկ:

(Կը մթնայ: Լոյսը վառելուն՝ Խաչիկ տանիքին վրայ է, մայրը՝ տան առջեւ, ափսէի մէջ ցորեն կը մաքրէ):

ԽԱՉԻԿ – (Չեաքը ճակատին դրած՝ երկինքը կը դիտէ) Կհնէ Ծիրանը բոցուց, կը տեսնա՞ս, մարէ՛:

ՆՈՒՆԻԿ – (Վարէն) Ի՞նչ է, Խաչիկ, ի՞նչ կայ:

ԽԱՉԻԿ – Ամէն անգամ, որ ես Կապուտիկը բոցնեմ, Մանօն ըլ էն կողմէն Ծիրանը կը բոցնէ, որ գայ, խառնուի իմ աղաւնիներուս, պէլքի Կապուտիկը ետ՝ իր աղուընցը տանի:

ՆՈՒՆԻԿ – Հա՛, Խաչիկ, հա՛. իջի՛ր, եարուս, իջի՛ր տանիքէն, եկո՛ւր գործիդ նայէ. եկո՛ւր առէջներդ ձգէ:

(Կը մթնայ: Մութին մէջ Նունիկ բնէն դուրս կ'ելլէ. Խաչիկ կ'իջնէ տանիքէն ու կ'անցնի բնին ձախ անկիւնը, խորքը, ուր իր դէմ կու գայ կանգնելու Մանօն: Լոյսը բացուելուն՝ դէմ դէմի կանգնած են Մանօն ու Խաչիկ):

ԽԱՉԻԿ – Մանօ՛:

ՄԱՆՕ – Ի՞նչ է, Խաչիկ:

ԽԱՉԻԿ – Հերիք է ես քու ընելիքդ, Մանօ՛, ես քեզի ըսեր եմ, որ եղ Ծիրանը Կապուտիկին ետին մի՛ բոցներ:

ՄԱՆՕ – Ի՞նչ ըսել կ'ուզես, Խաչիկ: (Չայնը չոր ու խիստ) Աշխարհ որ դէմ կայնի, կհնէ ես եղ Ծիրանը կը բոցնեմ: Կապուտիկն ըլ ի՛մն է, Խաչիկ, ի՛մը:

ԽԱՉԻԿ – Ի՞նչ կը գրուցես, Մանօ՛, ես եղ Կապուտիկին համար գատն երկու չէրէկ ցորեն եմ տուեր:

ՄԱՆՕ – Յորեն-մորեն չեմ գիտեր, Խաչիկ. Կապուտիկը ի՛մս է, իմ աղուընիկներէս վազ չի գար: Թէ որ կ'ուզես, ես քեզի Կապուտիկին տեղ ուրիշ աղուընիկ կու տամ:

ԽԱՉԻԿ – Հէ՛յ, Մանօ՛, ես Աղաճանը չեմ, գիտե՞ս, ինձի Խաչիկ կ'ըսեն. Կապուտիկը տի տա՞ս, քէ՛ չէ...

ՄԱՆՕ – Ինձ ըլ Մանօ կ'ըսեն, Թըլկանց Մանօ, Կապուտիկը ի՛մս է, ուր կ'ուզես, հոն գնա՛:

(Կը մթնայ: Մութին մէջ բնէն դուրս կ'ելլէ Մանօ, Խաչիկ կ'անցնի բնին գրեթէ մէջտեղը. Նունիկը թախտին նստած է՝ գունատը թելերու կապ

մը թելերուն անցուցած. Խաչիկի ձեռքն ալ գունատը թելերու կապ մը կայ. լոյսը կը վառի. երկուքն ալ աշխատելու վրայ են):

ԽԱՉԻԿ – (Գլուխը վեր կ'առնէ, երկինք կը նայի, գունատը թելերը մօրը կու տայ ու կը վազէ դէպի տանիքին ելարանը, դէպի տանիք):

ՆՈՒՆԻԿ – Ո՞ւր, Խաչիկ, ո՞ւր կ'երթաս:

ԽԱՉԻԿ – Մանօն աղուընիկները բոցուցեր է, Կապուտիկն ու Ծիրանն ալ մէջերնին են: Իմ աղաւնիներս տի բոցնեմ, պէլքի Կապուտիկը ետ կու գայ: (Աղուընցի դուռը բանալու շարժում, դուռը աղուընցի ետեւի կողմը կը համարուի, ժողովուրդէն անտեսանելի. Խաչիկ թռչունները բշտու շարժում մը կ'ընէ, կը լսուի թռչուններու թելերու թափահարումի ձայն. Խաչիկ նայուածքով կը հետեւի անոնց վեր բարձրացումի շարժումին՝ իր նայուածքովը այդ բարձրացումի տպաւորութիւնը տալով, ապա կը խօսի, ընդհատ-ընդհատ): Հա՛, ելա՛ն. խառնուեցա՛ն իրարու. Կապուտիկն ու Ծիրանը իմ աղուընիկներուս հետ կը դառնան, հա՛, կը դառնան, մէկ տեղ են, մէկ տեղ, տահա չբաժնուեցան: Մարէ՛, մարէ՛, յաջողեցա՛յ, յաջողեցա՛յ:

ՆՈՒՆԻԿ – Ի՞նչ կայ, Խաչիկ, ի՞նչը յաջողեցար:

ԽԱՉԻԿ – Կու գայ՛, Կապուտիկը ետ կու գայ. հեմ ըլ Մանոյի էն աղուընիկը՝ Ծիրանը, հետը կը բերէ:

(Մութ. Նունիկ բնէն դուրս կ'ելլէ. Խաչիկ վար կ'իջնէ. կը նստի թախտին. լոյսը վառելուն՝ Խաչիկ նստած է, կը մտնէ Մանօն, ջղայնացած, կու գայ ուղիղ Խաչիկին դիմացը կը կենայ):

ՄԱՆՕ – Հէ՛յ, Խաչիկ, ինձի հետ խաղ չես կրնար խաղար, եղ աղուընիկները տուր, տանիմ:

ԽԱՉԻԿ – Ի՞նչ աղուընիկ:

ՄԱՆՕ – Կապուտիկն ու Ծիրանը:

ԽԱՉԻԿ – Կապուտիկն ի՛մս է, Մանօ՛, ի՛մս: Ծիրանէն լուր չունիմ: Էսօր Աղաճանին աղուընիկներն ըլ դուրսն էին: Կրնայ ըլլիք, որ էնոր աղուընիկներուն հետ է գացեր: Գնա՛, էնոր հարցուր:

ՄԱՆՕ – Ես գիտեմ՝ ի՛նչ կը խօսիմ, Խաչիկ: Ծիրանն ու Կապուտիկը աղաւնիներուդ մէջ են: Ինձի հետ կատակ ընել չ'ըլլիր. տունդ կը վառիմ, տունդ, գիտցա՛ծ ըլլիս:

ԽԱՉԻԿ – (Ոտքի ցատկելով) Դիմացինդ Խաչիկն է, Մանօ՛, Խաչիկը. իմ տունս վառողին խէրը կ'անհիծեմ:

(Մութին մէջ Խաչիկ արագօրէն կը փռէ անկողինը թախտին վրայ ու կը պառկի: Լոյսը կը վառի այնչափ, որ պէտք է գիշերուան տպաւորութիւնը տալու համար: Տանիքին վրայ կը նշմարուի ստուերի մը շարժումը. Խաչիկ ընդոստ կ'արթննայ, կը նստի. Մանօ կը ցատկէ տանիքի ետեւի կողմէն ու

մութին մեջէն, հազիւ նշմարուելով, կը փախչի բեմի ճախ կողմէն. Խաչիկ կ'ելլէ տեղէն, կը նայի Մանոյի ետեւէն. յետոյ՝ արագ կը բարձրանայ:

Կը մթննայ: Անկողիքը ձգուած է տան առջեւը՝ թախտին: Խաչիկ նստած է թախտի եզերքին):

ԽԱՉԻԿ – Մարէ՛:

ՆՈՒՆԻԿ – (Դրան առջեւ երեւալով) Ի՞նչ է, Խաչիկ:

ԽԱՉԻԿ – Էդ ուռիի ճիւղերով շինուած կթոցը դուրս բեր, անկողնիս քով բեր:

ՆՈՒՆԻԿ – Կթոցն ինչի՞նչ է գիշերանց, Խաչիկ:

ԽԱՉԻԿ – Էս շարաթ մըն է՝ աչքս բուն չէ մտեր. էն գիշերէն պէլի, որ Մանօն եկաւ գիշերանց տանիք ելաւ: Վախնամ նորէն գայ, Կապուտիկն ու Ծիրանը գողնայ, տանի: Կ'ուզեմ կթոցին տակ պահեմ, քովս, որ չգտնէ:

ՆՈՒՆԻԿ – (Ներսէն կը բերէ կթոցը, կը դնէ թախտին քով):

ԽԱՉԻԿ – (Տանիք կ'ելլէ, երկու աղանձի առած՝ կ'իջնէ վար, կթոցին տակ կը պահէ ու կը մտնէ անկողին):

(Մութ, երբ կը լուսատրուի, գիշերուան լոյս է, սակայն անիւ առտուան դէմ, քիչ մը անիւ տեսանելի է բեմը: Խաչիկ պառկած է թախտին. կթոցը թախտին քով է: Մանօն տանիք ելելու վրայ է, կ'ելլէ, կ'անցնի աղանձ-տունին ետեւը. ձեռքին մէջ է մերկացած դաշոյնը: Պահ մը լուրսնէ ետք կը լսուի աղանձներու ձայն, թպրտոցի ձայն: Խաչիկ ընդոստ կ'արթննայ, կը ցատկէ տեղէն, կ'ելլէ տանիք: Իր ճախ կողմը ժողովուրդին տուած, ձեռքերով աչքերուն եզերքները կէս մը ծածկած՝ աղանձտունէն ներս կը նայի, կը ցնցուի ու կը սկսի խօսիլ ինքն իրեն՝ շտկուելով ու դէպի աղանձտունին դուռը ելքալով):

ԽԱՉԻԿ – Վա՛յ, անիծուի՛ս դուն, Մանօ՛, էս ի՞նչ էս ըրեր, էս անմեղ կենդանիները ինչո՞ւ էս մորթեր. էդ ի՞նչ սիրտ է, որ կենդանիներու զլուխը կը փրցնէ:

ՄԱՆՕ – (Աղանձտունին ետեւէն դուրս կու գայ, թեւը՝ կախ, դաշոյնը բռնած վարէն վեր՝ սպառնական կը յառաջանայ դէպի Խաչիկը):

ԽԱՉԻԿ – (Մարսափահար քայլ մը կ'ընկրկի ու) Կեցի՛ր, Մանօ՛: (Մանոյի թեւը կը բարձրանայ՝ այս անգամ դաշոյնը վերէն վար բռնած. Խաչիկ կը պլլուի Մանոյի թեւին): Կեցի՛ր, Մանօ՛, կեցի՛ր: (Մանօ իր թեւը ազատած՝ կ'իջեցնէ մահացու հարուած մը Խաչիկի կուրծքին. Խաչիկ կը կթոտի\*, կուրծքը բռնած՝ քիչ-քիչ կ'իյնայ տանիքին վրայ, մինչ Մանօ արագօրէն կ'իջնէ ելարանէն ու կը փախչի): (Խաչիկի վերջին խօսքերը կը լսուին) Կեցի՛ր, Մանօ՛, Կա՛ ...պո՛ւ...տի՛...կը՛... Ծի՛...րա՛... նը՛...

Խաչիկի տղան, որ 7 տարու է, կը շարունակէ իր խաղը՝ մուրճով տախտակներ իրարու զամնելով:

Կը մտնէ Իդարեր՝ կապոց մը ձեռքին: Կը մօտենայ տղուն, կապոցը կը դնէ գետին, կը նստի քովը, մազերը կը խառնէ քիչ մը, աչքերուն մէջ՝ միակ կարելի, կեանքին կողմէ տրամադրուած միակ երջանկութեան ժպիտը:

ԻԻՂԱԲԵՐ – Ի՞նչ կը շինես, գաւակս:

ՓՈԶՐԻԿԸ – Աղանձտուն:

ԻԻՂԱԲԵՐ – (Յանկարծ քաշելով տղան կուրծքին ու ճշալով) Չէ՛, չէ՛, դուն աղուընկատուն չպիտի շինես: (Կը հեկեկայ ու կը համբուրէ գաւակը քանի մը անգամ ու կը կրկնէ) Չպիտի՛ շինես, չպիտի՛ շինես, հա՞...)

ՎԱՐԱԳՈՅՐ ՎԵՐՋ

## ՏՈՒՆԸ

### ԱՐԱՐ Ա

Գիտի փողոց մը կամ հրապարակ մը: Խորքը մէկ-երկու տուն: Չախիճ (քեմի աջին) Պալիկ հորքուրի տան դուռն է: Աջին (քեմի ձախիճ) ծառի մը տակ, քարէ նստարանի մը վրայ, իր տան առջեւ նստած է Չիչօ Չաքար ու համրիչ կը քաշէ:

Խորքի պաստառը գիւղական դաշտերու ու լեռներու պաստառն է:

Կը լսուի երախաներու խնդրք ու վագրի ձայն Պալիկ հորքուրի տան կողմէն:

ՊԱԼԻԿ - (Դուրս կը վազէ՝ ատել մը ձեռքը, ու կը փարտէ դէպի իր տանիքը) Հո՛ւ, հո՛ւ, ո՛ւ ... կէնճուկ\* - մորճուկ\*, հո՛ղ մտնէք, հէ՛յ շան զակներ...

ՉԻՉՕ ՉԱԶԱՐ - Ի՞նչ է, Պալիկ հորքուր, ի՞նչ կայ նորէն:

ՊԱԼԻԿ - Ի՞նչ տըլլի, Չիչօ՛ Չաքար, էդ էլին բտերը տունն կ'աւերեն: Էդ տանիքին վրայ կը վագեն, կը վագվզեն, կը փորեն, քար ու քանդ կ'ենեն: Որ չվագեն, որ չհասնին, էս տունը իմ գլխուս վրայ կը փլցնեն:

ՉԻՉՕ ՉԱԶԱՐ - Չէ՛, Պալիկ հորքուր, չէ՛: Էնոնք երախայ են, կը վագեն, կ'երթան, կ'անցնի:

ՊԱԼԻԿ - Չէ՛, Չիչօ՛ Չաքար, չէ՛: Դուն տղամարդ ես, անտիրութիւնն ի՞նչ գիտնաս: Աստուած ողորմի հոգուն, մարդս որ ողջ էր, էդ երախաները մեր տան տանիքէն իրենց շուքն ըլ չէին անցըներ: Ամա որ մարդս մեռաւ, էս քանի տարի է, անտէր, անտիրական մնացեր են, աստծուն օրը մեր տան տանիքն են, կը քանդեն, կը քանդեն, Չիչօ՛ Չաքար: Ես ըլ աշխարհիս մէջ ուրիշ ի՞նչ ունիմ: Էս տունն է իշտէ, տունը: Էդ տունը տի պահիմ, պահիմ պահպանիմ, Չաքար: (Երախաներու աղմուկ): Հո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, կէնճուկ-մորճուկ, հո՛ղ մտնէք: (Ու Պալիկ հորքուր՝ ատելը ձեռքը, կը վազէ իր տան ետին):

(Պահ մը պարապ մնալէ ետք, մուրացիկի ձեռով մէկը՝ Թումաս, քեմ կը մտնէ խորքէն: Կռնակին կապած է ծրար մը. ծրարին վրայ երկու հին կօշիկ, ձեռքը հաստ փայտ մը. ոտքերուն տրեխներ. հագած է Բալուայ մեղ ու սալտակ շալուար: Երեսը սպունգի է մման. ունի մէկ աչք):

ԹՈՒՄԱՍ - Բարի՛ առտու:

ՉԱԶԱՐ - Բարի գայ վրադ: Ո՞ր տեղացի ես, բարեկամ:

ԹՈՒՄԱՍ - Չիթացի, աղա՛: Է՛հ, մենք ալ եզներ ունէինք: Հաւ, ճուտեր ունէինք: Սարուխի քիւրտեր քալեցին մեր տունը. կորսնցուցինք, աղա՛, կորսնցուցինք, ինչ որ ունէինք: Էսպէս, աղա՛, բախտը մեզ մուրացիկ ըրաւ:

ՉԱԶԱՐ - Վարել, ցանել գիտե՛ս, բարեկամ:

ԹՈՒՄԱՍ - Գիտեմ, աղա՛, գիտեմ: Երեք տարի ռենճալերի մօտ մշակ են եղեր:

ՉԱԶԱՐ - Ես քեզ բան մը ըսեմ: Որ վարել, ցանել գիտես, եկ ինձ մօտ մշակ եղիր: Որ մշակ ըլլիս, էս քեզ կու տամ ութը չէրէկ ցորեն, մէկ լիք բամբակ, կոնակիդ ապա մը, ոտքերուդ մէկ գոյգ կօշիկ: Չիչօ Չաքար իր մշակներուն շատ լաւ կը նայի: Տարի մը առաջ մշակ մը ունէի, աղբօր պէս կարգեցի, տուն-տեղ ըրի: Անունը ի՞նչ է:

ԹՈՒՄԱՍ - Թումաս: (Այդ բուսէին Պալիկ հորքուր ետ կու գայ ու կը մտնէ իր տունը: Թումաս կը նայի անոր ետեւէն):

ՉԱԶԱՐ - Թումաս, որ ինձ մօտ մնաս, քեզ կը կարգես: Չիչօ Չաքար իր խօսքը կտրող մարդ չէ: Հա՛, հա՛, քեզ ըլ տուն-տեղ կ'ընեն, որ երթաք պապուս հոգուն համար մոմ լուսէք:

ԹՈՒՄԱՍ - (Կը ժպտի, ուսէն վար կ'առնէ ծրարը, կը դնէ անկիւն մը ու ձեռքերը ծալած կը կենայ, հաւանութեան իմաստաւորումով մը):

ՉԱԶԱՐ - Որ մշակ ըլլիս, որ էս գիւղը մնաս, քեզ Պալիկ հորքուրին հետ կը կարգես, հա՛, տե՛ս, էս էնոր տունն է: (Վերջին բառերը ցած ձայնով կ'ըսէ, որպէսզի չլսուի Պալիկ հորքուրէն):

### ՎԱՐԱԳՈՅՐ

### ԱՐԱՐ Բ

Բենը բաժնուած է երեք մասի, գլխատը վարագոյրին ետին: Վարագոյրը երբ կը բացուի, հանդիսատեսներուն կ'երեւայ միմիայն քեմի աջ կէսի երկու երրորդը: Պալիկ հորքուրի տան ներսի դին է, իր թոնիրով, հացի կլոր սեղանով, անկողիններով մէկ կողմ դարսուած, պատի մէջի բաց պահարանով, մոմակալով եւ այլն:

Բեմի մնացեալ մասերը՝ Պալիկ հորքուրի տան տանիքը (քեմի աջ կէսի վերի մէկ երրորդը) եւ Պալիկ հորքուրի տան բակը, փողոցը (քեմի ձախ կէտը) ծածկուած են նոյն գոյնի, սակայն երկու առանձին-առանձին վարագոյրներով, որոնք կարելի պիտի ըլլայ բանալ զատ-զատ:



Կարելի է Պալիկ հորքորին տանը տալ բեմին կեւեմ քիչ մը անելի եւ բակը պզտիկ ընել:

Տանիքէն ու պարտեզէն երեսալիք խորքի պաստառը մոյճն է, ինչ որ առաջին արարին:

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Գոց են տանիքի վարագոյրն ու բակի վարագոյրը: Կ'երեսայ Պալիկ հորքորի տան ներսիդին: Պալիկ հորքոր տան գործի վրայ է, ջայրը\* կը դարձնէ ու բամպակ կը մանէ: Կը մտնէ Չիչօ Չաքար:

ՉԱՔԱՐ – Բարի՛ լոյս, Պալիկ հորքոր:

ՊԱԼԻԿ – Աստծու բարին, Չիչօ՛ Չաքար, հրամանէ՛, նստի՛ր:

ՉԱՔԱՐ – (Կը նստի, Պալիկ կը շարունակէ իր ջայրը դարձնել:) Պալիկ, ինտո՞ր ես:

ՊԱԼԻԿ – Ինտոր տըլլիմ, անտեր, անտիրական կնիկն ի՞նչ կընայ էնել: Էլին բտերը տունին տանիքը աներեցին, ճոթոնները\* տեղերէն հաներ են, վաղն որ անձրեւ գայ, ամբողջ ջուրը ներս տի կաթէ:

ՉԱՔԱՐ – Հա՛, Պալիկ, հա՛, անտիրութիւնը լաւ բան չէ:

(Քիչ մը լռութիւն):

ՉԱՔԱՐ – Պալիկ, էս անտեր քրիշակին\* տակ քանի՞ մնաս մինակ ու մեմուճար: Ողորմած հոգի էրիկդ իմ լաւ բարեկամն էր: (Լռութիւն): Ամէն հեղ, որ էս ճամբէն կ'անցնիմ, միտքս կը դնեմ վեր ելլել, հեղ մը հալո՞ հարցնել: Հա՛, տե՛ս, որպէս բարեկամի կը խօսիմ: Ե՛կ մեր մշակ թումասին հետ կարգենք քեզի:

ՊԱԼԻԿ – (Չայն չի հաներ. ճրգըր-ճրգըր ջայրը կը դարձնէ արագ ու պատրոյզին թելը ճաղին վրայ կու տայ):

ՉԱՔԱՐ – Պալիկ, տունը քուկո՞ւ է, մեր մշակն ըլլ թէքտէն մարդ է: Հա՛, տե՛ս, որպէս բարեկամի կը խօսիմ: Թումասը լաւ մարդ է, լաւ մշակ է, լաւ վարել, ցանել գիտէ. տան վրայ կու գայ, կ'երթաք մէկ բարձի վրայ, մէկ առեց տակ սղառ կ'ըլլաք\*:

(Պալիկ հորքոր ջայրն անելի արագ կը դարձնէ, թելն անելի արագ կու տայ):

ՉԱՔԱՐ – Հիմա խօսքկապ կ'ընենք, Պալիկ: Մեծ Պահքին պսակ չըլլիր, Մեծ Պահքն որ ելլէ, պսակը կ'ընենք: Ի՞նչ կ'ըսես:

ՊԱԼԻԿ – (Կարճ լռութենէ մը ետք): Ի՞նչ ըսիմ: Չիչօ Չաքար որ յարմար է տեսեր, թող գիտցածին պէս ընէ: Միայն թէ աղամորդու մը հանդի-

պիմ, որ տան հոգը տանէ, տարին մէկ անգամ տանիքը շրջիտէ, տան ցուիքները\* նորոգէ: Էլին բտերը էնոր շուքէն վախճան ու տանիքը չանցնին: (Լռութիւն): Է՛հ, տան մէջ մարդ մը ըլլի, ես ըլլ մարդ մը ունենամ:

Լոյսը կամաց-կամաց իջած է, վերջին բառերուն հետ բոլորովին կը մթնի:

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Պալիկ հորքոր մինակ է, տան գործի վրայ: Լոյսը երբ կ'անելմայ, տանիքէն կը լսուի երախաներու աղմուկը:

ՊԱԼԻԿ – Գետնին տակն անցնիք, տո՛ւնս, տո՛ւնս քրքրեցիք, տո՛ւնս արեցիք:

ՉԱՅՆԵՐԸ ԴՈՒՐՄԵՆ – Հէ՛յ, հէ՛յ, իմացա՞ք, կրիան ծառն է ելել:

ՈՒՐԻՇ ՉԱՅՆ ՍԸ – Հի՛, հի՛, հի՛, գիտէք ի՞նչ կայ. Պալիկ հորքորն է նշանուեր:

ՊԱԼԻԿ – Թո՛ւ, թո՛ւ, հո՞ղը մտնէք, հէ՛յ շան գալկներ:

(Կը մթնի արագօրէն):

Մութին մէջ Պալիկ հորքոր կ'ելլէ տանիքը, մութին մէջ կու գան ներս Թումաս, Չիչօ Չաքար, քահանան, երկու-երեք գիւղացիներ, երեսները գոց մէկ երկու գիւղի կիներ, դրացուհիներ, կը նստին: Մութին մէջ կը բացուի նաեւ տանիքի վարագոյրը, լոյսը անելի տանիք կեդրոնացած, ուր կ'երեսի Պալիկ հորքոր՝ տանիքը տափելով զբաղած):

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Պալիկ հորքորի թոնրատունը: Մի քանի դրացիներ, երկու տարեց կիներ խոնջայի (սեղանի) շուրջ հաւաքուած, մոր հարսի ու փեսայի կենացը կը խմեն: Թովմասին հազցուցեր են կարմիր նախշերով նեղ էշկիկ մը ու զլխին՝ մոյն նախշերով թեշիկ մը: Պեխերը՝ խնամքով, մագերը՝ խուզած: Դրացի կիներէն մէկը իր հին հարսի հագուստը հազցուցած է Պալիկ հորքորին, լաչակը խնամքով կապած, եւ սակայն դէմքին վրայ կայ ջղային անհամբերութիւն մը. տանիքէ փոքրիկներու ձայներ առած է:

ՄԷԿԸ – Իշտէ՛, նորապսակներու կենացը:

ՔԱՀԱՆԱ – Օրհնեալ ըլլայ ձեր պսակը:

ՊԱԼԻԿ – (Պալիկ հորքոր այլեւս չի համբերեր): Դագաղի՛ վրայ ելլեք, ա՛յ շան գալկներ:

ՄԻՒՍԸ – Ի՞նչ է, հարս Պալիկ:

**ՊԱԼԻԿ** – Զրքրեցի՛ն, քրքրեցի՛ն տանիքը ... (Կը պոռայ ու անկիւնէն  
թակը առնելով՝ տանիք կ'ելլէ):

(Կը մթնէ արագօրէն):

Մտիքն մէջ Պալիկ հորքուր կ'ելլէ տանիք, կը բացուի տանիքի վարա-  
գոյրը, եւ լոյսը կը վառուի տանիքին վրայ կեդրոնացած: Վարը սենեակը  
կիսամութ է գրեթէ, հիւրերը իրար հետ կը խօսակցին անձայն, առանց  
մեծ շարժումներու, առանց ուշադրութիւն գրաւելու: Պալիկ հորքուր տա-  
նիքը կը տափէ):

**ՉԻՉՕ ՉԱԶԱՐ** – (Ելարանէն տանիք կ'ելլէ ու ) Պալիկ, ամօք է, կնքա-  
հայրն ու տերտէրը վարը քեզի կը սպասեն: Եկեղեցիէն նոր տուն եկանք,  
պսակէն նոր եկար, ելեր տանիք կը պոռաս, կը պոռպոռաս, տանիք կը թա-  
կես: Հիմա փեսան ի՞նչ կ'ըսէ, Պալիկ:

**ՊԱԼԻԿ** – Էս ո՞ր սիրտ կը դիմանայ, Չաքար աղբար: Էլին բտերը  
տունս կինէ վեր- վերան\* են ըրեր: (Կը շարունակէ թակով ցուիքը թակել):

**ՉԻՉՕ ՉԱԶԱՐ** – Վաղը Թումասին ըսէ՝ թող շինէ, հիմա ատենը չէ.  
վարը հարսնետորները քեզի կը սպասեն: (Տեսնելով, որ Պալիկ գործը չի  
ձգեր ձեռքէն, Չաքար կը ստիպուի թակը առնել ձեռքէն ու ինքը արագ-  
արագ ասդին-անդին թակելով): Հայտէ՛, իջնենք. մնացեալը վաղը Թու-  
մասը կ'ընէ:

(Կ'իջնեն ելարանէն: Լոյսը ատելի կը կեդրոնանայ վարի սենեակը  
գտնուողներուն վրայ, որոնք մինչ այդ նստած էին շուրջամակի եւ իրարու  
հետ գրեթէ փսփսուքով կը խօսակցէին: Չաքարի եւ Պալիկի մուտքին՝  
քահանան եւ հիւրերը ոտքի են՝ մեկնելու համար):

**ԶԱՀԱՆԱ** – Էհ, օրհնած, պսակը օրհնուած ըլլայ, տուներնիդ միշտ  
շէն մնայ: Իշտէ՛, ես գացի:

**ԿՆԶԱՀԱՅՐ** – Մէկ բարձի վրայ ծերամաք: (Կը մեկնի, բաներ մը ըսե-  
լով կը մեկնին բոլորն ալ):

**ԹՈՒՄԱՍ** – (Կը նստի սեւիքին, մինակն է, ոտքերը վեր քաշած է, գո-  
հունակութեան ժպիտ մը դէմքին, կը հետեւի Պալիկի շարժումներուն,  
մարմնին, շարժումներուն: Պալիկ կը վերցնէ, կը դնէ, կը հաւաքէ: Քիչ ետք  
դուրս կ'ելլէ թակը):

**ՊԱԼԻԿ** – (Փոքորկած կը վազէ ներս): Տո՛ւնս արուի, Թումաս, Թումաս ...

**ԹՈՒՄԱՍ** – (Աղէտին մեծութեան մտածումէն սարսափահար՝ տեղէն  
կը ցատկէ): Ի՞նչ կա, Պալիկ:

**ՊԱԼԻԿ** – Հաւերուն մէկը չկայ, Թումաս. էլին բտերը վերը, ցուիքը  
վեր-վերան են ըրեր: Էս իմ դրացիները աչք ունին, յօնք չունին, Թումաս:  
Բոլորն ըլ թշմամի են, թշմամի:

**ԹՈՒՄԱՍ** – (Քիչ մը հանգստացած, տեղը նստած, կատակի ու հաս-  
կըցուքի շեշտով մը): Եկ նստէ, Պալիկ, հանգիստ եղիր, էս զիշերով հաւն  
ո՞ր փնտռես: Ես վաղը կը գտնեմ: Պսակին էնքան կայնեցար: Հեղ մը ըսի՝  
պանկիմ, թող Պալիկ մէջքիս վրայ կայնի: Ըդ մէջքիդ շալմ էնպէս լաւ է սա-  
գեր: Է՛, զիտե՛ս, Պալիկ, պսակի ատեն դուն զինին ինձմէ շատ խմեցիր:

**ՊԱԼԻԿ** – (Երեսը թրուցուցած): Ճո՛ւ, ճո՛ւ, ճո՛ւ: (Ու կ'ելլէ դուրս,  
սպա տանիք: Տանիքէն կը կանչէ) Թումաս, հէ՛յ, Թումաս: Ի՞նչ ես  
նստեր տինձ\*: Եկ տա թակը գնա, ես էլ էստեղեքը նայիմ:

**ԹՈՒՄԱՍ** – (Կ'ելլէ տեղէն հանդարտ, ներքին նեղսրտութեամբ մը ու  
կ'անցնի թակ, որուն վարագոյրը կը բացուի: Տանիքին վրայ Պալիկն է,  
թակին մէջ՝ Թումաս):

**ՊԱԼԻԿ** – Ճո՛ւ, ճո՛ւ, ճո՛ւ ...

**ԹՈՒՄԱՍ** – Պալիկ, ամօք է, ի՞նչ է ձեռք զիշերով ձգեր կը պոռաս:  
Դրացիներ կան, հիմա ի՞նչ կ'ըսեն, Պալիկ, վա՛ր իջիր:

**ՊԱԼԻԿ** – Թումաս, տնաշէ՛ն, էս թակն անցիր, ես ըլ Մուրատենց տա-  
նիքը նայիմ:

**ԹՈՒՄԱՍ** – (Ճարահատ կը սկսի այս կողմ, այն կողմ նայի):

**ՊԱԼԻԿ** – Ճո՛ւ, ճո՛ւ, ճո՛ւ ... Թումաս, գտա՞ր:

**ԹՈՒՄԱՍ** – Չէ՛:

**ՊԱԼԻԿ** – Ճո՛ւ, ճո՛ւ, ճո՛ւ:

(Կը մթնէ, ու մութին մէջ Նունիկ տանիքէն կ'իջնէ եւ կամ վարագոյր):

## ԱՐԱՐ Գ

Երկրորդ արարի քեմն է: Բոլոր վարագոյրները, բացի տանիքի վարա-  
գոյրէն, բաց են:

Սենեակին մէկ անկիւնը կծկուած՝ նստած է Թումաս, ճղարա կը քաշէ:  
Պալիկ հորքուր տան մէջ կ'աշխատի, կ'երթայ, կու գայ: Կը լսուի երախա-  
ներու վազքի ձայնը:

**ՊԱԼԻԿ** – Հո՛ւ, հո՛ւ, ո՛ւ, կենճուկ- մորճուկ, հո՞ղ մտնէք, հէ՛յ շան զակ-  
ներ: Թումաս, Թումաս, ե՛լ, տե՛ս է, էտ բտերը ինչ կ'ընեն տանիքը: Տունը  
թակեն՝ հոգո՞ չես ըներ:

**ԹՈՒՄԱՍ** – Էհ, ի՞նչ կ'ըլլի, կնիկ, պզտիկներ են, թող որ խաղան: Չէ՛,  
չէ՛, մի՛ վախճար, տունը չի փլիք: (Պահ մը լռութիւն. Թումաս կը մրափէ):

**ՊԱԼԻԿ** – Հո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... Արիմա՞րդ, ե՛լ, տե՛ս՝ ի՞նչ կ'ընեն վերը: Ցուիք-  
ները տահա երէկ թակեցի:

**ԹՈՒՄԱՍՍ** – Կնիկ, դու՛ն ըլ գահիկս տարիր: (Կ'ելլէ ռաքի ու կ'երթայ դուրս, տանիք):

(Կը մթնէ արագօրէն, ու մութին մէջ **Թումաս** ետ կու գայ եւ ուրիշ անկիւն մը կը նստի: Նունիկ ներսն է: **Լոյսը** արագօրէն կը բացուի):

**ՊԱԼԻԿ** – Արիմա՛րդ:

**ԹՈՒՄԱՍՍ** – Հը՞:

**ՊԱԼԻԿ** – Արիմա՛րդ, ե՛լ, թակը ա՛ն, քիչ մը էդ տամ ցուիքներուն բռնորը թակէ՛: Էս տարի ցուիքներուն նոր փշեր պիտի դրուի: Երդիքին նոր փայտ պիտի անցուի: Վաղը՝ աշնան, տանիքը պիտի շխուի:

**ԹՈՒՄԱՍՍ** – Կնիկ, ա՛յ հասկցանք, հերիք է. տահա աշունին վեց ամիս ունինք, հիմակուց սկսար դրդուրը:

**ՊԱԼԻԿ** – Մի՛ նեղուիր, արիմա՛րդ. հողը հիմակուց բերենք, որ աշունին հագը ըլլի: Գեղացիք կ'երթան, լաւ հողը կը բերեն, գէշն ըլ մեզի կը ձգեն: Դուն ըլ գիտես, որ գեղացիք մեզի աչք ունին, յօնք չունին:

(Կը մթնէ ու կը լուսաւորուի կրին: Գրեթէ նոյն դիրքով նստած է **Թումաս**, թերեւս քիչ մը անդին ու կը մտախօսէ):

**ՊԱԼԻԿ** – Արիմա՛րդ: (Լռութիւն) Քեզի կ'ըսեմ, արիմա՛րդ: Արիմա՛րդ, վաղը ձմեռ կու գայ: (Թումասի գլուխը վեր կը բարձրանայ ու կրկին կը կախուի): Չի՛ն որ գայ, էդ բակի դիւ\* պատը պիտ քրքրցնէ: Ե՛լ, էդ հողն իստկէ՛, որ չամուռ շատ չըլլի: (Լռութիւն):

**ՊԱԼԻԿ** – Արիմա՛րդ: Արիմա՛րդ:

**ԹՈՒՄԱՍՍ** – Դեհէննէ՛մը: Չմեռուայ ու ձիւնի տահա եօթ ամիս կայ: Ամբողջ օրը մշակութիւն եմ ըրեր, յոգնած, ջարդուած տուն եմ եկեր. կ'ըսեմ հեղ մը Պալիկ կոնակս շփէ, վրաս կոխկռտ, որ հանգստանամ, դուն ըլ ելիք տանիքն ու ձիւնը կը դրդաս: Դեհէննէ՛մ, հասկցա՛ր:

(Կը մթնէ ու կը լուսաւորուի կրկին: Մութին մէջ դուրս է ելած **Թումաս**, իսկ **Պալիկ** գացած է նստիլ տանը սեմին՝ փողոցին վրայ: **Լոյսը** կ'աւելանայ):

**ՊԱԼԻԿ** – (Գլուխը շարժելով ու լալով): Չի՛ջօ՛ Չաքար, հոգուդ դուռը գոցուի. սեպեպ եղար, զիս էս մարդուն ձեռքը ձգեցիր:

**ՄԱՆԱՆ ՊԱՄԻ** – (Դիմացէն փողոցը կը կտրէ կու գայ **Պալիկի** քով) Ի՞նչ է, Պալիկ հորքուր, Ի՞նչ է եղեր, ինչո՞ւ կու լաս:

**ՊԱԼԻԿ** – Ի՞նչ ըլլի, սեպեպ ըլլողին բրիշակը մրեղի: Չի՛ջօ՛ Չաքար, սեպեպ եղար, զիս դժոխքի մէջ ձգեցիր:

**ՄԱՆԱՆ** – Դեհ ներս անցիր, Պալիկ հորքուր, ամօթ է: Էրիկ է, կը ծեծէ ըլ կը սիրէ ըլ:

**ՊԱԼԻԿ** – Ո՛ւյ, ո՛ւյ, էդպէս մի՛ ըսեր, Մանա՛ն. էս առտու էնպէս զարկեց. հը (լաչակը վեր հանելով), տե՛ս, Մանա՛ն, ուռեցեր է զարկած տեղը: Էնպէս զարկեց, որ այքերես կէժ ելաւ: Ես բան չըսի, մէ՛րս, քո՛րս, ըսի, որ, արիմա՛րդ, տունէն դուրս ելլելէդ առաջ էդ տանիքի ճոթոնը շակէ. էսօր Մարութենց պաղչին վրայ ամպ տեսայ: Որ անձրեւ գայ, տանիքին ջուրը պատն ի վար պիտի թափի: Տեսայ՝ էս մարդը դեռի պէս վրաս հասաւ: Ըսէ՛, Մանա՛ն, էս բոլորը երկանս չըսեմ, ալ որո՞ւ ըսեմ:

(Հետզհետէ մթնած է):

**ՄԱՆԱՆ** – Դէ՛, անցիր ներս, Պալիկ, գնա՛, պառկի՛ր, իրիկուն եղաւ: (Պալիկ ներս կը մտնէ. Մանան կը մեկնի, լոյսը կը նուազի: Դուրսը գրեթէ մութ կ'ըլլայ: Ներսը ճրագի մը լոյսը կամ անոր չափ լոյս միայն: Պալիկ կը մտնէ անկողին, վերմակը կը քաշէ գլխուն, կը քնանայ: Կը մտնէ **Թումաս**, կը տեսնէ կինը պառկած: Կը մօտենայ թոնրին, կոնակը կու տայ բարձրու, կը նստի, քունը կը տանի, գլուխը կը կախուի: Բակի վարագոյրը գոցուած է, միայն սենեակն է կիսալոյսի մէջ: Դուրսը կը լսուի հեռաւոր որոտում, ապա անձրեւի ձայնը:

Պալիկ հորքուր անձրեւի ձայնէն կ'արթննայ, անկողնին մէջ կը նստի, ստիկ կ'ընէ անձրեւի ձայնին: Ապա փաթթուած կ'առնէ ճրագը ու կ'ելլէ դուրս:

Քիչ վերջ ետ կու գայ: Կը տեսնէ՝ **Թումասը** քնացեր է՝ արմուկին կռթմած, կը մօտենայ կամաց մը, թեին տակ բարձ մը դնել կ'ուզէ, **Թումաս** կ'արթննայ:

**ՊԱԼԻԿ** – Թեղ պիտի ցաւցնես, արիմա՛րդ, էս բարձը տակը դիր:

**ԹՈՒՄԱՍՍ** – Հա՛, հա՛, Պալիկ, դո՞ւն ես. վայ թեւ, էնպէս քունս տարաւ: Էսօր էդ ճոթոնը շինեցի, Պալիկ: Ի՞նչ է, անձրեւ կու գայ:

**ՊԱԼԻԿ** – Հա՛, **Թումաս**, անձրեւն է: Տեսայ, շիներ էիր ճոթոնը:

(Կը մթնէ ու շուտով կը լուսաւորուի կրկին: Բակի վարագոյրն ալ բաց է: **Թումաս** նստած է ուրիշ անկիւն մը: Պալիկ ռաքի է):

**ՊԱԼԻԿ** – Հա՛, հա՛, էրիկ առի, որ տանս հոգ տանէ: Ես էրիկն ի՞նչ ընէի: Տանիքը ամէն քրքրուեր, պատերը կը փլիմ, հոգը չէ:

**ԹՈՒՄԱՍՍ** – (Յօնքերը կիսած ստիկ ընելէ ետք): Հերիք է, ա՛՛ կնիկ, հերիք է. գլուխս տարիր: Տունն ըլ գլխիդ վրայ չի փլիր, որ մենք ըլ ազատինք:

**ՊԱԼԻԿ** – Տղամարդը որ տանը չմայի, պա՛ն՛վ տի մայի:

**ԹՈՒՄԱՍՍ** – (Չեռքին տակ գտնուող հողէ ամանը կը նետ կնկանը: Պալիկ պոռայով բակ կը վազէ):

**ՊԱԼԻԿ** – Ծերո՞ն Օվան, դրացի՛ Օվան:

**ՕՎԱՆ** – (Կ'երեւայ իր տան առջեւ): Կնէ՛ ի՞նչ է, Պալիկ:

**ՊԱԼԻԿ** – Էս մարդը զիս կը մեռցնէ, կը մեռցնէ. եկէք խօսք մը հասկցուցէք:

(Օվան կու գայ ու Պալիկի հետ ներս կը մտնէ. տարիքոտ զիտացի մըն է):

**ՇԵՐՈՆ ՕՎԱՆ** – Ամօք բան է, Թումա՛ս. դրացիները վիրա-վիրա ձեր ձեռները կը լսեն:

**ԹՈՒՄԱՍ** – (Նստած տեղէն) Օվան աղբար, մէկը զիտես, երկուքը չգիտես: Վեց ամիս չեղաւ կարգուելնիս, օր մը օրանց առանց ձեռն ձուռնի չկրցանք փիլաֆ մը ուտել: «Հը՛, տանը վրայէն պզտիկներ անցան. հը՛, ցուրտը կը փրցեն. հը՛, քաղցին կողմը ամպ տեսայ, անձրեւ պիտի գայ, կտուրը պիտի կաթէ. հը՛, հող պիտի բերուի. հը՛, տանիքը պիտի թակուի»: Այ ես ինչ գիտամ: Քառասուն հազար հեղ ըսեր եմ. «Պէ՛ կնիկ, ա՛յ հերիք է. պզտիկները տանիքէն անցնելով էս տունը չի փլիր. դրացիներուն հետ պարապ տեղ ինչո՞ւ կոխի կ'ընես: Հէլաթ մենք ըլ մարդ ենք: Որ ցուրտը փլի, կը շինենք, որ ճոթոնը խախտի, կը շտկենք, որ տանիքը շխելու առե-նը գայ, կը շխենք»: Ես էս բաները չկրցայ հասկցնել:

**ՊԱԼԻԿ** – Ես բան չըսի, դուրպան Օվան. ըսի, որ տունը շղախի պէտք ունի: Հող պիտի բերուի. վաղը մէկալ օր աշուն կու գայ: Տան էտին հող կայ, դէն պիտի նետուի, որ վաղը՝ ձիւնին ձմեռն, չամուռ չըլլի, չի քրքրի պատը: Դուրպան Օվան, էս բաները որ էրկանս չըսեմ, հապա որո՞ւն ըսեմ:

**ՕՎԱՆ** – Էս բոլորը ամօք բաներ են, Պալիկ, ամօք բաներ են: Մարդ ու կնիկ ձեր խօսքն ու խորադան\* տունը պահէք: (Կ'ելլէ դուրս ու բակէն անցնելով կ'երթայ իր տունը):

**ԹՈՒՄԱՍ** – (Կը մնայ նստած, անշարժ: Պալիկ քիչ մը կ'երթայ, կու գայ: Դուրսն ու ներսը կը սկսին մթնել. Պալիկ քարիտի\* լամբը կը վառէ, անկողինը կը փռէ, ճրագին լոյսը կը պակսեցնէ ու առանց ձայն հանելու կը պառկի: Թումաս կը մնայ նստած, նայուածքը մէկ կէտի յառած: Քա-նի մը բռայէ ետք տեղէն կ'ելլէ, պատրոյզը քիչ մը կը բարձրացնէ, սնտու-կը կը բանայ, մէջէն կը հանէ կիրակնօրեայ ելկէկը\* ու ամենօրեայ էնթա-րիին\* վրայէն հագնելով լոյսը կը պակսեցնէ ու առանց ձայն-ձուն հանե-լու, տանէն դուրս կ'ելլէ, դուռը կը գոցէ ու փողոցի կիսամութին մէջէն կ'անհետի:

Դուրս ելլելու ժամանակ Պալիկ գլուխը վեր առած ու տեսած է անոր մեկնիլը: Մէկ-երկու երկվայրկեանի դադարէ մը ետք լոյսը կը սկսի աւել-նալ, արադաղը կը կանչէ, առաւօտը կը բացուի: Պալիկ տեղէն կ'ելլէ, ան-կողինը կը հաւաքէ արագ մը: Ու տան գործին կը սկսի:

Դուրսը՝ տան առջեւ, կու գայ կը կանգնի Չիչօ Չաքար):

**ՉԱՔԱՐ** – Թումաս, Թումաս ... Պալիկ:

**ՊԱԼԻԿ** – (Դրան առջեւ ելլելով) Ի՞նչ է, Չաքար՝ աղբար:

**ՉԱՔԱՐ** – Թումասին ըսէ՛ եզներն իրեն կը սպասեն:

**ՊԱԼԻԿ** – Թումասը առտուն ձեզի եկաւ, Չաքար՝ աղբար: Էսօր շաա-շաա կանուխ ելաւ:

**ՉԱՔԱՐ** – Չէ՛, Պալիկ, Թումասը մեզի եկած չէ:

**ՊԱԼԻԿ** – Կիրակնօրեայ ելկէկն էր հագեր, Չաքար՝: Սիրտս լաւ բան չի վկայեր:

**ՉԱՔԱՐ** – Եթէ Թումասը գալու ըլլայ, կ'ըսես՝ ուղղակի Խրաճի արտը թող գայ: (Կ'երթայ):

**ՊԱԼԻԿ** – Վա՛յ, Թումաս, Թումաս: Ի՞նչ ըրիր, ի՞նչ ըրիր. տունս աւ-րեցիր, Թումաս:

**ՄԱՆԱՆ ՊԱՃԻ** – (Կու գայ, կը նստի Պալիկի կողքին՝ դրան սեմին): Պալիկ, ի՞նչ է եղեր:

**ՊԱԼԻԿ** – Թումասը տունէն գացեր է: Գիշերանց ելաւ, կիրակնօրեայ ելկէկը հագաւ ու դուրս ելաւ. կարծեցի՝ կանուխէն գործի կ'երթայ: Չիչօ Չաքարն եկաւ, թէ Թումասը ո՞ր է: Վա՛յ, Թումաս, Թումաս, ի՞նչ ըրիր, ո՞ր գացիր:

Հէչ բան չըսի, մէ՛րս, քո՛րս, իրիկունը տան ցուրտներուն համար խօսք գրոյց եղաւ: Տեսնե՛մ՝ էս մարդը նորէն հերստտաւ. «Այ հերիք եղաւ, Պա-լիկ, հոգիս քերանս բերիր, տունը գլխիդ չի փլչիր, որ մենք ըլ ազատինք», - ըսաւ ու ալ էս մարդը լիսուեցաւ: Թող զարնէր, թող ծեծէր, ֆախաթ թող չփախէր տունէն: Ես ի՞նչ ըսեմ, մէ՛րս, քո՛րս:

Այս առտու ըլ շաա կանուխէն ելաւ: Կիրակնօրեայ ելկէկն էր հագեր: Դուրս որ ելաւ, ուսուլ\* մը դուռը ետեւէն փակեց, որ ես չարթննամ: Ես ար-թուն էի, տեսայ էս բաները: Այ էն փակելն էր, մէ՛րս, քո՛րս, էն փակելը:

Ա՛խ, Թումաս, Թումաս, ո՞ր լեռները մնացիր: Չէ՛, չէ՛, որ գայ, ալ չպի-տի դրդարմ, թող չորնայ լեզուս: Ա՛խ, Թումաս, գացիր, հէմ քե՛նով գացիր: (Կը մթնէ արագօրէն: Կը լուսատրուի կրկին արագօրէն):

**ՊԱԼԻԿ** – (Տան ներսն է, տնական գործի: Դուրսը՝ դրան առջեւ, կու գայ ջորեպան Թաթոսը):

**ԹԱԹՈՍ** – Պալիկ հօրքոյր, Պալիկ հօրքոյր:

**ՊԱԼԻԿ** – Ո՞վ է:

**ԹԱԹՈՍ** – Ես եմ, ջորեպան Թաթոսը:

**ՊԱԼԻԿ** – (Կը վազէ, դուռը կը բանայ ու կ'ելլէ դուրս): Ի՞նչ կայ, Թաթո՛ս:

**ԹԱԹՈՍ** – Պալիկ, Թումասը տեսայ:

**ՊԱԼԻԿ** – Ո՞ր է, ո՞ր է:

**ԹԱԹՈՍ** – Հալալու մէջ տեսայ. փռապանի մը քով ծառայ էր:

ՊԱԼԻԿ – Իրաւ Թումա՛սն էր, Թաթն՛ս:

ԹԱԹՈՍ – Հա՛, Պալիկ, հա՛, Թումասն էր՝ չէ՛լոտ երեսով: Հետն ըլ խօսացի:

ՊԱԼԻԿ – Ի՞նչ ըսաւ, Թաթն՛ս:

ԹԱԹՈՍ – Ըսաւ. «Երբ որ գնդ երթաս, Չիչօ Չաքարի եզներուն նոր սամիները տան փեթակի ետելը՝ ճիշտ հաւկիթներուն դրած տեղն են: Պալիկը գիտէ: Ըսէ Պալիկին, որ սամիները Չիչօ Չաքարին տայ»:

ՊԱԼԻԿ – (Արցունքոտ աչքերը սրբելով) Դուրպա՛ն, Թաթն՛ս, ուրիշ ի՞նչ ըսաւ:

ԹԱԹՈՍ – Ուրիշ բան չըսաւ, Պալիկ հորքուր:

ՊԱԼԻԿ – Ուրիշ հէ՞ջ բան չըսաւ:

ԹԱԹՈՍ – Չէ՛, Պալիկ հորքուր, չէ՛:

ՊԱԼԻԿ – Դուրպա՛ն, Թաթնս, կիրակնօրեայ ելկէկը վրա՞ն էր:

ԹԱԹՈՍ – Ես ի՞նչ գիտեմ, Պալիկ հորքուր:

ՊԱԼԻԿ – Ա՛խ, Թումա՛ս, Թումա՛ս: (Դադար) Թաթն՛ս, նամակ մը տամ, կը տանի՞ս Թումասին:

ԹԱԹՈՍ – Հա՛, Պալիկ հորքուր, կը տանիմ, ինչո՞ւ չտանիմ:

ՊԱԼԻԿ – (Կը կանչէ): Տիրացո՛ւ Գեւօ, տիրացո՛ւ Գեւօ:

ԳԷԻՍՏԻ ՉԱՅՆԸ – Ի՞նչ կայ, Պալիկ հորքուր:

ՊԱԼԻԿ – Հօրուդ դուրպան, եկո՛ւր:

ՏԻՐԱՏՈՒ ԳԷԻՍ – (Կու գայ): Ի՞նչ կայ, Պալիկ հորքուր:

ՊԱԼԻԿ – Դուրպա՛ն, Գեւօ՛, մեր Թումասին նամակ գրէ:

ԳԷԻՍ – Թումասն ո՞ր է, Պալիկ հորքուր:

ՊԱԼԻԿ – Ձորեպան Թաթնուը Հալպու մէջ է տեսեր:

ԳԷԻՍ – (Կը նստի, գօտիէն կը հանէ գրիչը, թուղթ, ծուկկին կը դնէ, գօտիի կաղամարին\* կը թաթխէ գրիչը ու) Ի՞նչ գրեմ, Պալիկ հորքուր:

ՊԱԼԻԿ – Ա՛խ, Թումա՛ս, ա՛խ:

ԳԷԻՍ – (Կը գրէ) Ուրի՞շ:

ՊԱԼԻԿ – Գացիր, հեմ քէնով գացիր: Հէ՛յ կիտի օրեր: Սամիները Չիչօ Չաքարին տուի արդէն: Վեց ջուխտ սամիներ: Տանիքը էս տարի առանց շղախի կը մնայ: Պատին ետեւի հողերը կոնակո՛վս կրեցի, վրաս հալ չմնաց: Էլիմ բտերը կիսէ տանիքէն վազ չեն գար, հաւերը թառվառ կ'ընեն, վիրա-վիրա տանիքին վրայէն կ'անցնին: Տուիքները փլիփր են, տիրութիւն էնող չկայ: Եարաթ մը առաջ անձրեւ եկաւ: Էնքան շատ եկաւ, որ ճոթոնը քշեց տարաւ: Ես միմուճար կնիկ, իմտո՞ր ընեմ: Ա՛խ, Թումա՛ս, ա՛խ ...

(Կը մթնէ արագօրէն ու կը լուսաւորուի: Սեմին կանգնած է Պալիկ, հեռուէն կու գայ ջորեպան Թաթնուը):

ՊԱԼԻԿ – Դուրպա՛ն, Թաթնս, մեր Թումասը տեսա՞ր ...

ԹԱԹՈՍ – Չէ՛, Պալիկ հորքուր, չէ՛: Տարի մը առաջ, որ նամակը տարի, էն տեսնելն էր:

(Կը մթնէ արագ ու քիչ մը ժամանակ տալէ ետք, որպէսզի մութին մէջ քիչ մը աւելի ճերմկցուին Պալիկի մազերը, ու Պալիկ ծերացածի կոացած դիրքը առնէ: Կրկին կը բացուի լոյսը, Պալիկ դրան սեմին է: Հեռուէն կու գայ Թաթնուը):

ՊԱԼԻԿ – (Դողդողացող ձայնով): Դուրպա՛ն, Թաթնս, մեր Թումասը տեսա՞ր:

ԹԱԹՈՍ – Չէ՛, Պալիկ հորքուր, չէ՛, վերջին անգամ որ տեսայ, 15 տարի առաջ էր:

(Փողոցի առաջամասէն դուրս կ'ելլէ Թաթնս)

ՊԱԼԻԿ – (Կը մնայ կանգնած, նայուածքը հեռուն, դաշտերուն: Վերէն երախսաներու ոտքի ձայն, աղմուկ): Հո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, կէճճուկ-մորճուկ, հո՛ղ մտնէք, հէ՛յ շան զաւկներ: (Պալիկ դողդողալով, դանդաղ կը մտնէ ներս, անկողինը կը քաշէ բեմի աջակողմեան մասը, քիչ մը ետեւօք ու անկողին կը մտնէ՝ կոնակին տակ քանի մը բարձ, ուրեմն կիսովին նստած, գլուխը կախ, կը հեւայ):

(Կը մթնէ ու կը լուսաւորուի շուտով):

ՊԱԼԻԿ – (Նոյն դիրքին մէջ է, անկողինն մէջ ու կը հեւայ: Դուրսէն կ'երևան Մանան պաճին ու քահանան, դրան առջեւ կը խօսին):

ՄԱՆԱՆ – Էս վեց օր է, տէ՛ր պապ, որ տեղէն չէ ելեր: Կերակուր կը տանիմ, եղածին պէս կը մնայ, ներսը կը վառի, ջուր կ'ուզէ, ջուր: Աչքերն ըլ լաւ չեն տեսներ:

(Կը մտնեն ներս: Քահանան կ'երթայ Պալիկ հորքուրին քով, նախ ոտքի, ապա միմտերի մը կը նստի: Մանան կը մնայ ոտքի քահանային մօտ):

ՔԱՀԱՆԱ – Պալիկ հորքուր, ինտո՞ր ես:

ՊԱԼԻԿ – (Աչքերը առաստաղէն վար բերելով) Մանա՛ն, դո՞ւն ես:

ՔԱՀԱՆԱ – Չէ՛, Պալիկ հորքուր, զիս չե՞ս ճանչնար:

ՊԱԼԻԿ – Չէ՛, դուրպա՛ն, չէ՛:

ՔԱՀԱՆԱ – Տէ՛ր պապն է, Պալիկ հորքուր:

ՊԱԼԻԿ – Դուրպան, տէ՛ր պապ, ջո՛ւր, ջո՛ւր ...

ՔԱՀԱՆԱ – (Մանան ջուրի փարչը կ'երկարէ քահանային, քահանան կը խնցնէ Պալիկ հորքուրին)

ՊԱԼԻԿ – Աստուած արեւդ պահէ:

**ՔԱՀԱՆԱ** – Ինտո՞ր ես, Պալիկ հորքուր:  
**ՊԱԼԻԿ** – Աղէկ եմ, տէ՛ր պապ: (Դադար) Չէ՛, չէ՛, քահանաները քարի  
եմ, չեմ մերժեր: Տէ՛ր պապ:

**ՔԱՀԱՆԱ** – Ի՞նչ է, Պալիկ հորքուր:  
**ՊԱԼԻԿ** – Մեր Թումասին մամակ մը գրէ Հալպու հասցեով, տէ՛ր  
պապ, ի՞նչ կ'ըլլի:

**ՔԱՀԱՆԱ** – Հա՛, գրեմ, Պալիկ հորքուր:  
**ՊԱԼԻԿ** – Գրէ՛, դուրսա՛ն, տէ՛ր պապ: Իշտե՛ հալս կ'երեսայ: Էսօր վեց  
օր է՛ տանիք ելած չեմ: Էլին քտերը ցուիքները վեր-վերան ըրին: Էս տու-  
նը անտէր կը մնայ, տէ՛ր պապ. տունն անտէր չպէտք է մնայ ... Բակին  
կողմի պատը փոք է տուեր ... Թող գայ, տիրութիւն էնէ: Որ ձմեռ-ձիւն գայ  
... (Գլուխը կ'անշարժանայ: Քահանան կը ծռի, կը նայի աչքերուն, ձեռ-  
քով աչքերը կը փակէ, մինչ վարագոյրը կ'իջնէ):

### ՎԵՐՁ

## ԱՆՉՐԵԻՆ

### ԱՐԱՐ Ա

Տեսարանը կը ներկայացնէ հայկական գիւղ մը, որ քանի մը խանութ  
ունի, եկեղեցի ունի եւ վարժապետ, ուրեմն՝ նաեւ դպրոց:

Բեմէն սրահ դիտուած բեմի աջ կողմը՝ յառաջամասին մօտ, Գանձակ  
Պարսամի խանութն է: Գանձակ Պարսամի ճակատը միշտ փոք-փոք էր,  
քթին վերի մասը սոթտուած\*, միշտ փոնքտալու\* դիրքին մէջ էր. աչքերու  
կոպերը ծանրութենէն աւելի վար կախուած էին, կարծես ոսկերիչի մը  
անյաջող մէկ գործն ըլլային:

Գանձակ Պարսամ արախչին բարակ կը կապէր, կը սիրէր ձիախաղով  
սալաք եւ տամա խաղալ:

Գանձակ Պարսամի խանութին մէջ կը գտնէիր լուցկի, աղ, օճառ,  
կապ, բահ, քարիւղ, խոփ, գամ, ծխախոտ, դպրոցական առարկաներ,  
գրչակոթ, քարետախտակ, կալիճ, ձուկի ձեւ ունեցող գրչածայրեր:

Գանձակ Պարսամի խանութի կողքին՝ շեղակի, դէպի աւելի ետ ու հե-  
ռու, կօշկակար Բարսեղի խանութն է՝ իր գիւղական կօշիկներով, կաշիճե-  
քով, մուրճերով, լարերով ու մեղրամոմով:

Աւելի հեռուն եւ աւելի ետեւ, միշտ շեղակի, ուստայ Չաքարի ատաղ-  
ձագործարանն է:

Բեմին ձախ կողմը հրապարակ է, մէկ-երկու ծառերով, եւ անոնց տակ  
ջողացի քար մը ու լող քար մը:

Հեռուն՝ խորքին մէջ, պաստառին վրայ, հերկուած դաշտեր են, աշխա-  
տանքը զգալի է ակօսներու գոյնին մէջ իսկ:

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Առաւօտ կանուխ է, Գանձակ Պարսամի խանութին տառապաները\*  
զոց են դեռ, հեռաւոր ատաղձագործարանին մէջ կ'աշխատի Ուստա Չա-  
քար: Կօշկակար Բարսեղ բանալու վրայ է իր խանութը: Կօշկակար Բար-  
սեղ երիտասարդ չէ, ունի մոխրագոյն մազեր եւ ակնոցներ: Գանձակ  
Պարսամի խանութին առջեւ երկու գիւղացիներ կան, որոնք կ'անցնին  
կօշկակար Բարսեղի խանութին մօտ՝ խօսակցելու անոր հետ: Գիւղացի-

ներէն մէկը մտրճ ու քլունկ ունի կոնակին, վարպետ հիւսն է, դրսէն է ե  
նայուածքով չորս կողմը կը դիտէ, կը զննէ:

**ԳԻՒՂԱՏԻ** – Բարսեղ ամու, Գանձակ Պարսամ ուշացաւ, վարպետ  
Օհանը մտրճին համար փայտէ նոր կոթ մը կ'ուզէ:

**ԲԱՐՍԵՂ** – (Մէկ կողմէն կօշիկները տեղաւորելով, թրջուած կաշինե-  
րը ամանով դուրս քաշելով) Ուր որ է կու գայ, յէնճալըները լուծքի գացին,  
իբ գալու ժամն է:

**ՎԱՐՊԵՏ ՕՀԱՆ** – Գանձակ Պարսամ որ կ'ըսէք, Գանձակէ՞ն է  
եկած:

**ԳԻՒՂԱՏԻ** – Չէ՛, չէ՛, Գանձակ Պարսամի մեծ հայրը Սեւ ծովը անց-  
նող մարդ է եղեր: Գանձակ Պարսամ որ կ'ըսեն, իշու ականջով լիք ոսկի  
ունի, դուն էս խանութի խեղճութեան մի մայի: Գանձակ Պարսամ քչիկ մը  
քաղդէն է, իր տունն ունի կրակտունէն ու շարտախէն\* գատ, հիրամոց,  
ուր հիր որ ըլլիս գինիի կամ օղիի տեղ կապոյտ գաւաթով սուրճ կը  
հրամցենք քեզի՞:

**ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ**

Գանձակ Պարսամ կը մտնէ:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Բարի՛ լոյս:

**ԲԱՐՍԵՂ** – Աստծու քարին:

**ԳԻՒՂԱՏԻ** – Աստծու քարին, Պարսամ: (Մէկ կողմէ Պարսամ տառա-  
պանները կը բանայ, միւս կողմէ գիւղացին կը շարունակէ խօսի): Պար-  
սամ, վարպետ Օհանը մեր գեղէն կ'անցնի, մտրճին համար լաւ փայտ  
կոթ մը կ'ուզէ:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Հա՛, լաւ փայտէ կոթ մը տամ, կու տամ: Հր-  
մանքդ ո՞ր տեղացի ես:

**ՎԱՐՊԵՏ ՕՀԱՆ** – Հալեացի: Երկու տարի է՝ Կարմրիկի եկեղեցիի շի-  
նութեան կ'աշխատէիք:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Հա՛, որ ժամանակ ունենաս, մեր եկեղեցին  
գնա ու էնոր հնչուն արձագանգը մտիկ ըրէ. իմ պապը վարպետ ճարտա-  
րապետ եղած է: Էդ եկեղեցիի պատերուն մէջ անիմանալի բաներ դրած  
է, էդոր արդիւնքն է էդ հնչուն արձագանգը: Եկեղեցի որ երթաս, լաւ մտիկ  
ըրէ, երգեցողութիւնը որ տեսնես, ինչքան մաքուր է պատերուն ետ տուած  
ձայնը: Էդ փայտի կոթը լա՞ւ է:

**ՎԱՐՊԵՏ ՕՀԱՆ** – (Փայտը ձեռքին մէջ դարձնելով) Հա՛, լաւ է, քանի՞ է:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – 40 փարա:

(Վարպետ Օհան կը վճարէ ու գիւղացիին հետ կը մեկնին: Գանձակ  
Պարսամ օճառները կը շարէ վրայ-վրայի, երեսը կաշիէ ծալուող երկու  
աթոռակներ դուրս կը հանէ ու զբաղած է ընդհանրապէս խանութը կարգի  
բերելով՝ օրուայ գնումներու դիրացման համար):

**ԱՂՋԻԿ ՄԸ** – (10-12 տարեկան, գիւղական զգեստներով, ձեռքը քա-  
րիղի շիշ մը) Մայրիկս ըսաւ, որ կազեաղի տաս, փարսան վաղը կու  
տանք:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – (Մէկ կողմէն քարիւղը լեցնելով) Մայրիկդ ին-  
տո՞ր է: Նամակ կ'առնէ՞ք: Էսքան ատեն է ի՞նչ կը վառէիք. քաման 15 օր  
է կազեաղի չէք առեր: Ետաշ, խէի բռնէ, որ չքափես: Մայրիկիդ ըսէ Ամե-  
րիկայէն գալած դրամները ի՞նչ կ'ընէ:

**ԱՂՋԻԿ** – (Քարիղի շիշը առնելով կը մեկնի: Գանձակ Պարսամ,  
ապառիկներու տետրակը առնելով, կ'արձանագրէ ու քարձրածայն կ'ըսէ)

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Ակօեմց Եղսիկին շիշ մը կազեաղը՝ 50 փարա:

**ԲԱՐՍԵՂ** – (Մէկ կողմէն պատին անցուցած թելի մը մեղրամոմ քսե-  
լով) Երէկ քաղաք գացե՞ր էիր:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Հա՛:

**ԲԱՐՍԵՂ** – Յորեմը քանի՞ կ'երթայ:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Յորեմին չմտեցուիր, Բարսեղ, չմտեցուիր.  
Մուլթան Մելիմի օրէն մնացած ոսկիները հիմա մէլտանն են. արինի գին  
է, արինի գին:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – (75 տարեկան, դողդողուն, ձեռնափայտով, կու գայ)  
Բարի՛ լոյս, Պարսամ, քարի՛ լոյս, Բարսեղ (Կը տեղաւորուի Պարսամի  
խանութի պատին տակ՝ աթոռակներէն մէկուն վրայ, ու չիպուխը կը հա-  
նէ, դողդողացող ձեռքերով կը լեցնէ):

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Աստծու քարին, Կարօ՛ Թաթօ: Կարօ՛ Թաթօ,  
էդ ինտոր եղաւ, որ երէկ ես Թորիկ Դուկասին հետ տամա խաղցած ժա-  
մանակ մէկ քարի տեղ երկու քար տուի:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – (Քըր-քըր խնդալով) Երէկ էդ քարը չպէտք է վիրց-  
նէիր, էդ սխալ էր. չէ՛, էդ քարը չպէտք է վիրցնէիր:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Չըլլի դուն է՛ խելք կու տաս Թորիկ Դուկասին,  
կամ աչքով-ուցքով կը հասկցնես:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Չեր խաղի ժամանակ ես ե՞րբ եմ խօսէ, Պարսամ: Կը  
լսե՞ս, Բարսեղ, դուն խօսա:

ԲԱՐՍԵՂ – Չէ՛, Պարսամ, չէ, դու՛ն ալ գիտես, որ Կարօ Թաթօն չի խօսար, կը դիտէ. լուս կը նայէ ձեր խաղին ժամերով: Երբեմն միայն քրքր-քրքր կը խնդայ, էդ ալ երբ մէկդ քակարոյի մէջ իյնար կամ սխալ քար մը վերցնէր:

ԿԱՐՕ ԹԱԹՕ – (Քրքր-քրքր կը խնդայ կրկին, ապա կը հարցնէ) Թորիկ Դուկաս չերեւա՞ց:

ԲԱՐՍԵՂ – Չէ՛, առաւօտ որ տեսայ, քէֆը տեղը չէր: Եզները՝ Տողանն ու Տիքքօն, դաշտ կը տանէր՝: Մէկ եզը աչքիս լաւ չերեւաց՛:

ԿԱՐՕ ԹԱԹՕ – Դուկաս ինքն ալ մտահոգուած էր էդ մէկ եզով: Ըստ է ծերացերն՝:

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Դաշտերուն կողմէ կու գայ Թորիկ Դուկաս՝ արօրը ուսին: Արօրը կ'իջեցնէ պատին տակ ու ճակտին քրտինքը կը սրբէ:

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ – Բարե՛ւ, Դուկաս, եսպէս շո՞ւտ:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ – Չես հարցներ, քէ ի՞նչ հալի եմ: Էսօր մեծ եզը՝ Տիքքօն, արօրին տակ ինկաւ:

ԲԱՐՍԵՂ – Վա՛հ, էտ ինտո՞ր:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ – Ծերացեր է, Բարսե՛ղ էմմի, ծերացեր է: Գիտէի, քայց ի՞նչ ընէի, նոր եզ ինչպէ՛ս առնէի, ինչո՞վ առնէի ... Անցնող տարի քամակները շատ էժան ծախուեցան, տան ճեղքուած պատը նորոգելու համար երեք ոսկի տուի ... Չեքս որ նեղ չըլլար, ես քէ եզ մը կ'առնէի, քէ ալ խաշը ջուրը ձգելուն կնքահայր կ'ըլլայի... Բայց որ քամակները էժան գացին, ձեռքս մնաց նեղ: Էս տարի ալ որ Տիքքոյի օգնութեամբ գործս գոյիս քերէի, յառաջիկայ տարի Աստուած ողորմած էր, ցորեն, քամակ կը ծախէի, նոր եզ մը կ'առնէի, ու Տիքքօն իր հալին կը ձգէի ... Աստուած չուզեց: Տիքքօն շատ էր ծերացեր, չդիմացաւ... Ատուն՝ տան դռնէն դուրս հանած պահուս, ոտքը սեմին դիպաւ, ու քիչ մնաց ամբողջ մարմնով գետին իյնար: Արտ որ հասանք, «Ես Աստուած» ըսի ու մաճը սեղմեցի: Տողանը սկսաւ քաշել, Տիքքօն հետեւեցաւ: Արեւը արօրի քարձութեամբ ելած էր: Մէկ ալ տեսնեմ՝ Տիքքօն դանդաղեցաւ, արօրի ամբողջ քեռը Տողանի վրայ ինկած էր ... Մի քանի անգամ մասայով\* մխտեցի, սակայն Տիքքօն աւելի ծանրացաւ. լուծքը կեցուցի: Տիքքոյի մարմինը երկրաշարժէն օրօրուող լեռան մը պէս ետ- առաջ կ'երթար: Փորձ մըն ալ ըրի, մաճը շատ քեթու սեղմեցի, հոգ չէ, թող քիչ մը երես վարուի, ըսի, քայց վարուի արտը: Մաճը շակեցի քէ չէ ... Հեղ մ'ալ տեսնեմ՝ Տիքքօն ամբողջ մարմնով վարուած ակօսներուն վրայ ինկաւ: Սամիները քակեցի վզէն,

փորձեցի ոտքի հանել՝ ջուր խմեցնելու ու ծառին շուրջ հանգիստ տալու համար իրեն, չեղաւ, չեղաւ ... Է՛հ, ինտո՞ր ընեն գարունի ատեն, գործի ատեն. մէկ եզով ինտո՞ր ընեն: Որ էշ մը ունենայի, Տողանին հետ լծէի, մինչև կալ որ ձգէի, ալ Աստուած ողորմած է ...

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ – Հոգ մի՛ ըներ, Դուկաս, ջանդ սաղ թող կենայ, եկ, սանկ տամա մը խաղանք: (Մէկ կողմէն կը շարէ տամայի քարերը) Նստի՛ր, Դուկաս, քար մը վերցու՛ր:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ – Պարսամ, քեզի որ չըսեմ, ալ որո՞ւ ըսեմ, իշտէ կ'երեւայ հալս. էս տարի քամակներէն քան դուրս չեկաւ:

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ – (Լուս է, տամային կը մայի, հաշիւներ կ'ընէ):

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ – Պարսամ, որ կրնաս ձեռք մը երկնցուր ինձի, ճահիլ եզ մը առնեմ: Հինգ ոսկի դրամ որ փոխ տաս, ես քեզի կալին էելն էել- լօքը կը վճարեմ:

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ – (Յօնքերուն հետ ծանր կոպերն ալ վեր կ'ելլին. դէմքին խաղաղութիւնը ալիքուած է, ճակատը աւելի փոքրփոքած: Պահ մը կը մտածէ ու ..) Լաւ կ'ըլլի, Դուկաս, քեզի պէս քարեկամի որ չտամ, ալ որո՞ւ տամ: Հինգ ոսկի կու տամ, այս նեղ սրային գործդ տես: Ես քեզի ըսեմ, դու՛ն լաւ մարդ ես, Դուկաս, ֆախաթ մարդ ըսածդ հում կաթ է կերեր. ով գիտէ՛ ինչ կ'ըլլի՛ ինչ չ'ըլլի: Դրամ ըսածդ օձին քերանն է դրուեր. վաստակելը հեշտ քան չէ: Երկու վկայի ստորագրութիւնով սէնէդ\* կ'ընենք. ոսկիին ամիսը հարիւր փարայ տոկոսով, նէ՛ էել, նէ՛ պակաս: Կալին ցորենդ կը ծախես ու դրամս կու տաս տոկոսով միասին:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ – Էդ լաւ ըսիր, Պարսամ, գիր, սէնէդ կ'ընենք, կ'ուզես երեք վկայով: Թորիկ Դուկասին հոգին ալ որ ելլէ, կինէ էդ դրամը էվէն էվէլօք կը վճարէ: Էդ քարաֆէն\* ճակատս բաց է, Պարսամ: Էս տարի Կարմուճին ու Հողդարին արտերը ցորեն պիտի ցանեն. Մարխոնին ալ քամակ: Ես քու պարտքդ քամակին չեմ ձգեր:

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ – (Որ մէկ կողմէն պարտամուրեակը կը գրէ) Հա՛, Դուկաս, հա՛, էդ լաւ ըսիր, պարտքդ քամակին մի՛ թողուր: (Դադար) Էդ Կարմուճի արտը քու անունիդ է, չէ՞, Դուկաս:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ – Հա՛, Պարսամ. մինակ իմ անունին է՞:

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ – (Թուրթ, մելան է շարէ, ծունկի վրայ կը գրէ դանդաղ, կը կարդայ մի քանի անգամ քարձրածայն ամեն մէկ տողը: Գրածայրը կը մաքրէ: Վերջապէս լրացնել յետոյ կը կարդայ մուրեակը շատ դանդաղ): Ստորագրութիւնդ դի՛ր էստեղ, Դուկաս: (Կը դիտէ) Չէ՛, էդ չեղաւ, պէտք է գրես. «Թորիկ՝ Դազարի որդին, Դուկաս Թորիկեան»:



(Ղուկաս դանդաղորեն կրկին կը գրէ. միսները կը մայիմ) Բարսեղ էմմ, դուն ալ ստորագրէ, դուն ալ վկայ ես:

ԲԱՐՍԵՂ - (Կը ստորագրէ դժուարութեամբ, դանդաղորեն):

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ - Կարօ Թաթօ, դուն ալ վկայ ես, ստորագրէ:

ԿԱՐՕ ԹԱԹՕ - (Զըր-քըր կը խնդայ) Ստորագրե՞մ ..

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ - Հա՛:

ԿԱՐՕ ԹԱԹՕ - (Զըր-քըր խնդալով) Հա՛, որ էդպէս է, էդ մելանի տուփդ բեր, գրել-կարդալ որ գիտնայի, գեղին վարժապետ կ'ըլլայի: (Կը կնքէ բութամատով)

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ - (Ներսէն 5 դեղին ոսկի կը բերէ ու Թորիկ Ղուկասի ափին մէջ կը համրէ ոսկիները՝ հառ-հառ հնչեցնելով) Մէկ, երկու, երեք, չորս, հինգ: Է՛ լաւ, հիմա ե՛կ սանկ մտէ, տամա մը խաղանք:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - Չէ՛, Պարսա՛մ, չէ, էսօր չէ: Արտը կէս հերկուած մնաց, Տիքքօն դուրսը, ծառի մը տակ, իր հալիմ ձգեցի՞: Էդ նոր եզմ ալ գնելու համար մինչև Գարաճա լեռ պէտք է երթամ, երկու օրուայ ճամբայ է, եզան քայլով ետ գալն ալ երեք ... Չէ՛, չէ՛, պէտք է շուտ շարժիմ, որ արտերս շուտ հերկեն, շուտ ցանեն, ուշը չի մնամ:

ԿԱՐՕ ԹԱԹՕ - Ղուկաս ճիշտ կ'ըսէ, հա՛, շուտ գնա՛, շուտ եկո՛ւր:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - (Արտը ուսին կը նետէ ու դուրս կու գայ բեմի ձախտն)

(Այդ գործողութեան ընթացքին հետեւեալ խօսակցութիւնը տեղի կունենայ):

ԿԱՐՕ ԹԱԹՕ - Որ տուն բերես եզը, ճակատին քաժա հաւկիթ կտուրել չմտնաս:

ԲԱՐՍԵՂ - Նայէ՛, որ էշիկէն ներս սաղ ոտքը դնէ, հա՛: (Թորիկ Ղուկաս գլխով հա՛ կ'ըսէ ու կ'ելլէ) Հա՛, լա՛ւ ըրիր, Պարսա՛մ, Թորիկ Ղուկաս լաւ աշխատող է, պարտքին տակ չի մնար:

ԿԱՐՕ ԹԱԹՕ - Հա՛, հա՛, պարտքի տակ չի մնար, քայց խեղճով տարի ըլլայ, որ Թորիկ Ղուկաս նեղը չի մնայ:

ԲԱՐՍԵՂ - Կ'աշխատի, կը հերկէ, կը ցանէ, կը քաղէ ու պարտքը կու տայ, նեղը չի մնար, Կարօ Թաթօ՞:

ՎԱՐԱԳՈՅՐ

Գեղին մէկ փողոցը: Լեռնակողին քառած գեղը. հեռուն՝ արտերը: Բեմէն դիտած՝ բեմի ձախ կողմը Թորիկ Ղուկասի տունը, ապա ուրիշ ցած-իկ տուններ: Երկրորդ տան առջեւ կանգնած է Թորիկ Ղուկասի դրացին՝ Ակոբ, ձեռքը ճակատին, երկինք կը մայի: Արտերու կողմէն՝ բեմի մէջտեղէն, կու գայ Թորիկ Ղուկաս՝ քահը ուսին, կը նշմարէ Ակոբի մայուածքը, կանգ կ'առնէ, ձեռքը կը տանի ճակատին, կը դիտէ քիչ մը, կը մօտենայ դրացի Ակոբին:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - Դրացի՛ Ակոբ, երկա՞ր տանն է՛ էդ ամպը էդ տեղ է:

ԱԿՈՔ - Ես ըլ քիչ առաջ տեսայ:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - Հեղ մը սա արագիւնները վար գային... Էնպէս վերէն կը թոնին, կարծես աշխարհս վրայ կրակ են վառեր: (Կրկին կը մայէ ամպին) Դու կը տեսնե՞ս ամպը, Ակո՛ր ամմու:

ԱԿՈՔ - (Կը մայի) Հա՛, էն կողմն է, արագիլի ձու ունի: Տե՛ս, տե՛ս, պուշը քաժնուեցաւ ... (Դադար) Մէջքն ալ կիսուեցաւ: (Դադար) Գլուխն ալ կտրուեցաւ. քան չմնաց, Թորիկ Ղուկաս, քան չմնաց. էդ ամպի կտորով անձրեւ չի գար: Անձրեւ պէտք է, անձրեւ: Անձրեւ որ չգայ, ալ հունձը չկայ:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - Հա՛, անձրեւը շատ ուշացաւ, շատ:

ԱԿՈՔ - Էսօր տեսայ՝ ջաղացալան Նաւօն ջաղացքը գոցեր, դուրս է ելեր:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - Հէլպէթ, էդ ջաղջին ջուրով մէ՛ ջաղացը կը դառնայ, մէ՛ արտ կը ջրուի. էնքան քիչքցեր է, որ մինչև արտին գլուխը տանիս, ժամանակը կը լրանայ:

ԱԿՈՔ - Երէկ Մաթօն ու Խըմլ Միմասը քահերով քիչ մնաց իրար գլուխ կտրէին:

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - Ինչո՞ւ:

ԱԿՈՔ - Մեր ներկայութիւնով ջաղացին ջուրը երկուքի քաժնեցինք, շատ լաւ քաժնեցինք, մէ՛ տեւ, մէ՛ պակաս: Երկուքն ալ երկուական սհաթ՝ ջուր ունէին: Մի ըսեր՝ Մաթօն եկեր, ջուրի քաժինքին տեղը պզտիկ քարի կտոր մը դրեր է, որ ջուրը իր կողմը շատ վազէ: Քահերն իրարու վրայ քաշեցին ... Որ հոն չըլլայի՞ մը ...

ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ - Էս էսպէս քաշուելիք քան չէ, Ակո՛ր ամմու. ցորեն-ներուն երեսը չեմ կրնար մայի: Միրտս չի բռներ, որ արտ երթամ: Հեղ մը հաւաքուինք գիղացիներով, տատուլով, զուռնայով երթանք ջաղջին ջրին ալը գտնենք, փորենք, փորփորենք, շատցնենք ջուրը:

ԱԿՈՔ — Ինձի կու գայ, թէ պէտք է մեծով-պզտիկով հսկումի ելլենք, հսկումի ...

(Վերջին խօսքերու փոխանակութեան ժամանակ խորքէն ներս է մտած Կարօ Թաթօ, որ կը մտնենայ Ղուկասին ու Ակոբին):

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Բարե՛ւ, Թորի կ'Ղուկաս: Բարե՛ւ, Ակոբ ամնու:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ ԱՒ ԱԿՈԲ ԱՍՄՈՒ ՄԻԱՏԵՂ** – Աստծո՛ւ բարին, Կարօ՛ Թաթօ:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – (Մտնենդած կը պռայ դէպի ներս) Մաթօ՛, հէ՛յ, Մաթօ՛, գետինը մտնես, հայտէ՛, ալ ինչի՞ կը սպասես (Դրան մէջ կ'երեսայ Թորի կ'Ղուկասի կինը) Չի՞ գաս, հացին ծրարը չառնե՞ս, երեք սնաթ է կայներ եմ դրան առջեւ, ձայնս ներսէն կը լսես:

**ՄԱԸՕ** – Մէ՛րս, քուրս, ի՞նչ երեք սնաթ, տահա հիմա եկար:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Էս ներութեան ատենը լեզուդ կարճ կ'ընե՞ս, թէ՛ չէ:

**ՄԱԸՕ** – (Առանց ձայն հանելու՝ հացին ծրարը կ'առնէ ու ներս կ'երթայ):

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Տորեններդ ի՞նչ հալի եմ, Ղուկա՛ս:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Ըարաթ մըն է՝ չարչապալ կ'ըլլիմ, որ ցորենններուն քիչ մը ջուր հասցնես: (Ծալպատիկ նստելով դրան կից՝ քարէ ու հողէ շինուած տիւանին ) Երէկ ջաղցին ջուրը միմչեւ որ արաղը հասցուցի, տեսայ, որ վերէն կտրեցին. երեք սնաթ ջուրով ի՞նչ կրնաս ըներ: Եկու՛ր նստիր, Կարօ՛ Թաթօ, ճղարա մը վառէ: (Կ'երկարէ ծխախոտին տուփը):

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – (Կը նստի, ծխախոտ մը կը փաթթէ ու կը վառէ, նոյն ատեն խօսելով, խօսակցելով) Հա՛, էդ անձրեղ ուշացաւ, շատ ուշացաւ: Որ անձրեւ չգայ, աշխատանք ու քրտինք քանի՞ փարա կ'ընեն. անձրեւ պէտք է, անձրեւ. խէրն ու բարիքը անձրեւին հետ վար կու գան, անձրեւը սիրտ կը բանայ, Ղուկա՛ս, մարդոց երեսը կը խնդացնէ. երեսները ծուռ են հիմա: Էս շաքաթէն աւել է՝ Գանձակ Պարսամին քով չես գար, Ղուկա՛ս:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Ի՞նչ երեսով գամ, Կարօ՛ Թաթօ, չե՞ս տեսներ, ինչպէս կախեր է երեսը. Աստծու բարեւն ալ դժուարաւ կու տայ, ալ առաջուայ մնան տամա խաղալու ո՛չ առաջարկ կ'ընէ, ո՛չ ալ քարերը կը շակէ, ինչպէ՞ս գամ: Տորեններուն երեսը որ մայիմ, սիրտս կը մղկտայ, էսպէս շաքաթ մըն ալ որ անցնի, կ'այրին, կը չորնան. տուն-տեղ, ապրուստ որտեղէ՞ն հանես, Պարսամին ունեցած պարտքս ինչպէ՞ս տամ, ուրկէ՞ տամ. որ պարտքս չկարենամ տալ, Պարսամին երեսը ինչպէ՞ս մայիմ:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Հա՛, իրաւ ես. երեսը շատ կախ է էս քանի օր է. արտերուն մնան Գանձակ Պարսամի դէմքն ալ չորցեր է, կծկուեր է, Ղուկա՛ս: Անձրեւ որ չգայ, գեղը պիտի չորնայ, գեղը:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – (Երկինքը զննելով) Ամալի կտոր մ'ալ չկայ: Հեղ մը էդ արագիւնները վար գային ... Էնպէս վերերէն կը թռնին, կարծես աշխարքէն փախիլ կ'ուզեն. հեղ մը վար գային:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Հա՛, արագիւր որ վերերէն թռնի, անձրեւ չկայ ըսել է: Էս տպէս ձգել չի ըլլար. եկ երթանք Չէք քարին քով, գեղացիները հոն կ'ըլլան, խօսեցէ՛ք, համաձայնեցէ՛ք ու հսկումի ելէք քահանայով, խաչով, բուրվառով, ամբողջ գեղով, մեծ ու պզտիկ պէտք է հսկումի ելէք:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Երթանք Չէք քարին քով, էս տպէս չի ըլլար: (Ոտքի կ'ելլեն, խորքէն կը մտնէ Գանձակ Պարսամ):

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Օ՛հ, բարեւ, Պարսամ, եկ, նստէ՛: Հէյ, կնիկ, Պարսամն է, միմտըր շակէ՛:

**ՄԱԸՕ** – (Արագ դուրս կու գայ, քարէ նստարանին միմտըր մը կը ձգէ ու ներս կ'երթայ)

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – (Այդ գործողութեան հետ զուգընթաց) Կնիկ, տխի վրայ հաւկիթ կոտրէ՛, բախի մը բե՛ր, սալաթ մ'ալ շինես, գէշ չի ըլլար: (Մաթօ ներս գացած է արդէն: Պարսամ նստած է լուռ: Պարսամ կը նստի միւս ծայրը, Կարօ Թաթօ մէկ կողմ քիչ մը՝ քարի մը կամ կողմի մը վրայ կը նստի) Պարսամ, որ տամայի քարեր ունենայի, լաւ տամա մը կը խաղայինք. երկար ատեն է խաղացած չենք: (Լռութիւն: Պարսամ, աչքերը անորոշին, դէմքին՝ թթութիւն, պիտերուն հետ կը խաղայ) Ես ըլ դուրս Չէք քարը պիտի երթայի, ըսելու, որ հսկումի կայմինք: (Մաթօ օղիի շիշն ու քանի մը քրդոն պանիր մէջտեղ կը բերէ, ցածիկ սեղանիկի մը վրայ) Միմչեւ որ հսկումի չկայմինք, պաշխայ՝\* բան օգուտ չի ըներ. ցորեններուն կը մայիմ, լացս կու գայ: (Լռութիւն: Թորի կ'Ղուկաս անհանգիստ է. օղին առաջ կը հրէ, պանիրը առաջ կը քաշէ, Պարսամի երեսը կը մայի, երկինք կը մայի):

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – (Ծանր-ծանր, հանդիսատր, հանգիստ) Ղուկա՛ս, կովին երեսը որ մայիս, կրնաս ըսել, թէ էդ կովը կաթ կու տա՞յ, թէ՛ չէ: Հաւաները՝\* տպէս որ երթան՝ էս տարի կալ-կուտ չկայ: Մենք քեզ դրամ տուինք, վկաներով սենէդ գրեցինք: Տորենները վտանգի տակ են, աղէկ կ'ընես, եթէ հիմակուց դրամը վճարելու ճարը մայիս: Հա՛, տե՛ս, որպէս բարեկամի կը խօսիմ:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Պարսամ, ես ո՞ր տեղէն տամ էդ դրամը: Որ էս տարի ալ կուտ չվերցնենք, Աստուած հէլպէթ ուրիշ դուռ մը կը բանայ: Թորի կ'Ղուկասին հոգին որ ելէ, կի՛նէ պարտքին տէրն է:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ** – Թէ որ դրամը վճարելու ճարը չմայիս, վերջը մի ըսեր, որ Գանձակ Պարսամ գէշ մարդ էր: Գիր, սենէդ, վկայ, կատարութիւն կայ: Կալի սպասելը պարապ բան է: Հիմակուց սկսած են դեղնիլ ցորենները: Ինչ կալ, ինչ բան: Եզներդ ծախէ, Ղուկա՛ս, արօր, ման ծա-

խէ՛, Կարմուճին արտը քու անունովն է, արտդ ծախէ՛. ինչ կ'ընես, ըրէ, Գանձակ Պարսամին դրամը վճարէ: Հա՛, տե՛ս, որպէս բարեկամի կը խօսիմ: (Հանդարտ կ'ելլէ տեղէն, առանց օղիին ձեռք տալու, առանց մնաք բարովի կը մեկնի):

**ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ** – (Պարսամին անոր դուրս ելած ժամանակ, կոճակէն) Պարսամ, Պարսամ, տոմարը կ'ըսէ «Թագաւորաց հաշտութիւն, տեղայր անձրեւ»: Պարսամ, էսօր կամ վաղը, տոմարը կ'ըսէ, էսօր կամ վաղը անձրեւ պիտի գայ:

**ՄԱԶՕ** – (Դուրս կու գայ սեղանը տանելու):

**ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ** – (Մաքոյին) Այ՛ շունշանորդի, ես քեզի ըսի, որ հաւկիթ կտարէ, սալաթ շինէ:

**ՄԱԶՕ** – Որ հաւկիթ չկայ, ինչպէ՛ս հաւկիթ կտորեն իտի մէջ:

**ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ** – Թէ որ հաւկիթ չկար, սալաթ շինէիր, տխիւն ու մաղտանոսիւն վրայ քիչ մը քացախ կը լեցնէիր, կ'ըլլար սալաթ:

**ՄԱԶՕ** – Ես ինտո՞ր շինեմ. նէ՛ քացախ կայ, նէ՛ ըլ՛ մաղտանոս:

**ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ** – Չկայ, չկայ ըսելով՝ զիս ես վիճակին հասցուցիր, շան գաւակ, քառսուն անգամ ըսեր եմ՝ «Չկայ» մի ըսեր, տան խէր-պէրէ-քէրը կը փախի: Գանձակ Պարսամ մեր տունը ոտք դրած չուներ: Ես չեմ ուզեր, որ իմ բարեկամները ըսեն, թէ Թորիկ Ղուկաս անօթի է:

**ՄԱԶՕ** – Հողեմ գլուխը այդ տեսակ բարեկամին, որ եկեր, երկու ոտքդ մէկ մուճակի մէջ դրեր դրամ կ'ուզէ, եզներդ ու արտդ ծախու կը հանէ: (Մաքօ ներս կ'երթայ)

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – (Որ մինչ այդ լուռ ու անշարժ, կոճակը պատին տուած հետեւած է անցուղարձին) Ղուկաս, տոմարն ի՞նչ կ'ըսէ ըսիր:

**ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ** – «Թագաւորաց հաշտութիւն, տեղայր անձրեւ առատ». տիրացու Մակարին կարդալ տուի. ես ըլ չհատացի, նորէն ու նորէն կարդալ տուի. «Թագաւորաց հաշտութիւն, տեղայր անձրեւ առատ» ... (Երկուքը մէկ երկինք կը նային):

## ԱՐԱՐ Գ

Դարձեալ Ա արարի տեսարանն է Գանձակ Պարսամի խանութին առջեւ: Խանութի դրամ կանգնած է Պարսամ, կողքի խանութին մէջ կ'աշխատի կօշկակար Բարսեղ. հեռուի խանութին մէջ է դարձեալ ուստա Զաքար ու կ'աշխատի: Հրապարակին վրայ Ակոր աղբարն ու Կարօ Թաթօն են, կը դիտեն երկինքը:

**ԱԿՈՔ** – Է՛դ կողմ նայէ, է՛դ կողմ, Կարօ՛ Թաթօ, է՛դ Հողդարի վրայինը ա՛մպ է:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Է՛, իմ աչքերս ալ լաւ չեն տեսներ, կարծես թէ արագիլի մը շուքն է:

**ԱԿՈՔ** – Օղը ճնշիչ է էսօր: Օղը կարծես ծանր է, Կարօ՛ Թաթօ, ծանր կը ճնշէ, է՛դ ամպ ըլլալու է. ծերացած Տիքքոյի շուրջն ալ շատ մծեղներ չկային էսօր:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Ըսի քեզի, աչքերս լաւ չեն տեսներ. մեղուներն ո՞ւր են, հաւերն ի՞նչ կ'ընեն, է՛ն ըսէ:

**ԱԿՈՔ** – Մեղուներն ամպին հետ ի՞նչ գործ ունին, Կարօ՛ Թաթօ:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Պա՛, դուն չե՛ս լսեր, չե՛ս գիտեր ... Մեղուները որ դաշտ չերթան ու փեթակին շուրջ հաւաքուին, անձրեւի մշան է. հաւերն որ իրենց թեւերը թոյլ ձգեն, է՛դ էլ անձրեւի մշան է:

**ԱԿՈՔ** – Պարսամ, Պարսամ, մէկ մը խանութիդ ետինն գնա, փեթակներուդ նայէ, մեղուները դա՞շտն են, թէ՞ չէ, հաւերդ ինչպէ՛ս են:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – (Կ'անցնի խանութի ետինն):

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Հա՛, է՛դ կտոր մը մութ քանը Հողդարի արտին վրայ, կարծես թէ ամպ է, ամպ. քացուած աւետարանի կը նմանի:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – (Ետ գալով) Մեղուները փեթակին ծակերուն շուրջ հաւաքուած են. հաւերն ալ իրենց թեւերը թոյլ կախած են:

**ԱԿՈՔ** – Ղազար ապէր, Ղազար ապէր, հեղ մըլ դուն նայէ. է՛դ Հողդարի վրայի մութ գոյնի քանը ամպ է, չէ՞:

**ՂԱԶԱՐ** – (Մօտենալով իրենց՝ ձեռքերը աչքերուն դնելով ու վեր նայել ետք) Հա՛, Ակոր ամմու, ա՛մպ է, խոշո՛ր, մո՛րթ, սե՛ւ ամպ է:

**ԱԿՈՔ** – Պայծա՛ն ամպ է, պայծա՛ն. է՛դ ամպը օրհնութի՛ւն է, օրհնութի՛ւն:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Է՛ն կողմ նայէք, է՛ն կողմ, է՛դ ինչքան ամպ է, որ կու գայ. հա՛, հա՛, հա՛, էսօր խաթունիկ Պաճիի լաթերը պիտի թրջին, անձրեւ կայ, անձրեւ:

**ՂԱԶԱՐ** – Հա՛, հա՛, երկինքը մթնեց, երթամ տախտակներս ներս քաշեմ, չթրջին:

**ԿԱՐՕ ԹԱԹՕ** – Պարսամ, Պարսամ, կը լսե՛ս, անձրեւ պիտի գայ, անձրեւ (Կը մօտենայ Պարսամի խանութին: Հեռուէն կ'երեսայ Թորիկ Ղուկաս, արագ-արագ կու գայ Պարսամի խանութին մօտ, ուսին քահ մը, որ կ'առնէ ու ...):

**ԹՈՐԻԿ ՂՈՒԿԱՍ** – Պարսամ, Պարսամ, անձրեւ, այ երեք պուտ անձրեւ ինկաւ վրաս: (Մինչ այդ երկինքը մթնած է, լոյսը՝ նուազած) Տե՛ս, տե՛ս, երկու խոշոր պուտեր ձեռքիս վրայ: Որ կ'ըսէի, չէիր հաւատար.

տե՛ս, անձրեւը ձեռքիս վրայ: (Կը լսուի որոտում ամպերում՝ երկար, իրար յաջորդ) Այ եզներս չափտի ծախեմ: Անձրե՛ւ, անձրե՛ւ, Կարօ Թաքօ, ալ Կարմուճի արտս չափտի ծախեմ, չափտի ծախեմ, կը լսե՛ս: (Կարօ Թաքօ երջանիկ կը ժպտայ: Յանկարծ անձրեւը հոն է, կը տեղայ առատ: Պարսամի խանութի տառապայիճ պաշտպանութեան տակն են այդ բուպիճն Պարսամ, Թորիկ Դուկաս, Կարօ Թաքօ, Ակոբ ամմու, վազելով կու գայ ման Դազար աղբար: Բարսեղ կը դիտէ անձրեւն ու զիրենք քովի խանութն: Ժպիտ կայ բոլորի դէմքին, ման Գանձակ Պարսամի, որ կանգնած է Թորիկ Դուկասի կողքին՝ աջին, քիչ մը ետեւ):

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – Էս անձրեւին պուտը ոսկի՛ է, ոսկի՛:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – (Ետ կը մայի, կը տեսնէ իր հին բարեկամին դէմքը հին ժպիտով) Հելպէք ոսկի՛ է, ոսկի՛ ...

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – (Յաջորդ կարճ խօսակցութեան ընթացքին կը մտնէ իր խանութն մերս, դուրս կը բերէ փոքրիկ սեղանիկը, ցած աթոռակներ, տամայի տախտակը, կը շարէ տամայի քարերը):

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Մեռնիմ գորութեանը, էդպէս, իջի՛ր, իջի՛ր՝ երկար ու պարան-պարան. իջի՛ր արտերուն, տանիքներուն, մեր ծերացած Տիքբոյին վրայ. իջի՛ր առատ, իջի՛ր, օրհնութիւն:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – (Նստած տամայի սեղանին առջեւ) Դուկաս, եկ տամա մը խաղանք, շատոնց խաղցած չեմք ...

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – (Կու գայ, կը մտի: Կարօ Թաքօ կու գայ քովերին կը կանգնի, նոյնպէս Բարսեղ: Չաքար ու Ակոբ ամմու կը մնան քիչ մը ետեւօք՝ տառապայիճ վերի անկիւնին տակ, ու կը դիտեն անձրեւը: Թորիկ Դուկաս ու Պարսամ քանի մը արագ շարժումներով տամայի քարերը կը շարժեն, ապա)

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – Ա՛ռ էս քարը:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – (Կ'անձնէ) Առի:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – Մէկ, երկու ...

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Փախցո՛ւր էս քարը:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – Փախցուցի:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Հիմա ա՛ռ էս քարը:

**ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՍ** – Առի:

**ԹՈՐԻԿ ԴՈՒԿԱՍ** – Հիմա մէկ, երկու, երեք, էսի տամա...?

(Կը լսուի Կարօ Թաքոյի քրք-քրք խնդուքը: Ակոբ ամմու աջ ձեռքը կ'երկարէ անձրեւին. վարագոյրը կ'իջնէ դանդաղ):

## ԵՐԵՒԿ ԱՑՆ ՕՐԵՐՈՒՆ

ՏԻՊԱՐՆԵՐԸ՝ ԽՕՍՔԻ ԿԱՐԳՈՎ

**ՊԱՏՄՈՂ** – Տղամարդ կամ կին:  
**ՄԵՄԻ** – Վաթսունը անց գիւղացի տղամարդ:  
**ՄՆՈՒՇ** – Յիսունը անց գիւղացի կին:

**Ա ՏԵՍԱՐԱՆ** – Հայկական գիւղի մը տան տանիքը:  
**Բ ՏԵՍԱՐԱՆ** – Դաշտ մը:

**ԺԱՄԱՆԱԿ՝** 1912 – 1915 թուականները:

## ՏԵՍԱՐԱՆ Ա

Բեմը մութ է: Կը լսուի մեղմ երաժշտութիւն մը: Լոյսը տակաւ կը վառի Պաամողին վրայ, որ կեցած է բեմին յառաջամասի անկիւն մը, ապա՝ Մխսիին վրայ, որ չխալուխ մը կը վառէ:

**ՊԱՏՄՈՂ** – Մխսի ինքզինք միմակ զգաց, երբ իր կիները՝ Աննիկ, երեք օր պատկելէ յետոյ, մեռաւ շատ հանգիստ մահով մը: Մխսի որքան կը բաղձար, որ միասին մեռնէին, որովհետեւ միասին ապրած էին բարի ու չար օրեր:

Ամիս մը վերջ Մխսի մտցաւ իր կիներ, սակայն իր մեծակութիւնը չկրցաւ մոռնալ: Ան առանձին տանիք կ'ելլէր, աքլորները կը կռուեցներ, թռներուն հետ կը կատակէր, կալի աղմկոտ աշխատանքը կ'ունկնդրէր... Մակայն մեռակ:

**ՄՆՈՒՇ** – (Կը մտնէ):

**ՊԱՏՄՈՂ** – Մխսիի երկար տարիներու դրացին Մնուշն էր, որ վաղուց կորսնցուցած էր իր երկը. Մխսիենց պատկից, իր բրիշակը քաշուած, ապրելու համար ճախրակ կը մանէր, հաց կ'եփէր ու իրիկուն, առաւօտ եկեղեցի կ'երթար:

Մխսի օր մը տեսաւ, որ Մնուշ իր լաթերը փռելու համար կը դժուարանար երկաթէ թելն ու օղակը անցընել: Մօտեցաւ ու...

**ՄԵՄԻ** – Կեցի՛ր, Մնուշ, էդպէս չ'ըլլար: Թող ե՛ս անցընեմ: Ի՞նչ տեսակ դրացի եմ, որ թողնեմ կին մը երկաթէ օղակը անցընէ:

ՄԼՈՒԸ – Ընդհանրապես եմ: Իմ ուժս չի բարեք ես տեսակ գործեր ընել:  
ՄԽՄԻ – Ատիկա տղամարդու գործ է, Մնուշ: Երբ որ պետք ունենա, ինձի՛ կանչէ:

ՊԱՏՄՈՂ – Երեկոյին, երբ Մնուշ լաթերը վար կ'առնէր, Մխսի մտեցաւ, նորէ՛ն ուզեց օգնել:

Մնուշ զարմացաւ: Մխսին այսպիսի աշխատանք չէր ըրած կեանքին մէջ՝ ո՛չ դրացիներուն, ո՛չ իսկ իր հանգուցեալ կնոջ:

Ու այսպէս ամէն օր Մխսի, կոնակը պատին կոթնցուցած, կը սպասէր, որ Մնուշ տանիք ելլէ: Մխսին ինքն ալ չէր գիտեր, թէ ինչո՛ւ էր այդ սպասումը: Չէ՛ որ ծեր էին ինք եւ Մնուշ: Բայց... կը սպասէր...

Օր մըն ալ Մնուշ, թոնրատունէն հաց եփած տեղէն տանիք ելած, հաւերը կը կանչէր: Մխսիին համար Մնուշին ձայնը եկեղեցիին մէջ երգուած սաղմոսին չափ անուշ եկաւ: Մա՛նաւանդ որ, հացեփոխ շորերուն մէջ փաթթուած, անիլի գեր կ'երեսար: Իսկ երե՛սը... երեսը թոնրի քարկ կրակէն այնպէ՛ս մը կարմրած էր եւ ճակատին, երեսին վրայ քրտիները կը պաղէր):

ՄԼՈՒԸ – Ճու՛, ճու՛, վայ ձեր գլուխը թաղեմ: Ո՛րք են ձեր հակիթները, հը՛: Ե՛ս ձեզի կուտ տամ, որ երթաք ուրիշներու տունե՛րը ամէն: Չեք ոտքերը կտորի, տունէն չհեռանաք: Ինչպէ՛ս գաթա պիտի շինեմ, հա՛:

ՄԽՄԻ – Մնուշ, հաւերը կը փնտռես, հա՛:

ՄԼՈՒԸ – Էդ սետուիկը չկայ: Չեմ գիտեր՝ ո՛ր բակը կորաւ:

ՄԽՄԻ – Էդ մէկը փախաւ, գնաց է՛ն բակը մտաւ: Մի՛ մտահոգուիր, թոնրոս կ'ըսեմ կը բռնեն կը բերեն: (Դէպի դուրս, բարձրաձայն) Վարձ, Օվա՛ն, վազէ՛ք, գացէ՛ք Յակոյեան բակը, Մնուշի էդ չար սետուիկ հաւը փախաւ էնտեղ: Ըն՛տ վազէ՛ք, որ աղուտները չտանին... Ըն՛տ ըրէք, ասլա՛ն թոնրեր... (Դառնալով Մնուշին) Հաց ես եփեր, հա՛: Յոգնած կ'երեսիս, Մնուշ: Ե՛կ նստէ, քիչ մը հանգստացիր, հէ՛ր օրհնած, աշխարհը մեռնիլ կայ:

ՄԼՈՒԸ – Էհ, ի՞նչ ընենք, քանի ուժ կայ, ապրուստնիս ճարենք:

ՄԽՄԻ – Որ բանի պետք ունիս, ինձի՛ ըսէ, Մնուշ, ախր դրացիներ ենք: Էս տարի մեր կալը լաւ էր: Թէ որ ցորենի պետք ունիս, մի քանի պարկ ցորեն ձեր տունը կը ձգեմ: (Չեղքը կը տանի պիտերուն ու ցած ձայնով) Ամա տղաս՝ Արուքը, թող չգիտնայ...

ՄԼՈՒԸ – (Կասկածանքով կը նայի Մխսիին):

ՊԱՏՄՈՂ – Մնուշ կասկածեցաւ, բայց Մխսի չնկատեց անոր կասկածը: Մտածեց՝ հաւը կորած, գիւղի մարդիկ արտերուն մէջ՝ աշխատանքով

տարուած, իր թոնրերը է՛ն կողմերը... Տանիքին վրայ իրենցմէ գաւա մարդ չկար... Իր ուժերը հաւաքած ըսաւ:

ՄԽՄԻ – Փա՛ռք Աստուծոյ, ինձի պէս ուժ տեղն է: (Տատամսումով) Երեսդ ալ ըսես, Մնուշ, վառվռան վարդ է դարձեր:

ՊԱՏՄՈՂ – Մնուշի կասկածը ճիշդ էր: Թէս լաւ հայեոյող էր, բայց զայն իր զայրոյթը:

Մանդուխներէն հերստտ, արագ-արագ վար իջաւ, մտաւ թոնրատուն, ձեռքերը պարզեց դէպի երկիւնք ու խոնաւցած աչքերով ըսաւ:

ՄԼՈՒԸ – Աստուա՛ծ, ինչո՛ւ երկիւնքը չես փլել: Ինչո՛ւ արեւը չես խաւարեր:

ՊԱՏՄՈՂ – Մխսին յանցաւոր աշակերտի մը պէս պահ մը զղջացած, մնաց իր կանգնած տեղը: Ինքն ալ գիտէր, այդ կատակը ծերերու համար չէր:

Բայց ի՞նչ կ'ըլլար, դրացիներ էին, կրնային քով-քովի նստիլ, գրուցել... Ախր մեռնակութիւնը չէր քաշուեր...

Յաջորդ օրը Մխսի նորէն իր սովորական տեղն էր՝ արեւտա պատին ներքեւ:

Մնուշ, երդիքին փայտը շտկելու համար, ելաւ տանիք: Տեսաւ Մխսիի թոնրերը, որ իր տանիքին վրայ կը խաղային: Ջղային պոռաց:

ՄԼՈՒԸ – Մէ՛յ մըն ալ ձեզ այս տանիքին վրայ տեսնեմ, ձեր ծնկները կը կտորեմ: Ին՛ տանիքը կը քանդէք: Գացէ՛ք ձեր պապիկի տանիքը փորփորէք:

ՊԱՏՄՈՂ – Այս ըսաւ ու անոնց ետեւէն նետեց իր կօշիկը: Զի՛չ մնաց, որ Մխսիի գլխուն իյնար կօշիկը:

Մխսի գիտցաւ պատճառը: Պիտի պոռար... բայց ջղայնութիւնը զայն:

Ուրիշ օր մը Մխսիեան արաղաղը, Մնուշին կիսապատին վրայ թառած, թեւերը թափահարեց, վիզը երկարեց ու սկսաւ երգել: Հազիւ «կու» մը ըսաւ, Մնուշ վրայ հասաւ, ձեռքի անելով զարկաւ եւ պատէն վար քշեց արաղաղը:

Մխսին ա՛լ չդիմացաւ...

ՄԽՄԻ – Ա՛յ դաժան կնիկ, չթողիր, որ իմ խեղճ արաղաղը իր «կուկիկուն» վերջացնէ...

ՄԼՈՒԸ – Լա՛ւ ըրի: Ինչո՛ւ իմ պատին վրայ կը թառի:

ՄԽՄԻ – Պիտի թառի՛:

ՄԼՈՒԸ – Չպիտի՛ թառի: Որ թառի, գլուխը կը կտրեմ:

ՄԽՄԻ – Եթէ դուն արաղաղիս գլուխը կտրես, ես ալ քու ծնկները կը քարդեմ:

ՄԵՆԻՑ – Եթէ դուն իմ ծնկները ջարդես, ես քու տունը կրակի կռ  
տամ...

ՊԱՏՄՈՂ – Այս կոհիւր շատ պիտի քարդանար, եթէ չըլլար դրացիներ  
քու միջամտութիւնը, որոնք չէին գիտեր կոհիւր... բուն դրդապատճառը:

Միսին չմոռցաւ իր խեղճ արադադին ցաւը: Իր ոխը հանելու համար  
իր տանիքին վրայ փայտ մը տնկեց, որ ճիշդ Մնուշի բակին կը մայրէ:

Այս որ տեսաւ Մնուշ, զայրացած վեր վազեց եւ...

ՄԵՆԻՑ – Էս փայտը երկնցուցեր ես, որ անցած ատեն աչքս մխտի  
հա՞: Ես չպիտի մեռնիմ, Միսի՛, միմչեւ որ քեզի պէս քառսուն քաւթա  
չքաղեմ:

ՄԵՆԻՑ – Տէ՛ր Աստուած, Դուն սապո՞ւ ու լռանք տուր: Սատանան  
կ'ըսէ... Հէ՛յ, ճատո՛ւ, ճատո՛ւ, ալ հերիք եղաւ: Որ ելլեմ... Էդ ո՞ր օրուայ  
տղամարդն եմ, որ կնիկմարդէ վար պիտի մնամ: Էլ ի՞նչ բանի համար եմ  
ես պէխերը...

ՊԱՏՄՈՂ – Միսի յառաջացաւ դէպի Մնուշ... Մինչ Մնուշ իր կօշիկին  
թէքը քաշեց ու կազմ ու պատրաստ սպասեց պատերազմի: Նորէ՛ն դրա  
ցիներու միջամտութեամբ կոհիւր դադրեցաւ:

Միսիի ու Մնուշի ատելութիւնը հետզհետէ խորացաւ: Միսի նոյնիսկ  
չէր ուզեր, որ Մնուշի փռած լաթերուն շուրջ իրենց տանիքին վրայ իյնար:  
Վա՛յ այն օրուան, որ Մնուշի մէկ հաւը, ճո՛ւտը անգամ իրենց տանիքին  
կողմն անցնէր: Միսի իր ձեռնափայտով Մնուշի հատերուն կէսը հաշման  
դամ դարձուցած էր արդէն:

Գիշեր մը միայնորդ տարափ անձրեւ սկսաւ: Մնուշի կտուրը սկսաւ կա  
թիլ: Մնուշ ելաւ տանիք տեսնելու, թէ ինչո՞ւ իր կտուրը կը կաթէր: Տեսաւ  
որ... ճոթոնը խախտած էր տեղէն: Այն ճոթոնը, ուրկէ իր եւ Միսիի տա  
նիքներու ջուրը վար կը վազէր: Մնուշ քի՛չ մը շտկեց ճոթոնը եւ Միսիի  
տան կողմը տարաւ: Միսին ինչպէ՞ս լսեց Մնուշի ոտնաձայնը... Անմի  
ջապէս վեր վազեց տանիք...

ՄԵՆԻՑ – Էդ ճոթոնը չմտաւ:

ՄԵՆԻՑ – Է՛յ, անաստուած, դժոխքի՛ կրակ, անկողինս ջուրերու մէջ  
մնաց:

ՄԵՆԻՑ – Էս ճոթոնին տեղը էստե՛ղ է, էստե՛ղ, հասկցա՞ր:

ՄԵՆԻՑ – Երեսուն տարի է՛ ես առնեմ եմ, ես էս ճոթոնը հո՞ս եմ տեսեր:

ՄԵՆԻՑ – Դուն չգիտե՞ս, ճատո՛ւ, ես իմ պապիս օրով կը յիշեմ, որ էս  
ճոթոնը հոս դնելու իրաւունք չունիք: Թուրք կայ, կառավարութիւն կայ:  
Շատ խօսիս, կը բռնեմ քեզի տանիքէն վար կը նետեմ: Էս ճոթոնը հո՞ս  
պիտի ըլլայ:

ՄԵՆԻՑ – Հո՞ղ պիտի չ'ըլլայ:

ՄԵՆԻՑ – Հո՞ս պիտի ըլլայ:

ՊԱՏՄՈՂ – Անձրեւը ատելի սաստկացաւ: Հովը կը սուլէր, թիթեղի  
կտորներ տանիքներէն վար կը գլորէին... Այդ տարափին մէջ կը լսուէր  
Միսիի ու Մնուշի պոռչաւորը...

Յանկարծ, չգիտես ինչպէ՞ս, Միսիին ոտքը սահեցաւ, ու, թը՛փ, ցուի  
քէն վար ինկաւ: Տանիքը բարձր չէր, բայց Միսիի ոսկորները ծերացած  
էին: Ինչպէ՛ս դիմամային:

Միսի ամբողջ երես ամիս ինկաւ անկողին:

Միսիի ու Մնուշի թշնամութիւնը գիտին մէջ ամենօրեայ խօսակցու  
թիւն դարձաւ: Երբ գիտին քահանան այցելելու, որ հաշտեցնէ ծերերը,  
Միսին ըսաւ.

ՄԵՆԻՑ – Չե՛մ հաշտուիր, տէ՛ր պապ: Դու չես գիտեր եղ կնիկը: Ողոր  
մած հոգի երկը, եղ կնկա սեպեպո՛վ մեռաւ: Թե՛րս է, տէ՛ր պապ, թե՛րս:  
Ըստ՛ տեսնեմ: Ինք միմուճար կնիկ, ինչո՞ւ իր պոխերիկէն եղքան մուխ  
կ'ելլէ, հը՞: Թերութիւն է, տէ՛ր պապ, թերութիւն: Մէյ մը գնա մայէ, մեր  
տանիքը պիթիւն\* իր մուխով ու հատերուն ծրտով լեցուն է: Հա՛, հա՛ իր  
հատերն են: Մեր հատերը ատանկ բան չեն ըներ: Ան գիտէ, որ ես անկող  
նէն չեմ կրնար ելլել, վիրա-վիրա մեր տանիքին վրայէն այնպէ՛ս կ'անցնի,  
որ տանիքը վրաս փուլ պիտի գայ: Ի՛նքն է, ի՛նքն է, ուրիշ մարդ չէ: Է՛հ, որ  
ես անկողնէն ելլեմ, ես գիտեմ ընելիքս: Ես կը մեռնիմ, տէ՛ր պապ, եղ  
կնկան հետ չե՛մ հաշտուիր:

ՊԱՏՄՈՂ – Միսին չմտաւ: Նոր մորթուած այծի փոստի մէջ պլլուն  
ցաւ, մէջքը, կոճակը ճիպար ձգեց ու վերջապէս ելաւ անկողնէն... Վա՛յ  
Մնուշի գլխին...

Մնուշին Մնուշ եկեղեցի գացեր ու հաղորդութիւն առեր էր: Միսի ամ  
բողջ երկո՛ւ տարի ոտքը եկեղեցիէն ներս չդրաւ: Իսկ երբ Տէր հօր հանդի  
պեցաւ, կրակ կտրած ըսաւ.

ՄԵՆԻՑ – Սո՛ւտ է, տէ՛ր պապ, եղ քու եկեղեցիդ: Էղ քու սուրբերը սո՛ւտ  
են: Աստուած որ եկեղեցիին մէջ չպատժեց եղ կնիկը. եղ հաղորդութեան  
առած ատեն եղ քու ձեռքերդ որ չքաշեց, ալ ի՞նչ բանի հաւատամ: Եկե  
ղեցի չե՛մ գար: Էսպէս էլ կը մեռնիմ: Եթէ Աստուած ինձմէ հաշի հարցնէ,  
ես ըսելիքս գիտեմ...

(Կը սկսի մեղմ երաժշտութիւն մը):

**ՊԱՏՄՈՂ** – Անցաւ երեք տարի: Վրայ հասան տեղահանութեան օրերը: Կէս գիշերին դռները թակուեցան: Գիւղին մէջ ինկաւ շուարում մը: Սայլերը լծուեցան: Մէկն իր պղնձէ պատռը\* շալկած էր: Ուրիշ մը տանիքէն անկողինը վար կը ձգէր: Մայր մը հացի ծրարին հետ իր կոնակին կապած էր մատողաշ մանուկը: Ուրիշ մը մաղն ու տապակը բռնած էր:

Բոլորը մէկ հաւաքուեցան կալատեղին: Ո՞ր պիտի երթային՝ ո՛չ ոք գիտէր:

Մխսին ալ իր տան դռները իր ձեռքով գոցած եւ փայտեայ խոշոր բանալին իր գօտիին մէջ խրած, կեցած էր անկիւն մը ու հարսին կը հարցնէր, թէ տանիքին երդիքը ծածկե՞ր էր: Կը մտածէր, եթէ անձրեւ գայ, ամբողջ տունը ջուրով պիտի լեցուի, մանաւանդ որ ճոթոնին մայած չէր: Հապա եթէ Մնուշ ճոթոնի տեղը փոխա՞ծ էր...: Մխսի չէր հաւատար, որ իսկապէս կը բաժնուէր իր տունէն:

Հրամանի մը վրայ շարժուեցան՝ իրենց ետին ձգելով արտ ու այգի, տուն ու տաւար:

Ճամբու ընթացքին իրենց խառնուեցան կարաւաններ զանազան գիւղերէ: Յաջորդ գիշեր երիտասարդ տղամարդիկ զատուեցան, կիները յափշտակուեցան. մայրը՝ հարաւի, իսկ զաւակը հիւսիսի ճամբան բռնեց. Մխսի քշուեցաւ անծանօթներու հետ անծանօթ վայրեր: Ո՞ր մնացին զաւակը, հարսը, թոռները...

Այս բոլորը գէշ երագի մը պէս եկան: Մխսի ցնցուեցաւ, այլեւս հասկցած էր՝ որ բաժնուած էր իր տունէն ու սիրելիներէն:

Օրեր ետք, երբ Մխսիենց կարաւանը հանգիստ կ'առնէր, հեռուն՝ փոշոտ մառախուղին մէջէն, տեսնուեցաւ կարաւան մը: Ամէն անգամ, որ կարաւան մը տեսնէին, ամոր մօտենալուն կը սպասէին, իրենց սիրելիները կը փնտռէին, իրենց անեցիներուն մասին տեղեկութիւններ կը հարցնէին:

Մխսին, իր ձեռնափայտին վրայ ծռած, իրենց տան փայտեայ բանալին գօտիին մէջ, աչքերը յառած, սպասեց կարաւանին, որ կը մօտենար:

Երկու կարաւաններ իրար խառնուեցան. իրար կը հարցնուփորձէին. ոմանք կը գտնէին զիրար: Մխսին ալ փնտռեց իր սիրելիները, աչքերը պատացուց եւ ո՞վ տեսնէ...

**ՄԽՍԻ** – (Չեռնափայտը կը ձգէ, թեւերը լայն բացած կը մօտենայ Մնուշին) Մնուշ...

**ՄԼՈՒԸ** – Մխսի՛...

**ՄԽՍԻ** ու **ՄԼՈՒԸ** – (Իրար կը գրկեն ու կու լան: ՄԽՍԻ՝ կարմիր թաշկինակով, ՄԼՈՒԸ՝ ճերմակով աչքերնին կը սրբեն):

**ՄԽՍԻ** – (Լացակումած) Ախ, Մնուշ, երնէ՛կ այն օրերուն...

**ՄԼՈՒԸ** – (Նոյնքան յուզուած) Հա՛, Մխսի՛, երնէ՛կ այն օրերուն...

Լոյսերը դանդաղօրէն կը մարին, մինչ երաժշտութիւնը կը շարունակուի մութին մէջ:

ՎԵՐՁ

## ԱՅԾԵՏՈՍԱՐ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Խորքի պաստառը կը ներկայացնէ հայկական գիւղի մը մէկ մասը: Բլուրներ, հեռաւոր լեռներ, ցորենի արտեր, հիւղակներ: Բեմի խորքին վրայ՝ վարագոյրին առջեւ, կառուցուած են երեք-չորս հիւղակներ՝ հայկական ձեւի: Հիւղակներուն առջեւ՝ ջաղացքար մը, աղբիւրի քար մը, աղբիւր մը, մէկ կողմը սայլ մը, սայլին կռօնած առանձին անիւ մը: Մէկ կողմը ժամտուն մը, կէտը՝ վերան:

Վարագոյրը բացուելուն կիսամութ է. աղօտ կերպով կը նշմարուին գիւղը ու իր դաշտերը:

ՉԱՅՆԸ (Թաւ, խոր ու ապրումով՝ բեմին ետեւէն, քարձրախօսէն).  
Չոր գեղն ունէր  
կտուր կտրան  
քառասուն տուն,  
բազում գերան:

(Լոյսը կ'իյնայ ժամտունին վրայ, որուն առջեւ՝ քարի մը վրայ, նստած է Տէր Մարութն)

Ունէր տէրտէր,  
ունէր տարտէր,  
ունէր ժամկոչ,  
վանք ու խորան:  
Ժամտուն ըսես՝ կէտը վերան:

(Լոյսը կը սկսի պակսիլ ու հեռանալ քահանայէն, որ մութի մէջ ոտքի կ'ելլէ)

Հարսնիք ըլլար՝ զուռնի ձէն կար.  
մեռել ըլլար՝ լացի ձէն կար.  
աքլորի ձէն, հաւեր ածան,  
եզներ, ճժեր, շուներ խածան:

Կտուր կտրան  
քառասուն տուն,  
բազում գերան:

\*\*\*

Կար թէ չկար, եղ գեղին մէջ Մակարը կար:  
(Լոյսը Մակարի վրայ՝ բեմի աջին).  
Կար տէրտէրը՝ տէր Մարութն, աջին՝ միշտ խաչ :  
(Լոյսը քահանային վրայ՝ ձախին).

Կար հին ասպետ Թաթոսը քաջ:  
(Լոյսը Թաթոսի վրայ՝ կեդրոնը):  
(Լոյսը կ'ողողէ բեմի առաջամասը, ու մութին մէջէն կը քաշուին Թաթոսն ու քահանան, մինչ Մակարը կը նստի իր տան առջեւ ու Նարեկ կը կարդայ)

Մակար ծեր էր, ալ անցեր էր,  
որպէս ճամբորդ,  
կեանքի դժար, երկար ճամբէն  
էս խորտ ու բորտ:

(Լոյսը կ'իյնայ Մակարի վրայ)

Միշտ իր կողքին՝ տան սեւ կատուն,  
Ուստա Մակարը իմաստուն,  
ճրագին տակ, գլխին գդակ,  
համար, համար, միշտ կը կարդար Նարեկ, տոմար:

Ուստա Մակար ինչ ալ կարդար համար, համար,  
(Մակար վեր՝ երկնքին կը նայի)

ինքն իր գլխին հարցեր կու տար,  
թէ երկինքը առանց սիւնի է՞ր, փուլ չի գար,  
թէ լուսնկան ո՞նց կը վառի առանց ձէթի.  
ո՞նց գիշերը մթան խորէն, ցած ախոռէն  
աքլորն արեւ դուրս կը կանչէ:

Չոր գեղին մէջ ինչ ալ ըլլար,  
ըլլար յիմար բանի համար,  
երբ կռիւ կար, կար դատ արդար,  
մեր Մակարին առջեւ կ'երթար:

(Լոյսը կը սկսի պակսիլ, մինչև բոլորովին կը մթնէ: Մակար մութին մէջ ներս կը քաշուի իր հիւղակի դռնէն)



Մակար, դրած ձեռքը փոքրին՝  
(Բոլորովին մութ է)

թէ՛ քաւորին, թէ՛ բանւորին  
կու տար իր լուրջ խօսքը վերջին,  
թէ «Չարին մէջ միշտ կայ բարին»:

(Հետագայ տողերուն հետ լոյսը քիչ-քիչ կ'աւելնայ ու ամ-  
բողջովին կը լուսաւորէ բեմը)

## Ա

Ուրբաթ օր էր Մեծ պատերփին:

Վանքին ճամբան բանուոր, չոպան իրար դիպան:

Ո՞վ էր լսեր էդ տեսակ բան.

գեղի վանքի էծը անբան  
թողեր այգին, տնկեր ազին  
ժամէն շիտակ ներս է մտեր:

- Վա՛յ մեր գլխին, մեր Չոր գեղին,  
ես մեր էծը վանքի բակին  
ժամէն շիտակ ներս է մտեր  
ու գողցեր է խաչը անգին:

Հալուոր, քաւոր, ճահիլ բանուոր,  
գլուխնին կոր  
փոշի ձգած զնգան ձորին, սարի կողին,  
մտան գեղի ճամբաները գորշ ու դեղին:

(Կողքերէն՝ դաշտի կողմերէն գալով՝ գիւղացիք՝ 10-15 հո-  
գի, կը մտնեն բեմ եւ իրար հետ կը խօսակցին՝ յուզուած ժե-  
թեր ընելով)

Հալուոր, քաւոր, ճահիլ բանուոր  
հաւար տուին ճամբաներէն գորշ ու դեղին,  
որ շուտ բռնեն էծը վանքին,  
որ գողցեր է խաչը անգին:

ԺՈՂՈՎՈՒՐԴԷՆ ԵՐԿՈՒ-ԵՐԵՔ ՀՈԳԻ ՄԻԱՏԵՂ Կ'ԱՐՏԱՍԱՆԵՆ  
ԲԵՄԷՆ.

- Բռնենք էծը, էծը վանքին,  
բռնենք էծը, քերթենք ազին,  
միսը մաս-մաս տանք ամէնքին:

ՄԵԿԸ.

- Կաշին հանենք, տանք Մակարին:

ՄԻԻՍԸ.

- Խաչն ալ բաժին տեր Մարութին:

ՉԱՅՆԸ ԴՈՒՐՄԷՆ.

-Ուրբաթ օրն էր Մեծ պատերփին:  
Հեղ մ'ալ տեսան փոշին ճամբան.  
ստուեր մը՝ մութ խենթ ու խելառ,  
ուտքը թոփալ, ափալ-թափալ  
կը մօտենար լեղապատառ՝  
եսու ձգած փիղ ու անտառ:

(Գիւղացիները մէկուն ցուցմունքին վրայ կը դառնան դէ-  
պի բեմին ձախ կողմը, ուրկէ մէկու մը վագրին կը հետեւին  
կարծես նայուածքով)

Բոլորը մէկ կեցան յանկարծ,  
կեցան յանկարծ՝ քարեր կտրած բոլորը մէկ,  
երբ ժամկոչն հէք գետին ինկալ  
կրկին անգամ՝ լեզուն կարկամ ու յոգնաբեկ:  
(Ժամկոչը վազելով կու գայ կաղն ի կաղ ու կ'իյնայ քարի  
մը վրայ. հեւասպառ է)

ԳԻՒԱՏԻՆԵՐԸ.

- Ըսէ՛, ըսէ՛, ա՛յ հէր օրհնած,  
է՞ր\* շուարար էսպէս յանկարծ:  
Մենք կը բռնենք էծը վանքին,  
մենք կը քերթենք էնոր ազին,  
մենք կը փրկենք խաչը անգին:

**ԺԱՄԿՈՉԸ.**

- Ա՛յ աղբրտիք, մտիկ ըրէք:  
Երբ որ էձը մտաւ ժամտուն,  
որ գողանայ խաչը անգին,  
մեր տէրտէրը, մեռնիմ կարգին,  
շուրջառն հագին՝  
վրայ հասաւ ու ժիր բռնեց էձի ազին:  
(Չեռքի շարժում՝ պոչը բռնելու)

Պոռաց էձը, պոռաց ուժգին:  
Տէրտէրը մեր՝ իրեն կարգին:  
Տէրտէրն աշեց,  
ազին քաշեց.  
(Քաշելու շարժումը)

Էձը ազին իրեն քաշեց:

Էն անիրաւ էձը իրաւ  
ոնց որ վիշապ կռիւ տարաւ.  
Էդ կռուի մէջ տէր Մարութն,  
հեռու կարգէն,  
քաց չձգեց ազին ձեռքէն:

Պոռաց էձը, պոռաց ուժգին.  
Տէր Մարութն՝ իրեն կարգին:  
Տէրտէրն աշեց,  
ազին քաշեց.  
էձը ազին իրեն քաշեց:

Հեղ մ'ալ տեսանք, էհ, ի՛նչ մեծ ցաւ,  
սուզը մեծցաւ, գեղի գլխին շիւան կեցաւ.  
Էս գող էձի կարն ազին թաւ,  
յանկարծ փրթաւ:

**ՄԷԿԸ.**

- Ո՞նց թէ փրթաւ:

**ԺԱՄԿՈՉԸ.**

- Փրթաւ, փրթաւ կարն ազին թաւ,

տէր Մարութն քափով մ'ուժգին  
ինկաւ գետին՝ ազին ձեռքին:

**ՉԱՅՆԸ.**

-Երբ խեցին՝ մնացեր է ազին ձեռքին տէր Մարութին,  
Թէ՛ այր, թէ՛ կին  
արշաւ տուին, հաւար կրկին  
(Գիւղացիները կը շարժին դէպի քեմի աջը)  
Էս գող էձի ժիր կրունկին:

Էձը փախաւ, փախաւ մտաւ քակը վանքին:  
Էնպէս ֆշշաց, էնպէս ոռնաց,  
կ'ըսես գեղի գլխին մտած  
վիշապն ըլլար պղնձաւոր հին քաղաքին:

**ՏԷՐ ՍԱՐՈՒԹԷՆ (Կը մտնէ ձախէն ու խօսքը կ'ուղղէ գիւղացիներուն).**

- Է՞ր կը վազէք, խելքի՛ եկէք:  
Ա՛յ օրհնածներ, խելքի՛ եկէք,  
դուք ո՞ր տեղէն պիտի բռնէք.  
Ելքի քան չէ եւ ոչ խելքի  
բռնել էձը, երբ որ ետին չունի ազի:

**ՉԱՅՆԸ.**

- Տէր Մարութն, մեռնիմ խելքին,  
պոռաց ուժգին՝ ազին ձեռքին:  
Էհ, ի՞նչ ըսել խելօք խօսքին.  
թէ՛ այր, թէ՛ կին,  
(Գիւղացիք, որ կանգ առած են, կը  
հաւարուին տէր Մարութի շուրջ)

բոլորը մէկ կեցան յանկարծ  
ու յուսահատ ու ցիրուցան՝  
տէրտէրի շուրջ հաւարուեցան:

Էհ, գիտէք ալ, տէրտէրը մեր  
Մակարի մօտ եօթը տարի ծունկ է չոքեր,  
քերնէ քերան, երեք քերան  
կարդացեր է թէ՛ Հին, թէ՛ Նոր կտակարան:

Տերտերն ելալ քարին վրայ,  
(Քահանան կ'ելլէ ջաղացքարին)

ոնց որ արլոր՝ քառին վրայ,  
քարին վրէն, քառին վրէն  
սա շատ իրաւ խօսքերն ըսաւ .

#### ՏԷՐ ՄԱՐՈՒՔԷՆ.

- Փոթորիկին պարան նետել չի ըլլար,  
վարար ծովուն մտրակ զարնել չի ըլլար.  
հեղեղին դէմ դուռ ու կոպանք չի ըլլար.  
ագին փոթած է՞ծը բռնել չի ըլլար:

#### ԳԻՒՂԱՑԻՆԵՐԷՆ ՉԱՅՆԵՐ.

- Հապա խա՞չը:
- Հապա խա՞չը:
- Մեր սուրբ խա՞չը ...

#### ՏԷՐ ՄԱՐՈՒՔԷՆ.

- Չար փուշի պէս վառուի լեզու չար կրակին,  
այ՛ աղբրտիք, ինչպէ՛ս պատմեմ, թէ չար է՞ծը,  
ճարը կտրած, կլլեց ոսկի խաչը անգին:  
(Գիւղացիներուն մէջ իրարանցում)

#### ԳԻՒՂԱՑԻ ՄԸ.

- Օգնէ՛ մեզ, Տէ՛ր, եղանք անտէր,  
քարուն-քարուն խաչը է՞ծուն  
զնտան փորին մէջ են բանտեր:

#### ՈՒՐԻՇ ՄԸ.

- Ազատէ՛, Տէ՛ր, էս ման անտէր,  
հազար-հազար վիշապ դեւեր ծովն են մտեր:  
Էսքան տարի ու էսքան դար  
մեր խաչն արդար դատեր կու տար:

#### ԵՐՐՈՐԴ ՄԸ.

- Տէ՛ր հրեղէն, ալ ո՞րտեղէն հարսնիք, մարտ,  
բաց դաշտերուն կանաչ արտ:

Ալ ո՞րտեղէն գեղն արեւտ,  
գունի ձէնը խորտա-մորտ:

#### ՉՈՐՐՈՐԴ ՄԸ.

- Քանի վանքին լոյս խաչը կար,  
ամբարներուն լիք ցորեն կար.  
ճահիլ կնկայ ու աղջկայ լոյս երեսին միշտ ժպիտ կար,  
քանի վանքին լոյս խաչը կար:  
Կար գոհ դէմքը ակռան թափած ծեր մամիկին,  
իսկ եզներու յարդն ու մարգին՝ իրեն կարգին,  
երբ կար անգին խաչը վանքին:

#### ՄԱՐԿՈՍ.

- Ա՛յ աղբրտիք, լաց ու կական թողէ՛ք կնկան,  
թողէ՛ք իյնամ ճամբաները քարվաններուն զիլ ու զնգան:  
Ինձ թուղթ տուէք, երկու տող գիր,  
վագեմ հասնիմ Տիարպէքիր.  
երթամ զանեմ մեր Թաթոսը, մեր ջորեպան Թաթոսը քաջ,  
որ գայ փրկէ աշխարհ ու խաչ:  
Ա՛յ աղբրտիք, թէ վիշապ է է՞ծն էն վանքին,  
Թաթոսն է պէտք՝ մեր ասպետը՝ սուրը ձեռքին:

#### ՄԵՍԻ.

- Մարկո՛ս, Մարկո՛ս, զուր պիտ դիմես քարվան անցնող ճամբաներուն.  
զուր պիտ փնտռես ճամբաներուն մէջ մօտ, հեռուն  
հետքն ու զի՞ծը մեր Թաթոսի ջորիներուն:  
Չուր է զարնել մեր զլոյսը քարին, սարին,  
տէրտէրն առնենք, թափոր բռնենք,  
եկենք երթանք մեր Մակարին  
ու հասկնանք էս աղետին չարն ու քարին:  
Հասկնանք, թէ մեր չոր գլխին ի՞նչ պիտ քերէ էս չոր տարին:

#### ԵՐԿՐՈՐԴ ԳԻՒՂԱՑԻ.

- Մակարն եկաւ, ինքը եկաւ:  
(Աջէն կու գայ Մակար)

**ՄԱԿԱՐ.**

- Այ օրհնածներ, ըստք, ի՞նչ կայ:  
Թե տարտը կայ, դարման ալ կայ:  
Այ օրհնածներ, ըստք, ի՞նչ կայ,  
չըլլայ տափի նոր կոնի կայ:

**ՏԷՐ ՄԱՐՈՒՔԷ (Այծի պոչը ձեռքին).**

- Երնեկ տափի կոնի ըլլար, Ոստա՛ Մակար,  
մեր դատն արդար, խաչը մեզի թեւեր կու տար:  
Թե աւարի համար գային քուրդ ու թաթար,  
մեր դատն արդար, խաչը մեզի օգնել կու գար:

**ԳԻՒՂԱՅԻՔ.**

- Ոստա՛ Մակար, Ոստա՛ Մակար,  
էքան տարի ու էքան դար ...  
սուրբ խաչը կար:

**ԵՐՐՈՐԴ ԳԻՒՂԱՅԻ.**

- Հիմա նայէ, տէր Մարութի օրհնեալ ձեռքին՝  
սուրբ խաչի տեղ այծի էզին:

**ՄԱԿԱՐ.**

- Այ օրհնածներ,  
մարդը բանգէտ էսպէս անցաւ ու շիմացաւ  
խորհուրդը մեծ սարդի, մարդի ու թռչունի:  
Թե երկինքը ո՞նց կը կենայ առանց սիւնի,  
թէ լուսնկան ո՞նց կախուած է, եթէ ոսկի շրթայ չունի,  
ի՞նչպէ՛ս կ'ըլլայ՝ խոշոր ուղտը էղբան փոքր ականջ ունի.  
ուրկէ՞ կ'ելլեն մեռելները, եթէ երկինք սանդուխ չունի:

Այ օրհնածներ, ո՞նց իմանաս տաշխարհին  
կաւ խորհուրդն հին հրաշքին:  
Ո՞նց իմանամ, թէ ո՞վ դրաւ մեր տէրտէրին օրհնեալ ձեռքին  
էծին փրթած մագոս ազին:

**ՏԷՐ ՄԱՐՈՒՔԷ.**

- Ոստա՛ Մակար, վայն է եկեր տաշխարհին,

ես մեր էձը վանքի բակին,  
թողեր այգին, տնկեր ազին ...  
Ի՞նչպէ՛ս ըսեն, Ոստա՛ Մակար,  
հոգիս անկար, ձէնս տկար ...

**ՄԷԿԸ ՆԵՐԿԱՆԵՐԷՆ.**

- Վանքին էձը կուլ տուեր է խաչը անգին ...  
(Մակար կը ցնցուի, պահ մը կը մտածէ. ժողովուրդը կը սպասէ)

**ՄԱԿԱՐ.**

- Այ օրհնածներ, ամեն չարի մէջ կայ բարին.  
փառք տանք Տիրոջ, էծն է կըլլեր խաչը վանքին:  
Թէ էդ չըլլար, Տէրն արարիչ  
պէրքի թափէր օձ ու կարիճ:

Ի՞նձ կը թուի, թէ մեր գլխին պիտ պատահէր ահաւորը,  
ես մեր խելառ գլխին պիտ գար աղէտներու հինն ու նորը,  
պիտ լսէինք դատաստանի ժիր շէփորը,  
պիտ տեսնէինք ոսկոր ու զանկ մեռելներու մունջ թափորը,  
երբ որ խաչը ելլէր, մտներ էծուն փորը:

Այ աղբրտիք,  
գեղի գլխին դեռ կայ արեւ,  
դեռ կայ արեւ թէ՛ տերեւին եւ թէ՛ բոյսին:

Որ անիրաւ էձը իրաւ կուլ է տուեր խաչն ի փորին,  
պիտի կապուինք հին տոմարին,  
ի՞նչպէս եզը՝ իր մսուրին:

Այ աղբրտիք, հրաշքն հոն է, մեծ հրաշքը անգին խաչին,  
որ տէրտէրի ձեռքին փրթաւ կարճ ազին թաւ:

**ՄԷԿԸ.**

- Ո՞նց թէ հրաշք, Ոստա՛ Մակար:

**ՈՒՐԻՇ ՄԸ.**

- Տէր Մարութի օրհնեալ ձեռքին

մէջն եր անգին խաչը վանքին:  
Է՛ն եր, է՛ն եր, որ կը բռնէր մարդերէն վեր,  
աշխարհ ու գիւղ էնով կ՛օրհնէր:

#### ԵՐՐՈՐԳ ՄԸ.

- Հիմա էժը մեր վանքի տան ելեր մէյտան,  
գեղի գլխին, թէ աշխարհքին խաղցեր համաք մը անախտան:

#### ՉՈՐՐՈՐԳ ՄԸ.

- Ագին ձգեր մեր տէրտէրի օրհնեալ ձեռքին,  
կողմն է անցեր Մոլլա գեղին:

#### ՈՒՐԻՇ ՄԸ.

- Ուտա՛ Մակար, Ուտա՛ Մակար,  
տահա երէկ լոյս խաչը կար  
Տէր Մարութի օրհնեալ ձեռքին:  
Էսօր՝ էծու քոստ ագին:

#### ՄԷԿԸ.

- Ուտա՛, հրաշքն ո՞ր կը մնայ,  
Երբ խաչի տեղ  
կարն ագի մը Տէր Մարութի ձեռքն է ահա:

#### ՄԱԿԱՐ.

- Ա՛յ աղբրտիք, մտիկ ըրէք,  
աղմուկ ընել արդէն զուր է:  
Հիմա ըսեմ՝ հրաշքն ուր է:

Որ երկինք կայ, արեւը կայ,  
որ խաչը կայ, հրաշքը կայ,  
աղմկելու էստեղ ի՞նչ կայ:

Էն Ադամէն մինչեւ հիմա  
ո՛չ ծնած է, ո՛չ պիտ ծնի սեւ էժ մը, որ պոչ չունենայ:  
Ա՛յ աղբրտիք, խաչն իր հրաշք ցոյց է տուեր,  
է՛ր խախտեր էք հաւատքը ձեր:

Շահն իսկ յանկարծ հրաման տայ թախտի վրէճ՝  
պիտ չկրնայ գտնել նորէն քոստս էժը եղ անօրէն:  
Եթէ մորթեն, քերթեն հազար, հանեն պազար էժեր հազար,  
նորէն անոնք պիտ չգտնեն լոյս խաչը մեր:

Շահն իր գորքով է՛ր պիտ գտնէ էժը վանքին,  
երբ չփրթէր մեր տէրտէրի օրհնեալ ձեռքին՝ մազոտ ագին:

Էս աշխարհին երեսը կայ հիմա մէ՛կ էժ,  
որ իր նսեւ չունի ագի:  
Ա՛յ, է՛ն էժն է, է՛ն էժն է սեւ,  
որ մտեր է քակը վանքին  
ու կու տուեր խաչը անգին:

#### ՏԷՐ ՄԱՐՈՒՔԷ.

- Ուտան ճիշդ է, մեռնիմ խելքին:

#### ՄԷԿԸ.

- Մակար ճիշդ է :

#### ՈՒՐԻՇ ՄԸ.

- Ճիշդ ես, Մակա՛ր:  
(Լոյսը կը պակսի հետզհետէ: Կիսամութ)

#### ՉԱՅՆԸ.

- Ուշ գիշեր էր:  
Ուտա Մակար դեռ կը խօսէր.  
Հին տոմարէն կարդաց մասեր, տուաւ յոյսեր:  
Մակայն քանի խաչը քոստս էծու փորն էր, վատ նշան էր:  
(Մակար խօսելու, ապա տոմարէն կարդալու ձեւեր կ՛ընէ)  
Հին տոմարը կը ցուցանէր պատերազմ, մահ,  
աւազակաց՝ ոսկիէ գահ, վատ ապագայ:  
Արեւելեան կողմն աշխարհի մարդագէլ մը դուրս պիտի գայ:  
Արեւմտեան կողմին վրայ պիտ երեւնայ զրահապատ հրէշ մը հսկայ:  
Թէ՛ հիւսիսէն, թէ՛ հարաւէն թուխ հեռակայ,  
քաթառի պէս մարդոց վրայ տենդ պիտի գայ:

Երկրի վրայ ոչ մէկ արքայ պիտ չմնայ,  
էդ հինին տեղ նորը պիտ գայ:  
Հեռու, հեռու Հնդստանէն,  
խունկ ու հալուէ պիտի տանեն  
ամբոխները մերկ ու տկլոր մարդու մը նոր,  
որ հսկայի աչքերուն մէջ պիտի մայի  
առանց ահի, նոյն իսկ առանց ոսկէ գահի:

Օ՛հ, պատերազմ, մահ տարածամ:  
Ամէն վայրկեան ու ամէն ժամ  
էս աշխարհի ձեւն ու կեանքը պիտի փոխուի,  
իսկ լուսնկան, խեցնդի մը պէս, երկինքէն վար պիտի կախուի:

Արձրեւն առատ, սով պիտ ըլլայ.  
տարտն ու վիշտը ծով պիտ ըլլայ.  
մարդը մարդուն՝ գէլ ու գազան.  
դատն արիւնով պիտի ըլլայ:

.....  
Հալուոր, քաւոր, ճահիլ բանուոր,  
ուսերնին կոր, յոյսերով նոր,  
կորսուեցան խորը մթան.  
կորսուեցան ու քուն մտան,  
որ միասին հաւախօսին ելլեն մէյտան,  
ելլեն մէյտան, լաւ դաս մը տան  
էն անպիտան ու դեւ էծին,  
որ թողեր է վանքի այգին,  
որ տնկեր է իր կարճ ագին,  
որ մտեր է բակը վանքին  
ու գողացեր խաչը անգին:

(Վերջին տասը տողերուն հետ զիւղացիք կը  
մեկնին քիչ-քիչ, ու կը մթնէ քիչ-քիչ ու ապա՝ բոլորովին)  
Ուրբաթ օրն էր Մեծ պատերին:

Կարճ դադարէ մը ետք լոյսը հետզհետէ կ'աւելնայ, սակայն ոչ լուսաւոր  
ցերեկի չափ: Գիշերային տպաւորութիւնը պէտք է ըլլայ սկզբնաւորութեան:

ՉԱՅՆԸ.

- Ուշ գիշեր էր:  
Գեղն անհանգիստ քուն կը քաշէր,  
երբ որ գեղի կատուները՝ սեւ ու դեղին,  
հոտուղտացին իրենց ուղին՝  
քիթ ու պեխեր բռնած հովին:

«Մռա՛ւ, մռա՛ւ»,-

կատուներու ձայներն, իրաւ, չորս կողմն առան:  
- Մսի հոտ կայ, մսի հոտ կայ:  
- Մսի հոտը Տէր Մարութի տունէն կու գայ:  
- Էն անօրէն հովը նորէն մսի հոտը քերաւ վարէն:

Ու դէս ու դէն, ժիր ու անտես նետերու պէս  
կատուները՝ շունչերնին կէս,  
արշաւ տուին մեր Չոր գեղին,  
յարձակեցան վրան կատուին՝ սեւ ու դեղին,  
որ ճանկ տուեր, ագին առեր,  
ցաւքեր էր վեր՝ Տէր Մարութի բակէն աւեր:

Կարծես վերէն,  
խուլ աղմուկով,  
նոր աշխարհ մը փրթաւ մէկէն:  
Դեւ մը հրեղէն իր թելը բացաւ,  
կարծես վանքին վրէն անցաւ:  
Գիշերին չափ մութ ու անչափ՝  
կարծես դեղ իր թելերով  
տէր Մարութի տան կատուին զարնուեցաւ:

«Մռա՛ւ, մռա՛ւ»...

Գեղն արթնցաւ

Ու լսուեցաւ Տէր Մարութի ձեռնը հսկայ գանկի,  
գանկի, փութի, արձագանգի:

(Տուններէն, կողքերէն, գիւղացիներու հարցական ու շուրթած դէմքեր կ'երեսան: Լոյսը կ'աւելնայ հետզհետ)

**ՏԵՐ ՄԱՐՈՒՔԷ** (Տէր Մարութէն կ'երեսայ իր դրան առջեւ).

- Արթնցէ՛ք, հէ՛յ, ոտքի՛ կեցէք.

ով ոտքի էք, դուրս թափուեցէք.

(Քանի մը հոգի եւս բեմ կու գան,  
գտնուողները առաջ կու գան:  
Լոյսը աւելի եւս կ'աւելնայ)

Էծը մութին եկեր թինթին\*:

եկեր գողցեր իր կարճ ազին.

էն կարճ ազին, էծը վանքին,

վանքը խաչին,

խաչն ամէնքին,

վա՛յ մեր մեղքին, վա՛յ աշխարհքին:

Հասէ՛ք շուտով ձիով, ոտով.

ինձ կը թուայ՝ էծը անցաւ սարի մօտով:

Երբ արթնցայ, տանիքէն ցած

դեռ կը հաջէր մեր շունը քած՝

քիթը սարի կողմը բռնած:

**ՄԵԿԸ.**

- Մեռնիմ կարգին Տէր Մարութին,

Էնոր խելքը թեման կալ է.

բայց սխալը, կ'ըսեն, արագ,

իսկ շիտակը՝ հարսէն բարակ միշտ կը քալէ:

**ՄՐԱՊ ԷՄՄԻ.**

- Ինձ լսեցէ՛ք եւ անգամին,

թէ չէք ուզեր դուր հալածել պարաս պամին:

Տէր Մարութի շունն ի՞նչ շուն է.

շուն որ ըսես, մեր տան շունն է,  
մեր շունն արթուն՝ պոչն երկու գոյն:

Անցեալ տարի մութ ու մշուշ աշուն էր ուշ,  
երբ գայլերը թողին լեռը ու թափուեցան մեր կալերը:  
Երբոր գեղը հասաւ լուրը, թէ գայլերը  
թողեր լեռը ու թափուեր են մեր կալերը,  
մեր շունն արթուն՝ պոչն երկու գոյն,  
ցատկեց իսկոյն.

հա՛ւ, հա՛ւ, հա՛ւ, հա՛ւ՝ հաւար տուաւ դէպ կալերը՝  
ու գայլերը քշեց տարաւ մինչեւ լեռը:

**ՄԵԿԸ.**

- Սրա՛յ էմմի, գիտեմք՝ շունդ լաւ կը հաջէ,  
բայց գովելու ժամանակ չէ:

**ՄԻՒՍԸ.**

- Սրա՛յ էմմի, շուտ կը քուսնի, եթէ ելլես ցորեն ցանես,  
քան թէ խօսք մը թամամցնես:

**ՈՒՐԻՇ ՄԸ.**

- Էծը գուցէ երթած ճամբան ելլէ գոցէ ...

**ՄՐԱՊ ԷՄՄԻ.**

- Ա՛յ աղբրտիք, իմ խօսքերուս շատը հատաւ,  
թէ համբերէք, բամպակն օր մը կ'ըլլայ կտաւ:

Հա՛, էն գիշերը, երբ գայլերը թողին լեռը

(Գիւղացիներուն մէջ յուսահատ ուսի ցնցումներ,  
գուլս շարժելներ)

ու թափուեցան մեր կալերը,

էդ գիշերն իսկ պիտ փճանար գեղ ու տաւար,

թէ մեր շունը չցատկէր վար, չտար հաւարը.

մեր շունն արթուն՝ պոչն երկու գոյն:

**ՈՒՐԻՇ ՄԸ.**

- Սրա՛յ էմմի, պապուդ հոգուն,

ըսէ՛, ըսէ՛, թէ որ գիտես ճամբան էծուն:

**ՄՐԱՊ ԷՍՄԻ.**

- Հա՛, էս գիշեր կինս կ'ըսեր,  
որ մեր շունը նորէն գայլեր կը հալածէր,  
էն գայլերը, որ գիշեր մը թողին լեռը,  
քափուեցան մեր կալերը:

- Կնիկ,- ըսի,- գէլի բան չէ.  
տեսնեմ՝ շունը ո՞ր կը հաջէ:  
Մտքով ըսի՛ էն էծն է դիւ,  
որ եկեր է ագուն հտել:  
Ելայ տեսայ՝ գէլի բան չէ,  
դեռ կէս գիշեր՝ շատ կը հաջէր  
մեր շունն արթուն՝ պոչն երկու գոյն,  
դունչը բռնած կողմը այգուն:

**ՉԱՅՆԸ.**

- Սրապի էս խօսքերէն վերջ  
վէճ մը փրթաւ գեղացոց մէջ:  
Ձուր տեղը չէր,

(Ժողովուրդին մէջ, որ քահանան ու Սրապը շրջապատած  
են, վէճի ու հակառակ ուղղութեամբ երթալու շարժումներ)

վէճը երկու շունի մէջ էր եւ շատ լուրջ էր:  
Թէ շուններուն ո՞րուն հաւտան,  
թէ ո՞ր ճամբով պիտի երթան:  
Ոմանք՝ ձիով, ոմանք՝ ոտով,  
ոմանք՝ ժանգոտ զէնք երկաթով,  
հոն բոլորն ալ հին նկարի մաշած գոյնով,  
ելան մտան վէճի մէջտան:

Տի՛ն-տա՛ն, աի՛ն-տա՛ն,- լեզուները էնքան ուժեղ վէճի մտան,  
որ չիմացան ո՞նց Թաթնուր ջորիներով զանգ ու զնգան  
մօտեցած էր ջրադացտան:

(Հետզհետէ կը մթնէ)

Վէճը լուրջ էր եւ ի գուր չէր.

(Բոլորովին մութ է)

էն շունն արթուն՝ պոչն երկու գոյն,  
արեւելեան կողմն էր հաջեր ճիշդ էդ գիշեր:  
(Մութին մէջ ամենքը դուրս կ'ելլեն բնմէն)

ճիշդ էդ գիշեր քիչ չէր հաջեր  
կողմն աշխարհի արեւմտեան քոստա շունը տերտերի տան:

Մութին մէջ բեմ կու գայ Թամար ու անակներէն մէկուն առջեւ կանգ  
առած՝ հետուն կը նայի, մինչ ձայնը կը խօսի, ու լոյսը հետզհետէ կ'առելնայ:

**ՉԱՅՆԸ.**

- Հօ՛, հօ՛, վերէն, վեր հովերէն,  
ո՞վ է կու գայ՝ առած թւեր չորս հովերէն.  
Իր ձին տակը ո՞վ կը հանէ էդպէս պէծեր սալ քարերէն:

Վեր հովերէն, մեր Թաթնուրն է կու գայ վերէն՝  
առած թւեր չորս հովերէն:  
Իր ձին հեծեր՝ սալ քարերէն էնպէս բուռ-բուռ կու տար պէծեր,  
կ'ըսես խոշոր թուր մ'է խածեր Թաթնուր ծեր:

Եօթը տարի տափի կռուի մէջ եղած էր մեր Թաթնուր.  
աշուղներուն նոր երգերուն, հին վերքերուն մէջ եղած էր մեր Թաթնուր.  
քարտանգներու զանգ ու զնգան ճամբաներուն մէջ եղած էր մեր Թաթնուր.  
զլուխն ամբողջ լեցուն հեքեաք՝ հեքեաքներու տէր եղած էր մեր Թաթնուր:

Մեր Թաթնուր տարտը մեծցաւ, երբ իմացաւ,  
թէ ո՞նց էժը թողեր այգին,  
տնկեր ագին,  
ժամէն շիտակ ներս է մտեր  
ու գողեր է խաչը անգին:

Մեր Թաթնուր տարտը սար էր, մեծ լեռ դարձաւ,  
թէ էդ էժը ինչպէ՞ս թինթին գիշեր մութին  
եկեր տարեր իր կարճ ագին:  
Մեր Թաթնուր շուտ հասկցաւ, որ չքացուած լոյս լուսադէմ՝  
կտի ունի դուրս դէմ:

(«Եօթը տարի...» քառերէն անմիջապէս առաջ բնմի ձայն  
կողմէն մտած է Թաթնուր ու քալած դէպի աջ՝ դէպի իր կիճը:



Յաղթանդամ, գօտիին մէջ դաշոյն մը, ուսին խորճին մը: Կի-  
նը խորճինը կ'առնէ ու ամուսնոյն քաներ մը ըսելու ձեռք կ'ը-  
նէ: Թաթոս լուռ կ'ունկնդրէ)

**ՉԱՅՆԸ** (կը շարունակէ առանց ընդմիջումի).

- Ու բարկացաւ իրեն կնկան:

**ԹԱԹՈՍ.**

- Էն յուռուքներ ո՞ր են, չկան,  
էն չարխափան յուռուքները կախարդական:  
Տէ՛, ա՛յ կնիկ, ճրագն ա՛ն  
ու շուտ հոս բեր յուռուքները ցաւի, չռոյի,  
թէ՛ վտանգի եւ թէ՛ չարի:

**ՉԱՅՆԸ.**

- Ան բարկացաւ իրեն կնկան, որ ընելիք շատ քաներ կան:  
Երգի, փառքի, համբաւի տէր ասպետը ծեր  
(Թամար ներս կ'երթայ եւ կը բերէ յուռուքներ շարան-  
շարան, կը դնէ խորճինին վրայ)  
իր վար քափած պեխերը դեռ վեր պիտ ստբաւէր:  
Կինը սակայն, մագերն երկայն, կը շորորար,  
կարծես ժամի ճամբէն կու գար:

**ԹԱՍԱՐ.**

- Ինձ կը թուի՝ գործն է դեւի  
էծու ագուն խաղն էս քաքուն:

**ԹԱԹՈՍ.**

- Կնիկ, քեզի կարծես զանգի ձէն է կու գայ:  
Ա՛յ էս գիշեր դեւերու դէմ մեծ կռիւ կայ:

Իրանի մեծ սահմաններէն մեր մօտակայ  
սահմաններուն կը մօտենայ դեւ մը հսկայ՝  
աչքերը հուր, իսկ կռնակը հսկայ մի թուր:  
Մարմինն ըսես չախմախի պէս սուր քարեր են,  
որ գորշ սարերը քերելէն՝  
գեղի վրայ կռուի կու գայ Իրանի մեծ սահմաններէն:

Չէ՛, չէ՛, կնիկ, էս հանաք չէ,  
փնթի էծի միայն գործ չէ.  
հիչ՝ չէր արժէր, որ Թաթոսը տեղէն շարժէր,  
էս տարիքին ելլէր փնթի էծը պատժէր,  
եթէ անտէր մեր սահմանին մէջ չմտնէր  
էն դեւերու մէկն էն մագոս հսկաներէն  
Իրանի մեծ սահմաններէն:

**ՉԱՅՆԸ.**

- Մեր Թաթոսը վերէն էնքան  
բառեր հոսեց թէ՛ ինքն իրեն եւ թէ՛ կնկան,  
որ կինն յանկարծ ձգեց ողբի լաց ու կական.  
(Թամար կը սկսի ողբ ու կոծի շարժումներ ընել, դէմքը ծե-  
ծել, կուրծքը ծեծել, մազը քաշել ու հեկեկալ)  
թէ իր երկան դէմ հանդիման կռուի պիտ գան  
մէջքով երկայն կանաչ դեւեր հսկայական.  
թէ դեւերը արդէն եօթն են,  
թէ Չոր գեղի սահմաններէն մերս են մտեր  
Իրանի մեծ սահմաններէն:

**ԹԱԹՈՍ.**

- Կեանք ըսածդ մի պայքար է.  
կեանքի ճամբան սար ու քար է:  
Կ'ատեն, կնիկ, ով տկար է,  
նստած ճամբան իր պատանքը միշտ կը կարէ:  
Լա՛ս թէ խնդաս, կեանքն իր ճամբան ունի, կնիկ.  
աշխարհի տէր մեծ Իսկէնտէր իր գերեզմանն ունի, կնիկ.  
էս կռուէն վերջ մարդիկ համայն պիտի գիտանան,  
որ հեռաւոր Չոր գեղի մէջ  
աշխարհի տէր մեծ Իսկէնտէր իր նմանը ունի, կնիկ:

Կռի՛, կռի՛, կռուի համար.  
Թաթոս ծնաւ կռուի համար:  
Կռի վանքի խաչին համար,  
Արդարութեան, իրաւունքի, մարդոց համար.  
ա՛յ կին, էլ էդ լացդ ինչո՞ւ համար:

**ԹԱՍԱՐ.**

- Թե ես չլամ, ո՞վ պիտի լայ, իմ Թաթն՝ս ճան.  
ալ ո՞ր ըսեմ, իմ Թաթն՝ս ճան.

(Կնոջ այս ողբի տեւողութեան Թաթոս, խորջիւնէն հանելով, մէջքին կը կապէ կաշիէ քամարը, ապա յուտութեան գէնքեր: Թաթոսի այս զգեստաւորումը կը շարունակուի եւ կը լրանայ յաջորդ՝ Չայնին կողմէ արտասանուած պարբերութեան ընթացքին)

վա՛յ, Թաթն՝ս ճան, իմ Թաթն՝ս ճան,  
ալ ո՞վ ինծի պիտի բերէ մատնի մարճան:

**ՉԱՅՆԸ.**

Կի՛նը՝ Թամար, էսպէս մոլար ու միալար մատեր, կու լար,  
մինչ Թաթոսը կը պատրաստուէր կռուի համար.  
մէջքին կապեց կաշիէ քամար,  
ու քովէ քով՝ գէնքերուն քով,  
յուտութեանը կախեց շարքով:

Կապեց աջէն, ոսկոր ու ցից պատկերովը Լուսաւորչին,  
տուփը հայլի՛ վրան մանեակ,  
հմայիլ ու վեց հազարեակ:

Ոտքէն գլուխ մեր Թաթոսի  
էնքան գէնք կար, էնքան կաշի,  
ու վեր ու վար էնքան բան կար,  
որ բեռան տակ ծանր, ինչպէս երկաթ ու քար,  
ջորին անգամ պիտի տքար:

**ԹԱԹՈՍ.**

- Կռուի համար չեն մատիւր լար, ա՛յ իմ Թամար,  
Երբ կռիւն է արդարութեան, ուժին համար:

Էն ժամանակ մատէ՛ ու լա՛ց,  
երբ Թաթոսը մեր սանահօր նման ըլլայ,  
Էնոր նման երբ Թաթոսի հոգին հիննայ,  
ուր որ մատի, էնտեղ մնայ:  
Ուր որ մնայ, հոն քնանայ:

Երբ արթննայ, զարհուրանքով վազէ մատի իր կնկան քով,  
մատի ու լայ ձէնով բարակ,  
թէ կարմիր կով մ՛իւր երազէն անցաւ արագ:

(Թաթոս կը ծռի, խորջիւնէն կը հանէ ձիւ սանձ մը ու մախաթ, ասեղ, թել)

Կռուի համար չեն մատիւր լար, ա՛յ իմ Թամար,  
Երբ կռիւն է արդարութեան, ուժին համար:

(Կը մօտենայ կնոջ, ձախ ձեռքով սանձը բռնած՝  
աջով կնկան գլուխը կը շոյէ ու)

Է՛, լաւ կին ես, շատ անգին ես,  
ձուածեղը համով կ՛ընես.

ինչ ալ ընես, միւս բոլոր կիներուն պէս,  
խելքովդ կէս, նորէն կին ես:

(Թաթոս կը մատի քարի մը ու կը սկսի կարկտել սանձը ձիւն:

Կի՛նը կը շարունակէ թեթեւակի հեկեկալ:

Բեմի ձախ կողմէն կը լսուի գիւղացիներու աղմուկ. «Ո՞ր է, ո՞ր է» հարցումներ)

**ԹԱԹՈՍ.**

- Կնիկ, ե՛լ տես, ո՞վ է կու գայ:

Չըլլա՛յ դեռ վանքին ճամբան բռներ կու գայ:

**ԹԱՍԱՐ** (Կ՛ելլէ ոտքի ու կը մօտենայ բեմի ձախին).

- Ո՞վ է, ի՞նչ կայ:

**ԳԻՒՂԱՏԻ ՄԸ** (Ներս մտնելով).

- Ո՞նց թէ՛ ի՞նչ կայ, երկինք ու լեռ յանկարծ փլեր,

մեր Չոր գեղի ու աշխարհի վրայ կու գայ.

(Այս խօսքերուն ընթացքին այլ գիւղացիներ ալ քեմ մտած են եւ համախումբ կը մնան բեմի ձախ կողմը)

Թաթոս աղան ե՛րբ պիտի գայ:

Թէ քնած է, ե՛լ արթնցուր.

թէ արթուն է, շուտ իմացուր,

որ շուտ շարժի իրեն տեղէն,

բռնի հեծնայ ձին հրեղէն:

ՈՒՐԻՇ ԳԻՒՂԱՑԻ ՄԸ (Առաջ գալով եւ խօսքը Թաթոսին ուղղելով)

- Թաթո՛ս աղա, մէյ մը ելի՛ր, շուրջդ նայի՛ր,

է՛ս օրերուն պիտ մնայի՛ր:

Ա՛խ, է՛ս օրին պիտի մնար մեր Թաթոսը վիշապաքաղ,

որ տերտերը ելլեր մէյտան իր էշով կաղ:

(Թաթոս ոտքի կը կանգնի, երկու քայլ կ'առնէ դէպի գիւղացիները որոնք քիչ մը առաջացած են արդէն, վեհ կեցուածքով մը կը դիտէ գիրենք, ապա անոնց գլուխներուն վրայէն՝ հեռուները, լեռները)

ԳԻՒՂԱՑԻ ՄԸ՝

- Թաթո՛ս աղա, Թաթո՛ս աղա,

Էսպէս է, որ գործն աշխարհի միշտ կը կաղայ.

էս աշխարհը հինէն ի վեր

շատ է տեսեր չռռ ու աւեր,

ամէն տարի մի քանի հեղ

կը տեսնէ մահ ու ջրհեղեղ.

մեր դաշտերուն՝ կանաչ, ուրախ,

տեսնես՝ յանկարծ կ'իջնէ մարախ:

Կէս գիշերին քազաւորներ երբ երազեն

սեւ հաւ ու ձի կամ սուր ու զէն,

դեռ չբացուած լուս լուսադէմ՝

կռուի կ'ելլեն իրարու դէմ:

Թաթո՛ս աղա, էս աշխարհը, ոնց որ հսկայ մի ջրաղաց,

էս քաները շատ հեշտ աղաց.

քայց որ էժը վանքին խաչը ելաւ գողցաւ,

աշխարհի ցաւն աւել մեծցաւ:

Թաթո՛ս աղա, Թաթո՛ս աղա,

էս աշխարհը պէլքի էս ալ իր մէջ աղա,

քայց ո՞նց աղա, Թաթո՛ս աղա,

եքք տերտերի խելքն ալ էշին հետ կը խաղայ:

ՈՒՐԻՇ ԳԻՒՂԱՑԻ ՄԸ.

- Թաթո՛ս աղա, չէ՛, հանաք չէ՛,

տնտնալու\* ժամանակ չէ,

թէ չէ, տեսնես, տերտերի տան շանն անայտան

կ'ելլեն բուրվառ, փիլոն կու տան:

ԹԱԹՈՍ.

- Է՛ս օրերուն պիտի մնար մեր Չոր գեղը,

որ քոստած շուն մը դնէր դեւի տեղը:

Դուք չգիտէք, որ դեւ մը հսկայ գեղին վրայ կռուի կու գայ:

Ըսէ՛ք, ըսէ՛ք, վանքին էժը եղ տնաւեր ո՞ր ճամբովն է փախուստ տուեր:

Դեւն որ պիտ գայ, եղ ճամբովն է,

պղնձէ շէկ թեւերով է,

ոտքէն գլուխ սուր հուրով է,

ճակատը լայն խեցիով է:

Դուք չգիտէք, որ էս գիշեր մեծ կռիւ կայ,

որ կռուին մէջ Թաթոսը կայ:

Ջանի Թաթոսն էս կէծէկէ թուրը ունի մէջքին կապած,

Աստուած վկայ, լոյս ու արեւ դեռ չծագած՝

եղ դեւն հսկայ պիտ որոտայ՝ քարին, հողին փորը տուած

ու պարտուած:

ԳԻՒՂԱՑԻ ՄԸ.

- Էղ բուրը լաւ է, Թաթո՛ս,

սակայն դեռ չհասած հոս՝

վախճամ շունը իր հաջոցով

իրար խառնէ ցամաք ու ծով:

ՈՒՐԻՇ ՄԸ.

- Թաթո՛ս աղա, Թաթո՛ս աղա,

երկնքէն թող կրակ տեղայ,

մեր տերտերի շունն է հիմա, որ աշխարհի

ճակտի գրին հետ կը խաղայ:

ԹԱԹՈՍ.

- Հաւատացէ՛ք, դուք կեցեր էք,

սագ կը զարնէք՝ առանց լարի:

**ԳԻՒՂԱՅԻ ՄԸ.**

- Մենք չգիտենք՝ եղպես սագին ո՞վ է տերը,  
բայց որ գիտենք՝ մեր տերտերը,  
եսու ձգած հօտն իր անտեր,  
սխալ ճամբու մէջ է մտեր ...

**ԹԱԹՈՍ.**

- Տերտերի շունն ի՞նչ գործ ունի, չեմ հասկնար,  
ո՞նց բռներ են սխալ ճամբան.  
ձեր խօսքերէն, բառերէն բան չեմ հասկնար:

**ԳԻՒՂԱՅԻ ՄԸ.**

- Խաչն ի փոքին նրբ որ էծը  
եկաւ տարաւ փրթած ազին,  
արդէն չանցած ջաղցի ջուրէն՝  
գեղէն երկու շուն հաջեր են:  
Մէկ՝ տերտերի շունն է, որ կայ,  
իսկ միւսը՝ մեր Սրապի շունը հսկայ:  
Ըսէ՛, Թաթո՛ս, դուն ո՞ր մէկին պիտ հաւտայիր,  
թէ շուներուն մտիկ տայիր:

**ԹԱԹՈՍ.**

- Չըլլա՞յ բոստ շան հաջոցին ելան գացին ...  
ալ ի՞նչ կեցեր, ա՛խ կը քաշէք հոգու խորէն:

Յանուն ուժին, յանուն գեղին,  
յանուն պատուին մեր Չոր գեղին  
շոպեցէ՛ք՝ վար լապտերն էդ վառ,  
թէ չէ էշն էդ չորքոտանի  
ճահիլ, պառաւ, կին, պատանի  
անդունդի վար պիտի տանի:

Խելքն որ ըսես, էդ լապտերի լոյսէն լաւ է,  
կռուան խոյը էշէն լաւ է,  
գայլեր խեղդող գամփռը կաղիկ  
միշտ ճանճ բռնող շունէն լաւ է:

**ԳԻՒՂԱՅԻԶ.**

- Լա՛ւ է, լա՛ւ է, հէլպէք լաւ է,  
Սրապի շուն տեր Սարուքի շունէն լաւ է:

**ԹԱԹՈՍ.**

- Մտիկ ըրէք,  
օրերը մոր, դարերը հին ձեզ կը նային.  
ա՛յ աղբրտիք, ձեզ կը նային  
էն պլպլան էնքան աստղերը երկնքին,  
թէ Չոր գեղը ո՞նց պիտ փրկէ խաչը անգին,  
թէ ո՞նց կռուով պիտ խափանենք չարիքը նենգ:

Մեր էս օրուայ կռուէն վերջն է,  
որ աշխարհի խաղաղութիւն պիտի իջնէ:  
Հաւատացէ՛ք, ա՛յ աղբրտիք, չարին վերջն է,  
քանի Թաթոս կռուին մէջն է:

Էս անգամ մենք պիտի քամենք  
հօր չարքին արիւնը նենգ.  
կաշին հսկայ էս անգամ մենք  
եօրը ճամբու ճիշդ մէջտեղը պիտի գամենք:

Ով խելք ունի, խելքի աշէ.  
ով ձի ունի, թող դուրս քաշէ.  
ով դուրս քաշեց, թող սուր բռնէ:  
Թէ կայ մէկը, որ կռուի մէջ շատ տկար է,  
թող մնայ տուն, մտաի կնկան շապիկ կարէ:  
Ա՛յ աղբրտիք, լանք թէ խնդանք, կռիւ ունինք  
չարքերուն հետ՝ հօր ու նենգ:

**ԳԻՒՂԱՅԻ ՄԸ.**

- Լաւ կը խօսիս, Թաթո՛ս աղա,  
լեզուդ բերնիդ՝ լաւ կը խաղայ,  
բայց թէ ըստ, Թաթո՛ս աղա,  
ո՞վ է հօր էդ չարը նենգ,  
որ լուր չունենք:

### ԹԱԹՈՍ.

- Մտիկ ըրէք, զարկան Թաթոսն է կը խօսի:  
Ա՛յ, էս գիշեր, դեւի արիւն պիտի հոսի:  
Ա՛յ աղբրտիք, չլրացած հազար տարին՝  
կռուի կ'ելլեն շարն ու բարին:  
Չլրացած հազար տարին՝  
դեւերն եկան, խաչը տարին:  
Թոյլ պիտի տա՞ք, որ խաչն հզօր ըլլայ անզօր,  
որ դեւն ըլլայ էս աշխարհին տէրը հզօր,  
ձեր ալիւրի փեթակին մէջ ցկնին օձեր,  
բացուին խոցեր ձեր կողերուն ճահիլ ու ծեր.  
ըլլայ գիշեր առանց աստղի, առանց լուսնի,  
որ ցորնի տեղ արտերուն մէջ տատասկ բուսնի:

### ԳԻՒՂԱՅԻՆԵՐ.

- Մենք չենք ուզեր, մենք չենք ուզեր,  
(Տէր Մարութէն քեմ եկած է, հետը՝ քանի մը գիւղացիներ)  
մենք չենք ուզեր, որ դեւը գէր՝ երկար ազի,  
հազնի շուրջառ պատարագի:

### ՄԷԿԸ.

- Մենք չենք ուզեր, որ սատանան՝  
գլխին կոտոշ, ոսկոր գաւակ,  
ըլլայ դպիր կամ սարկաւագ:

### ՄԻՒՍԸ.

- Կեցցէ՛, կեցցէ՛ մեր Թաթոսը,  
Թուր կէծէկով, լոյս ճակատով մեր Թաթոսը,  
զրկեալներու տէր Թաթոսը:

### ՈՒՐԻՇ ՍԸ.

- Մէկ դեւ քիչ է, բանակն հիչ\* է,  
ան չգիտէ՝ երկիւղն ինչ է:

### ՄԷԿԸ.

- Առատութի՛ն մեր կալերուն,  
մեր արտերուն, մեր սրտերուն:

Ու աշխարհին խաղաղութիւն պիտի իջնէ,  
քանի Թաթոս կռուի մէջ է:

### ՄԻՒՍԸ.

- Մեծ ես, Թաթո՛ս, Մասմայ թլոր Դաւթի մնան,  
զլուխը ըսես՝ լիքն է խելքով մեր Մակարի գլխի մնան,  
քու խօսքերդ կը զնգզնգան վանքի երկաթ զանգի մնան,  
դու անմնան՝ էդ բոլորին շատ ես մնան.  
բայց թէ, Թաթո՛ս, էս մութին մէջ քանի՞ զանք ման  
եսպէս անբան նախրի մնան ...  
Ըտ՛, ո՞ր է կռուի ճամբան:

### ԹԱԹՈՍ.

- Կըն-կոկոսան գորտերն անգամ պիտ կոկոսան,  
որ Չոր գեղը՝ կտուր կտրան, բազում գերան,  
ականց տուեր մի քոստած շան հաջոցին,  
ելեր կախուեր իշու պոչին:  
Չէ՛, ի գուր չէ, երբ Մրապի շունը հաջէ:  
Ա՛յ, էն ճամբան մենք կը բռնենք,  
որ բռներ է էն էժը նենգ:

### ՉԱՅՆԸ.

- Էս որ լսեց Տէր Մարութէն,  
(Տէր Մարութ կը վերցնէ իր ձեռքի փայտէ խաչը ու կ'ա-  
ռաջանայ դէպի քեմի կեղրոնը)  
ցնցուեցաւ իր մօրութէն ու վեր բռնեց  
ձեռքով շինած փայտէ խաչ մը՝  
խաղաղութեան որպէս նշան,  
փութաց փրկել պատիւն իր շան:

### ՏԵՐ ՍԱՐՈՒԹԷ՛:

- Ա՛յ ժողովուրդ, որ էս ճամբուն մէջ մտեր էք,  
ձեր տէրտէրին մտիկ ըրէք:

«Որդին մարդոյ խաչենք», - ըսին,  
խոշոր խաչ մը դրին ուսին Տէր Յիսուսին:  
«Ու քեռան տակ քալէ», - ըսին:

Որը՝ ուղքով, որն հեծած ձին,  
մերկացուցին, բացին վերքեր Տէր Յիսուսին  
նշխար մսին ու բռնան տակ «քալէ», - ըսին:

Աշխարհն անցաւ, էն անցաւոր աշխարհը սին,  
ու անցաւոր էս աշխարհին  
մնաց Յիսուս՝ վերքովը հին,  
մնաց խաչին հետ միասին:  
Թէ՛ նոր, թէ՛ հին էն տէրերը էս աշխարհքին  
անցան գացին իրենց կարգին,  
մնաց խաչը տէր աշխարհքին, տէր երկնքին:

Ու մեր վանքին քոստո էծը  
եկաւ գողցաւ էդ խաչն անգին,  
ես չձգեց նոյնիսկ ազին:

Չէ՛, կոնի չէ, խաչն արհուն չէ,  
թէ Սրապի շունն ալ հաջէ,  
խաչը սուր չէ, խաչը հուր չէ,  
թէ նոյնիսկ մեր շունը հաջէ.  
մեր շունն արի, խելքով բարի:  
Ա՛յ ժողովուրդ, մտի՛կ ըրէք,  
խաչի ճամբուն մէջ մտեր էք:  
Խաչի ճամբան խաղաղութեան մեզ կը տանի  
առանց դեռի ու սատանի:

Հաւատացէ՛ք, Յիսուս տէրն է, որ վերքն ուսին  
կ'առաջնորդէ մեր կաղ էշին:

Թաթոս աղան, հեծած իր ձին,  
քերթել կ'երթայ դեռի կաշին:  
Ա՛յ, այդպէս է, ով հեծնէ ձին,  
վար կը նայի խոնարհ էշին,  
ու միտք կ'ընէ, թէ ո՞նց ընէ,  
բառնայ էշին դեռի կաշին:

Ա՛յ ժողովուրդ, ով հեծաւ ձին՝  
գացին էնոր հողը բացին:

Ով էշն հեծաւ, ան չբերաւ կոնի ու ցաւ.  
բերաւ դաշտէն խուրձ մը ցորեն  
կամ ձիթենու ճիւղ մը ձորէն:

Չէ՛, կոնի չէ, խաչն արհուն չէ,  
թէ նոյնիսկ մեր շունը հաջէ.  
մեր շունն արի, խելքով բարի:

ՉԱՅՆԸ.

- Տէր Մարութէն իր ձեռով թաց,

(Չայնի արտասանութեան ամբողջ տնտրութեան Տէր

Մարութ անձայն խօսելու տպաւորութիւնը պէտք է տայ)

եսպէս երկար քարոզ կարդաց՝  
խաչ մը ձեռքին՝ խաղաղութեան որպէս նշան,  
ու գլխին մէջ՝ հաջոցն իր շան:

Ու խօսեցաւ էնպէս բառեր,  
կ'ըսես ուղեղն էդ հաջոցէն կրակ առեր,  
մորենիի պէս կը վառէր.  
ալ առակը փոքրիկ գառան,  
ալ Հին ու Նոր կտակարան,  
ալ կեանք ու մահ,  
ալ Նավումայ, Ամբակումայ,  
ալ առաքեալ, ալ մարգարէ,  
ալ սրբերը սրբաբարէ.  
նոյնիսկ հողին մտաւ տեղին,  
հանեց գանկեր, ոսկոր դեղին.  
ու անդադար խառնեց լեզուով տարի ու դար:  
որ ժողովուրդն իրաւունք տար  
իր պաշտպանած դատին արդար:  
Եւ որպէսզի մեր Թաթոսին  
խօսքերը սին ի գուր կորչին,  
Տէր Մարութէն հասաւ մինչեւ Լուսաւորչին:

ՏԵՐ ՄԱՐՈՒԹԷ.

- Ա՛յ ժողովուրդ, մարդն որ ըլլայ շահ ու արքայ,  
էդ մարդուն մէջ միշտ դեռ կայ,

սուրը դեռին խաչն է, որ կայ:  
Քանի սուր կայ, կոհուր կայ ու պիտի գայ:

Ըլլաս ալուոր, ճահիլ բանուոր,  
ըլլաս զինուոր, թէ թագաւոր,  
ըլլաս տէրտէր կամ վարդապետ, ըլլաս դպիր,  
փոխէ՛ ճամբադ, անպէտ դեռին մի՛ հանդիպիր:

Թէ սուր բռնես, սուրին զոհը դուն ես, աղբե՛ր,  
թէ վատ ընես, վատին զոհը դուն ես, աղբե՛ր,  
թէ չհատաս միշտ բարիին, միակ չարը դուն ես, աղբե՛ր,  
եթէ պարտել կ'ուզես չարը, միակ ճարը դուն ես, աղբե՛ր:

Թէ չազատենք խաչը գերի էն անօրէն էծի փորէն,  
պատճառը լոկ դուն ես, աղբե՛ր:  
Թէ որ կ'ուզես հասնիլ խաչին,  
յանուն մեր սուրբ Լուսաւորչին,  
պէտք է բռնենք ճամբան աջին:

#### ՔԱՆԻ ՍՐ ԳԻՒՂԱՅԻ.

- Ճամբան աջին, ճամբան աջին՝  
յանուն մեր սուրբ Լուսաւորչին:

#### ԹԱԹՈՍ.

- Տէր պա՛պ, տէր պա՛պ, թէ քառսուն խոյ դուն մատաղ տաս,  
քառսուն տարի ուխտի երթաս,  
խաչը նորէն չի ազատիր էն անօրէն էծու փորէն:

Տէր պապ, տէր պապ, եթէ պոչն ալ փրթի էծին,  
էնոր փորը բերդ է թարուն,  
ուր կը հսկեն երկու դուեր հերթով անքուն,  
պոչերն հսկայ եօթը կանգուն:

Ըլլանք տգէտ թէ զիտունի,  
աշխարհն իրեն օրէնքն ունի.  
տեսնուած չէ, որ արեւը կէս ճամբայէն ետ նահանջէ,  
եթէ նոյնիսկ շունդ ելլէ մեր գրարար լեզուով հաջէ:

Չէ՛, չէ, տէր պապ, խելքի բան չէ,  
ըսածներդ խելքի բան չէ,  
տեսնուած չէ, որ աղօթքով բացուին բերդի երկաթ դռներն հսկայական,  
եթէ չըլլան զօրք, զօրական:

Տէր պապ, տէր պապ, կեանքը որ կայ, կոտոշ ունի,  
ըլլայ մարդու, ըլլայ շունի,  
խաչին կոտոշ՝ սուրն է դրուած՝  
կոթն արծաթով, սաթով բանուած:

Տէր պապ, տէր պապ, ըլլայ երկինք, ըլլայ Աստուած,  
միշտ էդ սուրով են պաշտպանուած:  
Մեր Չոր գեղը հին ողբի մը պէս միալար,  
գլխին մոխիր, պիտ նստէր լար,  
եթէ կռի ու սուր չըլլար:

Եթէ կռի ու սուր չ'ըլլար, էդ մեր վանքը ախտո կ'ըլլար,  
տաճարը խոր մարագ կ'ըլլար՝ էդ մեր քովի Մոլլա գեղի ճիւղ, կովի:

Տէր պապ, տէր պապ, եթէ կռի ու սուր չըլլար,  
զանգը վանքին մոլլի ջորուն մսուր կ'ըլլար,  
տէրտէրն հրոյ ճարակ կ'ըլլար իր մօրուքով:  
Իսկ կոյսը մեր պատառ մը լաթ պիտ չգտներ,  
որ անարգուած իր մարմինը ինք չտեսնար,  
եթէ կռի ու սուր չըլլար ...

Տէր պապ, տէր պապ,  
մենք ո՞նց պիտի պաշտպանէինք մեր գետակի կանաչ տափը,  
եթէ չ'ըլլար մեր էն կռուի հզօր թափը:

#### ՉԱՅՆԸ.

- Էսպէս խօսքեր տուին առին բերնէ բերան:  
Անքոյն արդէն շատ յուզուեցաւ,  
երբ իմացաւ խօսքը տափի:

(Գիղացոց մէջ՝ յուզում, շարժում: Թարթու ու  
Տէր Մարութէ կը խօսին առանց ձայնի)

Մեր Թաթոսի կռուի ձեռն ձեռն էր կարծես գուռնի, դափի,  
ալ որո՞ւ հոգ, թե դեներու լեն քթերէն կրակ թափի ...

(Հետագայ տողերու արտասանման ընթացքին լայր  
հետզհետէ կը նուազի. ժողովուրդ ժեսթերով իրար հետ խօ-  
սելէ, վիճելէ ետք կը բաժնուի երկուքի՝ փոքր մաս մը՝ Տէր  
Մարութի կողքին, ուրիշ մաս մը՝ Թաթոսի կողքին, ու տար-  
րեր անկիւններէ բեմէն դուրս կու գան)

**ՉԱՅՆԸ** (Կը շարունակէ առանց դադարի).

- Ով Թաթոսի խօսքը լսեց,  
ձին ախտէն գնաց քաշեց:  
Բամբ որոտով, ոմանք՝ ձիով, ոմանք՝ ոտով  
գրընկ, գրընկ, ձգած երկար թելը թելին,  
արշաւ տուին դէպի դելին:

Մեր Թաթոսի գլխէն միայն երկու թիզ վեր,  
կարծես հագած երկաթ թել,  
կը հետեւէր ճամբէն շիտակ  
մի գորշ ոգի անկերպարան:  
Ա՛յ էն ճամբան,  
որ հաջեր էր մեր Սրայի շունը անբան,  
որ անցեր էր էն չար էծը,  
որ թողեր էր վանքի այգին,  
որ մտեր էր բակը վանքին,  
որ գողցեր էր խաչը անգին:

Ով տերտերին հետեւեցաւ,  
էն կաղ իշուն հտել կեցաւ:  
Մօրուքաւոր, ծեր ու քաւոր,  
ոնց դագաղի յուղարկաւոր,  
գլուխնին կոր, գացին մտան խորը մթան:

Ու կը թուր, որ լոյսն աղօա կը խեղդուէր:

Տէր Մարութն ճերմակ մօրուքն հովին տուեր,  
գլուխը վեր՝ կը հետեւէր ճամբէն շիտակ,

որ մի հրեշտակ,  
թելը ձգած կարծես իշու ոտքերու տակ,  
կ'առաջնորդէր ճիշդ էն ճամբան,  
որ հաջեր էր իր շունն անբան,  
որ անցեր էր էն գող էծը,  
որ թողեր էր վանքի այգին,  
որ մտեր էր բակը վանքին,  
որ գողցեր էր խաչը անգին:

Ուրբաթ օր էր Մեծ պատերին՝:

ՎԵՐՁ



## ՀՈՂՎԱԾՆԵՐ

### ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Մահմանադրութենէն յետոյ էր, որ մեր բանաստեղծութիւնն ու արձակը սկսան առնել ազգային նկարագրի գիծեր. կարեւորը այդ գիծն էր, որ հասարակարարութեան բարձրութեան: Վարուժանն էր Միամանթո իրենց յանդուգն մտաբով ուզեցին կոտրել հնացած աւանդութիւն մը, որ ճախարակի ձայնի մը պէս կը կրկնուէր յաճախ. երկուքն ալ առաւելապէս ազատ պայմաններու յայտնութիւններ էին: Անոնք չպոռացին, աշտարակներէն վար չնայեցան ու միայն ստեղծագործութիւն բարեշրջեցին ու շրջան բացին: Անոնցմէ առաջ երկու պատանիներ ուզեցին կոտրել այդ ճախարակի ձայնի միօրինակութիւնը (խօսքս արեւմտահայ բանաստեղծութեան մասին է)՝ Դուրեանն էր Մեծարենց: Մանաւանդ Մեծարենց, հակառակ իր աննպաստ պայմաններուն, ջութակի աղօտը ձայնի մը պէս մտաւ գրական զարթօնքին մէջ: Մենք շատ բան կը պարտինք Վարուժանի եւ Միամանթոյի: Անոնք էին, որ հօգոր ու կարշնեղ\* բազուկներով քանդակեցին: Միամանթոյի մէջ մեր դիւցազներգութիւնը էր Երեւելացին ներդաշնակուեցան, իսկ Վարուժանի մէջ էին հայոց հեթանոս ուժն ու գեղեցկութիւնը ոգեկոչուեցան:

Այդ շրջանին էր, որ, տրապէզի վրայ յանդուգն խաղեր ընող երիտասարդին պէս, վերերէն վար իջաւ Զարեանը՝ իր նոր ոճով, նոր ձևի երեւակայութիւնով եւ արուեստի նոր ըմբռնումով մը, որ Արեւմուտքինն էր: Կու գար ըսելու համար, որ արուեստը միայն մէկ նպատակ ունի, այդ նպատակը ինքը՝ արուեստն է:

Զարեան, լեցուած լատին մշակոյթով, կը բերէր նորօրինակ գիծ մը ֆրանսական տեքստաններէն: Ազատ դասական արուեստի բոլոր կաշկանդումներէն, անգութ, անձնական եւ խուսափող իրականութենէն: Որպէս այդ՝ Զարեանի առաջին բանաստեղծութիւններուն մէջ ուժեղ էր խորհրդապաշտութիւնը: Եթէ Զարեանը ուզեց նստեցնել այդ շրջանի գրական դպրոցի մը գրասեղանին վրայ, այդ դպրոցին տէրը պառնասեաններն էին, այսինքն՝ արուեստին նպատակը գեղեցկութիւնը պիտի ըլլար միայն եւ ամէն ինչ գեղեցկութեան համար: Միշտ ալ տարբեր եղած է արուեստի եւ կամ գեղեցիկի ըմբռնումը, անհա թէ ինչն\*՝ տեսակները եւ դպրոցները: Պառնասականները ինչքան ալ ժխտէին Հիւսօն, ան ծանր շուքի մը պէս նստած էր անոնց հօգիին մէջ, ըսել կ'ուզեմ՝ անոնք չկրցան

խուսափիլ ըստնախօսման, որովհետև իրենց աշխարհը կառուցանելու կարևոր ազդակներէն մէկն էր ան:

Կ. Չարեանն իր այդ բանաստեղծութիւնով օտար նկարագրի գիծ քերաւ մանաւանդ մեր գրական զարթօնքի այս շրջանին, ուր ազգային նկարագիր կը կազմուէր: Ան քերաւ ներկ, երաժշտութիւն, իսկ խորհուրդը ձեռն մէջ էր: Կ'ենթադրեմ, եթէ Չարեանը բանաստեղծ չլլար, պիտի ուզէր ըլլալ երաժիշտ մը եւ կամ նկարիչ մը, որովհետև անոր մէջ առաւելապէս ուժեղ է գոյնն ու նկարչութիւնը:

Հրատարակուեցաւ «Օրերու Պսակ»ը: Քիչեր զարմացան տրապէզի այդ շատ յանդուգն թռիչքներով: Բանաստեղծը կրկնեց բարձրաձայն, կրկնեց ինքնիրեն, որ կայ «մտաւորական ողորմելի խեղճութիւն, քանի որ չեն կրնար հասնիլ իր երեւակայութեան բանկալ\*, չէրչի\*, չի՞ ծախող վաճառական աշակերտները, որոնք ոտանաւոր կը գրեն»: Չարեանի արտայայտութեան եղանակ մըն է, որ կը գործածեն:

Քիչեր զարմացան «Օրերի Պսակ»ով, որովհետև կը զգային, որ Չարեանն օտար էր իր ներկով, իր խորհուրդով, մանաւանդ իր արուեստի ըմբռնումով: «Օրերի Պսակ»ը մնաց օտար հոգիի մը թարգմանութիւնը:

Չէ՛, մտաւորական աղքատութիւն չէր, որ չկրցան հասնիլ «Օրերի Պսակ»ի երեւակայութեան: Այդ մտաւորականութիւնը գիտէր Պօտըլէրը, Մալարմէն, մանաւանդ Վերհառնը եւ Մեթերլինկը: Անոնք ինչ ալ ընէին, իրենց բանաստեղծութիւններէն չէին կրնար քերել ֆրանսական նկարագրի գծերը. իսկ Վերհառնը ֆլաման էր՝ իր դաշտանկարի գոյներով, «ձկնորսներով» եւ կամ «կապ շինողներով»: Հայ բանաստեղծին մէջ տեղական գոյնը փնտռեցին ու չգտան: Հակառակ անոր, որ ան բանաստեղծ էր եւ ուղղափառ բանաստեղծ: Բանաստեղծի այդ ուժն էր, որ հայ գրականութեան մէջ ըրաւ իր առաջին եւ ուժեղ նուաճումը՝ հայ լեզուն: Ան կրցաւ կարճ ժամանակին մէջ իր բանաստեղծական թռիչքներուն հասցնել հայ լեզուն, հպատակեցնել իրեն եւ տալ անձնական գոյն եւ հասցուց մինչև երաժշտական նրբութեան:

Օտար մշակոյթով սնունդ առած շամախեցի Եղիազարեանը արդէն գտած էր մետիումը՝ հայ լեզուն՝ հայ ոգիներուն հետ հաղորդակցութեան մտնելու համար. մետիումները ոգեհարցութեան մէջ միջնորդներ են մարդոց եւ անմարմին ոգիներուն միջեւ: Չարեան մտերմացաւ այդ ոգիներուն հետ, տուաւ իր ուզած կերպարանքը, ամպերուն մէջ քեզասներու շարժումներ տեսաւ, տեսակ մը Ողիմպոս ստեղծեց եւ այդ ոգիներուն հետ ալ մնաց եւ չուզեց վար գալ: Ան կը խուսափէր իրականութենէն, իր արուեստի ըմբռնումը թոյլ չէր տար, որ այդ ոգիները մարմին առնէին: Այդ ոգի-

ներն էին, որ Չարեանին տուին ոլորտ ու նկարագիր արձակին մէջ: Ան անիլի ազատ ձգեց իր երիվարը: Առաւելապէս արձակին մէջ էր, որ յայտնուեցաւ մտածող Չարեանը: Եւ որովհետև ամէն բան իր ըմբռնած գեղեցիկին համար է, իր խորհրդածութիւններուն տուաւ նոյնպէս նկարչական գոյն, ձայն ու բանաստեղծական թռիչք: Կարեւորը գեղեցիկ կերպով ըսելն է: Կրնաս չբաժնել անոր որոշ խորհրդածութիւնները եւ սակայն չես կրնար չհիանալ տուած եղանակին եւ ձեռին:

Չգիտեմ, թէ ինչո՞ւ յաճախ նմանութիւն ուզած են գտնել իրլանտական բանաստեղծ Օսկար Ուայլտի եւ մեր Չարեանի միջեւ: Մօտիկ են մտածելու եղանակով: Ուայլտ պճնասէր էր, տէնտի մը՝ իր անձնական նկարագրով եւ մանաւանդ արուեստի ըմբռնումով. անոր ներշնչումը եղած է ֆրանսական: Երբ կը կարդաս «Տորիլըն Գրէյ»ը եւ կամ «Տէ Փրոֆոնտուս»ը, կը հիանաս մտածումներուն, որոնք շողումներ կ'արձակեն: Որեւէ բան գեղեցիկ ձեւով ըսելը անոր համար ալ արուեստի նպատակ էր: Ուայլտ կը խոստովանէր այդ:

Չարեան եւս ունի իր խորհրդածութիւններուն մէջ այդ շողումները եւ դարձուցած է ինքն իր մէջ նպատակ:

Բանաստեղծ Չարեան նոյնքան ուժեղ բանաստեղծ էր իր արձակին մէջ եւ այդ թափով, նկարներու հարուստ գոյներով, շողումներ արձակող խորհրդածութիւններով հայ գրականութեան տուաւ իր տեսակի կարևոր աշխատանքներ՝ յաճախ գործ ունենալով «հայոց աշխարհ»ի հետ: Իր այդ աշխատանքներուն մէջ չտեսանք, որ օր մըն ալ, կարճ պահ մըն ալ խանդավառուած ըլլար հայ ժողովուրդով:

Իրա՛ւ մխիթարական ոչինչ կայ հայ ժողովուրդին, գրականութեան, մշակոյթին եւ մտածողութեան մէջ: Եղած են հեղինակներ ռեւէ ազգի մէջ, որոնք խնայած չեն իրենց ժողովուրդի թերութիւնները մէջտեղ քերելու: Նոյն հեղինակները խանդավառուած են ու ներշնչուած իրենց ժողովուրդով եւ այդ ժողովուրդը դարձուցած են հաստատուն գետին իրենց գրականութեան:

Մեր Չարեանը հայ ժողովուրդի վրայ նայեցաւ բարձր աշտարակէ մը ու վարը մանրուքներ տեսաւ: Մանրուք է մտաւորականը, վաճառականը, կուսակցականը, գրականագէտը, քաղքենին: Իսկ եթէ գիղացիի խօսքը ըլլայ, ան անմիջապէս Քսենոփոնը կը յիշէ, եւ կարծես ոչինչ փոխուած ըլլար: Այդ աշտարակէն էր, որ ուզեց բարեկարգել եւ կամ յեղաշրջել հայ ժողովուրդի մշակոյթը, գեղարուեստական ըմբռնումը՝ այդ բարձրութենէն վար թափելով հանգանակներ ու պատգամներ:

Մի քանի տողեր միայն իր մէկ կարեւոր աշխատանքի յառաջարանէն՝ «Անցորդը եւ Իր Դամբան».

«Ու անտանելի նազպարը մտքերի, ձանձրալի, միակերպ դարձաբարը գաղափարների:

Ոչ թե փիթագորեան երաժշտութիւնը, աստղերի գերագոյն ռիթմը, որով նուագաւորումի ամենախոնարհ առարկաների գոյութիւնը, այլ միակերպ գետինը խփելը, որ կենդանաբանական պարտէզներում ցուցադրում են վայրենիները»:

Մեր սիրելի Չարեանը փիթագորեան երաժշտութիւնով եւ մանաւանդ աստղերի ռիթմովը ճամբայ ելած է յեղաշրջելու հայ ժողովուրդի մշակութիւն ըմբռնումը:

Մի քանի տող եւս.

«Այլ-

Գիւղի աղջիկը, հայրենի աղբիւրը, մամը, որ մածուն է շինում, Բերլինի դաշնագիրը, երկու կոպեկանոց միցշէականութիւնը, կեղծ ժողովրդական բանաստեղծութեան ամտանելի կլիշէները ու այսօր գալօղը (գործարան), ծխնելոյզ, ընկեր եւ ընկերուհի:

Պէտք է միալար սազը փշրել, թաղական դպրոցից դուրս պրծած չիթ ծախող խանութպանի համար շինուած ոտամաւորից» եւ այլն:

Չարեան յաճախ ըրած է մօտաւոր եւ հեռաւոր մնան արտայայտութիւններ մասն վերջին «Նաւատոմար»ներուն մէջ: Իրա՞ւ, ըսինք, կովկասահայ բանաստեղծութիւնը «չիթ ծախող խանութպանի համար շինուած ոտամաւորներ» են եւ կեղծ ժողովրդական բանաստեղծութեան անտանելի կլիշէ: Գուցէ Տէրեանն է, Թումանեանը, Իսահակեանը եւ կամ Չարեանը: Վերջին երեքը իրացուցին ժողովրդական բանաստեղծութեան ռիթմը, գոյնը, մեզ ազատեցին սեթետեթ բանաստեղծներէն եւ մեր բանաստեղծութեան տուին նկարագիր:

Եթէ այսօր շատ մխիթարական երեսոյթ մը կը տեսնենք Հայաստանի բանաստեղծներուն մէջ, որովհետեւ հիմքը ժողովրդական ռիթմն է:

Կը տեսնենք, որ Չարեանը չի գոհեր իր գրական ըմբռնումը: Անոր համար կարեւորը գեղեցիկ ձեւով ըսելն է եւ որպէս այդ՝ յաջողած է: Եւ մենք կը տեսնենք, որ նոյնիսկ մեղք ունի ծխնելոյզը: Եւ Չարեանի երեսակայութիւնը միայն իրար քով կրնայ բերել «մամը, որ մածուն է շինում» եւ «Բերլինի դաշնագիրը»: Եւ Չարեան կրնայ շատ բան գոհել յաղագս գեղեցիկ ասացուածքի: Ան մնաց աստղերի ռիթմին, փիթագորեան երաժշտութեան հետ, մնաց բանաստեղծ եւ մեծարժէք բանաստեղծ:

Այդ մեծարժէք բանաստեղծն էր, որ տուաւ մեր գրական պատմութեան դիմացող արժէքաւոր գործեր, տուաւ մանաւանդ «Տատրագոմի Հարսը», որ աստղերու մտերմութիւնը ապրող ուժեղ բանաստեղծ մը կրնայ տալ:

«Տատրագոմի Հարս»էն յետոյ Չարեան տուաւ «Նաւը Լերան Վրան» բանաստեղծական նոյն թափով, նկարներու ճոխութիւնով եւ շոյլ կեր-

պով գործածելով մասն իր շողշողուն խորհրդածութիւնները: Ոեւ ընթերցող չի կրնար մոռնալ վանեցու այն հոյակապ պատմութիւնը, թէ ինչպէ՛ս տեսած է հայ թագաւորին ոսկորները: Ինչ որ կը պակսի, վէպին տեղական գոյնն է ու նկարագիրը. կը պակսի մանաւանդ ժողովուրդը: Գլխաւոր դերակատարները, օտար մշակոյթով լեցուած, հողին եւ ժողովուրդին անծանօթներ են: Փարլամենտի ժողովին մէջ Չարեան ճաղատներ կը տեսնէ միայն: Իսկ մայրը, որ եկած է իր կամաւոր տղան ճամբելու, Չարեան կը լսէ անոր մօր հողաթափին ձայները միայն, իսկ գիւղացին խորամանկ է ու անճնասէր:

Չարեան միշտ ալ կը յաջողի միջավայր տալ, երբ «Արեւմուտք»ը կը նկարագրէ եւ կամ եւրոպական կղզիէ մը կը վերցնէ իր պատմութեան միջոց, եւ սակայն կարեւոր նկատած չէ «Նաւը Լերան Վրայ» վէպին տեղական միջավայր տալ:

Ինչպէս բոլոր պառնասականներուն մէջ, Չարեանի մէջ եւս շուրջ մը պէս տեղաւորուած է բոմանթիզմը: Վարուժան եւ Միսմանթօ շատ երիտասարդ գոհուեցան:

Այն շատ կարեւոր շրջանէն կը մնայ մեր Չարեանը, որ դեռ կ'աշխատի ու կու տայ կարեւոր գործեր:

Հանոյքով իմացայ, որ լրացուցած է երկար դիւցազներգութիւն մը մեր լեկենդանիով: Այդ իր աշխարհն է, ոգիներու աշխարհը:

Անտարակոյս Կ. Չարեան հայ գրականութեան վերելքին կարեւոր բաժին բերաւ, մանաւանդ բերաւ թափ ու ճաշակ:

## ՏՕՔԴ. ԲԷՋԼԻԿԵԱՆԻ ԳՐԶԻՆ ԱՈՒԹՈՎ՝

Առանց մանրամասնության մեջ մտնելու, կարելի է ըսել, որ երկու տեսակ քննադատություն կայ. մեկը՝ որ կրճայ մեկնակետ դարձնել իր անձնական ճաշակը, նման բանաստեղծի մը՝ ինքնուրոյն ապրումներով:

Երկրորդը կ'ունենայ հիմնական մեկնակետ մը, որ կազմած է հին ու նոր գրական պատմութենէն: Հիմք բռնած է վաւերականը, որ հաստատուած է մարդկային, ընկերային եւ արուեստի անընդհատ պեղումներով:

Այս երկրորդը կարելի է ստորաբաժանումներու ենթարկել:

Երբ քննադատը եկեղեցական մըն է...

Ան Հին ու Նոր կատակարան, Պօղոս առաքեալ եւ քննադանցական բարոյականութիւնն է, որ կը փնտռէ:

Երբ քննադատը մարքսիստ մըն է ...

Մարքսիստները պակաս վնաս չպատճառեցին արուեստի եւ գրականութեան ազատ բռնիքներուն, որքան եկեղեցականները:

Վերջին 40 տարիներու ընթացքին շատ տուժեց հայկական գեղարուեստական գրականութիւնը Հայաստանի մէջ:

Երբ քննադատը մոլեզին ազգայնական մըն է ...

Նոյնքան տուժեց մեր ազատ գրականութիւնը ազգային մոլեզնութիւնով եւ սահմանափակեց ոչ միայն մեր գրականութիւնը, այլեւ սահմանափակեց մեր ազգային ըմբռումները:

Կը հասկնամ: Այդ ձեւի գրականութիւն մշակեցինք մեր ազգային գոյութեան եւ պաշտպանութեան համար: Կազմակերպուած ազգեր այդ մասը ձգած են իրենց բանակներուն եւ մաւտորմին: Այդ շրջանը ունեցած չենք:

Կան նաեւ Ֆրոյտականները: Մարքս եւ Ֆրոյտ՝ առանձին երկու ճամբաներ, որոնք օր մը պիտի միանան, որովհետեւ երկուքն ալ կեանքի կարեւոր ակերը եղած են: Ադամիս-սեռականութիւն եւ այդ երկուքով ստեղծուած հոգեկան բարոյք: Մարքս եւ Ֆրոյտ ոչ միայն ուզեցին վերլուծել կեանքը, անհատը, հասարակութիւնը եւ արուեստը, այլ նաեւ տօքո. Բէքլիկեանի «Շէմի Տուտու»ի հեքեաքները, որպէս ենթագիտակցական ապրումներու ստեղծագործութիւն: Այդ հետաքրքրական դաշտը վերլուծելու փորձեր եղած են միայն:

Ունի՞նք քննադատութիւն:

Մեր քննադատները գրեթէ պատահական եղած են:

Մեր բանաստեղծը, մեր վիպագիրը, «բարիին ու ճշմարտին» հաւատացող ուսուցիչը, եկեղեցականը եղած են մեր քննադատները՝ նետուելով իրենց հմտութեան, ձգտումին եւ գրական ճաշակին:

Զօպանեան մէկն էր անոնցմէ: Ան լաւ աշխատանք ըրաւ՝ առաւելապէս մեջտեղ բերելով արժէքները՝ սկսեալ մեր միջմարտեան տաղերգուներէն: Անոր դերը շինարար եղաւ՝ գտնելով եւ մեկնաբանելով արժէքները, երբեմն ալ չափազանցելով միջակները:

Արտաշէս Յարութիւնեա՞ն:

Ան առաւելապէս ուժ տուաւ իր բանաստեղծի երեսակայութեան եւ ոճին՝ յաճախ հեռանալով խնդրոյ առարկայ իր նիւթէն: Տեսակ մը խուսափում: Ոճի երեսակայութիւն մը, որ Փարիզէն կու գար եւ այդքան, այդպէս կոչուած մեր պոլսավարի քննադատներուն համար ամենէն հեշտ ձեւը դարձաւ:

Օշականը ... որ տօքո. Բէքլիկեան կ'ընդունի աւելի քննադատ, քան գեղարուեստական գրող. զարմացայ, որ անոր գրա-գեղարուեստական արժէքներու մասին գրեթէ շատ քան չունի ըսելիք: Իմ հաշուով, Օշական աւելի արժէքաւոր գեղարուեստական գրող է, քան քննադատ: Որպէս քննադատ՝ ան առաւելապէս տարուեցաւ զուտ անձնական եւ ինքնուրոյն ճաշակով եւ բռնատրի մը քնայքով եւ առաւելապէս ժխտող եղաւ՝ ինքզինք դարձնելով կեղծուած եւ իր ժխտումով որեւէ քան չստեղծագործեց: Վաւերական տաղանդներու վրայ ըրած յարձակումներն ալ «նոր խօսք» ըսելու շարժառիթներով տարուեցան. ըսենք Թումանեանի, Իսահակեանի եւ Չարենցի մասին:

Օշական կարեւոր տաղանդ էր՝ որպէս գեղարուեստական գրող: Գիտեր իր բառերը դարձնել ջիղ եւ սրտի տրոփ: Եւ որպէս այդ՝ գիծ բացաւ մեր գրականութեան մէջ:

Մեր արեւելահայ դպրութեան մէջ կարելի է մեջտեղ բերել մի քանի կոչումով քննադատներ: Նիկոլ Աղբալեան մէկն էր անոնցմէ, որ մեր գրականութեան մօտեցաւ զուտ հայկական ճանապարհով, մեկնաբանութեամբ եւ ազնուականութեամբ: Յիշենք նաեւ նոյնքան խոր հայկական հմտութիւնով Մանուկ Արեղեանը, երբ կը կարդանք «Հայոց Գրականութեան Պատմութիւնը»: Երկուքն ալ այնքան հմուտ հայկականին եւ հայկական ճանապարհով մօտեցան մեր գրականութեան եւ գրական պատմութեան: Արեւմտահայ գրականութիւնը, արուեստը իր զանազան գոյներով այժմ Սփիւքի մէջ է, որ կը մշակուի: Վերջին շրջանին մեր հոգեկան Հայաստանի հողամասէն հրապարակ եկաւ՝ որպէս գրական քննադատի պատասխանատու դերով, տօքո. Համբարձում Բէքլիկեան՝ ամերիկեան իմաստով հմուտ գիտնական բժիշկ եւ դասախօս:

Հանճընցի է տօքոյ. Զէքլիկեան: Իր պատանեկան տարիքէն հայկական դպրոցի յիշողութիւններ ունի միայն եւ մանաւանդ պահած է իրենց գիտի եւ տան բարբառը՝ տալով այդ բարբառին ուժեղ նկարագիր, խառնած իր նկարագրի բնականութեան հետ: Շատ կանուխէն հայ կեանքի պայքարի ճամբուն մէջ մտած է, եւ այդ պայքարը զինք դարձուցած է անելի գործօն, անելի իրական եւ վստահ, ինչպէս իր բժշկական գիտութիւնն է:

Տօքոյ. Զէքլիկեան կը գրէ, երբ կը խօսի Չարդարեանի մասին. «Ի՞նչ կը մնայ Չարդարեանէն, որ մենք՝ չափահաս ընթերցողներս, կարենայինք կարդալ այսօր, եթէ ըլլայինք խզուած այն պորտապարանէն, որ զմեզ տակաւին կը կապէ մեր դպրոցական օրերուն, երբ ձեռքէ ձեռք կը յափշտակէինք «Յայգալոյսը»:

Տօքոյ. Զէքլիկեան շատ լաւ բառ մը գործածած է՝ «պորտապարան» (կարծեմ՝ անելի ճիշդ է գործածել պորտակապ), եւ այդ պորտակապն է, որ այսօր զինք կապած է գրականութեան եւ քննադատութեան՝ մեկնակէտ ունենալով առանելապէս եւրոպականը, եւ այդ չափով ալ ըսելիքներ ունի եւ յաճախ պակասութիւններ կը գտնէ: Հասկնալի է, երբ եւրոպական գրականութեան ճանապարհով կը մտնեցուի հայկական գրականութեան:

«Շէմի Տուտուն եւ Շիրվանգատէ» ուսումնասիրութեան մէջ Զէքլիկեան մտնեցած է մեր նորավէպերուն՝ չափանիշ ունենալով Մովսէսեանի եւ Չեխովի, թէ ի՞նչ չափերով հայ հեղինակը կրցած է ինքզինք արդարացնել Չեխովի եւ Մովսէսեանի չափանիշով, եւ կ'աւելցնէ. «Չեխով եւ կամ Մովսէսեան պիտի սիրէր այս կամ այն հեղինակին նորավէպը», որ ինքն տօքոյ. Զէքլիկեան ալ պիտի սիրէր:

Տօքոյ. Զէքլիկեան ինքը առանձինն չէ իր այդ ձեռի մտնեցումով: Իրմէ շատ առաջ, առանելապէս սքոլաստիքներու շրջանին, այդ մտնեցումը արդէն ընկերային եւ գրական շարժում էր՝ օրինակել Եւրոպան՝ որպէս բարք, քաղաքակրթութիւն, գրականութիւն, արուեստ եւ տարագ: Մտեփան Նազարեան, Արծրունի, Նալպանտեան, Գրիգոր Օտեան ուզեցին այդ հոսանքը ստեղծել: Կը հասկնամ քաղաքակրթութիւնը, երբ թոնիրի եւ օճախի տեղ վառարան գործածուի, եւ ճրագի տեղ ելեքտրականութիւն, բայց երբ հարցը ինքնուրոյն գրականութեան հետ է, հայկական ինքնատիպութենէն շատ բան կը կորսնցնէ. ինքնատիպ ստեղծագործութիւնը անելի արժէք է, եթէ նոյնիսկ տկար ըլլայ:

Մեր սիրելի Զէքլիկեանը Շիրվանգատէէն առաջ եղածները «Շէմի Տուտունի» բաժնին մէջ կը ձգէ: Եւ ո՞ր ազգն է, որ Շէմի տուտուններու շրջաններէն ժառանգած չէ իր հարուստ գրականութիւնը: Մեր գրական աշխատանքներու թերութիւնը եղած է այն, որ մենք կրցած չենք մշակել

Շէմի Տուտունի հեքեաթները: Չարդարեան իր լեզուի գրական ճաշակին գոհեց իր տուած հեքեաթները, նոյնպէս եւ Օշական: Այլ խօսքով՝ մենք չունեցանք մեր Անտրսընը, Կրիմ եղբայրները եւ Փիրոն: Հարուստ եղած է իրանական ժողովուրդը «Շէմի Տուտունի» հեքեաթներով՝ պատասառը ճէյմս Դոյսի, Յիթսի, Օ.Վայլտի եւ շատերու, որոնք տեղ բռնած են եւրոպական գրականութեան մէջ:

Գիտուած է, որ հարուստ հեքեաթներ ունեցող ազգեր ունեցած են հարուստ գրականութիւն:

Տօքոյ. Զէքլիկեան Չեխովի եւ Մովսէսեանի գծով մեր գրականութեան մէջ կարեւոր տեղ կու տայ Շիրվանգատէին՝ ծանրանալով անոր «Արթիւքը» վիպակին վրայ, եւ որպէս այդ՝ իր լուսագոյն ընտրութիւնը ըրած է, որովհետեւ այդ վիպակը կու գայ ռուսական գծով, եւ կարելի է ըսել՝ ռուսականը իր բարեբար ազդեցութիւնը ըրած է Շիրվանգատէին վրայ: Այն ռուսականը, որ ուժեղացուցած էր իր սլաւոնական գիծը եւ իր ծանր ձեռքը ըրած էր եւրոպական գրականութեան վրայ:

Գիտնականը երբ արուեստի, առանելապէս զգացական աշխարհի մէջ կը նստէ, անելի իրական կը դառնայ: Զգացական եւ հոգեկան կեանքը եւս ունի իր գեղձերը, լիարող, ստամոքսը եւ մանաւանդ գգայարանքները: Տօքոյ. Զէքլիկեան այդպէս ալ մայած է գրականութեան վրայ եւ փնտռած է մարմնին ու գգայարանքներուն չափ իրականը: Գիտնականի մը խստութիւնը կայ, երբ կը գրէ. «Վիպագիրը իրատունը չունի արձանագրել այդ դրուագները, որոնց ինք տեղեակ չէ: Ան պէտք չէ գրի առնէ խորհուրդները կամ խօստածքները, գորս ինք չէ լսած ու չի կրնար լսած ըլլալ ուղղակի կամ անուղղակի»:

Տաղանդաւոր է, կ'ըսենք, գրող մը, որովհետեւ կը գգայ, կը մտածէ, կ'եւրոպական է այն բոլորը, որ մարդկային է. մարդկային է ոճիւրը, գողութիւնը, սէրը, նախանձն ու ատելութիւնը: Իրական վիպագիր մը այդ բոլորով կը կերտէ իր վէպը: Դժուարը իրական ըլլալն է:

Տօքոյ. Զէքլիկեան ունի այն բոլոր շնորհները, որ կը պահանջուի գրական քննադատէ մը, ունի բազմակողմանի հմտութիւն եւ գրական լայն ընթերցանութիւն: Ան իր գրական հմտութիւնը առանելապէս կը պարտի իր զարմանալի սուր յիշողութեան: Իր սիրած բանաստեղծութիւնները զիտէ գոց արտասանել: Մի քանի անգամ այցելած է Հայաստան, շատ մօտ ապրումներով կը հետեւի հայ հեղինակներու գեղարուեստական աշխատանքներուն: Եւ արդէն իր գրադատական աշխատանքներուն մէջ ցոյց կու տայ իր բեղուն հմտութիւնը, որ կու գայ տեսակէտ մը պաշտպանելու:

Իր տեսակէտին մէջ ազատ է՝ առանց ձգտումի: Եթէ կայ ձգտում մը, առանելապէս արդիական ըմբռնում է գրականութեան եւ մանաւանդ

մարդկայինն ու իրականը, եթե կարելի է այդ ձգտում ըսել: Տօրդ. Քերլիկեան ոչ միայն չի փնտռեր բարոյականը, այլև չի փնտռել ձգտումնաւոր գրականութիւնը: Աւելի կը սիրէ, երբ պատմուածք մը ունենայ հոգեկան բարոյոյ՝ պայմանով, որ այդ բարոյոյթներուն մէկ մասը ձգուի ընթերցողին, աւելի ճիշդ՝ այնքան իրական ըլլայ, որ ընթերցողին մէջ լրանայ պակասը: Արդեօ՞ք այդ է պատճառը, որ գրեթէ չի յիշեր ո՛չ Բաֆֆին եւ ո՛չ Չ. Մունդուկեանը: Այդ երկու կարեւոր հեղինակները Շիրվանգատէն առաջ եղած են: Պիտի չուզէի զանոնք «Շէմի Տուտուի» շրջանին մէջ ձգել:

Ան ոչ միայն չի բաժնէր ձգտումնաւոր գրականութիւնը, այլև չ'ուզեր տեսնել, որ հեղինակ մը իր ստեղծագործութիւններուն մէջ իր շեշտուած կերպարանքը դրած է: Նոյնիսկ վարպետ Ջօհրապին մէջ կը տեսնէ այդ եւ առանձինն հաճոյքով կը խօսի Ահարոնեանի մասին:

Տօրդ. Քերլիկեան ո՛չ միջովայր մկատի ունի՝ որպէս մեկնակէտ, եւ ո՛չ ալ հասարակական կարգ կամ դասակարգ, գոր վերջերս այնքան անհմաստ կերպով չափազանցեցին մարքսիստները: Ան կը մտնեայ զգայարանքներու եւ գործօն գեղծերու օրէնքով՝ որպէս գիտնական բժիշկ:

Ֆրո՞յտ ... Այդ եւս չենք տեսներ, եւ սակայն շատ կը հաւնի ճոյսը եւ Փրուստը: Ջարդարեանը կը գտնէ արուեստակեալ եւ սակայն կը հաւնի անոր «Մեւ հաւը կանչեց»ը, որ կայ կեանքին թաքնուած անհանգիստ շարժումը իր նախնական ձեւին մէջ:

Երբեք զարմանալի չէ, որ գիտնական բժիշկները նոյնքան հետաքրքրուած ըլլան գեղարուեստական գրականութեամբ եւ ստեղծագործին: Գեղարուեստական գրականութիւնը իր վերացական ձեւին մէջ իսկ զգայարանքներու արտայայտութիւն է՝ այնքան գործօն, որքան գեղծերը: Եթէ մարդը ստեղծած է արուեստ՝ բանաստեղծութիւն, երաժշտութիւն, գրականութիւն եւ երկինք, այդ բոլորը գոյութիւնը պաշտպանելու սահմաններուն մէջ կ'իյնան: Գեղարուեստով կեանքը ինքզինք է, որ կը պաշտպանէ եւ կամ կ'ապրեցնէ: Այդտեղ գիտութիւնն ու գեղարուեստը կը միանան իրարու:

Կար առեն մը, որ հոգեբանութիւնը մասն էր փիլիսոփայութեան: Այսօր արդէն կարեւոր գիտութիւն է: Պիտի գայ առենը, որ այսպէս կոչուած վերացականութիւնները վերլուծուին զգայարանքներով եւ գեղծերով: Ուրիշն ճէյմս շատ կարեւոր դեր կատարեց՝ կապելով հոգեբանութիւնը մարդկային ֆիզիքական կառուցումին հետ: Այդ գիտութիւնը դեռ իր լրումին հասած չէ Եունկի եւ Ֆրոյտի հետեւողներուն մէջ: Նման պեղումներէն հետո՛ւ չէ նաեւ բժշկական գիտութիւնը:

«Շէմի Տուտու եւ Շիրվանգատէ» գլուխին մէջ տօրդ. Քերլիկեան բաղդատութեան եւ վկայութեան կանչած է բազում հեղինակներ, իսկ «Չա-

րենց» աշխատանքին մէջ շրջանի բանաստեղծները զօրակոչի ենթարկած է՝ իր տեսակէտը ժխտելու եւ կամ հաստատելու համար: Թէքնիք կերպով կրնայ տուժել այդ ձեւ բանասիրական աշխատանք մը, եւ սակայն հետաքրքրական է ընթերցողին համար Չարենցին հետ ծանօթանալ Մայակովսկիին՝ նոյն մանրամասնութեամբ: Ճիշդ է, որ դեզերուն կայ, բայց տօրդ. Քերլիկեան տուած է Չարենցին դիմագիծը յատկանշական գծերով: Տուած է անոր անհանգիստ եւ արագ սպառումը կեանքին, հիւանդագին վիճակը եւ բանաստեղծութեան լուսաւոր թռիչքները:

Անտարակոյս, տօրդ. Քերլիկեանի այս գիրքը, որ նոր ճամբայ կ'ելլէ, պիտի բռնէ իր տեղը՝ որպէս հետաքրքրական մտեցում հայ գրականութեան: Գրականութիւնը իր հոգեկան աշխարհի մէջ կարեւոր տեղ բռնած է: Ունի փայլատակումներ եւ բանաստեղծութեան հասած թռիչք:

Բաղձալի է, որ, Չիխովի որակումով, գրականութիւնը, որպէս սիրուի, միշտ ալ պահէ իր պչրանքն ու թարմութիւնը տօրդ. Քերլիկեանին համար եւ մնայ հաւատարիմ<sup>2</sup>:

## ՉԵՌԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐ

### <ՈՌԻԲԵՆ ԴԱՐՔԻՆԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՈՓԻԻ>

Իսկապէս հաճելի է տեսնել այն լաւ խանդավառ ժողովուրդը, որ կու գայ տօնելու վաւեր մշակի <անընթ. > յորելեանը:

Հասնիլ իմաստութիւնով ծանրացած տարիքի մը, բաց աչքերով տեսնել իր ճամբան, հարստացնել հոգեկան կեանք մը իր ցեղի ապրումներով եւ մանաւանդ բաշխել իր հոգեկան հարստութիւնը: Անտարակոյս լաւագոյն մխիթարութիւնն է, եւ ես վստահ եմ, որ մեր այսօրուայ պատկառելի յորելեարը՝ ընկեր Դարբինեան, այդ մխիթարութիւնն ունի այսօր: Հայ գործիչը, խմբագիրը գնահատանք ակնկալած չէ, ինչքան ալ մարդկային ըլլայ այդ ակնկալութիւնը, որովհետեւ իրաւ գործիչի մը նպատակի մը համար հետապնդումն է անհրաժեշտ, ինչքան ծանր, քարքարոտ ըլլայ այդ ճանապարհը: Կարելի չէ սիրտ մը հանել եւ ապրիլ ուրիշ կեանքով մը:

Ամերիկայի մէջ մօտիկ եղած եմ ընկեր Դարբինեանին: Տեսած եմ, թէ ինչպէս մեծ հոգիով նայած է ներքին անձնական պայքարներու վրայ<sup>2</sup>: Այդ պայքարներուն մէջ ոչ մէկ ընկերկում, որովհետեւ նպատակը իր մէջ աւելի ուժեղ է, մանաւանդ որ ճշմարիտ է այդ նպատակը: Այդ ուժը ինքն է, ընկեր Դարբինեանը, որպէս ազգային գործիչ, որպէս մեծ խմբագիր, որպէս մշակոյթի առաջնորդ եւ որպէս դաշնակցական ղեկավար:

Դաշնակցութեան ազգային ըմբռնումին մէջ միշտ ալ ուժեղ եղած է մարդկայինը: Այդ գիծը ուժեղ եղած է նաեւ մեր ազգային պատմութեան մէջ: Գուցէ տառապանքը, գուցէ քրիստոնէական նուիրումով մեր պայքարները ուժեղացուցած են մեր մէջ մարդկայինը: Ընկեր Դարբինեան առաւելապէս այդ հիմնական գծով տարած է աւելի քան 50 տարուայ իր ազգային ու քեղմնատր աշխատանքները:

Անհատը, ազգը կենսաբանական գոյութիւն է, հետեւաբար՝ առողջութիւն: Առողջութիւն է ձգտիլ ազատութեան, ձգտիլ նպատակի մը: Եւ ես կը հաւատամ, որ ոգին նոյնպէս կենսաբանական իրողութիւն է: Ոգին կու գայ մեր գոյութիւնը տեսականացնելու, մեզ ապրեցնելու, եւ կրնայ քանդուիլ այդ ոգին, ինչպէս կը քանդուին բջիջները եւ կամ երիկամունքները: Նպատակները ոգիներու պէս կու գան մեր գոյութիւնը ապահովելու եւ զեղեցկացնելու մեր կեանքը:

Յիսուս իր աշակերտներուն բաժնեց հաց եւ գինի, որպէս իր մարմինը եւ արիւնը: Այդ ձեռով ան մարմին կու տար իր նպատակին, եւ ճիշդ Յիսուսի նկանակին պէս բաշխեցին իրենց մարմինէն եւ արիւնէն Ջաւարեան մը, Քրիստափոր մը, Ռոստոմ մը եւ բոլոր անոնք, որոնք իրենց խաչը շակեցին<sup>3</sup>, որոնք հաւատքի մը իմաստութիւնը ապրեցան: Ապրեցան ամէն օր զոհուելու համար Երուսաղէմի ու Հռովմի փողոցներէ անցնող առաքեալներու նման: Իսկապէս ինչքան հօգօր է նպատակը: Այժմ անոնք ոգիներ են միշտ մեզի հետ եւ մեր գոյութիւնն է, որ կը պահեն որպէս ազգ, կը պահեն մեր մշակոյթը: Անոնք մեր շուրջն են, կը զգանք անոնց շունչը, ու կ'ապրին մեզի հետ: Եւ անոնք յաճախ աւելի զօրաւոր են, քան բանակները: Երէկ կրնայինք անոնց ձեռքը սեղմել, միասին հացի նստիլ, կատակել եւ ժպտիլ: Մենք կը պարծենանք մեր ոգեկան սուրբերով, ինչպէս ուժեղ ազգ մը պիտի պարծենար իր բանակներով<sup>4</sup>:

Շատ կանուխէն սկսած է հետաքրքրուիլ Դաշնակցութիւնով: Դեռ պատանի, օգտակար եղած է Սասունեան յանձնախումբի հանգանակալին աշխատանքներուն:

1905ին Գերմանիոյ մէջ անձնապէս կը ծանօթանայ ռուս յեղափոխական կուսակցութեանց կարեւոր անդամներուն հետ, կը տարրուի անոնց գրականութիւնով: Մոսկուայի մէջ կը մասնակցի յեղափոխական կուսակցութեանց բազմաթիւ ժողովներուն: Աւելի հասունցած յեղափոխական եւ ազատական սկզբունքներով կը սկսի հետզհետէ աւելի հետաքրքրութիւն ցոյց տալ Հ.Յ.Դաշնակցութեան, որովհետեւ զաղափարի մօտիկութիւն կը գտնէ սոցիալ յեղափոխականներուն եւ Դաշնակցութեան միջեւ: Մամուլան այդ շրջանին ընկերվարութիւնը մարդկութիւնը ազատագրելու ընկերային եւ քարոյական շարժում էր իրական եւ աւելի մարդկային: Դարբինեան այդ մարդկայինն էր, որ կը տեսնէր Դաշնակցութեան մէջ, եւ կը սկսի ռուսերէնով դասախօսութիւններ տալ Դաշնակցութեան համար: Եւ արդէն մտած էր կուսակցական աշխատանքի, Դարբինեան գտած էր իր հոգին կարճ փնտռութիւնով: Հայ ժողովուրդն էր այդ, իր հոգիին կանչն էր՝ նուիրուիլ հայ ազատագրական շարժման:

Երբ իր շրջանի եւ իրմէ յետոյ եղած ուսանողները մեծ մասամբ, ըլլայ Ռուսիոյ, թէ Եւրոպայի մէջ, թափառումներուն մէջ էին եւ այդ թափառումներուն մէջ ալ կորսուեցան՝ կրկներեւոյթներու ետեւէն վազելով, առանց անդրադառնալու, որ իրականը իրենց մէջ հայն էր: Շատերը կորսուեցան արդէն, եւ ուրիշներ պահեցին 18-րդ, 19-րդ դարերու եւրոպական բռնաճիգը Դաշնակցութեան եւ մեր հայ կեանքի մէջ՝ յաճախ հեռու մնալով իրականութենէն: Եւրոպական մտածողութիւնով քարեմտրոգիչներ էին

անոնք, ինչպէս եղան Նալպանտեան, Ս. Նազարեան, Արծրունի<sup>5</sup>: Եւ ճերմակ ձեռնոցներու այդ աշխատանքը գուցէ տեւէր երկար, եթէ Արովեան չի բանար իրական եւ լուսաւոր ճամբայ: Հայ ժողովուրդէն ձգուած ճամբան էր այդ, ուր երեւցաւ Բաֆֆի: Նոյն ճամբուն վրայ սկսան մեր յեղափոխական խլրտանքները եւ Դաշնակցութիւնը: Դարբինեանի ճամբան էր այդ՝ այնքան իրատես եւ լուսաւոր:

1907ին Մոսկուայի մէջ <հայ> ուսանողներ իրենց ընկերվարական ծայրայեղութիւններով հասած էին հոն, որ կը պահանջէին համագումար՝ անջատուելու Դաշնակցութիւնէն եւ մոռնալ Հայկական հարց, Թուրքիոյ դէմ եղած պայքար եւ անշուշտ մոռնալ ազգային ասանդութիւն, պատմութիւն, այլ խօսքով ազգային եւ ցեղային ոգին ջնջել՝ որպէս աղէտաբեր ընթացումներ, եւ մտնել համամարդկային շարժումին մէջ, որ ծայրայեղ ընկերվարութիւնն է: Այդ արդէն տկարութիւն է, պարտաւորականութիւն է արդէն: Այդ համագումարին մէջ էր, որ ընկեր Դարբինեան, Աւետիք Շահխաթունիի հետ միասին կ'աշխատի փրկել այդ անջատումը եւ լծել այդ ուսանողութիւնը մեր ազգային շարժումին, որ նուիրականն է բոլոր շարժումներուն, ուր քրիստոնէութիւնն իսկ իրական հիմքերու վրայ դրուած է հոն: Դարբինեան իր արժեքաւոր յուշերուն մէջ կը յիշէ սօքր. Չօմները, որ Խարբերդի գերման վարժարանին տնօրէնն էր, եւ ես ինքս ալ առիթ ունեցած եմ ուսանողութեանս պատանեկան շրջանին զինքը ճանչնալու: Չօմներ ճանչցած է Արամը, Իշխանը, Սարգիսը, Վռամեանը, սօքր. Չարիելը եւ կը խօսի Դարբինեանին, որ իրական քրիստոնէաները անոնք են, ոչ թէ մենք՝ միսիօներներս, թէ եւ քրիստոնէութիւն կը քարոզենք: Անոնք, յեղափոխական ըլլալով հանդերձ, կ'ապրէին քրիստոնէական կեանքով, հաւատարիմ քրիստոնէական կրօնի ոգիին: Ինչպէս կ'ապրէին սուրբերն ու առաքեալները:

Դարբինեան այդ հաւատքով էր, որ կը մտնէր մեր կուսակցական, ազգային մշակութային աշխատանքներուն մէջ դեռ շատ երիտասարդ եւ իր սեփական մտածումներով:

1906ին Դաշնակցութեան կողմէն պատգամաւոր կը դրկուի Խրիմեան Հայրիկի կազմակերպած Ընդհանուր ազգային ժողովին: Խրիմեանի կողմէն շատ յանդուգն ձեռնարկ մը, որ անմիջապէս կ'արգիւտի ցարական կառավարութեան կողմէն, եւ պատգամաւորները կը ցրուին: Դարբինեան՝ էն երիտասարդը անոնց մէջ, մօտէն կը ծանօթանայ Չարեանին, Ահարոնեանին, Վարանդեանին, քժիշկ Աթապէկեանին եւ մօտ 60 պատգամաւորներուն հետ: Այդ առիթով անոնց հետ կ'այցելէ Անիի աւերակները:



1909ին ռուս կառավարութեան կողմէն Դարբինեան խիստ հալածանքի կ'ենթարկուի ծանօթ դաշնակցականներուն հետ: Համալսարանը տակաւին նոր ւարտած՝ կը յաջողի կեղծ անցագրով անցնիլ Օտեսայ եւ յետոյ Պոլիս, ուր կար սահմանադրութեան առիթով ստեղծուած վերելք ու թափ:

Անհատի մը եւ կամ ազգի մը նկարագիրը առաւելապէս ազատութեան մէջ է, որ կը դարբնուի: 1909ը մեր ազգային նկարագիրը կազմաւորումի շրջանին մէջ էր: Կար առողջ գիծ մը, որ կու գար մեր ազգային անդութենէ, պատմութենէ, մեր լեզուէն, մեր գրականութենէն եւ մեր յեղափոխական շարժումներէն: Այդ ազատութեան մէջ երեսն եկան նաեւ դարերով ստրկութեան ձգած արհաւիրքը՝ մեր պարտուողականութիւնը՝ հակայեղափոխականը, պահպանողականը, որ մինչեւ վերջն ալ չի կրցաւ գիտակից դառնալ իր կարեւոր կոչումին, եւ ուսանողներու խռովիճաղանջ մը, որոնք կորսնցուցած էին իրենց սեփական մտածողութիւնը. քաւական է, որ Քանդ ըսած է, ըսած է Նիցշէն եւ կամ Ժան-ժաք Ռոսոն: Իյնալ ծայրայեղութիւններու մէջ, յարձակիլ կրօնքի վրայ, մեր բարքերուն, մեր անհոգութիւններուն վրայ, ստորագնահատել ինչ որ հայկական է: Այդ հոսանքը հետզհետէ կը հասներ մինչեւ գաւառի ազատ <սերմնացան>: Երոպայի հայ ուսանողներու կողմէն այդ օրերուն հրատարակուած «Ուսանող» պարբերաթերթը պատկերն էր այդ շրջանի ուսանող սերունդին, ըլլար Երոպայի, ըլլար Պոլսոյ, ըլլար արեւելահայ, թէ արեւմտահայ ուսանողներու: Գմարսուած նիւթերու մէջ կ'այլանդակուէր նաեւ հայ լեզուն: Չաւեշտ մը, ուր սերունդի մը ողբերգութիւնը կար: Այդ տկարութիւններուն դէմ պայքարեցաւ մեր ժողովուրդի ապրելու առողջ բնագոյրը, պայքարեցաւ Վարուժանով, Սիւսանթոյով, Չօհրապով, Չարդարեանով, Կոմիտասով: Առաւելապէս Պոլսոյ մէջ այդ բուն պայքարին լծուեցաւ նաեւ Դարբինեան իր դասախօսութիւններով, մասնաւորապէս ուսանողներուն համար:

Այդ պայքարին լծուեցաւ «Ազատամարտ»ով՝ խմբագրելով նաեւ «Ազատամարտ» շաբաթաթերթը, ուր կար գրական ճաշակ եւ ուղղութիւն: Դարբինեան չներեց որեւէ շեղում, որ կրնայ հայ ժողովուրդի նկարագիրը խաթարիլ: Ուզեց պաշտպանել նաեւ կրօնքը, որուն դէմ ուժեղ յարձակումներ կային: Անշուշտ կարելի չէր Տարվին մը եւ կամ Հեզել մը կարդալով յարձակիլ հայ եկեղեցիին վրայ, ուր թաքնուած է հայ ժողովուրդի ազգային հաւատքը, եւ մաս կազմած էր մեր դարաւոր մշակոյթին: Վարանդեան իր բոմանթիք նկարագրով, բանաստեղծի ռճով եւ թափով, առաւելապէս երոպական մտածողութեան, գաւառի մտաւորական, տիրապե-

տած էր նոր սերունդի ուսանողներու վրայ: Դարբինեան, քննադատելով Վարանդեանի միշտ ծայրայեղ հակումները, նոր սերունդը իրականութեան կը կանչէր: Նոյն մտահոգութիւնով վեճ բացաւ <անընթ> ծայրայեղութիւններու դէմ: Ու Դարբինեան իր դասախօսութիւններով, իր յօդուածներով հասաւ հոն, ուր չափի պակասը կար: Ան իր գրական քննադատութիւններով հասաւ նաեւ պոլսահայ բանաստեղծներուն եւ արձակագիրներուն: Տեսաւ արժէքներ եւ քննադատեց անոնք, որոնք կարեւոր արժէք չէին բերեր մեր ազգային գրականութեան եւ որոնց մէջ ղղմուկ կար՝:

Յետոյ գրական քննադատի այդ ուժը Դարբինեան առաւելապէս կիրարկեց իր խմբագրած թերթերուն եւ ամսագրերուն մէջ որպէս ճաշակ եւ ուղղութիւն: Պոլսոյ այդ շինարար աշխատանքէն յետոյ 1913ին, որպէս «Ազատամարտ»ի թղթակից, կը մեկնի Պերլին կազմելու նաեւ հայ եւ գերման միութիւնը: Ճամբան կը ձեռքակալուի ռուսական լրտեսներու հետապնդումներուն պատճառով: Երկու շաբաթ քանտ մնալէն յետոյ ազատ կ'արձակուի շնորհիւ ռուսականի մը բարեացակամ տրամադրութեան: Հայ եւ գերման միութեանը կը գործակցի տօքո. Լէփսիուս, որ մինչեւ վերջն ալ մնաց հայ ժողովուրդին բարեկամը: Կը հրատարակուի գերմաներէն «Մետրոպ» անուն օրկան մը, որ երկար կեանք չ'ունենար:

Դարբինեանի համար աշխատանքի նոր շրջան մը կը սկսի, երբ կը պայթի Ա համաշխարհային պատերազմը: Կը դառնայ Ռուսիա: Երբ կը հասնի Թիֆլիս, կը տեսնէ խանդավառութիւն կամաւորական շարժման շուրջ: Յովհաննէս Քաջազնունիի հետ ներկայ կ'ըլլայ այդ շարժումը կազմակերպող մարմնի խորհրդակցութեան: Կը յայտնէ իր մտավախութիւնը, որ կամաւորական շարժումը կրնայ ծանր հետեւանքներ ունենալ:

Դարբինեան Պաքուի մէջ կը ստանձնէ «Արեւ» թերթի խմբագրութիւնը, իսկ 1916ին կը խմբագրէ արդէն «Պաքու» թերթը: Յետոյ Պաքուի հայ հարուստներու օգնութեամբ կը հրատարակուի «Գործ» շատ կարեւոր գրական ամսագիրը՝ խմբագրական մարմնով եւ Դարբինեանի զխաւոր խմբագրութեամբ: Աշխատանքը կ'ընդհատուի հայ-թաթարական կռիւններուն պատճառով: Այդ օրերուն կը կազմուի հայ Ազգային խորհուրդ, որուն քարտուղար կը նշականուի Դարբինեան:

1918ին՝ մայիսի սկիզբը, Սիւսոն Յակոբեանին հետ կը մեկնի Մոսկուա սովիէթական կառավարութենէն ռազմական օգնութիւն խնդրելու դէպի Պաքու արշաւող թրքական բանակներուն դիմագրաւելու համար: Կը յաջողին Մոսկուայէն գօրամաս մը հասցնել Պաքու, եւ սակայն նոյն օրը անզլիացիները կ'ուզեն հասնիլ Պաքուի պաշտպանութեան համար՝ պայմանով, որ հետանայ պոլշեփկեան զօրամասը: Երբ պոլշեփկները կ'ընդ-

դիմանան, Դաշնակցութիւնը, ինքը զինաթափ ընելով, այդ զօրամասը նաուվ կը վերադարձնէ Ռուսիա: Նախն հակապոլշեիկ նաւաստիները կը տանին զանոնք Անդրկասպեան երկիրները եւ կը յանձնեն ճերմակ ռուսներուն: Երբ անոնց սպաննուած ըլլալու լուրը կը հասնի Մոսկուա, այնտեղ իբր պատանդ պոլշեիկներուն կողմէն կը բանտարկուին բժիշկ Ջարիկեւ եւ Լիպարիտ Նազարեան: Դարբինեան կ'աշխատի օժիքը ձեռք չտալ. շնորհիւ իր կապերուն՝ գաղտնի յարաբերութեան մէջ կը մտնէ Սահակ Տէր-Գարբիէլեանին հետ ու կ'ազատէ երկու ընկերները:

Դարբինեան քաղաքական կռուի առեւն հազար ու մի վտանգներուն մէջէն կը շարունակէ իր ճամբան Ռուստով, Երատերինոդար, Պաթում եւ Թիֆլիս: Այս մասը արդէն գրական արժէքով տուած է իր առաջին յուշերուն մէջ: Կը հասնի Երեւան 1919ին: Խատիսեանի առաջարկով կը ստանձնէ Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարութիւնը: Իր նախարարութեան շրջանին աշխատանք կը կատարէ հայացնել դատարանը: Կը կազմէ յանձնախումբ հմուտ բանասէր Մանուկ Արեղեանի գլխաւորութեամբ: Կը հրաւիրուի արեւմտահայ Հմայեակ Խոսրովեան եւ ուրիշ արեւմտահայ իրաւաբաններ՝ մշակելու հայկական օրէնսգիրք մը: Դարբինեան կը հիմնէ նաեւ երդուեալներու դատարան:

Հայաստանի խորհրդայնացման նախօրեակին խումբ մը ընկերներուն հետ կը մեկնի Երեւանէն արտասահման անցնելու համար: Որպէս խիստ հակառակորդ պոլշեիկներուն՝ անտարակոյս ինք պիտի ըլլար առաջին զոհը: Ճանապարհին ձերբակալուելով՝ կը տարուի Երեւանի բանտը՝ ամէն օր կացինահարուելու սպառնալիքի ներքեւ, երբ վրայ կը հասնի Փետրուարեան յեղափոխութիւնը: Մահուան սպառնալիքը փորձաքար մըն է, որ մարդիկ աւելի շատ երեւան կը բերեն իրենց իսկական տկարութիւնը: Ես ինքս շատերէ իմացեր եմ, որ Դարբինեան մահուան սպառնալիքի տակ առանց ընկրկելու ցոյց տուած է յանդուգն ճակատ՝ պաշտպանելով հայ ժողովուրդին իրաւունքը:

Դարբինեան, բանտէն ազատուելով, անմիջապէս կը ստանձնէ «Ազատ Հայաստանի» խմբագրութիւնը եւ կը սկսի աւելի բուռն պայքար պոլշեիկներուն դէմ: Մեր իրականութեան մէջ Դարբինեանն էր, որ առաջին ահագանգը հնչեցուց պոլշեիկեան վտանգի դէմ, երբ Երոսպան իսկ չէր անդրադառնար այդ վտանգին:

Պատասխանատու պաշտօններու վրայ եղող մեր ընկերները իրենց մարդկային նախ մտածումներով նոյնիսկ առարկեցին Դարբինեանին, երբ կ'ուզէր փութացնել ձերբակալուած պոլշեիկներու դատավարութիւնը, երբ ժողովուրդի դիմադրողականութիւնը քանդելու համար Երեւանի

մէջ լեցուած էին պոլշեիկեան փրօպակամտիսներ: Այդ ընկերները այն առեւն միայն ըմբռնեցին, երբ արդէն փախուստի ճամբան բռնեցին Ջանգեզուրի վրայով դէպի Պարսկաստան:

Անշուշտ կարելի չէր փրկել Հայաստանը ռուսական բանակներէն Դարբինեանի ահագանգով: Պարսկաստանի մէջ ան փոքրիկ գրքոյկներով շարունակեց իր պայքարը պոլշեիկներուն դէմ եւ ըսել, որ քանդող քաթարն է զարթնեալ ռուսին մէջ, ըսել, որ ռուսական համայնավարական շարժումին մէջ սմանկացեր է բոլոր մարդկային բարոյականութիւնը: Ճիշդ տեսած էր Դարբինեան, երբ պոլշեիկմը իր նախնական շարժումին մէջ էր:

Շատ տարիներ պիտի անցնէին, պիտի տեսնային, թէ ինչպէս փոքր ու մեծ ազգեր այդ ահաւոր ճիրաններու տակ ինկան: Շատ ուշ հասկցաւ Արեւմուտքը, երբ ուշ էր, եւ այսօր 3-րդ պատերազմի սարսափը կայ արդէն:

Մահուան սարսափը, պոլշեիկեան զօրքերը կրկնուի կը հետեւէին, երբ Հայաստանը կառուցանող ժողովուրդը, ընտրանին՝ Դաշնակցութիւնը, հալածուեցաւ իր ստեղծած Հայաստանի սահմաններէն դուրս: Իսրայէլացիներու դիւցազնական «Ելիցն» էր՝ միայն այն տարբերութեամբ, որ Մովսէս կաթ ու միշտ բոխող երկրի խոստումն ուներ իր ժողովուրդին, եւ կար Եհովա մը, որ Մովսէսին ճամբան կ'առաջնորդէր: Մեր Եհովան հաւատքն էր բոլորին, բոլորին մէջ, որոնք հեռուներէն, մօտիկէն եկած էին, եկած էին անոնք, որոնք կորսնցուցած էին իրենց հայրենի լեզուն, անոնք, որոնք խոռունկէն իրենց հոգիէն կանչի մը ձայնը առած էին, եկած էին իրենց արիւնով Հայաստանի սահմանները կառուցանելու: Այդ «Ելից»ին մէջէն Դարբինեան, Շանթ, Աղբալեան, Զաջազնունի (տալու համար մի քանի անուններ միայն)՝ ամէն մէկը մէյմէկ Մովսէս, իսկ Եհովան՝ ինքը հայ ժողովուրդը: Անոնք եկան այս անգամ անտիրական գաղութներու մէջ աշխատելու: Շանթ, Աղբալեան ճանարան պիտի կառուցանէին Պէյրութի մէջ, իսկ Դարբինեան Ամերիկայի մէջ պիտի կառուցանէր մշակութային, գրականութեան, մեր քաղաքական ուղղութեան իսկական հաստատութիւն մը: Վերջիվերջոյ, Դարբինեանին ուղին էր, որ հիմնաւորեց Դաշնակցութեան քաղաքական ուղին առանց կանխատեսածելու, թէ տարիներ յետոյ ինչպէս կը դասաւորուէին մեր իրաւունքները եւ մեր դատը, թէ ինչ պիտի ըլլար Երոսպայի եւ Ամերիկայի դիրքը: Երբ Երոսպա աւելի տկարացած էր, Ռուսիոյ հարեց՝ որպէս դաշնակիցը Երկրորդ պատերազմին:

Դաշնակցութիւնը երբեք ալ փորձ չըրած չէ դիւանագիտութիւն խաղալ, այդ երբեք չի սազեր, ինչպէս կ'ըսեն, որովհետեւ դիւանագիտութիւնը բան

մըն է, տեսակ մը կենդանի, որ ո՛չ ձեռն ունի եւ ո՛չ նկարագիր: Մենք միշտ ուղիղ եղած ենք, գուցէ տուժած ենք, եւ սակայն այդ ուղիղ գիծն է, որ պահած է մեր ցեղը: Այդ նոյն գծով թէն քշուեցանք անապատ եւ սակայն պահեցինք մեր ցեղային նկարագիրը: Երկրորդ պատերազմին ունեցանք թերումներ քաղաքական պայմաններու բերումով եւ կամ դիւանագիտութիւն խաղալու արուեստին համար, եւ Դարբինեան միշտ ալ ուղիղ տարաւ իր նաւը, ո՛չ մէկ թեքում, ո՛չ մէկ տատամսում, եւ աւելի հիմնաւորեց մեր քաղաքական ուղեգիծը, ըսել կ'ուզեն՝ դաշնակցական ուղեգիծը: Ան էր, որ մասնաւորապէս Ամերիկայի մէջ աւելի ամրացուց իր պատկէշը քաղաքական պայքարին համար, պայքար մը, որ կ'սպասուէր արեւմտեան քաղաքականութեան հետ: Դարբինեան գրած է բազմաթիւ խմբագրականներ, նոյնքան բազմաթիւ յօդուածներ իր սեփական ստորագրութեամբ, այնքան կուռ եւ ուժեղ տրամաբանութեամբ, որ քլումբով իսկ կարելի չէ քանդել կտոր մ'անգամ:

Այդ նոյն թափով աշխատեցաւ մշակութային աշխատանք՝ արտասահմանի հետզհետէ հեռացող գաղութին մէջ ստեղծելու Հայկականութիւնը:

«Հայրենիք»ը դարձաւ մեր առաջնորդող օրաթերթը: Ոչ միայն ազատեցաւ տնտեսական տագնապներէն, այլեւ աշխատակիցներուն վարձատրելու իրաւունք հաստատեց: Իր նախաձեռնութեամբ սկսաւ «Հայրենիք» ամսագիրը: Շարքերը հաւատացին Դարբինեանի ու ընթացք տուին անոր առաջարկներուն, որովհետեւ ան դարձած էր նաեւ սիմպօլ մեր կուսակցական բարոյականութեան:

«Հայրենիք» ամսագիրը մեր մշակութային պատմութեան մէջ մեծ շրջան բոլորեց՝ որպէս գրական-գեղարուեստական, հասարակական, առաւելապէս ազգային եւ պատմական հրատարակութիւն, եւ ամսագիրը նուիրուած էր մշակելու միմիայն հայկականը, որովհետեւ Դարբինեանի համար արժեքաւորը միմիայն հայկականն էր: Ահա թէ ինչ բան էր, որ կը խօսէր ռուսական, գերմանական համալսարաններ աւարտող հայ մտաւորականին՝ Դարբինեանին մէջ: Կար առեն մը, որ ամսագրի շուրջ հաւաքուած էր անխտիր բոլոր հայազգի մտաւորականութիւն մը՝ չէզոքը, կուսակցականը եւ նոյնիսկ հակադաշնակցականը, որովհետեւ ճնշող, պարտադրող արժէք էր ամսագիրը:

Եւ ամսագիրը, որպէս համազգային կարեւոր հաստատութիւն, իր միջոցներով նիւթապէս օգնեց այն բոլոր արժեքաւոր մտաւորականներուն, որոնք արտոքուած արտասահման՝ հնարաւորութիւն չունէին իրենց հացը ճարելու: Ամսագիրը միայն չէր բաւեր, Դարբինեանի սրտին եւ մտքին մէջ

մեղուաջան շարժում կար, պէտք էր մտածել այստեղ ծնած եւ արդէն հեռացած հայ նոր սերունդին մասին: Պէտք է անոնց անգլերէնով ներարկել Հայկականութիւնը: Եւ արդէն «Հայրենիք Ուիլքի» եւ յետոյ «Հայրենիք Ռետու»՝ թէ՛ նոր սերունդին, թէ՛ մեր քաղաքական նպատակներու եւ թէ՛ մեր մշակոյթը ուրիշներուն ծանօթացնելու համար: Ըլլայ լայն, ըլլայ նեղ պայմաններուն մէջ՝ այդ բոլոր հրատարակութիւնները շարունակուեցան ու կը շարունակուին արդէն: Եւ պատիւ մեր կուսակցական շարքերուն, որ հաւատացին մեր բոլորի սիրելի Դարբինեանի այդ շինարար ու ստեղծագործական աշխատանքներուն:

Ինչքան պիտի ուզէի, որ այսօր Դարբինեանի կողքին նստէր մեր շարքայիններէն համեստ ընկեր մը, որպէս ժողովուրդի ներկայացուցիչ: Նժարին ծանրութիւնը նոյնը պիտի ըլլար՝ հայ ժողովուրդ եւ այսօրուայ յրեւելարը՝ ընկեր Դարբինեան: Մենք մաղթենք, որ ան ըլլայ առողջ, որովհետեւ դեռ ընելիքներ ունի, եւ կ'ուզենք զինք տեսնել միշտ ալ պատանէշին վրայ:

## ԳԵՐԱՊԱՏԻԻ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՀԱՊՈՋԵԱՆ՝

Անհատը իր զգայարանքներով, իր մտածումով և մանաւանդ հաւատքով առաւելապէս հոգեկան է՝: Եւ այդ հոգեկանն է, որ իր կեանքին կու տայ իմաստ և գեղեցկութիւն: Ինչ որ կարելի է ըսել անհատի մը համար, նոյնը կարելի է ըսել ազգի մը համար: Ազգն ալ ունի զգայարանքներ ու ներդաշնակութիւն: Թոք ունի, կը շնչէ, կը մտածէ, ուրախ է և կամ տխուր, կը զգայ, կը սիրէ, կ'ատէ, մանաւանդ՝ կը հաւատայ:

Եթէ ազգի մը և կամ հայրենիքի մը մէջ ուժեղ չէ հոգեկան ամրոցը, ինչքան ալ ուժեղ ըլլան բանակները ու արշաւին երկիրներ, այդ ազգը դատապարտուած է ոչնչանալու<sup>3</sup>:

Հայ ազգը ուժեղ բանակներ ունեցած չէ, արշաւանքներ կատարած չէ: Անոր բանակները կռուած են՝ միմիայն պաշտպանելու մեր հոգեկան հարստութիւնը: Ըսել կ'ուզեն՝ մշակոյթը<sup>4</sup>: Այդ եղած է մեր գաղտնիքը՝ կախարդանքը մեր ազգային գոյութեան և տեսականացման<sup>5</sup>:

500 տաժանակիր տարիներ յետոյ մեր այսօրուայ Հայաստանի սահմանները, որ արիւնով գծուեցան շատ աննպաստ պայմաններուն մէջ, հզօր արտայայտութիւնը եղաւ մեր մեծ հոգիներուն, որ մեր պատմութեան մէջ ապրեցան և ապրեցան մեզմէ հեռու ու մօտ շրջաններուն մէջ, ինչպէս Րաֆֆի, Ալիշան, Արովեան: Երկար շարքէն ուզեցի տալ միայն երեք անուններ<sup>6</sup>:

Այսօր Հայաստանի մէջ, հակառակ օտար տիրապետութեան, հայ ժողովուրդի հոգեկան կառուցումը կը տեսնենք. ըսել կ'ուզեն՝ առաւելապէս մշակոյթն է, որ կ'ամրանայ: Գրողը, բանասէրը, գիտնականը յամառ կերպով մեր նախնիքներու հոգին է, որ կը փնտռեն:

Երբ մեր հոգին ուժեղ է, այն ատեն պարտութիւններն անգամ յաղթանակներ կը դառնան: Աւարայրի Վարդանը, որ կը յիշատակենք այսօր, մեզի համար եղաւ հոգեկան յաղթանակ մը. դարերով հայ ժողովուրդն իր սնունդն առաւ պարտուած Վարդանի հոգեկան յաղթանակէն: Իմացեալ մահն էր, որ եղաւ անմահութիւն: Քաջն Վարդանը զիտէր, որ պիտի մահատակուէր իր բուռ մը քաջերով, որովհետեւ հզօր էին ու քազում պարսից զօրքերը: Վարդանն այդ իմացեալ պարտութիւնով հոգեպէս ամրացուց հայ ժողովուրդը<sup>7</sup>:

Հին հեթանոսական աստուածները առաւելապէս ֆիզիքական ուժի ներկայացուցիչներ էին՝ յաղթ ու կրակէ աչքերով, և այդ ուժով էր, որ կը տիրապետէին: Այդ յաղթ աստուածներուն յաղթեց փափկակազմ, քառակ հասակով, արցունքի չափ բարի աչքերով Քրիստոս մը: Յաղթեց իր հոգիով ու երկինքով: Մենք ընդգրկեցինք քրիստոնէութիւնը, որովհետեւ հոգեկան էր, մարդկային ու աստուածային: Այն օրերուն քրիստոնէութիւնը միշտ որպէս մշակոյթ եկաւ Արեւմուտքէն:

Չարմանալի յամառ ժողովուրդ մը եղած է հայ ժողովուրդը: Իր գոյութիւնը ապրեցնելու և յաիտեմական դարձնելու համար ինչ որ դուրսէն կու գար՝ որպէս մշակոյթ, և կամ նոյնիսկ ինչ որ կը պարտադրուէր, կը իրացներ և արդէն կարճ ժամանակին մէջ կը լուծէր իր մէջ, կը հայացներ՝ դնելով ազգային ուժեղ նկարագիր: Մեր հայրերը սուրբերու կարգը անցուցին Վարդանը իր նահատակներով, որովհետեւ քրիստոնէութիւնը լուծուած էր մեր ազգային ոգիին հետ:

Քրիստոնեան ուժեղ էր նոյնպէս Ս. Մեսրոպին մէջ, այնքան ուժեղ, որ իր աշակերտներով քարայրներու մէջ կ'ապրէր, որպէս ճգնաւոր, ու միայն բանջարներով կը սնանէր, ըստ Կորինթի: Ս. Մեսրոպի հրաշափառ գիտն էր Ա.Բ. Գը, որ յաիտեմական դարձուց հայ ազգի գոյութիւնը<sup>8</sup>:

Մեր պատմութիւնը խաղաղ եղած չէ՝ հակառակ անոր, որ մշակոյթը առաւելապէս խաղաղութիւն կը պահանջէ: Ինչքան հալածուեցանք, նոյնքան մենք հոգեկանին փարեցանք և դարձուցինք հզօր պատմէջ մը մեր թշնամիներուն դէմ: Երկաթի պէս քար լեռներուն մէջ վանքեր կառուցինք ու ամէն մէկ վանք դարձուցինք մշակոյթի կարեւոր կեդրոններ: Այդ վանքերը ուխտատեղի դարձան, ու ժողովուրդը, նախշուն հազած, կ'երթար աղօթքի, տօնակատարութեան՝ ոգեկոչելու նաեւ մեր հին հեթանոս նախնիքները, անոնց հետ ապրելու, անոնց հետ գօտեմարտելու ու աղաւնի թոցնելու: Մեր վանքերէն կը դրկուէին ուսումնականներ դէպի Աթէնք, դէպի Բիզանդոն: Այդ վանքերուն մէջ, ըլլայ դպիր, սարկաւազ, արեղայ, թէ վարդապետ, աշխատանքի լծուած էին՝ ձեռագիր մագաղաթներով լեցնելու վանքերու մատենադարանները:

Կար ատեն մը, որ 100 000 կը հաշուէին մեր վանքերու ձեռագիրները: Մեր թշնամին լաւ հասկցաւ մեր գոյութեան գաղտնիքը: Կ'ըսեն, որ Բաղեկայ բերդի գրաւման ժամանակ հրկիզած են 10 000 ձեռագիրներ: Լեցնելու վանքի մը ձեռագիրները տակառներու մէջ լեցնելով, Սամարղանտ տարած է, իսկ թրքական հալածանքներու շրջանին կորսնցուցած ենք քազում ձեռագիրներ:

Այդ ձեռագիրները կը պատրաստուէին շատ խեղճ պայմաններում մէջ. աղքատիկ, ցուրտ խցի մը մէջ ձեռքի կամ մոմի լոյսով՝ աչքի լոյս հատցնելով եւ իր ոսկրուտ ցուրտ մատները իր շունչովը տաքցնելով: Ծիծռ տեղն է ըսել, որ անոնք իրենց արիւնով գրեցին այն 100 000 ձեռագիրները:

Այդ գրողներէն (գրիչներէն) մէկը՝ Յակոբ գրիչ, 1284ին իր մէկ յիշատակարանին մէջ կը գրէ. «Եւ ես ծանրաբեռ մարմնով զթուղթ եւ զօրինակ, զգրիչ եւ զքանաք եւ յոյս իմ բարձեալ ի յետ գնացի եւ սուրբ մատեանս զրէի բազում նեղութեամբ եւ չարչարանօք»:

Ինչպէս կը տեսնենք, թշնամին յարձակած է: Յակոբ գրիչը ժողովուրդին հետ գաղթի ճամբան բռնած է եւ միեւնոյն ատեն աշխատած է իր մատեանը լրացնելու<sup>9</sup>:

Մեր ազգը իր նախնիքներով ապրելու եւ յաիտեմական դառնալու իր կամքը դրաւ նաեւ արտասահմանի մեր երկու վանքերուն մէջ՝ Վեներտիկ եւ Վիեննա: Անոնք ատելի ազատ պայմաններուն մէջ էին եւ դարձուցին այդ երկու վանքերը մեր մշակոյթի շատ կարեւոր կեդրոններ: Կարեւոր դեր կատարեցին՝ մեր դպրութիւնը, մեր բանաստեղծութիւնը, մեր լեզուն եւ մեր պատմութիւնը մշակելով եւ ձեռագիրներ հրատարակելով: Մեր նախնիքներու, մեր հին վանքերու հոգեկան գիծն էր, որ ժառանգական օրէնքով ուզեցին շարունակել՝ Սփիւքի մէջ տարածելով նաեւ դպրոցներ<sup>10</sup>:

Վիեննան առաւելապէս ժամանակի հետ զիտականացուց մեր բանասիրական աշխատանքները: Մօտեցաւ մեր լեզուի, մեր պատմութեան զիտական պեղումներով, ինչպէս Տաշեանն է եւ Ալիմեանը՝ տալով երկու անունները միայն: Եւ շնորհիւ մանաւանդ Վիեննայի Մխիթարեաններուն՝ մեր պատմութիւնը լաւ ուսումնասիրուած է: «Հանդէս Ամսօրեան» միշտ ալ պահեց իր առանձնահատուկ առաքելութիւնը:

Այսօր մեզի հետ է Գերապայծառ Հապոզեանը՝ Վիեննայի վանքի լուսաւոր կեդրոնէն իր լուսաւոր առաքելութեամբ: Եկած ենք այսօր յարգանքով յիշատակելու Գերապայծառին քահանայութեան 50ամեակը, Աբրահայրութեան 35ամեակը եւ ծննդեան 75ամեակը: Ան մեզի կը ներկայացայ իր քեղուն աշխատանքներով եւ պատկառելի տարիքով՝ ըսելու, որ տակաւին պատմէ՞ իր վրայ է, եւ դեռ շատ աշխատանքներ կան կատարելիք: Պէտք է ամրացնել Սփիւքի հոգեկան աշխարհը, որ վտանգի մէջ է: Եւ այդ աշխարհը կարելի է զօրացնել միայն հայ լեզուով, որովհետեւ լեզուն ինքնին պատմութիւն է, ինքնին մշակոյթ, եւ ուր կան շունչն ու իմաստութիւնը մեր նախնիքներուն: Առանց հայ լեզուի կարելի չէ հոգի կերտել: Ան աղիւսն է, եւ առանց աղիւսի կարելի չէ շէնք բարձրացնել: Հայ լեզուն

արօր է, խոփ. առանց այդ գործիքներու կարելի չէ արտը հերկել: Լեզուն նոյն ինքը հողին նետուած ցորենի սերմն է:

Գերապայծառ Հապոզեանը կը հաւատայ, որ այսօր հայ ժողովուրդը իր հոգիին մէջ պիտի նայի ու տեսնէ ոգին հայկական: Մեր բարոյական պետութիւնը ու շէնքը բարձրացնողը հայ ժողովուրդը եղած է: Եւ այդ ժողովուրդն է, որ ճիգ կ'ընէ հոգեկան Հայաստան մը ժառանգ ձգել օտար հողին վրայ ծնած իր զաւկին: Սփիւքին մէջ նիւթական կարիք չունի հայ ընտանիքը, եւ սակայն անոր դէմքին վրայ տրամութիւն մը կայ միշտ, որ չի կրնար Հայաստանի հոգեկան քարտէսէն մի քանի գծեր ձգել իր զաւկի հոգիին մէջ, իր նախնիքներէն բան մը փոխանցել իր զաւկին:

Հայ ծնողքի այդ մտահոգութեամբ է, որ այսօր հայ ժողովուրդին կը ներկայանայ Գերապայծառ Հապոզեան՝ իր անբասիր հաւատքով:

## ՏԵՂԻՆ ՁԱՍԿԸ

(Եղուարդ Պոյանեանի մահուան առիթով)

Այդ խորագիրը մեր գրականութեան մէջ ոգեկան իմաստով գործածուած է, որ «գաւակը» ժառանգորդն է մեր հիմնաւորաց նախնիքներուն, որ ոգին առաւելապէս մարմնի կերպարանք ունի ու ինքզինք կ'արտայայտ զգայարանքներուն միջոցով: Տիրապետողը ինքն ոգին է, եւ այդ է պատճառը, որ անհատը, որպէս ընկերութեան անդամ, յաճախ ընդունուած չափական զծէն դուրս կ'ելլէ: Չափական չէր կրնար ըլլալ նոյն ինքը՝ Հայկականութիւնը, որ ունի իր մէջ խռովք, տառապանք, հաւատք եւ զոհաբերութիւն այդ հաւատքին համար: Արարատին պէս զեղեցիկ է ան եւ Արարատին պէս փոթորկոտ եւ նոյն ատեն երկնքի կապոյտին ու հողին չափ բարի: Հեշտ չէ ներդաշնակել Արարատեան դաշտի արգասաբեր, բարի հողը ու խռովքը Արարատին: Առաւել կամ նուազ չափով կայ այդ խռովքն ու բարութիւնը ամէն հայուն մէջ: Գուցէ այդ է պատճառը, որ հայ անհատին մէջ այնքան շեշտուած է անհատականութիւնը: Ան ուրիշին չի մմանիր: Ոճի պէս է:

Որպէս ցեղի գաւակ՝ Եղուարդը զարտուղի ըլլալու աստիճան ուրիշ է՝ անկեղծ տառապանքին պէս, ինչպէս անկեղծ են ոգիները: Այդ ոգին էր, որ կը վարէր զինք:

Ծնած էր Մուսա լեռան կողին, մեծցած Խըւարդակի դարատըր կաղնիի ատանդութիւնով եւ այդ կաղնիի քովէն անցնող յորդ ջուրի խաղաղ ու խութքերուն զարնուող անկարգ ռիթմով: Եւ մանաւանդ մեծցած՝ Մուսա լեռան 40 օրերու իսկական խռովքը իր մէջ, որ կամուրջ կապած էր հին-հին նախնիքներու դիցազներգութիւններուն հետ: Եւ կարծես հիմնաւորաց նախնիքներն ըլլային Մուսատաղի բնակիչները, եւ ինք՝ գաւակը այդ նախնիքներուն, որուն համար կտոր մը հողը աղօթք էր, եւ ուր ծառերը կը շնչէին այդ դիցազնական բնակիչներուն հետ կոթնած ապառաժներուն ու լեռան՝ ապրելու կամքին եւ ազատութեան համար:

Այդ բոլորը, բոլորը Եղուարդի հոգեկան աշխարհը աւելի հզօր դարձուցած էին ու կը շնչէին, կը խօսէին մարմնի ու հոգիի լեզուով, կը ստեղծէին պայքար ընկերութեան, անարդարութեան եւ նոյնիսկ կեանքին դէմ:

Եթէ փնտռենք Եղուարդի ոճը, մուսատաղցու մէջ պիտի գտնենք: Եթէ փնտռենք մուսատաղցու մէջ, պիտի գտնենք իր խռովքը, զանգատը, ու չեկաւ գրականութիւն ընելու: Իսկ <անընթ> միայնութեան մէջ իսկ: Չի գնաց արդէն ընդունուած հին ձեւերուն. անոր բառերն ունին ջիղ եւ դնդեր\* եւ յանդգնութիւն: Եղուարդ յանդուգն էր իր բառերուն, իր յղացումներուն եւ մանաւանդ իր մրցումներուն մէջ: Եւ անտարակոյս տառապանքն էր, որ զինք այնքան յանդուգն դարձուցած էր: Ան յաճախ կը կեցցներ իր ընթերցողը էջին վրայ ու խորհրդածել կու տար իր մէկ պապակերին եւ մտածման առջեւ: Ան չէր կրնար մտնել հովուերգական եւ բոմաբիք ձեւերու մէջ, երբ իր կեանքը խռովք էր ճիշդ Մուսատաղի ժողովուրդին եւ ապառաժներուն պէս: Հայ ժողովուրդին համար ապառաժը ծառ, քար ըլլալէ աւելի սրբազան բան մը կար անոնց մէջ: Անոնց մէջ սուրբեր կը շնչէին՝ ըլլայ լեռան գագաթին, թէ կողին: Այդ ապառաժին մէջ <հառան> մեր վանքերը: Մուսատաղցիներուն եւ Եղուարդի համար ապառաժները վանքերու իմաստութիւն ունէին, եւ անոնց մէջ <սուրբերու> շունչը կար:

Եւ երեւակայել, որ մանուկ Եղուարդի հոգիին մէջ ի՛նչ հզօր դեր կատարած են Մուսատաղի 40 օրերը: Եկած է հէքեաթի մը գոյնեղով, Արեւով ու լեռան թիկունքին <անընթ> ժողովուրդի մը խռովքով: Եւ արդէն շատ չանցած՝ ձգեցին տուն-տեղ, որ <անընթ> ու գաղթեցին Լիբանան. թուրքը կու գար?:

## «ՆՈՐ ՄԵՐՈՒՆԿԻ ՀԱՄԱՐ»

Ինձի համար հաճելի է տեսնել նոր սերունդի հետաքրքրությունը մեր տոհմիկ գրականության հանդեպ: Այն գրականությունը, որ եղած է հողին, ժողովուրդին և մեր ասանդություններուն հետ: Այդ ասանդության մէջ է մեր դարերու ժառանգը ֆիզիքական օրէնքով, միշտ այնպէս, ինչպէս կայ կեանքի յարատեւ շարժումը գոյութեան պայքարին համար: Հաճելի է տեսնել, որ նոր սերունդը այդ հարատեւ շարժման մէջ է՝ որպէս ազգ և որպէս հաւաքականութիւն: Այդ շարժման մէջ է և պայքարին հետ է, որ՝ ընթացք կ'առնեն ազգերու հին ասանդությունները: Այն յորդ ջուրն է, որ կու գայ ծանօթ ու շատ անգամ անծանօթ ակերտն՝ ջրադաշտին քարը դարձնելու և ցորեն աղալու: Եւ առաւելապէս այդ ասանդություններուն վրայ կառուցուած են արուեստ և մշակոյթ: Մշակոյթը ուրիշ բան չէ, եթէ ոչ զգայարանը ազգերու գոյութեան պաշտպանման: Այլ խօսքով՝ մշակոյթը ազգերու ֆիզիքական գոյութիւնն է, որ կը պաշտպանէ և բանակներէն աւելի ուժեղ է: Առաւելապէս այդ ուժով պաշտպանուած է հայ ժողովուրդը հակառակ դասապայքարներուն և պատմութեան մէջ չտեսնուած հալածանքներուն: Հալածանքներուն մէջ կեանքը աւելի գործօն կը դառնայ, և աւելի գործօն կը դառնայ մշակոյթը իր վերելքով: Այդ ուժը, շարժումը կու գան ասանդութեան հետ ժառանգական օրէնքով, յաճախ մեզմէ անկախ: Այժմ հոգեբանութիւնը կ'ընդունի, որ մարդը ոչ միայն կը ժառանգէ ֆիզիքական որոշ գծեր, այլև նոյն օրէնքով կը ժառանգէ հոգեկանը:

Այլ խօսքով, երբ մենք կը ժառանգենք մեր գլուխին ձեռք, աչքին գոյնը և քիթին կաղապարը, նոյն ֆիզիքական օրէնքով ալ կը ժառանգենք մեր հոգեկան մտածումի կառոյցը (Քարլ Իւնկ և ուրիշ հոգեբաններ ըսելիքներ ունեցած են այդ մասին): Ժառանգութիւնը անհրաժեշտ չէ անմիջական ըլլայ, ըսել կ'ուզեն՝ հորմէն կամ մորմէն: Կրնայ այդ ժառանգութիւնը իր գծերը նետել նախնիքներէն, ըլլայ այդ տոհմային, թէ ազգային: Անա թէ ինչն ու կ'ըսենք «մեր նախնիքները», որովհետեւ այդ նախնիքները ողջ են ու կ'ապրին իմ ու քու մէջ:

Քաղաքական դժբախտ պատճառներով մենք ցրուեցանք: Ալեկոծուած ծովէն, ջախջախուած նաւէն եզերք հասանք ու ցրուեցանք օտար հողի վրայ, օտար ազգերու մէջ: Վտանգ կար, և արդէն մեր անմիջական ֆիզիքական գոյութիւնն էր՝ այդ վտանգին մէջ որպէս ազգ պաշտպանելու: Տարերային ուժն էր, որ կը խլրտար մեր մէջ պահել ազգայինը, և այդ ազգայինին մէջ էր մեր հաւաքական պաշտպանութիւնը և պաշտպանութիւնը մեր անհատական գոյութեան: Ես կը հաւատամ, որ

ամէն հայ անհատ ինքն իր մէջ ազգ է: Եւ մեր պաշտպանութեան կարեւոր զգայարանքները եղած են մեր լեզուն, մեր բարքերը, մեր գրականութիւնը, այլ խօսքով՝ մեր մշակոյթը: Երբ «մեր» կ'ըսենք, այդ ինքնին նկարագիր է եւ՝ մանաւանդ «ոճ»: Այդ «ոճը» անհրաժեշտ է, որ կարենանք ստեղծագործել և մշակոյթ դառնայ ինքնուրոյն: Այդ «ոճը» ինքը ազգն է՝ այնքան էական, որքան ծաղիկի մը գոյնը, ձեռք և հոտաւետ ըլլալը: Կ'ուզեն ըսել, որ ծաղիկին գոյնը և հոտը պերճանք ըլլալէ աւելի ֆիզիքական պաշտպանութեան և տեսակը ապրեցնելու անհրաժեշտութիւններ են: Արուեստագէտ է այն, որ իր ինքնուրոյն ոճով կու գայ: Այդպէս եկած են բոլոր մեր արուեստագէտները: Առանց այդ ուժեղ անհատականութեան անոնք չպիտի կարենային ստեղծագործել: Ազգերն ալ անհատի նման իրենց ոճն ունին: Ուրիշ է հայ գրողը, ուրիշ ազգերու չպէտք է նմանի:

Ինչպէս ըսի, ինչպէս անհատները, նոյնպէս ազգերը իրենց անկումի և պարտութեան շրջանին աւելի գործօն կը դառնան. կենսական տարրեր են, որ գոյութեան պայքարի օրէնքով կ'աշխատին պահել ոչ միայն գոյութիւնը, այլև «ոճը», այլ խօսքով՝ մեր ազգային յատկանիշները: Մեր վերելքն ու մշակոյթը 1915ին մեծ անկում ունեցան, կորսնցուցից մէկ ու կէս միլիոն հայութիւն և մտաւորականութիւնը, որ եղած էր ուժեղ բերող ժողովուրդի պաշտպանութեան: Այդ մտաւորականութիւնը միեւնոյն շրջանի և միեւնոյն ժամանակի արդիւնք չէր: Ըսել կ'ուզեն, երբ անապատի աւազներուն հետ խառնուեցան Վարդաթան և Չարդարեան և շատեր, կեանքի մը շրջանը չէին անոնք, այլ մեր դարերէն եկած կենսական բան մը կար անոնց մէջ ժողովուրդի և ազգի պահպանման համար:

Գրականութիւնը երբեք գրականութեան համար չէ, և ոչ ալ արուեստը՝ արուեստի համար: Գրականութիւնը ֆիզիքական կամք է և պաշտպանութիւն: Մենք բոլորովին կարուեցանք այդ 1915ին նահատակուած սերունդէն: Շոքան փրթած էր, և տարիներ յետոյ հայ ժողովուրդը շուար և անդաստական կեանքը ապրելու տենչով իր մէջ ստեղծեց արուեստագէտներ, գործիչներ, գրողներ, երաժիշտներ՝ հայ ժողովուրդի պաշտպանութեան համար և անոնց մէջ ուզեց տեսնել եթէ ոչ շատ հին նախնիքներուն, գէթ 1915ի նահատակներու ասանդութիւնը և կապել գալիք շրջաններուն հետ: Սփիւռքին մէջ հայ ժողովուրդին հետ պահ մը շուարումի ենթարկուեցան նաեւ հայ արուեստագէտն ու հայ գրողը: Դարձան յոռետես, դեզերումներու ենթարկուեցան, տարուեցան երոպական մշակոյթով, մտածումի եղանակով ու ոճով ու փնտռեցին նախնիքները: Այդ րոտքին մէջ լեզուն բաւական էր, որ շրջանակի մը մէջ բռնէր այդ տարածուող հոսանքը: Լեզուն «ջուր» կամ «հաց» չէ, լեզուն խորհուրդն է հո-

դին, քարին, հացին, տունին, թոնիրին, ծխնելոյզին: Խորհուրդը մեր բարքերուն, մեր տրտմութեան եւ ուրախութեան:

Լեզուն նախնական մարդուն մէջ իսկ արուեստի առաջին արտայայտութիւնն է: Այլ խօսքով՝ բառերը իրենց խորհուրդն առած են առարկաներէն: «Ծառ» կամ «քար» ըլլալէ աւելի ծառին կամ քարին խորհուրդին ցոլացումն է լեզուն: Նախնական մարդուն համար ծառը շունչ էր, եւ մեր նախնիքները պաշտած էին այդ ծառը եւ կամ անտառը, ինչպէս մեր Սօսեաց անտառը, որուն տերեւներու սօսափիւնը պատգամներ էր աստուածներէն, իսկ քարին մէջ սուրբերու շունչը կար: Եւ ժողովուրդը ուխտագնացութեան կ'երթար, մոս կը տանէր, աղանձի կը զոհաբերէր սրբոց քարերուն: Հայաստանի մէջ շատ էին այդ սուրբ քարերը: Ահա թէ ինչպէս խոր իմաստով կը ստեղծուին լեզուները եւ բառերը, որ ազգի մը ինքնութիւնն է՝ կապուած մեր գոյութեան հետ: Լեզուն է, որ մեզ կը կապէ մեր նախնիքներուն, մեր դպրութեան եւ մեր մշակոյթին<sup>7</sup>: Մանաւանդ Մփիւքի մէջ վտանգի տակ է մեր գոյութիւնը, որովհետեւ վտանգի տակ է մեր լեզուն: Այսօր մէկ աղաղակ մը կայ ժողովուրդէն. «Պահենք մեր լեզուն»: Եթէ պահենք մեր լեզուն, պահած կ'ըլլանք մեր ազգային գոյութիւնը: Ոմանք նոյնիսկ այն միասնութիւնը ունին հաւատալու, որ անգլերէնով ալ կարելի է պահել մեր շունչը: Այդ մտածումը ինքնին պարտութիւն է արդէն: Բաւարար չէ նոյնիսկ կէս-կիսատ հայերէն մը: Պէտք է այնքան լաւ ըլլայ, որ խառնուի արեան հետ ու տարրերը շարժման մէջ դնէ: Այն ատեն անոնք պիտի կրնան ըմբռնել Վարուժան մը, Չարենց մը, Պարոնեան մը եւ ժողովուրդը: Այստեղ ծնած եւ մեծցած սերունդի թերութիւններէն մէկն ալ այդ է, որ նոյնիսկ կը փորձուին ստորագնահատել հայ գրականութիւնը, եւ ճիշդ անոր համար, որ իրենց մէջ պակաս է հայ լեզուի նկարագիրը<sup>8</sup>, որ ինքը ժողովուրդն է:

Այդ լեզուին հմտանալով է, որ այս տեղի սերունդը պիտի ջերմանայ, պիտի սիրէ հայ ժողովուրդը եւ այդ ձեւով պիտի գտնէ ինքզինքը: Ինքզինք գտնել, ինքզինք ճանչնալ կեանքի լաւագոյն հաճոյքներէն է: Եթէ գտնես ինքզինքը, պիտի խառնուիս հայ ժողովուրդի ուրախութեան եւ տխրութեան հետ, եւ ապրիլը աւելի իմաստուն պիտի դառնայ քեզի համար: Դուն պիտի հաւատաս, ինչպէս պիտի հաւատաս կրօնքի մը: Բոլոր կրօնքներուն հիմքը եղած է բարին ու չարը: Հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին անցած է այդ թուրքէն ու իր մէջ մարմին առած՝ առանց դիցաբանութեան: Դեւերը անոր համար եղած են լինկթեմուրները, ճեմ-կիզխանները, արարական, թրքական արշաւանքները: Իսկ բարի՞ն եղած են՞ իր հողին կապուած արդար աշխատանքը ու հորովելը, ժողովրդական

պարերն ու երգերը, <անընթ> եւ մանաւանդ մշակոյթին հանդէպ ունեցած իր հզօր կամքը: Առած է Յունաստանէն, Հռովմէն, Բիւզանդիոնէն, այդ բոլորին հետ շաղած ու ստեղծած է իր ինքնուրոյն լեզուով մշակոյթը՝ իր գոյութիւնը յաւիտեանական դարձնելու համար<sup>10</sup>: Ուժեղ ազգն է, որ կ'անձ է այդ բոլորէն եւ կը շաղէ իր մշակոյթին հետ: Հայ ժողովուրդի տեւականացումը վաւերական փաստ է մեր մշակոյթի ուժին եւ գեղեցկութեան: Պահենք մեր սքանչելի լեզուն, որովհետեւ լեզուն պատմութիւնն է, շունչ է ու արիւն: Եւ մեր նոր սերունդը այն ատեն, այն ատեն հայ ապրելու մեծագոյն հաճոյքը կ'ունենայ, երբ հմտանայ հայ լեզուին<sup>11</sup>:

Կապուինք մանաւանդ Հայաստանին<sup>12</sup>, որ չի ցրուինք, ուր հայ գրողը հզօր պայքարներով, զոհաբերութիւններով, աքսորներով կ'աշխատի ինքզինք գտնել, գտնել մանաւանդ մեր ազգային ինքնուրոյն ոճը: Այս տեղէն պիտի սկսին մեր դարերը: Տակաւին զոհեր պէտք են ազատութիւնը՝ այդ հազարան թռչունը կամ պլպուլը, ձեռք ձգելու համար: Հայ ժողովուրդը զիտէ զոհաբերել՝ իր գոյութիւնը յաւիտեանական դարձնելու համար: Եւ հայ ժողովուրդը յաւիտեանական է եւ դեր ունի կատարելիք ազգելու կեանքին եւ պատմութեան մէջ:



Մեծ ողբերգութեան մը յիշատակութիւնն է, որ կ'ընենք այսօր՝ մեր յարգանքը տալու այն մեծ նահատակներուն ու հաղորդութիւն առնելու անոնց մեծ հաւատքէն: Հաւատքը կեանք է, հաւատքը նկարագիր է, հաւատքը երկինք է, հայրենիք է:

Հաւատքը ձգտումն է գեղեցիկ իտեալներու: Ահա ժողովուրդ մը, որ դարերով ապրեցաւ այդ հաւատքով, ունեցաւ խաղաղ ու խռով շրջաններ, յաղթեց ու պարտուեցաւ, շինեց վանքեր գորշ ապառաժներով լեռներու կողքին: Շինեց եկեղեցիներ, ուրկէ կ'արձագանգուէր կարծես ձայնը երկնքին: Շինեց դպրոցներ, շինեց կամուրջներ: Ճամբաներ շինեց: Հերկեց հողը նոյնիսկ լեռներու կողքին ու դաշտը լեցուց հորովել երգերով: Մեր ժողովուրդը շէն էր ու փարթամ նոյնիսկ գերութեան մէջ: Շատ անգամ փլած, հրդեհուած ու թալանուած տունը ան միշտ ալ շինեց, ու շատ չանցած՝ աւերակ տան բակը շէնցաւ, լծուար եզները նորէն աւելցան, տան մէջ աւելցան հարսները <անընթ.> ու ծոցուոր, նոյն շէն տունը մեծցած ու նորածին երախաներու ձայներով լեցուն: Արտին մէջ ինկած հոր աշխատանքին զաւակը հասաւ, զաւակը ճահիլ ու հաւատքի նոր թափով: Երբ կ'ըսեմ՝ ճահիլ զաւակը հասաւ, այն նոր ժմանած զակին մէջ կար արդէն կազմուած նկարագիր մը հաւատքին չափ ու ժող: Այդ նոր ժմանած զակին մէջ արդէն կար աւանդական այն մեծ ժառանգը, որ մեր պապերէն ու պատմութենէն կու գար: Ան կ'առնէր այդ ժառանգութիւնը իր պապենական օրհնուած տունէն, լաչակը գլխին փաթած ու տան օճախի կրակին ու բուխարիկներու ծուխին հսկող հայ մայրէն:

Ան կ'առնէր այդ ժառանգութիւնը հազար ու մի մտահոգութիւններով գլուխն ու դէմքը ծանրացուցած հորմէն: Կ'առնէր հողէն, երկնքէն, մեր աւանդական բարքերէն, կ'առնէր մեր շատ երանելի վարժապետներէն, որոնք կը հաւատային, որ մեր Ա.Բ.Գ.ը երկնքէն իջած է: Ան այդ ժառանգութիւնը կ'առնէր մեր վանքերէն ու եկեղեցիներէն, մեր պարզամիտ ու խունկի հոտ ունեցող տէրտէրներէն: Այն ճահիլ երիտասարդ զակին մէջ նոյնիսկ ժառանգը կար մեր եկեղեցական տօներուն հետ խառնուած հեթանոսական ծեսերէն, մեր Վարդավառէն, մեր Բարեկենդանի տօներէն՝ խառնուած մեր հետ, հեթանոսական ծեսերուն հետ որպէս ոգի ու որպէս հայրենիքի սէր: Կ'ուզեմ ըսել, որ ամէն մէկ հայ ինքնին թանկագին արանդութիւն մըն է, ու դուք կը ճանչնաք այդ հայը նոյնիսկ օտար երկիրներուն 150

մէջ, եթէ անունով բնաւ ծանօթ չըլլաք անոր: Ան ձեր քովէն կ'անցնի, ու դուք ետեւ կը նայիք, կարծես ծանօթ մէկը անցաւ ձեր մօտէն: Դուք կը ճանչնաք, կարծես տեսած էք ուրիշ անգամ ուրիշ տեղ մը: Կարծես մանկութեան մը յիշատակը կար անոր աչքերուն մէջ, կարծես պիտի յիշէր անոր անունը՝ Մարտիրոս, Օվաննէս կամ Վահան: Ու ձեզի այնպէս կը թուի, թէ հին, մոռցուած դարեր, շատ դարեր առաջ միասին ապրած էք պապենական ընտանիքի մը մէջ:

Իր հոր գործին հասնող ճահիլ զաւակը լեցուն էր այդ ժառանգութիւնով: Երբեք կարելի չէ երեսակայել 1915ի այն ահաւոր ողբերգութիւնը, որ եկաւ միանգամ ընդմիշտ արմատախիլ ընելու ժողովուրդ մը իր հողէն, իր աւանդական տունէն ու հոգեկան հարուստ ժառանգութենէն: Անոնք չի գացին որպէս Օվաննէս կամ Յակոբ, անոնք գացին որպէս տէրերը մեր ազգային ու մշակութային մեծ ժառանգութեան: Ամէն մէկ հայ ինքն իր մէջ նկարագիր է ու պատմութիւն:

Ահաւոր էր մտաւորականութեան մը կորուստը: Աւելի ահաւոր էր ժողովուրդի մը կորուստը, որովհետեւ ժողովուրդը ինքնին անսպառ աղբիւրը եղած է թէ՛ մշակութիւնն ու թէ՛ մեր դիմացկունութեան:

Երբ մենք կ'ըսենք Ռուբէն Զարդարեան կամ Վարուժան, անոնք իրենց կեանքի տնտղութիւնը չեն, որ ծնան այսինչ թուականին ու նահատակութեան 1915ին: Անոնց ժառանգութիւնը նոյնպէս կու գայ հին, հին ժամանակներէն, մեր հին դպրութենէն, կու գայ Եղիշէն, կու գայ Ս. Մաշտոցէն, կու գայ Դաւիթ Անյաղթէն ու կամ Եզնիկէն: Թիւ չէին անոնք, թիւ չէին ո՛չ մեր մտաւորականութիւնը, ո՛չ իսկ մեր ժողովուրդը, որոնք անսպառները քշուեցան արագներուն տակ թաղուելու:

Անոնց հետ թաղուեցան մեր շէն դպրոցները, մեր վանքերը լեռներու կողքին, մեր ժառանգը հողին ու երկնքին: Եւ ուզեցին թաղել մեր ոգեկան շէն անդաստանը՝ մեր մշակութիւնը:

Աշխարհի վրայ ոչ մէկ մարդկային հրէշ պիտի մօտենար ջարդելու զանկը Վարուժանին, այդ մեծ բանաստեղծին, որ ինք իր մէջ բարգաւաճ աշխարհ մ'ըն էր, հայկական աշխարհ: Ոչ մէկ հրէշ պիտի մօտենար ճեղքելու զանկը Միամանթոյի ու անոր երեսակայութիւնը հրեղէն: Ինչպէս մօտենալ կացիններով մեր բոլոր մտաւորականներուն, որոնց ճակատին վրայ Աստծոյ մատը կար, ու որ բոլորին ձգտումն էր գեղեցիկը, բարին ու համամարդկայինը: Վերջապէս, ինչպէս մօտենալ ժողովուրդի մը կացիններով ու սուրերով, երբ այդ ժողովուրդը աշխատած է իր թշնամին իսկ հասցնել քաղաքակրթուած ազգերու աստիճանին՝ տալով անոնց ճարտարապետութիւն, շինելով նոյնիսկ անոնց մզկիթները ու

<արհեստները>, ստեղծելով ամուսն քատրոնը, մանաւանդ ստեղծելով երկրի մը տնտեսութիւնը: Այո՛, մարդկային ռեւէ հրէշ կրնար մօտեմալ ջարդելու գանկը Չօհրայի: Ուեւ ամասնական հրէշն անգամ չպիտի ուզէր ծծկեր երախան դիակնացած մօր կուրծքին վրայ ձգել: Միայն թուրք մը կրնար ընել այդ:

Հայ ժողովուրդը պատմութեան ընթացքին շատ է տեսեր ողբերգութիւններ: Տուրքիւներ, լեմկեմուրներ շատ են անցեր մեր հողին վրայէն: Մեր շէն քաղաքները, ուր աշխարհի քարուանները կը մտնէին ու կ'ելլէին, արդէն հողին տակ են, եւ սակայն նախախնամական ինչ օրէնքով այս ժողովուրդը ոչ միայն զիտէ իր ակռաներով պահել իր գոյութիւնը, այլեւ կոչումն ունի ազգերու պատմութեան իր դերը կատարելու:

1915ի մեր ողբերգութիւնը բաւական էր ռեւէ ցեղի կամ ազգի համար, որ դադրէին գոյութիւն ունենալ: Հայաստանի մը կորիզը, հեռապատկերը առաւելապէս եղած է Արեւմտահայաստանը, այն Հայաստանը, ուր կատարուեցաւ այդ մեծագոյն ողբերգութիւնը: Գերմարդկային ի՞նչ ուժ կրնար թաքնուած ըլլալ այս ժողովուրդի մէջ, որ այդ ահաւոր աղետէն անմիջապէս յետոյ, առանց տկար զգալու, կազմեց կամաւորական խումբեր ու հեռուած միմիայն իր ոգիի վրայ՝ յայտարարեց անկախ Հայաստանի Հանրապետութիւն ու պաշտպանեց այդ հանրապետութիւնը դարերով պետական կեանք ու բանակ ունեցող եւ մանաւանդ վայրենաբարոյ թուրքին դէմ: Հայ զինուորը բոսնիկ ոտքերով կռուեցաւ:

Հայ նախարարը, ուտելիքով մտահոգուած, կարկտնուած հագուստներ հագաւ, միեւնոյն ժամանակ ժողովուրդի զաւակները պատերուն տակ կ'իյնային սովամահ եւ հիւանդ:

Եթէ 1915ի ահաւոր ողբերգութենէն յետոյ Հայաստան մը ստեղծուեցաւ, այդ մեծագոյն հրաշքներէն մէկն էր ռեւէ ազգերու պատմութեան մէջ: Այդ ըսել է, որ հակառակ որ շատ հին ազգերէն մէկն ենք, հակառակ որ ենթարկուած ենք մեծանը չտեսնուած աղետներու, դեռ երիտասարդ ենք: Եւ եւ կարեւորը՝ ուժեղ ենք մեր նկարագրին մէջ:

Եւ արդէն ազգ կամ հայրենիք ինքնին անհատականութիւն է ու նկարագիր: Մենք չենք բաժնէր մեր հայրենիքի այսօրուայ ռեժիմը, որովհետեւ այնտեղ կը սպառնան աղճատել մեր ցեղային նկարագիրը: Այնտեղ անհատն իսկ նկարագիր ունենալէ դադրած է:

Մենք կը հաւատանք, որ հայ ժողովուրդը ինչ պայմաններու մէջ ալ ըլլայ պիտի կրնայ պահել իր նկարագիրը, որ ինքնին ցեղային առողջութիւն է: Այդ առողջութիւնն է, որ մեզի ժառանգ ձգեցին 1915ի Եղեռնի մէկ միլիոն զոհերը<sup>1</sup>:

Հայ մայրը անապատի բոլոր տանջանքներէն յետոյ կը տարուի արաբ <անընթ> վրանը իր փոքրիկ աղջկան հետ: Հայ մայրը իր աչքերով կը տեսնէ՝ ինչպէս ամբողջ հայութիւն մը կ'ոչնչանայ անապատի աւազներուն մէջ: Ու կը մտածէ ոչ միայն շարունակութիւն մը, այլեւ մշակոյթը իր մով սկսիլ: Ան վախով ու դողով առիթ կը գտնէ պահ մը հեռանալ վրանէն ու իր աշխատանքէն՝ փոքրիկ աղջկան հայ լեզուն սորվեցնելու համար: Իհարկէ ո՛չ թուրք կար այնտեղ, ո՛չ մելան<sup>2</sup>: Հայ մայրը աւազին վրայ մատով Ա.Բ.Գ.ը գրելով եւ արելով ու Ա.Բ.Գ.ով նախադասութիւն կազմելով իր աղջկան շատ լաւ հայերէն կը սորվեցնէ: Ես Եգիպտոսի մէջ տեսայ այդ տիպար հայ մայրը եւ նոյնքան համակրելի տիպար հայ աղջիկը, որ սորված էր իր հայերէնը աւազին վրայ գրուած Ա.Բ.Գ.ով:

Ահա մտոյշ մը միայն բնագոյ դարձած մեր ցեղային առողջութենէն:

Ես արեւի մեծ հաւատք ունեցայ մեր ժողովուրդի առողջութեան մասին, երբ 1929ին այցելեցի Պէյրութի վրանաքաղաքը: Այնտեղ տեսայ փտած տախտակներով ու ժանգոտ թիթեղով շինուած տուններ: Հոն էր, որ անպատներէն հալածուած եւ հազար ու մի տանջանքներէն անցած հայ ժողովուրդէն մաս մը կայան դրած էր այդ վայրին մէջ: Տուները փոքրիկ հաւարոյներ էին, եւ սակայն այդ շարժուն ժողովուրդը այնտեղ ստեղծած էր տնտեսութիւն մը: Անճրեւէն քրջուած մնան փոքրիկ պատսպարանի մը առջեւ էր, որ կանգ առինք: Ինձի հետ էր նաեւ ծանօթ թերթի մը խմբագրապետը: Այդ պատսպարանի սեմէն ներս տեսանք մէկը, կարկտնուած շալվարով, իրզոտ գոպակով եւ սակայն ծանր ու կիրթ դէմքով մէկը, որ այժի գլուխներ կը քերթէր: Այդ էր իր ապրուստը:

Այժի գլուխները քերթել յետոյ շուկայ կը հանէր վրանաքաղաքին մէջ: Մեր խօսքերը հետզհետէ հետաքրքիր դարձան, որովհետեւ այժի գլուխ քերթող ծերուկը կը խօսէր շատ մաքուր հայերէն: Ան երբ իմացաւ, որ թերթի մը խմբագիրն է իր հետ խօսողը, մոռցաւ իր աշխատանքը, մոռցաւ, որ իր հաճախորդները այժի գլուխին կը սպասէին, եւ ես նկատեցի, որ յուզում կար անոր ձայնին մէջ, երբ ներսէն բերաւ ծանօթ հայ թերթը եւ ըսաւ. «Պարոն խմբագիր, զիտե՛ս, թէ ո՞ր կ'երթայ մեր հայ լեզուն»: Կարդաց հատուած մը, քննադատեց հայերէնի սխալները, կանգ առաւ նախադասութեան մը առջեւ ու հարցուց. «Դու ըստ, պարոն խմբագիր, ո՞ր է տերբայն այս նախադասութեան մէջ»: Այժի գլուխ քերթող համակրելի ծերունին մեր երկրի երանելի ուսուցիչներէն եղած էր եւ լաւ գրաբարագէտ: «Ըստ, պարոն խմբագիր, ո՞ր կ'երթայ մեր հայ լեզուն»: Եւ ես այդ պահուն նկատեցի, որ մեր դէմ կեցող ու այժի գլուխ քերթող ծերունին կարծես այն խիստ<sup>3</sup> Ս. Մետրոսյն ըլլար՝ խիստ ու անցերող: Ան կարծես մտա-

հոգուած չէր իր վիճակով. «Ըստ, պարոն խմբագիր, ո՞ր կ'երթայ մեր հայ լիզուն»:

Եւ պէտք է որ ուժեղ ըլլայ այդ նկարագիրը, որովհետեւ ոչ միայն այդ նկարագիրը պահելու, այլև ուժեղացնելու համար հսկայական զոհեր տուած ենք<sup>4</sup>:

Որո՞նք են մեր ցեղային նկարագրերը:

Եթէ մօտենանք մարդկային պատմութեան մէջ տեղի ունեցած մարդկային գեղեցիկ ճգնաժամներուն, պիտի տեսնենք, որ մարդկութիւնը նոյնպէս մեծ զոհեր տուած է՝ փրկելու համար ինչ որ բարի է, ինչ որ գեղեցիկ է, ու կառուցած է բարոյական մեծ տաճար մը: Եթէ սերտելու ըլլանք մեր ժողովուրդի նկարագիրը, պիտի տեսնենք, որ ան իր պայքարներով ու սկզբունքներով եղած է գեղեցիկ ճգնաժամներ արտայայտող փոքրիկ աշխարհ մը: Մեր ժողովուրդին ապրեցնող էն առողջ նկարագիրը եղած է, ինչպէս ըսի, հաւատքը: Ան ոչ միայն հաւատաց, այլև 1915ին մեծ զոհեր տուաւ պահելու համար այդ հաւատքը ու ժառանգ ձգելու եկող դարերուն: Անոնք շատ անլի էին, քան այն բանակները, որոնք աշխարհագրական սահմանները կը պահեն: Անոնք իրենց գոհարբութիւնով ստեղծեցին հոգեկան մեծ սահման մը, որուն ոչ մէկ թշնամի կրնայ հասնիլ:

Անտարակոյս քրիստոնէական շարժումը աշխարհի պատմութեան մէջ եղած է համամարդկային ու բարոյական ուժերէն գլխաւորը: Շատ ժամանակ չանցաւ, եւ արդէն 3-րդ դարուն Գրիգոր Լուսաւորիչի գլխաւորութեամբ կործանուեցան բազիլիկները<sup>5</sup>: Մանրամասնութիւններ կը պակսին, եւ սակայն ես կը հաւատամ, որ հայ ժողովուրդը նոյնպէս ընդունակ է համամարդկային սկզբունքներ դնել մաքուր իրենց բազիլիկներու փառաբանութեան մէջ:

Եղիշէ տուած է Վարդանանց վիպային գեղեցկութեամբ: Կայ այնտեղ տող մը, որ նոյնպէս նկարագիրն է հայ ժողովուրդին եւ կ'արտայայտէ ուժգնութիւնը մեր հաւատքին. «Ահա սուր քո եւ պարանոց մեր»: Դարերէ յետոյ այդ հաւատքն էր, որ արտայայտուեցաւ 1915ի մէկ միլիոն զոհերու կողմէն: «Ահա սուր քո եւ պարանոց մեր». մենք չենք զիջիր մեր հաւատքէն ու մեր նկարագիրէն:

Ըսուած է, որ կան պարտութիւններ, որ մեծ յաղթանակներ են: Վարդանանցը այդ մեծ յաղթանակներէն մէկն է: «Ահա սուր քո եւ պարանոց մեր»: Նոյն ձեւով յաղթանակեցին 1915ի զոհերը: Քրիստոնէութիւնը ռեւէ շրջանէն երկիւրքիսն է եւ մարդկայինը, եւ հայ ժողովուրդը զիտէ այդ մարդկային սկզբունքները դարձնել ցեղային<sup>6</sup>:

Հրեայ ցեղի տաղանդաւոր մէկ գրող՝ Շուրմ Ալ, իր մէկ պատմուածքին մէջ կու տայ դրուագ մը՝ հրեայ ցեղի ապրելու ուժը եւ հաւատքը արտայայտող: Հռովմայեցի զօրավարը իր զօրքերով յարձակած է հրեայ անպաշտպան ժողովուրդին վրայ. ջարդ, հրդեհ, ճիչ ու արիւն եւ սակայն ոչ փախուստ: Սուրերը անլի կը շաչին, ու զոհերը անլի ու անլի կը շատնան: Չօրավարը սարսափով կը տեսնէ, որ հրեայ ժողովուրդը՝ ծեր թէ երիտասարդ, մայրը իր զաւակը գրկած, թնդանօթին ու սուրերուն դէմ կը վազեն՝ խառնուելու համար միւս բոլոր զոհերուն: Այդ պահուն է, որ հռովմեացի զօրավարը սարսափահար կը հրամայէ, որ դադարեցնեն կռիւը: Չօրավարը պարտուած էր՝ տեսնելով մարդկային աներեւակայելի զոհարբութիւնը. «Ահա սուր քո եւ պարանոց մեր»:

Այդ նոյն հրեայ ժողովուրդը ոչ միայն յաղթանակեց իր մշակոյթով եւ ամէն բանով, այլև հազարաւոր տարիներ յետոյ ստեղծեց իր հայրենիքը, երբ դարեր ի վեր Հռովմը դադրած էր գոյութիւն ունենալէ:

Քրիստոնէութիւնը որպէս օրինակ վերցուցի՝ ցոյց տալու համար մեր նկարագիրը, մեր հաւատքը համամարդկային բարոյական սկզբունքներուն հանդէպ: Մեր հեթանոսական շրջանէն հազիւ մի քանի կտորներ փրկուած են հէքեաթի վիճակով: Մենք նոյնպէս կը տեսնենք այնտեղ մարդկային գեղեցիկ ճգնաժամներու արդիական ըմբռումը: Ես կը սիրեմ յաճախ մեր ցեղային ծագման օրինակը մէջտեղ բերել, որովհետեւ ես չգիտեմ ռեւէ ազգի մը ծագումը, որ հիմնուած ըլլայ մեծագոյն ու ազնուական իտեալի վրայ, որքան հայ ցեղի ծագումը: Հայկ կը հեռանայ Բելէն, որովհետեւ կը նախընտրէ ցուրտ սառնամանիքին մէջ ազատ ապրիլ, քան Բելի խոստացած դրախտին մէջ գերի ըլլալ: Ահեղ կռուին մէջ Հայկ կը յաղթանակէ իր փոքրաթիւ զօրքերով յանուն ազատութեան: Ահա պայքար մը, որ այսօրուանն է եւ որ վաղուանը պիտի ըլլայ, եւ այդ կապուած մեր ցեղային ծագման հետ: Նոյն հզօր կռիւը՝ յանուն ազատութեան՝ Սասունցի Դաւթի եւ Մարա Մելիքի կռուի պէս:

Եթէ մօտենանք մեր դիցազնական պատմութեան, մենք պիտի տեսնենք, որ հայ հերոսը առանկապէս ներշնչուած է մարդկային մեծ սկզբունքներով: Այդ նկարագիրը ինչքան հին է, նոյնքան եւ նոր է: Այդ հայ ժողովուրդն է: Նոյն համամարդկային սկզբունքներու առաքելները եղած են Նազարեան, Աքովեան, Նալպանտեան, Արծրունի, Բաֆֆի, Ահարոնեան, Խրիմեան, Մխիթար արքա եւ մեր սրբազան ֆէտայիները: Բոլոր անոնք, որոնք զոհ գացին 1915ի այն սհաւոր Եղեռնին:

Սուրէն անլի գեղեցիկ գաղափարներն են յաղթանակողները: Ահա թէ ինչու ինչքան թալեցին, միշտ շէն մնաց հայ տունը: Ինչքան հալածեցին

ամոր մշակոյթը, ան լեռներու կողքին<sup>7</sup> ու օտար երկինքներու տակ մշակոյթին տուներ, վանքեր շինեց: Ինչքան հալածուեցաւ ան, իր հաւատքը ատելի ամուր պահեց ու ստեղծեց այսօրուայ Հայաստանը, որովհետեւ նոյն հաւատքով շարժեց իր սուրը:

1915ի աղէտի մէկ միլիոն զոհերը սրբազան զոհերն էին մեր դարաւոր հաւատքին ու անսպառ ուժին: Անոնք չպարտուեցան, անոնք յաղթանակեցին: Երբեւէ չեն պարտուիր անոնք, որոնք կ'իյնան հաւատքի մը համար: Թշնամին մեր սուրէն չվախցաւ. ան մեր հաւատքէն վախցաւ: Եւ նոյն ժողովուրդն է այսօր Հայաստանին մէջ, նոյն ժողովուրդը՝ այսօր արտասահմանի մէջ<sup>8</sup>: Ժամանակները կարճ են ազգերու պատմութեան համար, եւ օր մըն ալ պիտի տեսնեն, որ թուրքը անցնող ազգերու ճակատագրին ենթարկուած է, եւ մենք ենք յաղթանակողը<sup>9</sup>, որովհետեւ հայ ժողովուրդը գիտէ զոհուիլ լաւագոյն սկզբունքներուն համար: Մենք հաւատքով պիտի յաղթենք<sup>10</sup>: Կռուի մէջ, թեւ փոքրաթիւ Հայկի զօրքերու մնան, սակայն պիտի յաղթենք: Հայկի բազուկն ունինք: Մեր բազուկներուն մէջ հաւատքի ուժը կայ:

## ՀԱՏՎԱԾՆԵՐ ՉԵՈՒԳՐԵՐԻՑ

1.

Մեր կեանքը, որ կայ, ու կ'ապրինք, տխուր ենք կամ ուրախ, մշտնջենական պայքարի մէջ է ինքզինք պաշտպանելու համար: Մեր զգայաբանքները, որ մեր կենսունակութեան աղբիւրները եղած են, եղած են նաեւ ինքնապաշտպանութեան զէնքեր: Եւ մարդը կը ժառանգէ այդ զէնքերը: Եթէ տկար է մեր մարմինը, ուրեմն տկար են նաեւ մեր զգայարանները՝ մեր ներքին գործարանները, որոնք կանչուած են մեր գոյութիւնը պաշտպանելու: Մենք չգիտենք, թէ ի՞նչ ահաւոր պայքար կը կատարուի մեր մարմնին մէջ: Երեւակայեցէք երկու ուժեղ քանակներ, որ ռազմադաշտին վրայ իրարու կը բախին: Բանակ մը, որ ինքզինք կը պաշտպանէ, ուրիշ քանակ մը, որ կը յարձակի: Նոյն ճակատամարտն է, որ կը կատարուի մեր մէջ: Մէկը քանդող ճրրմերու\*, <վիրուսներու> քանակն է, իսկ միւրը՝ կենսունակ ճրրմերու քանակը, եւ անոնք անընդհատ պայքարի մէջ են՝ իրար նուաճելու եւ հողամասեր գրաւելու մարմնին մէջ: Երբ քայքայող ճրրմը մեր մարմնին մէջ որոշ գրաւումներ կ'ընէ, հիւանդ կը զգանք եւ արդէն բժիշկ կը կանչենք: Բժիշկի գործը տեսակ մը օգնութիւն է, որ կը հասցնէ՝ տկարացնելով քայքայող ճրրմերը եւ կամ շտապնելով կենսաճրրմերը, եւ առիթ կու տայ, որ երբան գրաւեն մարմնի տկարացած մասը եւ սկսին բժշկել:

Ինչ որ կարելի է ըսել անհատական կեանքի համար, նոյնը կարելի է ըսել ազգերու համար: Ազգն ալ, որպէս հաւաքականութիւն, նոյն բջիջային եւ զգայարանական կազմութիւնն ունի: Այդ կազմութիւնները կու գան համայնք մը եւ կամ ազգ մը պաշտպանելու: Ինչքան առողջ ըլլան ազգի մը զգայարանքները, այնքան տեսական եւ դիմացկուն կ'ըլլայ ազգի մը կեանքը: Անհատին տեղ այս անգամ հաւաքականութիւնն է, որ իր տեսական պայքարներով ստեղծած է իր զգայարանքները պաշտպանելու համար:

Որոնք են ազգի մը զգայարանքները, որ դեր կը կատարեն տեսանելիքի, հոտոտելիքի, շօշափելիքի, ճաշակելիքի, լսելիքի եւ այդ բոլորի կեդրոն մտածման: Այդ կեդրոնը ինքը մշակոյթն է, ու զգայարանքները այդ կեդրոնը կազմող ստորաբաժանումներն են, ինչպէս լեզուն է, գրականութիւնն է, երաժշտութիւնն է, ճարտարապետութիւնն է, վաճառականութիւնն է եւ վերջապէս քանակն է: Եթէ քանակը պարտուի, միւս ստորաբա-

ժանուճներն են, որ գործի կը լծուին ազգի մը գոյութիւնը պաշտպանելու համար: Հայ ազգը, որպէս մշակութային ազգ, իր բանակներով միայն ինքզինքն պաշտպանած է քայքայող բանակներու դէմ: Եւ մենք յաճախ պարտուած ենք, ցրուած ենք քայքայուելու վտանգով եւ սակայն զարմանալի կերպով մշակութային ուժը, որ ժառանգաբար եկած է մեր նախնիքներէն, պաշտպանած է մեզ որպէս զգայուն եւ կենսունակ ճղրմ: Մենք պաշտպանուած ենք երգով, գրականութիւնով, ճարտարապետութիւնով, Նարեկացիով ու Մովսէս Խորենացիով: Մենք պաշտպանուած ենք Վարուժանով եւ Եղիշէ Դուրեանով: Երբ Դուրեան կ'ըսենք, անհատը չէ միայն, այլ անոր մէջ մեր պայտերէն եկած ժառանգութիւն մը կայ: Դարերը կու գան այդ ուժերը ստեղծելու համար: Նոյնը եղած է դերը եկեղեցական Դուրեանի, եւ նոյնը եղած է դերը Անդրանիկի մը եւ կամ Մուրատի մը: անոնք կու գան հայ ազգը պաշտպանելու: Յուսարումի շրջաններ շատ ունեցած ենք մեր պատմութեան մէջ, եւ չգիտես՝ կենսաբանական ի՞նչ օրէնքով մէջտեղ կու գան կենսունակ տարրերը եւ գրաւումներ կ'ընեն հայ ազգը որպէս ամբողջութիւն պահելու համար: Յուսարումի հիւանդագին վիճակի եւ զարթօնքի շրջաններ շատ ունեցած ենք: Է՛ն վերջինը մեր օրերով պատահեցաւ. մմանը չտեսնուած պատմութեան մէջ, անգութ, անհատը այդ զանգուածային տեղահանութիւնն էր հայ ժողովուրդին: Թշնամին ուզեց ընդմիջու ջնջել հայու գոյութիւնը՝ մտաւորականէն սկսեալ մինչեւ օրօրոցի երախան: Եւ չգիտես՝ բնական ի՞նչ օրէնքով գործի լծուեցան կենսատարրերը՝ բուժելու այդ մահացու վերքը եւ ոտքի կանգնեցնելու այս անգամ <անընթ> քայքայուած հայ ժողովուրդը: Այդ կենսատարրը դաշնակցութիւնը եղաւ, որ նոյնպէս յուսահատական պայմաններու մէջ յենուեցաւ միմիայն իր ոգեկան ուժին վրայ: Ուժի մը վճռակամութիւնն էր այդ, եւ այդ վճռակամութեան մէջ դարերը խօսեցան: Չկար բաւարար զէնք, չկար պարէնատրում: Կար սով, համաճարակ: Անօթի ու մերկ գաղթականութիւն մը լեցուած էր Երեսան: Երեսանի պատերու տակէն համաճարակի ու սովամահ դիակներ կը հաւաքէին: Այդ զարհուրելի պայմաններուն մէջ էր, որ հայ առողջ եւ կենսունակ տարրը վճռեց ապրիլ եւ ստեղծել հայրենիքի սահմանները: Եւ պահեց՝ յաղթանակ տանելով մի քանի ճակատներու վրայ: Մայիս 28ը այդ աստուածային <ցասումի> եւ մէկ սխրագործութեան տօնն է, որ կը տօնենք այսօր: Այդ թուականն է, որ գոյութեան կանչեց ազգ մը, որ այսօր գոյութիւն ունի մեր հայրենիքը՝ իր Երեսանով եւ մօտ երկու միլիոն ժողովուրդով: Հաւաքէք 2 000 000 ժողովուրդ իր հողին վրայ, ան հրաշքներ կը գործէ: Եթէ այսօր կայ շինարարութիւն, եթէ կայ մշակութային վերելք, առաւելապէս

հայ ժողովուրդին կը պարտինք: Նոյն ժողովուրդն է հոն, որ դարեր դիմացաւ ու ստեղծագործեց: Մեր դարերու ստրկութիւնը, առաւելապէս թրքական գերիշխանութեան ներքեւ, գործեց իր աւերը՝ աղճատելով, ստրկացնելով հայ նկարագիրը: Ստրկութիւնն է, որ կը պռոջայ եւ Հայաստանի կազմութիւնը ռուսին կը վերագրէ: Երիցս արգահատելի ստրկութիւն է, երբ մանաւանդ թուրքին կը վերագրէ: Այն թուրքը, որ մեր օրօրոցի երախան իսկ ուզեց կոտորել: Ստրկութիւն է չընդունիլ ուժը հայ ժողովուրդին, անոր դարերու ժառանգութիւնը, անոր ցասումին <ուժգնութիւնը>, որ Մայիս 28ով հայրենիք մը ստեղծեց: Ան մեր ոգիի եւ մեր ինքնութեան թուականն է: Եւ ձգեց հայ ժողովուրդը յաւիտենականութեան մը մէջ:

## 2

Մենք փրկուած էինք, եւ մեզի համար այլեւս պարտութիւն չէր, երբ <թուրքը> խելագար հոսանքով մը ներս խուժեց դեռ նոր ստեղծուած Հայաստան, ու անխնայ յարձակումի ենթարկուեցան այն բոլոր արժէքները, որ նուիրական էին հայ ժողովուրդին համար: Հալածանքի ենթարկուեցաւ ոգին, որ միայն ազգային կրնար ըլլալ: Հայ ժողովուրդին համար չկար նուիրականութիւն մը, ուր դրած չըլլար իր պայտերէն, իր պատմութենէն, իր գոհերէն ժառանգած ազգային ոգին: Հայ նկարագիրը միմիայն ազգային է, հայ անհատը որպէս ազգ կը մտածէ եւ իր անհատական նկարագիրը խառնած է ազգային նկարագրին հետ: Ազգային է հայ մայրը, որ անապատի աւագին վրայ իր գաւկին Ա.Բ.Գը կը սորվեցնէ, ազգային է հայ վարժապետը, հայ առեւտրականը: Տուէք հայ ժողովուրդին որեւէ բան, տուէք երկինք, հող, Աստուած, ան զարմանալի կերպով կ'ազգայնացնէ, որովհետեւ իր գոյութիւնն անոր մէջ կը գտնէ: Հալածել անոր մէջ ազգայինը, այդ ըսել է անոր մէջ սպաննել ոգին, սպաննալ անոր գոյութեան:

Անոնք՝ պոլշեիկներ, ոչ միայն լուծարքի ենթարկեցին որեւէ կազմակերպուած ուժ, ինչպէս Էջմիածին, ինչպէս դաշնակցութիւն, այլեւ լուծարքի ենթարկեցին մարդ անհատը՝ որպէս անհատականութիւն եւ որպէս նկարագիր: Վերցուր ազգի մը կամ անհատի մը մէջէն ազատութիւնը, այդ անհատը բարոյական ըլլալէ կը դադրէ: Ազատութեան ձգտումը հայ ժողովուրդին ոգին, գլխաւոր պայքարը եղած է եւ ուղիղ գծով մեզի հասած է Հայկէն մինչեւ Աւարայր, մինչեւ Մայիս 28ը:

Եթէ կ'ուզէք ազգի մը նկարագիրը երեսան բերել, մօտեցէք անոր լեկնտներուն: Լեկնտները ազգի մը հոգեկան արտայայտութիւններն են՝ շատ անկեղծ եւ շատ նախնական ձեւով արտայայտուած:

Մեր ազգային ձգտումը եղած է այնքան գաղափարական եւ համա-  
մարդկային, որ այսօրուայ մարդոց եւ ազգերու բարոյական հիմքը կը  
կազմէ. այդ ձգտումը ազատութիւնն է: Հայկի եւ Բելի պատերազմը լե-  
կենտ չէ ինծի համար, այլ այնքան իրական, որքան Ղարաբաղի խիստի եւ  
Սարտարապատի պատերազմները: Եւ ես չգիտեմ ազգ մը, որ իր ծագու-  
մով այնքան ազնուական եղած է, որքան հայը: Հայկ կը կռուի Բելի դէմ  
եւ կը նախընտրէ սառնամանիքի մէջ ապրիլ, քան գերի ըլլալ Բելի, հա-  
կառակ անոր, որ Բելը կը խոստանայ իր երկրի լաւագոյն տեղը տալ Հայ-  
կին, երբ վերադառնայ որպէս հպատակ:

Մայիս 28ի մէջ Հայկի եւ Բելի կռիւը կար, կար կռիւը Սասունցի Դաւի-  
թի եւ Սարա Մելիքի: Է՛ն կարեւորը, Հայաստանի սահմաններուն մէջ  
շահուած էր ազատութիւնը: Հայրենիքը ուրիշ բան չէ, եթէ ոչ ազատութիւն  
եւ նկարագիր: Հայ անհատը, որպէս ազգ, նկարագիր է: Ան անցած է  
արիւնի ճամբաներէն՝ այդ նկարագիրը բարձր պահելու համար:

Հայու իսկական նկարագիրը գերադասական է. այն ազգը, որ ազա-  
տութեան համար այնքան մեծ զոհեր տուած է, ստորադաս չի կրնար ըլ-  
լալ: Ստորադաս չի կրնար ըլլալ, երբ կը հաւատայ ու կը գոհուի:

Մենք տկար եղած չենք այնքան ատեն, որ հաւատացեր ենք մեր ցեղի  
ազնուական նկարագրին ու զոհել գիտցած ենք: Տկար ենք այն ատեն,  
երբ իսկապէս կը հաշտուիմք ստրկութեան: Աղմուկ կար ստրկութիւն փա-  
ռաբանողներու կողմէն, երբ առաջին անգամ ֆէտայիներու շարժումը  
սկսաւ: Աղմուկ կայ նաեւ այսօր, եւ ո՞վ կը յանդգնի ըսել, որ ազատ չէ հայ  
ժողովուրդը:

Ստրուկ է այն ազգը, որ արգահատելի ըլլալու աստիճան ստորադաս  
զգացում ունի: Անոնք կը մոռնան հայ ժողովուրդը իր մեծութիւնով, իր շի-  
նարարութիւնով ու կը փառաբանեն իրենց տէրերը: Անոնք ոչ միայն ան-  
գիտացան մեր հերոսական թուականը՝ Մայիս 28ը, այլեւ հալածեցին եւ  
կը հալածեն այդ թուականը, Հայաստանը կերտող դաշնակցութիւնը, երբ  
ան կը խօսի ազատութեան մասին, որ աղճատումի վտանգի մէջ է:

Մենք կը հաւատանք հայ ժողովուրդի նկարագրին, որովհետեւ շատ  
զոհեր տուած ենք՝ այդ նկարագիրը բարձր պահելու համար: Եւ ես կը  
հաւատամ, որ Հայաստանի մէջ մէկուկէս միլիոն ժողովուրդը ընդունակ է  
հրաշքեր գործելու: Եւ ես վստահ եմ, որ Հայաստանի ժողովուրդը իր հո-  
գու խորքին մէջ առանձինն հրճուանքով կը տեսնէ Մայիս 28ի տօնակա-  
տարութիւնը, որովհետեւ այդ թուականին եւ այդ ոգիին մէջ կը գտնէ իր  
ուժը ու ազգային նկարագիրը: Տօնելով Մայիս 28ը՝ մենք կը տօնենք  
նաեւ հաւատքն ու ձգտումը Հայաստանի ժողովուրդին, անոնց ձգտումն

է, որ լրիւ կը դարձնենք՝ փրկելով ցեղի ազատ անհատականութիւնն ու  
նկարագիրը:

Հայաստանի մէջ այսօր մշակութային վերելք կը տեսնենք. ի զին բո-  
լոր գոհողութիւններու՝ ոգին ազգային ոգին է, որ այնտեղ իր դերը կը կա-  
տարէ: Այդ ոգիին զոհուեցան պուշեիկ Խանճեանը, Սահակ Տէր-Գար-  
բիէլեանը, Լուկաշինը, այդ ոգիին զոհուեցան շատ շատեր, որովհետեւ  
որպէս ազգ շեղած էինք մարքս-լենինեան շաւիղէն: Երեք տարի առաջ  
տեղի ունեցաւ գրողներու առաջին համագումարը: Այդ համագումարի  
նախօրեակին հրապարակէն վերցուցած էին գրողներու տաղանդաւոր  
սերունդ մը՝ Բակունց, Ալազան, Թոթովենց, որովհետեւ շեղած էին  
մարքս-լենինեան շաւիղէն, այսինքն՝ ազգային ոգի ցոյց տուած էին: Նոյն  
համագումարին մէջ մնացողներ հատիկ-հատիկ եկած էին իրենց մեղքը  
խոստովանելու, իրենց չգործած մեղքերը: Նոյնպէս շեղած էին մարքս-լե-  
նինեան շաւիղէն:

Մի քանի ամիս առաջ տեղի ունեցաւ երկրորդ համագումարը, եւ կա-  
տարուեցաւ նոյն ողբերգակատակերգութիւնը: Հայ գրողները բոլորն ալ  
խոստովանած էին իրենց մեղքերը, որ շեղած էին մարքս-լենինեան  
շաւիղէն:

Գրականութիւն մը երբեք հարազատ չէ, երբ ան արտայայտութիւն չէ  
նոյն ժողովուրդի ոգիին: Այնտեղ՝ հայ գրողներու համագումարին մէջ,  
օտար մը՝ Ժողանով մը, նստած է եւ ուղղութիւն կու տայ հայ գրողներուն:

Հայ գրողը միշտ ալ պիտի շեղի մարքս-լենինեան շաւիղէն, պիտի շե-  
ղի հայ վարժապետը, հայ խմբագիրը, հայ ժողովուրդը՝ որպէս ազգ եւ  
նկարագիր: Ու ան պիտի երթայ ազատութեան, պիտի երթայ Մայիս  
28ին, որովհետեւ ազատութիւն ոգի է եւ առողջութիւն:

## 3

... Թէ ինչպէս մեր գաւակներուն յանձնենք մեր նախնիքներէն մեզի  
փոխանցուած այդ մեծ հոգեկան ժառանգը: Սփիւռքին մէջ ցրուած հայ  
ծնողքը նոյն ողբերգութիւնը կ'ապրին: Սփիւռքի մէջ հայը բարեկեցիկ է,  
նիւթական մեծ կարիքներ չունի: Միշտ ճոխ է անոր սեղանը, եւ սակայն  
լուռ տրտմութիւն մը կայ անոր դէմքի վրայ: Մեր գաւակները այնքան  
բախտաւոր չեղան, որ իրենց նախնիքներէն ժառանգեն պետական  
կազմ, սահմաններ ու բանակ: Այդ բոլորն ամէն հայու հոգիին մէջ են, մեր  
հոգիներուն մէջ են, նոյնիսկ մեր բանակները. ահա ինչպէս հայ ժողովուր-  
դը դիմացաւ իր պայքարներուն մէջ: Ան ոչ միայն ապրեցաւ, այլեւ յաղ-  
թեց: Այդ յաղթանակի է՛ն կարեւոր արդիւնքը այսօրուայ Հայաստանն է

իր սահմաններով ու իր մեկուկուս միլիոններ անլի ժողովուրդով: Նախկին Հայաստանի Հանրապետությունն է, որուն սահմանները մեր արհեստով գծուած են: Մեր հաւատքն էր, մեր հոգեկան կորովը, որ մեզ տարաւ այդ յաղթանակին: Այդ հոգեկան կորովը ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր մշակոյթը, որուն դարերու ընթացքին ոչ մէկ թշնամի կրցաւ յաղթել: Մենք այդ մշակոյթի ուժով դիմագրաւեցինք այն բազմաթիւ թշնամիներուն, բարբարոսներուն, որոնք անցան Հայաստանի հողէն ու իրենց ետեւ աներակներ ձգեցին: Քանի՛ - քանի՛ անգամներ մեր թշնամիներուն կողմէն քանդուեցան Հայաստանի սահմանները, եւ սակայն չի կրցան քանդել այդ սահմանները, որ քարտէսի պէս մեր հոգիներու մէջ գծուած են: Եւ վա՛յ այն ժողովուրդին, որ չունի այդ հոգեկան գծերը իր մէջ: Վա՛յ անոր, որ չունի հոգեկան Հայաստանը: Բանակները չեն, որ կը պահեն ազգ մը: Հօր բանակներ ունեցող ազգեր չկան այսօր: Անոնք, որոնք հայ ժողովուրդի ժամանակակիցները եղած են եւ յաճախ արշաւեր են Հայաստան: Մենք պահեցինք մեր գոյութիւնը, եւ կարելի է ըսել՝ մենք չի պարտուեցանք եւ նոյնիսկ յաղթեցինք բանակներուն մեր ոգեկան ուժով ու մեր մշակոյթով:

Մշակոյթը երբեք վերացական բան չէ, մանաւանդ հայ ժողովուրդին համար, այլ շողուած է իր մարմնին, իր ոսկորներուն հետ: Ան այնքան իրական է, որքան մեր գոյութիւնը եւ մեր սքանչելի լեզուն: Մշակոյթը դուր էք, սիրելի՛ հայրենակիցներ, ձեր հայկական խոհուն դէմքերով եւ նոյն խոհուն աչքերով:

Մշակոյթ է, երբ այս տարագիր պայմաններուն մէջ կ'աշխատիք պահել հայ տունը իր աւանդական բարքերով, երբ ամէն անգամ կը յիշեցնէք ձեր զակին, որ հայերէն խօսի: Ես կ'ըմբռնեմ, որպէս հայր, թէ ի՛նչ կը զգաք նաեւ դուք, երբ կը պարտաւորուիք սաստումներ ընելու ձեր զակներուն, երբեմն կը սրտմտիք, կը բարկանաք, նոյնիսկ կը պռտաք ձեր զակին. «Հայերէն խօսէ, շա՛ն որդի, հայերէն»:

Միակ լեզուն չէ անշուշտ մեր շրջապատին համար: Կայ եկեղեցին, դպրոց կազմելու մտահոգութիւն: Ի զին բոլոր գոհողութիւններու՝ կան մեր ազգային շէնքերը, մեր մամուլը, մեր «Հայրենիք» ամսագիրը, որ շատ կարեւոր դեր կատարեց մեր գրականութեան վերելքին, կան մեր անգլերէն հրատարակութիւնները նոր սերունդին համար, մեր կուսակցական ուժեղ ջանքերը: Այդ բոլորը կը պահէ ազգ մը: Հօր բանակներ ունեցող ազգեր չկան այսօր, ինչպէս հռովմեացիներն է: Բոլորը կու գան մեր ազգային նկարագիրը պահելու: Այդ ջանքերը կը տեսնենք, որ առաւելապէս մշակութային է: Կը հաւատանք, որ մշակոյթի ուժով պահած ենք մեր գոյութիւնը եւ այդ ուժով ալ պիտի յաղթենք: Մշակոյթը հայ ժողովուրդի

նկարագիրն է, քաղաքակրթութեան ջահակիրը դառնալու նկարագիրը: Մեր պատմութիւնը մենք ենք եւ զարմանալի կերպով պահած ենք մեր նախնիքներուն նկարագիրը: Հակառակ անցնող դարերուն՝ մեր մէջ շատ քան փոխուած չէ Հայկէն ու Վարդանէն:

Ամտարակոյս, մեր պատմութեան մէջ ունեցած ենք ուժեղ ճակատամարտներ եւ հերոսական, նոյնիսկ աշխարհակալ Հռովմին դէմ, եւ սակայն այդ ճակատամարտները երբեք եղած չեն տիրակալելու, սպաննելու, բախանելու եւ աներելու ճգատմով: Մենք մղած ենք այդ ճակատամարտները՝ պահելու համար մեր հոգեկան անկախութիւնը, այլ խօսքով, մեր ազատութիւնն ու մշակոյթը: Մենք կռուեցանք՝ Անին պաշտպանելու ամապատներէն եկած կիսամերկ այն յորդաններուն դէմ, որոնք մողէսներով եւ ձիու կաթով կը սնանէին: Անոնք կու գային կողոպտելու, աներելու իսկապէս մշակութային ոստան մը 1001 եկեղեցիներով: Կարելի՛ է այդ շրջանին երեւակայել ժողովուրդ մը, որ այդքան լեցուն ըլլայ երկնքի իմաստութեամբ, քան հայ ժողովուրդը: Մենք չորրորդ դարուն քրիստոնէութիւն ընդունեցինք, որովհետեւ այդ շրջանին քրիստոնէութիւնը մշակոյթ էր եւ կու գար Արեւմուտքէն, ու մենք պաշտպանեցինք այդ մշակոյթը ի զին մեծ գոհողութիւններու, որովհետեւ մեր ուժեղ դրոշմը դրած էինք այդ մշակոյթին վրայ եւ մեր ազգային գոյութիւնը անոր հետ կապեցինք: Քրիստոնէութեան մէջ գտանք այն բոլոր համամարդկային խաղաղասէր սկզբունքները, որ մեր ազգային նկարագիրը եղած են: Իսկական մշակոյթը համամարդկային է, եւ հայ ժողովուրդին մէջ միշտ ալ ուժեղ եղած են այդ համամարդկային սկզբունքները: Համամարդկային է նաեւ մեր ազգային ըմբռնումը:

Չէ՛, մշակոյթը իր մէջ երկաթներով զինուած բանակներ չունի: Մշակոյթը կրնայ պարտուիլ եւ երբեմն ալ այդ պարտութիւնով յաղթել: Դուք չգիտէք ոեւէ ազգ, որ պարտութիւնով յաղթէ: Ես կրնամ յիշել երեք դրուագ միայն. առաջին՝ մեր Վարդանանց պատերազմը, երկրորդ՝ ֆրանսական ժողովուրդի նկարագիրը դարբնող Ժաննա դ'Արքն է, իսկ երրորդ՝ Քրիստոս մը, որ իր խաչելութիւնով յաղթեց:

Հոգեպէս ուժեղ ժողովուրդներն են, որ կրնան յաղթել պարտութիւնով: Վարդան յաղթեց՝ անլի ուժեղացնելով հայ ժողովուրդի հոգեկան սահմանները: Ան հոգեկան սնունդ տուաւ եւ քրիստոնէութեան մէջ դրաւ ազգային ուժեղ նկարագիր:

Եւ ինչքա՛ն գեղեցիկ է (Արեւի ծագումին չափ գեղեցիկ) մեր ազգային ծագումը, որ տուած է Խորենացիներ: Այդ այն պարզ պատմութիւնն է, որ մենք սերտեցինք մեր նախակրթաբաններուն մէջ՝ Հայկի եւ Բելի պատ-



մութիւնը: Արդի քննական պատմութիւնը կրնայ «առասպելախառն է» ըսել, ինձի համար արեւի իրական է, որովհետեւ առասպելները, հէքեքները նոյնպէս հայ ժողովուրդի հոգեկան արտայայտութիւններն են:

Եւ այդ ձեւով Հայկի եւ Բէլի պատմութիւնն արեւի իրական կը դառնայ: Եթէ մեր Հայկը արշաւէր արեւելք, հիւսիս կամ հարաւ, արեւեր եւ գերի վարեր ժողովուրդներ, ոչ մէկ հետաքրքրութիւն: Ինչպէս կ'ընէին ասորական թագաւորները հետեւեալ արձանագրութիւններով. «Ես՝ Մարդանաբադս, արշաւեցի հիւսիս, արեւեցի, գերի վարեցի ու դաշտի մէջ զանկի բլուրներ կազմեցի»: Եւ արդէն չկայ այն անեղ Ասորեստանը:

Մեր Հայկը հայ ժողովուրդի հոգեկան մեծ պոռթկումն էր: Ան իր ճակատամարտով ուժեղ պատգամ մը, ճշմարիտ նպատակ մը ձգեց իր ժողովուրդին, զայիք դարերուն: Ճշմարտութիւն մը, որուն համար համայն մարդկութիւնը կը պայքարի նաեւ այսօր: Այդ ազատութեան ճշմարտութիւնն է:

Ահա թէ, սիրելի՛ հայրենակիցներ, ինչքան մեծ է մեր ազգային ծագումին նպատակը: Մեր ազգը նպատակի մը համար կանչուած է: Ինչքան՞ հոգեկան մեծութիւն է Հայկին մէջ, երբ կը նախընտրէ սառնամանիքներուն մէջ ապրիլ, քան թէ ապրիլ Բէլի բռնատիրութեան ներքեւ, եւ այդ ոգիով է, որ Հայկը կը յաղթէ Բէլին՝ այդ աժտահային: Եւ այդ յաղթանակին տեղը կը կոչէ Հայաստան: Այդ ազնիւ նպատակին համար պայքարեցաւ հայ ժողովուրդը, քշուեցաւ անապատները եւ հերոսական ուժեղ մարտնչումով ստեղծեց այսօրուայ Հայաստանի սահմանները: Եւ այսօր իսկ այդ ազատութեան նպատակին համար է, որ կը պայքարինք բռնատիրութեան դէմ<sup>2</sup>...:

Կար ատեն մը, որ մեր ձեռագիրները կը հաշուէին 100 000: Մեր թշնամիները իրենց արեւմտիկ հետ շատ փճացուցին նաեւ մեր ձեռագիրները, մեր ճարտարապետական հրաշալիքներուն հետ: Կ'ըսեն որ Բաղակայ բերդի գրաման ժամանակ հրկիզած են 10 000 ձեռագրեր, իսկ կ'ըսեն Լենկթեմուր անթիւ ձեռագիրները, տակառներուն մէջ լեցուցած, տարած է Սամարղանդ: Շատ կորսնցուցինք նաեւ է՛ն մեծ պատերազմին մէջ: Անթիւ-անհամար է մեր ձեռագրերու կորուստը, եւ տակաւին կան անոնք. հազարներ են՝ պահուած մեր վանքերուն եւ այժմ Երեսնի գրադարանին մէջ: Մենք կը տեսնենք, որ թշնամին հասկցաւ մեր ուժը եւ ուզեց վտանգել մեր մշակոյթը, եւ սակայն հայ տաղանդը շատ է նման հայրենի բարեբեր հողին, որ տուաւ թռչունին, աղբատին, տասանորդին, թուրքին, քուրդին, թալանին, եւ միշտ ալ լեցուն էին հայ ամբարները:

Ժողովուրդի մը մշակոյթին հիմնաքարը անտարակոյս լեզուն է: Եւ երեւակայել, որ հինգերորդ դարու գրերու գիւտին մենք արդէն քերական-

նական կատարելութիւնով լեզու մը ունէինք: Այդ կատարեալ լեզուով նոյնքան կատարեալ թարգմանութիւնով թարգմանուեցաւ «Թագուիթ թարգմանութեան»՝ Աստուածաշունչը:

5-րդ դարուն Հայաստանի մէջ քաղաքական ազատ պայմաններ չկային: Մէկ կողմէ Բիզանդիոնն էր, Հռովմը, միւս կողմէն Պարսկաստանն էր, նաեւ ասորիները, որոնք տիրապետած էին մեր եկեղեցիներուն: Այդ պայմաններուն մէջ բանակներ չի կազմակերպեցինք ճակատելու համար <անընթ> այդ մեծ ուժերուն դէմ, այլ ստեղծեցինք շատ հզօր զէնք մը, որ ոչ մէկ թշնամի կրցաւ մեզ պարտութեան մատնել: Ստեղծեցինք Ա.Բ.Գը, կատարուեցաւ Աստուածաշունչի հոյակապ թարգմանութիւնը: Դրկեցինք աշակերտներ Յունաստան, Բիզանդիոն, ու Ս. Մեսրոպ, բանակի մը գլուխ անցած, արշաւեց՝ տեր դառնալու Հայաստանին: Արշաւեց նաեւ դրացի երկիրները: Ան այրուծի չուներ, ոչ ալ զէնք ու թնդանօթ. անոր բանակը իր աշակերտներն էին: Բացին ուսումնարաններ Հայաստանի մէջ, մտան աղուաններու եւ վրացիներու երկիրը՝ տարածելու համար Աւետարանը, ստեղծելու համար մշակոյթ նաեւ դրանց երկիրներուն մէջ: Ըստ Կորինթի՝ Ս. Մեսրոպ գտաւ Ա.Բ.Գը նաեւ աղուաններուն: Ահա թէ ինչ եղած է Ս. Մեսրոպին արշաւանքի բնոյթը՝ տարածել լոյսը բալթին, բուրդին:

Ճիշդ է, մենք պարտուած ենք, բայց բնաւ կորսնցուցած չենք մեր պայքարը, որովհետեւ մեր ուժեղ զէնքերը եղած են մեր լեզուն, մեր գրականութիւնը, մեր երաժշտութիւնը: Երոյսական գիտնականներ այնքան առաջ գացին, որ հայ ճարտարապետութիւնը հիմք նկատեցին դէպի Երոյսատարածուած ճարտարապետութեան:

Գիտնականներէն յիշեմ անուն մը միայն՝ Սթրեզկովսկի: Ճարտարապետութիւնը մեր բերդերուն, մեր վանքերուն, մանաւանդ մեր եկեղեցիներու գմբեթներուն եւ կամարներուն: Կան հրաշալիքներ, որ տակաւին կը մնան կանգուն իրենց արեւակ վիճակին մէջ: Մեզի շատ հեռուները պիտի տանի, երբ խօսինք մեր անգիր դպրութեան, մեր դիւցազներգութիւններուն, մեր կրօնական, միջնադարեան, մեր աշուղական գրականութեան, մեր երգերու, աշխարհաբարի կազմութեան մասին: Եւ արդէն կարճ ժամանակին ընթացքին մենք ունեցանք հրաշալի աշխարհաբար, որ տուաւ Վերածնունդի մի քանի շրջաններ: Եւ տան կտորներէն հայրտանքով կրնան պոռայ բալթը ազգերուն եւ ըսել, որ եթէ դուք Լամարքին ունիք, մենք ունինք Դուրեան, եթէ դուք Վերլէն մը ունիք, մենք ունինք Տերեան, եթէ Փուշկին ունիք, մենք ունինք Թումանեան, ունինք Չարենց, ունինք Վարուժան, ունինք Մեծարենց, Սիամանթօ: Իսկ մեր Պարոնեանը չենք փոխեր ուրէ մէկ հեղինակի հետ եւ ոչ ալ Բաֆֆին:



Չէ՛, սիրելի՛ հայրենակիցներ, ազգասիրութիւնը չէ, որ ինձի այս ըսել կու տայ: Այս կ'ըսեմ գիտակցօրէն: Ըսուած է, որ յաւիտենական է հրէան, եւ ես կ'ըսեմ՝ նոյնքան յաւիտենական է հայ ժողովուրդի գոյութիւնը, որովհետեւ մենք կոչուած ենք պատմութեան մէջ դեր մը կատարելու՝ ոչ թէ իշխելու եւ կամ բանակներ կազմելու, այլ մեր աջ ձեռքին ջահ մը բռնելու:

Ազգը կրնայ հօգօր բանակներ ունենալ եւ սակայն պարտուիլ ու անցնիլ, երբ գօրատը չէ հոգեպէս: Մեր գոյութեան գաղտնիքը այդ հոգեկան մշակոյթին ուժն է, որուն ոչ մէկ թշնամի կրցաւ հասնիլ:

Քիչ առաջ հրէայ ժողովուրդը յիշեցի: Անոր տաղանդատը գրագէտներն Շուրմ Ալ կը պատմէ դրուագ մը իր մէկ վէպին մէջ: Թէ ինչպէս հռովմէական ուժեղ բանակ մը յարձակած է հրէայ ժողովուրդին վրայ ու կը կտտորէ անխնայ՝ կին թէ երախայ: Ինչքա՛ն կը ջարդուին, նոյնքան զոհերը սուրերու առջեւ կ'երթան: Հռովմայեցի զօրավարը կը դադրեցնէ ջարդը, երբ կը տեսնէ ժողովուրդ մը, որ անխնայ կը զոհուի հաւատքին համար:

- Դուք յաղթեցիք ինձի,- կը պոռայ զօրավարը:

Եւ այս նոյն ժողովուրդն է, որ իր ցեղի պատմութիւնը երկնքին հետ կապեց եւ մեր ձեռքը տուաւ որպէս Աւետարան՝ ճշմարտութիւնը բոլոր գրքերուն:

Այդ յատուկ է այն ժողովուրդին, որ նպատակի մը կը ձգտի: Այդ յատուկ է նաեւ հայ ժողովուրդին: Եթէ հայ ժողովուրդը իր հողի վրայ ունենայ, շատ չէ, 50 տարի խաղաղ եւ ազատ շրջան մը, ան ընդունակ է հրաշքներ գործելու:

Բժշկական գիտութիւնը կ'ըսէ, որ մեր մարմինը որպէս կենսաբանական կառուցում, պայքար կը տանի քայքայող ճրմներուն դէմ եւ յարատեւ պայքար: Ազգն ալ հաւաքական մարմին է եւ ենթակայ նոյն պայքարներուն: Եթէ կը տկարանայ այդ հաւաքական մարմինը, տեսնես՝ կենսատարրերն են, որ պայքարի կը մտնեն ու կը յաղթեն: Մենք պահ մը յուսահատեցանք, որ թուրքը այս անգամ բնաջնջեց հայ ժողովուրդը: Եւ ի՞նչ պատահեցաւ. մեր ներքին կենսատարրերը «Արջք օրհասականը» ուժով ստեղծեցին Հայաստանի Հանրապետութիւնը, որուն վրայ այժմ ռուսական արջը իր ծանր թեւերը դրած է: Մենք պայքարինք այդ բռնատիրութեան դէմ եւ սակայն հաւատանք այնտեղ ապրող մէկուկէս միլիոն հայ ժողովուրդին, որովհետեւ մենք ենք, նոյն ժողովուրդը, ժողովուրդը մեր պատմութեան, որ ուժեղ պայքար տարած է բռնապետներուն դէմ: Այժմ Հայաստանի ժողովուրդը կ'ուժեղացնէ այն անառիկ քերդը, որ պաշտպանած է հայ ժողովուրդը դարերով: Մշակոյթի քերդն է այդ:

Պայքարինք բռնատիրութեան դէմ եւ սակայն հաւատանք այն ժողովուրդին, որ նոյն մտահոգութիւններն ունի, ինչպէս մենք Սփիւռքին մէջ: Անոնք անելին ունին, որովհետեւ հայ հողին վրայ են, այն հողին, որուն մէջէն մեր նախնիքները կը շնչեն:

Այո՛, Հայաստանի հողը կը զգայ, կը շնչէ ու կը խօսի, թոք ունի ու սիրտ:

## ԻՆՉ Է ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կեանքը բնութեան ստեղծագործութիւնն է եւ բնութեան կամքը: Նոյն-պէս բնութեան ստեղծագործութիւնն է մահը: Ես գործածեցի «ստեղծագործութիւն» բառը մահուան համար, որովհետեւ կեանքի եւ մահուան ուժեղ պայքար եղած է, որ կեանքը հետզհետէ կատարելագործուի իր զգայարանքներով եւ պաշտպանութեան բնագոյով: Զգայարանքներէն կազմուած այդ բնագոյը կայ մաս կենդանիներուն մէջ՝ երբեմն անելի սուր: Մարդը շունի շունի մը զգայուն հոտոտելիքը եւ կամ շատ հեռուէն վտանգաւոր շարժումի մը աղմուկը լսելու զգայնութիւնը: Վտանգի զգայնութիւններ ունին իսկ թռչունները, նոյնիսկ մրջիւնները՝ անձրեւի: Այդ բոլորը կու գան պաշտպանելու եւ ստեղծելու ապրելու կամք: Մենք կը զարմանանք գոյութիւն ունենալու ինչ ուժեղ կամքով տունկի մը հունտը կը ճեղքուի, եւ հրելով հողը՝ դուրս՝ Արեւիկն կու գայ մատղաշ կանանչը: Եթէ ցորեն է, կը կազմուի հասկը սերնդագործելու եւ իր տեսակը ապրեցնելու, եթէ ծառ է, կը դառնայ հսկայ կաղնի մը: Ծաղիկին հոտը, կազմութեան նուրբ գծերը, գոյները եկած են պաշտպանելու եւ զգայարանական կարեւոր դեր կատարելու: Գուցէ բանաստեղծութիւնն է, երբ գրականութիւն, արուեստ՝ որպէս զգայարանական պաշտպանութիւն մարդոց, նմանցեն ծաղիկի գեղեցկութեան, պերճ գոյնին ու հոտին՝ որպէս կենսաբանական անհրաժեշտութիւն: Արուեստը եւ գրականութիւնը շոայլանք ըլլալէ անելի կենսական են: Բնութեան բոլոր ստեղծագործութիւններուն կատարեալը մարդը ինքն է՝ որպէս կամք եւ պայքար, որ ոչ միայն ուզած է իմաստ տալ կեանքին, այլեւ ուզած է յաղթահարել մահուան: Այդ պայքարն է, որ ստեղծած է քարոյթ (քոմպիլէքս) ըլլայ գիտակցական, թէ ենթագիտակցական:

Կեանքը ուրեմն հրեշտակներուն հետ է, իսկ մահը՝ դեւերուն: Կեանքի ուժը, գեղեցկութիւնը եւ մահուան ահաւորութիւնը դարձած են պատճառ բարիին եւ չարին: Մենք կը տեսնենք, որ բարին հիմք կազմած է մարդկային բարոյականութեան եւ կրօնքներու՝ պաշտպանելու համար կեանքը կամ համայնքը չարին դէմ, որ դեւի կերպարանք ունի: Նախնական մարդը կը հաւատար, որ կեանքը յախտենական է, եթէ չար ոգիները գոյութիւն չունենային: Եթէ հիւանդ է, ուրեմն դեւերը մտած են այդ մարմնի մէջ: Անոնք անտեսանելի են, ինչպէս անտեսանելի են մեր մարմնին մէջի կենսատարրերն ու քայքայող տարրերը, որոնք անընդհատ շարժման մէջ են: Քրիստոս, քժշկելու համար հիւանդները, անոնց մէջէն դեւերը կը հանէր:

Կեանքի ահաւոր պայքար կայ Հին Կտակարանի մէջ, պայքար կուտքերու եւ Եհովայի միջեւ: Կեանքն ուժեղ էր Իսրայէլի ժողովուրդին մէջ եւ նոյնիսկ Եհովայէն սիրուած Դաւիթին եւ Սողոմոնին մէջ, որոնք ունէին ոսկէ ճոխ պալատներ ու բազում կիներ: Դաւիթ իր հաւատարիմ զինուորը սպաննել տուաւ՝ քետացի Ուրիան՝ անոր գեղեցիկ կնոջը՝ Բերսաբէին տիրանալու համար: Եհովա կեանքին հետ էր եւ սակայն չէր կրնար տանիլ, որ իրմէ զատ ուրիշ Աստուած կը պաշտուի. նախանձառ էր: Այդ կեանքն էր, որ, որպէս գրականութիւն եւ ոճ, կարեւոր հիմք դարձաւ ընդհանուր գրականութեան: Մենք այդ չենք տեսներ Նոր Կտակարանին մէջ, ուր գերեզմանէն կը սկսի նոր կեանքը: Մեր քրիստոնեայ դպիրները այլաբանական իմաստ տուին Հին Կտակարանի այս էջերուն, ուր կեանքը կը յորդի, ինչպէս «Երգ երգոց»ի գեղեցիկ հովուերգութիւնը, այլաբանած են. ինքը՝ Սուլամիթը, եկեղեցին է, այն հովիւ աղջիկը, որուն լաչակին մէջէն աչքերը աղաւնիներու աչքերուն կը նմանին:

Ինչպէս Հին ու Նոր Կտակարանին, նոյնպէս բոլոր կրօնքներուն մէջ բարիին ու չարին պայքարն է, որ կը կատարուի, եւ ունին մարդկային կերպարանք ու մարմին, ըսել կ'ուզեմ՝ մարդը իր կերպարանքով ստեղծած է բարին ու չարը իր պատկերով: Մարդը երբեք ալ չի հասաւ այն կատարելութեան, որ իր մէջ որոնէր հրեշտակն ու դեւը, եւ փնտռեց դուրսը՝ հոգիի գոյութեան եւ անմահութեան հասնելու: Դեռ գոյութիւն չունէին աստուածները, երբ մարդը՝ մերկ ու մազոտ, խոշոր ակռաներով, կը սպաննէր՝ իր գոյութիւնը ապրեցնելու համար եւ կ'ապրէր անտառներուն եւ քարայրներուն մէջ: Կը փնտռէր թաքնուած ուժը անիմանալի՝ խուսափելու համար մահէն ու յախտենական դարձնելու մարմինը: Ոգիներ կը փնտռէր՝ որպէս անիմանալի ուժ ծառին, ջուրին, քարին, եւ եգիպտացիներուն համար՝ նոյնիսկ բզեզին մէջ: Երկիր մը, որ նախատիպը եղած է մարդկային մշակոյթին ու պատմութեան: Քարը սրբազան եղած է գրեթէ բոլոր կրօնքներուն մէջ: Մեր հայ սուրբերու շունչը քարերուն մէջ եղած է դաշտներուն վրայ եւ լեռներուն կողէն դուրս, ուր ուխտի կ'երթային մտնելով ու աղաւնիներու զոհարեցութիւնով: Եկեղեցին պատարագ չի կրնար ընել առանց վէմ քարի: Մէքքէն իր սեւ քարը ունի երկնքէն ինկած: Միթրան՝ պարսից Աստուածը, որ, ըստ Բընանի, կրնար Քրիստոսին տեղը բռնել, ապառաժ մը ծնած է, իսկ ջուրը նոյնքան սրբազան էր, եւ ուր ոգիներ կային: Աստուածները ծովէն ծնունդ կ'առնէին, ինչպէս Վեցուրը եւ մեր Աստղիկը: Ջուրերու մէջ կ'ապրէին ջրանուշները: Իսկ ծառերը նոյնպէս իրենց ոգիներն ունէին ու պաշտուած էին մասն մեր նախնիքներէն, ինչպէս Սօսեաց անտառը, որուն տերուներու սօսափնիին մէջ ոգի-

ներու շունչը կար, եւ կը լսէին Աստուածներու պատգամը: Մեր օրերուն գաւառին մէջ ուխտի կ'երթային Շոշ ծառին, որ առանձինն էր, եւ քովը ջուր մը կար: Ջուրը բուժիչ յատկութիւն ունէր, ու ծառին կը կապէին իրենց հագուստէն կտոր մը՝ հիւանդութիւնը այնտեղ ձգելու համար:

Անտառը խորհուրդ էր, ուր կ'ապրէին դեւերն ու Աստուածները: Ծառերու այդ խորհուրդէն կու գային հէքեաքներն ու հէքեաքներու հերոսները՝ իշխաններն ու իշխանուհիները, պարիկներն անտառին, եւ ուր կը բնակէին նաեւ դեւերը:

Բանաստեղծութիւնը այնքան հին է, որքան քարայրներու բնակիչները, երբ իրենցմէ դուրս՝ բնութեան տարրերուն մէջ կը փնտռէին ոգի, մարմնաշին ջերմութիւն, կեանք: Փնտռած են պաշտպանութիւն եւ մանաւանդ յաւիտենականութիւն: Բանաստեղծութիւնը կը սկսի հոն, երբ բառերը իրարու քով կու գան, կը կազմեն աղօթք ու խնդրանք՝ պաշտպանելու դեւերէն, բնութեան արեւմտիկներէն, վայրի կենդանիներէն եւ օձերէն: Ինչպէս կ'երեւի, օձերը աւելի վտանգաւոր եղած են, որոնք պահուած են քրիստոնէութեան մէջ՝ որպէս կերպարանք սատանայի: Բանաստեղծութիւնը կը սկսի հոն, երբ մարմինները կը ջերմանան սիրով, ու բառերը իրարու քով կու գան կրկնութիւններով, երաժշտական չափով՝ մարմնաշին ներշնչումի այդ սերը արտայայտելու համար: Ոգիներու համար ծիսակատարութիւնը եղած է մարմնեղէն՝ պարով, երգով, բացականչութիւններով, մարմիններու զգլխիչ շարժումներով՝ ներշնչուելու ծառի եւ կամ ջուրի ոգիով: Պարի ցատկոտութիւնը, զգլխիչ ծեսերը կու գային յաճախ դեւը կամ չարը վանելու իրենց մարմնէն: Կը հաւատային, որ հիւանդութեան եւ մանաւանդ մահուան պատճառը այդ չար ոգիներն էին: Այդ բոլորը թեւ տուած էին մարդկային երեւակայութեան եւ իմացականութեան: Քրիստոնէական եկեղեցիներուն մէջ մնացին երգը, բանաստեղծութիւնները եւ խրատականները: Եւ դեռ կան մեր օրերուն քրիստոնեայ եւ կամ մահմետական աղանդատուներ, որ կը շարունակեն պարը, ցատկոտութիւնը, եւ աւելի շատ կը տեսնենք ավիրիկեան նախնական ցեղերուն մէջ մարմնեղէն վերացումով:

Եթէ աղօթքը եղած է սկիզբը լեզուին եւ բանաստեղծութեան, հէքեաքները եղած են սկիզբը անգիր դպրութեան եւ արձակին, վէպին եւ կամ վիպակին: Մարդը կնոջ հետ ստեղծած է ընտանիք գաւակներով, հունտ նետած է հողին մէջ, շինած է տուն, պահած է եզներ աշխատանքին համար: Այդ իրական աշխարհէն դուրս ստեղծած է հէքեաքներու աշխարհը գերազայն ուժերու: Եւ երեւակայութիւնը թեւ առած է թեւաւոր ձեւերու հետ. մեր Մասունցի Դաւիթին մէջ աստուածներու ուժը դրած է թուր Կէծէկով,

Ձուակիկ Ձալալով: Մարդը իր կնոջ մէջ աւելի գեղեցիկ կիներ՝ հուրի-փեռիներ, ջրանուշներ ու պարիկներ մարմնաւորած է: Իշխաններու եւ իշխանուհիներու, ոսկիներու աշխարհն է հէքեաքը: Ջուրը, աղբիւրը կենսական եղած են կեանքին ու կանանչին հրեշտակներու երգի սահանքով: Այդ ջուրը կը բռնուի յանկարծ: Հսկայ վիշապ մը բռնած է անոր ակը: Իշխանը կը սպաննէ այդ վիշապը ու կը հասնի իր մուրագին՝ կարգուելով քաղաւորին փոքր աղջկան հետ: Հէքեաքի հերոսները հրաշքի ճամբաներէն կ'անցնին, ըլլան անոնք իշխան, թէ հովի:

Բոլոր ազգերու հէքեաքային գրականութիւնը հարուստ եղած է, ուր ժողովուրդը դրած է իր հաւատքէն ու կեանքէն՝ գերագոյնին հասնելու պացքով, եւ այնքան իրական, որ հէքեաքները յաճախ խառնուած են պատմութեան հետ, իսկ քրիստոնէական բազում հրաշքները, ինչպէս Ազաթանգեղոսին մէջ, արդէն պատմութեան մաս դարձած են, ինչպէս նաեւ հրաշքները Եղիշէին մէջ: Այնքան, որ մեր պատմագիրները յաճախ դժուարութիւն կ'ունենան մասնաւորապէս մեր 5-րդ դարու դպրութեան մէջ գտնել պատմական դեպքերը առասպելէն:

Հէքեաքները ոչ միայն տարածուած էին դպրութեան շրջաններուն մէջ, այլեւ լեզուն գոյն առած, պատմելու արուեստով դարձած էր առանձինն արուեստ՝ յաճախ երաժշտութեան հետ խառնուած: Բոլոր ազգերը ունեցած են իրենց անգիր դպրութիւնը՝ ըլլայ հէքեաքային, թէ դիւցազնական, ուր ժողովուրդը թռիչք առած է՝ արտայայտելու իր ապրումներն ու քաղձանքները, ինչպէս նաեւ հայ ժողովուրդը: Կեանքին մէջ եղած անկատարը դարձուցած է կատարեալ հէքեաքներուն մէջ: Հէքեաքները կարեւոր դաշտ են՝ վերլուծելու ազգի մը եւ ցեղի մը նկարագիրը հոգեվերլուծութիւնով: Այն ազգերը, որոնց պատմաւոր գարդակարուած է հարուստ հէքեաքներով, եղած են հարուստ նոյնպէս մշակոյթով եւ գրականութեամբ: Բոլոր ազգերուն մէջ մարդուն հիմնական գիծը նոյնը եղած է՝ կիներ, ոսկին եւ ուժի տիրապետութիւնը: Կը փոխուին միայն ձեւերը ու մանրամասնութիւնները: Շրջանը ինքզինք արտայայտած է՝ մէջտեղ քերելով նոյնիսկ ենթագիտակցականը՝ նախնական մարդէն եւ կամ հեթանոսութենէն մնացած: Մտեցումները ու ձեւերը կը տարբերէին՝ ըլլայ դասական, ըլլայ բոմանքիք, ըլլայ իրապաշտական շրջաններուն: Չմոռնանք նաեւ սիմպոլիզմը, որ միշտ ալ պահած է գիծ մը հէքեաքներու աշխարհէն: Այդ բոլոր դպրոցները նոյնը տուած են, միայն թէ արուեստի եղանակն ու գոյնն է, որ կը տարբերին: Պաշտպանութեան նոյն գիծ-նպատակը՝ «Մասունցի Դաւիթ» դիւցազնագութեանէն մինչեւ Բաֆֆի, մինչեւ Միամանքո ու Վարուժան: Բաֆֆի հերոսներ կը ստեղծէր, Միամանքո նոյն

հերոսները կը փառաբանէր, եւ Վարուժան ցեղին սրտէն կը պատրաստէր իր քնարի լարերը ու կ'երգէր հացի քարի աշխատանքը՝ արտերուն տալով մարմին ու հոգի: Այդ բոլորին մէջ հայ ժողովուրդի պաշտպանութիւնը կար արտայայտութեան տարրեր եղանակներով, որուն մենք արուեստ անունը կու տանք:

Հողէ աղիսով, տախտակով շինուած հաստատութիւնը դուռով ու պատուհաններով բնակարան է, տուն չէ: Մենք տուն անունը կու տանք այն ատեն, երբ բուխարիկէն ծուխ կ'ելլէ, դրան առջեւ զաւակները կը խաղան, օրօրոցէն երախային լացը կու գայ, ու տան տիկինին եւ տան մարդուն ձայներուն մէջ աղօթքի բարութիւնը կայ: Ուր ուրախ են ու տխուր, եւ ուր մտելները իրենց յիշատակը ձգած են, եւ տան փոքրիկները՝ աւանդութիւնով մեծցած: Հայ տունը ուրիշ է, ուրիշ ազգերու տանը չի նմանիր իր բարքով, գոյներով եւ աւանդութիւններով: Հայ գրողը այդ գոյնն է, որ պիտի արտայայտէ:

Հողը հող է ամեն տեղ, քայց հայ գիւղացուն համար այդ հողը սրբազան է, ուր իր նախնիքներուն սիրտը կը բաբախէ: Հողը կ'ապրի, կը շնչէ, մարմին ունի, կը խօսի, երբ հայ գիւղացին սերմնացանի գոգնոցէն սերմերը կը նետէ՝ թեր լայն բացած, երբ ցորենի առաջին ծիլերը կը տեսնէ: Հողը իր երգն ունի, իր հօրովը: Այդ հողն է, որ ինքզինք կ'արտայայտէ հայ երաժշտագետին եւ հայ գրողին միջոցով, եւ հողը, ջուրը իրենց ինքուրոյն լեզուն ունին: Շատեր կրնան մեծ հայագետներ ըլլալ, քայց քիչերուն տրուած է այդ դաշտերու լեզուն հասկնալ եւ ստեղծագործել, ճոխացնել հայ լեզուն արտի, եզի ու տունի բարբառով: Եթէ ծառ մը եւ կամ անտառ մը պիտի բանաստեղծէ, անոր բառերը եւս կանանչ գոյն ու ոգեկան խորհուրդ կ'առնեն: Ահա թէ ինչպէս հայ գրողը կը ճոխացնէ հայ լեզուն եւ կապուած է կենսականին հետ՝ տունին, Արեւին, ջրտութիւն՝ ապրեցնելու եւ պաշտպանելու համար:

Միայն Թորոս աղբարը չէ հայ մարդը եւ կամ հայ գիւղացին, ըսել կ'ուզեն՝ Թորոս աղբարը կեանքի մը ժամանակաշրջանը չէ: Ան ունի իր մէջ նախնիքներուն ժառանգը, որ եկած է առանց իր կամքին, ճիշդ այնպէս, ինչպէս կազմուած են զգայարանները եւ ընթացք կ'առնեն նախահայրերուն ճամբով: Թորոս աղբար դատողութեան եւ իմացականութեան մէջ աւանդօրէն եկած է ժառանգութիւնը՝ առանց իր կամքին: Ինչպէս մենք կը ժառանգենք մեր քիթը, մեր աչքերը, մեր գլուխին ձեւը մեր նախնիքներէն: Հոգեբանութիւնը այժմ կ'ընդունի, որ նոյն ձեւով մենք կը ժառանգենք իմացական որոշ բաներ մեր նախնիքներու հոգեկան աշխարհներէն ու պայքարներէն: Կը ժառանգենք՝ որպէս անհատ եւ որպէս հաւաքականու-

թիւն: Այդ բոլոր կու գան կենսաբանական օրէնքով, հաւատքի եւ նոյնիսկ նախապաշարունակներու ճամբով: Ահա թէ ինչո՞ւ կ'ուզենք ըսել, որ հայ անհատը ինքն իր մէջ ունի ցեղի մը կամ ազգի մը բոլոր կենսատարրերը, եւ կ'ըսենք նաեւ, որ հայ գրականութիւնը ուրիշ գրականութեան պէտք չէ նմանի այնպէս, ինչպէս հայը իր <բոց> աչքերով, աւանդութիւններով ու ընտանեկան բարքերով նման չէ ուրիշ ազգերու: Եւ այնքան շեշտուած է այդ ինքնութիւնը, որ դժուար է լուծել: Երկար դարերու ընթացքին, հակառակ հալածանքներու, ջարդերու, չի կրցանք լուծուիլ եւ դարձած ենք հաւաքական անհատականութիւն, եւ մեր գրականութիւնը այդ անհատականութեան արտայայտութիւնը պէտք է ըլլայ, որովհետեւ այդ հաւաքական անհատականութիւնը շեշտուած կերպով մարդկային է: Ես չզիտեմ ազգ մը այնքան ուժեղ եւ մոլեգին, որպէս հաւաքական անհատականութիւն, ինչպէս հրէան է, որ իր Աստուածը ստեղծեց եւ անոր հովանիի տակ մտաւ, նոյնիսկ խաչեց Քրիստոսը, երբ փոքր շեղումը կատարեց եւ կեանք, թագաւորութիւն երկնքին մէջ տարաւ: Այդ ազգը իր պատմութիւնով, իր գրականութիւնով դարձաւ համամարդկային ու տարածուեցաւ իր Հին ու Նոր Կտակարանով: Մենք յաճախ կը շփոթենք ազգայինն ու մարդկայինը. ազգայինին մէջ նոյնքան համամարդկային կայ: Կայ նոյնիսկ անհատին մէջ:

Մեր գրականութիւնը աւելի իրական դարձաւ, ըսել կ'ուզեն՝ աւելի կեանքին, երբ առաջին անգամ ժողովուրդին մօտեցաւ ժողովուրդի բարբառով: Գրաբարը փակուած էր վանքերուն մէջ կեանքէն ու ժողովուրդէն հեռու ու խառնուած եկեղեցական ծեսերուն հետ, ինչպէս սկիհն էր եւ կամ տաճարը Աստուածածնի նկարով: Գրաբարը նման էր միջնադարեան սուրբերու եւ մատօնաներու ցամբած նկարներուն, ուր կար ոսկոր ու ձեւ: Ժողովուրդը ինչպէ՞ս կ'արտայայտէ ինքզինք: Կ'արտայայտէ ինքզինք աւանդօրէն եկած նախապաշարունակներով՝ կապուած ըլլալու համար իր նախնիքներուն: Կ'արտայայտէ ինքզինք պարով, երգով, հեթանոսական օրերէն մնացած գոյներով եւ հէքեաթներով եւ այդ բոլորին տուած է գեղարուեստական գոյն, այսինքն՝ յուզում եւ ներշնչում: Իր հզօր երեսակայութիւնը արձակ ձգած՝ իր հզօր բաղձանքը տարած է զարմանազան հրաշքներուն, որոնք կրնային միայն աստուածներէն գալ: Աստուածային է Սասունցի Դարթի տուած հարուածը Սսրա Մելիքին: Կան ոգիներ, որ մինչեւ Ողիմպոս չեն հասնիր ու կ'ապրին մարդոց հետ՝ տան մութ անկիւնը, մարագին մէջ. ոգիները ջուրին, օձին, ծառին մէջ, որոնք ճակատագիր կը շուկեն եւ կամ կը քանդեն: Անոնք գիշերի ու կամ ցերեկի երազներուն մէջ են: Ըստ հոգեբանութեան՝ երազը չի լրացած բաղձանքներու

արտայայտութիւնն է, եւ այդ չի լրացած բաղձանքները մենք կը տեսնենք հեքիասներուն մէջ: Յատկանշական եղած են հայ ժողովուրդի դիցագոյնըգութիւններն ու հեքիասները՝ Հայկ դիցագոյն սկսեալ մինչեւ Մասունցի Դաւիթը: Վերջինը լրի կերպով մեզի հասած եւ զանազան շրջաններու դրոշմը առած է, իսկ Հայկ դիցագոյնի կարեւոր մեծ մասը՝ կորսուած: Կայ հոյակապ յատկագիծը արդիական ընկերային ըմբռնումով: Կը կարծուի, որ երկար դիցագոյնըգութիւններ եղած են «Արտաշէսն ու Մաթնիկը», նաեւ «Երկներ երկինը»:

Մարդկային մշակոյթը երկու կարեւոր բաժանում ու շրջաններ ունեցաւ՝ յունականը ու հրեականը, որ մեծ չափերով ազդած են հայ մշակոյթին վրայ: Յունականը բանականութեանն էր եւ կեանքին, գոյութեան տուած էր էական իմաստ: Ողիմպոսի աստուածներուն մման ուժեղ էին մարմնով եւ դնդերներով: Աստուածներն ալ՝ այնքան մման մարդոց, ունէին կին, զաւակներ, վէճ, ձիեր ու այտոռ, կառք՝ ամպերուն մէջ: Անոնք անմահ էին, մարդն էր, որ կը ձգտէր անոնց ուժերուն եւ անմահութեան: Չես զանազան կերպարանքներով աշխարհիկ կիներու կը մտեմար՝ մարդոց մէջ սերնդագործելու աստուածներուն ուժն ու քաջութիւնը, ինչպէս Աքիլլէսն էր: Յոյնը ազգ էր, հայրենիք, որովհետեւ կրցած էր ստեղծել իր Աստուածները եւ մշակոյթը առաւելապէս յունական դրոշմով, որ դարձաւ աղբիւրը մարդկային մտածողութեան եւ արուեստին: Չեսի զաւակը՝ Ալօդոն, աստուածն էր կեանքին եւ գեղեցկութեան: Ան ոչ միայն տուած է միտք եւ երաժշտութիւն, այլեւ կը պաշտպանէր կենդանիներու հօտը, կը հալածէր չարը եւ աստուածն էր բարութեան, բժշկութեան: Ալօդոն շատ բան տուաւ կրօնքներուն, հռովմեացիներուն եւ պարսիկներուն, տուաւ կենսատու Արեւին պաշտամունքը: Յունական բոլոր աստուածները կը պաշտպանէին կեանքն ու գեղեցկութիւնը մարմնեղէն, եւ այդ մարմիններուն չափ ուժեղ էին սէրը, կինը, որուն աստուածային գեղեցկութիւնը, շունչը տուաւ մարմարային քանդակներուն: Անոնք իրենց մէջ փնտռեցին այն աստուածները ու ստեղծագործեցին աստուածներուն պէս՝ ըլլայ արուեստի, ըլլայ փիլիսոփայութեան եւ կամ գրականութեան մէջ: Հոմերոսը յորդ աղբիւրը դարձաւ մարդկային գրականութեան, այնտեղ, ուր աստուածները մարդկային շունչ ունին, եւ մարդիկ՝ աստուածներու քաջութիւնը: Հին ու նոր մտածողը, որպէս փիլիսոփայ, նախ Յունաստանին քաներագիրը, բանաստեղծը: Նայեցան Յունաստանին՝ որպէս ուղեցոյց:

Մեծն Աղեքսանդրը այդ մշակոյթն էր, որ կ'ուզէր համաշխարհային դարձնել՝ որպէս մշակոյթ եւ որպէս կրօնք: Ո՛ր երկիրներուն որ յաղթեց,

այնտեղ տեղաւորեց յունական գաղութ այդ նպատակին համար: Մենք կ'ենթադրենք՝ մեր յունականը եկաւ Պարթեւներէն: Այնտեղ արդէն սկսուած ու ճամբայ կտրած էր յունական մշակոյթը՝ յունական գաղութով:

Մեծն Տիգրանի օրով յոյն մտածողներ, ճարտասաններ <կային> Հայաստանի մէջ: Մեր աստուածները, որ եկած էին հին պարսիկներէն, ինչպէս Արամազդը, Անահիտը եւ ուրիշ աստուածներ, յունական տարագ ու շունչ առին: Յունական քաղաքն <կար> արքունիքին մէջ. Արտաւազդ քաներագրութիւն ըրած է յունական լեզուով: Մենք՝ հայերս, ուզեցինք պաշտպանուիլ այդ աստուածներով եւ աստուածներուն բերած մշակոյթով: Անոնք մեր սահմանները կը պաշտպանէին եւ կու տային առատ հունձք մեր արտերուն ու այգիներուն, ինչպէս կ'ըսէ Տրդատ Երրորդ՝ Լուսաւորչի հետ ունեցած գրոյցի առիթով:

Երկրորդ ուժեղ շարժումը, որ եկաւ ու յաղթեց, հրեական մշակոյթին շարժումն էր քրիստոնէութեան միջոցով, որ պարտեց հզօր Հռովմը ու գահէն վար շրջեց այն փառքը, որ Յունաստանինն էր, եւ երկուքն ալ լուծեց Բիզանդական կայսրութեան մէջ, որ կայսրութիւնն էր Քրիստոսի, եւ կայսրը 13-րդ առաքեալն էր: Արրահամի, Յակոբի եւ Իսահակի Աստուածը դարձաւ Աստուածը աշխարհի չորս ծագերուն եւ Հայաստանին: Նոր Կտակարանի Աստուածը աւելի բարի էր, եւ սակայն Հին Կտակարանը կարեւոր հիմք կազմեց քրիստոնէական կրօնին՝ որպէս գրականութեան եւ մշակոյթի աղբիւր:

Ենովան եսասէր, նախանձոտ Աստուած էր. «Ես եմ ձեր Աստուածը, ինձմէ գատ ուրիշ Աստուած չի ճանչնաք»: Ան խիստ էր ու անգութ, կը պատժէր ջրհեղեղով ու ժանտատենդով, որոնք տաճարներու մէջ իրեն չէին երկրպագեր, չէին աղօթեր ու զոհեր մատուցաներ: Եկաւ քրիստոնէութիւնը, Հին Կտակարանը խառնուեցաւ Նորին հետ՝ որպէս Աստուածաշունչ, եւ ուղղափառ քրիստոնեան իր իմաստութիւնը քաղեց Հին Կտակարանէն, եւ «Մաղմոսաց»ը դարձաւ իր աղօթքը: Արրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը դարձաւ Աստուածը քրիստոնեաներու եւ հայրը Յիսուսի՝ միայն այն տարբերութեամբ, որ քրիստոնէութիւնը ժխտեց ժամանակաւոր կեանքն աշխարհին ու գրկուածներուն համար բացաւ կապոյտ ու յաւիտեանական աշխարհ մը: Կեանքը չարչարանք է, ինչպէս Ինք չարչարուեցաւ եւ խաչուեցաւ: Իրական կեանքը գերեզմանէն յետոյ կը սկսի ճիշդ այնպէս, ինչպէս Ինք համարձակ երկինք իր մարմնով գերեզմանին մէջ թաղուելէն յետոյ: Կեանքը դարձուց աղօթք, զոհաբերութիւն եւ մարմինը լեցուց անիմանալի մեղքերով: Իրենց մարմինը չարչարելով էր, որ իրենք զիրենք զոհ կը տանէին Քրիստոսի: Եզիպտոսի, Սուրիոյ եւ Երու-

սաղէմի անապատները ճգնաւորներով լեցուեցան՝ իրենց մէջ դերը, մարմինը քայքայելու եւ միայն հոգին փրկելու համար: Կը դառնային ոսկոր ու կմախք, իրենք զիրենք մոծակներու կը յանձնէին եւ շղթաներով կը կապէին չարչարուելու համար: Այդ ձեւով կը նահատակուէին: Երկնքին դուռը բաց էր նահատակներուն համար, մանաւանդ այն նահատակներուն, որոնք որպէս զինուոր հեթանոսներու դէմ կռուին մէջ կ'իյնային: Եղիշէ կը նկարագրէ, թէ ինչպէս տեսած են այն լուսատու սամուրիսը, ուրկէ երկինք կը քարձրանային Վարդան ու իր նահատակ զինուորները:

Բիւզանդիոնը դարձաւ նոր օրինակ կայսրութեան մը, ուր լուծուեցան բոլոր ազգերը՝ յոյները, հռովմեացիները, անոնց կարգին՝ նաեւ հայերը: Այն օրերուն Բիւզանդիոնի մէջ ունէինք շատ կարեւոր գաղութ մը, որ ճակատագրական դեր կը կատարէր Բիւզանդական կայսրութեան մէջ հայ կայսրներով, հայ զօրավարներով, հայ զինուորներով եւ հայ արհեստատու ճարտարապետներով ու հայ եկեղեցականներով: Անոնք առաւելապէս բիւզանդացի քրիստոնեաներ էին, եւ յաճախ կայսրները ճգնաւորներու եւ սինակեացներու գուշակութիւններով կը վարէին Բիւզանդիոնի ճակատագիրը, եւ Քրիստոս ինքն էր, որ կ'առաջնորդէր բանակը պարսիկ հեթանոսներուն դէմ: Թէոդոս Երկրորդ յաճախ խորհուրդ կը հարցնէր Գանիէլ անունով սինակեացէ մը, որ կ'ապրէր սինի մը վրայ ամառ թէ ձմեռ, ծիւնին թէ փոթորկին ու անդադար կ'ապաշխարէր իր մարմինը չարչարելու համար: Շատ անգամ քրիստոնեաները ընդամառ կ'երթային չարչարանքներուն նահատակուելու համար: Այդ քրիստոնէութիւնն էր, որ Բիւզանդիոնէն եկաւ Գրիգոր Լուսաւորիչ Պարթեւի կողմէն՝, որ ոչ միայն խստի կերպով հալածեց, ինչ որ հեթանոսական էր, այլեւ, կործանեց հեթանոսական տաճարները՝ անտարակոյս իրենց մատենադարաններով, այլեւ կազմակերպեց ճգնաւորութիւնը, վանականութիւնը եւ հրաժարումը կեանքէն եւ աշխարհէն: Ճգնաւորները կը փորէին գերեզմանի չափ տեղ մը եւ այնտեղ կ'ապրէին, քարայրներուն, անտառներուն մէջ կը բնակէին, խոտ կը ճարակէին եւ ոտքի վրայ ակնթարթով կը քնանային, ինչպէս մեր Մեսրոպ Մաշտոցն էր իր աշակերտներով:

Ես ուզեցի երկու կարեւոր հոսանքները տալ մարդկային մշակոյթին՝ յունականին եւ հրէականին, որովհետեւ երկուքն ալ ուժեղ ազդեցութիւններ ձգած են հայկական մշակոյթին վրայ: Մենք քիչ բան գիտենք յունական ազդեցութենէն: Գիտենք, որ ուսանողներ ունեցած ենք Աթենքի մէջ: Գիտենք Տիգրան Մեծի շրջանը, աստուածներ, քատրոն, արձաններ: Գիտենք Չէնոպ Գլակէն, որ Գրիգոր Լուսաւորիչ հալածանք ու ջարդ սարքած է քուրմերուն: Ազգաբանագիտէն գիտենք, թէ ինչքան բազիլներ կոր-

ծանուած են, եւ ո՛ր եւ ո՛ր քաղաքներուն մէջ տեղաւորուած էին անոնք, եւ այդ բոլորին կարգին, ինչպէս ըսի, նաեւ մատենադարանները: Խորենացին կը յիշէ մատենադարանը Անիի ամրոցին, ուր Բարդաճան Ասորի Կունիտիկիանոս քրիստոնեան աշխատած է թարգմանել ասորերէն եւ յետոյ յունական լեզուի թագաւորներու կեանքը: Ուրեմն՝ թարգմանած է հայերէնէ շրդ դարուն:

Մեր ծանօթութեան սահմանը կը սկսի Գրիգոր Պարթեւի մուտքով ու Ազգաբանագիտով, ուր հրաշապատումն ու առասպելականն այնքան են խառնուած, որ դժուար է զատել պատմականը: Այդ հրաշքները կարեւոր մաս կազմած են քրիստոնէական պատմութեան, մանաւանդ Բիւզանդիոնի շրջանին: Յովսէփ Կեսարացին, որ աղբիւրը եղած է քրիստոնէական պատմութեան, Կոստանդինի հաղթանակը քրիստոնէական հրաշքներուն վերագրած է: Թէ ինչպէս երկնքին վրայ խաչ մը կը կազմուի լուսեղէն եւ լուսեղէն գրեթով գրուած. «Սովաւ յաղթեցին», եւ նոյն գիշերը Քրիստոսը կ'երեւի Կոստանդինի խաչը ձեռքին՝ ըսելով, որ յաղթանակի եւ պաշտպանութեան համար խաչը դարձնէ խորհրդանիշ:

Հայաստանն եւ քրիստոնէութեան շրջանին դարձաւ փոքրիկ Բիւզանդիոն մը՝ առաւելապէս երկնքին նուիրուած, ձգելով աշխարհայինն ու ազգայինը: Հեթանոսական շրջանէն մնացած որոշ տօներ խառնուեցան քրիստոնէական տօներուն հետ, եւ սակայն ժողովուրդը որպէս աւանդութիւն շատ բան պահեց իր մէջ եւ մեր օրերուն հասցուց: Հայաստանն եւ Բիւզանդիոնի մնացող դարձաւ զուտ քրիստոնէական պետութիւն եւ ժողովուրդ, հետեւաբար՝ դաշնակից Բիւզանդիոնի, հեթանոս Սասանեաններուն՝ դէմ: Այդ շրջանին իրարու դէմ երկու հզօր պետութիւններ կային՝ Սասանեանները ու Բիւզանդիոնը: Քրիստոսն էր, որ կը վարէր Բիւզանդիոնի պատերազմները, նոյնիսկ հրաշքով տեսնողներ եղած են: Պատերազմի մէջ ինկած զօրքերը նահատակներ էին, ու անոնց համար բաց էին երկնքի դռները: Մեր սուրբը Բարսեղ Կեսարացին էր, մեր միտքը՝ Օհան Ոսկեբերանը, եւ մեր պատմագիրը՝ Յովսէփ Կեսարացին: Եւ մենք նոյնպէս առած էինք միեւնոյն բիւզանդական բազում վէճերը, թէ Քրիստոս թլիատուած էր, թէ՞ ոչ: Հայաստանի մէջ նոյնպէս հալածանքներու կ'ենթարկուէին հերետիկոսներն ու աղանդաւորները: Ս. Մեսրոպ բանտերով, տանջանքներով եւ զելարաններով\* կը հալածէր բարբարիանոս աղանդաւորները Հայաստանին մէջ: Կը գրէ Կորին: Եւ այնքան ուժեղ եղան հեթանոսներուն հալածանքն ու քանդումը, որ այժմ դժուարութիւն կ'ունենանք նախաքրիստոնէական շրջանէն <մնացած> հետք մը գտնել մեր դպրութենէն ու մշակոյթէն: Մնացած ատերակներէն, որպէս ինքնուրոյն

ճարտարապետութիւն մնացեր են Գառնիի ատերակները, եւ մենք կ'ենթադրենք՝ Անիի եկեղեցիները կարելոք գծեր առած են այն հին ճարտարապետութենէն:

Քրիստոնէութիւնը ուրեմն բերաւ Հայաստան Հին ու Նոր Կտակարանը: Գուցէ այդքան կանուխ շրջանին ամբողջովին կազմուած չէր Նորը, եւ ատելի շատ Հին Կտակարանի իմաստութիւնն էր, որ կարելոք տեղ բռնած էր մեր դպրութեան «մէջ» իր ոճով, եւ որ երէայ ժողովուրդի ազգային պատմութիւնն էր ու իմացակամութիւնը: Հին Կտակարանը օրինակներ մէկն էր՝ ըսելու, թէ ինչպէ՛ս ազգայինը կրնայ դառնալ համամարդկային: Եւ մենք մեր 5-րդ դարու դպրութեան մէջ առաւելապէս կը տեսնենք Հին Կտակարանի հմտութիւնը: Մեսրոպի աշակերտ Կորիւնի փոքրիկ գիրքը՝ «Վարք Մաշտոց»ը, առաւելապէս հմտութիւնն է Հին Կտակարանի, եւ իր ուսուցիչի լուսաւոր աշխատանքները նոյնպէս Հին Կտակարանի իմաստութիւնով կը բացատրէ: Եւ մինչեւ իսկ Մովսէսի աներոջ անունը կը յիշէ: Ահա թէ ինչպէս կը դաստիարակուէին Սահակի եւ Մեսրոպի աշակերտները, մինչեւ եկաւ շրջան մը, որ այլեւս անհրաժեշտութիւնն անկատուեցաւ Աւետարանի հայերէնի թարգմանութիւնը՝ տարածելու համար քրիստոնէութիւնը Հայոց աշխարհին մէջ, եւ այդ ընելու համար անհրաժեշտ էր գրերու գիտը: Եթէ քրիստոնէութիւնը հեռացուց մեզ մեր ազգային ձգտումներէն, գրերու գիտով օգտակար եղաւ՝ ստեղծելով կայ մը դարերը իրարու կապելու եւ հայերէնով մտածելու ու երագելու: Կորիւնի բարբառով. «Յայն ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարտական դասուն, եւ յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց ատետարան քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»: Այսինքն՝ «ժայրեմախօս դարձան օրենսուսոյց Մովսէսը՝ մարգարտական դասի հետ, եւ առաջադէմ Պաւղոսը՝ բոլոր առաքելական գնդով»:

Եւ այդ գիտով ստեղծուեցաւ մեր 5-րդ դարու դպրութիւնը եւ մեր եկեղեցական գրականութիւնը այդ շրջանի քրիստոնեայ եկեղեցականներով: Փաստոսի պատմութիւնով մենք կը տեսնենք Մեծն Ներսէսի պայքարը արքունիքին, Արշակին դէմ՝ զահին վրայ նստեցնելու քրիստոսը, ինչպէս Բիւզանդիոնի կայսրներն էին: Բայց որ Կոստանդին սուրբերու կարգ անցաւ՝ հակառակ իր ոճիւրներուն: Ան սպաննեց իր կինը, զաւակը, քրոջ ամուսինը: Ահաւոր էին ոճիւրները մանաւանդ Բիւզանդական քրիստոնեայ արքունիքին մէջ: Մենք տեսանք, որ Պապ թագաւորին մէջ դուրս

եւ օճեր քնակեցուցին: Պապին այցելողները կը տեսնէին այդ դուրսը, որ օճերու կերպարանքներով դուրս կու գային անոր մարմինէն եւ անոր ուսերուն կը փաթթուէին: Եւ մեր պատմագիրները հայ ծագումը պէտք է կապէին Հին Կտակարանին, Փաստոս, Եղիշէ՝ տանն Թորգոմայ: Նոյնը ըրած է նաեւ Խորենացին՝ մեր ծագումը կապելով Նոյի երրորդ որդուն՝ Յաբեթին՝ կապելու համար Աստուծոյ ընտրեալ երէայ ժողովուրդի մշակոյթին:

Խորենացին իր պատմութեան աղբիւրներու մէջ ուզած է անկախ ըլլալ՝ «կարի առասպելներէն» խուսափելու համար: Մեր 5-րդ դարու դպրութիւնը՝ առաւելապէս սնուած Հին Կտակարանով եւ Բիւզանդիոնով, անկախ չէին իրենց մտածումներով. եթէ կար անկախութիւն մը, ան ալ հայերէնով մտածելու եւ երագելու անկախութիւնն էր: Այդ է, որ մենք կ'ըսենք՝ քրիստոնէութիւնը հայացաւ: Իսկ մենք ատելի ու ատելի քրիստոնէացանք ու չի կրցանք պահել մեր լեզուի ինքնուրոյն անկախութիւնն ու գոյնը ու դարձուցինք վանքերու լեզուն, դաժնուցինք տեսակ մը ձեւ հայ եկեղեցիներուն եւ բոլորովին անկախ հայ ժողովուրդէն: Բիւզանդական էին մեր գոյները, մեր մանրանկարչութիւնը: Ճիշդ է, որ առաւելապէս Բիւզանդական էր նաեւ ռուսական հաւատքն ու արուեստը, բայց պետականութիւնը շատ բան պահեց: Մեր լեզուն չափով մը այդ պետականութեան դերն էր, որ կը կատարէր, եւ որովհետեւ այդ լեզուին մէջ կան հին ու մեծ ազգի մը պատմութիւնը, ոգին եւ աւանդութիւնը, եւ կը պահէ այդ բոլոր, ինչ տեսակ տիրապետութեան ալ ենթարկուի:

Եւ երեւակայել, որ Եզնիկ Կողբացու լեզուն հասաւ փիլիսոփայական ճշուն արտայայտութիւններու: Կար լեզուին մէջ թռիչք՝ հակառակ իր մտածումի հետետողականութեան, այնքան որ յունական միտքը, մանաւանդ Պլատոնը քննադատելու կ'ելլէ՝ հիմք ունենալով քրիստոսը իր հրաշքներով: Մենք ատելի արժէք կու տանք Խորենացիին, որովհետեւ, Ազաթանգեղոսի տուած հայոց պատմութեան սահմաններէն անցած, ան տուաւ մեր թագաւորներու պատմութիւնը՝ պեղելով օտար մատենագրաբաններն ու հեղինակները: Փարպեցի, Փաստոս, Եղիշէ քրիստոնէական ծանօթ շրջանէն կը սկսին հայոց պատմութիւնը: Եւ իրենց մեկնակէտը եղած է Ազաթանգեղոսը: Այդ հետետողականութեամբ մենք չի կրցանք մեր ոճը ստեղծել մեր դպրութեան մէջ, ինչպէս ստեղծեցինք մեր ոճը ճարտարապետութեան մէջ:

Ինչպէս ըսի, առաւելապէս մշակոյթի ժողովուրդ եղած ենք՝ վանքերուն մէջ ատելցնելով հազար-հազար ձեռագիրներ: Այդ ձեռագիրները առաւելապէս Հին ու Նոր Կտակարաններու եւ քրիստոնէական մշակոյթին



նուիրուած, ինչպէս ցոյց կու տան է՛ն կարեւորները՝ Ոսկեդարու աշխատանքները, եւ քացառիկ մի քանի շեղումներ՝ գիտական բնոյթ <կողո՛ղ>, ինչպէս Շիրակացիին է եւ Յովհաննէս Սարկիսաւոյ Իմաստասերը, իսկ մնացածները առաւելապէս նուիրուած են Կտակարաններու մեկնաբանութեան՝ յաճախ տալով այլաբանական իմաստ՝ Հին Կտակարանը եւ քրիստոնէացնելու համար: Տաղանդը ինչ լեզուով ալ ըլլայ, կը ստեղծէ իր ոճը: Այդ տեսակէն տաղանդ էին Եղիշէն եւ մանաւանդ Նարեկացիին: Քրիստոնէականին մէջ քիչերն է, որ կ'ունենան այդ թռիչքը՝ դնելով իրենց անձնական շեշտը: Տաղանդաւոր Եղիշէին «Վարդանանց»ը միմիայն քրիստոնէական էր եւ՝ իր թէքնիքով, իր մտածումի եղանակով եւ, որպէս արուեստի գործ, կարելի է ըսել՝ մեր գրական լաւագոյն աշխատանքներէն է: Պատմականը կրնայ տարակուսելի ըլլալ, մանաւանդ որ գործը առաւելապէս վիպային է եւ քրիստոնէական բուն շրջանի մը արտայայտութիւնը: Իր տիպերուն մէջ դրած է ծայրայեղութիւններ, ինչպէս Վասակին եւ Ղեւոնդին մէջ՝ ազդեցութիւնը անելի ուժեղ ընելու համար, եւ յաճախ օգնութեան կանչած է հրաշքները: Ըսեմ, որ «Վարդանանց»ը առաւելապէս քրիստոնէական բնոյթ ունէր, ըսել կ'ուզեմ՝ հեթանոս Սասանեաններու դէմ մղուած քրիստոնէայ զինուորի նահատակութիւնն էր, որուն առջեւ բաց էր երկնքի թագաւորութիւնը: Վասակ ընթացք տուաւ ընթացութեան՝ հաւատալով, որ Բիւզանդիոնը օգնութեան պիտի հասներ: Այն ատեն փոխեց իր քաղաքականութիւնը եւ դէմ էր ընթացութեան եւ համաձայն բանակցութեան, երբ այդ պայմաններուն մէջ միմիայն պարտութիւն կար եւ քրիստոնէական նահատակութիւն:

Այնքան էր քրիստոնէական, որ Ղեւոնդ Երեց իր նշանաւոր ճառին մէջ երբ կ'ըսէ «մեր նախահայրերը», ըսել կ'ուզէ՝ յիշեցէք Աբրահամը, Մովսէսը, մեծ քահանայ Փեննեհզը, մարգարէ <Եսայիային, Երեմիային>: Եւ բոլորը՝ Իսրայէլի պատմութենէն եւ Հին Կտակարանէն: Ղեւոնդ եւ իր ընկերները կ'ուզէին օր առաջ նահատակուիլ հրեշտակներու համադամ <սեղանին> մասնակցելու համար. հրաշքը սանդուխին, ուրկէ վեր կ'ելլէին նահատակները, հրաշքը նաեւ մութ բանտին: Բայց որ Եղիշէ տուաւ զեղեցիկ դիցազներգութիւն մը՝ հիմնուած պատմական տուեալներուն վրայ: Առաւելապէս այդ շրջանին եւ յետոյ կեանքն էր, որ հեռացեր էր, որպէս անհատ ու մարմին, որպէս ազգ եւ կամ պետական ընթացում:

Ճիշդ է, որ Նարեկացիին մէջ ուժեղ եղած են կեանքը, եւ մարմնի թաքնուած կանչը, եւ մեր բանաստեղծը այդ մարմնի ահաւոր պայքարն է, որ կը տանի իր մէջ թաքնուած դեւերու դէմ, այլ խօսքով՝ իր անիմանալի մեղքերուն դէմ: Կը չարչարէ ինքզինքը իրենց մարմինը չարչարող ճգնա-

տրներուն պէս: Նարեկացիին եւ անոր բանաստեղծութիւնը քաւական է մեզի համար հասկնալու, թէ ինչ էին կեանքը, մարմինը, անհատականութիւնը եւ կամ հայրենիքի ըմբռնումը քրիստոնէական բուն տիրապետութեան շրջանին: Իր ճգնաւորական չարչարանքով Մեսրոպ Մաշտոցը, որ քարայրներուն մէջ կ'ապրէր իր աշակերտներով, խոտ կը ճարակէր եւ ակնթարթով կը քննարար, ինչպէս կ'ըսէ իր աշակերտը՝ Կորիւն, եւ որ շատ կարեւոր շրջան քացաւ հայ դպրութեան եւ մշակոյթին իր գրերու զիւտով:

Կեանքը ինքն իր մէջ նպատակ է, բնութեան մէկ հրաշալի ստեղծագործութիւնը, ինքն իր մէջ լրիւ իմաստ, ինչ պայմաններու մէջ ալ ըլլայ, իր գոյութիւնն է, որ կ'ուզէ պոռայ, այս բոլորին դէմ էր, որ յորդ աղբիւրը կ'ուզէին ցամքեցնել եւ ակը սարդերուն ճգել: Ջուրի այդ կորսուած հոսանքը օր մը դուրս պիտի գար՝ հողը կամ քարը ճեղքելով:

Երիտասարդ Նարեկացիին մէջ մենք կը տեսնենք կեանքի այդ ուժեղ խլրտանքը, երբ տաղեր կը նուիրէ Ս. Աստուածածնի, եւ նոյն վանքերու պատերը կը ճեղքուին՝ ներս առնելու համար կեանքն ու Արեւը, եւ մենք կը տեսնենք սիրոյ երգերը աշխարհիկ ժողովրդական բարբառով, որ կու գար այն եկեղեցականներէն, որոնք միեւնոյն ատեն գրաբար շարականներ կը յօրինէին, ինչպէս Թլկուրանցիին, Յովհաննէս Պլուզ եւ ուրիշներ: Այդ շրջանին մենք Վերածնունդ անունը կու տանք՝ առանց իրար անցնելու, որ մեր եկեղեցականներէն կու գան այդ սիրոյ տաղերը: Եւ մեր Վերածնունդը քիչ մը անելի կանուխ սկսած է՝ 13-րդ դար, իսկ երոպացիները իրենց դպրութեան Վերածնունդը կը սկսին Բեռնարքայով եւ անոր սիրոյ երգերով: Մենք չգիտենք մեր միջնադարեան վանքերու կեանքը, բայց որ գիտենք միջնադարեան վանքերու բարբերը Երոպայի մէջ: Կեանքը մեր միջնադարեան վանքերէն ձայն ձգած էր իր սիրոյ տաղերով եւ ժողովրդական բարբառով: Ժողովուրդն է, որ իր գոյութիւնը կը զգացնէ: Վերածնունդ էր Ֆրիկը 13-րդ դարուն ժողովրդական խոպան բարբառով: Առաջինն է, որ վարագոյրը կը բանայ հայ ժողովուրդի հոգեկան եւ ֆիզիքական հալածանքներուն, եւ առաջինը, որ յանդգնութիւնը <ունի> գանգատ ընելու Աստծոյ: Եւ որովհետեւ ծանր էր մեր միջնադարեան քրիստոնէութեան ազդեցութիւնը, այդ Վերածնունդը շատ կարճ տևեց. աղբիւրի մը պէս իր գոյութիւնը զգացուց ու յետոյ կորսուեցաւ գրական նպատակէն ու մտաւ նորէն իր հին ընթացքին՝ ժողովուրդին մէջ: Կար այդ ժողովուրդը երգով ու պարով, երբ վանքերը ուխտագնացութեան կ'երթար: Աղջիկներն ու հարսները իրենց գունագեղ տարագներով, տղամարդիկ՝ ձեռագործ թելիկներով, միթքանով ու շալվարով մտնելու երգի ու պարի: Կային աւանդական խաղեր՝ գօտեմարտութիւն, փեռիվանութիւն, ցլամարտու-



քին, աղանի թոցնել: Այդ բոլորը կու գային մեր նախաքրիստոնէական շրջանէն, եւ ժողովուրդը պահած էր այդ սիրոյ տաղերն ու հէքեաթները, մեր դիցազներգութիւնները, որոնք կը պատմուէին հէքեաթասացներու կողմէ, եւ այդ պատմելն ու երգելը առանձինն արուեստ էր: Ժողովուրդը հողին, կանանչին, Արեւին՝ կարեւոր մասը բնութեան, աւելի լաւ՝ ըմբռնէր բնութեան ստեղծագործութիւնը: Անոր կեանքն ու մարմինը այդ բնութիւնով իմաստաւորուած էր:

Երոսպայի իսկական Վերածնունդը սկսաւ 15-րդ դարուն: Արուեստի ու ըմբռնումի գիծը կու գար նորէն Հին Յունաստանէն: Ըլլայ Միքէլանճելոյի արձաններուն, ըլլայ Բաֆայելի նկարներուն մէջ, քրիստոնէութիւնն էր, որ կը բարեփոխուէր, եւ այդ արուեստին հետ կը բարեփոխուէր մտածելու եղանակը, որ պիտի հասնէր օր մը ժողովուրդի պոթկումին: Միքէլանճելոյի արձանները այն նիհար, ոսկրուտ սուրբերը չէին, այլ ըմբիշ դնդերներով ուժեղ ու յաղթ հասակով առաքեալները եւ կամ կանացի գեղեցիկ մարմնով սրբուհիները: Նոյնն էին Բաֆայելի մատուցաները՝ կանացի ժպիտով, լիցուն կուրծքերով, կանանչ հագած Աստուածածինը: Ոչ այն գծերը, որ քաթակոմսներէն եկած էին եւ ուրոյն ձեւ ստացան Բիզանդիոնի մէջ: Մեր մանրանկարչութիւնը միջին դարուն եւ յետոյ եկած է Բիզանդիոնէն՝ Քրիստոս մանուկ, յայտնութիւն, համբարձում, հրեշտակներ, առաքեալներ: Գտած չէինք մեր ոճը, որովհետեւ օտար ազդեցութեան ներքեւ եւ անկախ ժողովուրդէն կազմուած էր մեր եկեղեցական մշակոյթը, եւ լեզուն վանքերուն մէջ հետզհետէ դարձաւ անջող, անարիւն ճգնաւորներու եւ սուրբերու մարմնի պէս: 5-րդ դարէն սկսեալ մինչեւ 17-րդ, 18-րդ դարեր այդ գրականութիւնն էր տիրական լեռներու կողքին առանձնացած վանքերուն եւ եկեղեցականներուն մէջ: Եւ մենք կ'ուզենք հարցնել, թէ ո՞ր էր հայ ժողովուրդը: Բոլոր այդ դպրութեան մէջ տեղ-տեղ միայն կը հանդիպինք «տամիկն ասէ» արհամարհական արտայայտութեան: Այդ «տամիկը» ինքը փակած ժողովուրդն էր ու արհամարհուած այն ժողովուրդը, որ զինուոր կու տար, փարած էր հողին, կ'արտադրէր, տխուր էր եւ կամ ուրախ: Այն ժողովուրդը, որ պահած էր նախնիքներու ասանդութիւնն ու բարքերը: Պահած էր մեր գրական անգիր արժէքները:

Թէ ինչ տուաւ քրիստոնէութիւնը հայ ժողովուրդին, որուն համար այնքան շարչարուեցաւ ու նահատակուեցաւ: Գզիտենք՝ տուա՞ւ երկինքը, բայց որ ժողովուրդը աւելի շարչարուեցաւ ու խաչ հանց:

Քրիստոնէութիւնը տուաւ եկեղեցական գրականութիւն, պատարագ, ծես, տուաւ քրիստոնէական երաժշտութիւն նոյնպէս օտար ճամբով: Եթէ կարեւոր բան մը տուաւ եկեղեցին, կրցաւ հայ ժողովուրդը որպէս քրիս-

տոնեայ համայնք եկեղեցիներու եւ վանքերու շուրջ հաւաքական պահել, պահել հայ քրիստոնէայ: Եւ այդ մենք առաւելապէս կը պարտինք հայ լեզուին եւ գրերու գիտին: 15-րդ դարու Երոսպայի Վերածնունդէն յետոյ հետզհետէ կեանքը, հետեւաբար ժողովուրդն էր, որ կը գտնէր ինքզինքը: Եւ ճամբայ բացաւ 17-րդ, 18-րդ, 19-րդ դարերու անկախ մտածողութեան, գաղափարին, փիլիսոփայութեան եւ վերջապէս՝ ժողովրդական ցոյցերու ու յեղափոխութեան: Ժողովուրդն էր, որ կու գար, եւ այդ ցնցումը ազդեց մեր մշակոյթի երկու կարեւոր կեդրոններուն, որ Հայաստանն ու ժողովուրդէ դուրս գաղափարներ էին՝ Պոլսը ու Թիֆլիսը: Կու գար այդ ազատականութիւն որպէս գաղափար եւ մշակոյթ: Մէկը՝ ֆրանսական ճամբով, իսկ միւսը՝ գերմանական-ռուսական ճամբով: Հնացած լեզուներ մէկ կողմ կը նետուէին, եւ կու գար աշխարհաբարը երոսպական ազգերու համար եւ ժողովրդական ձեւ կու տար գրականութեան, ինչպէս Փրովանսալ շարժումն էր Ֆրանսայի մէջ Տոտեով, Մենաթրալով եւ ուրիշներով: Էօժէն Միւսն եւ Տիւմայէն յետոյ գաւառն էր, որ կու գար ֆրանսական գրականութեան մէջ: Մեր Վերածնութեան շրջանը, որպէս գաղափար, եկաւ Ստեփան Նազարեանով, Նալպանտեանով, Արծրունիներով, իսկ Պոլսոյ մէջ՝ Գրիգոր Օտեանով, Մինաս Չերազով, Դուրեան պատանի բանաստեղծով եւ սքանչելի Յակոբ Պարոնեանով: Աշխարհաբարի զարթոնքին հետ կար նաեւ ազատական շարժումը՝ ազգային սահմանադրութիւն, եւ յետոյ պիտի կազմուէր հայկական հարցը նոյնպէս որպէս իտեալ՝ տեսակ մը բոմանքիք շարժում առանց երկիրը ու ժողովուրդը ճանչնալու, ինչպէս Ներսէս Վարժապետեան, Խրիմեան: Այն օրերուն պէտք էր պայքար տանիլ եկեղեցականներուն դէմ՝ գրական լեզու դարձնելու աշխարհաբարը, որ ընթացք առած էր արդէն: Ժողովուրդն էր, որ կ'ուզէինք մէջ-տեղ բերել ժողովուրդին հասկնալի լեզու մը ստեղծելով:

Ճիշդ է, որ թէ՛ Թիֆլիսի եւ թէ՛ Պոլսոյ մէջ ստեղծուեցաւ այդ լեզուն՝ գրական եւ ազատական գիծը պահելով, որ առաւելապէս երոսպական էր: Պոլսոյ մէջ մեր վիպասանը Հիւկօն էր, մեր բանաստեղծը՝ Լամարթին եւ մեր <անընթ.> ինչպէս կ'ըսէ Տեմիրճիպաշեան, <անընթ.> եւ մեր լեզուն՝ աշխարհաբարը, ընկերային բարեկարգչական շարժումը սահմանափակուեցան գաղութներուն մէջ: Լեզուն ինքն իր մէջ գեղեցկացաւ, մէջտեղ եկան մեծ տաղանդներ, մշակեցին կարեւոր գրականութիւն գաղութային բնոյթով: Թէ՛ լեզուին եւ թէ՛ գրականութեան մէջ կարեւոր դեր կատարեցին տաղանդաւոր պատանի Դուրեանը, սքանչելի Պարոնեանը, Չօհրապը եւ Պոլսոյ «Հայրենիք»ի ընտանիքը, իսկ բոմանքիքներուն մէջ լեզուն ինքն իր մէջ դարձաւ արուեստ, իսկ Թիֆլիսի մէջ նոյնպէս բո-

մանքիքներ Նազարեան, Նալպանտեան, Արծրունի՝ անծանօթ հայ ժողովուրդին եւ առաւելապէս եւրոպականացած, ուզեցին ճակատագրական դեր կատարել, հայ ժողովուրդի չարքիւղ\* հանել եւ եւրոպական կօշիկ հագցնել: Այդ ըմբռնութիւններուն մէջ էր իր առաջին քայլին մէջ հոյակապ Բաֆֆին իր առաջին վէպով՝ «Սալբի»ով, որ գրած էր գրաբարով: Եւ պէտք է ըսել, որ առաջին անգամ վարագոյրը բացաւ եւ ժողովուրդը մէջտեղ բերաւ Խաչատուր Արովեանը շատ ատելի կանուխ, քան Պոլսոյ մէջ: Տեսակ մը յեղափոխութիւն էր, որ կատարեց ոչ անոր համար, որ աշխարհաբարին մէջ կարեւոր դեր կատարեց, այլ անոր համար, որ «Վերջ Հայաստանի» գործով մէջտեղ բերաւ իրական հայ ժողովուրդը իր խորտուրորտ ճակատով, լեզուով, մտածումներով եւ առակներով. ժողովուրդը, որ իր ծանօթ ու անծանօթ տենչերով կապուած էր հողին, վշտին ու կեանքին: Քանաքեռի այդ բարբառը տուաւ նաեւ գեղարուեստական գոյն եւ իրապաշտութիւն մեր գրականութեան մէջ՝ հակառակ անոր, որ «Վերջ Հայաստանի» ըմբռնութիւնը թէքնիքով մշակուած է: Իրականը այն է, որ այդ աշխատանքին մէջ ժողովուրդը ինքզինք է, որ կ'արտայայտէ՝ որպէս հաւաքական պաշտպանութիւն: Ժողովրդական բարբառը մինչեւ այդ «տամիկ»՝ արհամարհուած բարբառն էր, եւ այդ բարբառին հետ արհամարհուած էր գիւղացին կամ գաւառացին: Արովեան հօգոյ բանակի դեր կատարեց որոշ գրաւումներով՝ այդ գրաւուած սահմաններուն մէջ բերելով հայ ժողովուրդը: Ան իր բանաստեղծութիւններուն մէջ օգտագործեց ժողովրդականին չափն ու բառերը, որ յետոյ ատելի գեղարուեստական գոյն պիտի տային նոյն ժողովրդական չափին ու բառերուն տաղանդաւոր Ադայեան, Թումանեան, Իսահակեան, եւ անոնց միջոցով դարձաւ փոխանցուած ժառանգութիւն Հայաստանի արդի գրողներուն մէջ: Արովեանէն շատ բան առին կովկասահայ գաւառական գրողները, ինչպէս Պոռչեան եւ ուրիշներ: Ըստ բան առաւ նոյն ինքն սքանչելի Բաֆֆի: Անոր մէջ ոչ միայն գեղարուեստական գոյն առաւ կանանչ ու կակուղ լեզուն, այլեւ անոր աշխատանքին ու ընթացքին կազմուեցաւ նաեւ մեր ազատագրական շարժումը: Անտարակոյս, որ կար դարիպականը Թիֆլիսի եւ Պաքուի մէջ, ու խեղճ գաւառացին կամ գիւղացին կ'երթար իր հացը ճարելու Պաքուի եւ Թիֆլիսի մէջ, բայց որ չունեցաւ Մելքոն Կիւրճեան մը, որ մօտենար այդ գրկուածներուն: Կիւրճեան շատ կարեւոր դեր կատարեց՝ մօտենալով Պոլսոյ դարիպաներուն, որոնք արհամարհուած դասակարգ էին խանութուն\* մէջ՝ լեցուած տուրի եւ հողի կարօտով: Կիւրճեան՝ ինքը բարուցի, կը զգար այդ հողին հոտը, կ'ընթրուէր խեղճ դարիպին ապրումները. այդ ձեւով մեր գրականութեան մէջ մտաւ խոնարհներու գաւառը:

Կարեւոր դեր կատարեցին երկու մեծ եկեղեցականներ Վանէն՝ Խրիմեան եւ Սրուանճտեանց: Մեծ էր Խրիմեանի շարժումը, որ շատ կարճ տեւեց. կ'ուզէր մամուլը ազատել գաղութային վիճակէն եւ տանիլ Վան եւ դարձնել մշակութային կարեւոր կեդրոն: Մեծ եղաւ Սրուանճտեանցի դերը, որ կարելի է ըսել շրջան բացաւ, ժողովուրդին մէջ մտաւ ու հաւաքեց անոնց հեքեքները ու դիւցազներգութիւնները՝ պահուած ժողովրդական գեղեցիկ լեզուով ու պատմելու արուեստով: Ըստերու կարգին մէջտեղ բերաւ «Մասունցի Դաւիթ» դիւցազներգութիւնը, որ ատելի եւ ատելի մշակուեցաւ մեր գրականութեան մէջ, եւ ուր կային մեր ժողովուրդի ապրումներն ու անկատար երազները: Մենք տեսանք, թէ ի՞նչ բաքուն գանձեր պահած էր իր մէջ հայ ժողովուրդը: Եւ մեր գաւառի գրականութեան առաջին եւ յարատեւ մշակումը եղան հայ ժողովուրդի հեքեքները: Այդ շրջանին էր, որ իր խոշոր կօշիկներով, գաւառի տարագով պոլսական դահլիճէն ներս մտաւ խարբերոցի Թլկատիցցին իր ժողովուրդի բարբառով, ոճի հարագատութեամբ, արուեստի եւ հիմօրի աղուոր գոյներով՝ նոյնիսկ իր քրոնիկներուն մէջ: Ու յետոյ անոր աշակերտը՝ Չարդարեան, ծանօթ ֆրանսիկներուն մէջ: Ու յետոյ անոր աշակերտը՝ Չարդարեան, ծանօթ ֆրանսական լեզուին եւ գրականութեան, իր լեզուն ատելի նրբացուց, ուժեղացուց նաեւ թէքնիքը վիպակին: Եւ արդէն ժողովուրդն էր, որ կու գար իր հեքեքներով, իր արանդութիւններով, իր հարուստ գանձերով նոր թափ տալու մեր իրական գրականութեան: Կու գար՝ այդ գրականութիւնով ինքզինք պաշտպանելու՝ որպէս ամուր բերդ, տալու ինքնուրոյն դրոշմ, մէջտեղ բերելու իսկական հայեցի գոյնն ու գրականութիւնը:

Այդ պաշտպանութեան համար աշխատեցան Արովեան, Բաֆֆի, Ահարոնեան իր հրաշալի լեզուով եւ գրականութիւն խառնելով մեր ազատագրման շարժումին մէջ: Այդ պաշտպանութեան համար աշխատեցան Թլկատիցցին, Սիամանթօ, Վարուժան: Մինչեւ իսկ ժողովուրդը կար այն պատանի տղուն՝ Մեծարեւցցին մէջ: Այդ գրական զարթօնքին հետ ուրիշ շատ կարեւոր վարագոյր մը բացաւ անմահն Կոմիտասը՝ մէջտեղ բերելով գուտ հայկական երաժշտութիւն. խաղաղ աշխատանքի, հողի, գութանի երգը, որ խաթարուած էր թրքական գերիշխանութեան ընթացքին:

Ատողջ է եւ միշտ ժողովուրդին հետ այն գրականութիւնը, ուր ժողովուրդին շունչը կայ: Գրագէտը այդ առողջութիւնն է, որ պահած է: Մեր Հայաստանը զանազան շրջաններէն անցաւ: Կար ճնշում, կար սպառնալիք ու աքսոր, մինչեւ հասաւ հայրենասիրական թափին: Այժմ այդ թափն է, որ շարժում առած է հաւատքով ու ըմբռնութեամբ բնոյթով: Բոմանքիք ըսի, որովհետեւ յաճախ կը խօսին ժողովուրդին մասին, իսկ մենք տակաւին չենք տեսներ այդ ժողովուրդը գրականութեան մէջ: Դեռ վէպե-

ըն իրենց տուած չափի վրայ են: Կը հաւատանք՝ օր մըն ալ հայ գրագէտը ձեռք պիտի ձգէ այդ ազատութիւնը եւ պիտի արտադրէ ժողովուրդի շունչով:

Մեր պատմութիւնը ցոյց կու տայ, որ մեր բանակները կրցած չեն պահել մեզ: Մեզ պահողը ու յաւիտենական դարձնողը եղած է մշակոյթը, որուն մէջ շրջանի բերումով կարեւոր գործ կատարած է գրականութիւնը:

Ճիգով եղած չէ լաւ գրականութիւնը: Ըսել կ'ուզեմ՝ հայ գրագէտը գրած չէ վաստակ ընելու եւ, ընդհակառակը, առանց ակնկալութեան: Բանուոր, ուսուցիչ, խմբագիր դառնալով՝ տարած է այդ աշխատանքը հաւատալով, որ բան մը կը պաշտպանէ, եւ առանց այդ հաւատքի չկայ ստեղծագործութիւն:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹԵՆԷ ՄԻՆՉԵՒ ՄԻՋԻՆ ԴԱՐ՝

Կ'ուզեմ նախաբան մը ընել, թէ ի՞նչ է բանաստեղծութիւնը<sup>2</sup>:

Նոր բան մը ըսած չեմ ըլլար, երբ ըսեմ, որ արուեստը, ըլլայ այդ երաժշտութիւն, բանաստեղծութիւն, պար, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն եւ նկարչութիւն, հոգեկան արտայայտութիւններ են: Այդ հոգեկան արտայայտութիւնները մենք չենք կրնար բաժնել մեր մարմնէն եւ զգայարանքներէն: Մենք ձեւ, կերպարանք կու տանք այն գեղեցիկ բաներուն, որ ներս առած ենք, ներշնչած ենք մեր զգայարանքներուն միջոցով: Այդ ձեւով կեանքը իր իմաստն է, որ կ'արտայայտէ եւ ճիգ կ'ընէ այդ իմաստը յաւիտենական դարձնել: Մեր հոգեկան այդ արտայայտութիւնը ճիգ մըն է նոյնիսկ մահուան յաղթելու:

Բառերէն, խօսքերէն առաջ, անտարակոյս, կային երաժշտութիւնը ու պարը: Այդպէս եղած են քարայրի քնակիչներուն եւ նոյնիսկ կենդանիներուն ու թռչուններուն համար:

Բանաստեղծութիւնը իր նախնական ձեւին մէջ կեանքը հովանաւորելու ծառայած է: Կը պաշտպանուիինք հոն, ինչպէս կը պաշտպանուինք կրօնքին հովանաւորութեան ներքեւ եւ կամ կը պաշտպանուինք անձրեւէն, ցուրտէն՝ հողէ շինուած տուններուն մէջ ապրելով եւ կամ արտը ցորեն ցանելով: Բանաստեղծութեան առաջին արտայայտութիւնը աղօթքն է: Քարայրներուն ու վրաններուն մէջ քնակող մարդը աղօթեց չար ոգիներուն, որոնք դուրս եւ վիշապներու կերպարանքներ ունէին: Աղօթեց, որ խնայեն իր կեանքին, իր մարմնին, որ գեղեցիկ է, եւ ուր կիներ նախշուն աշխարհ մը ստեղծած է, ստեղծած է սէրը, տունը, զուակը եւ որուն միջոցով մտերմացեր է բնութեան հետ: Անտարակոյս կիներ է, որ իր մարմնին մէջ ստեղծած է երաժշտութիւնը, պարը եւ իր բառերուն տուած է քնարերգութիւն: Պարը, երաժշտութիւնը եւ բանաստեղծութիւնը հրապոյրներ եղած են կիներ կանչելու, եւ փոխադարձաբար՝ կ'ընէ գրաչութիւնը, ծաղիկի մը գեղեցիկ գոյներուն պէս, այրն է, որ կը կանչէ<sup>3</sup>:

Բանաստեղծութիւնը պարին եւ երաժշտութեան բացատրութիւնն է բառերով, եւ այդ բառերը նոյնպէս առած են վանկերու չափ, յանգ ու կրկնութիւն ունին երաժշտութեան եւ պարի չափերուն հետ: Երաժշտութիւնը կրկնութիւններ շատ ունի, նաեւ՝ պարը: Ըստ նախնական աղօթքներու տողերուն մէջ միշտ ալ կրկնութիւններ կը տեսնենք, ինչպէս նկար-

ներու հոգեւոր երգերը եւ այդ երգերուն միացած բառերը պարերի շփմին հետ: Բանաստեղծութեան այդ չափի կրկնութիւնը կը տեսնենք մեր կրօնական բանաստեղծութենէն սկսեալ մեր քնարերգուներուն եւ աշուղական գրականութեան մէջ, մինչեւ Տէրեան եւ Մեծարեանց:

Պարի եւ երաժշտութեան հետ խառնուած այդ նախնական աղօթքներն են, որ աստուածներուն հետ հետզհետէ բարեշրջութեան ենթարկուելով՝ ստեղծած են կրօնական բանաստեղծութիւնն ու երգեցողութիւնը:

Եթէ քիչ մը աւելի մօտենանք, պիտի տեսնենք, որ մեր քրիստոնէական ծեսերուն, երգերուն եւ եկեղեցական անօթներուն մէջ շատ բան փոխուած չէ հեթանոսականէն: Այդ տեսակէն հարուստ են հայ կաթողիկէ եկեղեցիները:

Կրօնը նոյնպէս բանաստեղծական ստեղծագործութիւն է՝ այնքան հարուստ դիցաբանութիւններով: Կայ դիցաբանութիւն քրիստոնէութեան մէջ: Բանաստեղծի մը տարրերը ուժեղ էին Քրիստոսի մէջ: Կարելի է ըսել՝ հոյակապ դիցազներգութիւն է կրօններու գոյութիւնը:

Մարդկութիւնն ալ անցած է զանազան շրջաններէ: Ունեցեր է երախայական, պատանեկան, երիտասարդական եւ չափահասի շրջաններ: Նախնական շրջաններուն մէջ առաւելապէս զգացումով, բանաստեղծական միամտութիւնով կ'ապրէին: Մեր հայ նախնիքներուն համար Սօսեաց անտառը ոգիներու բնակարան էր: Ծառերուն մէջ անոնց կերպարանքները կը տեսնէին: Ծառը ինքը ոգի էր, որ կը պաշտէին ու ծառի սօսափուններէն աստուածներէն պատգամներ կը գուշակէին: Ոգիներ կային կամուրջներուն տակ, ջուրերու մէջ: Աստղերու շարժումներուն մէջ ճակատագրական իմաստ կը փնտռէին: Անոնց համար աստղերը կը շնչէին, կը թարթէին, մարմին ունէին:

Նոյնը չէ՞ մեր օրերու հայ բանաստեղծներուն՝ Վարուժանի, Տէրեանի, Սիւսանթոյի, Դուրեանի եւ Մեծարեանցի մէջ? Անոնց համար հովը ոգի մըն էր, որ կը խօսէր, դուռ ու պատուհան կը ծեծէր: Մեծարեանց հովին հետ կը մանկանար:

Մենք կը տեսնենք, որ բանաստեղծներուն մէջ յաճախ քարայրի մարդոց միամտութիւնը կայ, եւ կը լսեն տաւիղին նուազը ժայռի բերաններէն:

Բանաստեղծութիւնը արտայայտութիւնն է մեր կեանքին եւ մեր հոգիին մէջ անձանօթ ծալքեր կը բանայ<sup>5</sup>: Մենք յաջող բանաստեղծութիւն կ'ըսենք, երբ մեր հոգիին կը խօսի, երբ կրնայ արցունք բերել մեր աչքերէն եւ կամ հրճուանք պատճառել ու տալ իմաստ մեր օրուայ ապրումներուն եւ մանաւանդ մեզի նոր մտածումներ կը թելադրէ: Յաջող է այն բանաստեղծութիւնը, ուր մենք մեզ կը գտնենք անոր տողերուն մէջ: Այն բանաստեղծութիւնը, որ մեզի չի թելադրեր, մեզ չի յուզեր, մտածել չի տար,

տկար է՝ հակառակ անոր, որ վանկերուն եւ յանգերուն չկան թէքնիք սխալներ, եւ ճիշդ է տողերուն քերականական կառուցումը, եւ սակայն չի խօսիր մեզի, տեսակ մը վանքային է, կը մմանի արձանի մը, որ, ըստ մարդակազմութեան, ամէն բան տեղն է՝ աչքերը, ականջները, բերանը, գլուխը, ուսերը, եւ սակայն կարեւոր արտայայտութիւն մը կը պակսի, որ մենք հոգի կ'ըսենք: Հրաշք չէ՞ մեր Սայաթ-Նովան, որ թաթարերէնով, վրացերէնով, պարսկերէնով ու հայերէնով խառնուող լեզու մը շինած է<sup>6</sup>, եւ սակայն մեր մեծագոյն բանաստեղծներէն է<sup>7</sup>: Անոր բանաստեղծական կառուցումին մէջէն չի կարելի խախտել ոչ մէկ բառ:

Առանց զգացումը քննելու եւ մարմնի չենք կրնար ըմբռնել: Կը հաւատանք, որ հոգիի մէջ են մարմնի բոլոր գեղեցկութիւնները: Ահա թէ ինչն<sup>8</sup> արուեստ եւ գեղեցկութիւն միայն կեանքով կրնանք ըմբռնել, այլապէս արուեստը է սահմանել արուեստը, ինչպէս դժուար է սահմանել հոգին: Մարդ միշտ ալ փնտռած է իր մէջ եւ իրմէ դուրս գտնելու անձանօթը: Փնտռած է Պուտայով, Քրիստոսով եւ այսօր արուեստով է, որ կը փնտռէ: Այդ մեծ անձանօթին մօտեցողները մասամբ արուեստագէտները եղած են եւ հաւատացած են, որ գերագոյն ուժը կեանքին մէջ է, եւ յանդգնած են ստեղծագործել Աստուծոյ մը պէս եւ անոր մրցակից դառնալ: Ուրեմն արուեստը եւ բանաստեղծութիւնը այնքան հոգեկան են, որքան եղած են կրօնները եւ դիցաբանական աստուածները, որոնք ցեղի մը եւ կամ ժողովուրդի մը հաւաքական ստեղծագործութիւններն են:

Ինչպէս անհատ մը կը շնչէ, կը զգայ, կը մտածէ, կը ստեղծագործէ, նոյնպէս ցեղ մը եւ կամ ազգ մը ունի իր հաւաքական ստեղծագործութիւնը, կը շնչէ, թոք ու սիրտ ունի<sup>9</sup>:

Ժողովուրդ մը եւ կամ ցեղ մը իր դիցաբանութիւնով, իր հեքիաթներով աւելի լաւ կարելի է ըմբռնել եւ վերլուծել, քան ազգային պատմութիւնով, որովհետեւ դիցաբանութիւնը առաւելապէս հոգեկան է:

Բիկվեղան աւելի կը բացատրէ հնդիկ ժողովուրդի մը նկարագիրը, նոյնպէս Իլիականն ու Ողիսականը՝ յոյն ժողովուրդի մը մշակութային ու հոգեկան թռիչքները: Իլիականն ու Ողիսականը շատ տարբեր չեն Բիկվետայէն, Չանտավետայէն, միայն այն տարբերութեամբ, որ յունական աստուածները աւելի մարդկային էին, ունէին սէր, տարփանք, նախանձ, ասելութիւն, ունէին ձիւրու ախտ, արջառներ, ունէին զինագործներ, ոսկերիչներ, կը պատէին մարդոց մէջ: Մարդիկ կը տեսնեն անոնց ուրբերուն հետքերը, եւ կիներ երբեմն ալ աստուածներէն կը յղանային:

Հոգեպէս հարուստ է այն ժողովուրդը, որ իր ետեւ ունի հարուստ դիցաբանութիւն մը:

Հայ ժողովուրդը, ուրիշ շատ կարեւոր ազգերու նման ունեցած է դիցա-  
բանական ուժեղ պատմութիւն մը: Նոյնպէս ուրիշ քաղաքակրթուած ազ-  
գերու նման ազդեցութիւններ կրած է ուրիշ ազգերէ: Ազդուած ենք եւ կամ  
ազդած, եթէ յաղթած ենք եւ կամ պարտուած: Հայերը առաջին մտար-  
կողները եղած են զետերուն վրայ, եւ որպէս վաճառական ազգ՝ յարաբ-  
րութեան մէջ մտած ենք զանազան երկիրներու հետ: Մեր մշակոյթին  
վրայ իրենց յետքերը ձգած են հռովմեացիները, ասորիները, պահլանե-  
րը, Բիզանդիոնը, եւ սակայն 4-րդ դարէն առաջ եւ յետոյ, ըլլայ մեր հե-  
թանոսական թէ քրիստոնէական շրջանին, ըմբռնած ենք յունական մշա-  
կոյթին կարեւորութիւնը Եւրոպայէն առաջ եւ շատ մօտ եղած ենք:

Ծանօթ են հայ Արշակունիները, որ առաւելապէս հելլենատէր եղած  
են: Ծանօթ է Տիգրան Մեծի շրջանը, ուր տիրապետող էին յունական մշա-  
կոյթը, լեզուն, թատրոնը: Արքունիքին մէջ կային յունական թատրոն եւ  
դերասաններ: Մշակոյթ էր, երբ յունական աստուածները կը բերուէն եւ  
կը տեղադրուէն Հայաստանի զանազան գաւառներուն մէջ: Տիգրան Բ-ի  
որդին՝ Արտաւազդը, եղած է թատերագիր եւ գրած է յունական լեզուով,  
ըստ Պլուտարքոսի: Եղիշէ Դուրեան կ'ըսէ, որ յունական կուռքերուն փո-  
խադրութեան առիթով Անիի ամրոցին մէջ հաստատուեցան քուրմերը եւ  
գրականութիւնով զբաղուեցան:

Ուրեմն անկարելի էր, որ հեթանոսական շրջանի մեր դպրութիւնը, ուր-  
կէ մեզի հասած են մի քանի պատառիկներ, ազդուած չըլլայ յունականէն  
եւ առաւելապէս Հոմերոսէն: Խորենացին ունի «Տորք Անգեղ»ը, որ նոյն-  
պէս փոքրիկ կտոր մըն է՝ փրկուած մէր դիցազներգութենէն, յիշեցուցած  
է Հոմերոսի Պոլիփեմ կիկլոպը, որուն ձեռքը ինկաւ Ուլիսը իր մարդերով.  
ահաւոր հսկայ մը՝ մեր Տորք Անգեղին պէս, որ մաւերուն վրայ հսկայ  
ապառաժներ կը նետէ ու կ'ընկղմէ մաւեր մեր Տորք Անգեղին պէս: Խո-  
րենացին կ'ըսէ, որ կ'երգէին Տորք Անգեղի մասին: Յոյն կիկլոպը չար է  
վիշապի մը պէս, իսկ մեր Տորք Անգեղը հայկական դիցազներգութեան  
մէջ եղած է թէւ տգեղ, սակայն բարի եւ նոյնիսկ արուեստագէտ: Եղունգ-  
ներով քարեր կը տաշէ եւ քարերուն վրայ արժիւններ կը նկարէ:

Անտարակոյս առանձինն դիցազներգութեան կարեւոր մեծ մասը  
եղած է զեղապատշաճ, անձնեայ եւ քաջագանգուր ու հաստաբազուկ  
Հայկը, որ աստուածներէն սերած է: Ան կռիւ կը տանէ հսկայ Բէլի դէմ հա-  
մամարդկային մեծ մպատակի մը համար՝ ազատութեան համար: Ահա թէ  
ինչքան հոյակապ է մեր ցեղի ծագումը: Նոյն ազնիւ պայքարն է, որ զա-  
նազան շրջաններու մէջէն անցնելով՝ ստեղծեր է մեր Մասունցի Դաւիթը,  
որ Մարայ Մելիքին դէմ կը կռուի, այն Մարա Մելիք վիշապին դէմ, որ եօթը  
190

օր կը քնանայ, ու նետերը ասեղներուն պէս կ'իյնան վրան: Եւ մեր Դաւի-  
թը մէկ հարուածով կը կտրէ 40 գոմշու կաշի ու երկուքի կը բաժնէ Մարա  
Մելիքին մարմինը:

Մեր դիցազներգութենէն զունագեղ կտոր մըն են նաեւ Արայի ու Շա-  
միրամի առասպելը, Տիգրանի եւ Աժդահակի պատմութիւնը: Դիցաբա-  
նական են 40 կոյսերու մահատակութիւնը եւ Գրիգոր Լուսաւորիչի՝ Ար-  
տաշատի Խոր Վիրապին մէջ բանտարկուիլը, որուն պատաւ մը եւ կամ  
հրեշտակ մը կ'այցելէ 14 տարի<sup>10</sup>:

Խորենացին «Պատմութիւն»ով ուրիշ շատ կարեւոր աշխատանք մը  
ըրաւ՝ տալով կտորներ մեր դիցազներգութիւններէն, ուր առաւելապէս կը  
տեսնենք մեր ժողովուրդի նկարագիրը, անոր հոգեկան արտայայտութի-  
ւնը: Մեր շատ կարեւոր բանաստեղծներէն Սկրտիչ Էմին, Եղիշէ Դուրեան, Մա-  
նուկ Արեղեան եւ ուրիշներ համաձայն են, որ Խորենացիի «կարի առաս-  
պելական» կտորները եղած են մասեր մեր դիցազներգութիւններէն:

Իհարկէ, մենք Խորենացիէն չէինք ակնկալեր, որ ան տար մեզի այն  
օրերու ժողովրդական բարբառը, ժողովուրդի ուրախութեան, հարսանի-  
քի, աշխատանքի ու տխրութեան երգերը, որովհետեւ վանքը, եկեղեցա-  
կանը, ուսումնականը առանձինն դասակարգ էր, իսկ ժողովուրդը՝ ռամիկ,  
ժողովուրդի լեզուն՝ արհամարհուած ռամկականը:

Խորենացին իր ականջով լսած է Գողթան գաւառի երգիչներէն մասերը  
այդ դիցազներգութիւններէն, որոնք կը պատմէին ու կ'երգէին փանդիներով:

Հետաքրքրական է, թէ ինչո՞ւ Գողթան գաւառին մէջ կ'երգուէին  
անոնք: Կ'ըսուի, որ երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայաստանի  
մէջ, միայն Գողթան գաւառն էր, որ պահեց իր հեթանոսական կարգերը:  
Ինչպէս կ'երեւի՝ Գողթն էր, որ կու տար պատմողներ, երգիչներ, գուցէ դե-  
րասաններ ու կարաւողներ:

Մեզի հասած մի քանի նմուշներէն մենք կը տեսնենք, որ մեր գրաբա-  
րը կազմուած լեզու էր մեր հեթանոսական շրջանին:

Որպէս նմուշ՝ մենք կը գուրգուրանք Վահագնի ծնունդին նուիրուած  
«Երկներ երկին»ին մասին: Հրաշալի է՝ որպէս չափ, որպէս լեզուական  
ներդաշնակութիւն եւ որպէս ուժեղ երեսակայութիւն: Եւ արդէն քնութեան  
աարբերն են, որ երկուքի մէջ կը մտնին՝ ծնելու համար աստուած մը.

Երկներ երկին, երկներ երկիր,  
Երկներ եւ ծովն ծիրանի.  
Երկն ի ծովուն ունէր  
Եւ զկարմրիկն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,  
Ընդ եղեգան փող բոց ելաներ.  
Եւ ի բոցոյն վազէր  
Խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ուներ,  
Բոց ուներ մօրուս,  
Եւ աչկունքն էին արեգակունք:

Աստժոյ ծնունդն է, որ կը նկարագրուի այնքան ծիրանագոյն քառերով  
ու բոցեղէն երեսկայութիւնով.

Երկինք ու երկիր երկունքի մէջ էին,  
Երկունքի մէջ էր նաեւ ծովը ծիրանի.  
Երկունքը ծովին մէջ բռներ էր կարմրիկ եղեգնիկն:

Եղեգնի փողէն ծուխ դուրս կու գար,  
Եղեգնի փողէն բոց դուրս կու գար.  
Բոցին մէջէն կը վազէր պատանի մը խարտեաշ:

Ան ուներ կրակէ մագեր,  
Ու աչքերը արեգակներու պէս էին:

Ինչպէս ըսի, մեր բոլոր քննական պատմագիրները համաձայն են, որ  
այս մի քանի հոյակապ կտորները փոքրիկ մաս մըն են ընդարձակ դի-  
ցագներգութեան մը: Վահագնը մեր աստուածներէն մէկը եղած է, ինչպէս  
եղած են Անահիտը եւ կամ Վանատուրը:

Վահագնի անունին հետ կապուած է «վիշապաբաղ»ը, այսինքն՝ վի-  
շապներ սպաննող: Վահագնը այստեղ կը նոյնանայ իրանական Չան-  
տավեստայի ու Բիկվեդայի աստուածներուն հետ, որոնք նոյնպէս կռի-  
տուած են չար ոգիներուն, վիշապներուն դէմ: Կը նոյնանայ հնդիկ Ինտ-  
րայի, յոյն Ապօղոնի հետ, որոնք կառքերով եւ Բեզասներով ամպերուն  
մէջէն կը սուրային ու կռի կը տանէին վիշապներուն դէմ՝ մարդկութիւնը  
չար ոգիներէ փրկելու համար: Եւ արդէն Խորենացին Վահագնը կը  
նմանցնէ Հերքուլէսին, որ զուակն էր աստուածներու:

Չարմանալի է, որ Խորենացին պատմական ընելու համար կ'ըսէ, որ  
Վահագնը որդին էր Երուանդեան Տիգրան Առաջինին, որուն կեանքը  
նոյնպէս դիցաբանական է: Յոյն փիլիսոփայ Հոմերոս կը հաւատար

մարդոց զուակները իրենց քաջագործութեամբ անմահացեր են ու դար-  
ձեր են աստուածներ:

«Երկներ երկին»էն յետոյ ունինք Արտաշէսի եւ Սաթենիկի դիցագ-  
ներգութիւնը, որմէ մի քանի կտորներ հազիւ հասած են մեզի, եւ ունի մեծ  
դիցագնավէպի մը բոլոր տարրերը:

Արտաշէս կը յաղթէր ալաններուն ու գերի կը վերցնէ Սաթենիկին եղ-  
բայրը: Վայելչագեղ ու գեղեցիկ աչքերով Սաթենիկը Կուր գետի միւս  
ափէն կը խնդրէ, որ Արտաշէսը ազատէ իր եղբայրը: Արտաշէս,  
յափշտակուած Սաթենիկի գեղեցկութենէն, կը փախցնէ զայն.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,  
Եւ հանեալ զոսկէտը շիկափոկ պարանն,  
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթիւ ընդ գեան,  
Եւ ձգեալ զոսկէտը շիկափոկ պարանն՝  
Ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց,  
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,  
Արագ հասուցանելով ի քանակն իւր:

Հարսանիքին ատեն.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշէսի,  
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենիկանն:

Յետոյ Սաթենիկ անհաւատարիմ կ'ըլլայ Արտաշէսին.

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս՝  
ՉԱրտախուր խաւարտ եւ զտից խաւարծի  
Ի քարձիցն Արգաւանայ ...

Չրոյցը կ'ըսէ, որ Մարաց Աժդահակի սերունդէն Արգաւան, որ նոյն-  
պէս դիցաբանական է, ճաշի կը հրափրէ Արտաշէսը՝ դաւադրութեամբ  
սպաննելու եւ տիրանալու Սաթենիկին: Արտաշէս կ'իմանայ այդ ու Ար-  
գաւանի սերունդը սուրէ կ'անցընէ:

Հայաստանը Արտաշէսի շրջանին բարգաւաճ երկիր եղած է. կը զար-  
գանան երկրագործութիւն, վաճառականութիւն, եւ առասպել մըն ալ կ'ը-  
սէ, որ Հռովմի սարսափը եղող Հաննիբալը Հայաստան կ'ապաստանի ու  
հոն կամուրջներ կը շինէ: Այլ խօսքով՝ Հաննիբալը շինարարական աշ-  
խատանքներ կ'ընէ Հայաստանի մէջ: Մենք արդէն կը տեսնենք շէն հայ-  
կական գիւղերն ու քաղաքները իրենց ծխամի ծուխերով, երբ Արտաշէսը  
կ'արտասանէ կարօտով մը.

Ո՞ տայր ինձ գծուխ ծխանի  
Եւ գառաւօտն Նաւասարդի,  
Չվազելն եղանց  
Եւ զվարզելն եղջերուաց.  
Մեք փող հարուար  
Եւ թմրկի հարկանէաք,  
Որպէս օրէն է թագաւորաց:

Յետոյ կ'անհիծէ իր զաւակը՝ Արտաւազը՝ իր մէկ ոչ որդիական արտայայտութեան համար.

Եթէ դու յորս հեծցիս  
ՅԱզատն ի վեր ի Մասիս,  
Չքեզ կալցին քաջք, տարցին  
ՅԱզատն ի վեր ի Մասիս.  
Անդ կայցես  
Եւ զլոյս մի՛ տեսցես:

Արտաւազը իր ձիով Մասիսի խորխորատի մէջ կը գահավիժի: Հոն շուները կ'աշխատին կրծել անոր շոթաները, մինչ քաջքերը կ'ամրացնեն մուրճերով: Այդ ասանդութիւնը Խորենացիի օրերէն սկսեալ մինչեւ այսօր ալ կը մնայ մեր ժողովուրդին մէջ, որ դարբինները ամէն ուրբաթ օր պարապ սալին վրայ մի քանի անգամ կը զարնեն իրենց երկաթէ մուրճերը՝ ամրացնելու Արտաւազի շոթաները, որ Մասիսի խորխորատէն դուրս չի գայ ու չի կործանէ աշխարհը:

Այստեղ կը փակուի մեր անգիր դպրութիւնը: Այդ ըսել չէ, որ մեր անգիր դպրութիւնը իր ուժեղ արմատը ձգած չէ հայ ժողովուրդին մէջ զանազան ճիւղերով ու յանելումներով, ձգած է իր արմատը հայ հեքեաթներուն մէջ: Այդ ժողովուրդէն դուրս քերուեցաւ մեր «Մասունցի Դաիթ»ը, որ իր գիծը կ'առնէ Հայկի ու Բէլի պատերազմէն, եւ որ հետզհետէ ճոխացեր է արաբական արշաւանքներու ընթացքին: Ժողովուրդը կ'երգէ, կը պարէ այդ դիցազներգութիւնները՝ պահելու համար իր ցեղային առողջ երակը<sup>11</sup>:

Խոշոր անջրպետ մը կայ մեր հեթանոսական շրջանէն մինչեւ գրերու գիտը՝ 5-րդ դար: Մեր քննական պատմութեան համար ալ այդ անջրպետը մնացեր է անձամօք: Թէ ի՞նչ պատահեցաւ մեր հեթանոսական գրականութեան, որ արդէն մինչեւ 5-րդ դար կազմուած լեզու մը ունէինք քերականական կանոններու ճշդութեամբ: Այդքան գեղեցիկ լեզու մը մէկ օրէն միւսը չէր կրնար ստեղծուիլ:

Ըստ պատմարան Անուպ Գլակի՝ անգութ եղած է մեր Գրիգոր Լուսաւորիչի արշաւը մեր մեհեաններուն եւ մեհեանական գրականութեան

վրայ: Եղիշէ Դուրեան կը յիշէ Մերութան մը, որ 4-րդ դարուն այրել տուած է յունական գրքերը, գուցէ՝ յունատառ գրքերը Հայաստանի մէջ: Յետոյ միշտ ալ ուժեղ պայքար եղած է մեր եկեղեցականներուն եւ արքունիքին մէջ, ուր կը դանդաղէր հեթանոսութիւնը<sup>12</sup>: Մեր կրօնաւորները անելի խիստ եղած են եւ ժամանակի ընթացքին այրած են այն բոլորը, որ հեթանոսութենէն կու գար: Մեր քաղաքական պայմանները երբեք լաւ չէին, երբ Ս. Մեսրոպ քրիստոնէական կրթով աշխատեցաւ գտնել Ա.Բ.Գը: Մէկ կողմէն Բիզանդիոնէն էր, Հռովմը, միւս կողմէն՝ ասորին, որ տիրացեր էր մեր եկեղեցիներուն: Յետոյ կար պարսիկը, որ տէր դարձեր էր արեւելեան մասին: Մենք չգիտենք, թէ ինչքան հալածանքներու եւ քայքայումի ենթարկուած էր հայ ժողովուրդը այդ շրջանին: Հրեայ ժողովուրդի հալածանքի շրջանին էր, որ Մովսէսին յայտնուեցաւ Եհովան: Հրեաները կը հալածուէին, կը ջարդուէին հռովմեացիներու կողմէն, երբ Քրիստոս երկնքի թագաւորութիւնը իրականութիւն դարձուց:

Գիտենք, որ 4-րդ, 5-րդ դարերուն Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը հասած էր հիւանդագին աստիճանին: Գուցէ այդ էր պատճառը մեր քաղաքական տկարութեան: Այդ շրջանին մոյս քանն էր, որ տեղի կ'ունենար Ալեքսանդրիոյ, Հռովմի եւ լատին երկիրներուն մէջ: Հրաժարիլ աշխարհիկ կեանքէն, մեղքի պատճառ նկատել կինը, կեանքը, քաշուիլ անապատները եւ մոյնիսկ իրենց մարմինը չարչարել եւ ապրիլ սիւներու վրայ: Նոյն պատկերն էր, որ կար մտել Հայաստանի մէջ: Շատցած են անապատականներն ու սիւնակեացները: Եւ կարելի է երեւակայել, որ այդ ծանր կացութեան դէմ յանկարծ կը սկսի ընկերային-անիշխանական շարժումը Հայաստանի մէջ: Այդ թոնդրակեցիներու շարժումն էր, որ անմիջապէս խիստ հալածանքի ենթարկուեցաւ եկեղեցականներու կողմէ ֆիզիքապէս եւ քազում ճառերով: Շարժում մը ազատական, որ կ'ըսեն Հայաստանէն տարածուեցաւ դէպի Եւրոպա<sup>13</sup>:

Ս. Մաշտոցը Հացեկաց գիւղէն յունական կրթութիւնով մեծցած պաշտօնեայ էր Արշակունի թագաւորին մօտ: Ըստ Կորիւնի՝ ան սիրուած էր որպէս զինուորական: Յետոյ կը միանայ Քրիստոսի խաչակիր գունդին եւ կը մտնէ միայնակեցական կարգին մէջ, ինքզինք կը նուիրէ միանձնութեան, լեռնակեցութեան, քաղցի, ծարաի, քանջարածաշակութեան, անլոյս արգելարաններու, խարազանագոցստ ու գետնամած անկողիններու: Տառացի կերպով կը հետեւէին Հին Կտակարանի տողերուն՝ արտասուալից պաղատանքներով աղօթել եւ քարոզել, որ «երբ որ կը հեծեծես, այն ժամանակ կ'ապրիս»: Նոյնպէս Կորիւնի խօսքերն են Եսայի մարգարէէն առուած: Այդ քառերով Ս. Մեսրոպը կը խօսէր իր աշակերտ-

ներում<sup>14</sup>: Գրերու գիտէն յետոյ, երբ Աստուածաշունչի թարգմանութիւնը կը կատարուի, Ս. Մեսրոպ, աշակերտներուն գլուխը անցած, կ'երթայ աղուաններուն եւ վրացիներուն երկիրը՝ անոնց ալ գրեր յօրինելու եւ քրիստոնէութիւն քարոզելու: Նոյնպէս Կորիւնի բառերով՝ վանականներու խումբեր կը հաստատէ, որոնք դաշտերուն, լեռներուն, անձաւներուն մէջ կ'ապրէին: Ս. Մեսրոպ իր անձի օրինակով ցոյց տալու համար կ'առնէր աշակերտները իրեն հետ, կ'ապրէին խոռոչներուն մէջ՝ խոտեղէն ուտելով, եւ կը հաւատային, որ «յօրժամ տկար եմ վասն Քրիստոսի, յանժամ զորացեալ լինիմ»:

Քրիստոնէական հաւատքի այս պայմաններուն մէջ էր, որ ստեղծուեցան մեր կրօնական դպրութիւնը, մեր շարականները, «Տէր, ողորմեա»ները, գանձերը եւ կրօնական երաժշտութիւնը: Մեր եկեղեցականներու հոգին Ս. Գրքի հմտութիւնով բռնուած էր, այդպէս ալ շարունակուեցաւ: Անոնք իրենք զիրենք նուիրեցին Ս. Գրքի մեկնութեան: Մեր ձեռագրերը լեցուն են նման աշխատանքներով: Կար իրենց մարմինը տկարացնելու եւ չարչարելու քրիստոնէական համակերպում մը եւ ճակատագրապաշտութիւն: Ամէն բան կը սահմանափակուի, երբ կեանք ու աշխարհ «Եղիցի»ով կը ստեղծուի, եւ տերու չի շարժեր առանց Աստծոյ:

Մեր շարականները գրուած են Հին Կտակարանի չափերով եւ առաւելապէս սաղմոսներու հետեւողութեամբ: Մեր կրօնական բանաստեղծութիւններուն համար հոգեւոր քաղաքը Երուսաղէմն էր: Եհովան՝ Արրահամի եւ Իսահակի Աստուածն էր մեր Աստուածը. տողեր, վկայութիւններ կու գային Աստուածաշունչէն՝ կեանքի գաղտնիքը եւ մեր ազգային մտահոգութիւնները լուծելու: Բարեխօսութիւն զանազան սուրբերուն, եւ շատ շարականներ նուիրուած էին Մայր Աստուածածնին, Յովակիմին եւ Աննային: Չղջալ, մեղքերուն համար մարմինը չարչարել, կուրծք ծեծել եւ մոխիրի վրայ նստիլ: Որեւէ արհաւիրք, ցաւ ու չոռ եւ հալածանք թշնամիի կողմէն կը վերագրէին մեր ազգային մեղքերուն: Ահա զոհեր կը մատուցանէին եւ հսկումի կը կենային: Կեանքը ժխտող եւ զգայարանքներէն հրաժարող մեր կրօնական բանաստեղծութիւններուն մէջ կը գտնենք առաւելապէս քնարականը եւ հայ լեզուի գեղեցկութիւնը: Մեր շարականներու մէջ կայ Արեւմուտքը՝ Երոսպան՝ իր թէքնիքով, մտածելու եղանակով, որ քրիստոնէութիւնը իր հետ բերաւ այդ սերմը, եւ այնքան ուռճացաւ մասնաւորապէս Հայաստանի հողի վրայ:

Ես պիտի ուզէի, որ կարդացուէր փոքրիկ կտոր մը Ս. Մեսրոպէն: Մենք պիտի տեսնենք այդ կտորին մէջ, որ բանաստեղծութիւնը կազմուած ճեւ

առած է, ունի յաջող բանաստեղծութեան մը բոլոր տունայնորդ եւ երաժշտականութիւն իր կրկնութիւններուն մէջ<sup>15</sup>.

Մարտարն հառաչանօք ի տաճարին էառ զքաւութիւն:

Նովին ձայնին եւ ես գոչեմ՝

ողորմեա՛ ինձ, Աստուած:

Աւազակն աղաղակէր ի խաչին՝

յիշեա՛ զիս, Տէր,

Նովին ձայնին եւ ես գոչեմ՝

ողորմեա՛ ինձ, Աստուած:

Անառակ որդին աղերսանօք աղաչէր զքեզ՝

Հայր, մեղա՛յ յերկինս եւ առաջին քո:

Նովին ձայնին եւ ես գոչեմ՝

ողորմեա՛ ինձ, Աստուած:

Մեր շարականներու բանաստեղծները եղած են Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց՝ 5-րդ դար: Մի քանի շարականներ Մովսէս Խորենացիին կը վերագրեն: Կոմիտաս կաթողիկոս՝ 7-րդ դար, Սահակ Չորափորեցի՝ 8-րդ դար, Ստեփաննոս եպիսկոպոս՝ 8-րդ դար, Պետրոս Գետադարձ՝ 11-րդ դար, տաղանդաւոր բանաստեղծ Ներսէս Շնորհալի՝ 12-րդ դար եւ Յովհաննէս Պլուզ, որ կը կոչուէր նաեւ Երզնկացի, եւ ուրիշներ: Մեր այդ բանաստեղծներուն մէջ կը դժուարանանք տեսնել անձնականութիւն. չէ՞ որ քրիստոնէութիւնը ժխտումն է կեանքին եւ զգայարանքներուն:

Մեր կրօնական բանաստեղծներուն մէջ կը հանդիպինք իսկապէս հանճարի մը. այդ Գրիգոր Նարեկացին է, որ իր ոճով, իր հզօր երեսակայութիւնով եղաւ յայտնութիւն մը: Ան նոյնպէս ուժեղ պայքար տարաւ՝ հեռանալու իր մարմնէն<sup>16</sup>: Ան իր մեղքերուն դէմ պայքարեցաւ, զղջաց, աղօթեց բազկատարած, որովհետեւ կը զգար, որ անհիմանալի մեղքերով լեցուած էր: Ըսել կ'ուզեմ՝ կեանքով լեցուած էր իր մարմինը:

Քրիստոնէութիւնը սատանաներու եւ դեւերու դէմ պայքար եղած է, նոյն չարի ու բարիի պայքարը, որ կար քրիստոնէութենէն շատ առաջ, կար Պուտայի, Բիկվետայի, Չանտավետայի մէջ: Քրիստոս իր կեանքով արեւի իրական դարձուց երկինքի թագաւորութիւնը: 4-րդ, 5-րդ դարուն ոչ միայն Հայաստանի, այլեւ լատին աշխարհի, Երոսպայի մէջ շատ-ցած էին վանականները, անապատականները: Իրենց կեանքէն, զգայարանքներէն խուսափելու հիւանդագին շարժում մը կար՝ հանդերձեալին մէջ յաւիտենական կեանք մը ապահովելու համար: Դեւերու, վիշապնե-



բու ու սատանաներու սպառնալիքի ներքե կ'ապրէին եւ գիշեր-ցերեկ աղօթքներով, ծոմապահութիւններով պայքար կը տանէին այդ հրէշներուն դէմ: Այլ խօսքով, մեղքերուն դէմ՝ գիշեր թէ ցերեկ: Եթէ բունի մէջ է, նոյն մեղքերը զինք կը հալածէին այս անգամ կնոջ մը կերպարանքով<sup>17</sup>:

Մեր վանականները, եկեղեցականները ապրած են ճգնաւորներու, սինակեցներու կեանքը: Իրենց մարմինը ոսկրացնելով ուզած են արժանի ըլլալ հանդերձեալ կեանքին եւ իրենք զիրենք քարայրներուն մէջ փակած են: 4-րդ դարէն մինչեւ 10-րդ դար՝ Նարեկացիի շրջան, շատ բան փոխուած չէր քրիստոնէական մոլեռանդութեան մէջ: Միայն այն տարբերութեամբ, որ 10-րդ դարուն մէջ Աստուածաշունչի տառացի կանոնները աւելի ընդհանրացան ոչ միայն վանականներուն, այլեւ ժողովուրդի եւ իշխաններուն մէջ: Այդ շրջանին իշխաններն ու մախարարները վանքեր ու եկեղեցիներ շինելու քրիստոնէական աշխատանքին նուիրուած էին, հետեւաբար նոր թափ առած էր հայկական ճարտարապետութիւնը: Այդ շրջանին կը յայտնուի մեր նշանաւոր Տրդատ ճարտարապետը: Կը շատնան եկեղեցական կալուածները: Վանքերը կը դառնան ճրի օթեւաններ բոլոր անցորդներուն եւ աղքատներուն: Եկեղեցականներու բարոյական խրատները աւելի տիրող կը դառնային թէ՛ ռամիկին եւ թէ՛ իշխանին վրայ:

Վանականը, երբ ճամբու վրայ աղքատ մը տեսներ, իր շապիկը կու տար: Այդքան տառացի կերպով կը գործադրէին Աւետարանի թելադրանքները, եւ շատ կրօնաւորներ քաշուած էին անտառները՝ քարայրներուն մէջ ճգնաւորելու եւ իրենց մարմինը չարչարելու: Անոնք ինչքան չարչարէին իրենց մարմինը, աւելի կը սրբանային, եւ ժողովուրդին համար տեսակ մը կախարդական հեղինակութիւն էր կրօնաւորը: Ստեփան Ասողիկ պատմագիրը կ'ըսէ՝ վանական մը աղօթելով սպաննած է ահաւոր վիշապ մը, որ բնակիչներուն սարսափը եղած է: Ուրիշ մը աղօթելով հնազանդեցուցած է առիւծ մը: Նարեկացիին նոյնպէս մի քանի հրաշքներ վերագրած են, թէ ինչպէ՛ս տապակուած աղանիւններուն կը հրամայէ, որ թռին, եւ աղանիւնները թեւ կ'առնեն ու կը թռին:

Նարեկացու թափը, որպէս բանաստեղծ, այնքան հզօր էր, որ իր շրջանի գրաբարը բաւարար չէր իր թռիչքին հասնելու: Ան իր լեզուն, իր բառերը ստեղծեց, բառերուն տուաւ այլ իմաստ. դարձան խորհրդանիշ ու դարձան բոցեր: Նարեկացիին առաւելապէս անձնական էր եւ դրաւ իր անձնական դրոշմը, ձեւ մը, որ իրմով սկսաւ, եւ իրմէ յետոյ եկողները հետեւեցան միայն, եւ այդ ձեւով ան ուժեղ զի՞ծ ձգեց մեր գրականութեան մէջ: Մենք կը գտնենք անոր խոր ազդեցութիւնը Ինտրային՝ Տիրան Չրա-

քեանին, Սիամանթոյին եւ չափով մը Մեծարեցնցի մէջ: Անոր անձնական ըլլալն էր, որ բանաստեղծութեան տուաւ գեղարուեստական արժէք: Բանաստեղծ մը, որուն մէջ ուժեղ եղած են բնութիւնը, տերեւը, Արեւը, կանանչը, հողը, հետեւաբար՝ ուժեղ է կեանքը:

Իր աղօթամատենին մէջ երբեք չի ընդունիր<sup>18</sup>, որ իր մարմինը հողեղէն է եւ գերեզմանով կը փակուի միայն, այլ իր մէջ երկիւնքէն կտոր մը կայ: Նարեկացիին համակերպուող մը չէ, այլ պարտուած մը՝ իր պայքարին մէջ: Կը զգայ, որ մեղքով լեցուն է իր կեանքը, եւ ուժեղ ալիքներուն պէս եզերքներուն կը զարնուի: Իսկապէս ողբերգութիւն մը, շեյքսփիրեան ողբերգութիւն մը, ուր մահուան ու կեանքի տարբերը իրարու կը զարնուին: Իր այդ ողբերգական աղօթքներուն մէջ մեծագոյն լաւատեսն է Նարեկացիին: Հոգեվերլուծաբանի մը համար շատ կարեւոր դաշտ են Նարեկը եւ Նարեկացիին: Ան իր մատենին մէջ ինզիմքն է, որ կը խարագանէ՝ իր մէջ սպաննելու համար դեւը, մեղքը, որ ուրիշ բան չէ, թէ ոչ առողջ զգայարանքները: Եւ արդէն կը զգաս, որ ոճը, բառերը անոր նեարդներէն դուրս եկած են. կայ հուրը կեանքին եւ բնութեան: Եւ որովհետեւ կեանքը եւ բնութիւնը ուժեղ են անոր մէջ, անզգալաբար տուաւ իրապաշտ գրականութեան մը կայծերը, երբ իր աղօթամատենին մէջ կը նկարարագրէ մաւրեկութիւն մը՝ այնքան իրական, որ ոչ միայն կը զգաս, այլեւ կը տեսնես ամենի ալիքներէն հետզհետէ քանդուիլը մաւրն ու վերամբարձ կայմը, առագաստին <անընթ>, առասանները բոլոր, կը կքուի գլխակողմը, կը կտրին պարանները, կը քակուին խարսխակալը, սամիները, կ'ընկղմի յատակի լաստը՝ նեցուկը մաւին, <կառուցումը> դէկին, ողմափայտը, կապարանները, երերամած տախտակաշարքերը կ'անջատուին մէկզմէկէ, եւ զանոնք ամրապնդող գամերը դուրս կը ցատկին: Կը տեսնենք, թէ ինչքա՛ն իրական, մանրամասն անունները կու տայ մաւի մը, որ հետզհետէ կը քանդուի ամենի ալիքներէն: Միմայօլը անշուշտ հոգեկան մաւրեկումն է: Նոյնքան իրական է, երբ Սողոմոնի տաճարի շինութիւնը կը նկարագրէ. արդէն կը տեսնես բանուորներու շարժումը, եւ իրական, երբ կը նկարագրէ պարը Սալոմէի, որ զինն էր Յովհաննէս Սկրտիչի գլուխին:

Մի քանի տող միայն.

Խոպ խոպ խոպոպին վայր վայրենի ջոկիցն  
Երկուց խնձորուց նշտարենի ոստոց.  
Հոյլ մանրակոտոր արմաւենեաց ողկոյզն,  
Մի առ մի ընթաց երթեւեկեալ գային:  
Էր մաւկատիս Հերովդիայ ծննդեանն,

Շտապ հրաւեր տրուել համայնագնեան ռամկիւն:  
Մեղմիկ շարժելով յայս կոյս եւ յայն նայեր  
Շովածըփելին իւր մահաբեր աշօքն,  
Կայթել կաքաւել թմրկահարիկ աղջիկն,  
Պազշտ պակացեալ Հերովդիաս արքայ... 19

... թէ Նարեկացին ինչքան իր հոգին ու մարմինը խառնած է բնութեան տարրերուն հետ: Այդ տարրերն են, որ կը խլրտան մանաւանդ «Տաղ Վարդավառին» մէջ: Կ'ուզեմ կարդալ երեք տուն միայն.

Գոհար վարդն վառ առեալ  
ի վեհից վարսիցն արփենից:  
Ի վեր ի վերայ վարսից  
ծաւալէր ծաղիկ ծովային:  
Ի համատարած ծովէն  
պղպջէր գոյնն այն ծաղկին,  
Երփին երփնունակ ծաղկին  
շողշողէր պտուղն ի ճղին:  
Քրքում վակասիւր պտուղն  
սնանէր խուռն տերեւով.  
Տերեւն տաւիղ տուողին,  
գոր երգէր Դաւիթ հրաշալին:

Եւ արդէն տերեւի մէջէն տաւիղի ձայն կ'առնէ եւ այդ տաւիղը կը նմանեցնէ Դաւիթ հրաշալիին:

«Մի՛ պատուհաս մատուցես շանս սպանելոյ մի՛ քարիցս արձակեցին, լոյս ջախջախելոյ, մի՛ սաստիկս որոտասցէր...»: Այս վերջին երկու նախադասութիւնները վկայութիւններ են՝ քերուած Հին Կտակարանի Առաջին գիրք Թագաւորացէն: Նարեկացին կ'ըսէ՝ սպաննուած շանս մի՛ քարեր նետեր, ջախջախուած լուիս մի՛ սաստկօրէն որոտար: Իսկ Թագաւորացի վկայութիւնն է. «Խորայելի թագաւորը որո՞ւ ետեւէն ելեր է, եւ դուն որո՞ւ ետեւէն ինկեր կը հալածես. մեռած շան մը ետեւէն, լուի մը ետեւէն ելար»: Ահա թէ ինչպէս Նարեկացին իր հաւատքը եւ հոգին խառնած է Հին Կտակարանի իմաստութեան:

Այդ սպաննուած շունը եւ կամ լուս ինքն է՝ բազմազան մեղքերով լեցուն: Եւ ինչքան անգոր է իր ախտեանին՝ Տիրոջը դէմ պայքար տանելու:

Յիսուսի փարիսեցիի եւ մաքսատրի առակը իր շատ կարեւոր դերը ունի կատարած Նարեկացիի հոգիին մէջ: Մաքսատրն էր, որ իր կործանը ծեծելով կ'աղերսէր՝ ողորմի՛ ինձ՝ մեղատրիս: Բայց մենք կը տեսնենք, որ Նարեկա-

ցիի ոճին մէջ մեծ արուեստագէտը կայ, կայ հզօր բանաստեղծը, որ ինչքան ալ խուսափի իր անձնականութենէն, ինքը հոն է, որպէս հոգի եւ մարմին:

Թէ ուրկէ՞ նման ոճ մը 10-րդ դարուն: Ոմանք արաբական ազդեցութիւն կը կարծեն, մանաւանդ բառերու այդ երաժշտականութեան մէջ:

Ճիշդ է, որ, 7-րդ դարէն սկսեալ, արաբները յաճախակի արշաւանքներ ունեցած են Հայաստան: Առաջին արշաւանքէն յետոյ Հայաստանը տիրապետեցին մէկ ու կէս դար, եւ անկարելի էր, որ իրենց մշակութային ազդեցութիւնը չձգէին մեր դպրութեան, ինչպէս նաեւ մեր աշխարհիկ լեզուին վրայ: Մենք տեսանք այդ, երբ 12-րդ դարուն մեր ժողովուրդի աշխարհիկ լեզուն իր գոյութիւնն զգացուց շնորհիւ միջնադարեան տաղասացներու. բոլորովին տարբեր գիծ մեր կրօնական բանաստեղծութիւններէն: Մենք յետոյ պիտի տեսնենք, թէ Արեւելքը ինչքան ազդած էր մեր ժողովրդական լեզուին, մեր տաղասացներուն եւ մեր աշուղական գրականութեան ու երաժշտութեան վրայ: Մահմետական արաբը չէր կրնար ազդած ըլլալ մեր կրօնական բանաստեղծութեան վրայ, որովհետեւ քրիստոնէութիւնը պաշտպանութեան հզօր քերդ մըն էր: Թշնամին հոն չէր կրնար մտնել: Մի քանի տարի առաջ, երբ առաջին անգամ կարդացի Ս. Օգոստինոսի «Խոստովանութիւնը», ըսի. «Ահա մեր Նարեկացին: Ինչքան մօտիկութիւն կայ երեսակայութեան, մտածումի եւ նոյնիսկ ոճի»:

Ս. Օգոստինոս ապրած է 4-րդ դարուն՝ Քրիստոսի առաքեալներէն յետոյ: Ան եղած է կաթոլիկ եկեղեցին ամուր հիմքերուն վրայ դնող փիլիսոփան:

Ս. Օգոստինոսի, <անընթ. > 4-րդ դարը մեր ազգային, կրօնական պատմութեան նոյն դարը եղած է, ըսել կ'ուզեմ՝ սիւնակեացներու, խոտակերներու, անապատականներու, իրենց մարմինը շարշարողներու դարը<sup>20</sup>:

\*\*\*

Մեր Նարեկացիէն յետոյ մեր կրօնական դպրութեան մէջ դեմ առ դեմ կու գանք ուրիշ բանաստեղծի մը: Այդ Ներսէս Շնորհալին է՝ 12-րդ դար եւ Կիլիկեան շրջան:

Մենք Ներսէս Կլայեցիին մէջ, որ նոյն ինքն Շնորհալին է, չենք տեսներ Նարեկացու <անընթ. > ու բոցը երեսակայութեան: Շատ աւելի հանդարտ է, քնարական, հեզասահ գնացքով: Այստեղ մեր բանաստեղծութիւնը մտած է երաժշտական ճոխ յանգերուն մէջ, որ կ'ըսեն՝ յանգերու գործածութիւնը եկած է արաբականէն, եւ առաջին անգամ ըլլալով՝ մեր բանաստեղծութեան մէջ գործածած է արաբագէտ Գրիգոր Մագիստրոս Պաիլաուոնի իշխանը՝ 11-րդ դարուն: Ներսէս Շնորհալի Գրիգոր Մագիստրոսին թոռան զաւակն է: Շնորհալի ոչ միայն յանգերուն մէջ, այլև

տողերու մմանաճայն բառերուն մէջ դրած է երաժշտութիւն՝ քերես անոր համար, որ Շնորհալի եղած է երաժիշտ եւ ինք յօրինած է իր շարականներու երաժշտութիւնը:

10-րդ դարէն մինչեւ 12-րդ դար արդէն շատ բան փոխուած է<sup>21</sup>: Մեր գրաբար լեզուն անելի պարզեցաւ, մտածումը անելի հաստատ էր ու հանդարտած: Այդ հանդարտութիւնը կը տեսնենք Շնորհալիի տողերուն մէջ: Եւ լեզուն այնքան ճոխացեր էր, որ Շնորհալի արդէն տեսակ մը խաղի ելած էր: Յօրինած է երկար բանաստեղծութիւններ Ա.Բ.Գի, նաեւ իր անունի սկզբնատառերով:

Եթէ 5-րդ դարը եղած է մեր Ոսկեդարը, 11-րդ, 12-րդ դարերը մեր Արծաթ դարն էր:

Շնորհալի ապրած է խաչակիրներու երկրորդ արշաւանքի շրջանին, գրեթէ արշաւներ եւրոպական ու լատինական մշակոյթին: 12-րդ դարը Եւրոպայի համար ալ եղած է Վերածնունդի շրջան մը, որ հետզհետեւ ճամբայ պիտի բանար 15-րդ դարու Վերածնունդի իրական շարժումին, ուր կեանքն էր, որ գետի պէս պիտի յորդեր արուեստի՝ նկարչութեան եւ բանաստեղծութեան մէջ: Մարիամ Աստուածածինը՝ Յիսուս Մանուկը գրկին, արդէն կին էր՝ լեզուն կուրծքով ու կանացի բոլոր գրաւորութիւնով: 12-րդ դարու գրականութիւնը արդէն սկսած էր դուրս գալ կրօնական կաշկանդումներէն: Եւրոպան անելի մօտեցած էր Արեւելքին: Եւրոպացիները սկսած էին քարգմանել արաբական գիտութիւնը, բժշկութիւնը, աստղագիտութիւնը, մաթեմաթիքը: Կը հաստատուէին կրթական կեդրոններ, համալսարաններ: Յունականէն քարգմանութիւնները անելի լայն տեղ կը բռնէին, եւ կը զարգանար օրէնագիտութիւնը: Այդ հոսանքը նոյն թափով սկսած էր հայ կեանքին մէջ: Շնորհալին առաջինն էր, որ իր գրաբարով մշակած գրականութեան կողքին գրած է նաեւ ժողովուրդի լեզուով՝ աշխարհաբարով: Ուրեմն՝ հայ ժողովուրդն է, որ առաջին առիթով իր գոյութիւնը զգալի կը դարձնէ: 12-րդ դարը մեր իրական Վերածնունդի դարն է, մեր աշխարհաբարին, մեր գրականութեան, առանկապէս մեր բանաստեղծութեան: Մեր միջնադարեան տաղերգուներու շրջանն էր, որոնք կոտրեցին կրօնական բանաստեղծութեան աւանդութիւնը ու մտան իրական կեանքին մէջ: Այդ բանաստեղծներն են՝ Ֆրիկ՝ 12-րդ դար, Կոստանդին Երզնկացի, Թլկուրանցի, Սկրտիչ Նաղաշ, Գրիգոր Աղթամարցի, մինչեւ Նահապետ Քուչակ: Շատ կարճ տեսեց այդ Վերածնունդը, եւ արդէն մեր եկեղեցականութիւնը վրայ հասաւ, նոյնիսկ հալածեց եւ դպրութիւնը դարձուց նորէն վանքերու սեփականութիւնը եւ մեռաշնորհը գրաբար լեզուի: Ինչպէս ըսի, եւրոպականին հետ արդէն սկսած էր Վերա-

ծնունդը մեր մէջ 12-րդ դարուն՝ Մխիթար Հերացիով, Մխիթար Գոշով եւ Ներսէս Շնորհալիով: Մխիթար Հերացին կը գրէ ժողովրդական բարբառով «Ջերմանց Մխիթարութիւն» գիրքը, եւ Մխիթար Գոշ կը գրէ «Դատաստանագիրք»ը եւ աշխարհիկ բարբառով առածներ, իսկ Ներսէս Շնորհալին նոյն ժողովուրդի լեզուով մէջտեղ կը բերէ հանելուկ ոտանաորներով: Ես կու տամ երկու օրինակ միայն.

Տուն մի տեսի սպիտակ փրած,  
Ու սեւ հաւեր ի ներս բառած,  
Չուս ածէին ցեղք ի ցեղաց,  
Լեզուաւ խօսին բանականաց:

Այս հանելուկը գիրքն է:  
Ուրիշ մը.

Որպէս տիկին յուշիկ գնայ,  
Պարանն ետեւ ի քաշ կու գայ,  
Բազմէ ոսկի բարձի վրայ,  
Որսիկ առնէ քան զբազէ:  
(Կատուն է)

Շնորհալին գրած է այս հանելուկները հանելի ժամանցներուն համար: Շնորհալին ունի արուեստագէտի ազնուականութիւն մը: Եւ սակայն ինքզինք կապած է բառախաղերուն մէջ: Այդ բառախաղերուն մէջ կը տեսնենք առանկապէս մեր լեզուի ճոխութիւնը: Անոր մէջ յանգերու ըմբռումը տակաւին նախնական է եւ կը վերջանան ալ, ի, ին եւ ուրիւն միօրինակութիւնով: «Ողբ Եդեսիոյ» երկար եւ գեղեցիկ բանաստեղծութիւնը նոյն միօրինակ յանգերը ունի:

Շնորհալիի բանաստեղծութեան մէջ եւս ուժեղ են մտերմութիւնը ու տարրերը բնութեան: Հինգ եւ չորս-չորս վանկերը շատ հանդարտութեամբ կը շարուին, ինչպէս «Ջարթի՛ր, փառք իմ»ը, «Նորահրաշ պսակաւոր»ը, «Տարածեալ»ը, «Նորաստեղծեալ»ը: Մենք կը տեսնենք, որ մեզի շատ ծանօթ եւ մեր եկեղեցին պայծառացնող շարականներ են:

Ոչ միայն «Առաւօտ լուսոյ, առ իս լոյս ծագեայ»ն է, որպէս լոյսի եւ Արեւի աղօթք, այլեւ Շնորհալին ունի Արեւագալի շարականներ, ու կ'երգուին Մեծ պահքի առաւօտները: Այդ նոյն ժամանակն է, որ կը ջերմանայ Արեւը, եւ ջերմութիւն կ'իյնայ հողին եւ ջուրին: Անկարելի է, որ գիծ մը չի մնայ մեր հին հեթանոսական ծեսերէն, գիծ մը, որ կայ նաեւ Նարեկացիին մէջ: Մեր Արեւի ու լոյսի պաշտամունքէն նմոյշ մը Շնորհալիի Արեւագալի շարականներէն պիտի կարդայ Վարսիկ Քէշիշեան:

Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս,  
Բերկրեալդ ի լուսոյ յանմատոյց,  
Հայր երկնաւոր,  
Ի դասուց լուսեղինացըն օրհնեալ.  
Ի ծագել լուսոյ առաւօտուս  
Ծագեա՛ ի հոգիս մեր  
Ըզլոյս քո իմանալի:

Լոյս ի լուսոց ծագումըն,  
Արեգակն արդար,  
Անճառ ծընունդ Հօր Որդի.  
Յառաջ քան զարեւ  
Անուն քո գովեալ ընդ Հօր.  
Ի ծագել լուսոյ առաւօտուս  
Ծագեա՛ ի հոգիս մեր  
Ըզլոյս քո իմանալի:

Լոյս ի Հօրէ բղխումըն,  
Աղբիւր բարութեան,  
Հոգիդ սուրբ Աստուծոյ,  
Մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակքս  
Ըզքեզ բարեբանեն.  
Ի ծագել լուսոյ առաւօտուս  
Ծագեա՛ ի հոգիս մեր  
Ըզլոյս քո իմանալի:

Լոյս, երբեակ եւ մի  
Անբաժանելի սուրբ Երրորդութիւն,  
Ըզքեզ ընդ երկնայնոցըն  
Երկրածինքըս միշտ փառաւորենք.  
Ի ծագել լուսոյ առաւօտուս  
Ծագեա՛ ի հոգիս մեր  
Ըզլոյս քո իմանալի:

Այստեղ իմ խօսքերուն կ'ուզեմ տալ կարճ ընդհատում՝ յետոյ շարունակելու համար: Երգչախումբը պիտի տայ եկեղեցական երաժշտութիւն Շնորհալիէն:

Ինչպէս ըսի, առաջին անգամն է, որ մեր դպրութեան մէջ ժողովրդական բարբառն ու շունչը կը զգանք Շնորհալիով: Յետոյ կը տեսնենք ժողովուրդի մը գոյութիւնը. այն ժողովուրդը, որ զօրք կու տար, կ'աշխատէր, կը շինէր, տուրք կու տար, եւ սակայն մեր պատմագիրները ոչինչ տուած են այդ ժողովուրդէն: Անտարակոյս այդ ժողովուրդը ունէր իր ուրախութեան, իր տրամութեան <երգերը>, իր երգերը ցանքի ու աշխատանքի՝ հարուստ ու շատ գեղեցիկ դաշտ մը, որ այս օրերուն ծանօթ է մեզի ժողովրդական բանահիւսութիւն անունով, եւ կամ այն շատ հարուստ երգերը, որ մէջտեղ հանեց Կոմիտասը, եւ կազմեցին հիմքը մեր հայ երաժշտութեան: Կհնը, որ փորձութիւն էր մեր կրօնաւորներու ու մեր կրօնական դպրութեան համար, կը դառնայ սէր, կեանք, բնութիւն եւ ստեղծագործութիւն: Եւ կարելի՞ է երեւակայել, որ աշխարհիկ այդ շարժումը կը սկսի մեր եկեղեցականներէն, ինչպէս Կոստանդին Երզնկացին, որ քահանայ եղած է եւ նոյնիսկ հալածուած իր աշխարհիկ յանդուգն բանաստեղծութիւններուն համար, Յովհաննէս Պլուզը՝ բարձրաստիճան եկեղեցական, հմուտ լեզուաբան, թարգմանիչ եւ քերականագէտ, շարականներ գրող, նոյնպէս հալածուած է իր աշխարհիկ բանաստեղծութեան համար: Եւ Թլկուրանցին՝ Սիսի կաթողիկոսը, որ շատ յանդուգն բանաստեղծութիւններով մարմնական սէրը երգած է, եւ այս՝ 13-րդ դարուն, երբ երոպական գրական Վերածնունդին մէջ կարեւոր տեղ կու տային իտալացի բանաստեղծ Բետրարքային, որ քնարական, սիրային բանաստեղծութիւններ գրած է՝ նուիրուած իր սիրուիւն՝ Լորային: 14-րդ դարուն Բետրարքայի բանաստեղծութիւնները տեսակ մը յեղաշրջում էին լատին եկեղեցականներուն ծանր ըմբռնումին դէմ: Այնքան ծանր, որ նոյնիսկ արգելք կ'ըլլային չի կարդալ Վերգիլիոս եւ կամ Օվիտ, որովհետեւ անոնց մէջ հեթանոսական տարրեր կային:

Մեր Վերածնունդը ուրեմն սկսած է 13-րդ դարու վերջերը: Մեր միջնադարեան տաղերգուներն էին, որ կարեւոր դեր կատարեցին՝ բանալով վարագոյրին ծայրը, որուն ետեւ անծանօթ, իրական աշխարհ մը կար: Այդ աշխարհը հայ ժողովուրդն էր: Աշխարհ մը, որ, անկախ մեր եկեղեցական դպրութենէն, անկախ Նարեկացիէն, Ս. Մաշտոցէն, անկախ նոյնիսկ արեւմտեան ազդեցութենէն, բոլորովին տարբեր նկարագիր ունէր: Գիծ մը, որ արեւելքէն կու գար: Կու գար Պարսկաստանէն ու Արաբստանէն: Եւ որուն վրայ հայ ժողովուրդը իր նկարագրի դրոշմը դրած էր: Ի գուր չէր, որ Պարսկաստանի դէմ ուժեղ եւ յաճախակի պատերազմներ ունեցած ենք, եւ պարսիկները ուզած են իրենց մշակոյթին ներքեւ ամեն ինչ չախտաւորելով կրակապաշտութիւնը: Մեր լեզուին մէջ արմատա-

կան ազդեցութիւն ձգած է պարսկական հին լեզուն՝ պահլավերէնը, եւ մեր 4-րդ, 5-րդ դարերու պատմագիրները շատ տեղ կու տան հայ եւ պարսիկ պատերազմներուն, բարեկամութեան եւ փոխյարաբերութեան մասին: Խորենացին մեր եւ պարսիկ առասպելներուն միջեւ որոշ նմանութիւն կը յիշէ, ինչպէս Սոհրաբի առասպելը, եւ կը յիշէ Ռոստոմը, նոյն Ռոստոմը, որ յետոյ Ֆիրաուսի «Շահնամէ»ի նշանաւոր հերոսը դարձաւ:

Ինչպէս ըսի, մշակութային փոխյարաբերութեան գլխաւոր միջոցը եղած է աստուածներու մուտքը: «Մայր զգաստութեան» Անահիտը Չանտավեստայի Արավիստրա Անահիտան է եւ ունի նոյն բնորոշումները՝ «մաքրամաքուր եւ մայր զգաստութեան»: Եւ մենք, ինչպէս քրիստոնէութեան, նոյնպէս Անահիտին տուած ենք ազգային նկարագիր: (Այստեղ փակագծի մէջ կ'ուզեմ ըսել, որ Չանտավեստայի հեղինակը Չարատուստրան է: Ըստ երոսկական պատմագիրներու՝ եղած են մեկէ աւելի Չարատուստրաներ, որոնցմէ մէկը հայ եղած է: Կրնանք հէքեաք նկատել, եւ սակայն հայկական աղբիւրէ չէ, որ առած են այն): Պարսիկները կը զգային վտանգը, որ քրիստոնէութիւնով Հայաստանը պիտի ենթարկուի Արեւմուտքին՝ խախտելով քաղաքական մտարը: Վարդանի պատերազմին մէջ այդ մտահոգութիւնը կար, եւ Հայաստանը միշտ ալ կռուի դաշտը եղած է<sup>22</sup> նաեւ երկու մշակոյթներուն: Եւ թէ՛ Արեւելքը, եւ թէ՛ Արեւմուտքը իրենց ուժեղ ազդեցութիւնները ձգած են: Մշակոյթին ազդեցութիւնը ազգերու վրայ քաղաքակրթական յառաջադիմութիւն է: Միայն հետամնաց ազգերը ենթակայ չեն ազդեցութեան<sup>23</sup>: Հայ ազգը քաղաքակրթութեան ընդունակ ազգ է, կրցած է այդ ազդեցութիւնները իւրացնել եւ տալ ազգային ինքնուրոյն նկարագիր: Այդ նկարագիրը առաւելապէս հայկական է:

Ես չզիտեմ քաղաքակիրք ռեւէ ազգ, որ լեզուին եւ իր մշակոյթին ու գրականութեան մէջ չի կրէ որեւէ ազդեցութիւն: Երոսայի մէջ Հին Յունաստանի ուժեղ դրոշմը կայ, որպէս արուեստ: Հակառակ զանազան ազդեցութիւններու՝ Ֆրանսան դրած է իր դրոշմը ֆրանսական մշակոյթին վրայ: Նոյնը՝ Անգլիան, Գերմանիան եւ Իտալիան: Հակառակ Արեւելքի եւ Արեւմուտքի ազդեցութեան՝ մեր մշակոյթը առաւելապէս հայեցի է, ինչպէս մեր ճարտարապետութիւնը, մեր երաժշտութիւնը, բանաստեղծութիւնը: Երբ 12-րդ դարուն մեր տաղերգուները կը բանան վարագոյրին մէկ մասը միայն, կը տեսնենք ժողովուրդ մը, որ ազդեցութիւններ ունեցած է պարսկականէն, արաբականէն, նաեւ քրքականէն՝ իր լեզուին վրայ եւ սակայն ստեղծած իր ինքնուրոյն գիծը:

Արաբական արշաւանք 7-րդ դարուն, 9-րդ դարուն մահմետական պարսիկներու արշաւանքը, 11-րդ դարու սելճուկ թուրքերու արշաւանքը,

Լենկթեմուրը, Տուրքիւնները, Ալիսաւանները, ահաւոր ջարդերը: Այդ արհաւիրքներուն մէջ դժուար չէ բացատրել մեր հոգեկան նուիրումը երկնքի թագաւորութեան, հրաժարումը մարմնական կեանքէն: Մ. Մեսրոպի, Գրիգոր Նարեկացիի եւ մեր շարականներու միսթիքականութիւնը: Երբ վարագոյրը կը բացուի, մենք կը տեսնենք այդ բոլոր արշաւանքներուն թողած արհաւիրքը հայ շարքաշ ժողովուրդին վրայ: Եւ այդ ժողովուրդի ուժեղ արտայայտիչը եղած է Ֆրիկը, որուն բանաստեղծութիւններուն մէջ կայ դառնութիւն, սուր հեզմանք, գանգատ, փիլիսոփայութիւն: Եւ հասած է հոն, որ երկնքի եւ Ֆրիկի մէջ բարակ թել մը կայ միայն:

Արդէն ծաղկած էր պարսկական գրականութիւնը Ֆիրաուսիով, Հաֆեզով, 11-րդ դարու Նիզամիով եւ Օմար Խայամով: Օմար Խայամը նոյնպէս բարակ թելով մը կապուած էր համդերձեալին հետ: Նոյնպէս Ապու-Լալա Մահարին արաբական բանաստեղծութեան մէջ<sup>24</sup>:

Անտարակոյս բացառիկ տաղանդներէն մէկն է Ֆրիկ ոչ միայն <որպէս> բանաստեղծ, այլեւ փիլիսոփայ եւ ունի ինքնուրոյն բարոյական ըմբռնում<sup>25</sup>: Իր լեզուն միջին հայերէնի խառնուրդ լեզու մըն է: Ահա բանաստեղծ մը, որ կու տայ իր շրջանը, եւ արդէն գրողի կարեւոր յատկանիշը այդ է: Ֆրիկ աշտարակի մէջ չէր: Այնքան իրական է անոր մօտեցումը, որ մենք Ֆրիկով կրնանք տեսնել, թէ ինչքան մեծ արհաւիրք ձգած են արշաւանքները մեր ժողովուրդին վրայ թէ՛ հոգեպէս եւ թէ՛ միթապէս:

Ժողովեցի շատ մի բարի՝ ըզգակ արի զինք Թաթարի:

Լաւ չ'ի դատել այնչափ տարի, երբ իմ հոգոյս ոռճիկ չարի,

Ձինչ որ մարդկան խորհուրդ լինի, ամենըն հողմ է եւ քամի:

Այն բազային են նըմանի, որ փոքր որսի ոչ հաւանի,

Ով որ ատժ գաչքն այլ մեծի, բեստէ կենայ գօրն անօթի,- կը գրէ Ֆրիկ:

Եւ որովհետեւ չէ կրցած վճարել իր տուրքը, հարկահաւաքները հարկի հետ իր որդին տարած են որպէս պատանդ:

Հիմիկ դըժարեց բաներս, որ թաթարն եղաւ թագաւոր,  
Ձրոկեց զամենայն աշխարհս ու զգողերն եղիր մեծաւոր:  
Այս այլ չի մընայ հանցեղ ու ֆալաքն ոչում կարեւոր,  
Չարնու եւ ճրգէ ի վայր՝ չ'համարէ գոչ որ թագաւոր:

Եթէ այս բոլորին վրայ աւելցնենք մեր կրօնական դասու շահատակութիւնները, պատկերը կատարեալ կ'ըլլայ:

Ֆրիկ կը գանգատի, կը բողոքէ: Մխալ մը կայ Աստծոյ ստեղծագործութեան մէջ: Եղիա Տեմիրճիպաշեանի բառերով՝ «Ո՛վ իմ Աստուած, արարչագործութիւնն ալ հինգաւ», եւ զարմանալի կերպով նկարագրի նմանութիւն կայ Ֆրիկի եւ Տեմիրճիպաշեանի մէջ՝ միայն այն տարբերութեամբ, որ Ֆրիկի յոռետեսութիւնը առաւելապէս ընկերային է եւ քաղաքական: Ֆրիկ խիստ է իր երկաթէ տողերուն մէջ, երբ կը քննադատէ: Անտարակոյս ան կրնար ընկերային շարժումի մը առաքելալը ըլլալ՝ փլցնելով մեր օրերու քարոյական ըմբռումները: Խորքով քրիստոնեայ է եւ<sup>26</sup> կը տեսնէ, որ կրօնատրոնները սնանկացուցեր են քրմատոնեական քարոյականը:

Առանձնապէս իր նշանաւոր «Գանգատ»ին մէջ Ֆրիկ երեսն կու գայ որպէս մեծ մարդասէր եւ այնքան ազատ իր մտածողութեան մէջ: Բազմաժանտակ ազգերու նախապաշարունակներ, որոնք իրարու վրայ կռուի կ'ելլեն: Կան բազմաժանտակ կրօններ, պէս-պէս լեզուներ, որոնք իրարու դէմ կռուի կ'ելլեն, զիրար կը ջարդեն, իրարու եկեղեցի կը քանդեն, եւ յետոյ ի՛նչ անարդարութիւն, Աստուած:

Մէկն ի պապանց պարոնորդի,  
Մէկն ի հարանց մուրող լինի.  
Մէկին հազար ձի ու ջորի,  
Մէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի:

Մէկին հազար դեկան\* ոսկի,  
Մէկին ոչ փող մի պողղնձի.  
Մէկին հազար հատ մարգարտի,  
Մէկին ոչ ուլնիկ ապակի\*:

Յետոյ կ'ըսեն մարդուն.

Չչարն քու կամաւ գործես՝ ըզատանայ պատճառ դրնես,  
Եղբայր, քեզ երդումըն տամ, սատանայ դու ե՛րբ տեսեր ես:

Մի կամ կրօնատրոններուն դէմ.

Եպիսկոպոսքն ի սպառնալիօք  
Երթան ի ժամ եւ գրուցին.  
Բարկութեամբ միշտ լցեալ են,  
Խորհեն, թէ զու՛մ փիլոն հանեն:

Բարձով նստին ի ժամատանն,  
Որում հրեշտակքըն կու սարսեն.

Ապա նոքա վասն կաշառուց  
Չմարդ խիլայէն զընդանն:

Երբ որ հովիւքն են մուրած,  
Ըզգրուեալ հաւատս ոնց ժողովն.  
Քահանայքըն են նախանձուտ,  
Զօտար էրէցըն կու առնն:

Երբ առաջ գան ի գիրք կարդալ,  
Չերդ գերդ ըզհրեշտակս բարբառն.  
Նոքա գիտեն կանոն 'ի օրէնք,  
Եւ սրբութեան իսկի տէր չեն:

Եւ արդէն աններող կծու հեզմանքով Վուրթեր մը կը ներկայանայ Ֆրիկ: Բայց եւ պիտի ուզէի, որ անոր նշանաւոր «Գանգատ»էն մի քանի տուններ միայն կարդացուին՝ ճաշակ մը տալու համար: Պիտի կարդայ Լորիկ Համաստեղ:

Մեր միջնադարեան բանաստեղծները եւ Ֆրիկ, անկախ քրիստոնեականէն, կեանքի իմաստը որոնելու նոր ճամբու մէջ ինկած են: Անոնք տուին զոյն մեր բառերուն, տուին զգացում եւ թռիչք եւ է՛ն կարեւորը՝ տուին մեր աշխարհաբարը, որ կու գար իրական կեանքէն ու հողէն:

Անշուշտ լրիւ պատկեր մը չէ խօսիլ միջնադարեան մեր տաղասացներու մասին՝ առանց Կոստանդին Երզնկացիի, Յովհաննէս Պլուզի, Կեչառեցի Յովհաննէս Սարկաւազ վարդապետի եւ անոր «Մարեկին երգը» նշանաւոր բանաստեղծութեան: Լրիւ չպիտի ըլլար մանաւանդ առանց Յովհաննէս Թլկուրանցիի, մանաւանդ առանց Նահապէտ Զուլակի, որուն բանաստեղծութիւնները թանկագին քարերով շարուած մոզայիքներ են:

Որպէս վերջին նմոյշ՝ կ'ուզեմ տալ կտոր մը Յովհաննէս Թլկուրանցիէն՝ ցոյց տալու համար, թէ ինչքան գեղեցիկ գնացք ունին չորս-չորս վանկերը, եւ թէ գեղեցիկ է ժողովրդական աշխարհաբարը: Այս կտորը պիտի կարդայ Արմինէ Զէշիշեան.

Յանկարծակի մէկ մի տեսայ,  
Որ կու ցողայր գունն յերեսն,  
Թալցայ\*, անկայ ի տեսլենն՝  
Շողայր, կաթէր լուսն ի վըզէն:

Աչերն է ծով, ունքըն՝ թուխ ամպ,  
Մազն է դեղձան\* ոսկի թելէն,  
Զինքն ճոճար գէտ զուռի ճեղ\*,  
Հըրով այրէր զերկիր ամէն:

Ճոխազընաց, մարաքայլող  
Հոգիքըն ի մարմնէ քակող,  
Լուրժն\* է ծածկեր զամէն աշխարհս,  
Շաքար կածէր իւր քարամէն:

Մենք կը տեսնենք, թէ ինչքան մեծ չափերով օգտագործած է ժողովրդական բառերը, նաեւ գործածութիւնը օտար բառերուն, որ առանձինն զոյն տուած են՝ <անընթ.>, լուրժ, քարամ\* եւ ուրիշ բանաստեղծութիւններուն մէջ՝ բահար\*, նատար տալ\*, բաղշա\* եւ շատ ուրիշ բառեր, որ մեր աշուղական գրականութեան առանձինն նկարագիր տուին, եւ այդ ժողովրդականին զեղեցկութիւն կրցան ըմբռնել եւ ընդհանրացնել բանաստեղծներ Արովեան, Աղայեան, Թումանեան եւ Իսահակեան:

Անոնք ըրին՝ ժողովրդական ոգիի եւ երաժշտութեան հարազատութիւնը պահելու համար:

Մեր միջնադարեան տաղասացներու այդ կանանչ, կարկաչող աղբիւրը կը կորստի յանկարծ, ու մեր դարութիւնն ու բանաստեղծութիւնը նորէն կը մտնեն վանքերուն մէջ: Եւ շատ տարիներ յետոյ մեր բանաստեղծները պիտի պրպտէին փոշոտ ձեռագիրները՝ մէջտեղ բերելու այդ արժէքները: Զօպանեան մէկն էր այդ բանաստեղծներէն: Երկար ատեն նորէն վանքերուն մեծաշնորհը դարձան մեր գրականութիւնը, մեր բանաստեղծութիւնը, մեր վէպը, մեր բանաստեղծութիւնը եւ մեր թարգմանութիւնները: Այդ ամբողջը տարուեցաւ սահմանափակ ճաշակով եւ անկենդան ոճով<sup>27</sup>:

## ՄՇԱԿՈՑԹԸ

Ազգերու կազմութիւնը հաւաքական պաշտպանութիւն է, գոյութեան պաշտպանութիւն: Այդ նպատակին համար կը շինեն բերդեր, պարիսպներ: Եթէ ուժեղ են, կը յարձակին, եւ եթէ տկար, կը պաշտպանուին: Կը յարձակին այն ազգերը, որոնք աւազակային բնագոյներ ունին՝ սպաննելու, գրաւելու եւ տկար ժողովուրդ մը հարկատու դարձնելու: Պատմութիւնը ցոյց կու տայ, որ հայ ազգը առաւելապէս ինքզինքն էր արժէքները պաշտպանած է բարբարոսներու յարձակումներուն դէմ: Եւ կը պաշտպանուին միայն այն ազգերը, որոնք շինարար են եւ ընդունակ ստեղծելու մշակոյթ եւ քաղաքակրթութիւն՝ նոյնպէս իրենք զիրենք պաշտպանելու համար: Եւ չգիտեմ անիկի հզօր բանակ եւ անիկի հզօր զէնք, քան ինքը մշակոյթը եղած է հայ ժողովուրդին համար: Ան մշակոյթով շնչած է եւ մշակոյթով ալ ապրեցուցած է եւ գոյութիւնը: Հայ ազգը մեծ բանակներ ունեցած չէ՝ նոր հողամասեր եւ երկիրներ հարկատու դարձնելու համար: Յաճախ հարկատու եղած ենք, յաճախ պարտուած ենք, եւ մենք այդ պարտութիւնով յաղթած ենք: Մարդկային պատմութիւնը չգիտէ ազգ մը կամ ժողովուրդ մը, որ այնքան յարձակումներու ենթարկուած ըլլայ, այնքան զոհեր տուած ըլլայ եւ պահէ իր գոյութիւնը, որքան հայ ժողովուրդը եղած է: Եւ կարելի է զարմանալ, թէ ինչ է զաղտնիքը, որ հայ ազգը կ'ապրի հակառակ անոր, որ շատ հին ազգերէ մէկը եղած է: 5-րդ դարէն առաջ եւ յետոյ մեր երկրի տէրերը եղած են պարթեւները, սասանեանները, Հռովմը, Բիզանդիոնը եւ 7-րդ դարուն՝ արաբները: Տիգրան Մեծէ յետոյ մեր արքունիքին տէր եղած են պարթեւ Արշակունիները: 450 տարի՝ մինչեւ 5-րդ դար: 4-րդ դարէ սկսած Պարթեւ Անակին որդին՝ Լուսաւորիչը, հաստատած է հայ կաթողիկոսին աթոռը եւ դարձած է տոհմային: Մամիկոնեանները, որ մեր պատմութեան մէջ մեծ դեր կատարեցին, չինացիներ եղած են եւ իրենց ուժերով ապաստան գտած են Հայաստանի մէջ 3-րդ դարուն: Օտարներ եղած են նաեւ Բագրատունիները, որ նոյնպէս մեծ դեր կատարած են մեր պատմութեան մէջ: Զարմանալին այն է, որ թէ՛ Արշակունիները, թէ՛ հայ եկեղեցիներուն տէր պարթեւ տոհմը Լուսաւորիչ, թէ՛ Մամիկոնեանները եւ թէ՛ Բագրատունիները ոչ միայն հայացած են, այլեւ, ինչպէս ըսի, մեր ազգային պատմութեան մէջ մեծ դերեր կատարած են: Կարելի է զարմանալ, թէ ո՞ր է ուժը այդ հրաշքին եւ կամ կախարդանքին: Այդ կախարդանքը եղած է հայ մշակոյթը: Այդ մշակոյթին մենք

առաւելապէս ծանօթ ենք 5-րդ դարէն սկսեալ, երբ մեր գրերու գիտով ան-  
ցաւ պատմութեան եւ հասաւ մեզի:

Քրիստոնէութիւնն որպէս արեւմտեան մշակոյթ եկաւ, եւ այդ մշակոյ-  
թի վրայ հիմնուեցաւ ոչ միայն մեր ազգային մշակոյթը, այլեւ մեր ազգա-  
յին գոյութիւնը՝ այդ մշակոյթին հետ մասամբ խառնելով հեթանոսակա-  
նը: Ճարտարապետական ուժեղ թէքնիք եւ գեղարուեստական գծեր ու-  
նեցած է հայ ճարտարապետութիւնը՝ այնքան կատարեալ, որ, երոպա-  
ցիներու կարծիքով, իր ուժեղ ազդեցութիւնը ձգած է եւրոպական ճար-  
տարապետութեան վրայ: Բարգաւաճ եղած են մեր եկեղեցական մատե-  
նագրութիւնը, միջնադարեան գրականութիւնն ու տաղերգութիւնը: Հա-  
րուստ եղած ենք թարգմանութիւններով, այնքան հարուստ, որ բաւական  
ձեռագիրներ կարելուք հեղինակներէն հայ թարգմանութիւններով  
փրկուած են: Շատ հարուստ եղած ենք, եւ վանքերը լեցուցած ենք ձեռա-  
գիրներով: Եւ այդ բոլորը քաղաքական ծանր պայմաններուն ներքեւ  
ստեղծագործած են: Շատ կանուխ սկսած է մեր ժողովրդական գրակա-  
նութեան զարթօնը՝ 13-րդ դար, ուրկէ կը սկսին կեանքն ու իրականու-  
թիւնը: Այսօր պիտի ներկայացնեն ձեզի մեր բանաստեղծութեան մեծ  
վարպետներէն աշուղ Սայաթ-Նովան, որ ապրած է 250 տարի առաջ:  
Այդ առիթով կ'ուզեմ ներկայացնել նաեւ աղբիւրը մեր միջնադարեան  
տաղերգութեան եւ աշուղականութեան:

Մշակոյթը ինքը հայ ժողովուրդն է:

## ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Անգիր դարութենէն կու գայ աշուղական գրականութիւնը, ինչպէս դի-  
ցագնավէպը եւ կամ առհասարակ հէքեաթը: Ժողովուրդը նոյն ինքն ան-  
գիր դարութիւնն է: Իսկական ստեղծագործողը անհատներն են անտա-  
րակոյս: Ժողովուրդը կ'առնէ այդ ստեղծագործութիւնը, կը յարմարցնէ իր  
սիրային, իր վշտի, իր ուրախութեան զգացումներուն ու կ'երգէ եւ կամ կը  
պատմէ: Կարելի է ըսել, որ «Մասունցի Դաւիթը» անցած է շատ փուլերէ, եւ  
ժողովուրդը փոխած է՝ յարմարցնելով իր շրջանին եւ իր միջավայրին: Ժո-  
ղովուրդը ըսելով՝ մենք կը հասկնանք հարուստ շտեմարան գեղեցիկ ստեղ-  
ծագործութիւններու: Եւ այդ ժողովուրդը, որպէս ռամիկ, արհամարհուած  
դասակարգ եղած է միշտ մեր վանքերուն եւ մեր արքունիքին համար:

Ունեցած ենք պատմագիրներ՝ Խորենացիէն սկսեալ: Ունեցած ենք  
ճոխ դարութիւն հեթանոսական շրջանէն, որուն շատ քիչ կամ բնաւ ծա-  
նօթ չենք: Ունեցած ենք նոյնպէս ճոխ եկեղեցական գրականութիւն:  
Տուած ենք Նարեկի նման ուժեղ եւ սքանչելի մատեան: Այդ բոլորին մէջ  
մենք ակամայ կը հարցնենք՝ ո՞ւր է ժողովուրդը, ժողովուրդը, որ կռուած է,  
ժողովուրդը, որ աշխատած է, ժողովուրդը, որ շինած է, ժողովուրդը, ուր  
կան ճոխ գոյները կեանքի, վերջապէս՝ ժողովուրդը իր տառապանքով, իր  
սէրով ու զուարճութիւններով: Մեր հին մատեաններու մէջ հազիւ կը հան-  
դիպինք «ռամիկն աստ» մի քանի ակնարկութիւններու, ան ալ արհամար-  
հական ձեւով ըսուած:

Վանքերու դարութիւնը իր ուրոյն ոճն ունէր, ունէր ուրոյն երեսակայու-  
թիւն, որ <վերերէն>, մուսաներէն կու գար...<sup>2</sup>

Այդ զգացումը ուժեղ է անապատ քաշուող ճգնաւորին մէջ: Ընդհակա-  
ռակը, անոր մէջ աւելի լեցուն է եւ ուժեղ, որովհետեւ ահաւոր պայքար կը  
տանի իր մէջէն այդ զգացումը դուրս վանելու համար: Անոր հոգիին մէջ  
կեանքը աւելի շատ է, եւ երկինքը՝ աւելի քիչ: Անոր աչքին քարերն անգամ  
կրնան կիներու կերպարանք ստանալ: Քրիստոնէական գրականութիւնը  
լեցուն է նման պայքարներով. ժխտել կեանքը, խուսափիլ կեանքէն եւ  
դարձնել կեանքը սատանայի նման ահաւոր ճիւղ մը:

Եւ մենք կը տեսնենք կեանքի պայքարներուն մէջ ընկճուած արուեստ  
մը՝ primitive\* նկարներուն մէջ արտայայտուած: Սուրբի նկար մը <ոսկ-  
րուտ> մարմնով, աչքերը մարած՝ երկինք յառած: Կը տեսնենք Մատ-  
նան իր քարակ մարմնով, նիհար քթով:



Կեանքը կարելի է նմանցնել վարար գետի մը, որ միշտ ալ կը քանդէ պատնէշներ, եւ ահա միջնադարեան վանքերը կ'իյնան զեխ կեանքին մէջ, ետ կ'երթան դէպի հեթանոսական տաճարները: Մենք տեսանք, որ չուշացաւ Վերածնունդը՝ Բենեսանսը արուեստին մէջ: Այն միհար եւ ոսկրուտ սուրբերը չկային այլեւս, այլ կար կեանքը, ուժը քրիստոնէական նկարներուն մէջ: Յովհաննէս Մկրտիչ բարակ, միհար մէկը չէր, այլ մէկը յաղթ, հսկայ ըմբիշի ուժեղ դնդերներով: Նոյնպէս միհար մատոնաներուն տեղ բռնեց լիբը կուրծքով, մարմնեղ, շատ կանացի ժայտով, կուրծքը բաց Մատոնան:

Վանքը քաշուող վանականներուն համար այդ փարթամ Մատոնան արդէն լրի կիսն էր՝ զինքը կեանքին կանչող<sup>3</sup>:

Յետոյ թրքական արշաւանքները Պարսկաստանը դարձուցին բուրբ վին անճանաչելի: Անոնք մտան մուսուլմանական կրօնական վէճերուն մէջ, իրենց լեզուն թուրքերէնով եւ արաբերէնով այնքան խառնուեցաւ, որ կ'ըսեն 10-րդ դարուն Ֆիրաուսիի մտահոգութիւններէն մէկը իր «Շահնամէ»-ին մէջ պարսից լեզուն այդ օտար տարրերէն ազատիլն էր, թէի որպէս տուրք, նոյն գեղեցիկ աշխատանքին մէջ ուժեղ ներքողներ հիւսած է իրեն հովանաւորին՝ Պարսկաստանի տիրապետող թուրք սուլթան Մահմուտին:

Պարսիկները շտարուբերուեցան, հակառակ որ ցեղով զուտ արիական էին: Անոնք ճշդեցին իրենց դերը՝ ընդգրկելով արաբական մշակոյթը, եւ այդ շրջանին աւելի մեծ տուեալներ ունէին ծաղկեցնելու գրականութիւն մը, որ կեանքինն էր: Ինքնին մուսուլմանական հաւատալիքը ոչ միայն ժխտումը չէր, այլև լրացումն էր կեանքին: Միջին դարէն առաջ միջին դարու մէջ մինչ կեանքը կը հիւժեր քրիստոնէական վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ: Պաղատաւը հետզհետէ կարեւոր կեդրոն կը դառնար գիտութեան եւ մանաւանդ գրականութեան: Կը զարգանար մասնաւորապէս քնարերգութիւնը՝ արաբական ճկուն լեզուով: Անոնց համար Դուրանը գիրքն էր «Հազար ու մէկ գիշերներ»ու, Դուրանը կը խոստանար աւելի փառահեղ կեանք մը երկնքի մէջ՝ վարդ եւ սոխակով, հիւրի-փէրիներով, մանաւանդ կիներով, գեղեցիկ կիներով: Քնարերգութիւնը հասաւ արդէն երաժշտութեան՝ ճոխ յանգերով եւ ճոխ չափերով: Երոպան ոչ միայն օգտուեցաւ արաբական գիտութենէն Պաղատաւի ծաղկեալ ժամանակ, այլև օգտուեցաւ գրականութենէն<sup>4</sup>:

Դեռ երկէ էր կարծես, որ ահաւոր պայքարներ պէտք էր մեր եկեղեցականներէ որոշ իրատուքներ ձեռք բերելու համար: Մեր ժողովրդական լեզուն՝ աշխարհաբարը, շատ կարճ պատմութիւն ունի: Եւ դեռ ունիք եկեղեցական հաստատութիւններ, որոնք կ'աշխատին մեր ազգային բուրբ

ձգտումները խտացնել իրենց մէջ: Արաբները Հայաստանին 7-րդ դարուն տիրապետեցին մէկ ու կէս դար: 9-րդ դար՝ մահմետական պարսից արշաւանքը, 11-րդ դար՝ սելճուկներու արշաւանքը, «անընթ.» արշաւանք, յետոյ արդէն յաճախադէպ կը դառնան արշաւանքները: Եւ մենք աւելի ու աւելի կ'ծկուեցանք<sup>5</sup>: 10-րդ դարու վախճանին արդէն մեր եկեղեցական գրականութեան մէջ կարեւոր երեւոյթ մը տեղի կ'ունենայ. այդ Նարեկացիի յայտնութիւնն է, եւ բանասէրներ կը սիրեն ըսել, որ այդքան միսթիք եւ ուժեղ երեսակայութիւն արաբական գրականութեան միջոցով միայն կրնար հասնիլ Նարեկացիին: Արեւելքի ազդեցութիւնով նաեւ կը պարզուի մեր լեզուն յունական խրթնաբանութենէն: Եւ արդէն յանգաբանական ձեւը մտած էր մեր մէջ Ներսէս Ընդհալիէն առաջ, եւ կը կարծուի՝ Ընդհալիէն առաջ Գրիգոր Մագիստրոսը առաջին անգամ ըլլալով կը մտցնէ արաբական յանգերու ձեւը մեր բանաստեղծական գրականութեան մէջ: Ընդհալիի մէջ ոչ միայն գեղեցկացաւ այդ ձեւը, այլև արդէն ճկուն խաղերու հասաւ: Բանաստեղծութիւնը արդէն կ'երգէր Ներսէս Ընդհալիին մէջ<sup>6</sup>:

Ներսէս Ընդհալիին մէջ լեզուն, ըմբոնումը այնքան կը պարզուին, որ արդէն կը սկսի աշխարհաբար լեզուով ժողովրդական առակներ գրի առնել: Մեր քնարերգութեան Վերածնունդը, ինչպէս ըսի, կը սկսի 13-րդ դարուն, մանաւանդ Պուլօ (Յովհաննէս Երզնկացի) արդէն կը մտնէ աշխարհաբարին մէջ եւ կը գործածէ արդէն ժողովրդականացած մօթիւներ, նոյնիսկ համարձակօրէն թուրքերէն տողեր խառնելով իր բանաստեղծութիւններուն մէջ: Արդէն կը տեսնէ իրականութիւնը, իր հիւսթերը կ'առնէ կեանքէն, հակառակ անոր, որ ան գրած է շարականներ ալ<sup>7</sup>: Գործածեր է քառեակներու ձեւը իր խրատական կտորներուն մէջ այնքան յաջող, որ նոյնիսկ շփոթիլ տուած է Քուչակի քառեակներուն հետ: Յովհաննէս Երզնկացիին նոյնիսկ չի քաշուիր իր սերը յայտնելու մոլայի աղջկան՝ <Էլանին>: <Էլանը> սիրահարուած խնձոր կը ձգէ.

Խնձոր ձգեց, մտիկ չարի,  
Մէկ մ'այլ ձգեց, ցածցայ 'ի առի  
Մէն միսիլման մոլայ դըզի  
Պէն Յովհաննէս քէշիջ օղլի,  
Խնձոր ի յիս ի'նչ բան ունէ:

Իսկ Ֆրիկ ուրիշ ձեւով կը յեղաշրջէ գրականութիւնը: Կը դնէ որոշ անհատականութիւն: Նշանաւոր է անոր «Գանգառ» կտորը՝ Աստուծոյ դէմ ուղղուած, այնքան ուժեղ եւ այնքան խոր, որքան Օմար Խայամի մը գանգատները եղած են:

Ֆրիկ շատ յանդուզն կերպով առաջին անգամ ըլլալով կը կոտրէ քա-  
րոյական ըմբռնումը եւ ազատ ճամբայ կը բանայ ազատ մտածողու-  
թեան: Մարդկային եւ արդար բողոք մըն է «Գանգատ»ը քաղաքականա-  
պէս ճնշուած ժողովուրդի մը՝ ուղղած Աստծոյ դէմ, որ աշխարհի ստեղծա-  
գործութեան մէջ սխալ բան մը կայ: Մխալ բան մը կայ Աստծոյ կանեցո-  
ղութեան մէջ: Ֆրիկ վեճ կ'ընէ Աստծոյ դէմ.

Աստուած արդար եւ յիրաւի  
Եւ ողորմած յամենայնի,  
Հանդէս ունիմ բան մը վեճի,  
Թէ դու լսես քո ծառայի:

Եւ կը զանգատի, թէ, Աստուած, արդեօ՞ք քու հրամանովն է, որ հայոց  
ազգը այսքան կը չարչարուի, եւ մենք այս բոլորին ինչքա՞ն կ'ուզես, որ  
համբերենք: Յետոյ ինչ արդարութիւն է, որ

Մէկն ի պապանց պարոնորդի,  
Մէկն ի հարանց մուրող լինի,  
Մէկին հազար ձի եւ ջորի,  
Մէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի:

Մէկին ատլաս եւ դրմզի,  
Մէկին շապիկ մի չի հասնի,  
Մէկին հարամն յաջողի,  
Մէկին հալալն կորուսի:

Կը տեսնենք, որ Ֆրիկ յանդուզն կերպով դուրս կու գայ իր կապանք-  
ներէն եւ մեր դպրութեան կու տայ ազատ մտածողութեան մախնական  
քայլերը: Ազատ է նաեւ լեզուն, արտայայտութեան եղանակը՝ այնքան  
պարզ: Կը զգաս, որ ժողովուրդն է, որ կը քալէ անոր ներդաշնակ տողի-  
րուն հետ:

Յետոյ արդէն կու գայ շարքը մեր միջնադարեան տաղերգուներուն՝  
Կոստանդին Երզնկացի, Սկրտիչ Նաղաշ, Յովհաննէս Թլկուրանցի՝ Մի-  
սի կաթողիկոս, Գրիգոր Աղթամարցի, Նահապետ Զուչակ՝ 16-րդ դարուն,  
Նաղաշ Հովնաթան՝ 18-րդ դարուն, եւ Սայաթ-Նովա՝ 18-րդ դարուն: Նա-  
ղաշ Յովնաթանին մէջ արդէն կը տեսնուի զուտ աշուղական տաղաչա-  
փական ձեւը: 18-րդ դարը առանձնապէս աշուղներու շրջանն է, որ մեր  
գրականութեան համար շատեր անձանօթ մնացեր են: Շատեր կորսուած

են թրքական եւ պարսկական լեզուին մէջ: Մասնաւորապէս թրքական  
լեզուին մէջ հայ աշուղներ շատ ունինք կորսուած:

Միջնադարեան տաղերգուներէն յետոյ ահագին անջրպետ մը կայ  
բացուած մասնաւորապէս կովկասահայ գրականութեան մէջ մինչեւ  
Խաչատուր Աբովեան: Եւ մենք Աբովեանին կու տանք առաջնութիւնը  
ժողովրդական լեզուին, այսինքն աշխարհաբարին, կու տանք առաջ-  
նութիւնը նոր գրական շարժման: Այդ շարժումը կար, գոյութիւն ունէր  
13-րդ դարուն, որ իսկապէս սկսած էր Վերածնունդը: Առաջնութիւն  
պէտք է տալ մասնաւորապէս Յովհաննէս Երզնկացիին եւ Ֆրիկին, որ  
մտցուցին իրատեսութիւն մեր լեզուին եւ գրականութեան մէջ: Միջնա-  
դարեան այդ տաղասացները սակայն մնացին վանքերու ձեռագիրնե-  
րուն մէջ: Թափ չստացան, չընդհարացան, որովհետեւ մեր վանքերը,  
մեր եկեղեցականները՝ տէր ամէն կացութեան, շատ աւելի ուժեղ էին  
այդ սկսուած շարժումը անպէտ լաթի մը պէս մէկ կողմ նետելու: Եթէ  
ընդհանրացու Խաչատուր Աբովեանի մը շարժումը, որովհետեւ եւրո-  
պական համալսարաններէն դուրս ելած հայ մտաւորականութիւն մը  
կար, որ թեւերը սոթած պայքարի մտաւ արդէն սկսուած գործ մը շա-  
րունակելու համար<sup>8</sup>: Յետոյ շրջանը հասունացած էր մեր հաւատալի-  
քին ու մեր գրականութեան նոր թափ տալու համար: Նոյն Խաչատուր  
Աբովեանի գրած ոտանաւորներու մէջ կը տեսնենք աշուղական ձեւը, որ  
մենք ժողովրդական մօթիւ անունը կու տանք: Ան պահելու համար այդ  
մօթիւը, երաժշտութիւնը եւ մասնաւորապէս նկարագիրը ժողովրդական  
մօթիւին՝ առատ կերպով գործածած է թրքական բառեր: Եւ նոյն ժո-  
ղովրդական մօթիւին վրայ էր, որ առանձնապէս զարգացան դիւցազ-  
ներգութիւնը եւ քնարերգութիւնը կովկասահայ բանաստեղծութեան մէջ:  
Նոյն մօթիւը ուժեղ է երկու զխաւոր բանաստեղծներուն՝ Թումանեանի  
եւ Իսահակեանի մէջ: Այդ մօթիւին հարազատ ըլլալու համար, գունաւո-  
րելու եւ կամ նկարագիր տալու համար անոնք պահած են թուրքերէն  
կամ պարսկերէն որոշ բառեր, ինչպէս՝ ազիզ, եար, պօստան, հնդու,  
<մարալ>, ատլաս, նոյնիսկ՝ վաթան, եւ այսպէս շարք մը բառեր: Ահա  
Իսահակեանէն մի քանի տող միայն՝ իր ձեւով, իր արտաքինով, իր ներ-  
քինով ամբողջական աշուղական.

Յար, թէ մեռնեն ոտներուդ տակ,  
շահին-շահի թախտ է ինձի.  
Փեշըդ քսի գերեզմանիս՝ փափագելի բախտ է ինձի.  
Վըրաս թե լաս, արտասուքդ անմահական դեղ է ինձի,  
Միրտըս նորեն կալեկոծվի Հնդստանու ծովի մման ...<sup>9</sup>

Նոյնիսկ Վահան Տրեան, որ հմուտ էր ռուսական եւ եւրոպական գրականութեան, իր բանաստեղծութիւններուն գլխաւոր շնորհքը այն եղած է, որ կրցած է շնորհալիօրէն կիրարկել արեւելեան «գազելական» տաղաչափութիւնը: Եւ մենք այդ չափը եւ ճաշակը կը պարտինք առանձնապէս մեր աշուղական գրականութեան:

Մեզ հետուն կը տանի մէջ բերել մեր քաղաքական պայմանները, ինչպէս յիշեցի, 7-րդ դարէն սկսեալ Արեւելքը ուժեղ կերպով նստեցաւ մեր սրտին ու մեր գլխին վրայ: Շատ են պարսկական, քրքական եւ թաթարական արշաւանքները: Անոնք խառնուեցան ոչ միայն մեր լեզուին, այլեւ մեր ժողովրդական բարքերուն հետ: Տուին մասնաւորապէս մեր լեզուին, մեր ժողովրդական լեզուին, նոյնիսկ կիրք աշխարհաբարին որոշ նկարագիր: Եւ մեր աշուղները այդ լեզուով է, որ կը յօրինէին եւ նոյն արեւելեան եղանակներով կ'երգէին, կը նուագէին արեւելեան գործիքներու վրայ:

Ահա այդ անջրպետը լեցնող աշուղներէն մի քանին միայն, որոնց մեծ մասին բանաստեղծութիւնները մեզի անծանօթ են: Մակինցեան կը համրէ մի քանիները միայն՝ Ստեփաննոս, Դոստի, Մայաթ-Նովա, Ղալոյնց Պաղտասար, Թուջան, Շամչի Միքօ, Լեւոն, Թուրից, Օքուլ Օղլան, Քէշիշ Նովա, Գեորգի Օղլի, Նուրալի, Նուին Օղլան եւ շատեր: Այս աշուղները դպրոցներէն չէին գար, թերեւ վանքի երես ալ տեսած չէին, այլ ոմանք իրենց շնորհը կը ստանային մուրատատուր Ս. Կարապետէն, թերեւ ուխտի երթալով այնտեղ:

Նահապետ Քուչակէն յետոյ մինչեւ Մայաթ-Նովա մենք հազիւ թէ մի քանի յաջող կտորներու կը հանդիպինք՝ եւ՛ յայտնի, եւ՛ անյայտ աշուղներէն մնացած: Շատեր կորսուած են քրքական, պարսկական, վրացական գրքերուն մէջ: Շնորհիւ Չօպանեանին՝ որպէս լրիւ հաւաքածոյ իրատարակուած է «Տաղեր»ը Նաղաշ Յովնաթանին: Դժուար է քացատրել, թէ մեր աշուղական գրականութիւնը աստիճանական ի՞նչ վերելք ունեցած է մինչեւ Յովնաթան եւ Մայաթ-Նովա: Եւ որովհետեւ լուրջ աշխատանք եղած չէ այդ ուղղութեանը, մեզի համար կը մնայ անյայտ անջրպետ մը: Մենք կը դժուարանանք այդ վերելքը քացատրել նոյնիսկ Նաղաշ Յովնաթանով, որ Մայաթ-Նովայէն առաջ եւ գրեթէ ժամանակակից եղած է: Ես կը տարուիմ ըսելու, որ Նահապետ Քուչակէն մինչեւ Մայաթ-Նովա գրեթէ երկու դար մեր աշուղական գրականութիւնը եղած է իր նախնական շրջանին մէջ: Յովնաթանը իր լեզուով, իր թէքնիքով կեցաւ մեր միջնադարեան տաղասացներու եւ աշուղներու սահմանի վրայ<sup>10</sup>: Գրած է սիրոյ երգեր, խրատականներ, երգիծանքի եւ ուրախութեան կտորներ, կրօնական տաղեր՝ «Գովասանութիւն առ Ս. Աստուածածին»,

«Տաղ առ Տիրամայր»ը: Վերջին երկուքը գրած է գրաբարով, իր լեզուին մէջ վանական կրթութիւնը արեւի շատ է, եւ շատ արեւի աշխարհիկ՝ իր կեանքի ըմբռնումը. ուտենք, խմենք, երգենք, սիրենք, որովհետեւ չգիտենք՝ վաղը ի՞նչ պիտի տայ մեզի: Ուժեղ է անոր զարեւոյթը. իր շրջանի կրօնաւորները ծաղրող սուր եւ քիչ մըն ալ կոպիտ հեգնանք է «Վարք հաւատաւոր մոնթերուն»: Անտարակոյս շատ արեւի զարգացած մէկը եղած է, քան Մայաթ-Նովան, եւ սակայն շատ արեւի պակաս տաղանդաւոր, քան Մայաթ-Նովան: Ինչպէս կեանքն է, նոյնպէս գրականութեան հանդէպ իր վերաբերումը եղած է թեթեւ՝ պահելով ներդաշնակութիւնը աշուղական տաղաչափական ճելին<sup>11</sup>: Յովնաթան արեւի իրապաշտ է իր մօտեցումով եւ գիտե նոյնիսկ տգեղութիւնները նկարագրել: «Գովասանութիւն Երեսնայ քաղաքին» նկարագրութիւնն է քաղաքի տգեղութեան»: Տուած է պատկերներ, գործածեր է բառեր, որ արտագրողներ առաջին գրով եւ <կէտերով> գոհացեր են:

Միջնադարեան տաղասացները յիշեցնող Նաղաշ Յովնաթան անտարակոյս որ հետաքրքիր է իր այդ ճելի մշակումով 17-րդ դարու վախճանին: Յովնաթանէն յետոյ եկող Մայաթ-Նովայի մէջ արեւի ուժեղ է բոմանքիզը: Մերը Յովնաթանին մէջ հաճոյք է: Ան կը նկարագրէ սիրուիւն գեղեցկութիւնը նկարչական գեղեցկութիւնով եւ սակայն չի տառապիր: Միւրոյ մէջ Յովնաթան Տոն Շուան մըն է, իսկ Մայաթ-Նովա՝ պարտուող մը, տառապող մը: Մայաթ-Նովայի համար իր սիրոյն չհասնիլը տառապանք է, տառապանք է նաեւ հասնիլը: Չուր է ըսել, որ Մայաթ-Նովայի սիրուին եղած է թեթեւաբարոյ եւ անհաւատարիմ մէկը, եւ կամ այդ է պատճառը, որ անոր տողերուն մէջ կայ ծանր թախծոտութիւն մը: Մայաթ-Նովա այնքան լուրջ եղած է կեանքին հանդէպ, ինչպէս լուրջ, ուժեղ եղած է անոր նկարագիրը:

Յովնաթանը կարդացած ժամանակը կը զգաս, որ կը կարդաս միջնադարեան տաղերգուներէն մէկը, իսկ Մայաթ-Նովան երբ կը կարդաս, կը գտնես ինքնատիպ, բոլորովին ինքնատիպ, եւ այդ ինքնատիպութիւնն էր ճելի եւ բովանդակութեան, որ իրմէ յետոյ վարակեց ոչ միայն եկող ու գացող աշուղները, այլեւ մեր ժամանակակից հայ բանաստեղծները: Կ'ըսենք, որ ուժեղ ազդեցութիւն ձգած է նաեւ վրաց բանաստեղծութեան վրայ<sup>12</sup>:

Գարեգին Լեւոնեան Նաղաշ Յովնաթանի ազդեցութիւնը կը տեսնէ Մայաթ-Նովայի վրայ, քաղղատելով մէջտեղ կը բերէ Մայաթ-Նովայի գործածած բառերու եւ հանգերու նմանութիւնը:

Նաղաշ Յովնաթան մեռած է 1722ին, 61 տարեկան: Կարելի է ըսել, որ 17-րդ դարու վախճանին եւ 18-րդ դարու սկիզբը եղած է նշանաւոր աշուղ

ու նկարիչ: Ատեն մը մտած է Երեւանի խանի հովանաւորութեան ներքեւ, յետոյ, իր խօսքով, «կանանց բանտէն ազատելու համար» կ'անցնի Վրաստան եւ կը մտնէ վրաց Վախթանգ Վեցերորդի արքունիքին մէջ: Սայաթ-Նովայէն առաջ ուրեմն վրաց արքունիքի մէջ որպէս հայ աշուղ եղած է Նաղաշ Յովնաթան: Մեր գրաբարագէտ Յովնաթանը նոյնպէս իր երգերուն մէջ առատ կերպով գործածեր է պարսկերէն եւ թուրքերէն բառեր: Յովնաթանը, որպէս արքունիքի աշուղ, բաւական ժողովրդակա-նացած ըլլալու է, որ որոշ ազդեցութիւն ձգած ըլլայ Սայաթ-Նովային վրայ, որովհետեւ երբ Յովնաթան կը մեռնի, Սայաթ-Նովա հազիւ 10-12 տարեկան պատանի եղած է: Ժողովրդականացած ըլլալու են նաեւ Յով-նաթանի երգերը<sup>13</sup>:

Ըլլայ տաղասացներուն, ըլլայ աշուղներուն մէջ լուսապսակ ճակա-տով մեր դէմ կը կանգնին երկու մեծ դէմքեր՝ Նահապետ Քուչակ՝ 16-րդ դար, եւ Սայաթ-Նովա՝ 18-րդ դար: Երկուքն ալ առաւելապէս ազդուած պարսկական գրականութենէն, բանաստեղծութիւնը հասցուցած են որոշ կատարելութեան մը: Քուչակ չունի Սայաթ-Նովայի խորութիւնը, եւ սա-կայն ան արեւի վարպետ նկարիչ է: Գոյններով եւ նկարներով է, որ արեւի շատ կ'արտայայտէ իր զգացումները: Գործածեր է գոյներ, որ տակաւին թաց են կարծես: Ան վերցուցած է քառեակի ձեւը, որ պարսկական գրա-կանութեան մէջ ծաղկեցաւ 9-րդ դարուն, որուն ամենամեծ վարպետը նկատուած է Օմար Խայեամը: Անտարակոյս մեր Քուչակը արեւի նուրբ է, որպէս արուեստագէտ, եւ գրեթէ չունի կրկնութիւն: Ան նոյնիսկ որպէս քա-ռեակագիր չէ ուզած հարազատ ըլլալ արդէն ընդունուած յանգերու ձեւին: Կ'ըսենք, որ հետեւած է պարսկական քառեակներու ձեւին, որով-հետեւ Քուչակ նոյնպէս չորս տողերուն մէջ լրիւ կերպով կ'ամբողջացնէ իր զգացումը ու իր միտքը: Քառեակի այդ ձեւը, ինչպէս յիշեցի, մեր գրա-կանութեան մէջ ծանօթ էր 13-րդ դարուն<sup>14</sup>: Մենք կը տեսնենք զօրաւոր տարփանք միջնադարեան մեր բանաստեղծներուն մէջ: Տարփանքը ու-ծեղ է նոյնիսկ Միսի կաթողիկոս Յովհաննէս Թլկուրանցիին մէջ: Իսկ Սայաթ-Նովայի մէջ այդ տարփանքը բնաւ զգալի չէ: Մերը, մանաւանդ սիրոյ կարօտը հասած է այդօրինակ գեղեցկութեան մը, որ մարդ պիտի ուզէր սիրոյ համար տառապիլ՝ գեղեցկութեան այդ նրբութիւնը ապրելու համար<sup>15</sup>: Սայաթ-Նովան չունի Քուչակի տողերու թեթեւութիւնը: Անոր տողերը ծանր են ոսկիի պէս, գիտէ մէկ տողի մէջ դնել խորութիւն: Քուչակ զգայական է, իսկ Սայաթ-Նովա՝ իմացական<sup>16</sup>: Անտարակոյս դատելով Քուչակի կտորներէն՝ կը զգաս, որ շատ արեւի զարգացած մէկը եղած է, քան Սայաթ-Նովան: Սայաթ-Նովան եկաւ ցոյց տալու, որ զարգացում

պէտք չէ արուեստի որոշ կատարելութիւն տալու համար: Քուչակի տողե-րուն մէջ մենք շատ քիչ կը հանդիպինք օտար բառերու, ան ապրած է բո-լորովին տարբեր միջավայրի մէջ, իսկ երբ կը կարդանք Սայաթ-Նովան, այնտեղ կը գտնենք ցեղային ողբերգութիւն մը այդ մեծ տաղանդին մէջ: Շատ առատ կերպով գործածած է պարսկերէն, թուրքերէն, վրացերէն, իսկ հայերէնը Աստուած հայերէն ընէ. գործածած է այն օրերու Թիֆլիսի բարբառը, որ չգիտես՝ Հայաստանի ո՞ր անկիւնէն դարեր առաջ զաղթած են Թիֆլիս եւ պահած են այդ բարբառը: Բաւարար չէր կարծես երեք-չորս լեզուներու խառնուրդ բարբառ մը, ատոր կը խառնուի նաեւ ռուսերէ-նը, երբ ռուսները տէր կը դառնան Կովկասին:

Մեր Սունդուկեանցի բարբառն է, Պետրոյի բարբառը<sup>17</sup>: Անտարակոյս Սայաթ-Նովայի գործածած բարբառն էր պատճառը, որ Ախվերտեանի հրատարակած Սայաթ-Նովայի «Տափտար»ը երկար ատեն անծանօթ մնաց, նոյնիսկ այն օրերուն չհասկցուեցաւ Միքայիլ Նալպանտեանի մը կողմէ, եւ որակեց Սայաթ-Նովայի բանաստեղծութիւնները «անալի ռաւանաւորք»՝ «առանց ամենայն մտքի, բովանդակութեան խորհուրդի եւ բանականութեան»<sup>18</sup>:

Ախվերտեանի հրատարակութիւնը եղած է 1852ին: Այդ թուականէն շատ վերջ՝ 1913ին, Սայաթ-Նովան դարձաւ որպէս զիւս եւ յայտնութիւն հայ եւ վրացի մտաւորականներու կողմէն:

Սայաթ-Նովան դարձաւ գեղարուեստական մանուկի նորութիւն. սարքուեցան երեկոյթներ, ցերեկոյթներ, սարքուեցան դասախօսութիւններ եւ ինկան վեճերու, երեսակայութիւններու մէջ եւ յաճախ ալ զօր տուին իրենց երեսակայութեան՝ լրացնելու համար Սայաթ-Նովայի կեանքն ու կենսագրութիւնը: Սայաթ-Նովայի գիտը մենք կը պարտինք նախ Ախ-վերտեանի, որ առաջին անգամ ըլլալով ճանչցաւ արժէքը, այլապէս կորսուած էր այդ տաղանդը, երկրորդ՝ կը պարտինք Հայ գրողներու ըն-կերութեան, որ մաքրեց ժանգը եւ մէջտեղ բերաւ իսկական ծանր ոսկին:

Եւ չպիտի ուզէի մօտենալ Սայաթ-Նովայի կենսագրութեան, որովհե-տեւ մեր բանասէրները իսկապէս դարձուցած են քառս: Վեճի առարկա են անոր ծննդեան թուականը, անոր արհեստը, անոր ճամբորդութիւնը, վրաց արքունիքէն արտաքսուելու պատճառը, վանք քաշուիլը, վեճի առարկա է նոյնիսկ անոր մահուան պարագան: Ահա թէ ի՞նչ տուեալնե-րու վրայ կրնան վիճիլ մեր բանասէրները: Ըսելու համար, որ Սայաթ-Նո-վան ջուլիակ չէր, հիւսն էր, անոնք գտած են տող մը անոր բանաստեղծու-թիւններէն<sup>19</sup>:

Շուրն փետրն չի դրըստի ռանդան, դո՛ւրզար\* Սայաթ-Նովա<sup>20</sup>...

Ըստի մոդ խօսքն անց կու կենայ, սրպաննելու ջալլաթ\* չը կայ...

Այս տողը բառական է՝ ըսելու համար, որ Մայաթ-Նովան դեսպան եղած է շահի մօտ:

Մայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հարաշ, Արաթ մի՛ անի...

Այս տողը նույնպես բառական է, որ մեր քննադատները անել վիճակի մէջ ձգեն իրենք զիրենք՝ ըսելով, որ Մայաթ-Նովան ճամբորդել է Հնդկաստան, Հապեշտան եւ Արաքստան: Եւ այդ անել վիճակը կը ստեղծուի հեղինակի մը մասին, որ ապրած է մօտ 150 տարի առաջ<sup>21</sup>:

Մենք կը վերցնենք արդէն ծանօթ Ախվերտեանի կենսագրականը որպէս հիմք, որ Մայաթ-Նովայի հայրը, պատուանուճով՝ Մահտեսի, անունը՝ Կարապետ, կը գաղթէ Հալեպէն, կ'ամուսնանայ հալապարցի Մատայ անունով աղջկայ մը հետ: Կ'ունենան տղայ զաւակ մը՝ Արութին անունով: Այդ Արութինն է, որ յետոյ կը դառնայ Մայաթ-Նովա: Նոյնպէս Ախվերտեանի կարծիքով՝ ան ծնած է 1712ին:

Թէ պատանի Արութինը ո՞ր սորված է գրել-կարդալ, այդ եւս վեճի առարկայ է: Իր բանաստեղծութիւններէն դատելով, դատելով իր բարոյական ըմբռումէն՝ առած է կրօնական կրթութիւն: Ինչպէս այն օրերու ծնողներու ցանկութիւնն էր իրենց զաւկին տալ վանական կրթութեան, որ մի գուցէ ըլլայ քահանայ կամ վարդապետ: Այն օրերուն գրել-կարդալ գիտցողի զլխաւոր փառասիրութիւնն էր մտնել վանք եւ յիշատակ ձգել ընդօրինակուած Աստուածաշունչ մը, որ կարդացողները «տղորմի» ըսն: Յետոյ կը տեսնենք, որ մեր աշուղը, արդէն փակած իր հաշիւը վրաց արքունիքէն, կը մտնէ վանք ու կը սկսի նման աշխատանքի մը:

Պատանի Արութին դեռ 12 տարեկան կը յանձնուի վարպետի մը՝ արհեստ սորվելու համար: Ըստ Ախվերտեանի՝ ան սորվեցաւ ջուլիակութիւն: Մայաթ-Նովայի բանաստեղծութիւններուն եւ տակի ծանօթագրութիւններուն մէջ ոչ մէկ յիշատակութիւն կայ այդ արհեստի մասին:

Եւ որովհետեւ կարծիքներ շատ-շատ են, կ'ուզէի ես ինքս ալ աւելցնել՝ ըսելով, որ պատանի Արութինը ոչ միայն ջուլիակութիւն սորված է իր վարպետէն, այլեւ սորված է գրել-կարդալ նոյն վարպետէն եւ որպէս դասագիրք ունեցած է յիշած գիրքը՝ «Հարանց վարք»ը, այսինքն՝ «Վարք սրբոց»ը: Այդպէս էին մեր աշակերտներն այն օրերուն, երբ դպրոցը ընդհանրացած չէր, եւ կը սկսէին գրել-կարդալը «Յայսմաւորք»ով, Նարեկով եւ կամ սաղմոսով: Այդպէս ալ սորված են մեր հին պապերը: Նոյնպէս ըստ Ախվերտեանի Արութինը, խիստ աջաբաց ըլլալով, կարճ ժամանակ էնքան վարպետանում է, որ ինք իր համար մի մեքենայ է հնարում, որով

կտարը երկայն փողոցը հիմնելու, գործելու տեղ հիմնում է, գործում է եղեր իր սենեակում: Երեսուն տարի զույս դրած ամենայն խաղի եւ Սուրբ Կարապետի կարողութիւնով սորված քամանչա, շնգուր ու ամբուրէն (տամբուրէն)՝ աշուղ Մայաթ-Նովան մենք կը գտնենք վրաց արքունիքին մէջ, ինչպէս Նաղաշ Յովնաթանն էր իրմէ առաջ:

Այդ շրջանի Վրաստանի քաղաքական կեանքի ուրուագիծը կ'ուզէի տալ ըսելու համար, թէ ինչքան ուժեղ էր պարսկական ազդեցութիւնը վրաց արքունիքի մէջ, ազդեցութիւնը Թիֆլիսի եւ թիֆլիսեցի Մայաթ-Նովայի վրայ:

Վրաստանի քաղաքական կեանքն ալ շատ մնան եղած է մեր հայկական կեանքին: 16-րդ դարուն Վրաստանը բոլորովին կը կտրուի Արեւմտաքէն: Երկրի տէրը կը դառնան թուրքերն ու պարսիկները: Վրաստանը երկար ատեն հարկատու եղած է պարսիկներուն:

Մանուանդ Պարսկաստանը այնքան ուժեղ եղած էր իր տիրապետութիւնով եւ մշակոյթով, որ վրաց թագաւորները իրենց կրթութիւնը կը ստանային շահերու պալատներուն մէջ: Նոյնիսկ Մայաթ-Նովան հովանաւորող Հերակլ թագաւոր իր դաստիարակութիւնը կը ստանայ պարսից Նադիր շահի արքունիքին մէջ:

Գարեգին Լեւոնեան իր խմբագրած «Մայաթ-Նովա» գրքի յառաջաբանին մէջ հետաքրքիր մէջբերում կ'ընէ վրացի հեղինակէ մը այսպէս. «Երբ Ռոստոմ թագաւորը Քարթալի գահը բարձրացաւ 1634 թուին, այդ ժամանակից երկրի մէջ տարածուեցան պարսկական ծեսերն ու օրէնքները, բարքերն ու սովորութիւնները, գետինը ծալապատիկ մատիլը: Անունազգանումները փոխուեցին, փոփոխութեան ենթարկուեցին նաեւ երգերն ու նուագները: Ռոստոմ թագաւորը մեծ զարկ տուեց Վրաստանում պարսկերէն երգի տարածման գործին: Յետագայում արդէն այդ գործին մեծ չափով նպաստեցին նաեւ Վախթանգ, Թէյմուրազ թագաւորները, վերջում՝ նաեւ Հերակլը: Սրա ժամանակ էլ աւելի սովորական դարձան պարսկական եղանակներով երգիչներն ու նուագածուների խմբերը: Վրաց բաներով պարսկական եղանակները առաջին երգողները եղել են հայերը, հայ նուագածուները՝ Մայաթ-Նովան եւ ուրիշները»:

Յետոյ մենք կը տեսնենք, որ իսկապէս վրացական բաներով պարսկական եղանակները առաջին անգամ երգողը եղած է Մայաթ-Նովան:

Պարսկական այդ տիրապետութեան շրջանին վրացերէնի կը թարգմանուին պարսից բանաստեղծութիւնները, եւ անտարակաջ Մայաթ-Նովան պարսկական եղանակներու բանաստեղծութեան եւ հէքեաթներու իր հմտութիւնը կը ստանայ Թիֆլիսի մէջ վրացերէնէն, հայերէնէն, պարսկերէնէն եւ աւելի շատ թուրքերէնէն խառնուրդ լեզուով մը: Թիֆ-

լիս եղած է այն օրերուն ալ կարեւոր քաղաք՝ 20 000 բնակչութիւնով, բնակչութեան ճնշիչ սեծամասնութիւնը եղած են հայեր՝ 14 000<sup>22</sup>: Հակառակ անոր, որ հայերը ճնշիչ սեծամասնութիւն եղած են Թիֆլիսի մէջ, Մայաթ-Նովան իր երգերուն մեծ մասը գրած է թուրքերէն լեզուով, ուրեմն կարելի է հետեցնել, որ թուրքերէն լեզուն աւելի ընդհանրացած էր թէ ժողովուրդին եւ թերեւս նոյնիսկ վրաց արքունիքին մէջ: Թուրքերէն լեզուն նոյնպէս ընդհանրացած էր նաեւ պարսիկներուն մէջ: Մայաթ-Նովան գրած է 115 թուրքերէն երգեր՝ մինչեւ հիմայ անտիպ մնացած: Գրած է 34 վրացերէն եւ 60 հայերէն բանաստեղծութիւններ: Մենք կը տեսնենք, որ, հակառակ պարսկական ուժեղ ազդեցութեան, պարսկերէն երգեր գրած ըլլալու ոչ մէկ յիշատակութիւն կայ: Ան թերեւս հնուտ ալ չէր ֆարսի լեզուին: Հայերէնի մէջ նոյնիսկ աւելի շատ խառնուած են թուրքերէն բառեր<sup>23</sup>:

Այդ շրջանին Հերակլ թագաւորի արքունիքը, մտան շահերու, սուլթաններու եւ խաներու, եղած է հովանաւորը գրականութեան եւ երաժշտութեան: Արեւելեան պալատներու մտան ունեցած է առանձին երաժշտանոցը՝ նաղարայսանա, ուր կը հաւաքուէին աշուղները երգելու, երգի մրցումի <անընթաց> խաղալու եւ իր կարգին գովքը ընելու արքային:

Արեւելեան արքունիքները, ըլլան պարսկական, արաբական եւ նոյնիսկ թրքական, մեծ զարկ տուած են գրականութեան, երաժշտութեան ծաղկումին: Այն օրերու բանաստեղծներու եւ աշուղներու գլխաւոր ձգտումն էր ուշադրութիւն գրաւել եւ մտնել սուլթանի, շահի կամ խանի հովանաւորութեան ներքեւ: Իրենց կարգին արքաներն ալ կ'ուզէին անմահանալ բանաստեղծներու քասիտներով, այսինքն՝ ներբողներով: Մաադի «Կիլիստան»ի հեղինակը, պաշտպանութիւնը վայելած է մեծն Աթապէտի, իր բառերով՝ «արքայ արքայից, գեղափայլ, հզօր ապաւեն աշխարհի»: Ֆիրտուսի մեծ ներբողներ ունի սուլթան Մահմուտի<sup>24</sup>:

Տէյզուլի պաշտպանութեան տակ էր Մուլէյման Գանուսիի եւ գրած է ներբողներ, ինչպէս Նարեկացին ըրած է Աստոյ միայն<sup>25</sup>:

Նաղաշ Յովնաթան, Երեսանի խանին հովանաւորութիւնը ձգած, կ'անցնէ Թիֆլիս եւ կը մտնէ վրաց արքունիքին մէջ: Այսպէս նաեւ Մայաթ-Նովա կը մտնէ Հերակլ թագաւորի արքունիքը որպէս պալատական աշուղ: Անա թէ ինչ կ'ըսէ Մայաթ-Նովան: Իր լեզուն չէ, թարգմանուած է վրացերէնէ. «Ես հիանալի չունգուր էի նուագում, սրա հետ միասին ես գրելու յարմարքով էի վրացերէն երգեր պարսկական եղանակներէ վրայ: Այսպիսի բան դեռ գոյութիւն չունէր, երբ Հերակլ թագաւորը մեզ՝ երաժիշտներէս մէջիս կանչեց, ես այն ժամանակ պարսկական եղանակներ

ով վրացերէն երգեցի: Թագաւորին շատ դուր եկաւ եւ խալաթ (հագուստ) պարգեւեց: Դրանից յետոյ շատեր գովեցին եւ հետեւեցին ինձ»:

Այսինքն անկից յետոյ է, որ Մայաթ-Նովան կը դառնայ նշանաւոր: Ըստեր կը հետեւին անոր ոչ միայն որպէս վարպետ բանաստեղծի, այլեւ վարպետ երաժշտի՝ յարմարցնելով իրենց ռուսաւորներուն պարսկական եղանակներ: Եւ իսկապէս Մայաթ-Նովայէն յետոյ եկող ու գացող աշուղները որդեգրած են անոր թէքնիքը եւ եղած են հետեւողներ: Ինչպէս կ'երեւի, երգահան եղած չէ Մայաթ-Նովան, իր կտորներուն ներքեւ առհասարակ աւելցուցած է, թէ ինչ եղանակով պէտք է երգել: Օրինակ՝ կան մտան ծանօթագրութիւններ. «Էս խաղը ովոր սորվի, Դոստիի խաղի ձեւով ասէ, թէ վուր չիմանաս, հարցու, թէ՛ «Գօզալար յըմնադինա բախ դաստա քեդաստա թարփանուր»<sup>26</sup>:

Կտորներու հետեւ աւելի շատ աւելցուցած է. «Դիպա ու ենգի դունիա-յի ձէնում. հանգն դազալի Արութիւնի ասած»<sup>27</sup>:

Յիշած է «Թասերը չինի կարմիր գինի»ի եղանակը, որ Նաղաշ Յովնաթանինն է: Յիշած է նաեւ հայերէն ուրիշ կտոր մըն ալ. «Բլբուլն նստած է վարդին, կանչէ նա վարդի համա»: Չկրցայ հասկնալ, թէ այս վերջինը որուն կտորն է: Կայ նաեւ թրքական կտորի մը եղանակը՝ յարմարցուցած իր երգերուն: Աւելի շատ, ինչպէս ըսի, «Դոստի»ի եղանակին յարմարցուցած է իր կտորները:

Մայաթ-Նովան յետոյ կը հեռացուի վրաց արքունիքէն, այլ խօսքով, շնորհագուրկ կ'ըլլայ՝ հակառակ անոր, որ Հերակլը սիրած է Մայաթ-Նովան իր աչքի լոյսին պէս: Կարծիքներ շատ են այդ մասին: Ընդհանրացած կարծիքը այն է, որպէս թէ մեր վարպետ աշուղը կը սիրահարուի Հերակլի աղջկան հետ: Այդ կարծիքին է Վալերի Բրուսով եւ կ'ընդունի նաեւ, որ հիմնուած է աշուղի էն յաջող «Դուն էն գըլխէն իմաստուն իս» բանաստեղծութեան վրայ: Ոմանց կարծիքով՝ այդ բանաստեղծութիւնը ուղղուած է պալատական սիրուեռոյն՝ Հերակլի աղջկան: Ուրիշներու կարծիքով՝ Հերակլ թագաւորին համար գրուած է այդ կտորը, երբ մեր աշուղը շնորհագուրկ կ'ըլլայ ու կ'ուզէ նոյն երգով թագաւորի սիրտը շահիլ: Ոմանց կարծիքով՝ Մայաթ-Նովայի՝ կալուածատէրերու դէմ գրած մէկ ռուսաւորն է եղած պատճառը անոր շնորհագրկման: Այդ երգը այնքան կը ժողովրդականանայ, որ կալուածատէրերը բողոքի կու գան արքունիքը: Ուրիշ կարծիքով՝ նոյնպէս Մայաթ-Նովան Վալսթանգ արքայազնին հետ կտուած է, եւ անոր դէմ գրած մէկ խիստ ռուսաւորն է պատճառը:

Ֆիրտուսի նոյնպէս շնորհագուրկ կ'ըլլայ սուլթան Մահմուտի պալատէն <Էպարքոսի> նախանձին պատճառով: Որպէս թէ Ֆիրտուսի իր ներ-

բողոքներուն մէջ յիշատակած է <Էպարքոսի> անունը: Ֆէյզուլի շնորհագորկ կ'ըլլայ, կը քաշուի <անընթ. >, որովհետեւ արքունիքի հովանաւորութիւնը վայելող սմսեղուկ\* նկարագրեր դաւեր են իր դէմ: Նման պատճառ մը կրնայ ըլլալ նաեւ Մայաթ-Նովայի շնորհագրկումը: Ամէն բանէ աւելի մեր աշուղը եղած է շիտակ եւ ուժեղ նկարագրի տէր մէկը՝ գեղարուեստագէտի մը յատուկ անհատականութիւնով եւ քմայքով, գիտակից իր ուժին եւ կարողութեան:

Ինչպէս կ'ըսէ «Դուն էն գըլխէն» կտորին մէջ (շատերու կարծիքով՝ թագաւորին ուղղուած)։

Դուն քու սիրտըն ի ստակ պահէ, ետդի\* խօսքըն ավտալու չէ:

Եւ կամ ուրիշ տեղ մը (քարքառ է)։

Հանգիտութիւնըս հատիլ է, չիմ դիմանում խալխի\* գափիմ\*:

Եւ կամ.

Ղուրթս էնդուր ճանփա չէ գընում՝ շատացիլ է խալխի սուտըն:

Եթէ իսկապէս գրուած է ոտանաւոր Վախթանգ արքայազնին դէմ, Մայաթ-Նովան կը կանգնի հսկայի մը պէս ու կ'արհամարհէ շատ կծու հեզանքով:

Ահա այն բանաստեղծութիւնը, որ թարգմանուած է վրացերէնէ.

Աստղայուսով ծովըն ինչպէ՞ս կու ցամքի,  
Մաղով Զրոյ ջուրըն ինչպէ՞ս կու չափվի.  
Քանի գ'ուզէ քամին փըչէ մինձ ուժով,  
Ժեռ քարէմէն յի՞ փ կանայ մէ բան տանի:

Գ'ուզէ մոթէ, ձրկնէմէն ձէն չիս լըսի,  
Իշի վուտքին էն ո՞վ հինա կու քըսի.  
Բամբակին էլ աւազըն վո՞ւնց կու հասնի,  
Թէգուզ լըցնիս մէջըն դութնի եօրդանի:

Պըղընձէ բասն ինչքան գ'ուզէ կըլէկի,  
Ջըսանն էլի չարժէ էրծաթի մէկին,  
Լաւ շուշին էլ չիմ տայ հին ալմասի գին,  
Թէգուզ շուշին քաշիս օսկէ մատանի:

Մարդ կայ իսկը վունց սատանի մէ մըշակ,  
Չար սատանի տունըն դառնայ բըրիշակ.  
Կարկաժըն\* վունց կու՛րի Շիրազի շուշա,  
Ինչքան բանձըր թարեքումն էլ տիղ անին:

Դուն չասիս, թէ ես խեղճ սագանդարն ո՞վ ա.  
Խօսքիս տէրն իմ, հունարըս էլ գըրով ա.  
Արո՞թինն իմ, ինձ կ'օսին Մայաթ-Նովա.  
Հենց բան կ'օսիմ, վուր ամբիբում ձէն հանի:

Ահա ինչքա՛ն հեզանք ունի արքայազնի դէմ.

Իշի վուտքին էն ո՞վ հինա կու քըսի:

Եւ կամ՝

Կարկաժն վունց կու՛րի Շիրազի շուշա:

Յետոյ՝

Խօսքիս տէրն իմ, հունարըս էլ գըրով ա.  
Արո՞թինն իմ, ինձ կ'օսին Մայաթ-Նովա.  
Հենց բան կ'օսիմ, վուր ամբիբում ձէն հանի:

Պարսիկ քառեակագիր Պապա Թահիրի մէջ կը գտնենք նոյնքան ուժեղ արտայայտութիւն. «Ես էն թշուճն եմ, որ կարող է աշխարհն ամբողջ այրել, եթէ թեահարեմ, եթէ նկարիչը պատին ինձ նկարի, նկարիս գորութիւնով էն տունը կայրեմ»:

Ընդունուած կարծիքներու համաձայն՝ եթէ «Մէ խօսք ունիմ իլթիմագով» գեղեցիկ կտորը գրած է թագաւորին համար, այնտեղ նոյնպէս կը գտնենք շատ ուժեղ տողեր՝ իր ուժեղ նկարագիրն ու անհատականութիւնը շեշտող, եթէ այդ կտորը նոյնիսկ գրած ըլլայ սիրուեալին՝ Հերակլի աղջկան.

Ամէն մարդ չի կանա խըմն՝ իմ ջուրըն ուրիշ ջըրէն է.  
Ամէն մարդ չի կանայ կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրէն է.  
Բունիաթս\* ավագ չիմանաս, քարափ է, քարուկըրեն է.  
Մէլավի\* պէս՝ առանց ցամքիլ, դուն շուտով խարաթ\* մի՛ անի:

Ես չգիտեմ այնքան ուժեղ անհատականութիւն եւ նկարագիր շեշտող տող մը, որ կարելի է իր գերեզմանին վրայ գրել.

Ամէն մարդ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրէն է:

Նոյնպէս աւելի լաւ բացատրած կ'ըլլան աշուղի անկախ նկարագիրը հետեւեալ տողերով՝ ուղղուած թագաւորին (վրացերէնէ թարգմանած).

Չեռը վիկայ, վաղ մարդութիւն չիմ ուզում.  
Ես աշխարհում փարթամութիւն չիմ ուզում.  
Վաղ բան ասիլ, ես վաղութիւն չիմ ուզում.  
Յիս մարդ մարդ իմ՝ նամարդութիւն\* չիմ ուզում.  
Յիս ռամիկ իմ, թավարութիւն\* չիմ ուզում:



Այստեղ ոչ միայն ուժը կայ իր անհատականութեան, այլև գիտակցու-  
թիւնը իր դասակարգին:

Այս կտորներէն վերջը ինձ համար այլևս կասկածելի կը դառնան եւ  
ոչ մէկ արժէք ունին վրացի քննադատներուն բերած հետեւեալ տողերը,  
որ Մայաթ-Նովա դատ կը խնդրէ թագաւորէն՝ ըսելով.

Էրնէկ մինակ ինձ ծեծիլով խըրատիր,  
Կամ քու ձեռով ինձ հիդ տայիր, անպատվիր...

Եւ կամ.

Մայաթ-Նովուն դուս մի՛ անի, պահպանի:

Հետաքրքիր է գիտնալ, թէ արդեօ՞ք այս վերջին տողերը առնուած են  
Մայաթ-Նովայի «Տաֆտար»էն, թէ մէկ անպէտ հեզմանքը ժամանակա-  
կից աշուղի մը:

Հետաքրքիր էր կալուածատէրերու դէմ գրուած ոտանաւորը ձեռքի  
տակ ունենալ: Անտարակոյս ընկերային կարգերու դէմ գրուած մէկ կտոր  
ըլլալու է, որ այնքան իրարանցում առաջացուցած է: Մենք իր հայերէն  
գրած կտորներուն մէջ չենք գտներ մնան դառնութիւն մը, ընդհակառակը,  
ան ոչ մէկ գանգատ ունի աշխարհի կարգերուն դէմ: Անոր համար ամէն  
քան կարգին է, ինչպէս կարգին են աստղերը, լուսինը, ծանր քարուանը,  
նոյնպէս կարգին են աղան, ծառան, եկեղեցին, վանքը, քարը: Ֆրիկի  
մնան գանգատ չունի ան: Մայաթ-Նովայի համար Աստուծմէ ստեղծուած  
են կարգերը: Ան եղած է <գուտ> անձնական բանաստեղծ, ապրած ու  
տառապած է իր սիրով, խրատականներ գրած է կրօնական մօթիով:  
Իհարկէ, ունեցած է դժգոհ, յուսահատական պահեր նոյնպէս՝ գուտ անձ-  
նական բնոյթ կրող, բայց այդ անձնական ապրումները այնքան վարա-  
կիչ են, որ մարդ ինքզինքն է, որ կը գտնէ անոր տողերուն մէջ:

Իր յուսահատական պահերէն մէկուն գրած է շատ սիրուն բանաս-  
տեղծութիւն մը՝ «Աշխարհըս մէ փանջարա է»<sup>28</sup>: Ջուտ անձնական հոգե-  
կան ապրումներու յուսախարութիւնը աշխարհը պատուհանի չափ նեղ է  
դարձուցեր: Մարդ ամէն անգամ միեւնոյնը չէ, խաղերէն, տաղերէն իսկ  
ձանձրացեր է: Երէկը այսօրէն լաւ էր, գալիք վաղէն ձանձրացեր է: Այս  
աշխարհի մէջ շիտակը ճամբայ չի երթար, շատցեր է ուրիշներուն սուտը:

Կարդան այս սիրուն կտորը (էջ 114)<sup>29</sup>:

Ահա իր գանգատներէն մէկն ալ.

Քըսանըն մէ դուլ չին պահում. աղիքումէն բեզարիլ իմ:

Այլ խօսքով, ըսել կ'ուզէ՝ շնորհքով աղա իսկ չի մնացեր, եղածները  
խեղճ մնանութիւններ են: Ահա կարգերու մասին ունեցած Մայաթ-Նովա-  
յի ըմբռնումը: Փոխուեր են կարգերը, որովհետեւ շնորհքով աղայ չի մնա-  
ցեր: Նոյնպէս «Դուս էն գլխէն իմաստուն իս» կտորին մէջ կայ տող մը, որ  
անելի շատ ուզած է նկարագիր յատկանշել, եւ սակայն կարգերու որոշ  
հաւատք կայ այստեղ.

Քանի գ'ուզէ արբար\* ըլի՛ դուլըն աղին դաւ տալու չէ:

Աւետարանի նոյն խօսքն է. «Ծառաներ, հնազանդ եղե՞ք ձեր տէրե-  
րուն»: Աղայի եւ ճորտի, ծառայի դրութիւն կարգ է Մայաթ-Նովայի հա-  
մար: Եւ այդ բոլորն Աստուծոյ ստեղծած կարգերն են: Ահա ինչքան նեղ է  
մեր աշուղի աշխարհը: Վանքի մէջ փակուած վանականի մը չափ նեղ:

Նեղ է նաեւ անոր ծանօթութեան սահմանը. իմաստութեան գիրքը  
անոր համար «Հարանց վարք»ն է, «Վարք սրբոց»ը եւ Աւետարանը: Ան  
տրված է, ինչ որ լսած է, կամ իր խօսքով՝ գլուխ տուած է: Աւետարանէն  
եւ «Հարանց վարք»էն շատ ան ծանօթ է պարսկական դիւցազներգու-  
թեան եւ լեկենտներուն: Յաճախ իր տողերուն մէջ կը յիշէ Ռոստոմ Չալը՝  
նոյնացնելով երկու անունները: Այդ անունները կու գան Ֆիրաուսիի  
«Շահնամ»էն. Ռոստոմ գլխաւոր հերոսն է դիւցազներգութեան, եւ Չալը՝  
Ռոստոմի հայրը: Կը յիշէ Շիրին եւ Ֆահրատ, Լէյլի ու Մէջնուն: Երկուքն  
ալ պարսիկ բանաստեղծ Նիզամիի կողմէն մշակուած, առնուած ժողովրդա-  
կանացած լեկենտներէն:

Յաճախ կը յիշէ հէքեաթներուն մէջ տեղ բոնող հէքեաթական երկիր-  
ներ, ինչպէս՝ Արաքստան, Հապեշտան, Հնդստան: Քարուաններու աշ-  
խարհն է այդ, մանաւանդ այդ շրջանին քարուաններու գլխաւոր շար-  
ժումները կապուած էին այդ երկիրներուն հետ: Վաճառականութիւնը  
գլխաւոր երակն էր այդ շարժումին: Քարուանները ոչ միայն կը տեղա-  
փոխէին ապրանքներ, ինչպէս՝ կաշի, տորոն, համեմներ, այլև իմաս-  
տութիւն, երգ, բանաստեղծութիւն եւ հաւատալիք: Այդ շրջանին Թիֆ-  
լիս, Երեւան քարուաններու կարեւոր ճամբայ եղած են դէպի Պարսկաս-  
տան, դէպի Հնդկաստան եւ արեւելեան զանազան երկիրները<sup>30</sup>:

Մայաթ-Նովան իր սահմանափակ աշխարհով անսահման թռիչք ունի  
իր սիրոյ երգերուն մէջ, եւ առանձնապէս այդ է տիրակալն մեր աշուղին  
մէջ: Տաղաչափութեան մէջ իսկապէս մեծ վարպետ է: Եւ կը տարուիմ  
ըսելու, որ Քուչակէն յետոյ սիրոյ երգերուն մէջ տակաւին ոչ ոք կրցած է  
հաւասարիլ անոր: Յաջողուած են առհասարակ այն կտորները, որոնք  
մօտեցած են Մայաթ-Նովային: Անոր մէջ կան գեղեցիկ գոյներ, ոսկիի



ծանրութիւն եւ հնչունութիւն ունեցող խորհրդածութիւններ, գրական գիտեր: Այդ բոլորին մէջ ուժեղ է երաժշտութիւնը:

Մի քանի տողեր միայն Սայաթ-Նովայի գիտերէն, երբ ուզած է եարդ նկարագրել.

Չընի տակէն նոր դուս էկած, արիվ դիրած սընբուլի պէս:

\*\*\*

Էրեսըդ՝ առավուտեան արիվ՝ քանի կ'էհայ\*, կու գարգանայ:

\*\*\*

Յիփ խաղում իս՝ վըռվըռում իս օձի բերնի հուլի\* նման:

\*\*\*

Ով չէ տեսնի, մէկ ա՛խ կ'օնէ, ով կու տեսնէ՝ հազար հարուր:

\*\*\*

Վա՛յ քու դարին\* դարի՛ք բըլբուլ, լեշըդ չափարին\* մընաց:

\*\*\*

Յիս մէ փուրըր նաւի նըման, քու էշխըն\* է ծով, ա՛ջքի լուս:

\*\*\*

Մէջըն չիմ կանացի մըտնիլ՝ ծովի ծածկած վանքի նըման:

Նման պատկերներու գիտերով լեցուն են մեր աշուղի տողերը:

Եարդ, սէրը Սայաթ-Նովայի համար այնքան էական են, որքան վանքը, երկինքը եւ կամ Աստուած: Իր բարոյախօսական մէկ քանաստեղծութեան մէջ կու տայ գծերը կատարեալ մարդուն եւ կոչ կ'ընէ իր տիվանա՝ սրտին:

Տուներուն վերջին տողերն են ասոնք.

Հայա\* սիրտ, ա՛ղար\* սիրտ, ա՛ր\* սիրտ,

Աստուած սիրտ, հոգի սիրտ, եա՛ր սիրտ:

Գի՛ր սիրտ, դա՛լամ\* սիրտ, դա՛վթար սիրտ,

Խըրրա՛տ սիրտ, սա՛բըր\* սիրտ, շա՛ր\* սիրտ:

Աղբատ սիրտ, դօ՛նաղ սիրտ, տա՛ր\* սիրտ,

Վա՛նք սիրտ, անա՛պատ սիրտ, քա՛ր\* սիրտ:

Մենք կը տեսնենք, թէ ինչքան ուժեղ է Սայաթ-Նովան որպէս բարոյական մարդ: Եւ այդ բոլորին մէջն է «յար սիրտ»՝ շարուած «Աստուծայ» եւ «վանքին» շարքը. ինքզինք խառնած է տարբերուն հետ եւ ինչքան սրբացուցած է սէրը, եարդ:

Ինչպէս յիշեցի, քաւական աշխատանք եղած է Սայաթ-Նովայի կենսագրականը լրի դարձնելու, եւ յաճախ ալ երեսակայութիւնով եղած են այդ աշխատանքները: Մեր ներհուն բանասէր եւ գրադատ Աղբալեանն ալ ուզած է լրացնել եւ ծանօթացնել Սայաթ-Նովայի սիրուհուն պատկերը: Հետաքրքիր էր ձեռքի տակ ունենալ Աղբալեանի այդ <շատ գեղեցիկ> աշխատանքը: Ձաւարեանն ալ, ձեռքի տակ չունենալով Աղբալեանի այդ <շատ հետաքրքիր> աշխատանքը, մի քանի ծանօթութիւն հազիւ կրցած է տալ, որ Սայաթ-Նովայի սիրուհին երիտասարդ, գեղեցիկ եղած է, սիրուն հասակով ու մազերով, որ ամուսնացած կից եղած է, որ Սայաթ-Նովան յաճախ կ'այցելէր խմելու գինի եւ անոր համար սազ նուագելու, որ սիրուհին յետոյ խաբած է Սայաթ-Նովային եւ կամ (Աղբալեանի կարծիքով) թերեւս նորէն կապուել է իր ամուսնուն:

Նոյնպէս Ձաւարեանի կարծիքով՝ Աղբալեանը իր այդ պատկերը լրի դարձնելու համար շատ հաւանական է, որ նկատի ունեցած է Սայաթ-Նովայի «Վունց օր վուր դարիպ բըլբուլըն» երգը, որտեղ ճիշդ է, որ Սայաթ-Նովա նկարագրած է իր կարօտը, իր սէրը, որ մէկ շարքա իսկ չի տեսնէ, կը կտրէ քամանչին սիմը (թելը), որ կ'երթայ անոր ձեռքէն օղի խմելու.

Վունցօր վուր դարիք բըլբուլըն մէ տարով քաղին կարօտ է,  
Էնենց գուլայ քու սիրողըն՝ ձեռիդ արաղին կարօտ է<sup>31</sup>:

\*\*\*

Գիշեր- ցերեկ ման են գալի՝ էշխէդ\* եա՛նա-եա՛նա\*, զօ՛գալ,  
Ա՛նգաճ արա, մա՛տաղ են քիզ, մէ քիչ կա՛մաց գնա, զօ՛գալ,  
Աշխարհըս ո՛ւմն է մընացի, վուր ինձ ու քիզ մընայ, զօ՛գալ,  
Մակամ\* միտա՛ Սայաթ- Նովէն՝ անգաճըդ խաղին կարօտ է:

Ինչպէս կ'երեւի, այդ չէ միայն սիրուհին, որ ունեցեր է Սայաթ-Նովան: Ան ունեցած է մի քանի սիրուհիներ: Նախ Հերակլ թագաւորի քրոջ լեկենատը կայ, որ առհասարակ ընդունուած է՝ հետեւելով նաեւ «Նուն էն գըլխէն իմաստուն իս» երգին վրայ: Իսկայպէս շփոթ ստեղծող կտոր եղած է. ըստ Գէորգ Ասատուրի՝ այդ կտորը ուղղած է Հերակլ թագաւորի՝ ինքզինքը քացատրած ըլլալու համար.

Չը կայ քիզ պէս հուրմի-հէքիմ\*, դուն Ռոստոմի- Ձա՛լ թագա՛ւուր.  
Ասկըդ ասկիրումըն գոված՝ համդ ունիս, զօ՛գալ թագա՛ւուր.

Թէ էսանց էլ սուչ\* ունենամ՝ գոուխըս արա՛ տալ\*, քագա՛ուր  
Մըտիկ արա՛ քու ստիղծողին՝ նըհախ\* տիղ դագար\* մի՛ անի:

Թագաւորը ուրեմն, եադերու (ուրիշներու) խօսքին հաւատալով, զինքը  
շնորհագործիք ըրած է: Բայց մենք շատ կը հանդիպինք եար եւ մման ար-  
տայայտութիւններ Սայաթ-Նովայի ուրիշ երգերուն մէջ՝ ուղղուած իր եա-  
րին, իր սիրուեուն: Անոր եարը քագաւոր է, սուլթան, Ռոստոմ Չալ է, ին-  
քը՝ հպատակ, դու ու ճորտ միայն, յաճախ իր եարին հետ կը խօսի իմա-  
ցական լեզուով: Կը նկարագրէ անոր գեղեցկութիւնով, ֆրանքի ատլա-  
սով, նոյնիսկ եարին ձեռքերը ոսկիի պէս կը փայլին:

Ուրիշ տեղ մը, եարին ուղղուած.

Սուչս իմացի՛, է՛նէնց սպանէ՛ սուլթան ու խան իս ինձ ամա:

Ուրիշ տեղ մը նոյնպէս եարին ուղղուած.

Թագաւոր իս, դիվանս\* արա, եար արիվըն կու սիրիս ...

Ես չեմ ուզեր երկարել օրինակներ՝ տալու բնոյթը «Մէ խօսք ունիմ իլ-  
քիմագով» գեղեցիկ կտորին, որ կրնայ նոյնպէս սիրեկանին ուղղուած ըլ-  
լալ: Հոգեվերլուծող բանաստէրի մը համար իսկապէս հետաքրքիր դաշտ է  
այդ պարագան: Ունի եարին ուղղած կտորներ, որ էն գեր կնոջ նուիրուած  
երգերուն չեն մմանիր, կը զգաս, որ մէկ կին մը շատ կարեւոր դեր կատա-  
րեր է Սայաթ-Նովայի կեանքին մէջ, եւ այդ երգերուն հետ տուած է իր  
կեանքի լուրջ խորհրդածութիւնները:

Կը խօսի բարոյախօսական արժեքով (էջ 135ին վերջին տունը)<sup>32</sup>:

Իր մէկ ծանօթագրութեան մէջ կը գրէ. «Աստուած թողութիւն շնորհէ,  
սիրեկանէմէն սպանած Արութին Սայաթ-Նովա»:

«Եար, քիզ իսկի գավալ\* չըրի» բանաստեղծութեան մէջ արդէն կը նկա-  
րագրէ ուրիշ սիրուեի մը, որ բարակ մէջք ունի եղեգնի մման եւ կը պարէ<sup>33</sup>.

Բարակ մէջքդ դարդուղամիշ\* էրէտը թայգուլի\* նըման.

Օրըն եարսուն\* ռանգ\* կու փոխիս, վունց մէկը չէ տուլի\* նըման.

Յիփ խաղում իս՝ վըռվըռում իս օձի բերնի հուլի\* նըման,

Մութըն տիղըն լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բացարած:

«Ֆահրատն միտած» (էջ 138) կտորին մէջ նոյնպէս կը նկատէ նուրբ  
կին մը շատ գեղեցիկ, զար\* հագած ու բարակ սուրաթով\*.

Բարակ դամաթիդ\* խիստ սազ գուքայ դիրա\* ու զարբար\*:  
Աստուած կու սիրիս, զար\* մի՛ հագնի, զարէն էրված իմ,  
Մէջումի նըման ման եմ գալի, եարեն էրված իմ:

Էն հետաքրքիրը, ուրիշ կին մըն ալ կայ, որ Սայաթ-Նովայի խոստո-  
վանութիւնով ոչ միայն թեթեւաբարոյ չէ, այլեւ պատուախնդիր.

Հայալու\* իս, ադար\* ունիս, ար\* ունիս,  
Չէտիդ՝ դաստա կապած սուսանքար ունիս,  
Տո՛ւր, ինձի սըպանէ՛ իխտիար\* ունիս.  
Հէնչանք\* ըլի՛ կէնաս բափով, նագանի:

Իր այս բանաստեղծութիւններէն երեւան կու գայ, որ Սայաթ-Նովան  
ինքն է, որ կ'ուզէ զլիսէ հանել հայա\*, արադ\*, ար\* ունեցող կին մը, եւ կնո-  
ջը հաւատարիմ մնալու մէկ միջոցը<sup>34</sup> նոյն կնոջ կողմէն սպաննուիլն է:  
Սայաթ-Նովան այդտեղ կը զգայ իր յանցանքը:

Բայց որ այդ կինը գրաւել է զինքը, ինչպէս հեքեաթի ծովերու հուրին  
նա կը գրաւէ.

Գուն էն հուրին իս՝ վուր գէմի\* կու զարթէ,  
Չունքի ինձ զարթցիր խափով, նագանի

Շատ հաւանական է, որ (Աղբալեանի ակնարկած) այս կինը<sup>35</sup>, որ եր-  
գել է, Մարմարն է, այն աղջիկը, որուն հետ ամուսնացաւ Սայաթ-Նովան,  
ունեցաւ զաւակներ:

Խօսքերս վերջացնելէ առաջ Սայաթ-Նովայի սիրային կտորներէն  
կ'ուզեմ կարդալ հատ մը՝ ամբողջական գաղափար մը տուած ըլլալու  
համար (էջ 104 կամ 94)<sup>36</sup>:

Ինչպէս ըսի, տարակարծութիւն կայ նոյնիսկ Սայաթ-Նովայի ինչպէս  
մեռած ըլլալուն մասին. հաւատացողներ կան, որ ան մեռած է բնական  
մահով, եւ սակայն ընդունուած կարծիքն այն է, որ 1795ին Պարսկաս-  
տանի տէր Աղա Մահմետ խանը պատժելու համար վրաց Հերակլ քա-  
գաւորը, Վրաստան կ'արշաւէ, երբ կ'իմանայ, որ Հերակլը ռուսներուն  
հետ յարաբերութեան մէջ մտած է՝ Վրաստանը անոնց հովանաւորու-  
թեան յանձնելու: Բաֆֆի կ'ըսէ, որ Աղա Մահմետ խանը հայ մելիք Մեջ-  
լումեանի առաջնորդութեամբ արշաւեց Վրաստանի վրայ: Չարդը կը  
տեւէ ութ օր: Այդ ջարդի ընթացքին կը սպաննուի նաեւ մեր մեծ բանաս-  
տեղծ Սայաթ-Նովան:

## ԺՈՂՈՎՈՒՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես զգայարանքներն են անհատի գոյութեան ազդակները, նույնպես գրականութիւնը եւ մշակոյթը կարեւոր ազդակներ են ազգերու գոյութեան: Ազգը հաւաքական գոյութիւն է եւ հաւաքական պաշտպանութիւն: Այդ հաւաքական պաշտպանութեան համար ստեղծուած են լեզու եւ մշակոյթ: Ստեղծած է տուն, գիւղ, քաղաք՝ մշակելով հողը, սերմ նետելով, ջրաղացքի համար ջուրի ուժը գործածելով եւ քար տաշելով: Մշակոյթը առաւելապէս ազգի մը իմացական արտայայտութիւնը եղած է, ինչպէս գրականութիւնն է, ճարտարապետութիւնը, երաժշտութիւնը, նկարչութիւնը: Եւ երեսակայեւ, որ աւերակները եկած ու լաւ բաներ ըսած են մեր նախնիքներու հարուստ մշակոյթին մասին, նաեւ մեր լեզուն, մեր դպրութիւնը, որ յամառ կերպով պահեց մեր գոյութիւնը՝ որպէս լուսաւոր ճամբայ եւ կարեւոր զգայարան, ու չի դարձաւ աւերակ: Հալածանքի շրջաններ շատ ունեցած ենք ու քիչ՝ յաղթանակի շրջաններ: Ըստ բնական օրէնքի՝ մենք վաղուց կրնայինք վերջացած ըլլալ եւ ձգել աւերակներ միայն, ինչպէս եղած են մեզմէ շատ աւելի հզօր ազգեր մեր ժամանակաշրջանէն: Եթէ կայ գաղտնիք մը մեր գոյութեան, այդ առաւելապէս եղած է հոգեկան եւ մշակութային: Մեր ազգային վիճակի ծանր պայմաններուն մէջ իսկ մեր գոյութեան տարրերը աւելի գործօն եղած են: Հայը ամբապնդած է իր հաւատքը աւելի զոմեր տալով:

Անոր մէջ գործօն տարրը այդ հաւաքական հաւատքը եղած է: Հաւատարիմ գտնուած է իր նախնիքներուն ու սրբացուցած<sup>2</sup>: Մարմին տուած է անոնց իր հեքեաթներուն, դիցազնավէպերուն մէջ, անոնց հետ ապրած է եւ անոնցմով ներշնչուած: Անոր համար իրական էին նախնիքները, տանջուած, զոհած է իր ժամանակաշրջանին մէջ լուսաւոր ապագային համար: Հաւատաց, որ սրբութիւն են մեր լեզուն, մեր գիրը, մեր դպրութիւնը: Ժողովուրդը պահեց Նարեկին արժէքը՝ զիրքը շղարշներուն մէջ փաթեցելով ու հիւանդին վրայ կարդալ տալով: Հայ ժողովուրդն իր հաւատքին հետ խառնեց իմաստութիւնը, որ առաւելապէս տառապանքէն կու գար, հետեւաբար՝ աւելի յստակ եւ աւելի ամուր: Ան շատ զոհեր տուաւ եւ հաւատաց, որ հայ ազգը կարեւոր դեր ունի կատարելիք ազգերու կեանքին եւ մարդկային մշակոյթին մէջ: Այն ազգը հոգեպէս ուժեղ է, երբ զիտ զոհեր տալ, եւ մեր պարտութիւնները յաճախ հզօր յաղթանակներ եղած են: Վարդանանց պարտութիւնը այդ ուժեղ յաղթանակներէն մէկը եղած

է: Եղած է հոգեկան եւ մշակութային յաղթանակ, որովհետեւ քրիստոնէութիւնը եկած է Հայաստան 3-րդ դարու վախճանին՝ որպէս մշակոյթ, եւ հետագետէ քարին ու չարը, դեւը եւ հրեշտակը մեզի համար մարմին առին: Այդ եղած է դեւերու դէմ պայքար հրեշտակի թեւերով: Պայքար նեկկիզխաններու, լեկկեմուրներու, արարներու, թուրքերու դէմ, որոնք նախնիքներ սարքած են: Մեր դիցազնագոյութեան մաս կազմած է Հայկ Նահապետ իր ազատական առաջին պայքարով, որ այժմ մարդկային քարոյական հիմքն է՝ ըլլալ ազատ:

Մասունցի Դաիթը՝ նոյն ուժեղ քարոյական սկզբունքներով, Վարդանանցը, մեր պատմութեան ազգային հերոսները, որոնք անհաւասար պայքար տարած են մեր հաւաքական գոյութիւնը պահելու համար, մեր Մահակն ու Մեսրոպը, որ հզօր բանակներու դեր կատարեցին, մինչեւ մեր շրջանի ֆետայիները, որոնք դարձած են հրեշտակ ու հրեշտակային զայրոյթով պայքար տարած են դեւերու դէմ: Մեր բանակներուն մէջ իսկ ուժեղ եղած են մարդկայինն ու հոգեկանը. անոնք յարձակած չեն յափշտակելու եւ սպաննելու համար: Անոնք կոռուած են իրենց գոյութեան իրաւունքին համար, եւ հիմքը եղած է առաւելապէս մարդկայինը:

Ջարմանալի չէր, որ Բիզանդիոնէն առաջ պետական կրօնք դարձաւ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ երկու պատճառներով, նախ՝ քրիստոնէութիւնը եկաւ Արեւմուտքէն որպէս մշակոյթ, եւ մենք, որպէս մշակութային ժողովուրդ, ըմբռնեցինք ու որդեգրեցինք: Երկրորդ, որ քրիստոնէութիւնը պաշտպան էր հարստահարուողներուն, հալածուողներուն եւ մանաւանդ աղքատներուն: Այդ ժողովուրդն էր ծառայ, զինուոր, մշակ, ճորտ արքունիքի եւ մանաւանդ նախարարական տուններու հսկայական կալուածներուն, որոնք ազարակ ըլլալէ աւելի գաւառներ էին, անոնց հարստութիւնները, եւ ժողովուրդն այդ հարստութեանց մաս կը կազմէր: Ինչպէս Հռովմի մէջ քրիստոնէութիւնը տարածուեցաւ զերիներուն եւ զրկուածներուն մէջ, նոյն դասակարգերը կային Հայաստանի մէջ: Հայաստան աշխարհը արքունիքն էր ու նախարարական տուններն էին իրենց բանակներով, յետոյ կու գային իշխաններն ու ազատները: Մենք չգիտենք՝ ժողովուրդը ունէ՞ր սեփականութիւն. գուցէ ինքը սեփականութիւն էր կալուածներուն: Երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ եւ մանաւանդ գրեթէ զիւտով թարգմանուեցաւ Աւետարանը, Հայաստանի մէջ եկեղեցական դասը աւելի տիրապետող դարձաւ եւ ժողովուրդն իր պաշտպանութեան ներքեւ առաւ, մանաւանդ որ մօտ էր Քրիստոսի երկրորդ գալուստը, ուր անիրաւները, կեղեքողները դատաստանի պիտի կանչուէին: Մեծն Ներսէսի օրով առանձնաշնորհեալ դասակարգ դար-

ճան մանաւանդ աղքատները, իսկ հարուստ քրիստոնեան սկսած էր կերակրել աղքատը՝ բանալով աղքատացուցներ, հիւանդանոցներ, շինելով վանքեր, եկեղեցիներ: Եկեղեցիի անօթները ոսկեղէն էին, ծանր, ոսկեքել շուրջառներ, վանքերու ընդարձակ կալուածներ, պառաւի լումայով ու հարուստի նուէրներով, որ չանցներ ասեղի ծակէն՝ արքայութեան արժանալու համար: Ինքը Մեծն Ներսէս պայքար կը տանէր ճնշելու համար արքունիքը Բիզանդիոնով եւ քրիստոնէութիւնով: Գրեթէ գիտէն առաջ եւ յետոյ մեր մշակոյթի կեդրոնը Բիզանդիոնն էր, որ իսկապէս տարօրինակ կայսրութիւն մըն էր՝ առանց ազգային նկարագրի, զուտ քրիստոնէական հզօր կայսրութիւն մը, որուն կայսրը՝ վեր կայսրներէն, Քրիստոսն էր, որ կը ճակատէր նոյնքան հզօր կայսրութեան մը՝ պարսիկներու հետ: Եւ Հայաստանը կարեւոր կռուախնձոր դարձած էր այդ երկու կայսրութեան միջեւ: Հազկերտը հալածեց քրիստոնէութիւնը, որովհետեւ Հայաստանը առաւելապէս եկեղեցականութեան ազդեցութեան ներքեւ քրիստոնէական ճամբով դաշնակից էր Բիզանդիոնին եւ դէմ հեթանոս պարսիկներուն, ինչպէս ցոյց տուաւ Վարդանանցը: Ասորիները չեն քարկուեցան նման հալածանքներուն, որովհետեւ անոնք, անկախ Բիզանդիոնէն, քրիստոնէական մշակոյթի կեդրոն ստեղծած էին Եդեսիան: Մեր աշակերտները կ'երթային Եդեսիա, Բիզանդիոն: Մեր սուրբերը Ս. Բարսեղ Կեսարացին էր, Գրիգոր Նիսացին, Օհան Ոսկեբերանը, Եփրեմ Եդեսացին: Անոնք էին, որ իրենց ծանր ձեռքերը դրած էին մեր քրիստոնէական մշակոյթին վրայ: Յունարէնը՝ մտքի ու փիլիսոփայութեան լեզուն, դարձած էր քրիստոնէական լեզու: Կեցած էին յունական մտքի առողջ քափը, արուեստներու գեղեցկութենը ու ինկած նախապաշարուններու եւ քրիզանդական վէճերու մէջ: Հայաստանը նոյնպէս ենթակայ էր այդ բոլորին, ենթակայ՝ զանազան աղանդներու: Եզնիկ Կողբացին իր «Եղծ Աղանդոց»ին մէջ արդէն կը ժխտէ յունական փիլիսոփայութիւնը՝ Պլատոնը, հետեւողական գծով:

Արշակունեաց անկումէն յետոյ եկեղեցին ու եկեղեցական դասը դարձան տիրապետող: Եկեղեցականներ էին մեր ուսումնականը, մտածողը, առաջնորդը եւ մանաւանդ՝ Աստուծոյ կամ Քրիստոսի ներկայացուցիչը ու միջնորդը: Անոր հեղինակութեան հետ կապուած է հանդերձեալ կեանքը, եւ եկեղեցականը, ժողովուրդն իրեն հետ առած, փակուեցաւ վանքերուն ու եկեղեցիներուն մէջ: Ազգայինը լուծուած էր քրիստոնէութեան մէջ ճիշդ այնպէս, ինչպէս քրիստոնէութիւնը Հռովմը պարտեց եւ քրիզանդական քրիստոնէութեան մէջ լուծեց յայնն ու հռովմեացին: Իրականը զոհարարութիւնն էին եւ երկնքին ու երկրի միջեւ ձգուած լուսեղէն սանդուխը, ուր-

կէ կը բարձրանային նահատակները Վարդանանցին: Հայաստանի մէջ եւս բազմացած էին ճգնաւորները լեռներուն, քարայրներուն եւ անտառներուն մէջ: Շատցած էին վանականները՝ հրաժարելով ոչ միայն ազգային ձգտումներէն, այլեւ կեանքէն, ինչպէս կը տեսնենք մեր հզօր բանաստեղծ Նարեկացիին մէջ, որուն համար կեանքը անիմանալի մեղքերով ու դեւերով լեցուն չարչարանքի գոյութիւն մըն է<sup>3</sup>:

Ժողովուրդը հաւատաց հրաշապատում սուրբերուն, մանաւանդ որ անոնք բուժելու հրաշքներ ունէին. տարին իրենց լուման: Հարուստը տուաւ իր ոսկին ու հաւատքը հանդերձեալ աշխարհին համար՝ առանց հաղորդակից ըլլալու գրաքար լեզուին: Ժողովուրդին համար լեզուն դարձած էր ծես եւ կամ հրեշտակներու լեզու եւ առանձնաշնորհումը եկեղեցական դասակարգի եւ այդ լեզուով ալ մշակեցին մեր եկեղեցական գրականութիւնը բազմահազար ձեռագիրներով եւ անմատչելի՝ ժողովուրդին: Այդ բազում ձեռագիրներէն կարեւորները արդէն հրատարակուած են, որոնք նպաստ մը բերած են մեր պատմութեան, գրականութեան եւ գիտութեան: Ինչպէս Շիրակացին է, Յովհաննէս Մարկիաւազն է, պատմագիր Խորենացին է, տաղանդաւոր վիպագիր Եղիշէն է, Փարպեցին է, Փաւստոս Բիզանդն է, մտածող Եզնիկ Կողբացին է եւ ուրիշներ: Մանաւանդ Նարեկացին, որ մեղքերուն մէջ կը գալարուի իր հզօր երեւակայութիւնով: Եթէ կայ գիծ մը, որ փրկած է որպէս ազգային գիծ, ան ալ հայ լեզուն է: Նոյնը կարելի է ըսել Եղիշէի համար, որուն վէպը առաւելապէս սրբազան քրիստոնէական յաջող վէպ մըն է: Նոյն քրիստոնէական, մանաւանդ Հին Կտակարանի դաստիարակութիւնը նախապաշարուններով բռնած է մեր պատմագիրները, ինչպէս կը տեսնենք Ազաթանգեղոսի, Փարպեցիի, Փաւստոս Բիզանդի եւ Խորենացիին մէջ՝ հակառակ անոր, որ ճիգ ըրած է խուսափիլ «կարի» նախապաշարուններէ:

Ունեցած ենք եկեղեցական գրականութիւն՝ շարականներ, տաղեր, եւ մեր հազարաւոր ձեռագիրները առաւելապէս եղած են Ս. Գրոց մեկնութիւններ եւ իմաստութիւններ Հին Կտակարանէն: Առած են Հին Կտակարանի գրական ոճը, ձեւը, մտածումի եղանակը՝ կորսնցնելով մեր ինքնուրայնութիւնը որպէս մշակոյթ եւ դպրութիւն ունեցող հին ազգ: Հին Կտակարանը կարեւոր դաստիարակութիւնը եղած է Ս. Սահակի եւ Մեսրոպի աշակերտներուն, ինչպէս կը տեսնենք Կորիւնին մէջ, որ իր ուսուցիչը՝ Մեսրոպ Մաշտոցը, Հին Կտակարանով կը մեկնաբանէ: Առաւելապէս Հին Կտակարանի տակ կըրած են նաեւ մեր պատմագիրները, մեր բանաստեղծներն ու վիպագիրները, առանձնապէս յիշելով Նարեկացին եւ Եղիշէն: Երբ Ղևոնդ Երեց իր նշանաւոր ճառին մէջ կ'ըսէ «յիշեցէք մեր

նախահայրերը», ըսել կ'ուզէ՝ յիշեցէք Արրահամը, Մովսէսը, Փեննեհզը եւ Իսրայէլի զօրավարները:

Այդ բազմահազար ձեռագիրները, որ նկատի կ'ունենանք, մեզի կարելի է հարց մը կայ տալիք. թէ ո՞ր է հայ ժողովուրդը այդ բոլորին մէջ: Այն ժողովուրդը, որ աշխատեցաւ, արտադրեց, բանակները լեցուց, հալածուեցաւ, ջարդուեցաւ, որ ուրախ էր, որ տխուր էր, եւ որ պահեց մեր ազգային ինքնուրոյնութեան նկարագիրը՝ պահելով ոճը մեր անգիր դպրութեան, պահեց մեր բարքերը՝ յաճախ հեթանոսականը խառնելով քրիստոնէականին, որ ուխտի կ'երթար վանքերը, ինքնուրոյն բարբառով, երգերով, պարերով, հէքեաթներով ու հին աւանդութիւններով: Այդ բոլորը ժողովուրդը պահած էր իր մէջ՝ որպէս կեանք ու որպէս մարմին, որպէս գեղեցկութիւն, եւ այդ ձեւով պահած էր ազգայինը՝ որպէս հաւաքականութիւն, որ օր մը դուրս պիտի գար որպէս Վերածնունդ, այլապէս՝ լուծուած եւ պարտուած Քրիստոսով: Մեր օրերուն քիչ մը անի զիտեմք. օրինակ բերելով Մուշի Սուրբ Կարապետի ուխտագնացութիւնը՝ դիւ-գունա, բռնաբար պար, աւանդական ձեռագործ նախշերով եւ զարդեղէններով տարագներ աղջիկներու եւ հարսներու, ցուլերու, գոմէշներու կռիւներ, փէիլիվաններու խաղեր հաստ կապերու վրայ ու աղաւնի թոցնել. «Մեր փող հարէաք եւ թմրուկ հարկանէաք», «զվագելն եղանց եւ զվարգելն եղջերւաց»: Այդ ժողովուրդը կար՝ հակառակ հալածանքներուն: Կար կատուած մեր ազգային աւանդութիւններուն՝ Գողթան գաւառէն մինչեւ Տարօն: Այդ ժողովուրդը իր բարբառը ունէր, ուր թաքնուած էր մեր ազգային պատմութիւնը: Իսկ մենք եկեղեցական գրականութեան մէջ կը հանդիպինք «ամկատեր» արհամարհական ձեւին:

Ճիշդ է, զիր ունէինք 5-րդ դարէն սկսեալ, քայց ժողովուրդը անձամբ էր այդ գրին, եւ գրաբար լեզուն դարձած էր մենաշնորհը եկեղեցականներու եւ կարելի էր մաս կրօնական ծէսերուն: Կեանքը, ի՞նչ պայմաններուն մէջ ալ ըլլայ փակուած վանքերու եւ ճգնաւորութեան մէջ, իր խլտանքն ու շարժումը ունի, եւ մենք կը տեսնենք մեր եկեղեցական տաղերուն մէջ Ս. Կոյսին նուիրուած «Տաղեր»: Այնտեղ Ս. Կոյսը կին է արդէն՝ լեցուն կուրծքով ու կանացի ժպիտով, ինչպէս կը տեսնենք 15-րդ դարուն Վերածնունդի նկարիչներուն մէջ: Եւ այդ կը տեսնենք Նարեկացիին մէջ, որ իր կեանքն անատր գոտեմարտութիւն եղաւ կեանք ըսուած դեռիմ դէմ: Կեանքն էր, որ վանքերու հաստ պատերը ճեղքելով՝ դուրս կու գար, եւ մենք կը տեսնենք սիրոյ տաղերգուներ մեր եկեղեցականներուն մէջ, ինչպէս Թլկուրացիին է, Յովհաննէս Պլուզն է, եւ պէտք է ըսել, որ Ներսէս Շնորհալին առաւելապէս մշակած է եկեղեցական բանաստեղծութիւն,

առուած է ժողովրդական առածներ եւ գործածեր է ժողովրդական բառեր, որ մենք այսօր կը զգուշանանք գործածել:

Պէտք է պարծանքով ըսել նաեւ, որ մեր Վերածնունդը անի կանուխ սկսաւ՝ 13-րդ դարուն, քան եւրոպականը՝ 14-րդ դարուն՝ Բեռարքայով:

13-րդ դարուն Ֆրիկ Աստույ դէմ իր «Գանգատ»ով յայտնուեցաւ: Բացաւ վարագոյրը ժողովուրդի կեանքին եւ շարժարաններուն Պուղայի բռնատիրական շրջանին: Եւ մենք կը տեսնենք աստիճանաբար, հետզհետէ ժողովուրդն է, որ իր գոյութիւնը կը շեշտէր ժողովրդական բանաստեղծութիւններով, մանաւանդ ռիթմով, որ բառերու երաժշտութիւնը դարձաւ առաւելապէս կովկասահայ բանաստեղծութեան եւ այժմ ալ Հայաստանի մէջ ժողովրդական լեզուի ռիթմի եւ բանաստեղծութեան մշակումին, եւ այդ առաւելապէս կը պարտինք Խաչատուր Աբովեանին: Յորդ աղբիւրի մը պէս ռոռոցեց մեր գրական անդաստանը:

Յաճախակի յափշտակութիւններու պատճառով քայքայուած տնտեսութիւնն է, որ կը ստեղծէ գաղութները եւ մէյ մըն ալ վաճառականութիւն: Մենք երկու կարելի էր գաղութ ունեցած ենք՝ Պուլխը եւ Թիֆլիսը: Պուլխը մէջ քիւզանդական շրջանէն ունեցած ենք կարելի էր գաղութ մը եւ այդ քրիստոնէական կայսրութիւնը ուժեղացուցած ենք հայագգի կայսրներով, մեծ զօրականներով, ճարտարապետներով, ոսկերիչներով եւ բարձրաստիճան եկեղեցականներով: Մենք չգիտենք՝ ի՞նչ մնաց այդ գաղութն, եւ սակայն գիտենք մեզի ծանօթ Պուլխը: Անտարակոյս Թիֆլիս եւս եղած է հին գաղութ, երբ ստեղծած է իր ինքնուրոյն տեղական բարբառը՝ Պեպոյի բարբառը: Այդ երկու գաղութներն էին, որ մշակոյթի եւ գրականութեան մէջ կարելի էր դերեր կատարեցին՝ հաղորդակից ըլլալով եւրոպական դատարարական: Ուզեցին եւրոպական մոյն յեղաշրջումը կիրարկել հայ կեանքին մէջ՝ կորիզ ունենալով հայ ժողովուրդը: Անոնք սերտած էին, թէ ինչ է ժողովուրդը ֆրանսական յեղափոխութիւնով, որ արթնցուցած էր ժողովուրդի արկածախնդրութիւնը: Առաջին առիթով մշակել աշխարհաբարը եւ գրականութիւնը մատչելի դարձնել ժողովուրդին:

Լեզու մը, որ ծնունդ առած էր ու հետզհետէ ձեւ կը ստանար գրական լեզու դառնալու համար՝ մասամբ խառնուած գրաբարով: Ազատական ըմբռնումներուն մէջ էր, որ հետզհետէ զարգացաւ աշխարհաբարը, եւ գրական լեզուի սահմանադրական իրաւունք ստանալու համար պէտք պիտի ըլլար պայքարիլ եկեղեցականներու դէմ թէ՛ Պուլխը, թէ՛ Թիֆլիսի մէջ: Առանձնաշնորհուած իրաւունք մըն էր, որ կ'առնուէր եկեղեցականներու ձեռքէն գրական լեզուի մը համար: Չէ՞ որ հայ մտքի եւ մտածումի միակ լեզուն գրաբարն էր՝ մանաւանդ դարձած երկնքի լեզուն բարձրադիր

վանքերուն մէջ: Այդ շարժման մէջ կարեւոր դեր կատարեցին Պոլսոյ մէջ ազատական Գրիգոր Օտեան, Մ. Չերազ: Ըստ կարեւոր գործ կատարեց հանճարեղ պատանին՝ Պ. Դուրեան եւ Յ. Պարոնեան: Եւ երեսակայել, որ Դուրեան գրաբարով սկսած է իր առաջին բանաստեղծութիւններ: Նաեւ Գրիգոր Ջօհրապը՝ աշխարհաբարի վարպետը, գրած է գրաբարով ոտանաւոր, եւ արդէն Պոլսոյ «Հայրենիքի» ընտանիքը՝ Բաշալեան, Կամսարական եւ Կիրճեան: Եւ մեր աշխարհաբարը այնքան զարգացաւ, որ ինքն իր մէջ արուեստ դարձաւ գաղութային բնութագծերով եւ ֆրանսական ազդեցութիւնով: Գաղութային էր տաղանդաւոր Ջօհրապը, առաւելապէս գաղութային, պոլսական բարքերէն տուաւ: Գաղութային էր անգուգական Պարոնեանը իր ազգային ջոջերով եւ Արիստոտել աղայով, որ այնքան մեծ տաղանդով տուած է պոլսական բարքերը: Եւ Պոլիսը դարձաւ ինքն իր մէջ կեդրոն հայ գրականութեան եւ մշակոյթին եւ ինքն իր մէջ նպատակ: Եւ մենք նորէն ստիպուած ենք նոյն հարցունը տալ, ինչպէս տուինք մեր վանքային շրջաններուն: Ո՞ր է հայ ժողովուրդը, որ զաւառներուն մէջ փարած է հողին՝ աւանդօրէն պահելով մեր նախնիքներու ոգին, մեր անգիր դպրութիւնը, հէքեաթները, դիւցազներգութիւնը, մեր ինքնուրոյն երգերն ու բանաստեղծութիւնները: Եւ տարին այնպէս, կարծես Ֆրանսան ըլլար այդ հողը Հիւկոյով, Ջօլայով եւ Տիւմայով: Իսկ զաւառացին, որ կու գար Պոլիս տնտեսական տազնապի պատճառով, արհամարհուած դարիպն էր խաներու մէջ:

Եւ արդէն սկսած էր լեվանթէն\* տարր մը մէջտեղ գալ, որ կը կարդար Տիւմա, Էօժէն Սիւ, որ կը խօսէր ֆրանսերէն եւ կամ ֆրանսախառն հայերէն մը: Այդ շրջանին էր, որ վրայ հասաւ եւ շատ կարեւոր դեր կատարեց քալուցի Մելքոն Կիրճեանը՝ մօտենալով դարիպին, որ եկած էր ժամանակաւոր համալի\* աշխատանքներով դրամ շահելու եւ վերադառնալու իր հողին ու ընտանիքին: Խաներու մէջ էին անոնք իրենց վիճակուած տխուր կեանքով ու տունի կարօտով: Կիրճեանն էր, որ մօտեցաւ անոնց հոգեկան կեանքին տալով պաստառը հայրենի երկրին ու անոնց տան, հողին: Այդ շարժումը միեւնոյն ատեն սկսաւ իսկապէս նոր Վերածնունդի շրջանը, ուր ժողովուրդը իր գոյութիւնը կը պոռար իր տառապանքներով եւ իր իրական ապրումներով: Անոնց մէջ նոյնիսկ նախնիքները կը պոռային, որովհետեւ Պոլսոյ մէջ ազգային ճակատագիրը կը վարէին՝ առանց ծանօթ ըլլալու հայ ժողովուրդին. նոյն ինքը Պատրիարքն ու պատրիարքարանը եւ այսպէս կոչուած ազգային սահմանադրութիւնը: Այդ բոլորին մէջ բռնաճիգն կար: Ճակատագրական էր նաեւ հայ գրականութիւնը, որ գաղութին մէջ կը մշակուէր, եւ ուր կը պակսէին հայ ժողովուրդի շուն-

չը ու հոգեկան արտայայտութիւնը, որովհետեւ գրականութիւնը, որպէս մշակոյթ, հայ ժողովուրդի պաշտպանութեան կարեւոր բերդերէն մէկն եղած է:

Ազգերը նոյնը չեն, նոյնը չեն կրնար ըլլալ անոնց գրականութիւնը, եւ հայ գրականութիւնը այնքան ինքնուրոյն պէտք է ըլլայ, որքան ինքը ժողովուրդն է, այլապէս գրականութիւնը կը շեղի իր նպատակէն: Եւ մեր գրականութիւնը ինքզինք իր գոյնը գտաւ, սկսաւ կանչը զաւառներէն՝ ըլլայ Պոլիս, թէ Թիֆլիս: Որպէս աղբիւր այդ շարժման՝ նորէն պէտք է երթանք Արովեանը, որովհետեւ ան շատ արեւի կանուխ սկսաւ: Արեւմտահայ շարժման մէջ կարեւոր գործ կատարեց իր հոգիով, իր բարբառով, իր շերտով ու երկաթով խառնուած վանեցի Խրիմեանը, որ ոչ միայն իր գրականութեան մէջ շունչ տուաւ ժողովուրդին, այլեւ ուզեց մասնուր տանի Վան՝ մեր գրականութիւնը եւ մասնուր գաղութահայ վիճակէն ազատագրելու համար: Նոյնքան կարեւոր գործ կատարեց իր աշակերտը՝ Սրուանձտեանց, որ նոր էջ բացաւ՝ մտնելով ժողովուրդին մէջ, հաւաքելով քաջնուած զանձերը մեր անգիր դպրութեան, որ ժողովուրդը պահած էր սուրբերու մասունքներուն պէս, հաւաքելով հէքեաթներ եւ դիւցազներգութիւններ ու տուաւ մանաւանդ «Մասունցի Դաւիթը»: Նոր զանձեր, նոր գիտեր էին գաղութահայ գրականութեան համար:

Նոյնպէս իրենց թեւերը բացին՝ ընդունելու բոլորովին ինքնուրոյն գրականագէտ խարբերողի Թլկատիցին՝ առաւելապէս իր տեղական բարբառով եւ իրապաշտ ոճով: Իրապաշտ էր, որովհետեւ գրականութիւն ընելու համար մէջտեղ չեկաւ ու տուաւ, ինչ որ ներշնչուեցաւ իր տեղական ժողովուրդէն: Անկեղծ պիտի չըլլար, եթէ այդ շրջանի գրական լեզուի ծեծծեքուն ձեւերուն երթար: Իր բառերը ժողովուրդէն առաւ: Ահա թէ ինչու ուժեղ է նկարագիրը նոյնիսկ անոր քրօնիկներուն մէջ: Նոյնքան կարեւոր աշխատանք քերաւ անոր աշակերտը՝ Չարդարեան, որ եկաւ իր գունագեղ լրիվ հայերէնով եւ տուաւ զեղարուեստականը իր պատմուածքներուն եւ նկարագիրներուն:

Պոլսահայ գրականագէտները, որ առաւելապէս տեղական գրականութիւն մշակած էին, բանաստեղծները Վոսփոքի զեղածիժաղ ափերով, <անընթ. > ներշնչուած եւ տաղանդները ամփոփուած էին իրենց ներաշխարհին մէջ, զգացին զաւառի գրականութեան առողջութեան արժէքը եւ այդ գրականութեան մէջ շարժող ժողովուրդը, որ մինչեւ այդ անժամօք եղած էր, եւ սկսան խեղճ մանուկները մէջտեղ քերել: Եւ զաւառի գրականութիւնը ողջունեցին որպէս վաղուայ գրականութիւն՝ հողի հոտով ու ժողովուրդով: Դժբախտաբար կարճ տեւեց այդ շրջանը:

## ԳԱՄԱՌԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս զգայարաններն են անհատի գոյութեան ազդակները, նոյնպէս գրականութիւնը եւ մշակոյթը կարեւոր հիմք են ազգերու գոյութեան: Ազգը հաւաքական գոյութիւն է, տեսակ մը հաւաքական անհատականութիւն եւ հաւաքական պաշտպանութիւն: Եւ հաւաքական պաշտպանութեան համար ալ ստեղծած է լեզու եւ հաւաքական մշակոյթ: Մտեղծած է ընտանիք, տուն, գիւղ, քաղաք եւ քաղաքակրթութիւն՝ մշակելով հողը, սերմ մետելով, ջրաղացքի համար ջուրի ուժը գործածելով եւ քար տաշելով: Մշակոյթը առաւելապէս ազգի մը իմացական եւ հոգեկան արտայայտութիւնը եղած է, ինչպէս գրականութիւնն է, ճարտարապետութիւնը, երաժշտութիւնը եւ կամ նկարչութիւնը: Եւ երեւակայել, որ արեւակները եկած են ու լաւ բաներ ըսած են մեր նախնիքներու հարուստ մշակոյթին մասին, նաեւ մեր լեզուն, մեր դպրութիւնը, որ յամառ կերպով պահած են որպէս մեր գոյութեան լուսաւոր ճամբայ եւ կարեւոր զգայարանք: Հալածանքի շրջաններ շատ ունեցած ենք, ու համեմատօրէն քիչ՝ յաղթանակի շրջաններ: Ըստ բնական օրէնքի՝ մենք վաղուց կրնայինք վերջացած ըլլալ եւ ձգել արեւակներ միայն, ինչպէս եղած են մեզմէ շատ արեւի հզօր ազգեր մեր ժամանակաշրջանէն: Եթէ կայ գաղտնիք մը մեր գոյութեան, այդ առաւելապէս եղած է հոգեկան եւ մշակութային: Մեր ազգային վիճակի ծանր պայմաններուն մէջ իսկ մեր գոյութեան տարրերը արեւի գործօն եղած են: Հաւատացած է նոյնիսկ զոհեր տալով: Անոր մէջ գործօն տարրը այդ հաւատքը եղած է: Հաւատացած է իր նախնիքներուն ու սրբացուցած՝ ըլլայ հեթանոսական, թէ քրիստոնէական ծեսերուն մէջ: Մարմին տուած է անոնց իր հեքեաթներուն մէջ ու անոնց հետ ապրած ու անոնցմով ներշնչուած: Հաւատացած է այն բոլոր իմաստութեան եւ նաեւ առասպելաբանութեան, որ մեր նախնիքներէն կու գայ: Հաւատացած է, որ սրբութիւն են մեր գիրը, մեր լեզուն, մեր դպրութիւնը: Ժողովուրդը պահեց Նարեկին մեծ արժէքը՝ հիւանդին վրայ կարդալ տալով: Իր հատաքին հետ խառնեց իմաստութիւնը հայ ժողովուրդին, որ առաւելապէս տառապանքէն կու գար, եւ առհասարակ լեցուն են այն իմաստութիւնները, որ տառապանքէն, արցունքէն ծնունդ կ'առնին: Հայ ժողովուրդը հաւատաց իտէալիք, նպատակին եւ այդ նպատակին համար՝ այդ բոլոր զոհերը, եւ կը հաւատայ, որ կարեւոր դեր ունի տակաւին կատարելիք ազգերու կեանքին եւ մշակոյթին մէջ: Այն ազգը հոգեպէս ուժեղ է, երբ գիտէ

զոհեր տալ: Ըստ քիչ յաղթանակներ ունեցանք, մեր պարտութիւնները յաճախ հզօր յաղթանակներ եղած են: Վարդանանց պարտութիւնը այդ ուժեղ յաղթանակներէն մէկը եղած է, որովհետեւ եղած է հոգեկան, մշակութային յաղթանակ: Հայ ժողովուրդը տեսած է բարին ու չարը, որ աստուածներու գոյութեան կարեւոր յատկանիշները եղած են եւ յատկանիշները բոլոր կրօնքներու՝ գրադաշտականէն մինչեւ Եհովա, մինչեւ քրիստոնէութիւն: Դուրսուր եւ հրեշտակներու գոյութիւնը կրօնքներու տիպաբանութեան մէջ մտած են: Հայ ժողովուրդին համար անոնք գոյութիւն ունեցած են մարմնապէս: Անոնք եղած են լեցնիքները, ճենկիզխանները, արարները, թուրքերը, որոնք նախնիքներ սարքած են Հայաստանի մէջ: Եւ այդ դուրսուր դէմ ելած են դիցազներգութեան մաս կազմած մեր Հայկ Նահապետները, Սասունցի Դաւիթները, Վարդանները՝ մեր պատմութեան ազգային հերոսները, որոնք անհաւասար պայքար տարած են հաւաքական մեր գոյութեան համար պարսիկներուն եւ արաբներուն դէմ:

Մեր Սահակն ու Մեսրոպը, մինչեւ մեր սրբագոյն ֆետայիները, որոնք դարձած են սուրբ, դարձած են հրեշտակ եւ տարած են պայքար դեպի դէմ: Մենք կը տեսնենք, որ դիցաբանական դէպքն ու հրեշտակները հայ ժողովուրդին մէջ մարմին առած են: Մեր բանակներուն մէջ ուժեղ եղած է նաեւ հոգեկանը: Անոնք <եկած> չեն յափշտակելու եւ միայն սպաննելու համար: Անոնք կռուած են իրենց գոյութեան իրաւունքին համար: Եւ հիմքը եղած է առաւելապէս մարդկային:

Ջարմանալի չէր, որ Բիւզանդիոնէն առաջ պետական կրօնք դարձաւ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ: Կային երկու պատճառներ. նախ՝ քրիստոնէութիւնը եկաւ Արեւմուտքէն՝ որպէս մշակոյթ, եւ մենք, որպէս մշակոյթի ժողովուրդ, ընդունեցինք ու որդեգրեցինք: Երկրորդ, որ պաշտպան էր հարստահարողներուն, հալածողներուն, աղքատներուն: Այդ ժողովուրդն էր ծառայ, զինուոր, մշակ, ճորտ արքունիքի եւ մանաւանդ նախարարական տուններու, հսկայական կալուածներուն, որոնք ազարակ ըլլալէ արեւի գաւառներ էին: Եւ քրիստոնէութիւնը ժողովուրդի պաշտպանն էր եւ կը խոստանար արեւի լաւ աշխարհ մը, մանաւանդ որ մօտ էր Բրիտանիայի երկրորդ գալուստը: Բրիտանոնէնէն առաջ արքաներն ու նախարարներն էին մեր ազգային ուժի պաշտպանները, <անընթաց> իշխաններն ու ազատները: Մենք չգիտենք, թէ ժողովուրդը ունէր սեփականութիւն, եւ գուցէ ինքը սեփականութիւնն էր նախարարներու եւ իշխաններու ընդարձակ կալուածներու: Երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ հայ ժողովուրդին մէջ՝ գրեթէ գիտէն եւ Աւետարանի թարգմանութենէն առաջ եւ յետոյ<sup>1</sup>, հայ ժողովուրդը պաշտպանութեան



տակ մտաւ եկեղեցու եւ եկեղեցականներու: Մանաւանդ աղքատները հովանաւորեալ դասակարգ դարձան, որովհետեւ անոնցն է երկնքի թագաւորութիւնը. բացուեցան աղքատանոցներ, հիւանդանոցներ, մանաւանդ Մեծն Ներսէսի օրով, Ս. Բարսեղ Կեսարացիի օրինակով, որովհետեւ քրիստոնէութիւնը առաւելապէս կապուած էր Բիզանդիոնի հետ եւ հետեւաբար պաշտպանն էր բիզանդական քաղաքականութեանը: Եւ ինքը՝ Մեծն Ներսէսը, ուժեղ պայքար կը տանէր՝ ընկճելու արքունիքը: Այդ շրջանին, երբ կազմուած էր քիչ մը տարօրինակ, առանց ազգային նկարագրի գուտ քրիստոնէական կայսրութիւն մը՝ Բիզանդիոնը, միակ հզօր կայսրութիւնը, որ կար պարսիկներու ուժին դէմ: Հակառակ պարսկական տիրապետութեան, որ ուժեղ էր նոյնիսկ որպէս մշակոյթ, մեր մշակոյթի աղբիւրը դարձաւ Բիզանդիոնը, այլ խօսքով՝ դարձաւ միմիայն քրիստոնէական: Առաւելապէս կտրուեցաւ այն առողջ կապը, որ Աքէնքին հետ էր, որ մեր աշակերտները առաւելապէս կ'երթային Եդեսիա եւ Բիզանդիոն՝ երկու կարեւոր կեդրոններ քրիստոնէութեան: Ս. Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նարեկացի, Օվան Ոսկերերան, Գրիգոր Նիսացի <անընթ> եղած են, անոնք են, որ իրենց ծանր ձեռքերը դրած էին՝ մեր քրիստոնէական մշակոյթին մեծագոյն փիլիսոփաները: Լեզուն՝ յունարէնը, արդէն դարձած է քրիստոնէութեան լեզուն, եւ ասորերէնը, որ երկար ատեն գործածուած է մեր եկեղեցիին մէջ մինչեւ գրեթէ զիւտը: Եզնիկ Կողբացի իր «Եղծ Աղանդոց»ին մէջ արդէն կը յիշէ յունական փիլիսոփայութիւնը եւ Պղատոնը, որ <անընթ> հետ մտածումի կարեւոր յենարան դարձած են:

Եկեղեցականը, ուսումնականը, մտածողը, առաջնորդը եւ մանաւանդ <անընթ> ներկայացուցիչն ու միջնորդը, ժողովուրդը առած, փակուեցան եկեղեցիներու, վանքերու մէջ: Ժողովուրդը տարաւ իր լուսան եւ իր հաւատքը, երբ Արշակունեաց անկումէն յետոյ եկեղեցականը դառած էր տիրական, ուր չափով մը ազգերը լուծուած էին քրիստոնէութեան հետ: Քրիստոնեայ էինք, ճիշդ այնպէս, ինչպէս Բիզանդիոնը քրիստոնէական կայսրութիւն էր՝ իր մէջ լուծելով Հռովմը ու Յունաստանը, կապուած քրիստոնէական անիմաստ ու բազում վէճերու: Երկինքը այնքան էր իրական, որքան երկնքի եւ երկրի մէջ ձգուած սանդուխը: Կայսրը Քրիստոսի փոխանորդն էր՝ ոսկեղէն աթոռի վրայ նստած, եւ իրենց քաղաքական ներշնչումները ու հրահանգները ճգնատրոնեղէն եւ սիւնակեացներէն կը ստանային: Թեոդորոս 2-րդ իր ուղղութիւնը ու գալիքները Դանիէլէն կը ստանար:

Հայաստանի մէջ եւս բազմացած էր ճգնատրութիւնը լեռներուն մէջ, եւ որովհետեւ <անընթ> շատցան վանքերն ու ճգնատրները: Վարդա-

նանց պատերազմին ատեն մեր երկրի <անընթ> երկնքի կապոյտի վրայ ձգուած էր, եւ որպէս իրականութիւն գոյութիւն ունէր լուսեղէն սանդուխը նահատակներուն համար: Երկրէն դէպի երկինք ձգուած այդ սանդուխով ալ բարձրացան նահատակներ դէպի երկինք՝ Քրիստոսի համար <մարդկանալու> եւ երկնքին արժանանալու հաւատքով: Մեր եկեղեցականութիւնը փակուեցաւ վանքերուն մէջ եւ իրեն հետ հայ հաւատքին մէջ փակեց հայ ժողովուրդը. հրաշապատում սուրբեր, վանքեր եւ տաճարներ, մանաւանդ որ բուժելու հրաշքներ ունէին, եւ ժողովուրդը հաւատաց, բարիացաւ, տարաւ իր լուսան, եւ հարուստներն իրենց ոսկիները՝ առանց հաղորդակից ըլլալու մեր գրաբար լեզուին: Լեզու մը, որ մեծաշնորհը դարձած էր եկեղեցական դասակարգին: Եւ այդ լեզուով ալ մշակեցին մեր եկեղեցական գրականութիւնը բազմահազար ձեռագիրներով, որոնց մէջ հազիւ կարելի է փրկել <անընթ> կարգ մը ձեռագրեր, որոնք արդիական իմաստով կարեւոր արժէք կը բերեն մեր ազգային գրականութեան եւ կամ նպաստ բերած են գիտութեան, ինչպէս Շիրակացին է, Յովհաննէս Սարկաւազն է, ինչպէս պատմագիր Խորենացին է, տաղանդաւոր վիպագիր Եղիշէն է, որպէս ստածող Բուզանդն է, <անընթ> Եզնիկ Կողբացին է, Նարեկացին՝ այդ հզօր բանաստեղծը: Մենք Նարեկացիով կրնանք չափել շրջանը. մերժումը կեանքին, կեանքը, որ միմիայն հազար ու մի մեղքերով է լեցուն, եւ այդ ուժեղ, առողջ կեանքն էր, որ իր մէջ կը տանջուէր ու կը գալարուէր: Մենք հայկական է կ'ըսենք, որովհետեւ ան իր բանաստեղծութիւնը հայկական <ստեղծագործ> լեզուով բռնած է իր հզօր երեւակայութիւնները: Ուրեմն եթէ կայ գիծ մը, որ փրկած է որպէս ազգային գիծ, այդ միայն հայ լեզուն, եկեղեցականներու, հրեշտակներու եւ երկնքի լեզուն է: Եւ ժողովուրդը հաւատացած է, որ այդ լեզուով հայացուցին Մովսէսը, Եզնիկէլը, հրեշտակները, Քրիստոսն ու Աստուածը: Եւ մեր պատմութեան մէջ է՛ն կարեւոր շրջանը եղած են գրեթէ զիւտը եւ իր մեծ հերոսները՝ Սահակն ու Մեսրոպը: Բան մը, որ չի կրցաւ կատարել Մեծն Տիգրանը իր հզօր բանակներով: Քրիստոնէութիւն տարածելու մտահոգութիւնով ստեղծուեցաւ Ա.Բ.Գ.ը, բայց որ ճիշդ է ամբողջն ալ քրիստոնէացաւ մեր եկեղեցականներուն հետ, մեր ժողովուրդին հետ եւ մեր հազար-հազար ձեռագրերով, բայց որ պահեց իր ազգային գիծը, որովհետեւ լեզուն ոգի է, պատմութիւն ու նկարագիր եւ կու գար քրիստոնէութենէ առաջ կազմուած լեզուէ մը:

Ունեցած ենք հարուստ եկեղեցական գրականութիւն՝ շարականներ, աղոթք, մեկնութիւններ, եւ շատ մեկնութիւններ Հին ու Նոր Կտակարանի, որովհետեւ իմաստութիւն է կարեւոր <անընթ> այդ: Եւ մենք կը տես-



մենք մանաւանդ Հին Կտակարանի խոր հմտութիւնը Մեսրոպի աշակերտներուն մէջ: Եւ մենք երկու ուժեղ դասակարգ կը տեսնենք՝ եկեղեցականութիւնն իր հարուստ վանքերով, եկեղեցիներ ոսկեղէն անօթներով, եկեղեցական քանկագին մատանիներով, ոսկեղէն սաղաւարտով ու ծանր, քանկագին շուրջառներով: Մոխրութիւն մը, որ հռովմէական կայսրներէն անցած էր Բիզանդիոնի եկեղեցականներուն եւ Քրիստոսի սնծ փոխանորդին՝ կայսրներուն: Անցած էր նաեւ մեր հայ եկեղեցիներուն մէջ: Հարուստը իր անելուց կու տար՝ ասեղի ծակէն չանցնելու համար, իսկ չունեւորը՝ իր լուման: Եւ մենք մեր զուտ եկեղեցական դպրութեան մէջ հազար-հազար ձեռագրներուն մէջ չենք տեսնէր սա անյայտ, ծածկուած, եկեղեցական հովանորութեան ներքեւ ապաստան փնտռող ժողովուրդը:

Պարտութիւններ շատ ունեցած ենք եւ քիչ յաղթանակներ՝ ըլլայ պարսկական, արաբական, քաթարական եւ թուրքական շրջաններուն: Հալածուեցաւ, թալանուեցաւ, ջարդուեցաւ ժողովուրդը, մխիթարուեցաւ Քրիստոսի խոստացած աշխարհի պաշտպանութիւնով, փնտռեց եւ այդ ձեռով ամփոփուեցաւ մեր եկեղեցիներու եւ եկեղեցականներու պաշտպանութեան ներքեւ: Եւ դարձաւ հալածանքը, մանաւանդ նահատակութիւնը լուսատր ճամբայ՝ լուսատր սանդուխէն երկինք հասնելու, եւ մենք զիտցանք նահատակուիլ, մանաւանդ զոհեր տալ մեր հաւատքին համար, քրիստոնէութեան համար, որ երկար դարեր մնաց մեզի համար հոգեկան մշակոյթ: Վկայ մեր հազար-հազար ձեռագիրները, մեր վանքերու ճարտարապետութիւնը, որ մասամբ կու գար մեր հեթանոսական շրջանէն <անընթ. >: Մանաւանդ այդ ճարտարապետութիւնը, որ արեւմտեան ճարտարապետութեան վրայ իր որոշ ազդեցութիւնը ըրած է: Արուեստի նրբութիւններով ընդօրինակած են Աւետարանները, զարգացած էին մանրանկարչութիւնը՝ առաւելապէս քիզանդական ոճով, եւ կրօնական երաժշտութիւնը՝ քրիստոնէական-երեւական, քիզանդական եւ ասորական թէքնիքով:

Այդ բոլորին մէջ մենք նոյնպէս կը հարցնենք՝ ո՞ր է հայ ժողովուրդը, որ աշխատեցաւ, արտադրեց, բանեց, <բանակ լեցուց>, հալածուեցաւ, ջարդուեցաւ, որ ուրախ էր, տխուր էր, եւ որ կը մտածէր: Եւ ուխտի կ'երթար հայ վանքերուն, հայ սուրբերուն, իր պարերով, իր երգերով եւ մինչեւ իսկ հեթանոսական շրջաններէն մնացած ասանդութիւններով ու ծեսերով: Եւ այդ երգերու, պարերու ու ասանդութիւններու մէջ պահած էր իր կեանքը՝ որպէս մարմին ու գեղեցկութիւն, եւ այդ ձեռով պահած էր ազգային հաւաքականութիւն մը: Մեր օրերուն քիչ մը անելի գիտենք՝ օրինակ բերելով Մուշի Ս. Կարապետի ուխտագնացութիւնները՝ դեռ-գունձա, բոլորակ

պար, կենդանիներու եւ աղանձիներու հետ, աղուոր տարագներով ու զարդեղէններով, ցուկերու, զոմէշներու կռիւ, զոտեմարտութիւն, փեղիվաններու խաղեր քուրի վրայ ու աղանձի բոցնել: Այդ ժողովուրդը կար, հակառակ հալածանքներուն, կապուած ազգային ասանդութիւններուն, հէքիաքներուն՝ հին Գողթան գաւառէն սկսեալ մինչեւ Տարօն, Մուշ, Վան, Պիթլիս եւ նոյն գիծը, ուր հայկական <անընթ. > զիւղեր ու գաւառներ կային: Միշո է, կար հայերէն լեզուն՝ գրաբարը, որ դարձած էր անձանօթ լեզու ժողովուրդին համար. ժողովուրդը իր բարբառը ունէր, իր երգը, իր պարը՝ իր տրտմութեան ու ուրախութեան, այդ բոլոր <բարբառներուն> տուած էր իմաստուն նկարագիր: Միշո է, զիր ունենք 5-րդ դարէն սկսեալ, քայքայ մենք այնքան տարուած ենք քրիստոնէութիւնով, եկեղեցական գրականութիւնով: Ժողովուրդի մէջ զարգացաւ եւ շարունակուեցաւ անգիր դպրութիւն մը՝ մեր հէքեաթասացները, որ ինքնին մեր արուեստն է:

Կեանքը ինչ պայմաններու մէջ ալ ըլլայ, ըլլայ փակուած վանքի ու ճգնաւորութեան մէջ, իր շարժումն ունի, եւ մենք կը տեսնենք մեր եկեղեցական կրօնական գրականութեան մէջ բանաստեղծութիւններ՝ տաղ Ս. Կոյսի, ուր կայ սիրային խլրտանքը: Ճգնաւորը անոր <դէմ> պայքար կը տանի, կեանք ըսուած ահաւոր դեմի դէմ, եւ այդ ահաւոր գոտեմարտութիւնը մենք կը տեսնենք Նարեկացու մէջ: Կեանքն էր, որ, վանքի հաստ պատերը ճեղքելով, դուրս կու գար, եւ մենք կը տեսնենք նոյնիսկ սիրոյ տաղերգուներ մեր եկեղեցականներուն մէջ, ինչպէս Թլկուրանցի, Յովհաննէս Պլուզ: Եւ պէտք է ըսել, որ<sup>3</sup> արդէն Ներսէս Շնորհալի ատենատեն տուած է առակներ ժողովրդական բարբառով եւ գործածած է բաներ, որ մենք հիմա կը զգուշանանք գործածել: Արդէն մեր Վերածնունդը անելի կանուխ սկսած է, քան եւրոպականը, որ սկսած է Բետարաքայով՝ 14-րդ դար, իսկ մեր ժողովրդականը, սիրայինը սկսած է 13-րդ դարուն: Մեր Ֆրիկը կարեւոր շրջան բացաւ:

Հալածանքներ, յափշտակութիւններ, թալան, յաճախակի պայքարներով քայքայած էին հայ ժողովուրդին տնտեսութիւնը, եւ այդ ձեռով ներքին գաւառներ ծանր պայմաններէն դուրս գալու համար ստեղծած էին զաղութները՝ ըլլայ Պոլիս եւ Թիֆլիս, մանաւանդ ունեւորը եւ վաճառականը: Հայ վաճառականը միշտ ալ կարեւոր տեղ բռնած է նաեւ հին օրերուն <անընթ. >, եւ այդ վաճառականը միշտ եղած է հայուն մէջ: Ան լայն ասպարէզ որոնած է Պոլիս, Թիֆլիս: Մանաւանդ որ քիզանդական շրջանին մենք կարեւոր զաղութ ունեցած ենք եւ պետականութեան մէջ կարեւոր դերեր կատարած: Այդ զաղութներն էին, որ, առաւելապէս եւրոպական դաստիարակութիւնով եւ քաղաքակրթութիւնով օժտուած, ուզե-

ցին նոյն յեղաշրջումը կիրարկել հայ կեանքին մէջ, հայ ժողովուրդի գոյութեան մէջ տեղ բերելով: Անոնք սերտած էին, թէ ի՞նչ է ժողովուրդը ֆրանսական յեղափոխութիւնով: Նոյն մտահոգութիւնը, ինչպէս ունէր Ս. Մեսրոպ, երբ քրիստոնէութիւն կը քարոզէր, որ ժողովուրդը հասկնալի լեզուով գիրքեր քարոզել եւ կամ Աւետարանը հայերէնի քարգմանել: Ժողովուրդն էր, որ կու գար, եւ հետզհետէ մաքրուած էր աշխարհաբարը՝ ըլլալ Թիֆլիսի, ըլլալ Պոլսոյ մէջ: Սահմանադրական ու ազատական ըմբռումներուն հետ էր, որ հետզհետէ զարգացաւ աշխարհաբարը, եւ գրական լեզուի սահմանադրական իրաւունքը ստանալու համար պէտք պիտի ըլլար պայքարել եկեղեցականներուն դէմ: Առանձնաշնորհուած իրաւունքն էր, որ կ'առնուէր եկեղեցականներու ձեռքէն, մանաւանդ գրական լեզուի մը համար. չէ՞ որ հայ մտքի եւ մտածումի լեզուն միայն գրաբարն էր եւ մանաւանդ դարձած երկնքի լեզուն: Բարձրադիր վանքերուն մէջ կարեւոր դեր կատարած են Գրիգոր Օտեան, Զօհրայ, շատ կարեւոր գործ այն պատահի մեծ քանաստեղծը՝ Դուրեան, եւ զարմանալի է, որ Դուրեան իր այդ գեղեցիկ լեզուով քանաստեղծութիւն ընելէ առաջ գրած է նաեւ գրաբար: Նախնական շրջանին նոյնիսկ Գրիգոր Զօհրայ գրաբարով սկսած է: Եւ արդէն մեք մեծ տաղանդներն Պարոնեանի լեզուն այնքան լրիւ եւ Պոլսոյ «Հայրենիք» ընտանիքը՝ Բաշալեան, Կամսարական, Կիրճեան, եւ կարճ ժամանակի մը մէջ: Հետաքրքիր է ուսումնասիրել մեր աշխարհաբարի <անընթ> բարեշրջումը մինչեւ Օտեան, Պարոնեան եւ Կամսարական: Այդ ուժը սակայն փոքորիկի մը պէս ինքնին վրայ դարձաւ, որովհետեւ Պոլիսը կտրուած էր բուն ժողովուրդէն՝ զաւառէն, եւ իրենց ուշադրութիւնը դարձուցած էին առաւելապէս ֆրանսականին, եւ լեզուն ինքն իր մէջ գեղեցկացաւ ու դարձաւ ինքն իր մէջ արուեստ: Չի փորձեցին նոյնիսկ որպէս <ուսուցիչ> զաւառի մէջ մտնել, մանաւանդ որ զաւառներէ զրկանքի, սպանութեան, թալանի եւ ջարդի լուրերը կը հասնէին պատրիարքարան:

Թարգմանեցին Տիւմա, Էօժէն Սիւ, Հիւօ: Պոլսահայի համար մեր գրողը Հիւօն էր, իսկ ըստ Տեմիրճիպաշեանի՝ մեր <անընթ>: Այդ բոլոր թարգմանութիւնները կու գային քիչ մը աւելի զարգացնել եւ ճկունացնել մեր լեզուն եւ մանաւանդ ճաշակ մը բերել: Տաղանդները ուր ալ ըլլան, գիտեն տեղական զաղութեան մկարագիր տալ, ինչպէս ըրին Զօհրայ եւ Պարոնեան, Դուրեան: Եւ մշակուեցաւ գրականութիւն մը, որ զուրկ էր հայկական ժողովուրդի ինքնուրոյն մկարագրէն: Այդ մկարագիրը բերաւ ամտարակոյ Մելքոն Կիրճեան, երբ սկսաւ արհամարհուած դարիպներու մօտենալ: Նոր գիծ մըն էր, որ կը բերէր պոլսահայ գրականութեան

մէջ՝ տալով դարիպ հայ ժողովուրդի հոգեկան ապրումներէն, անոնց տրեւանքներէն եւ <անընթ> կտորներէն:

Շրջանը հասունցած էր, որ ժողովուրդ մը իր գոյութիւնը պոռար իր տառապանքներով ու իր ապրումներով: Իզուր աշխատանք է որեւէ գրականութիւն, երբ այդ արտայայտութիւնը չէ հայ ժողովուրդին եւ հողին: Ժողովուրդները նոյնը չեն, նոյնը չեն կրնար ըլլալ նաեւ գրականութիւնները, եւ հայ գրականութիւնը այնքան ինքնուրոյն պէտք է ըլլալ, որքան ինքը ժողովուրդն է: Շատ չանցաւ, երբ մէջտեղ եկաւ բոլորովին ինքնուրոյն գրականութիւնը հարբերդէն: Թլկատինցիներ էր այդ՝ իր խոսքին լեզուով եւ իրապաշտ ոճով: Ան կեղծ պիտի ըլլար, եթէ այդ շրջանի գրական լեզուի ծեքծեքուն ձեւին երթար: Իր բառերը առաւ ժողովուրդէն եւ այդպէս ալ կերտեց իր մկարագիրները՝ չղկուած գծերով, եւ ուր կար անկեղծութիւն եւ արուեստ: Առաւելապէս քրոնիկի բնոյթ ունէին Թլկատինցիի գրածները՝ քիչ մը աւելի բարեմարտչական բնոյթ եւ սակայն մեծ գեղեցկութիւններ մէջ բերաւ՝ երոպական գիծ մը: Յետոյ իր աշակերտը՝ Զարդարեանը, պիտի գար իր գունագեղ, լրիւ հայերէնեայ՝ գեղարուեստական բնոյթ տալու զաւառի գրականութեան եւ իր մկարագիրներուն: Աւելի կարեւոր դերեր կատարեցին այդ շարժման մէջ եւ աւելի կանուխ՝ Խրիմեան եւ անոր աշակերտ Սրուանձտեանց: Մանաւանդ Խրիմեանի շարժումը. Հայաստանի, զաւառի մէջ ստեղծեց իր ժողովուրդին հետ մշակութային կարեւոր կեդրոն, իսկ Սրուանձտեանց նոր էջ քացաւ՝ մտնելով ժողովուրդին մէջ, հաւաքելով հեքիասները, դիւցազներգութիւնները, որ ժողովուրդը պահած էր իր մէջ եւ այդ աւանդավէպերով սնած էր: Սրուանձտեանց գրեթէ առաջինն էր, որ մեր գրերու գիւտէն եւ գրականութեան ծաղկումէն շատ յետոյ մեր անգիր դպրութեան մօտեցաւ իր կարճ ձեւի մէջ՝ մէջտեղ բերելով նաեւ «Մասունցի Դաւիթը»:

Պոլսահայ գրագէտները, անոնք, որ տեղական դարձած են՝ ներշնչուած Վասիտի գեղածիծաղ ասիերէն ու <անընթ> զգացին զաւառի գրականութեան արժէքը եւ այդ գրականութեան մէջ շարժող ժողովուրդը, որ մինչեւ այդ անժամօք եղած է: Եւ ընդունեցին, որ անոր <անընթ> գրականութիւնն է, որ կու գայ զաւառէն՝ հողի հատով ու ժողովուրդով: Առանձնապէս մկատելի է, որ Սահմանադրութեան կարճ շրջանի <անընթ> գրականութեան մէջ զաւառն է, որ կը կազմէր եւ կու գար այն գրողներուն, որոնք իրենց սնունդը առած են զաւառէն. Ալնէն՝ Միսնանթօ՝ ինքնուրոյն ոճով, քայքայ որ հողի <անընթ> կար հոն: Գաւառէն գիծ կար նաեւ այն տաղանդաւոր պատանիի՝ Մեծարեւցիցի մէջ:

Լրի չախտի ըլլալ իմ խօսքը, եթէ չանդրադառնամ նաեւ կովկասահայ գրականութեան եւ մշակութային աշխատանքին, որ առաւելապէս կո գար Գերմանիոյ՝ որպէս ազատական շարժում, եւ նոյն շարժումը Ռուսիոյ <անընթ> կեանքին մէջ եւ մանաւանդ գրականութեան: Հայ մտաւորականութեան ազատական զգայարանքներով շինուած ուզեցին կիրարկել նաեւ հայ ժողովուրդին՝ առանց ժողովուրդը ճանչնալու, տեսակ մը րոմանօք զաղափարական շարժում, ինչպէս Ստեփան Նազարեանն էր, Նալպանտեանն էր, որ <անընթ> ռուսական ազատական կ'ուզեր կիրարկել նաեւ հայկական կեանքին մէջ, եւ Գ. Արծրունի «Մշակի» շուրջ քոլորուած մտաւորականութիւնով: Բոմանօքով կար նաեւ անոնց հայրեմասիրութեան մէջ եւ կու գար եւրոպական ազատական զաղափարարանութենէն՝ առանց հայ ժողովուրդը ճանչնալու: Չարքիս հագած, թէլիկ դրած հայ ժողովուրդին եւրոպական տարազ կ'ուզէին հագցնել եւ իրենց ճանչցած հայը Թիֆլիսի, Պարսի մէջ սեւ եւ ծանր աշխատանք կատարող դարիպն էր, որ եկած էր իր տան, գաւակներուն համար հաց ճարելու: Նոյնը, որ կար Պոլսոյ մէջ, բոմանօք էր նաեւ <անընթ> պատրիարքի Հայկական հարցը:

Իբրաւ, շատ քան կը պարտինք Արովեանին, որ շատ արեւի կանուխ սկսաւ ահագանգը ոչ միայն մեր ազատագրական շարժման, այլեւ գոյութեան կանչեց հայ ժողովուրդը իր լեզուով եւ ոգիով: Ան կը հաւնէր գրաբարը, բայց որ ժողովուրդին հետ <հաղորդակցութիւն> չուէր եւ մեծ յանդգնութիւնով Քանաքեռի լեզուով տուաւ «Վերջ Հայաստանի»ն: Ոչ որպէս աշխարհաբար լեզու, այլ ուզեց տալ հայ ժողովուրդը իր անտաշ լեզուով, իր ցաւերով, իր իմաստութիւններով եւ իր <ըմբոստական> ոգիով, լեզուն իր անտաշ ձեւին մէջ, շատ արեւի արտայայտիչ եւ գեղարուեստական, որովհետեւ այն լեզուի մէջ ժողովուրդը առողջ է: Որեւէ աշխատանք գեղարուեստական է, երբ որ ժողովուրդը կը շնչէ, կ'ապրի: Քանաքեռի այդ արեւտ լեզուն եկաւ՝ իր հրաշքը գործելու, եւ արդէն Արովեան իր գրաբար քանաստեղծութիւններէն յետոյ գնաց ժողովրդական լեզուին եւ քանաստեղծական չափին. իր «Պարսպ վախտի խաղալիք»ին մէջ առաւելապէս մշակեց ժողովրդական առածները, հեքեաթները՝ ծանր ու զաւեշտական եւ արդէն յստակ աշխարհաբարով եւ դարձաւ ոչ միայն մեր մեծ Բաֆֆիի, այլեւ Աղայեանի, Թումանեանի եւ ժողովրդական լեզուի իմաստութեան եւ հեքեաթներու կարեւոր աղբիւրը: Եւ երեւակայեւ, որ Բաֆֆին իր առաջին վէպը՝ «Մարի»ն, գրաբարով գրած է: Արովեան կայծը տուաւ եւ արդէն կար Բաֆֆիի մէջ իր հոյակապ վէպերով ու կանանչ, կոկոն լեզուով: Եւ չգիտեմ հեղինակ մը եւրոպական գրականու-

թեան մէջ, որ այն շարժումը եւ այնքան ճակատագրական դեր կատարած ըլլար իր լեզուին մէջ, որքան կատարեց Բաֆֆի հայ ժողովուրդին մէջ: Եւ մենք կը տեսնենք, որ ժողովուրդը զարթօնքի հետ սկսաւ ներազատագրական շարժումը՝ ժողովուրդը եւ ժողովուրդի հետ: Գեղեցիկ էր Բաֆֆիի աշխարհաբարը, եւ արեւի գեղեցիկ էր Ահարոնեանի լեզուն, որ արդէն մտած էր հայ ժողովուրդին մէջ եւ մեր ազատագրական շարժման հետ իսկ քանաստեղծութիւնը: Նոյնպէս Արովեան եղած է այն մեծ քանաստեղծի՝ Թումանեանի աղբիւրը՝ իր ժողովրդական յիթով, յաճախ իր լեզուով եւ մշակման եղանակով: Եթէ նկատի ունենանք, պիտի տեսնենք, որ կովկասահայ ժողովրդական լեզուն է բարքերու, նկարագիրներու ու <անընթ>: Բանաստեղծները գաւառներէն՝ ժողովուրդի ծոցէն եկած էին: Ժողովուրդի եւ գաւառի գրականութեան թափը ուժեղ էր, առողջ, այդ թափով էր, որ սկսած էին մեր հոգիի տէրը դառնալ եւ ժողովուրդի ինքնութեան ու ստեղծագործութեան, պաշտպանութեան տակ անել, այլ խօսքով՝ ինքզինքն էր, որ պաշտպանեց եւ այդ մեծագոյն ուժն էր, որ դժբախտաբար երկու դար տեսց: Եւ պատահեցաւ արեւի ահաւորը. 1915ին ամբողջ մտաւորականութիւն մը փճացուցին ժողովուրդին հետ: Վարուժանի մը, Ջարդարեանի մը կեանքը շրջան չէ. դարերը եկած են այդ տաղանդին ձեւ տալու...

## ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ

Ինչպէս ամէն բան, լեզուն եւս կու գայ բնութենէն, որպէս սիմպոլ: Քար կամ փայտ ըլլալէ աւելի քարին կամ փայտին ցոլացումն ու արտայայտութիւնն է լեզուն՝ նոյնիսկ իր նախնական ձեւին մէջ: Նախնական մարդուն մէջ նիւթն է, որ կը ցոլանայ: Եթէ ցոլացում է, ուրեմն լեզուն, բառը արուեստի առաջին արտայայտութիւնն է: Այդ բառերն են, որ իրարու քով կու գան՝ ներդաշնակելու հոգեկան առաջին արտայայտութիւնը՝ աղօթքը աստուածներուն եւ սիրային կանչը, երբ մարմինները կը ջերմանան: Նախնական մարդուն համար ծառը լոկ ծառ չէր, որ պտուղ կու տայ, որ կամ փայտ է վառելու եւ կամ շինութեան ատաղձ: Ծառը իր խորհուրդն ունէր ու իր ոգին, եւ ընդհանրացած է ծառի պաշտամունքը: Երբ ծառերը իրարու քով կու գան որպէս անտառ, կը դառնան աւելի խորհրդաւոր, ուր պարիկները կը բնակէին, հէքեաքները կը ստեղծուէին, եւ ուր աստուածները եւ կամ դիւերը կ'ապրէին: Նոյնն էր մեր Սօսեաց անտառը, որուն տերեւներու սօսափիւնը, անցնող հովը պատգամներ էին աստուածներէն, եւ այդ պատգամներուն մէջ կար կեանքի եւ մահուան իմաստութիւնը: Իրենց աղօթքներով պաշտպանութիւն էր, որ կը խնդրէին:

Ահա թէ ինչպէս ծառը կը դառնայ հաւատք, իմացականութիւն, այլ խօսքով՝ հոգի: Հոգին մարմնին իմացականութիւնն է եւ կու գայ առարկաներէն, որոնց մենք ցոյք ու նկարագիր տուած ենք: Ըլլայ հին, ըլլայ նոր բանաստեղծներուն համար՝ բառերը կը շնչեն առարկաներուն հետ:

Աստուածները բնութեան տարրերէն ծնունդ առած են, ինչպէս Վեներաը եւ մեր Աստղիկը՝ ծովէն: Պարսկական աստուածը՝ Միթրա, որ ըստ Բենոնի կրնար Քրիստոսի տեղը բռնել, ծնած է ապառաժ մը: Եւ մենք կը տեսնենք, որ քարը, որպէս խորհուրդ, ստեղծած է իմացականութիւն, առած է շունչ եւ սրբութիւն: Այդ կարծր քարը դարձած է խորհուրդը ահասարակ բոլոր կրօնքներուն մէջ՝ ըլլան հին, թէ նոր: Քրիստոնեան չի կրնար պատարագ ընել առանց վէմ քարի: Մեր երկիրը լեցուն են քարեր, ապառաժներ, ուր սուրբերը կը բնակին, եւ կամ ապառաժներուն մէջ սուրբերու շունչը կայ: Հաւատացեալները մոմեր կը տանին այդ ապառաժներուն եւ կամ աղանձներ կը զոհաբերեն: Մէքքէն նոյնպէս ունի իր սրբազան սեւ քարը՝ երկնքէն ինկած: Այդ նիւթը մարմին կ'առնէ, կ'առնէ հոգի, որ մենք քար անունը կու տանք, եւ բառերուն հետ է, որ անոնք կը

դառնան խորհուրդ եւ դեր կը կատարեն մեր հոգեկան աշխարհին մէջ: Նոյնպէս բնութենէն կու գայ կրօնքներուն հիմք կազմող բարին ու չարը: Մենք կը տեսնենք՝ օճն է, որ զանազան կերպարանքներու մէջ կը մտնէ, կ'ըլլայ դեւ կամ վիշապ, իսկ աղանձին՝ թռչունը, Սուրբ Հոգիի կերպարանք կը ստանայ: Հրեշտակները թռչունի թերեւ ունին:

Միշտ ալ պաշտամունք եղած է կրակի: Այդ «կրակ» բառը մանաւանդ հայերուն համար պատմութիւն է՝ Վարդանն է Հազկերտի փիղառք հսկայ բանակներուն դէմ: Այդ բառին մէջ կայ ողբերգութիւն եւ դիցազներգութիւն: Կու գայ նոյնպէս մեր սրբացած թոնիրներու անթեղներէն ու կրակի օրէն <անընթ>: Դիտուած է, որ այն ազգերը, որոնք հարուստ լեզու ունին, ունին նաեւ հարուստ մշակոյթ:

Լեզուն պատմութիւն է ու նկարագիր՝ ազգերը բնորոշելու եւ անոնց ծագումը փնտռելու: Հայ լեզուն դասաւորած են հնդեւրոպական լեզուներուն մէջ՝ գծով մը գտնելու նաեւ աղբիւրը մեր ծագման: Լեզուագիտութիւնը տակաւին իր վերջին խօսքը տուած չէ: Ինքնուրոյն ազգ եղած ենք եւ նոյնքան ինքնուրոյն՝ լեզուով եւ մշակոյթով ու պահած ենք այդ ինքնուրոյնութիւնը, երբ յաղթած ենք եւ կամ պարտուած: Ուրարտացիները գիրաբարութիւն ունեցած են եւ սակայն լուծուած են մեր մէջ:

Այդ լուծումը միայն մշակոյթն է, որ կը կատարէ, ուրեմն գիրով, դպրութիւնով աւելի ուժեղ եղած ենք, եւ մեր բանասէրները կարեւոր առնչութիւն չեն տեսներ մեր եւ ուրարտական լեզուին մէջ: Մեր լեզուն ունեցած է ուժեղ ազդեցութիւն հին պարսկերէնէն՝ պահլաւերէնէն, որ կու գայ պարթեւներու շրջանէն: Մեր պատմութիւնը հարուստ է մեր եւ պարթեւներու մէջ եւ պարսիկներու հետ պատերազմներով եւ բարեկամութիւններով: Ուրկէ անցած է Մեծն Աղեքսանդրը, հաստատած է յունական գաղութ՝ յոյն մշակոյթը տարածելու համար:

Վերջապէս մեր պարթեւ Արշակունիները, որ հայացան եւ աւելի քան 400 տարի պահեցին հայոց արքունիքը եւ սահմանները՝ առանձինն նախաբարութիւնները հայ արքունիքին կապելով: Մեր կաթողիկոսական աթոռը նոյնպէս պարթեւներէն կու գար, ինչպէս ինքը Լուսաւորիչը եւ անոր ժառանգական յաջորդները՝ Մեծն Ներսէս եւ Սուրբ Սահակ: Ըսել կ'ուզեն՝ լեզուագիտութիւնը հասած չէ հոն, որ կարենար ազգերու լեզուներով շտկել նաեւ անոնց պատմութիւնը: Ուրեմն լեզուն, բառը ոչ միայն հաւատք է եւ իմացականութիւն, այլ նաեւ պատմութիւն: Որպէս հին ազգ՝ հաւատք է եւ իմացականութիւն, այլ նաեւ պատմութիւն: Որպէս հին ազգ՝ շատ առուններ եկած են լեցնելու եւ յորդելու մեր գետը: Մեր լեզուի եւ մշակոյթի հարստութիւնը ցոյց կու տայ, որ մենք հինէն ի վեր ունեցած ենք այդ գետը: Անտարակոյս իրենց առուն քերած են այն ազգերը, որոնց

յաղթած ենք կամ մեր մէջ լուծած, եւ այն ազգերը, որոնք մեզի տիրապետած են դարերով, ինչպէս եղած են պարսիկները, արաբները, թուրքերը, եւ սակայն հայ լեզուն պահած է իր ինքնուրոյն ազնուական ցկարագիրը: Այդ ցոյց կու տայ մեր ոգիի առողջութիւնը եւ դիմադրող անպարտելի կարողութիւնը: Պարտութիւն, ջարդ, թալան, հալածանք այնքան յաճախ եղած են, որ կարելի է տարակուսիլ, թէ ինչքան գիտակցական եղած է մեր այդ դիմադրողականութիւնը: Որեւէ գիտակցական ուժ վաղուց քայքայուած էր եւ ձգուած լոկ կեանքը ապրեցնելու քնազդին: Մերը անելի շատ ոգեկան եղած է, եղած է հաւատք եւ իմացականութիւն: Ինչպէս կրօնքներուն մէջ, նոյնպէս հայ ժողովուրդին մէջ ուժեղ եղած է բարիքն ու չարիքն պայքարը, եւ այդ մեզի համար մարմին դարձած է: Բարին ինքն է՝ հայ ժողովուրդը՝ շինարար, հողին ու աշխատանքին հետ կապուած, ստեղծած ինքնուրոյն արուեստ ու մշակոյթ, տուած է ճարտարապետութեան մէջ նոյնպէս ինքնուրոյն գծեր: Աննկիզխանները, թուրքերը մարմին առած էին դեւերու, սատանաներու կերպարանքներով՝:

Միշտ ալ եղած է այն յախտեմական գետը, որ հանդարտ սահանքով ռոտզած է մեր անդաստանը եւ իրեն հետ դարձուցած է նաեւ հայ ժողովուրդը յախտեմական: Այլապէս ինչպէ՞ս բացատրել, որ Պարթեւ Արշակունիները կու գան Հայաստան, ոչ միայն կը հայանան, այլև հայոց պատմութիւնը կը կերտեն: Օտար էին Մամիկոնեանները եւ սակայն դարձան սիմպոլ Հայկականութեան: Օտար էին Բագրատունիները, որոնք ստեղծեցին Անիի բարգաւաճ շրջանը: Օտար էր Լուսաւորչի տոհմը՝ Պարթեւ: Հայ լեզուն եւ հայ մշակոյթն էր, որ հայկականացուց այդ օտար ուժերը, եւ ինչպէս բացատրել այն ուժեղ Հայկականութիւնը, որ տարուեցաւ ահաւոր պայքարներով: Մեր օրերուն մէջ իսկ կը տեսնենք, որ հայկական գաղութները հետզհետէ կը ձուլուին այն ազգերուն մէջ, որոնք ուժեղ են մշակոյթով եւ քաղաքակրթութիւնով, ինչպէս Ամերիկան է եւ Ֆրանսան: Դիտուած է, որ ձուլողը ինքը մշակոյթն է: Մեզի համար կարեւոր չէ, թէ ինչպէս եկաւ քրիստոնէութիւնը, եւ սակայն կարեւոր է, թէ ինչպէս հայացուցինք ու տուինք ինքնուրոյն գիծ մեր լեզուով եւ մեր ճարտարապետութիւնով: Ահշդ է, որ մեր ճարտարապետութենէն աներակներ ձգած են, քայց մեր լեզուն միշտ ալ մնաց անպարտելի: Մեր պարտութեան տկար շրջաններուն իսկ, երբ փակուած էինք վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ, ստեղծեցինք բազմահազար ձեռագիրներով դպրութիւն: Եւ երբեք չեմ հաւատար, որ գիր եւ լեզու չունէինք Սահակ եւ Մեսրոպէն առաջ: Մեր հմուտ բանասէրները որոշ բաներ չունին ըսելիք: Եթէ ունեցած ենք մշակոյթ, այդ գիրով եւ գրական լեզուով եղած է:

3-րդ դարուն քրիստոնէութիւնը կը յաղթէ անյաղթ Հռովմին եւ կը ստեղծէ գուտ քրիստոնէական կայսրութիւն մը՝ Բիզանդիոնը, որ պատմելի ձգած է յունական առողջ մշակոյթին առջեւ, որ կեանքինն էր ու գեղեցկութեան: Քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայաստանի մէջ: Մենք կարողացինք տարածումի այդ բուռն պայքարը Ազաթանգեղոսի եւ Զեմալ Գլակի մէջ: Ազաթանգեղոսէն չափով մը գիտենք, թէ ո՞ր գետեղուած էին մեր հեթանոս աստուածներու տաճարները: Մենք գիտենք՝ ինչպէս քանդուեցան, քայց որ ոչինչ գիտենք քրիստոնէութենէն առաջ եղած մեր լեզուին եւ դպրութեան մասին: Վերջապէս մշակոյթ մը, որ Մեծն Տիգրանի եւ Արտաւազդի օրով եւ յետոյ սերտ յարաբերութեան մէջ եղած էր յունականին հետ:

Մեր ծանօթութիւնը կը սկսի քրիստոնէութեան մուտքով եւ գրերու գիտով, եւ մենք այդ գիտը առաւելապէս կը պարտինք քրիստոնէութեան, որուն մէջ կորսուած էին ազգայինն ու աշխարհայինը: Պարսից տիրապետութիւնով Արշակունիները կորսնցուցած էին իրենց հեղինակութիւնը, եւ Վռամշապուի Տիգրանի գործակալէ մը անելին չէր: Եկեղեցականութիւնն էր, որ հետզհետէ տիրապետող կը դառնար: Եկեղեցական տիրապետութեան աշխարհը առաւելապէս Բիզանդական աշխարհն էր, ուր աղքատները առանձնաշնորհուած դասակարգ էին, եւ անոնք պէտք չունէին իրենց հացի մասին մտածելու, ինչպէս երկնքի թռչուններն են, - կըսէ Քրիստոս, իսկ հարուստները կ'աշխատէին օգնել, կերակրել, աղքատանցներ բանալ, վանքեր շինել, ոսկի ու արծաթ տանիլ եկեղեցիներուն՝ ասեղի ծակէն չանցնելու համար: Քրիստոնէութիւնը կը քարոզէր հրաժարիլ կեանքէն, չարչարել մարմինը, որ մեղքերով էր լեցուած, որովհետեւ Քրիստոսի թագաւորութիւնը երկնքին մէջ էր: Շատցած էին վանականները եւ մանաւանդ ճգնաւորները՝ լեռներու եւ քարայրներու մէջ իրենց մարմինը չարչարելու համար, մանաւանդ որ մօտ էր Քրիստոսի երկրորդ գաւմինը չարչարելու համար, մանաւանդ որ մօտ էր Քրիստոսի երկրորդ գաւմինը: Ճգնաւորներով լեցուած էին Սուրիոյ, Եգիպտոսի եւ Պաղեստինի լուստը: Ճգնաւորներով լեցուած էին Մուրիոյ, Եգիպտոսի եւ Պաղեստինի անապատները: Մեսրոպ ինքը խիստ ճգնաւոր մըն էր, իր աշակերտներուն հետ լեռներու քարայրները քաշուած՝ խոտով կը կերակրուէին, եւ Մեսրոպ ինքզինք չարչարելու համար «Եւ բազում եւ ազգի վշտակցութիւն ըստ անտարանին կրէր. եւ ամենայն կրթութեան հոգեւարացն զանձն տուեալ՝ կրանաւորէր ի քաղց եւ ի ծարաւ, ի ցուրտ եւ ի մերկութիւն. խոտաբուտ եղեալ, խարազնազգեստ եւ գետնատարած անկողնուք, եւ զհանգիստ քնոյ զիշերոյ յոտնաւոր տքնութեամբ ի թաթափել ակամ վճարէր բազում անգամ», - կը գրէ Կորիւն: «Իր քունը ոտքի վրայ տքնութեամբ կը վերջացնէր մէկ ակնթարթով», - կը գրէ Կորիւն: Ատեն-ատեն իր

ճգնարանէն վար կու գար իր աշակերտներուն հետ քրիստոնէութիւն քարոզելու: Այդ քարոզութեան ընթացքին Աւետարանը ասորերէն կը կարդար եւ հայերէնի կը թարգմանէր: Ժողովուրդը ասորերէն չէր հասկնար, մանաւանդ Գողթնի եւ Սիւնիքի մէջ: Այդ ծանր մտահոգութիւնով տարած՝ մտածեցին հայ գրերու մասին՝ Աւետարանը հայերէն թարգմանելու համար: Ծգնաւոր եղած է ինքը՝ Սուրբ Սահակը իր 60 աշակերտներով, ճգնաւորեց Եղիշէն, ինչպէս եղած է ինքը Լուսաւորիչը, որ ճգնաւորներու կարգը բերաւ Հայաստան, ինչպէս եղած են Բիւզանդիոնի մէջ կարեւոր եկեղեցականներ Ս. Բարսեղ Կեսարացի, Ոսկեբերան եւ շատեր: Եւ այդ շրջանէն են բոլորը: Աճիւնը անկի արժէք էր, քան կեսնքը: Ս. Սահակ, ներքնապէս կապուած Բիւզանդիոնին հետ, արտաքնապէս զգոյշ էր, որովհետեւ այդ կապը քրիստոնէական բերումով քաղաքական բնոյթ ստացեր էր: Այդ էր պատճառը, որ Մեսրոպ առաջին անգամ Եղեսիա որկուեցաւ գրերու գիտին համար: Գրերու գիտը լրացաւ, եւ մենք տեսանք, որ կարճ ժամանակի ընթացքին մէջտեղ եկաւ քերականական բարդութիւնով կատարեալ յղկուած եւ արուեստի նրբութիւն ունեցող մեր գեղեցիկ գրաբարը:

Թարգմանութիւնը երկու լեզուներու <անընթաց> գօտեմարտութիւն է:

Հարուստ լեզու մը միայն կրնար գօտեմարտիլ շատ հարուստ մշակոյթ ունեցող յունարէնին հետ: Եւ մենք գիտենք, որ լեզուները հրաշքով չեն ստեղծուիր, եւ այժմ կը հարցնենք՝ ո՞ր էր այդ լեզուն: Առանց գրերու այդ լեզուն չէր կրնար «Թագուհի թարգմանութեան» հասնիլ: Անտարակայս կար այդ լեզուն՝ կորսուած մեր դպրութեան եւ մեր եին դիւցազներգութեան հետ, ինչպէս Հայկի դիւցազներգութիւնն է, ինչպէս «Արտաշէս եւ Սաթենիկն» է եւ կամ «Երկներ երկինը»: Ի՞նչ եղան հեթանոսական օրերու մատենադարանները: Խորեմացի կը յիշէ մէկը միայն՝ Անիի ամրոցի մատենադարանը, ուր Բարդուսան Ասորի քրիստոնէայ Կուրիտիկիանոս մը, որ որպէս հերձուածող կարեւոր դեր կատարած է Հայաստանի մէջ, կը մտնէ Անիի ամրոցը 2-րդ դարուն, ոչ միայն կ'ուսումնասիրէ մեհենական պատմութիւնը եւ պատմութիւնը թագաւորաց, այլ «Վոյսեալ զամենայն ի լեզու ասորի եւ ապա անտի յեղաւ ի յոյն բան»: Այսինքն՝ բոլորը թարգմանեց ասորերէնի եւ անկից ալ՝ յունարէնի: Այդ ցոյց կու տայ, որ հայերէնէն փոխադրած եւ կամ թարգմանած է:

Խորեմացի կը յիշէ մեր հեթանոսական շրջանէն կտորներ, որ կ'ենթադրուի ամրոցական եղած են, ինչպէս «Երկներ երկինը», «Արտաշէս եւ Սաթենիկը»: Եթէ լսած էր իր ականջով, ինչպէս կ'ըսէ, զուցէ գողթան երգիչներէն, ուրեմն փոխադրած է իր լսած բառերով, եւ մենք կը տեսնենք

այնտեղ շատ ծանօթ ժողովրդական բառեր աշխարհաբար շարահիւսութիւնով. «Պարանն ընկեց ի մէջ օրիորդին ալանաց եւ շատ ցաւեցոյց զմէջքն փափուկ օրիորդին արագ հասուցանելով ի բանակն իր»:

Նոյն պարզ լեզուի յօրինումն է «Ո՞ւ տայր ինձ զծուխն ծխանին»: Եւ մեր բանասերները շատ բան չգիտեն, թէ ե՞րբ եւ ո՞ր կորսուեցաւ այդ գեղեցիկ լեզուն եւ դպրութիւնը: Արդեօ՞ք այնքան քանդող եղած է քրիստոնէութիւնը, որ մեր բազմաբնուց, ճարտարապետական կարեւոր կառուցումներուն հետ քանդած են մաւր մատենադարանները:

Գրերու գիտին եւ Լուսաւորիչ ընթացքին մեր մշակոյթի եւ դպրութեան աղբիւրը դարձան հրէայ մշակոյթը, անոնց ազգային պատմութիւն՝ Հին Կտակարանը: Ու անոնց ազգային աստուածը՝ Եհովան, դարձաւ մեր աստուածը «Ծննդոց»էն մինչեւ Քրիստոս: Այդ բոլորը տուին կապոյտ աշխարհը հրեշտակներուն ու լուսեղէն սանդուխը՝ երկրէն դէպի երկինք ձգուած Յակոբի սանդուխը, ուրկէ վեր կը բարձրանան ապաշխարողները, աղքատները, ճգնաւորները, որոնք իրենց մարմինը կը շարձարեն, եւ մանաւանդ Քրիստոսի համար զոհուած մահատակները: Եղիշէին մէջ կը տեսնենք, որ այնքան իրական է այդ լուսեղէն սանդուխը, ուրկէ վեր՝ երկինք ելած է Վարդանը իր մահատակներով: Մոռցած մեր ինքնուրոյնութիւնը՝ մեր ոճը ամինք Հին Կտակարանէն, մեր բանաստեղծութիւնը՝ «Մաղմուսաց»էն, մեր իմաստութիւնը՝ «Առակաց»էն, եւ մեր երեսակայութիւնը հասաւ մինչեւ «Յովհաննո Յայտնութեան»: Կորին իր «Վարք Մաշտոցի»ն մէջ Հին Կտակարանի իմաստութիւնով միայն կը բացատրէ իր ուսուցիչը՝ Մեսրոպը: Այն ազգը, որ կը կորսնցնէ իր ոճը, կը դադարի ստեղծագործ ըլլալ: Եւ սակայն լեզուն, անտարակոյս հիմնէն եկած, իր ներդաշնակութիւնով, գեղեցկացած բառերով կրնար վերացական երեսակայութեան հասնիլ: Հին ու Նոր Կտակարանի ծանրութեան տակ հայոց լեզուն չի կրնար: Ինքն իր մէջ ոճ էր, եւ մենք կը տեսնենք՝ այդ լեզուի գեղեցկութիւնը ոչ միայն «Թագուհի թարգմանութեան» մէջ, այլ ի Ազգաբանագիտոսին մէջ մախշուն գոյն առած է: Զգիտենք, թէ ո՞վ թարգմանած է, եթէ բնագիրը յունարէն էր: Մենք կը տեսնենք բանաստեղծական բոխքը Ղազար Փարպեցուն, երբ ան Արարատեան դաշտը կը նկարագրէ: Նոյն յղկուած եւ արդէն վիպային ձեւ առած լեզուն է Եղիշէին մէջ, որ կարելի է ըսել թէքնիք կատարելութիւնով, իր մտածումներով եւ գեղարուեստական արժէքով տուած է սրբազան քրիստոնէական վէպ մը՝ պատմական դէպքերու վրայ հիմնուած: Նոյն գեղեցիկ լեզուն Խորեմացիի, մանաւանդ Եզնիկ Կողթանցիի «Եղծ Աղանդոցին» մէջ, ուր հասած է վերացական, փիլիսոփայ-





կազմեր մեր երաժշտութիւնը: Մենք տեսանք մեր օրերու Մշոյ Ս. Կարապետի ուխտագնացութիւնը, ուր ժողովուրդը շատ քան պահած է մեր նախաքրիստոնէական շրջանէն: Ներսէս Շնորհալի «Գիրք առակաց»ի իմաստութենէն դուրս փնտռած է հայ ժողովուրդի իմաստութիւնը՝ աշխարհաբար լեզուով գրի առնելով առակները: Կը տեսնենք տաղերգու եկեղեցականներ, որոնք թէ՛ շարականներ եւ թէ՛ սիրոյ տաղեր կը յօրհնէին: Վանքերու հաստ պատերը կը ճեղքուէին, եւ ուրկէ ներս կը մտնէր Արեւը կեանքին եւ ժողովուրդի շունչին հետ: Մեր հայ վանքերու միջնադարեան քարքերուն ծանօթ չենք, քայց որ ծանօթ ենք Եւրոպայի միջնադարեան վանքային քարքերուն: Եւ արդէն՝ մարմնեղէն սիրոյ նուիրուած քանաստեղծութիւններ Յովհաննէս Կաթողիկոս Թլկուրացիէն, Յովհաննէս Պլուզէն եւ ուրիշներէն՝ մաքրուած աշխարհաբարով: Պէտք է ըսել, որ այսպէս կոչուած Հայկական Վերածնունդը եթէ ոչ առաջ, միեւնոյն ժամանակ սկսած է եւրոպականին հետ. Պոքաչօ, Տանդէ՛ 13-րդ դար, եւ քանաստեղծ Բետարքա իր սիրոյ երգերով՝ 14-րդ դար: Նոյն ատեն յայտնութեան մը պէս մէջտեղ կու գայ Ֆրիկը՝ 13-րդ դար, ու քացաւ վարագոյրը խոշտանգուած, հալածուած ու Պուղայի սարսափներուն ենթարկուած հայ ժողովուրդի եւ իր բողոքը՝ Աստուծոյ դէմ իր նշանաւոր «Գանգատ»ով: Ժողովուրդն էր, որ կու գար իր վշտով, իր գանգատով եւ իր քարքատով: Հետաքրքրական է Ֆրիկի լեզուն իր խորտուրտութեան մէջ: Յետոյ յաջորդեցին ուրիշներ: Մեր այդ Վերածնունդը երկար չտեսց. ծանր խուփ մը դրուեցաւ այդ եռացող կաթսային վրայ: Ինչպէ՛ս թէ «Գանգատ», երբ Աստուած անսխալական է: Ինչպէ՛ս թէ մարմնային սիրոյ տաղեր, երբ քանաստեղծութիւն «Սաղմոսներ»էն կը շեղի եւ ան ալ «ռամիկ» լեզուով, մանաւանդ որ մարմինը եղած է ապաշխարելու համար:

Մինակ հայկական չէր այդ գարթունը, ինչպէս ըսի, սկսած էր Եւրոպայի մէջ: 15-րդ դարու մատոնաները այն միջնադարեան primitive մատոնաները չեն՝ ճիշտ ու ոսկրուտ: Վերածնունդի մատոնաները կիներ էին՝ գեղեցիկ, լեցուն կուրծքերով, փափուկ ձեռքերով ու կանացի ժպիտներով: Առաքեալները քանդակուեցան ըմբիշի ուժեղ դնդերներով: Կեանքն էր, որ կը յորդէր Բաֆֆայելի, Տաիմիչի ու Միքէլանճելոյի նկարներուն ու քանդակներուն մէջ՝ առանց շեղուելու քրիստոնէական գծէն: Քրիստոնէութիւնը քարենորոգումի կ'ենթարկուէր: Եւ արդէն՝ ժողովրդական ցոյցեր եւ ֆրանսական յեղափոխութիւնը: Եռացող կաթսան էր, որ կը պայթէր՝ ծանր խուփը վրան: Եւ այդ ցնցեց հեռաւոր ու մօտաւոր, մեծ ու փոքր ազգերը: Ժողովուրդն էր, որ կու գար հզօր թափով: Նոյն ատեն մեր կեանքի մէջ ներքին յեղափոխութիւն մըն էր, որ կը կա-

տարուէր: Այդ շրջանին ժողովուրդը ըստածը գաղութն էր՝ Պուլիսն ու Թիֆլիսը: Անոնք էին, որ Վերածնունդ կը դաւէին, ճակատագիր կը վաքէին՝ առանց ժողովուրդը ճանչնալու: Առաջին առողջ թափը եղաւ աշխարհաբար լեզուն ստեղծելու շարժումը: Լեզու մը, որ մատչելի ըլլար ժողովուրդին՝ որպէս իրական կեանքի արտայայտութիւն եւ որպէս պաշտպանութիւն: Գրաբարը կեանքէն շատ էր հեռացեր primitive մատոնաներուն պէս: Գրական նոր թափով լեզու մը կը կազմուէր, անլի միշտ՝ եղածը կը կատարելագործուէր ու կը դառնար գրական լեզու: Այդ աշխատանքին մէջ կարեւոր դերեր կատարեցին երկու կարեւոր գաղութները՝ Թիֆլիսը, որ անլի կանուխէն սկսաւ Խաչատուր Աբովեանով, եւ Պուլիսը: Պուլսոյ մէջ կարեւոր դեր կատարեցին իրենց ազատական, սահմանադրական ներշնչումով Գրիգոր Օտեան, Մինաս Չերազ: Մեծատաղանդ պատանի քանաստեղծը՝ Պետրոս Դուրեան, սքանչելի Պարոնեան եւ Պուլսոյ «Հայրենիքին» շուրջ հաւաքուող նոր շարժումի գրականագետները՝ Չօհրապ, Կամսարական, Կիրճեան, Բաշալեան, Հրանդ Ասատուր: Եւ այդ լեզուն գրական դարձնելու համար պէտք եղաւ պայքար տանիլ եկեղեցականներուն դէմ: Առանկապէս եկեղեցականներուն հետ կապուած գրաբարի առանձնաշնորհումն էր, որ կ'ուզէին պահել: Նոր լեզուի հետ սկսաւ իրապաշտական շարժումը գրականութեան մէջ, որովհետեւ իբրաւ էր ինքը լեզուն: Գրական այդ շարժումին հետ խառնուած էր ֆրանսական ազդեցութիւնը: Գեղեցկացաւ մեր գրական լեզուն այնքան, որ դարձաւ ինքն իր մէջ արուեստ, երբեմն նոյնիսկ առանց կարեւոր բովանդակութեան: Պուլիսը ինքն իր մէջ էր, կապ չկար գաւառներուն հետ: Տնտեսական տագնապով Պուլիս կ'երթային ուժակարող թիկնեղ տղամարդիկ՝ մի քիչ դրամ շահելու ու վերադառնալու իրենց տան ու հողին: Անոնք «ղարիպ»ներն էին իրենց տեղական տարագներով պոլսահայերու «ռամիկ» արհամարհուած տարրը խանքուն մէջ: Ահա թէ պոլսեցին ինչպէս կ'ըմբռնէր գաւառն ու ժողովուրդը: Այդ աշխարհաբարեան տաղանդներուն մէջ մէկը միայն մօտեցաւ այդ զարիպներու հոգեկան աշխարհին, անոնց կարօտին, տան, ընտանիքին եւ հողին: Այդ տաղանդաւոր մէկը բալուցի Մելքոն Կիրճեանն էր: Ինքը եւս, այդ ժողովուրդին եւ գաւառին կապուած, մեր լեզուին տուաւ արու եւ առողջ նկարագիր՝ ներարկելով գաւառականը, անլի իրական գեանի վրայ դնելով մեր գրականութիւնը, երբ մեր պոլսական լեզուէն սկսած էր փուտարայի\* եւ տփքուոյնի\* հոտ գալ: Գաւառի այդ խլրտումն էր մեր լեզուին մէջ, որ պատանի Մեծարեանց հասաւ մինչեւ «Ջրտուր»ի «հո՛, հո՛ ...»: Սկսուած շարժումին մէջ շատ կարեւոր դեր կատարեցին



նոյնպէս գաւառէն՝ Վանէն, երկու եկեղեցականներ՝ Խրիմեան Հայրիկ եւ անոր աշակերտը՝ Գարեգին Սրուանձտեանց: Երկուքն ալ ժողովուրդի գաւակ, ժողովուրդէն առին նախ լեզու եւ ոգի: Եւ արդէն ոգին այդ լեզուին մէջ էր: Սրուանձտեանց դուրս քերաւ կարծես հին սնտուկի մէջ կղպուած գանձերը՝ հէքեաքներն ու դիցազներգութիւնները: Դիտուած է, որ մշակոյթով հարուստ եղած են այն ազգերը, որոնց ցեղային պատառը հէքեաքներով, ասանդութիւններով եւ դիցազներգութիւններով զարդանկարուած են պերճ անգիր լեզուով եւ հարուստ գոյներով, եւ այդ քուրը՝ դարերու ճամբով եկած: Սրուանձտեանց հէքեաքներու կարգին տուաւ Սասունցի Դաւթի դիցազներգութիւնը: Յետոյ երեւան եկաւ, որ ժողովուրդը այդ մեր շքեղ դիցազներգութիւնը պահած է հոյակապ լեզուով եւ արուեստի նրբութեամբ: Ահա թէ ինչպէս երբեմն անգիր դպրութիւնը կը պահէ իր թարմութիւնն ու գեղեցկութիւնը: Եւ արդէն մենք կը մտնենք գաւառի, այլ խօսքով ժողովուրդի իրապաշտ գրականութեան մէջ, իրական նոյնիսկ իրենց հէքեաքի լեզուով: Հէքեաքները ժողովուրդին հիւսած հոգեկան արտայայտութիւններն են՝ յաճախ վերացական: Պոլսոյ մէջ նրբացած աշխարհաբարի շրջանին էր, որ իր խոշոր կօշիկներով, գաւառի տարագով դահլիճ մտաւ Թղկատիցցին: Գիւղական ծագումով վարժապետ մը, որ կարելոր դեր կատարեց իր շրջուած գիւղացու լեզուով: Մէկը, որ հայերէնէն գատ ուրիշ լեզու չգիտէր: Այդ էր պատճառը, որ իր լեզուին եւ արուեստին մէջ դրաւ ինքնատիպութիւն, հարազատութիւն եւ տան մէջ գործուած կտաւի չափ հաստ եւ դիմացկուն: Բերաւ պոլսահայ գրականութեան մէջ իրական ըլլալու ճաշակ եւ դիմագիծը հողին կապուած գաւառի ժողովուրդին՝:

Թղկատիցցիէն յետոյ էր, որ իր աշակերտը՝ Ռ. Չարդարեան, անկի յղկուած լեզուով տուաւ թէքնիք ու արուեստ: Այն հաստ կտաւը նրբացուց, որովհետեւ ծանօթ էր նաեւ ֆրանսական գրականութեան եւ օրուայ ճաշակին: Թղկատիցցի լեզուն թրքախառն էր, որ ճիշդ մօտեցումն էր իր կերտած նկարագիրներուն, իսկ Չարդարեանը նոյն գաւառը, նոյն գիւղացիներուն թուխ դէմքն ու անոնց մտահոգութիւնները, վէճերը անկի գեղեցիկ լեզուով եւ անկի նուրբ արուեստով տուած է: Պէտք է ըսել, որ Չարդարեանի լեզուն մնաց մեր լուսագոյն աշխարհաբարը՝ Արեւէն թրծուած թուխ դէմքով:

«Դէպի ժողովուրդը» զարթօնքը ժողովրդական լեզուի եւ գրականութեան եկաւ Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Ռուսիոյ ճամբով: Առանձնապէս յիշեցի այդ երեք ազգերը, որոնց հետ ուսանողական կապեր ունեցած են թէ՛ արեւելահայերը եւ թէ՛ արեւմտահայերը՝ Թիֆլիսն ու Պոլիսը: Ըլլայ

հին, թէ նոր՝ լեզուն նոյնպէս հրաշքով չի ստեղծուիր: Միշտ ալ նախընթաց աշխատանքներու վրայ ձեւուած է նորը: Բաւական հին եղած է մեր աշխարհաբարի ճիգը, եւ այդ ճիգը եղած է հինք ժողովուրդի տարերային շարժման: Արովեան Գերմանիոյ մէջ ուսանած՝ այդ տարրերով մտաւ իր նոր լեզուի եւ գրականութեան մէջ: Այդ շրջանին տիրական դասի՝ եկեղեցականներուն եւ բանիմաց մտաւորականներուն էր գրաբարը: Արովեան յեղափոխութեան մը չափ յանդուգն փորձ ըրաւ. արեւմտարեւելացի «Վերջ Հայաստանի»ն: Ան չտուաւ որպէս աշխարհաբար, այլ տուաւ այդ լեզուով՝ ժողովուրդին հարազատ ըլլալու համար: Այն, ինչ որ հարազատ է ժողովուրդին, ունի նաեւ գեղարուեստական արժէք: Վէպը իր մշակումով բունանքիք էր, բայց կեանքի եւ իրապաշտութեան դրոշմը դրաւ ժողովուրդի բարբառով: Անկախ այդ բարբառէն՝ Արովեան, որ գրաբարով սկսած էր իր բանաստեղծութիւնները, հետզհետէ տուաւ մաքուր աշխարհաբարը՝ մշակելով ժողովրդական առակներն ու փոքր պատմութիւններ իր «Պարապ վախտի խաղալիք»ին մէջ, ուր մենք կը տեսնենք ժողովուրդի պատմելու ոճը եւ մանաւանդ բանաստեղծութեան շիջմը: Այդ լեզուն էր, որ ճամբայ բացաւ իրմէ յետոյ եկող տաղանդաւոր բանաստեղծներուն՝ Աղայեան, Թումանյան, Իսահակեան, Յովհաննէսեան եւ Ծատուրեան: Մանաւանդ Թումանյանի աղբիւրը եղած է Արովեան:

Կային նաեւ ռեֆորմիստներ, իտելիստներ, ինչպէս Նազարեան, Նալպանտեան, Արծրունի: Գրաբարէ նոր ազատուած անոնց աշխատանքները զաղութային սահմաններու մէջ մնացին, որովհետեւ անծանօթ էին ժողովուրդին, եւ իրենց աշխատանքները ազգային զաղափար ու նպատակ ըլլալէ անդին չանցան: Ուսուցիչը, բանասէրը, յօրուածագիրը չէ, որ կը ստեղծագործէ լեզուն:

Լեզուն ստեղծագործողը հայ գեղարուեստական գրողն է, ինչպէս Թումանյանը, Վարուժանը եւ կամ Չօրասպը: Նիւթը իր լեզուն ունի, ինչպէս ծառը եւ կամ Պարոնեանի Արիստոս աղան: Այդ նիւթին ու նկարագիրներուն մէջ է, որ լեզուն կը ստանայ գոյն եւ նկարագիր: Ինքնատիպ բանաստեղծին համար բառերը երբեմն անբարար են: Նիւթն է, որ կը ցայտէ իր բառերով, եւ մենք այդ կը տեսնենք Նարեկացիէն մինչեւ Սիւսանթօ եւ առհասարակ ինքնուրոյն բանաստեղծութիւններուն մէջ: Իրական գրականութիւնը այն չէ, որ լեզուն կը ստեղծէ նիւթը, այլ այն, որ նիւթը կը ստեղծէ լեզուն: Մենք չէինք կրնար վանքերու մէջ մշակուած նոյնիսկ աշխարհաբարով մօտենալ հայ ժողովուրդին: Դեղերու ու արիւնի պակասը կայ, ու մենք կը տեսնենք, որ գաւառի

գրականութիւնը նախապէս կովկասահայերու մէջ ժողովրդական շարժումին հետ սկսած է:

Եւ երեսակայել, որ Բաֆֆի գրաբարով գրած է իր առաջին վէպը՝ «Մալխի»ն, եւ յետոյ աշխարհաբարի թարգմանած: Շատ չանցած՝ ժողովուրդի ուժը այնքան էր ճնշիչ, ազգային շարժումը այնքան էր այժմեական, որ մենք կը տեսնենք Բաֆֆիի մէջ ոչ միայն կանանչ ու կակազ աշխարհաբարը, այլեւ այդ լեզուին ու մտածումին մէջ ազատագրական շարժում եւ յետոյ ֆէտայիները հայոց լեռներուն մէջ: Բաֆֆիի լեզուն իր կատարելութեան հասաւ Աւետիս Ահարոնեանին մէջ, որ իր գրականութիւնը նուիրած էր առաւելապէս հայ տառապանքին եւ ազատագրական շարժման, եւ անոր լեզուին եւ երեսակայութեան մէջ կային առաւելապէս արեւմտահայ լեզուի գոյները:

Պատերազմները առհասարակ նոր թափ, նոր անկումներ կը ստեղծեն: Այդ երկուքն ալ պատահեցան մեր կեանքին մէջ: Կորսնցուցիւնք մէկ ու կէս միլիոն ժողովուրդ իր մտաւորականներով եւ սակայն պահեցիւնք արիւնով գծուած սահմաններով Հայաստանը: Այդ ցոյց կու տայ, որ մեր ազգային մարմնի կենսատարրերը ուժեղ են, եւ մենք, որպէս հին ազգ, կարեւոր դեր ունինք կատարելիք ազգերու եւ մարդկային մշակոյթներու մէջ: Դիշո՛ւ է, կորսնցուցիւնք մեր անկախութիւնը, եւ սակայն հայ ժողովուրդը իր տոկունութիւնով հետզհետէ գտած է իր ոգին ու ազգայինը: Հոն՝ Հայաստանի մէջ է, որ կը բարգաւաճի մեր մշակոյթը, մեր գրականութիւնը: Այնտեղէն է, որ պիտի շարունակուին մեր գալիք դարերը՝ շնորհիւ մեր ժողովուրդի տոկունութեան: Այնտեղ կաշկանդուեցաւ եւ հալածանքի ենթարկուեցաւ մեր ազգայինը: Ժողովուրդը շատ զոհեր տուաւ ու տոկաց: Այժմ այդ ազգայինը մեր մշակոյթին եւ գրականութեան մէջ իտեալ է, հաւատք ու նպատակ: Յաճախ կը խօսուի ժողովուրդի մասին, բայց որ դեռ ժողովուրդը չենք տեսներ Հայաստանի գրականութեան մէջ: Այդ նպատակը օր մը պիտի դառնայ իրական, մեր ժողովուրդին չափ իրական: Մենք առաւելապէս մտահոգուած ենք Սփիւռքով, որ մեր աչքին առջեւ հետզհետէ մաշումի կ'ենթարկուի: Երբ կ'ըսենք՝ Սփիւռքը կը կորսուի, նախ կը կորսուի մեր լեզուն: Մենք կը տեսնենք այդ մեր գաւակներուն, մեր թռռներուն մէջ: Աւելի քան 200000 կը հաշուի Ամերիկայի գաղութը: Այժմ հազիւ կրնանք հաշուել 35-40 հազար հայութիւն, որ ազգային հետաքրքրութիւն ունի կուսակցութեանց, միութիւններու եւ եկեղեցիներու շուրջ հաւաքուած: Միամտութիւն է հաւատալ, որ անգլերէնով քան մը կարելի է փրկել: Շատ վստահ, որ կորուստ է, երբ կը կորսուի հայ լեզուն, որովհետեւ լեզուն

սնունդ է, հող է, մշակոյթ է, պատմութիւն ու արեւմտութիւն, որուն մէջէն մեր նահատակ նախահայրերը կը խօսին: Լեզուն ոգի է ու արիւն: Հայ գրողը իր կարգին այդ աշխատանքն է, որ կը կատարէ՝ պահելու ժառանգութիւն մը եւ այդ ժառանգութիւնը յանձնելու եկողներուն<sup>10</sup>: Ան վճարուած պաշտօնեայ չէ, կամաւոր զինուոր մը՝ պահելու մեր լեզուն, մեր դպրութիւնն ու արեւմտութիւնը:

Պահենք այդ լեզուն, եթէ կ'ուզենք պահել մեր ազգային գոյութիւնը:

# ՀՈԴՎԱԾՆԵՐ ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## «ՄՐԱԶԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ՏՈՍԱՐ ՍԱԶԻԱԿԱՆ» ՀԱՄԱՍՏԵՂԻ

Նիկոլ Աղբալեան

Չոր գիւղը երեսուն տուն ունի, երեք նշանաւոր մարդ՝ Մակարը, հին ջուլիակ, որ քաշուած իր կատուի հետ՝ ապրում է Նարեկ ու Տոմար կարողով, իր աշակերտը՝ Տէր Մարութէն, եւ վերջապէս Զաջ Թաթոսը, որ ջութեպան է: Մակարը իմաստասիրական հակումներ ունի եւ հարցատէր է, բանգէտ. իր մօտ են քերում բոլոր դատերը. իր հիմնական համոզումն է, «թէ չարին մէջ միշտ կայ բարին»: լաւատես է:

Ջատկի ուրբաթ օրը վանքի մաքին մտնում է Ժամ. բարձրանում սեղան. հաւարն ընկնում է գիւղ ու դաշտ. Տէր Մարութէն բռնում է մաքու ազին, իսկ հաւարի եկածները զարկում են մաքուն, մաքին, պոչը բողնելով Տէրտէրի ձեռքին, փախչում է, ետեւն ընկած հալածում են. նա ելնում է վանքի կտուրը եւ կորչում, բայց մինչ այդ՝ գողանում ու կլլում է գիւղի անգին խաչը: Տէրտէրը խրատում է, որ գուր չը հետապնդեն, քանի որ չեն կարող բռնել մաքին, երբ որ ետին չունի ազի: Դրսէն հասած գիւղացիք, լսելով այս բօքը, սրտաբեկ մտածում են, թէ իրենք մնացին անօգնական, իրենց բարիքն ու խիճող պիտի չքանան: Մէկն առաջարկում է իրեն բուղբ տան՝ գնայ գտնի ջորեպան Թաթոսին:

Թէ վիշապ է եղ գող մաքին, Թաթոսն է պէտք՝ թուրը ձեռքին. մի ուրիշն առաջարկում է դիմել Մակարին՝ իմանալու, թէ ինչ է գալու իրենց գլխին: Մեծ ու փոքր գնում են Մակարին. ի՞նչ կայ. տափի կռի՞ւ Մոլլա գիւղի հետ: Յայտնում են պատահածը, լաւ է, ասում է, որ մաքին է կլլել խաչը. եթէ խաչը մտնէր մաքու փոքր, վերջին դատաստանի օրը հասած կը լիներ: Խաչի հրաշքն այն է, որ ազին փրթած է: Մակարին խենթ կը համարեն, բայց նա ասում է. հիմա մի մաքի կայ, որ ազի չունի, որով գտնելը կարելի է: Հաւատքը վերահաստատում է Մակարի խելքի մասին: Մակար ասում է՝ պէտք է հիմա հին տոմարին հետեւենք. կարդում է հատուածներ, տալիս է յայտեր եւ աղետների գուշակութիւններ: Մի պառաւ, գալիքի դէմ անգօր, յիշում է իր «արդար» մարդուն. մի ուրիշը այդ

արդարին համարում է իր իշի գողը. սկսում է մի կազ\* ու կռիւ եւ տուր ու դմփոց. մի ուրիշը իր պարտքն է պահանջում, քանի որ աշխարհը պիտի փլի: Տէր Մարութէն աղօթում է, որ շուտ գտնեն մաքին անբան: Ամբոխը հանդարտում է. Մակար յոյսեր է տալիս. երբ խեղճեանինը լուսնի վրայ հաջէ, եւ եզների պոչերը յանկարծ ընկնեն, այն ժամանակ է աշխարհի վերջը. աղօթքն եւ աղմուկը զուր է. գնացէք, քնեցէք. կէս գիշերին արթնցէք, որովհետեւ մաքին պիտի գայ իր ազին գտնելու: Գեղացիք կ'երթան տները, որ լուսարացին ելնեն ու մի լաւ դաս տան մաքուն:

\*\*\*

Երբ երազի մէջ գիւղացիք գող մաքիի դիակը կը քաշէին վեր, որ բում էր վանքի չափ, գիւղի կատունները մսի հոտ են առնում: Երբ կատունները չեն հաւատում, զի պաս է. եւ գրոյց են անում ու մարդու մասին կարծիքներ յայտնում, երբ իրենք եւս զգում են հոտն ու խառնուում արշաւին այն կատուի յետեից, որ Տէրտէրի անից փայտնում է մաքու ազին: Տէրտէրը հաւար է կանչում, թէ մաքին իր ազին տարել է. գեղացիք, վա՛յ կանչելով, որոշում են «հողքը փորին վանքի մաքուն»: Տէրտէրն ասում է, թէ իրենց շունը դէպի լեռ կը հաջէր, մի ուրիշ գիւղացի, զովելով իրենց շունը, ասում է, որ նա դէպի այգին կը հաջէր: Մի վէճ, թէ որ կողմ երթան՝ արեւելք, թէ արեւմուտք: Աղմուկի մէջ չեն նկատում Թաթոսի գիւղ մտնելը: Վանքի լապտերը կախում են Տէրտէրի իշի վզին, տէրտէրը մտում է, եւ գեղացոց մի մասը գնում է Տէր Մարութի շան հաջած կողմը: Թաթոսը, լսելով եղածը, մտածում է, որ դեւի հետ կռիւ պիտի ունենայ, որ կը մօտենայ Իրանի սահմաններէն, սա մաքու բան չէ: Եւ կը պահանջէ իր յուռութքները, կինը կու լայ, Թաթոսը կը զինուի.

- Կեսնք ըսածդ մի պայքար է. կ'ատեն, կնիկ, ով տկար է. պիտի տեսնեն, թէ Չոր գիւղն ունի Իսկենտէրի մմանը, Թաթոս ծնաւ կռուի համար. կռիւ վանքի խաչի համար, արդարութեան, իրաւունքի, մարդոց համար: Կռուին համար չեն մտախր լար, երբ կռիւն է արդարութեան, ուժին համար:

Գեղացիք զալիս ասում են, թէ՛ Թաթոս, ո՞ւր եւ. գիւղը Տէրտէրի շան հաջած ճամբով է գնում. Թաթոսն իսկոյն մտում է ձին եւ կանչում, որ կանգ առնեն. եւ մի ճառ կը խօսի, թէ արար աշխարհի ձեզ է նայում այսօր. այս կռուից յետոյ խաղաղութիւն պիտի իջնէ աշխարհին: Գեղացիք հարցնում են, թէ այդ ի՞նչ հզօր չարք է, որի մասին լուր չունեն: Չար ու բարիի կռիւն է, ասում է. դեւի արիւն պիտի հոսի. դեւերն են խաչը տարած. պատուհասներ պիտի գան, եթէ հանդուրժէք չարիքին: Գեղացիք

գովքը կ'անեն Թաթոսի եւ կռուի ճամբան կը հարցնեն: Մրապի շան հաջած կողմը պէտք է գնալ: Տէրտէրը միջամտում է իր շան պատիւը փրկելու: Հետեւեանք խաղաղ ճամբի, որ խաղաղութեան կը տանի: Մէկը հարցում կ'ընէ, թէ մաքին ինչպէս պիտի բռնենք, քանի որ ազի չունի. հաւատացէք միայն, եթէ խաչն ուտէ, մի նոր ազի կը բուսցնէ: Թաթոսը կ'առարկէ. տեսնուած չէ, որ աղօթքով բացուին բերդի երկաթ դռներն հսկայական, եթէ չըլլան զօրք, զօրական. խաչին կտառո՞ւտուրն է դրած: Ժողովուրդը բաժնուում է երկուսի՝ Թաթոսի եւ Տէրտէրի յետեից: Մինչդեռ գող կատուն զանգատան մէջ կը կրծէր մաքու ազին:

\*\*\*

Առասպելական չափերով կը ներկայացուի Թաթոսի երթը. Թոմաս անունով մէկը կ'ըսէ, թէ պառաւի կորեկի արտն ենք մտած, Թաթոս կը սաստէ՝ ասելով, թէ դեւերի սահմանն ենք մտել. ուրիշներ կը զգան նրանց թեւերի շարժը: Թաթոս կ'ըսէ, որ շիտակ նպատակին դիմեն. չը տարուին կին ու ոսկիի, դեւերի խաղէն չսարսին, Թոմաս նոյն կարծիքին է, բայց ասպեռները Թաթոսին են հետեւում: Մենք զալիքն ենք, ասում է նա, - նոր ապագայ պիտի կերտենք: Մութին մէջ կ'երեւան արատավոր կերպարանքներ, մի խաչ, որ նման է խաղաղութեան, հնգտաննի մի կենդանի, որ հայրենիքի նման է, մի ալեմարմին կենդանի, որ 40 ձու կ'առնէր, քանի որ անուկոր էր եւ նման էր արդարութեան: Լսում է շան հաջոց, Թոմասն ասում է՝ Մոլլա գիւղի սահմանն ենք մտել. շունը է շան հաջոց, Թոմասն ասում է՝ Մոլլա գիւղի սահմանն ենք մտել. շունը Մոլլի հովիւների շունն է: Բայց նրա ձայնը կորչում է աղմուկի մէջ: Երեւում է կենդանու մի կերպարանք. Թոմասն իսկ վախենում է, Թաթոս՝ յարձակում, վանքի պատկերներն աղօթում են, որ Թաթոսը յաջողի. զարկում է Թաթոսը, կենդանին ընկնում է. ասպեռներն ընկնում են գետին, ոճանք վազում են լուր տանելու, մի ուրիշն էլ, ձին քարս նստած, շտապում է լուր տալ Տէրտէրին: Հեղինակը բողոքում է, որ դեւի գողութիւնը կտրեն, կաշին մաշկեն. պատմագիրները պիտի գրեն այս մասին՝ շատ խնդիրներ իւղելով եւ շատ բան մոռնալով, իսկ Թաթոսը եթէ սին՝ շատ խնդիրներ իւղելով եւ շատ բան մոռնալով, իսկ Թաթոսը եթէ գրէր, պիտի ասէր՝ ես դեւի դէմ ելայ, որ եօթ կանգուն պոչ ունէր, քիթէրէն կարմիր-կանաչ բոց էր ելնում, եթէ չհասնէի, պիտի աշխարհ վառէր, եօթ երկաթի կտառո՞ւտուրն ունէր, որով աշխարհ պիտի խառնէր, եթէ չհասնէի. ո՛չ գանգի բլուր կազմեցի, ո՛չ մարտ ու մատ արիւնեցի. երկու զարկով տապալեցի եւ նոր աշխարհ պարգևեցի, ողջոյն տէրին ու տկոյրին, զալիք ալիք սերունդներուն: Հեղինակը հիմա կ'ուզէ տեսնել, թէ ինչ եղաւ Տէրտէրի խումբը:



նալ, եւ նման էր մարտիին. պիտի ուսենք քեզ, Մակար, եթէ չփախչես: Անդունդ կ'իջնայ, դուրս կու գայ. իրենց եկեղեցու տանիքէն կը ցատկի, կատարած ոգու քերտին մէջ կ'ընկնի եւ վիզը խածնելու ցաւէն կ'արթննայ եւ կը տեսնի, թէ աշխարհը զուր է. լոյ գուռնի ձեռն է իրական: Եւ կատարեալ լինելու համար պէտք է, որ Մոլլան եւս գայ եւ պարի մերոնց հետ. ուստի Թաթոս բող գնայ, Մոլլին քերի գուռնայով, որ տէրտէրի հետ պարեն. ժողովուրդը հաւանութիւն կը տայ: Տէր Մարութն եւս կ'ըսէ՝ եթէ դի չկայ, եւ Թաթոս սէր է քերել աշխարհին, այլեւս ինչի պէտք է Թուր Կէծէկին: Մակար՝ նոյն կարծիքին: Կանչում են՝ կեցցէ Թաթոս, որ վերացուց ատելութիւն, կռիւ ու քէն: Թաթոս իր սուրը դնում է Մակարի ոտքերի տակ եւ գուռնա առած՝ գնում է Մոլլին քերելու:

\*\*\*

Մոլլի գիւղի մոլլան էր՝ երեք անգամ Մէքքէ գնացած, ծառաներ, հարստութիւն: Թաթոս կ'երթայ, Տէրտէրը իր կինը կը հարցնէ. ասում են՝ կաղի հետ կը պարէր. կ'իմանայ, որ կինը հայելի գնած է կէս ոսկու, եւ դրամը վճարած է կաղը, կ'իմանայ, որ այգիներու կողմն են գնացել երկուսով. ինքն եւս կ'երթայ: Որ ծամանակ ձիաւորներ կ'երեւան, կը կարծեն՝ պարի կը գան: Մոլլան նախ ծառաները դրկած է՝ կը մտածեն, յետոյ ինքը պիտի գայ՝ «նոր աշխարհի յաղթանակը տօնելու»: Մակար կը դիմաւորէ՝ բարով եկաք ասելով. մէկը մի բուրք կը տայ եւ անմիջական պատասխան կ'ուզէ: Միտքն այն է, թէ իրենց սրբազան ջորին գիշերս մորթել են, եւ կը պահանջէր քառասուն տիկ ուշաքի սեր, տաւար, ձի եւ տասն աղջիկ՝ մէջքը բարակ: Աղմուկ եւ իրարանցում. ասպետներն ասում են, թէ իրենց այքով տեսած են դեր: Թաթոսն ի՞նչ պատասխան պիտի տայ, եթէ դուն է սպանուածը, ինչու Մոլլան կռուի կը գայ, ինչո՞ւ դեռ տէր ու ծառայ կայ: Կաղ հորքուրը կ'ըսէ՝ ինչո՞ւ մտան իմ տուն ու գողցան հաւերս. պառաւ տատը իր կոխտած արտի համար կ'անիծէ Թաթոսին եւ տեղը կը զարկէ ասպետի մը կռակին: Ասպետի կինը կը բռնի պառաւի մագրից, իրար կը զգեն: Կը հասնին ազգականներ, եւ տուր ու դմիտը կը սկսի: Տէր Մարութն, եւս կաղին բռնած, կը գլտորուին դէպի գիւղ. երէց-կինը վերէն կը դիտէ՝ կուրծքը բաց: Եօթ գիւղերի բազմութիւնը կը ցրուի խուճապահար: Մակարը մինակ կը մնայ գիւղից դուրս եւ կը տեսնի դօլամների հեռանալը: Կը մտածէ, թէ՛ եթէ Աստուած մարդու կերպարանքով երեւաց՝ մարդկութիւնը փրկելու, ինչու դերը չէր կարող ջորու կամ մարու կերպարանքով երեւալ, որ աշխարհը չարին մատնէ: Եւ դիմացի ծառը փոխում, դառնում է մարու ոգին: Դ՞ո՞ւ այստեղ.՝ Ես ամեն տեղ եմ ասաւ,

(էջ 9, 41).- ո՞ր է խաչը, ո՞ր է մաքին.- խաչը սկիհին քովն է, ուր դրած էր Տէրտէրը, իսկ մաքին Թորկանց մարագն ընկաւ բաց երդիկէն: Կ'ուզէ պառալ Մակարը, ձայնը չի դուրս գայ.

- Ուշ է,- ասում է ոգին:

Խաչին իմաստը իր վախճանին մէջ է, Մակար,

Տես, թէ ինչքա՞ն լաւ եմ սարքել խաղն էս ծանօթ եւ միշտ օտար:

- Ի՞նչ կայ կալատեղը,- կը հարցնէ Մակար,- լաւ չեմ տեսներ: Ոգին ասում է, որ Թաթոսի հետ գնացողներէն մէկն է վերադարձած՝ իր կտրած ականջը ձեռքին: Տեսնենք Թաթոսի եւ Չոր գիւղի վախճանը (43):

\*\*\*

Ընդարձակ քերթուած, 126 էջ, 4400 կարճ ու երկար տող, չափական, հարուստ յանգերով, գաւառախառն հայերէնով եւ ռամկական սրամտութեամբ: Դիցազներգութիւն գլխավայր, ուր դիցազնացուները ծաղրի ենթարկուած են: Մի բանդագուշանք, ուր իրական գծեր հիւսուած են անչափակից եւ մտացածին դիպուածների՝ յօրինելով մի բռն ու բռն, ուր դիպուածներ, մարդ եւ անասուն, ներկայ եւ անցեալ, իրական եւ առասպելական խառնակոյտ քաւալում են «յապուշ կրթելով» ընթերցողին ու դիտողին:

Պէտք է կարգ հաստատել քառսի մէջ:

Երբ չափակցութիւն կայ, արուեստի գործը ներդաշնակ զգացում է տեղծում. մեծ արձան, տաճար, նաեւ փոքր չափ՝ նայած դիտողի տարողութեան: Նաեւ չափ, զեղջում, երկու նկար, պարզ գիծ: Այստեղ չկայ այդ չափակցութիւնը, բայց կատակերգութիւն, ուրեմն՝ ներելի խանգարում, զի տգեղն ու ծաղրականը չափի խանգարում: Բայց այստեղ նոյնպէս մի տող չափ: Չափի զգացումը պակաս. իր բնոյթն է, մասնակին է յօրինում. պատկեր, հատուած, ամբողջութիւնը թերի ու երկու պատճառ՝ անգօրութիւն իշխելու միտքին. ճաշակի թերութիւն. երկուսն եւս կան: Չափազանցութիւն. «Ոհ կարի է առասպելս, այլ եւ առասպելեաց առասպել» (Տորք): Գիւղացիք չեն նկատում, որ մօտ են գիւղին, ջորին դի են համարում. մաքին, կարծում են, միայն պոչից կը բռնուի, եւ այլն: Անսանձ երեւակայութիւն:

Իբրէն, «Պէր Գիւնա»: Աններդաշնակ տպաւորութիւն, զի շատ բարձր միջ ուսմիկ միջոցներով. որքան եւ ձգտում ներդաշնակելու՝ բայց մի տեղ ճառուտ, մի այլ տեղ՝ Կեսար, եւ տրոււմ է Մակարին իմացական խեղճութիւն: Ընդհանրապէս՝ վաղածին, ո՛չ վիժած, բայց ո՛չ լիովին ողջածին:

Պարզենք մի քանի խնդիրներ: Անձերը, ընդհանուր առմամբ, լաւ գծուած, բայց ոչ հաւար եւ կարկառուն: Երեք են՝ Մակար, Տէր Մարութ,

Թաթոս. Մակարն ապրած է կեանքը, ջուկիակ, քաշուած կատուի հետ. Նարեկ ու Տոմար է կարդում. դատերն իր սօտ են գալիս. գիւղի բանգւտն է, գրոց-բրոցը. իր հիմնական գիծը լաւատեսութիւնն է. միտքը կը խլրախ՝ անհաղորդ գիտութեան. իր հարցումներն ու վճիռներ՝ անմշակ ուղեղի արդիւնք, բայց խախտուած հաւատք. չարի մարմնացումը, ազատ միտք կրօնից, բայց այլապէս նախապաշար: Լոկ գուռնի ձայնն է իրական: Տէր Մարութն Մակարի աշակերտն է եւ ոչ առաւել, քան զվարդապետ իւր. յարած է խաչին, իր պաշտօնին, իր կնոջ. համակերպում է ժողովուրդի պահանջին, որոշ մտայնութիւն ունի. խաչի ճամբան տանում է խաղաղութեան առանց պայքարի, բայց ամուր չէ իր կարծիքների մէջ. ինքն եւս մի գիւղացի. էշի բնագոյնն է հետեւում. հաւատում է աստուածային միջամտութեան եւ աղօտ լապտերն ունի առաջնորդ: Հանրային ցնծութեան մէջ՝ իր կիներն է տանում, հանրային դժբախտութեան ժամանակ՝ իր կիներն է հետապնդում. շատ գիւղացիների նման իր գործն է կարեւոր նկատում, բայց գերագոյն վայրկեանին զոհողութեան պատրաստ է՝ աչքը յետ ձգած, ոչ բոլորանուէր: Իր շան բնագոյնն իսկ պաշտպանում է, ինչպէս իր տեսակէտը, բայց չի պարտադրում;

Թաթոսը ծեր է, բայց նա ոգի ունի. յեղափոխական, գիւղի պայքարի առաջնորդն է տափի կուռն. նաեւ մաքին հետապնդելիս, կարծում է, որ սուրն անհրաժեշտ է եւ խաչի յեմակն է: Բայց վառ երեւակայութիւն ունի եւ ցնորական չափազանցութիւն, իրականի անհարկի արժեքատրում. մաքին չէ, այլ դերը, ուստի շեղում հանրային գործի. դեւին յաղթել՝ աշխարհում նոր կարգ ստեղծելու համար. ներշնչում եւ հիքնոսում է. կասկածամիտը դառնում է հաւատացեալ. Թոմաս մեռնում է այն հաւատքով, թէ վերջին զոհն է մարդկային համերաշխութեան, գիտէ իր կշիռն ու արժեքը եւ ցուցադրում է պարծանքով. սիրում է իր կինը, բայց հանրային գործի առջեւ թողնում է: Չուտ գաղափարականն է, զգուշացում ուկուց ու կնկից, անձնական շահից: Քաջ է եւ խիզախ: Յնորքների մէջ է ապրում, Դոնքիշտո, ուստի զենքը թողնում է՝ հաւատացած, թէ ամէն ինչ լաւ է:

Մեծագոյն դերակատարը ժողովուրդն է. յեղեղուկ՝ վերջին խօսքին կառչող. Մակարը բոպէից բոպէ խենթ եւ իմաստուն. հանրային բնագոյնից գուրկ չէ լիովին, բայց միաբան չէ. մարտունակը Թաթոսին, հնաւանդը Տէրտէրին. պարս է թագուհու շուրջը: Անձնական գործը երբեք չմտցողների մի լայն խաւ. միշտ մանր կռուի պատրաստ տարեր, մանաւանդ պառաւները, յաջողութեան՝ ովսաննա, ձախտողութեան՝ ծաղր եւ մանր հաշիւներ. կորեկ, հաւեր: Այդպէս գիւղը, իսկ հանրութիւնը՝ գիւղերը, յաջողութեան ժամանակ միասին. օգտագործողների դաս

ամէն դէպքում, փորձանքի ժամանակ փոշիացում եւ խելահեղ խուճապ: Ողջամտութեան ցուքեր, բայց անգոր վարակիչ հոսանքի դէմ. վարակման ենթակայ: Ողջամտութեան պակաս հանրային գործերի մէջ, զի՝ դիրահաւան:

Երկու կին կան, Տէրտէրի կինը, որ մտահոգ է ուշացումից, հակամեծամբան ծռելու՝ պայմանով, որ կարեկցարար եւ պատշաճօրէն մոտենաս ու համոզես. Թաթոսի կինը, որ վախ ունի պայքարէն, բայց ցնծում է յաղթանակի ժամանակ: Աւանդապէս ստորադաս: Խեղճ ու կրակ բազմութիւն, որ ունի հանրային զանգուածի բնագոյական ցայտքեր, բայց անգոր բնագոյներ. սահմանափակ մտքով, շահերով, կազմակերպական կարողութեամբ, իրատեսութեամբ, հանրային պաշտպանութեան բնագոյով. լաւագոյնները ցնորական երագների հետամուտ, իրականը ցնորականի վերածող, անկառավար երեւակայութեամբ, բայց պատրաստ անձնութեան ի բնէ կամ ի պահանջել հարկին. իսկ ոչ ընտրանին անձնական շահի անձնատուր, կռուազան, երբեմն ընդունակ հանրային գործի յարելու, բայց թուլակի՝ միշտ պատրաստ խուճապի եւ դասարկութեան:

Գործի կշիռը կը մեծնայ, եթէ նկատենք, որ Հայոց ազգն է այստեղ. ժողովուրդը, յեղափոխականը, հոգեւորականը, բանգւտը:

Սովորական մի դիպում ստանում է յիմարական մեկնութիւն եւ ցնորական չափեր եւ ստեղծում է աղէտ: Չոր գեղն աւեր է, ինչպէս Հայաստանը. Թաթոսը (իմա՝ յեղափոխութիւնը), վիշապ զարկել կարծելով եւ եղբայրութիւն հաստատելով, Չոր գեղն աւերեց: Կարծելով խաչը կլլած, որ սակայն իր տեղն էր, ահագին թոհ ու բոհ սարքեցին եւ դատարկ մնացին: Խելքի՞ նկան. ո՛չ. դեռ շարունակում են նոյնը:

Բայց ողբերգութիւնը նուաստութիւն կը լինէր, եթէ մերը լինէր: Չոր գեղն ունի եւ իր վերին կարգի Մակարը, որ մտածում է աշխարհի բաները. Համաստեղ: Չոր գեղն է միայն, որ մաքին գտնելու փոխարէն Թաթոսը վրիպում է նպատակից ու գործից՝ դեւ հետապնդելով եւ ջորի սպանելով եւ աղէտ բերելով. եւ Տէրտէրը՝ կիսաճամբին մնալով. զի յայտնի չէ, թէ ուր կը տանէր, նա ինքը ցնորական ըմբռումի հետամուտ եղաւ (կաթողիկոս եւ այլն): Մարդկութեան ճակատագիրն է: Հեթանոս թէ քրիստոնեայ՝ տամուքի հետամուտ եւ կռուի մէջ են՝ յանուն ցնորական նպատակների՝ խաղաղութիւն, հայրենիք, արդարութիւն: Երջանկագոյն մարդը պոչատրն էր, որ կուշտ էր եւ ծուլ էր խոշոր պոչի հետ. չուներ երագանք, նպատակներ, գաղափարներ. երբ պոչը կորաւ, նա հետամուտ է իր պոչի խա-

դին, շինում է, քանդում, պայքարում, ըմբոստանում. այդ խաղն անցած է նրա գլխի մէջ. նա ճիգ է քափում՝ կեանքի առեղծուածը լուծելու, մեծ գաղափարներ ծնելու, հետապնդելու, իրացնելու եւ խորտակելու շարունակ: Բուն իսկ այդ է իսկութիւնը, կեանք ու մահ, որ անմահութիւն է ինքնին: Ջուր յոգնութիւն, զի գուռնի ձայնն է իրական. եւ իրօք թո՛հ ու բո՛հի մէջ կաղն էր, որ վայելեց երեցկնոջ զգուանքը, եւ այդ մնաց իրական: Եւ կինը ստեղծուած է՝ երկնքի տեղը բռնելու մարդու հոգու մէջ: Հիասքափութեան մի ծնունդ է այս գործը՝ այնքան զօրաւոր, որ դուրս նետած է ժողովուրդի ըմբռնումից. զի պահանջների դասակարգումը այլ է՝ հաց, կին, արքայութիւնը քրացած է, եւ մնացած՝ հացն ու կինը. բայց իրօ՞ք երկինք չկայ, այսինքն՝ վերին ձգտում:

Կայ, բայց ցնորք ու յիմարական եւ արդիւնքն աւեր: Ժամանակը նպաստաւոր, հայկական յուսախարութիւն. թո՛հ ու բո՛հ, զո՛հ, ճիգ եւ աւեր Զոր զեղ: Ցափ պրկումը կատակերգութեան է վերածած: Բայց հայ մարդ է Համաստեղը՝ ինքն եւս ապրած եւ տառապած. ուստի սրբազան է կատակերգութիւնը, բայց մաքիական է տոմարը: Յարգանք ցնորքին՝ տառապած սրտից: Յուսախարութիւնը մղած է յուսահատութեան, հիասքափութիւնը՝ արժեքազրկում ամէն վերին ձգտումի, կեանքի խաղ է միայն, հոլովոյթի մի դրուագ, տիեզերքի մի դիպում: Ոչինչ կայ մեծագոյն եւ մեծարժեք, լոկ գուռնի ձայնն է իրական:

Բայց մի հարցում. հանգամանքնե՞րը ծնած են, թէ՞ ծնողի բնոյթն է սա եւ ոչ անհատի, այլ ազգի: Ահա հին աստուածներ՝ նոյնպէս ամէն ինչ անարժեք. գեղեցիկ կատակերգութիւն. ունայնութեան փոսի լեցում, զործեր՝ մեծ ու փոքր, որ ժամանց են, իբր ապրում, բայց ոչ իբր բացարձակ արժեք: Երազների, զգացումների, տառապանքի եւ վայելքի լայն հոսանք ի սկզբանէ եւ առ յապա: Վերջին իմաստութիւն՝ ունայնութիւն ունայնութեանց եւ յօժարութիւն հոգոյ: Գիտենք ծերի վերաբերումը մանուկի խաղին, պատանու խանդավառութիւնը երիտասարդի եռանդազին զործի հանդէպ՝ անմասնակից, վերէն վար քամահրանք, քարեմիտ հեզանք ու ծաղր, յուշեր իր կեանքէն եւ խուլ խլրտում. մտածում, թէ գնում են դէպի փոս: Ծերացա՞ծ է մեր ազգը, որ տեսանողը ծերի աչքով է նայում աշխարհքին. ահա հարցումը՝ մտածել: Ահա եւ երկու գուգահեռ. ծերը նայում է եւ վերապրումով հասկանում, իսկ մանուկն ու պատանին եւ առողջ հոգին ապրում է, բայց չի վերապրում. ասա սերն անցաւոր է, բայց այնքա՞ն թովիչ է սէրը... Եւ միւս գուգահեռ. մեծագոյն յոռետեսները՝ հրէայ, Ս. Գիբք, բայց եւ մեծ երագողներ եւ հաւատքի մարդիկ:

Հաւատքից պարպուածն է, որ ծերանում է: Ծե՞ր ենք ազգովին, թէ հաւատքից պարպուած: Նիւթ մտածութեան: Մի երկ, որ այսքան խորհրդածութեան նիւթ է տալիս, չի կարող անարժեք համարուել, թէկուզ եւ ունենայ անժխտելի թերիներ՝ իբր յօրինուածք եւ կատարում: Ոչ թէ իր միտքը, այլ բնագղն է զօրաւոր, եթէ նիւթին իշխել կարենար, եւ յղացքը հապունար, կարող էր դառնալ մի գլուխ գործոց: Այսօր նա մի ուշագրաւ երկ է միայն:



## ՀԱՄԱՍՏԵՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՈՆԵՐՈՒ ՍՐՆԳԱՀԱՐԸ

Լեւոն Շանթ

Համաստեղ կորսուած զգայարանք մը կը փնտռէ: Այդ զգայարանքին փնտռումը կը շեշտուի իր հերոսներէն Երանօս աղբօր միջոցով: Երբ Ամերիկայի մէջ ան երկրէն եկած թութը բերանը կը դնէ, յանկարծ կը զգայ, թէ կորսուած զգայարանք մը կը վերագտնէ: Թութին համը կը տարածուի անոր մարմնի մէջ, ու կը տեսնէ Երկիրը, կ'ապրի անոր գոյութիւնը:

Նոյնը կը պատահի «Հայաստանի լեռներու սրնգահարը» թատերախաղի հերոսներուն: Անոնք հայրենի լեռներու սրինգին ձայնով Երկիր կը փոխադրուին, անցեալի յիշատակներով կ'ապրին:

Ամերիկայի Մէյն նահանգի ազարակներէն մէկուն մէջ ապրող տիպարներէն Գրիգոր կը կարծէ, թէ խօսած է իրենց գիւղի ուստա Օհանին հետ: Անոր դրացին՝ Մարգարը, իր տեսած երազներուն մէջ յաճախ Երկիր կ'երթայ եւ վարժապետութիւն կ'ընէ: Մարգարի կինը՝ Մարթան, «Քիւրդ Իսազին» երգը լսելով, կը կարծէ, թէ իր ողորմած հոգի մայրը, գերեզմանէն ելելով, բոլոր տուները երգած ու նորէն գերեզման դարձած է: Մարգարին ու Մարթային աղջիկը՝ Մաթօն, կը խօսի մանկութեան յիշողութենէն եկող կարմիր կովուն մասին: Միակ տիպարը, որ սրինգի ձայնէն չազդուիր, Գրիգորի կինն է՝ Մարիամը: Ան մտահոգ է առօրեայով, ազարակով, պանքայի մարդով: Զգայնութիւնները հեռու են իրմէ. երբեք չի լսեր սրինգի ձայնը ու չ'երագեր:

Իրականութեան ու երագի մէջ տուայտող տիպարները կը փորձեն փախչիլ կեանքի տժգոյն երեսէն՝ ականջալուր ըլլալով իրենց հոգիներուն մէջ արձագանգող կարօտի ձայնին: Երաժշտութիւնը թատերախաղին առանցքային տարրն է, որուն միջոցով կը կատարուի հոգեվիճակներու զարգացումը, որ կը յանգի հերոսներուն դէպի Երկիր երագային երթին:

Համաստեղ, թատերական վայրի, ժամանակի ու շարժումի դասակարգումը ընդունուած օրենքներէն շեղելով, կը յաջողի ստեղծել հերոսներուն հոգեվիճակն ու ցանկութիւնները մարմնատրոյ պահեր: Հակադրութիւնը, քայտումը կը ստեղծուի մարդու եւ միջավայրի աներդաշնակութենէն: Անոր համար չկայ ժամանակ ու հեռաւորութիւն: Անցեալը միաձուլուած է ներկային, իսկ Ամերիկա ապրող հայրերին երբեք զիբեք շատ մօտ կը զգան հայրենի լեռներուն: Արտաքին շարժումը շատ քիչ է. յատ-

կանչական է ներքին շարժումը՝ խօսուն, զգայացունց, առիքնող պատկերներով փոխանցուած:

\*\*\*

Համաստեղ ունի հակումը ստեղծելու վերացական պահեր իրապաշտ աշխարհի մը մէջ: Գերբնական ուժերով ստեղծուած մթնոլորտը կարմիր թելի նման կ'երկարի անոր գործերուն մէջ: Ոգեպաշտութիւնը կը դառնայ հիմնական եզրը այդ մթնոլորտին: Ան տարրեր երեսներով երեսան կու գայ տարրեր երկերու մէջ ու կը ստեղծէ կեանքի տրամը: Համաստեղ կը հաւատայ, թէ ժողովուրդէն ծնած ու ժողովուրդը ղեկավարող այդ անտեսանելի ուժերը թոյլք կու տան մարդուն ու կ'երկարաձգեն անոր մահը:

Ոգին կը ներկայանայ մերք «Այծետոմար»ին մէջ՝ Մակարի հետ գրոյցի ընթացքին, մերք Այծետոմարու կերպարով «Հայաստանի լեռներու սրնգահար»ին մէջ, մերք Աստուայ պատկերով «Աղօթարան»ին մէջ եւ ընդհանրապէս հայ ժողովուրդի ոգեղէն արժէքներով:

Այծետոմարը «Հայաստանի լեռներու սրնգահար»ին զխաւոր տիպարն է, որ կը նոյնանայ իբրեւ օգնական ազարակ եկող Վարդանի տիպարին հետ: Վարդանի սրինգին ձայնը լսելով՝ Հայաստանի լեռներէն եկած այդ մարդերը կը կարծեն տեսնել Հայաստանի լեռներու ոգին՝ Այծետոմարը:

Այծետոմարը դիցաբանական Պանն է՝ այծի ոտքերով ու եղջիրներով եւ երկար մօրուքով աստուածութիւնը, որ կը շրջագայի անտառներուն մէջ ու իբրեւ հովիտ կը նուագէ իր սրինգը: Պանը կը պարէ յաւերժահարսերուն հետ ու կը հեռանայ կէսօրուան տաքին՝ հանգստանալու համար: Այդ ժամուն վտանգաւոր է անոր անդորրը խանգարելը: Պոթեկացող խառնուածքի տէր է ան, ցասման մէջ կրնայ ծանր ու տանջալից երագ առաքել, կրնայ պանական վախ առաջացնել:

Համաստեղ ընտրած է Պանը՝ Այծետոմարը, որովհետեւ ան կը հաւատայ, թէ մարդուն մէջ գոյ է կենդանին: Կը սիրէ այծը՝ իբրեւ Հայաստանի լեռները խորհրդանշող կենդանի: Այծը՝ նկարուած հսկայ սուրի վրայ, կը մարմնաւորէ ամպրոպ՝ կայծակի աստուածութիւնը, որ կը կապուի հայկական դիցազնավէպի Թուր կեծակիի հասկացողութեան: Պանի ու հայ ժողովուրդի դարաւոր անցեալին առնչուող այս նոյնութիւնները ընդհանրապէս կը յայտնաբերեն Այծետոմարուն արտաքին յատկանիշները: Գալով նկարագրային գիծերու բնորոշումին՝ յատկանշականը Այծետոմարուն մօտ, հոգիի բարութեան կողքին, այն յանկարծակի գայրոյթն է, որմէ կը սարսափին նոյնիսկ բանակներ: Պէտք չէ գրգռել զայն: Այդպէս է եղեր սարսափին նոյնիսկ բանակներ: Պէտք չէ գրգռել զայն: Այդպէս է եղեր մահու մեր ժողովուրդին նկարագիրը պատմութեան ընթացքին. վկայ Մա-

սունցի Դաիթն ու «Սպիտակ Չիաւոր»ի Մարտիկը: Երկուքն ալ առաւ-  
պելական տիպարներ՝ որք ու խաշնարած, որոնք ճակատագրական պա-  
հուն գիտեն անհաւասար ուժերու դէմ պայքարիլ ու իրենց զայրոյթով քա-  
նակներ սարսափեցնել:

«Հայաստանի լեռներու սրնգահարը» քատերախաղին մէջ Այծեմար-  
դը կը զայրանայ, երբ օտար արիւնքով փրայ ապրող հայ մարդոց հոգիներ-  
ուն մէջ կը տկարանայ հայրենիքի կարօտի զգացումը: Ան հայրենի լեռ-  
ներու ոգին է, որ իր ցասման մէջ ծանր ու տանջալից երազ կ'առաքէ ու  
արթնութեան կը մղէ մեզ:

Համաստեղ Հայաստանի լեռներուն սրնգահարն է, Այծեմարդն է, որ  
մեր հոգիներուն մէջ վառ կը պահէ հայրենիքի կարօտը:

## ՀԱՄԱՍՏԵՂ

Երուարդ Պոյաճեան

Հայ լեզուն քարութեամբ, վարպետութեամբ եւ վերջին ծայր ազնւ-  
ութեամբ գործածող գրագէտ մըն է Համաստեղ: Գիղագիր ըսին իրեն  
համար: Չայն առաւել արժեւորելու բոլորովին պարկեշտ մտահոգու-  
թեամբ մը կոչեցին քարձրարժէք գիղագիր, սքանչելի գիղագիր:

Բարեբախտաբար, տարիներու մնան անուանումն մը ետք, գրական  
աւելի լայն ըմբռնումի տէր դատողներ անդրադարձան, որ «գիղագիր»ը  
քիչ է այս խորք ու տարողութիւն ունեցող գրագէտին համար, որ սահմա-  
նափակ յորջորջում մըն է ատիկա, գրագէտին տաղանդը տեղեկանացնե-  
լու միտում պարունակող քան մը: Նշանաւոր գրագէտ մըն է, ըսին, եւ ոչ  
թէ գիղագիր մը: Առաջին անուանումը՝ սխալ եւ այս վերջինը աւելի ճիշդ  
կը թուի ինձի:

Համաստեղ, իր տաղանդին գիծերուն մէջ մտած, հոն ամբօրէն հաս-  
տատուած գրագէտն է այլեւս: Իր պատուանդանը արժանաւորապէս ու-  
նեցող արուեստագէտը, տէ՛րը անոր: Կեցած է գրական ու քարոյական  
ամուր խարխիսի մը վրայ՝ պայծառ ուժի մը պէս՝ առողջ գօրութիւն մը իր-  
քեւ: Հրթիռագիտութեան լեզուով՝ անոր տաղանդը ասկէ արդէն քառորդ  
դար մը առաջ մտած էր իր ծիրին մէջ՝ ազատօրէն քաւալելու համար մեր  
գրականութեան երկնակամարին վրայ:

\*\*\*

Զգացումներով հարուստ է՝ երիտասարդութեան վաղ շրջանէն  
արեւմտեան կիսագունդի մեծագոյն ժողովրդավարութեան մէջ քնակու-  
թիւն հաստատած այս պանդուխտ փերչէնճիւն (Խարքերդ)՝ միջնադար-  
եան տաղասացի մը չափ եւ իմաստուն, պարզ ու հանդարտ, իր լեզուա-  
կան խորքով՝ առակախօսի մը հետ շփոթուելու աստիճան: Իր գործերուն  
լեզուական կահաւորումն այնքան պարզ է, ժուժկալ, չափազանցութիւն-  
ներէ եւ սեթեւեթ բոլորովին հեռու: Ծովաց աշխարհի այս վերջին մեծ  
ներկայացուցիչը իր սրտով Զուչակ մըն է, Յովհաննէս Թլկուրանցի մը,  
Կոտանդին Երզնկացի մը, մօտաւորապէս Մայաթ-Նովա մը: Իր արտա-  
յայտութեան պարզութեամբ, միասնական խոհով ու խորութեամբ՝ Վար-  
դան Այգեկցի մըն է ան, հայ Լաֆոնթէն մը, Հայոց քսաներորդ դարու աշ-  
խարհի Մողմուն Իմաստուն մը (Առակներու եւ Երգ-երգոցի) մօտաւորա-

պէս: Այս բոլորը իր մէջ ցրուած սակայն, միացած եւ ճուրուած ամբողջի մը հետ, որ արտաքին չէ, ներքին է: Իր առանձին գործերէն չեն բխիր ասոնք, այլ կը կռահուին ու կը բիրեղանան տակաւ մեր մէջ իր գործին ամբողջութենէն: Ամբողջութիւն, որ կրկնակ եւ հակոտնեայ փլաններու վրայ կը ճարտարապետութի խորքով աշուղական կեդրոնաձիգ գոյութեամբ մը: Չեմով՝ առարկային պարզութեան իր տեսական ձգտումով:

Համաստեղի պէս աշուղականին դրացի ախորժակներով, իսկ արտա-յայտութեան եղանակով առարկային պարզութեան հասած ուրիշ հեղինակ մը եւս ունեցած է մեր գրականութիւնը հայութեան արեւելեան հատուածին մէջ՝ Յովհաննէս Թումանեան անունով: Արուեստի քանի մը կողմերով շատ մօտ են իրարու քսաներորդ դարու առաջին քառորդի վերջերուն մեռած եւ անմահացած Ամենայն Հայոց բանաստեղծը ու գրեթէ նոյն տարիներուն գրականօրէն ծնունդ առած ամենայն հայոց բարի «գիւղագիր»ը՝ Համաստեղ:

Համաստեղ արձակով կը հասնի պարզութեան այն գեղարուեստական լրումին, որուն հասած էր իրմէ առաջ Լոռիի փիլիսոփայ աշուղը ռուսաճարով:

Ո՛չ Համաստեղ եւ ո՛չ ալ Թումանեան կը հաւատան գիրքերէ եւ դպրոցներէ բերուած գրական պաճուճանքին: Գրքին հոռը բացակայ է անոնց ստեղծագործութեանց մէջ: Ո՛չ մէկ հատորի ոչ մէկ յոռի ստուեր: Խոյս կու տան ամէն անգամ, որ հարկը ծագի, աւելորդաբանութենէ, գրական փայլուն շատախօսութիւններէ, ոսկեգօծ արտայայտութիւններէ: Չեն վստահիր բառերու վերելակին: Եւ ոչ ալ՝ մեծ պարբերութիւններով խորութիւն ստեղծելու ունայնամտութեան: Իբրեւ գրող՝ անոնք կը քալեն ու կը մեծնան միայն ու միայն տիպարին տեսիլքով, տիպարին կենցաղով, տիպարին ետին կեցած ժողովուրդով ու ատոր հոգեբանութեամբ ու քարքով: Կ'աշակերտեն երկուքն ալ ծայրագոյն պարկեշտութեամբ մը, բնականութեամբ մը եւ ազնուութիւնով՝ ժողովրդային գեղագիտութեան, անոր բարձր ներկայացուցիչը ըլլալուն արդար հպարտութիւնը փնտռելով ամէն բանէ առաջ ու վերջ: Որեւէ գեղեցկութեան եւ արուեստի արժանատր կեցուածքի համար կը դիմեն բոլոր գիրքերէն ու գրադարաններէն աւելի հարուստ եղող հայ ժողովուրդի հոգիին ու ստեղծագործութեան:

\*\*\*

Համաստեղի ամբողջ գրականութիւնը՝ «Գիւղը», «Անձրելը», «Մայր-տակ Չիաւորը», «Այծետոմարը» եւ այլն, կը համարեն հաւատարմոր եւ

ազնիւ հայ արուեստագէտի մը երկարատեւ ճիգը՝ իր ժողովուրդին բարի կողմը ցուցադրող: Բարի ու բերրի:

Մեր հոգիին նպաստատր կողմին, դրական կողմին, բանաստեղծական առաքինի կողմին գրագէտն է Համաստեղ ամէն բանէ առաջ: Իր ստեղծած տիպարները, գրեթէ առանց բացառութեան, հայկական ինքնատիպ եւ բազմարժանեղակ բարութիւնը արտայայտող մարդեր են, անձի դէմք կերտելէ աւելի պատմական եւ աշխարհագրական միջավայրի մը մէջ ուրոյն կեանք ապրող հաւաքականութեան մը դիմագիծը ներկայացնելու կոշտած կոտորակներ: Արդարեւ, զանազան անուններով մարդացած այդ տիպարները անջատ կեանք մը ապրող, անշուշտ անջատ վախճանի մը ճակատագրուած հայ գիւղացիներ են, որոնք սակայն բարութեան, աւանդութեան ու պարզամտութեան հասարակաց գիծով մը միացած են իրարու: Ժողովուրդի մը զաւակներուն բարութեան պահի մարմնացումն են Համաստեղի գրականութեան գրեթէ բոլոր կերպարները: Բարութեան այդ անկիւնէն դիտուած՝ երկուորեակի չափ անոնք նման են իրարու:

Ով որ այս հիմնաւոր ժողովուրդին բարի, արեւելեանօրէն քրիստոնեայ, խաղաղ, պարզ ու միամիտ դէմքը կ'ուզէ տեսնել, առանց Համաստեղի գիւղացիներուն թերի բան մը տեսած պիտի ըլլայ: Ամէն պարագայի տակ՝ ո՛չ ամբողջական, ո՛չ պայծառ բան մը:

Հայկական անսպառ բարութենէն Համաստեղ փոխ տուած է նաեւ կենդանիներուն, բոյսերուն, արեւին եւ համայն բնութեան:

Համաստեղի «Աղօթամատեան»ին մէջ յաճախադէպ պարբերականութեամբ մը ի յայտ եկող եւ ծայրէ ծայր անձնական ապրումներ արձանագրող հեթանոսականութիւնն իսկ հելլենական իր բնոյթով եւ համաստուածեան շեշտ հակումով՝ հայկական բարութիւնը, ազնուութիւնը, խոր արժանապատուութիւնը ունի իրեն իբրեւ խարիսխ: Ոչ միայն Համաստեղի քրիստոնէութիւնը, այլեւ հեթանոսութիւնն անգամ հեռու կը պահէ ինչպէս կեանքի բուռն արտայայտութիւններէն՝ բացատրել ուզելով մեզի կարծես ատով հայ հոգին, որ գոյացած ու կազմաւորուած է Արեւելքը Արեւմուտքին միացնող սահմանագծին վրայ նախ եւ ապա՝ հիսիսի ցուրտ ստեպն ու հարաւի տաք աւազուտները բարեխառնող լեռնահանգոյցի մը վրայ:

Հայը իր բոլոր երեսներով չէ, որ կը գտնենք Համաստեղի գրականութեան մէջ, այլ մէկ երեսով՝ լաւագոյն երեսով մը, անհրաժեշտ երեսով մը: Հայկական երգող, ուրախացող, տխրող, հեքեաք եւ իմաստութիւն պատմող նախահաստատ բարութիւնն է ատիկա, որ ամէնօրեայ իրականու-

թիւն ըլլալով հանդերձ՝ անցեալին նոսքալծին ալ կը բերէ մեզի առատ չափերով:

Մտքով չէ, որ կ'աշխատի Համաստեղ: Ոչ ալ կ'աշխատի սրտին հրամաններուն հպատակ տրամադրութեամբ մը: Բացակայ չեն անոնք ի հարկէ: Եւ կասկած չկայ, որ կը կատարեն կարեւոր դեր մը իր գրականութեան մէջ: Բայց Համաստեղի տաղանդին բուն վարիչը, դեկավարը ըսել կ'ուզեմ, նկարագիրն է: Անոր գրիչը կը տեսնենք աւելի հնազանդ եւ օժտուած՝ արուեստի եւ սիրոյ հանդէպ ամուր նկարագրի մը մատնետրուն մէջ:

Կան, որ իրենց սիրածին առջեւ շատախօս կը դառնան, ուրիշներ բնաւ չեն խօսիր: Իր սիրածին կամ սիրածներէն լաւ հասկցուելու համար Համաստեղ ընտրած է քիչ խօսելուն ձեւը: Մեր ժողովուրդին պէս է՝ լուրջ, քարի, զգայուն եւ սակաւախօս: Հայը քանի մը պայծառ քառով ամենէն խոր ու մաքուր, ամենէն ճակատագրական ու վերջնական երգերը կրցած է երգել մարդկութեան՝ հակառակ որ ամենէն ճոխ լեզուներէն է իրը: Իր ժողովուրդի արուեստի բնագոյնի հետեւելով՝ Համաստեղը՝ ծածկանունի մը տակ արդար համբաւի մը տիրացած Խարրերդի Փերչէնց գիւղի Համբարձում Կելէնեանը, ազգային մեծափարթամ լեզուի մը մուսազագոյն տարրերու գործածութեամբ յաջողած է իր ազգային արուեստի քանի մը հաշտալիքներ կտակել:

Համաստեղի ստեղծագործութեան թափը չէ կասած եւ չի կասիր: Պէտք չէ կասի, որովհետեւ, մանաւանդ այսօր, մենք ազգովին պէտք ունինք հայկական սրտապնդիչ քարութեան խօսքերու, տիպարներու, աղօթքի:

## ՅԱՆԱԶԱԲԱՆ՝

Մուշեղ Իշխան

Ոմանք կը սիրեն գաւառի գրականութեան ներկայացուցիչ կամ «գիւրգիր» կոչել Համաստեղը՝ հաւատարիմ մնալով գրական հին տարազի մը. ուրիշներ սահմանափակ եւ անճիշդ կը գտնեն այս բնորոշումը: Կարեւորը ամուսններն ու տարագները չեն անշուշտ, այլ մեր մշակոյթին ժառանգ ձգուած գործը:

Համաստեղ մեծարժէք գործի մը հեղինակն է, մեծ արուեստագէտ մը, գտարիւն գրագէտ մը:

Կէս դարէ ի վեր կանգուն է ահա մեր գրականութեան պատմէշին վրայ՝ վեճերէ հեռու, աղմուկներէ խոյս տալով, ինքն իր մէջ խորասույգ եւ ունկնդիր լոյ իր ներքին ձայնին՝ վերստեղծելու համար կեանքն ու աշխարհը արուեստի դիֆական գոյներով, երբեմն իբրեւ պատմուածք, երբեմն իբրեւ լայնաշունչ վէպ եւ երբեմն ալ արձակ կամ չափածոյ բանաստեղծութիւն:

Կարելի է վիճիլ Համաստեղի փորձած գրական բազմաթիւ սեռերու համեմատական յաջողութեան շուրջ, բայց կարելի չէ չխոստովանիլ, թէ ամենուն մէջ ալ ներկայ է ինք, այսինքն՝ ներկայ է ցորենի արտերուն վրայ փռուած քարութեամբ եւ պայծառութեամբ լի հոգի մը, որ մարդուն, կենդանիին, բնութեան եւ իրերուն հանդէպ հաւասարապէս զգայուն է եւ գիտէ քրթնալ համապարփակ յուզումովը անոնց բոլոր վիշտերուն եւ ուրախութեանց:

Բանաստեղծի այս խոր զգայնութիւնը, հոգիի այս բնական քարութիւնը եւ կեանքին ու մարդոց հանդէպ յորդող այս անսպառ սէրն է, որ կը գունատրեն եւ կը կենդանացնեն Համաստեղի գծած պատկերները՝ ըլլան անոնք գիւղէն առնուած, թէ քաղաքէն:

Համաստեղի գրականութիւնը միայն ժպիտ ու լռոյս չէ:

Տառապանք, վիշտ, արցունք շատ կան իր պատմուածքներուն մէջ, որովհետեւ կեանքը ինքը շողումն է այդ դառնութիւններով, բայց մենք հոն չենք գտներ կեանքը սեւ անէծքի վերածող թոյն ու ժահր, ամօք ու գարշանք, մեղք ու ռճիր: Համաստեղի ստեղծած տիպարներուն ցաւն անգամ համակրելի է, համակող ու սրտառու՝ առանց երբեք ընդվզեցուցիչ եւ ընթոստացնող դառնալու: Երբ կը կարդանք իր գործերը, կը կապուինք անոնց մէջ գործող անձերուն, բարեկամ ու մտերիւմ կը դառնանք անոնց

հետ, կ'ուզենք բաժնեկից ըլլալ ոչ միայն անոնց յոյսերուն ու երազներուն, այլև անոնց տառապանքին եւ դժբախտութեան:

Համաստեղի արուեստին գլխաւոր յատկանիշներէն մէկն է այս հարողականութիւնը:

Ճշմարիտ արուեստը կը յաջողի մեզ փոխադրել իր սեւեռած աշխարհին մէջ, հոգեպէս քաղաքացի դարձնել անոր դրօշին եւ սիրոյ ու կարօտի հազար թելերով մեզ կապել հոն նկարագրուած վայրերուն, անձերուն ու անցքերուն հետ: Արդ, ով որ կարդացած է Համաստեղը, հեռաւոր Ամերիկայի թ?է Մերձաւոր Արեւելքի երկինքներուն տակ, կարօտով պիտի փնտռէ հայրենի գիւղին արտերն ու այգիները, կալն ու կուտը, վարն ու ցանքը եւ զունագեղ շինականները: Շնորհիւ Համաստեղի գրչին՝ արեւմտահայ գիւղերու կեանքը տարտամ յիշողութիւն մը չէ այլեւս կամ անցեալի էջերը զարդարող ծանօթագրութիւն, այլ կենդանի ապրում եւ անթառամ տեսիլք:

Իր Տափան Մարգարները, Փիլիկ Աղբարներն ու Կար Ամուները իրենց ներքին ապրումներով ու տառապանքով մարդ են նախ, մարդկայինը կը մարմնաւորեն եւ ընդհանրական արժէք ունին, սակայն անոնք իրենց զգալու, գործելու եւ արտայայտուելու կերպով հայ շինականի տիպարները կը ներկայացնեն: Առանց քարոզչութեան տրուած այս Հայկականութիւնը, որ տահմային դրոշմ մը ունի միշտ եւ հարագատի մտերմութիւն, Համաստեղի տիպարները կ'օժտէ ինքնուրոյն դիմագիծով: Մենք կը սիրենք զանոնք, որովհետեւ անմիջապէս կը զգանք, թէ մեր արիւնէն են, մեր լեզուն կը խօսին, մեր սրտէն կը խօսին:

Դասական բոլոր մեծ գրողներուն մօտ Համաստեղ պարզութիւնը հասցուցած է այնպիսի հիւթեղ եւ կենսալից լիութեան մը, որ ընթերցողը բնութեան եւ բնականութեան առջեւ կը գտնէ ինքզինք տեսարար: Գրական ոչ մէկ շողշողան գարդարանք, ոճային ոչ մէկ անսովոր դարձուածք: Գեղջկական աղբիւրներու պէս յստակ լեզու մը, որ գիտէ բառերը գործածել տնտեսութեամբ, խտացնելով, պատկերաւորելով: Այն հեղինակներէն է, որոնց համար բառերը միջոց են եւ ոչ թէ նպատակ, խորութիւնը պարզութեան մէջ է եւ ոչ թէ մթասքող արտայայտութեանց մշուշին ներքեւ: Համաստեղ ժամանակ չունի «գրականութիւն ընելու», որովհետեւ կեանքի նկարիչն է՝ լեցուած մշտավառ անցեալի հոծ ապրումներով եւ տառապահար ներկայի մակընթաց յոյզերով: Իր շունչով կենդանացած մարդիկն ու միջավայրը այնքան իրական են, տեսանելի, գրեթէ շօշափելի, որ բառերու ներկայաթիւնը չենք զգար իսկ, ինչպէս կ'նոց մը գրաւիչ աչքերուն առջեւ կը մտնանք զարդն ու հանդերձանքը:

Արուեստի մարզին մէջ գուցէ ամենէն դժուար բանն է նուաճել կեանքը այս բնականութեամբ եւ հասնիլ ձեռի կատարելութեան այս պարզութեամբ:

Ճիշդ է, որ Համաստեղ մեր գրականութեան մէջ յեղաշրջող նորութիւններ չբերաւ, արուեստի յեղափոխութիւն մը չառաջացուց, նոր հորիզոններ չբացաւ, բայց ան մեր գրականութեան բերաւ տոկուն եւ ինքնայատուկ խառնուածք մը: Պատմութեան էջերէն վայրագ բռնահարուածով խլուած ու փոշիի վերածուած մեր բնաշխարհը վերապրեցուց, կարելի է ըսել վերաշինեց քար առ քար, գերան առ գերան, ոսկեղէն մուրճի մը ստեղծագործ հարուածներով:

Որքան ալ կարօտաբաղձութեան խորունկ թախիծով դողողան իր «Գիւղ»ին ծառերն ու հասկերը, որքան ալ արցունքի վիշտով տեղան իր «Անձրեւ»ին ջերմ կաթիլները, Համաստեղ կը մնայ միշտ այն լաւատես հեղինակը, որ կը հաւատայ կեանքին, կը հաւատայ անցեալի յարութեան, կը հաւատայ ազնիւ ու գեղեցիկ արժէքներու յաղթանակին եւ արարչական լայն ժպիտով գիտէ ընդգրկել բովանդակ կեանքն ու մարդիկը:

## ՀԱՍՍՏԵՂԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ծնած են 1895ին, Խարքերդի Փերչէնճ գիւղին մէջ: Փերչէնճը կարեւոր գիւղերէն մէկն էր՝ Խայարնակ եւ թէ՛ թրքաբնակ: Հայերը կ'ապրէին առանձին քաղամասի մէջ, հողագործ էին ու արհեստաւոր: Իմ մանկական ու պատանեկան աշխարհը գիւղը եղած է իր հեռաւոր լեռներու սահմաններով, իր քարաշէն մեծկակ եկեղեցիով, իր դպրոցով, իր հոգերով, իր աշխատանքներով, իր սուրբերով, որոնք գիւղի սահմաններէն ներս կ'ապրէին: Չարմամալի մտերմութիւն մը կար սուրբերու, աստղերու եւ գիւղացիներու միջեւ, եւ ես հիմա ալ կը տարուիմ ըսելու, որ այդ գիւղի երկինքը ուրիշ էր, ուրիշ էին նաեւ գիւղացիները: Անցած են այդ գիւղի երկինքը ուրիշ էր, ուրիշ էին նաեւ գիւղացիները: Անցած են կերկար, երկար տարիներ, եւ դեռ թարմ կերպով կը յիշեմ քարաշէն կամուրջներէն ինկած քարերը, բարտիին վրայ օրօրուող ազուալը, եկեղեցիի շարակնոցին այն էջը, որուն վրայ ձէք թափած էր. ինչու չէ, նաեւ գիւղի աղջիկները, որոնք կը ջերմացնէին ու թեւ կու տային պատանեկան մեր առաջին երեսակայութեան:

Գիւղական դպրոցէն յետոյ աշակերտած են Խարքերդի գլխաւոր քաղաքներէն Մեզիբէի Կեղոնական վարժարանը: Այնտեղ իմ հորիզոնը այլեւս հեռաւոր կապոյտ լեռները չէին, այլ հայ գրականութիւնը, որ կու

գար Կովկասէն ու Պոլսէն: Այն օրերուն տիրական էին Վարուժան, Սիւսանթո, Բաֆֆի, Ահարոնեան, Իսահակեան, մեր Խարբերդի մեծ վարպետ Թլկատինցիին եւ փափկաճաշակ Ջարդարեանը, որ իմ աշակերտ երթալէն մի քանի տարի առաջ տեսուչ եղած էր նոյն դպրոցին մէջ: Մեր օրերու դպրոցի տեսուչը աշակերտներէն շատ սիրուած Տիգրան Աշխարհունին էր՝ Արաբկիրի մայիկին Մերուժան վարդապետը, որ յետոյ Պոլիս գացած, այնտեղէն ալ աքսորուած էր եւ մեր բոլոր մտաւորականներուն հետ նոյն դժբախտ վախճանին ենթարկուած: Առաջին անգամ անոր ուշադրութեան յանձնած են ռուսաւորներու տետրակս: 1911ին, երբ դպրոցը աւարտեցի, զիս իր մօտ կանչեց եւ թելադրեց, որ շարունակեմ գրել: Մէկ տարի ուսուցիչ եղած են գիւղական դպրոցի մը մէջ, որուն աշակերտութիւնը 60ի կը հասներ ձմեռ ժամանակ: Նոյն տարին տարած են մանւ եկեղեցական արարողութիւններու մասը<sup>3</sup>:

Եկած են Ամերիկա 1913ին՝ մտիկ ընելով հօրս թելադրանքին. այլապէս Ամերիկա գալս ինձի համար ոչ մէկ գրաւորութիւն ունէր: Հայրս Ամերիկա եկած էր ինձմէ մէկ տարի առաջ: Ինձի համար փոխուած էին միջավայրն ու պայմանները: Առաջին մի քանի տարիներուն ստիպուեցայ հետեւիլ դասընթացքներու եւ ընդարձակել իմ ընթերցանութիւններն ու անձնական գրադարանը<sup>4</sup>: Իմ մօտիկութիւնը «Հայրենիք» օրաթերթին ու շրջանակին պատճառներէն մէկն էր, որ նորէն սկսէի իմ գրական մարզանքները: Կը յիշեմ՝ առաջին անգամ 1917ին «Հայրենիք» օրաթերթին տուի բանաստեղծութիւն մը:

Նոր երեսակայութիւններ պեղելու, ինքնատիպ դառնալու ձգտումը զիս տարած էին կեանքէն հեռու, գետնէն վեր՝ կապոյտ թռչունի մը փնտտութիւն. նոյն տարիներուն հրատարակուեցաւ «Փիւնիկ» ամսագիրը, որուն կանոնաւոր աշխատակիցներէն էի: «Հայրենիք» օրաթերթին եւ «Փիւնիկ»ին մէջ ունիմ բաւական աշխատութիւններ, որոնք թերեւս հաւաքէի հատորի մը մէջ, եթէ այն կապոյտ թռչունը, որ կը փնտտէի կեանքէն դուրս, չտեսնէի կեանքին մէջ: Այն աշխատութիւններս ինձ համար հետաքրքրական էին՝ որպէս ձեւ եւ երեսակայութիւն միայն: 1920ին տարի մը Նիւ Եորք մնացի. այնտեղ էր մանւ Շիրվանգաւտէն. մեր առաջին հանդիպումով դարձանք մօտիկ բարեկամներ: Ատեն մը կարդացեր էի անոր գրեթէ ամբողջական գործերը, եւ սակայն անձնական ծանօթութիւնը, մեր հանդիպումը շատ յաճախ եւ տարի մը պատճառ դարձաւ, որ ես վար իջնէի ոլորտներէն ու ինքզինքս գետնի վրայ գտնէի: 1930ին Աւետիք Իսահակեան նոր եկած էր Հայաստանէն: Ան կը սիրէր կրկնել Շիրվանգաւտէի խօսքերը, թէ «Ես փրկեցի Համաստեղը»:

Իմ առաջին յաջող վիպակը՝ «Տափան Մարգարը», տուած են Ռ. Դարբինեանին «Հայրենիք» օրաթերթին համար, երբ ամսագիրը հրատարակելու ծրագիրը տակաւին չկար: Շնորհիւ Դարբինեանի գեղեցիկ մտահոգութեան՝ կարճ ժամանակի մը մէջ «Հայրենիք» ամսագիրը դարձաւ իրականութիւն: Եղած են շատ հաւատարոք աշխատակիցը ամսագրին եւ հոն տուած են իմ կարեւոր գործերը: Իմ գրական աշխատանքներու յարատեւութիւնը առանձնապէս կը պարտիմ Դարբինեանին: Հրատարակած են երկու գրքեր՝ «Գիւղը» Ամերիկայի մէջ, իսկ «Անձրեւը»՝ Փարիզի մէջ: Ունիմ աշխատութիւններ, վիպակներ, բանաստեղծութիւններ, տրամաներ, վէպեր՝ ամսագրին եւ տարեգիրքերուն մէջ տպուած. գուցէ օր մը իրար գտնեն հատորներու մէջ: Կը հաւատամ, որ «Մայիտակ Չիտորը» իմ կարեւոր աշխատութիւններէն է. օր մը թերեւս լրացնեմ վերջին մասը՝ քարեփոխուած ձեւով՝ առանձին հատորով հրատարակելու համար<sup>5</sup>:

Վերջին տարիներու ամօրեայ կեանքն ու հոգեբը շատ քիչ ժամանակ կու տան գեղեցիկ քաներու մասին մտածելու կամ նոյնիսկ վերջալոյս մը դիտելու:

\*\*\*

Հոս կը վերջանայ Համաստեղի ինքնակենսագրականը, գոր գրած է 1945 Յուլիս 16ին, տիկին Մարո Յակոբեանի (Մարո Ամազոն) դիմումին ի պատասխան, եւ որ այս վերջինին կողմէ մշակուած ձեւով հրատարակուած է 1946ի «Հայրենիք» տարեգիրքին մէջ:

Համաստեղի արտասահման կատարած միակ ճամբորդութիւնը տեղի ունեցաւ 1928-30, որուն ընթացքին ան սերտ շփումներ ունեցաւ իր ժողովուրդի եւ հայ մտաւորական լայն շրջանակներուն հետ, ինչ որ խոր տպաւորութիւն թողոց Համաստեղի վրայ եւ տեսակ մը փոխհաղորդութեան բնոյթ զգեցաւ գրագէտին ու իր տարահալած ժողովուրդին միջեւ:

Այս շրջապտոյտը փակագիծ մը կազմեց Համաստեղի կեանքին մէջ: Այնուհետեւ ապրեցաւ ու ստեղծագործեց բացառաբար Ամերիկայի մէջ, անելի ճիշդ՝ Ամերիկայի մէկ «անկիւնը». «Բայց ես կը սիրեմ այդ անկիւնը. թռչունի մը տաք բոյնին պէս խաղաղ է ու ջերմ: Կեանքիս մէջ դժգոհ եղած չեմ իմ վիճակէս», - կը գրէր Ս. Վրացեանին 13 Փետրուար 1966 թուակիր իր մամակով<sup>6</sup>, ապա 17 Փետրուարին ուրիշ մամակի մը մէջ կը շարունակէր. «Այստեղ, վանականի մը պէս ծանր քարերով պատերուն ետեւ փակուած, արդէն կը խուսափիմ ճառախօսութիւններէ եւ մանաւանդ ծափահարութիւններէ: Ես միշտ ալ ընդունած եմ, որ ժողովուրդը անելի իմաստուն է, քան իմ խօսքերը: Այստեղ ինձի այնպէս կը թուի, որ կըզգի մը մէջ եմ եւ հեռաւոր ծովածայերու թռիչքներէն ու ձայներէն միայն զիտեմ, որ մօտիկ տեղ մը բնակչութիւն կայ»:

«Հեռաւոր ծովաճայերու» այդ խոռովքն էր անհա, որ փոխն ի փոխ տագնապեցուց ու ոգեւորեց զինք տեսարար, փոթորկեց իր «հոգիին խաղաղ լճակը», ներշնչեց ու ոտքի պահեց իր մէջ հայ արուեստագէտը, հայ մտաւորականը, հայ մարդը, ստեղծագործական յարաճուն տենդով խոնկահար հայ գրագէտը:

Եւ ան տարիներուն հետ իրարու ետեւ տուաւ մեծարժէք գործեր, որոնք աստիճանաբար եւ հետզհետեւ անկի խիտ գիծերով ու անկի հարուստ գոյներով ամբողջացուցին հայ գրագէտի իր ինքնատիպ դիմագիծը:

Այսպէս. «Գիւղը» (1924, Պոսթըն) եւ «Անճրեւ»-ին (1929, Փարիզ) հետեւող երկար դադարէ մը ետք, 1953ին<sup>7</sup> կ'աւարտէ ու կը հրատարակէ «Մայիտակ Չիւտորը» վէպը երկու ստուար հատորով, զոր դեռ 1931ին սկսած էր գրել եւ մաս առ մաս լոյս ընծայել «Հայրենիք» ամսագրին մէջ: Մաս առ մաս կը հրատարակէ նոյնպէս «Հայրենիք» ամսագրին մէջ, որ իր «փոքրիկ Հայաստանը» կը կազմէր՝ իր իսկ վկայութեամբ, նաեւ «Մորազան կատակերգութիւնը», որ սակայն ինչ-ինչ պատճառներով անաւարտ կը մնայ<sup>8</sup>:

Միեւնոյն ամսագրին մէջ կը սկսի հրատարակել դարձեալ «Տոմար Մաքիական»ը, զոր ետքէն (1960, Գահիրէ) լոյս ընծայեց «Այծետոմար» խորագրով:

1955ին Գահիրէի մէջ լոյս կը տեսնէր նմանապէս իր «Քաջ Նազար եւ 13 պատմուածքներ»ը, իսկ 1957ին Պէյրութի մէջ՝ «Աղօթարան»ը, եւ վերջապէս 1966ին՝ յորեկեանական իր տարիին՝ «Առաջին սերը» վիպակը «Համազգային»ի տպարանէն:

1965 Յունուար 29ին դարձեալ Ս. Վրացեանին ուղղուած նամակի մը մէջ կը յայտնէր, թէ շուրջ 3000 էջ ձեռագիր ունի, ինչպէս նաեւ գրական արժէք ներկայացնող կտորներ «Հայրենիք» օրաթերթի եւ «Փիւնիկ»ի մէջ՝ յատկապէս 1918-19 թուականներու թիւերուն մէջ: Բոլոր պայմաններուն մէջ Համաստեղի ամբողջական երկերը եօթը-ութեց հատորի մէջ հազիւ կարելի է ամփոփել:

Այսքան բեղուն եղաւ իր գրիչը եւ այսքան ստեղծագործ ու սրտարուխ եղաւ արուեստագէտը իր մէջ:

Ան նաեւ գրական իր ըմբռնումը, զոր արտայայտած է 1929ին Գահիրէի մէջ ի պատիւ իրեն տրուած ընդունելութեան մը ամփոփով. «Կը ներքէ ինձի, երբ ըսեմ, որ եթէ ժողովուրդին մէջ հիւանդ տարր մը կայ, ան ալ մեր մտաւորականութիւնն է՝ անշուշտ ոչ իր ամբողջութեանը մէջ:

Մերունը մը ունեցանք, որ գերմանական եւ ֆրանսական երեսակայութիւնով լեցուցած իր գլուխը՝ օդապարիկներու նման միշտ գետնէն վեր

աւառնեցաւ: Անոնք կտրուեցան իրականութենէն եւ իրենց ոտքերը չէին կրնար գետնին վրայ դնել: Քիչեր եղան, որ հսկայ սիւններու պէս գետնին վրայ կանգուն մնացին, որովհետեւ քիչեր ժառանգեցին մեր ցեղի ողջ քնազողը»:

Համաստեղ այնուհետեւ մեր ազգի ողջամտութիւնը յատկանշող երկու օրինակներ կու տայ Արմէն Գարոյէն եւ Ջաւարեանէն. «Այն օրերուն, ըսաւ ան, - 2000 փեթակ մեղու Մուշի մէջ, այսքան լծվար եզ շատ անկի արժէք կը ներկայացնէին Ջաւարեանի համար, քան Հեկելի կամ Քանդի րովանդակ փիլիսոփայութիւնները:

Անա ժառանգութիւն մը իսկական հայ մտաւորականի: Նոյն ողջամտութիւնը պէտք է կիրարկել մեր գրականութեան մէջ:

Մեր գրողները միջազգային գրականութեան մէջ կրնան իրենց համեստ տեղը ունենալ, եթէ երեսան բերեն միայն հայեցի գոյնը, որ տարբեր է ուրիշ գոյներէ: Հայ ազգը իր ուրոյն աշխարհը ունի, ուրիշ ազգերու չի նմանիր. հայ գրականութիւնն ալ պէտք է հարազատ արտայայտիչը ըլլայ այդ աշխարհին եւ ուրիշ գրականութեան պէտք չէ նմանի:

Հարազատ չէ այն քանաստեղծը, որ Հայաստանի մէջ նստած՝ Նիւ Եորքի կամուրջները կամ Փարիզի Էյֆելը կ'երեսակայէ:

Հարազատ չէ այն ազգային գործիչը, որ կ'անտեսէ իր ազգային դժոխային տանջանքները ու չի նացի կամ անգլիացի քանուրոպ կը մտահոգուի:

Մեր ազգի առողջ քնազող իսկական ժառանգութիւնը պէտք է ըլլայ թէ՛ մեր ազգային, թէ՛ քաղաքական գործիչին եւ թէ՛ գրագէտին:

Մեր թշնամիները շատ քաներ կրնան խլել մեր ժողովուրդէն, քայց ոչ այդ առողջ ոգին, որովհետեւ ան այնքան անմատչելի է, որքան երկինքը:

Մեր թշնամիները այդ երկնքին պիտի չկրնան հասնիլ»:

1929 Մարտ, Գահիրէ

Անա մարդը, անհա գրագէտը: Եւ ինչպէս կ'երեսի, հակառակ այն իրողութեան, որ իր կեանքին մեծագոյն մասը Ամերիկա ապրեցաւ, երբեք ամերիկացի չդարձաւ, օտար կուտքերու չերկրպագեց եւ այլասերիչ որբէն ազդեցութեան չենթարկուեցաւ, այլ «հսկայ սիւնի մը պէս կանգուն մնաց» իբրեւ հայ մարդ եւ հայ գրագէտ, իբրեւ հարազատ ժառանգորդն ու մարմնատրոդը «մեր ցեղի առողջ քնազողին»: Կարծես Խարբերդէն նոր եկած պանդուխտ մըն էր թէ՛ իր արտաքինով, թէ՛ ապրելակերպով: Կարելի է ըսել՝ ամէն քանով հայ մարդ էր, հայ մտաւորական: Ամերիկան իրեն համար միայն քնակավայր էր, քայց ան հոգիով, մտածումներով, իր րովան-

դակ էութիւնով կ'ապրէր հայութեամբ: Համեստ, իր անձը ցուցադրելու հակումէն զուրկ, ինքնամփոփ, մտերիմ շրջանակներու մէջ բացուող, ուրոյն անհատականութիւն էր:

Համոզուած ու հաւատաւոր դաշնակցական էր: Եւ դաշնակցութեան մէջ, իբրեւ կազմակերպութեան անդամ, մախասիրութիւններ չունէր, ոչ ալ ձգտում բարձր դիրքերու: Լայնամիտ էր, լայնախոհ թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին յարաբերութեանց մէջ:

Ընտանեկան կեանքի մէջ երջանիկ էր: Իր կեանքի ընկերը՝ Սրբուհին, թէեւ տարբեր հակումներով, բայց լիովին կը հասկնար իր հոգին, կը քաջալերէր իր հակումները եւ երջանիկ էր, որ իր երկու զուակները՝ Լորիկը եւ Արմինէն, հայկական դաստիարակութիւն ստացան Եւսեփեանի մէջ:

Այս պատճառով ալ տարի մը առաջ Սրբուհիի մահը<sup>9</sup>, երկարատեւ հիւանդութենէ ետք, ծանր հարուած մը եղաւ Համաստեղի համար: Առ այդ Ս. Վրացեանի ուղղուած 4 Ապրիլ 1966 թուակիր մամակի մը մէջ կսկծագին կը գրէր. «Մեր սիրելի Սրբուհիի կորուստը շատ էր ծանր, եւ չենք կրնար հաւատալ, որ այլեւս չկայ: Ան տունին մէջ է, խոհանոցը, վերէն՝ սանդուխներէն վար կ'իջնէ, իմ մենութեան մէջ երբեմն ձայնը կ'առնեն: ... Երջանիկ էինք, Սրբուհին թէ՛ տունը եւ թէ՛ զիս պարպեց, իրեն հետ տարաւ: ... Խօսքը շատ է տկար սիրելիի մը մահուան առջեւ: Կը փորձեմ գրական աշխատանքի մը մէջ մտնել՝ մոռնալու համար, բայց այժմ չեմ կրնար կեղրոնացնել ինքզինքս: Յուզումը ալիք կու տայ երբեմն իմ հոգիի խաղաղ լճակին մէջ: Անոր մէջ ցուցող երկինքն անզամ ալիքներուն մէջ ինկած է»:

Նոյն հասցէին գրուած ուրիշ մամակի մը մէջ (11 Մայիս 1966) կ'աւելցնէր. «Օրերս կ'անցնին ու կը կրկնուին: Ոչ մէկ գոյն եւ ոչ մէկ հետաքրքրութիւն: Կ'ըսեն, որ վիշտը միմակութիւնը կը սիրէ: Մեր շնորհալի աղջիկները կ'աշխատին իրենց մօր պակասը զգալի չընել: ... Սրբուհին լաւ աղջիկներ մեծցուց: Ինչ ալ ընենք (սակայն), Սրբուհիի պակասը որբէ՛ ձեռով չի դարձանուիր»:

Դժբախտութիւնը կրկնակ բնոյթ ստացաւ, երբ, շատ չանցած, երեսն եկաւ մանաւանդ, որ Համաստեղ կը տառապի սրտի ծանր տկարութենէ, որուն իբրեւ հետեւանք՝ շարաքներ ամբողջ անկողնին գամուած մնաց՝ բժիշկներու խիստ պատուէքով:

Եւ այս կրկնակ դժբախտութիւնը տեղի կ'ունենայ Համաստեղի կեանքի ամենէն հանդիսատար եւ ամենէն երջանիկ պահը ըլլալու կոչուած օրերուն, երբ հայ ժողովուրդը Հայաստանի եւ Սփիւքի մէջ հաւասարապէս կը պատրաստուէր համազգային շուքով տօնելու իր մեծատաղանդ

ու բազմավաստակ զուկին գրական յիսնամեայ գործունէութեան յոբելանը:

Ահա այս առիթով կը գրէր դարձեալ Ս. Վրացեանին (13 Փետրուար 1966). «Շատ կը գնահատեմ իմ յոբելանին համար ձեր ցոյց տուած մտաւեգութիւնն ու աշխատանքը. թերս ատեն կը հանդիպի, երբ ես բոլորովին տարուած եմ Սրբուհիի հիւանդութիւնով: ... Տունով-տեղով գրեթէ ցամքած ենք ... Անորոշ են իմ օրերն ու տրամադրութիւնները: Սիրտս կտարած է. երանի թէ երբեք մէջտեղ չգար (յոբելանը). բայց որ կու գայ (ահա) իմ այս պայմաններուն մէջ: ... Ահա թէ ինչու կը կարկամիմ հիմակուց որոշում տալ Լիբանան գալու կամ երթալու Պարսկաստան եւ Հայաստան»:

Յաջորդ մամակին մէջ (17 Փետրուար 1966) կը շարունակէր. «Իրականութիւնը այն է, որ այժմ թէ՛ հայ ժողովուրդը եւ թէ՛ Հայաստանը իմ հոգեկան քարտէսի սահմաններուն մէջ մտած են. մէկ տեղ մը կ'ուզէի երթալ, ան ալ Հայաստանն է, եւ սակայն այս երրորդ անգամ<sup>10</sup> ըլլալով՝ սկսեալ կը խուսափիմ...»:

Աւելի ուշ՝ 4 Յունիս 1966 թուակիր իր մամակին մէջ կ'եզրափակէր այսպէս. «Կը տեսնեմ, որ վայրէջքը շատ արագ տեղի կ'ունենայ Սրբուհիի մահէն ետք. եւ երեսկայել, որ մինչեւ 70 տարիքս զլխու ցաւ անզամ ունեցած չեմ: Անհամ բան է սրտի հիւանդութեան մը սպառնալիքին տակ ապրիլ ...»:

Այս պայմաններուն մէջ, իր իսկ վկայութեամբ (12 Յուլիս 1966), գրեց եւ «Համազգային»ի Կեղրոնական Վարչութեան (Պէրոյթ) դիկեց իր վերջին գործը՝ «Առաջին սերը» («Լաւ գիրք մը կ'ըլլայ կարծեմ՝ վերջին մէկ տարուան ծանր մտահոգութիւններու ընթացքին գրուած») եւ «Առաջին սերը»ի հրատարակուած առաջին օրինակը հազիւ տեսած՝ պատահեցաւ անխուսափելին:

Համաստեղ Նոյեմբերի 27ին<sup>11</sup>, Զալիֆորնիոյ մէջ յոբելանական իր հանդէսին՝ բնմին վրայ, շանթահար կը տապալէր՝ խօսքը բերնին մէջ կէտ մնացած: Յորելանական հանդէսը կը վերածուէր սգահանդէսի: Իսկ յոբելանական հանդէսներուն պիտի հետեւէին յաշահանդէսներ՝ միշտ համազգային շուքով:

Անկատար կը մնար մանաւանդ իր վերջին իղձը՝ Լիբանան եւ Պարսկաստան, բայց յատկապէս Հայաստան այցելել, տեսնել երկիրը, ժողովուրդը, հայութիւնը, որ իր ներքին մթնոլորտը եւ ներշնչումի միակ աղբիւրը կազմեց:

Վերջին իղձը անկատար մնաց, հայ գրագէտի եղբրական ճակատագիրն է այդ: Սակայն անտարակուսելի է այն, որ Համաստեղ՝ հայ գրա-



կանութեան այդ անգուգական Տափան Մարգարը, իր արժանատր տեղը գրաւած է արդէն մշտնջենապէս հայ ժողովուրդի «հոգեկան քարտէս»ին մէջ: Հայ ժողովուրդի սրբազան պարտքն է ասիկա՝ ի տրիտուր իր տաղանդատր ու վաստակաբեկ, այլի ընտրելագոյն գաւկին:

### ՀԱՄԱՍՏԵՂԻ ԳՈՐԾԵՐԸ

1. «Գիւղը», 1924, Պոսթըն
2. «Անձրեւ», 1929, Փարիզ
3. «Սրբազան կատակերգութիւն» անտիպ
4. «Մայիտակ Չիտորը», 1953, Լոս Անճելըս
5. «Զաջ Նազար եւ 13 պատմուածքներ», 1955, Գահիրէ
6. «Աղօթարան», 1957, Պէյրութ
7. «Այծետոմար», 1960, Գահիրէ
8. «Առաջին սէրը», 1966, Պէյրութ
9. Չանազան թերթերու եւ պարբերականներու մէջ ցրուած պատմուածքներ, վիպակներ եւ այլն:

### ՊԱՐՄԻԿ ԳՐՈՂ ՄԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍԱՍԻՆ

(Ներածական «Համաստեղ եւ Սաղեղ Հեղայեաթ» գրքի)  
Ֆազլուլահ-է Հաղիլ

Գրչի ու խօսքի ներգործութեան մասին եւ այն մասին, թէ գրողներն ու քերթողները իրենց պատկանած ազգութեանց ներշնչողներն ու խթանողներն են, շատ է խօսուել: Չուր չէ, որ գրողներին կախարդ են համարել, որոնք իրենց բան ու գիրով գեղեցկութիւններ են արարչագործում եւ կախարդանքի են մատնում մարդկային բազմութիւններին:

Գրականութիւնն ու արուեստը բնութեան եւ կեանքի երգերն են, որոնք հնչում են գրողների ու արուեստագէտների զգացումների միջոցով: Այս երեսոյթը հարկ է նկատել՝ որպէս հասարակական մէկ կատարեալ գոյացք, որը ապրում է ու զարգանում եւ արագացնում է հասարակական առաջխաղացքը:

Վաթերը, Մոնթեսքիոն եւ Ռուսոն ընկերային յեղափոխութեան ճանապարհը հարթեցին Ֆրանսիայում, իսկ այլ գրողներ մարդկային հաւաքականութիւններին առաջնորդեցին դէպի գիտութեան եւ գեղարուեստի բարձունքները:

Գերման մեծանուն գրող Եիլերը խօսքի կախարդական զօրութեան մասին յօրինել է հետեւեալ գողարիկ կտորը.

«Օրին մէկը Աստուած, խօսքն ուղղելով երկրի վրայ ապրող մարդ-արարածներին, ասաց, որ դուք սա հող-մուրակի ժառանգորդներն էք. վերելք ու ձեր բաժինն ալ ամէք աշխարհի բուր, բուր բարիքներից: Աղանի որդիք ելան, ու ամէն մի հանրախումբ իր բաժինն առաւ երկրեայ բարիքներից: Երկրագործները գրաւեցին հողերը, կալուածատէրերը ձեռք նետեցին անտառներին, վաճառականները իւրացրին երկրի ոսկին ու արծաթը, իշխանաւորները տէր կանգնեցին հաղորդակցական գծերին եւ միւսների ունեցածի մէկ տասներորդը պահանջեցին, կղերականները աղօթարաններին տիրացան, ու այլեւս բան չմնաց երկրի երեսին, որ իր տէրը չունենայ: Զերթողներն ու գրողները ձեռնուճայն ու դժկամ՝ Աստուծուն ներկայացան ու բողոք ներկայացրին, թէ ո՛վ դու ամենաբարձրեալը, մենք, որ քո միակ ճշմարտախօս արարածները ենք, ոչինչ չենք ստացել ժառանգութիւնից: Աղաչում ենք քեզ, որ մեզ էլ բաժին հանես աշխարհի անհամար բարիքներից:

Հարցում եկաւ Աստուածից, թէ երբ մարդիկ բարիք էին ժողովում, ո՞ր էիք դուք: Քերթողներն ու գրողները գոչեցին, թէ այն ժամ մենք երկնքի ուրբաներում քո խօսքն ու շունչն էինք որոնում ու երկնային բարիքներն էինք ըմբռնում, որով չէինք կարող երկրային մասին խորհել: Աստուած յայտարարեց, որ ես իմ անձը նուիրաբերում եմ ձեզ եւ արտօնում եմ, որ դուք կենաք ու ապրէք ինձ հետ եւ վայելէք երկնային բարիքները»:

Շիլլերը այս գրութեամբ ուզել է խօսել այն ճշմարտութեան մասին, որ եթէ միաժամանակ ամենատարբեր ցեղերի ու ժողովուրդների պատկանող գրողներն ու քերթողները համանման մտքեր են արտայայտում եւ նման երկեր են արարչագործում, այդ այն պատճառով է, որ նրանց բոլորի ներշնչարանը մէկ է ու անբաժանելի, եւ դա ինքը Աստուածն է:

\*\*\*

Տասնութերորդ դարի կեսերում, երբ գրողներն ու քերթողները ելան մարդ-զանգուածների միտքն ու հոգին լուսաւորելու, եւ տակաւ աւատապետութիւնը հրապարակեց դատարկեց, ազգայնականությունն ու նրա իրաւունքները գրողների գրադման միտք դարձան: Նրանք գրադուեցին հոծ զանգուածների կեանքից եկող խնդիրներով, ու գրականութիւնը դադարեց հարուստների եւ գօրեղների քմահաճոյքները բաւարարող միջոց լինելուց: Գրողներն ու քերթողները նոր կեանք պարզեցին ժողովրդական լիզուին ու բարբառներին եւ իրենց ժողովուրդների կենցաղը արտացոլեցին իրենց երկերում:

Հայ ժամանակակից գրող Համաստեղը, որ յօրինել է «Չալօ»ն, այն գրողներից է, որ քայլել է իր ժողովուրդի լուսաւորման ճամբով եւ ճիգ է գործ դրել իր ազգային գրականութիւնը առաջնորդել դէպի նոր գազաթներ: Համաստեղը գիւղագրութեան հիմնադիրն է հայ գրականութեան մէջ:

Համաստեղի համաժամ Իրանի գրականութեան ծոցում ծնուել է մի մեծութիւն, յանձին Մադեղ Հեղայեաթի, որը նորավէպի ու արդի պարսկերէն արձակի փայլուն դէմքերից է: Հեղայեաթը գրել ու հրատարակել է «Թափառաշրջիկ շունը»՝ առանց իրազեկ լինելու Համաստեղի համանման ստեղծագործութիւնից: Հեղայեաթը շատ գործեր արտադրեց, որոնց թիւը անցած է չորս տասնեակից: Ու նրա համբաւը զից անցաւ Իրանի սահմանները՝ հասնելով մինչեւ Եւրոպա:

\*\*\*

Վերջերս իմ ազնիւ բարեկամ պրն Աղասի Յովհաննիսեանը, որ թարգմանիչն է Համաստեղի «Չալօ»յի, հայերէնի վերածեց Հեղայեաթի «Թափառաշրջիկ շունը»՝ եւ Պոստընում հրատարակուող «Արմինեըն Ռիվի»ի խմբագիր Ջէյմզ Մանդալեանը հայերէնից անգլերէնի թարգմանեց այն ու տպագրեց իր պարբերաթերթում:

«Ալիք»ի սոյն հրատարակութեան կարեւորութիւնն է, որ մէկտեղել է կատարուած երկու թարգմանութիւնները եւ հրատարակել է այս երկվեզու գիրքը: Այս հետաքրքրական հրատարակութիւնը նպատակադիր է ցուցնել հայ ու պարսիկ երկու մեծ գրողների այնքան համանման գործերը եւ միւս կողմից մղել հայ երիտասարդներին՝ աշխատանքի լծուել այս կարգի գործերի սիրոյն:

\*\*\*

Նոր վիպագրութեան մասին խօսելիս, որը Եւրոպայում նովել է կոչուած, անտեղի չէ հիշել Ջամալ-գադէի անունը, որը հիմնադիրն է նկատուած իրանական արդի նորավէպի:

Ջամալ-գադէն մեծարժէք երկեր է արտադրել գրական անդաստանի մէջ: Ու նրան են հետեւել իրանցի այլ մեծանուն գրողներ՝ Բողորգ-է Ալաիին, Մադեղ Չուրաթը, Մոհամմադ-է Հէջատին, Մաիդ- է Նաֆիսին, Ալի-է Դախտին, Էրթեմադ-գադէն, Մոսթաանը եւ այլք:

Այս գրողների երկերի հրապարակումը եւ պարսիկ հանրութեան ընդառաջումը պատճառ են դարձել, որ Իրանի երիտասարդութիւնը հետեւի նրանց քայլերին եւ այլազան պարբերաթերթերի էջերը զարդարի նոր ու արժէքաւոր գործերով:

\*\*\*

Հայ ազատատենչ համայնքը, Իրանի թագաւորութեան սկզբից, իրանցի եղբայրների հետ միաճակատ աշխատել ու պայքարել է իրականութեան յաղթանակի սիրոյն եւ յանուն ազատութեան ու սահմանադրութեան կանգ չէ առել ոչ մէկ սխրագործութեան դիմաց: Բացի այդ, հայերը օտար լեզուներով ներկայացրել են Իրանի գրականութիւնը եւ այժմ էլ շարունակում են այդ շնորհակալ աշխատանքը՝ հայերէնի թարգմանելով պարսիկ բանաստեղծների ու գրողների երկերը: Ինչ խօսք, որ այս կարգի քայլերով այլազան ժողովուրդները մերձեցնում են իրար, գալիս են իրարհասկացողութեան ու նպաստում են ազգերի եղբայրութեանը:

Յոյս ունենք, որ իրանահայ դպրոցների աշակերտութիւնը պիտի հետեւի պրն Աղասի Յովհաննիսեանին ու միւս հայ գրողներին՝ իրանական գրականութեան մեծարժէք գանձերը թարգմանաբար ներկայացնելով հայ հանրութեանը յատկապէս այս օրերին, երբ Իրանի սիրեցեալ կայսրունի Ն.Կ.Մ.Շահբանու Ֆարահը հրաւիրել է մեծ մի համագումար բոլոր գրողներից, որպէսզի թափ ու թռիչք հաղորդուի գիր-գրականութեանը, եւ երիտասարդները ոգևորուեն ու խրախուսուեն հետեւելու գրականութեանը եւ նորանոր արժէքներ ստեղծագործեն Իրանի ու բովանդակ արտաշխարհի գրականութեան գանձանակում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## ԴՐԱՍԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

### ՀԱՄԲՈՅՐԸ

Տպագրված է «Բազին» հանդեսի 1974թ. 1-ին և 2-րդ համարներում:

Հանդեսում տպագրված է Բ. Փափազյանի նամակը.

«Պէլրուք, 4 Մարտ, 1974

Ցարգելի խմբագիր «Բազին» գրական ամսագրի

Չեր խնդրանքին ընդառաջելով՝ «Բազին»-ի մէջ հրատարակուելու համար ձեզի կը տրամադրեմ 1962ին իմ կողմէ քատերակի վերածուած Համաստեղի «Աղաւնիները» կտորը:

Ինչպէս միւս գործերը, նաեւ «Աղաւնիները» իր ատենին դրկած են Համաստեղին, որպէսզի իր մատնանշումները ընէ, եթէ ունի: «Աղաւնիները» ետ վերադարձուած են՝ առանց որեւէ սրբագրութեան իր կողմէ: Այդ առթիւ ինձի ուղղած իր նամակին մէջ սակայն Համաստեղ իրաւացիօրէն դիտել կու տար, թէ քատերակի վերածած ատեն նկատի ունեցած են իր պատմութիւնը քարոյսախօսական կողմը միայն, եւ այդ իսկ պատճառով քեմէն դուրս մնացած է տան մը աւերումը, որ հաւանաբար աւելի քատերական է:

«Աղաւնիներ»ու հրատարակութեան հետ պիտի ուզէի Համաստեղի այս տեսակետէն տեղեակ ըլլային ձեր ընթերցողները:

Այս առթիւ թոյլ տուէք դիտողութիւն մը ընել ձեր 1974 Փետրուարի քիւնի մէջ իմ կողմէ տրամադրուած Համաստեղի նամակին հրատարակութեան ձեւին մասին: Խմբագրութիւնը Համաստեղի նամակին յատկացուած էջը սկսած էր վերնագրի նման տառերով՝ «Սիրելի Փափազեան» մը տեղաւորելով վերը՝ վերնագրին նման: Նման քան ներելի չեն համարեր: Էականը այդտեղ Համաստեղն է միայն, եւ վերնագիրը պէտք է ըլլար պարզապէս «Նամակ մը Համաստեղէն» կամ նման այլ ձեւ մը, սակայն միշտ ու միշտ Համաստեղի անուան հետ կապուած: Նամակը ստացողին անձը եւ անունը չեն, որ արժէք կը ներկայացնեն այս պարագային, այլ զայն գրող մեծատաղանդ գրագէտին անկորնչելի անունը:

Կը խնդրեմ, որ քարի ըլլաք տեղ տալու այս նամակին: Ընդհանրապէս իմ նախնային յարգանքով՝

Բ. Փափազեան

Հանդեսում տպագրված են նաեւ Համաստեղի երկու նամակները.

ա) 15 Յունուար, 1962

Սիրելի Փափազեան

... Նամակիդ հետ ստացայ նաեւ իմ մի քանի պատմութիւնները տրամայի վերածած աշխատանքը: Կ'երեւակայեմ՝ բոլորն ալ հետաքրքրական պիտի գան բնի վրայ, եթէ ներկայացուին երկու կամ երեքը, իրենք իրենց մէջ ամբողջութիւն: Դեռ նոր կորսուած աւանդութիւն մը, որ ապրողներուն մէջ պահած է իր գեղեցիկ գոյնն ու զգացումը: Այդ ըրած աշխատանքներուդ մէջ նոր ձեւի քատրոն մը կը տեսնեմ:

«Այժտումար»ը շատ կարճ ձեւով մը ուզած ես ամբողջացնել: Չեղ լաւ է, եթէ օր մը իր ամբողջութիւնով բնի վրայ գայ. ըսել կ'ուզեմ, եթէ մէջտեղ գան Տէր Մարութի ու ջորեպան Թաթոսի տեսարանները, որոնց շարժում տալու համար մութի եւ աղոտ լոյսի մէջ կարելի է պահել: Նոյնքան հետաքրքրական պիտի ըլլայ այժի կերպարանքով ոգիի հետ ճամբորդութիւնը Մակարին: Տեսարանները կարելի է դիտել վերէ եւ լրացնել նոյնպէս ընթերցանութիւնով եւ յետոյ Թաթոսի յարգանակը եւ, վերջ ի վերջոյ, հոյն ոգիին յայտնութիւնը Մակարի գլխին: Արդէն պատրաստ աշխատանքը կայ, միայն թէ բնական թէքնիքի համար քու աշխատանքը հետաքրքրական պիտի ըլլայ: Կը հաւատամ, որ լաւ աշխատանք պիտի ըլլայ, եթէ ուզես շարունակել:

Մի քանի ճշդումներ ըրած են պատմութիւններուն վրայ ըրած աշխատանքներուդ: Կը դրկեմ առանձին ծրարով քու նկատողութեան համար՝ պայմանով, որ նորէն ինձի վերադարձնես:

Շատ շէն գաղութին մէջ էք: Չեր աշխատանքը վստահ են, որ հետաքրքրական պիտի ըլլայ: Ուրեմն որեւէ ներկայացման պարագայի չէք յայտարարեր «Գրեց Համաստեղ», այլ «Տատերական ձեւի վերածեց Տօրդ. Բ. Փափազեան» պահելով քննարկի հարազատութիւնը:

Համաստեղ

բ) Մարտ 10, 1962

Սիրելի Բարգէն

Ստացայ ձեր Փետրուար 17ի նամակը: Կը տեսնեմ, որ շատ ժամանակ եւ աշխատանք տուած էք լաւ քան մը ընելու համար: Բեմով տալ գաւառն ու գիւղը մեր տոհմիկ, որ այնքան արագ կորսուեցաւ ու հնութեան մէջ ինկաւ: Այս անգամ միայն «Աղաւնիները» աւելցուցած էիք՝ միայն վիպակի քարոյսականը նկատի ունենալով ու մտեցած չէիք իս-

կապես թատերական մասին. շեն տուն մը կը քանդուի. բաժինքը. Խաչիկի սպանութիւնը: Վիպակը ինքն իր մէջ արդէն տրամա է, իսկ դուր ամփոփած էք բարոյական մասեր միայն, որ քիչ մը բացասական ձեւ ունի: Ու ձեւը փոխուած: Տրամայի նկարագիրը անելի շատ գործողութիւնով է, որ մէջտեղ պիտի գայ: Անտարակոյս որ հետաքրքրական է աշխատանքը, բայց ես անկեղծօրէն պիտի թելադրեի, որ առայժմ չմտածէք հրատարակութեան տալ «Բազին»ի մէջ: Նոր սկսած գրական ամսագիր՝ նոր յոյսերով, ռեւ ընթերցող չպիտի ուզէր իմ պատմուածքներուն կրկնութիւնները կարդալ: Այլ է, եթէ բեմի վրայ տեսնէ կենդանի նկարագիրներով եւ պատշաճ բեմով: Նախ՝ աշխատեցէք ձեր այդ հետաքրքրական աշխատանքը գործածել բեմի համար, այն կտորները, որ չափով մը իրենք իրենց մէջ ամբողջական են: Բեմի վրայ տեսնել յետոյ դուր ալ պիտի տեսնէք, որ տակաւին հասունցած չէ հրատարակութեան տալու համար: Եթէ այստեղ եղածդ ատեն միասին ընէինք, գուցէ անելի լաւը ըլլար: Կը տեսնեմ, որ թատերականը լաւ է ձեր մէջ:

Երբ «Այծետոմար»ին մասին խօսեցայ, տեսայ, որ ընտրած էք ձեւ մը, որ իսկապէս հետաքրքրական է եւ շատ անելի հարազատ բնագրին: Եւ յետոյ ինչո՞ւ խուսափիլ, որ «փիլիսոփայականը» կայ այդ կտորին մէջ եւ հետեւաբար անյարմար ժողովուրդին: Երեսակայեւ, որ Թ.Ս. Իլերքի գործերը կը ներկայացնեն այստեղ ու ընդունելութիւն կը գտնեն, ըսել կ'ուզեմ Ամերիկայի մէջ: Իսկ «Այծետոմար»ը սաթիրական է, եւ կայ երգիծանք իր ողբերգութեան մէջ:

Իմ պատմուածքներուն մէջ գործածած եմ «Մայր» բառը, փոխանակ «Մարէ»ի: «Մարէ»ն խորք է ինձի համար: «Փէն»ը ուսն է: Իսկ «խութն» միշտ ալ կը գործածուի «Խումաշ»ին: Հագուստի համար է՛ն սուղ ապրանքն է, գուցէ՛ թախշ:

Երիտասարդ տղամարդը կը հազնի էնթարի, կօշիկը՝ եմէնի, եւ գլխին՝ ֆէս, իսկ երբ տարիքը առնէ՝ կը հազնի շալվար, ֆէսին շուրջ՝ բարակ փաթոց, ու փաթոցը անելի հաստ, մինչեւ ականջներուն կէտը հետը առնուած: Իսկ եթէ գրոց-բրոց է եւ կամ ուսուցիչ՝ արդէն փանթալոն:

Աղջիկները կը հազնին ֆիսթան՝ կոճակներով ու պասմայով ծաղկաւուն: Եթէ աղջիկ է, գլխին՝ լաչակ, երբ ամուսնանայ, լաչակը կապելու ձեւը կը փոխուի: Լաչակին մէջ կ'առնէ յականջները, ճակատին կէտը եւ ծնոտը: Կիններու կօշիկները կրունկով են, եթէ ունեւոր է, ունի ոսկեղրամներով վզնոց, ճակատին՝ թէքելի՛ ձեռագործ, ժապաւենի լայնութեամբ, իր ճակատը կը կապէ նոյնպէս ոսկեղրամներով: Այս՝ Կիրակի օրուայ հազ-

նելիքներն են, իսկ սովորական օրերը կը հազնի շալվար՝ տեղական կտաւէ եւ կամ պասմայով շինուած:

Այլ է ռենճերին՝ հողագործին, եւ ճիւղէլէկին՝ անոնք, որ հողին հետ գործ չունին, տուները: Բենճօր դուռը լայն է՝ եզներու, կովերու եւ էշերուն համար: Գաւիթը կրնայ ծածկ ըլլալ եւ կամ բաց: Կայ չարխը՝ սալաքարը, ու կը լոզնան՝ ճիշդ բովի թոնիքին վրայ խոշոր պղինձով ջուր տաքցնելով. գլխաւոր թոնրատունը երկրորդ յարկի վրայ է, կրակատունը, ուր կան առտնին առարկաներ: Չմեռը այդ ընդարձակ կրակատան մէջ կը քնեն, իսկ ամառը կ'ելլեն չարտախը: Իմ օրով կար նաեւ սենեակ ու կար սետիր կապերտներով ու բարձերով, նաեւ վառարան, քիւրսի ու մանդալ: Ամառ ատեն դրացիները դուրսը՝ դռներու վրայ կը հաւաքուին, ուր երբեմն կայ նոյնպէս սեքու, իսկ տղամարդիկ՝ իրիկունները գիւղի մօտակայ հրապարակը: Հողէ շինուած ու թրծուած ամաններ կան՝ մասնաւոր արհեստարարներու կողմէ շինուած ու թրծուած, ինչպէս ջուրի կուժ, բարդ, կարաս, քարջան եւ կերակուրի ամանները պղինձէ էին եւ փայտէ գոլալ եւ երբեմն փայտէ պատառաբաղ: Մեղանի խոնջան, որուն շուրջ կը նստէին, փայտէ շինուած կ'ըլլար եւ կլոր: Կայ նաեւ պղինձէ ծեծուած սէյնի: Ի հարկէ, այս առարկաները կը փոխուին, նայած, թէ ինչ կարողութիւն եւ ճաշակ ունեցող մէկն է: Ըսած եմ, որ Գանձակ Մարսուպի տունը կէս քաղքեհնի էր:

Ինչպէս ըսի, կ'ենթադրեմ հետաքրքրական պիտի ըլլայ եւ պիտի ծառայէ իր նպատակին, եթէ փորձուած խաղացողներ երեք ժամուայ ընթացքին երեք պատմուածքներ ներկայացնեն:

«Աղանիներ»էն երկու օրինակ դրկած էք: Այս ծրարով մէկ օրինակը ձեզի կը դրկեմ:

Սիրով՝ Համաստեղ

ԱՂԱՆԿԻՆԵՐԸ

Տպագրված է «Բազին» հանդեսի 1974թ. 8-րդ համարում:

ՏՈՒՆԸ

Տեքստը պահվում է Գրականության եւ արվեստի թանգարանում (այսուհետ՝ ԳԱԹ) Համաստեղի ֆոնդի 25 համարում:

Տեքստը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 26 համարում:

1. Մատիտով ջնջված է. «Կ'ըսեն մեր գեղի եկեղեցիի շինութեան ատեն ինք ալ մատ է ունեցեր, ինք ալ վարպետ է եղեր, խրատ, խորհուրդ տուեր է:

ԲԱՐՍԵՂ – (Թել մը դրան գամին անցնելով եւ մեղրամոմել պատրաստուելով) Հա՛, Գանձակ Պարսամ ինք էլ կ'ըսէ, թէ եկեղեցիին հնչում արձագանգը իր մեծ հօր գործն է, թէ պատերուն մէջ անհմանալի բաներ դրած է, ու ձայները պայծառ կ'ելլեն ...»:

2. Մատիտով ջնջված է. «Է՛, Գանձակ Պարսամ որ ըլլամ եւ իշու ականջով լիքը ոսկի ունենամ, ես ալ արախչինս բարակ կը կապեմ, ճիթախլով պատրաստուած սալաթ կ'ուտեմ ու Թորիկ Ղուկասին հետ ամէն օր տամա կը խաղամ:

ԲԱՐՍԵՂ – Հա՛, էդ ճիշդ կ'ըսես. Գանձակ Պարսամ, ճիթախլով սալաթան ու Թորիկ Ղուկասի հետ տամաչի խաղը մէկ են, անբաժան են, աղբոր պէս են»:

Տեքստի հետ պահպանվել է կարճ գրություն.

«Միրելի Համաստեղ

Այս վերջին երկու տողերը դուք ջնջած էք, ես ալ ջնջեցի: Սակայն հանդիսատեսին ինչպէ՛ս հասկցնիլ, թէ Գանձակ Պարսամ եւ Թորիկ Ղուկասն լաւ բարեկամ են, յաճախ միասին տամայ կը խաղան:

3. Մատիտով ջնջված է. «լծվար, սակայն էդ Տիքթօն ծերացեր է, ոսկորները ցցուեր են, ոտքերուն վրայ կը դողար: Էդ եզան բան պիտի պատահի: Թորիկ Ղուկասի ձեռքը որ նեղ չ'ըլլէր, նոր եզ մը պէտք է առնէր, բայց այս նեղ օրերուն ինչպէ՛ս ընէ»:

4. Մատիտով ջնջված է.

«ԿԱՐՕ ԹՈՐՕ – Աստուած բարին ընէ. Թորիկ Ղուկաս լաւ մարդ է. էհ, օրերը լաւ չեն: Բայց Թորիկ Ղուկաս աշխատող է, տակէն կ'ելլէ»:

5. Մատիտով ջնջված է.

«ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ – Հա՛, հա՛, Թորիկ Ղուկաս լաւ մարդ է, տակէն կ'ելլէ: Բարսեղ, դուն կը գիտնաս, կարծեմ Կարմուճի արտը ուղղակի Թորիկի անուցին է, չէ՛, կնկան կամ ուրիշի անուցին չէ:

ԲԱՐՍԵՂ – Ամբողջ իր անուցին է, լաւ արտ է, մաքուր սեւ հող, Թորիկ Ղուկաս եղունգներով մաքրեր է էդ արտը, աչքի լուսին պէս կը դոգայ վրան»:

6. Մատիտով ջնջված է.

«ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ – Հա՛, ես ալ էղպէս գիտէի»:

7. Մատիտով ջնջված է. «արեւուն տակ: Էղպէս արեւուն տակ լաւ չէ, երբան գիւղացիներով քաշենք ծառին տակ, ջուր ու խոտ տամ. հանգիստ թող ընէ, հանգիստ թող մեռնի»:

8. Մատիտով ջնջված է.

«ԿԱՐՕ ԹԱԹՕ – Հա՛, որ խերով տարի ըլլայ, նեղը չի մնար. անձրեւ պէտք է, Բարսեղ էմմի, անձրեւ: Որ խերով տարի չըլլայ, որ անձրեւ չգայ, Թորիկ Ղուկասի աշխատանքն ու քրտինքը քանի՞ փարա կ'ընէ ... Անձրեւ, անձրեւ պէտք է գայ: Խէրն ու բարիքը անձրեւին հետ վաք կու գան:

ԳԱՆՉԱԿ ՊԱՐՍԱՄ – Հա՛, էդ ճիշդ ըսիր. անձրեւ որ չըլլայ, ցանքերն ամէն կը վառուին: Էհ, աշխարհ է, ամէն ինչ կ'ըլլայ. լաւ է՝ էդ Կարմուճի արտը իր անուցին է»:

Տեքստում պահպանվել է գրություն. «Այս տողերուն վերացուիլը կ'ուզես, սիրելի՛ Համաստեղ, այն մտահոգութեամբ, թէ «Գալիքին թափը կը կոտրէ»: Առարկութիւնը ճիշդ է, սակայն հանդիսատեսները այլեւս լաւա՞ծանօթ չեն գիտին, ատոր համար է, որ այդ նախամտահոգութիւնը կ'ուզեմ տալ իրենց, որպէսզի դիւրաւ մտնեն Թորիկ Ղուկասի մտահոգ հոգեբանութեան մէջ: Բայց եւ այնպէս չջնջեցի»:

9. Առանձին թղթի վրա պահպանվել է մուրհակի ձեռագիր տեքստը.

«Ես՝ Գանձակ Յակոբի տղան, թող վարպետ Արութիցի, Պարսամ Գանձակեան, հինգ օսմանեան հնչում ոսկի պարտք կու տամ նոյն գեղացի Թորիկ Ղազարի որդոյն՝ Ղուկաս Թորիկեանին, վճարելի յամի տեառն 1892 օգոստոս 6ին, կալ ու կուտը ներս առնելու ատեն:

Թէ որ Թորիկ Ղազարի որդին՝ Ղուկաս Թորիկեանը, ուզէ ցորեն վճարել օրուայ գնով վարպետ Արութի թոռան՝ Պարսամ Գանձակեանին, պարտի վճարել 6 ոսկիի հաշուով: Մոյն մուրհակին համաձայն՝ Թորիկ Ղուկասի որդին՝ Ղուկաս Թորիկեան, պարտի վճարել Գանձակ Յակոբի տղուն՝ Պարսամ Գանձակեանին, ամէն մէկ հնչում դեղին ոսկիին՝ ամսական 5 դրուշ տակուս:

Մոյն մուրհակը երկուստեք համաձայնելով ստորագրուեցաւ 3 վկաներովս յամի տեառն 1892 ասպիլ 4ին:

Վկաներ, ստորագրութիւններ»:

## ԵՐԵՎԱ ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ

Տեքստը մեզ տրամադրել է դրամատուրգ, բեմադրիչ, դոկտոր Հրանտ Մարգարյանը:

Դոկտոր Հրանտ Մարգարյանի ծանոթագրությունը. «Այս բեմակա-  
նացման տարբերակ մը առաջին անգամ ներկայացուած է Համաստեղի  
յոթելիմական հանդիսութեան, Սթաթլըր Պանդոկ, Նիւ Եորք, 1967ին:  
Նոյնը ներկայացուեցաւ Պոսթըն, 1967ին, Համաստեղին նուիրուած յետ-  
մահու ձեռնարկին»:

2007թ., Մարտ 17ին ներկայացուեցաւ Նիւ Դըրսի, Մարտ 23ին՝ Ֆիլա-  
տելֆիա, իսկ Ապրիլ 27ին՝ Նիւ Եորք՝ Համաստեղի մահուան 40ամեակին  
առթիւ կազմակերպուած յոթելիմական ձեռնարկներուն:

Այս խաղը կարելի է բեմադրել կամ՝ ըմբերցասանութեամբ, ուր դերա-  
կատարները կը խաղան՝ դերերը կարդալով, առանց մեծ տեղադրական  
շարժումներու, սիմպօլիք կամ ամբողջական տարազներով կամ ալ՝ ըն-  
դունուած բեմական ներկայացման ձեւով:

Բեմադրութեան կը նպաստէ յարմար երաժշտութիւն մը՝ յատկապէս  
սկիզբը եւ վերջաւորութեան:

Լոյսերը՝ ըստ յարմարութեան»:

## ԱՅԾԵՏՈՍԱՐ

Տեքստը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 28 համարում:

Տեքստի վերջում կա նշում.

«ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ»: Կարելի է նաեւ հետեւեալ պարբերութիւնն ալ  
արտասանել ու ապա վերջացնել:

ՉԱՅՆԸ (Կարճ դադարէ մը ետք).

Տարիներ ետք՝ շատ ու երկար,

ես որ տեսայ, Չոր գեղին տեղ բլուր մը կար.

կար աղբիւրին տեղը՝ ցամքած,

դեռ կար վանքին մէկ պատը ցած:

Ինձ պատմեցին, կար զոյցը աւանդական,

թէ Չոր գեղիք էն օրերէն կ'ապրին ու կան:

Ամէն Ուրբաթ մեծ պատեքին,

արեւն հազիւ հասած մուտքին,

եղ բլուրի յատակէն խոր

կու գայ աղմուկ ու խուլ ժխոր:  
Կ'ըսեն, կ'ըսեն՝ ոսկորներով շխկան, դեղին,  
բնակիչներն են Չոր գեղին,  
կազմած քափոր,  
եղ Ուրբաթ օր  
փնտռտուքի կ'ելլեն էժը,  
այ' էն էժը, էն չար էժը,  
որ տնկեր է իր կարճ ազին,  
որ թողեր է կանաչ այգին,  
որ մտեր է բակը վանքին  
ու գողցեր է խաչը անգին»:

## ՀՈԴՎԱՄՆԵՐ

### ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԸ

Հոդվածը տպագրվել է «Հայրենիք» օրաթերթի 1961թ. փետրվարի 2-ի  
համարում:

Նույն օրաթերթի մարտի 1-ի համարում տպագրված է «Կ. Զարեանի  
յարգանքի ճաշկերոյթը» վերնագրով հոդվածը՝ 1961թ. փետրվարի 19-ին  
Լոս Անջելեսում կազմակերպված երեկոյի վերաբերյալ: Նշվում է, որ Հա-  
մաստեղը շնորհավորական նամակ է ուղարկել Կ. Զարյանին:

### ՏՕԸԴ. ԶԷԶԼԻԿԵԱՆԻ ԳՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ

1. Համբարձում Զեքիկյանի «Բժիշկ մը եւ արդի գրականութիւնը»  
գիրքը լույս է տեսել 1964թ., Երուսաղեմում:

2. Հ. Զեքիկյանի գրքի 22-24 էջերում կա հետաքրքիր նյութ. «... Ռուս-  
ներուն մման մեքը՝ հայերս, կարեկցող ժողովուրդ ենք, խնայող ենք  
ֆրանսացիներուն պէս: Մեր ողջ նորավէպը անիլ յաջող է, քան թէ վէպը:  
Չեւով մեր նորավէպը անիլ մօտ է ֆրանսականին, զգացմունքի ջերմու-  
թեամբ՝ ռուսական գրականութեան»:

Եթէ ինձի առաջարկէին (առաջարկող ալ չկայ, եւ ես կը կասկածիմ, թէ  
չկայ նաեւ հետաքրքրուող), որ հայկական նորավէպերու հաւաքածոյ մը  
խմբագրեմ, ես պիտի ընտրէի Շիրվանզատի «Արտիստը», Չօրապի  
«Փոստալը», Զարդարեանի «Մեւ Հաւը Կանչեց»ը եւ Ահարոնեանի «Կա-  
թուշքը»: Ասոնց պիտի կցէի Թումանեանի «Գիքորը», Բաշալեանի «Պա-  
»

լրխճի Գեորգը», Երուխանի «Չկնորսին Սերը», Թոթովենցի «Ամերիկա Գնացող Հարսնացուն», Համաստեղի «Երսեկ Այն Օրերուն», Արագիի «Ընկեր Մուկույը», Բակունցի «Մե Յելերի Մերմնացանը», Շահնուրի «Պճեղ մը Անուշ Սիրտը» եւ թերեւս քանի մը ուրիշներ:

Ինձի համար դիրքին չէր այս ընտրութիւնը ընել: Թերեւս պէտք չէր, որ ցանկէս դուրս ձգէի Մրուանձտեանցը, Թլկատիցիին, Հրանդը, Նար-Դոսը, Փափագեանը եւ Եսայեանը: Կարդացի զանոնք նորէն, տարիներ վերջ: Չկար նախկին համը, հոտը: Թերեւս ես փոխուած եմ: Թերեւս իրենք հինցան: Անոնք գրեցին որոշ ժամանակի մը համար, երբ մենք պատրաստ էինք գրկարաց ընդունիլ իրենց մթերքը: Անցաւ այդ ժամանակը: Մեր ճաշակները փոխուեցան. չեմ ըսեր՝ բարեփոխուեցան: Ինձի անանկ թուեցաւ, թէ իրենց նորավէպերը գերծ էին համամարդկային հմայքէ: Իրենց նիւթը զուտ ազգային էր եւ կամ սահմանափակ շրջանակէ մը քաշուած: Անոնց նորավէպերը, արդի ճաշակով, չունէին ներկայանալի կաղապար ու կերպարանք: Մաշած, ճոզած (stilted) հանգամանք մը ներկայացնէին ինձի:

Հայ նորավիպագիրը, ինչպէս ֆրանսացի Մոփասան եւ կամ ռուս Չեխով, իր ժամանակի, իր ժողովուրդի հոգեվիճակը կ'արտացոլանէ՝ ներկայացնելով տիեզերքը հիւլէի մէջ, մարդկութիւնը եւ մարդկութեան մշտնջենական ցաւն ու հրճուանքը իր ազգակից կամ իրեն ծանօթ այլազգի մարդուն մէջ: Գրագէտի մը շօշափած նիւթը կրնայ պայմանաւորուած ըլլալ որոշ ժամանակէ մը եւ ունենալ զուտ տեղական եւ կամ ազգային հանգամանք, բայց ան պէտք է հետաքրքրէ ուրիշ ազգի, ուրիշ երկիրներու զուակները եւ շարունակէ հետաքրքրել: Մոփասանն ալ գրեց ֆրանսացիներու մասին, եւ իր պրպտած բարքերը կը պատկանին անցեալ դարուն: Բայց ան գիտէր ընտրել այն կարգի նիւթեր եւ ունէր զանոնք հանդերձաւորելու այնպիսի նուրբ ճաշակ, որ մենք մինչեւ հիմա կրնանք կարդալ իր նորավէպերը հաճոյքով: Նոյնը կրնանք վկայել Չեխովի մասին: Նար-Դոս, որ Չեխովը հայացուց, չկրցաւ անկէ դաս մը սորվիլ:

Ի՞նչ մեղք ունէր Օշական: Անոր «Տոպիճը», «Պաղտոն» կամ «Տոգսանը» ինչո՞վ եւ կը մնան Բաշալեանի «Պալլիսի Գեորգ»էն: Բաշալեանին նորավէպը լոյս տեսաւ 1890ին, երբ քաջութիւն կը պահանջէր ներմուծել խոնարհ արարածներ քննադատ փողոցային բարբառ մը գրականութեան մէջ: Ինչ որ Բաշալեան սկսաւ, Երուխան քիչ մը առաջ քշեց իր ձկնորսի պատմութիւններուն մէջ: Օշական իր նորավէպերն ու հեքեքները գրեց Բաշալեանէն, Երուխանէն, Ջօհրապէն ու Ջարդարեանէն քառորդ դար եւ թերեւս անկի ետք: Օշական մեծ քննադատ մըն էր: Մեծ քննադատ մըն էր

Չօպանեան: Երկուքն ալ փորձեցին նորավէպեր գրել. քրտինք կը հոտի անոնց երկերէն: Որպէս վիպող՝ Չօպանեան ճզնեցաւ Ջօհրապէն ու Բաշալեանը գերազանցել: Օշականին մէկ աչքը Ջարդարեանին վրայ էր, եւ միւսը՝ Երուխանին: Չօպանեան չյաջողեցաւ որպէս նորավիպագիր, ու Օշական բան մը չաւելցուց Ջարդարեանի հեքեքներուն վրայ եւ կենդանի արարած մը՝ Երուխանի խոնարհ տիպարներու շարքին:

Լուսարանն ուրիշ կէտ մըն ալ: Երբ վերսկսայ կարդալ հայկական նորավէպերը, ես հանդիպեցայ մէկէ անկի զուգադիպութիւններու: Թէ՛ Թումանեան եւ թէ՛ Համաստեղ ունին «Քաջ Նազար» անունով նորավէպեր իրարու շատ մնան (Դեմիքոնեանն ալ ունի նոյնանուն գրութիւն մը): Անշուշտ Թումանեան անկի կանուխ գրեց: Համաստեղ եւ Թոթովենց՝ երկուքն ալ խարբերողի, գեղարուեստականօրէն քիւրեղացուցին իրենց գաւառի յատուկ ուրիշ աւանդութիւն մը: Ծովագ աշխարհի մէջ կայ այն նախապաշարունը, թէ աղանի խաղցնողին տունը կ'այրի կամ կը քանդուի: Համաստեղ հրատարակեց իր «Աղանիները» 1924ին, Թոթովենց՝ 1934ին՝ տասնամեակ մը տարիներ վերջ: Լեւոն Բաշալեան, որուն հայրը քաղցի էր, գրած էր «Աղանիները» անունով նորավէպ մը, որ առաջին անգամ լոյս տեսաւ 1893ին՝ Համաստեղի նորավէպէն անկի քան քառորդ դար եւ Թոթովենցէն 36 տարիներ առաջ: Բաշալեան չյաջողեցաւ կենդանացնել աւանդական նախապաշարունը, ինչպէս ըրին Համաստեղ եւ Թոթովենց: Ես սիրեցի երկուքին ալ «Աղանիները» եւ ուզեցի մէկը ընտրել: Չկրցայ: Մէկը միւսէն լաւ էր, եւ թերեւս երկուքն ալ պէտք է գտնողէի ցանկիս մէջ: Երկուքն ալ գտնողեցի:

Սխալ մի՛ հասկնաք: Ես չեմ ուզեր այն տպաւորութիւնը ձգել, թէ Համաստեղ Թումանեանէն եւ Թոթովենց Համաստեղէն նիւթ իրացուցին կամ քաց է քաց քանագոգութիւն ըրին: Շէքսպիր ալ ուրիշ գրողներու նիւթերը շահագործեց, եւ նոյնը ըրաւ Կէօթէ: Կեանքը բեղուն է նիւթերով, ու տոհմային աւանդութիւնները ռեւէ գրողի մը սեփականութիւնը չեն: Քանի՞ հայ գրողներ վէպի կամ մանրավէպի նիւթ ըրած են Մասունցի Դափքը կամ Սեբըր: Թէ՛ Թլկատիցիին («Պատկերին տղան», 1905) եւ թէ՛ Թլկատիցիի աշակերտը եւ երկրպագուն՝ Թոթովենց, Ամերիկա գացող հարսնացուներու մասին գրեցին: Թոթովենցի «Հարսնացուն» (1921) անկի յաջող էր:

Թերեւս ուրիշներ տարբեր ընտրութիւններ ընէին Թոթովենցէն, Թումանեանէն, Համաստեղէն ու Շահնուրէն: Թումանեանի «Գիքորը» պզտիկ գլուխ-գործոց մըն է: Ես Ամերիկա կը բնակիմ. Թոթովենցի «Հարսնացուն» մնան շատ մը հարսնացուներ տեսած եմ: Տեղահան



եղած են. Համաստեղի «Երանկ Այն Օրերուն»ը ազդեց ինձի: Որպէս նորապէս «Երանկ Այն Օրերուն»ը ունի քանի մը թերութիւններ: Պատմութեանը կը սկսի ու կը վերջանայ Միսսիի եւ Մնուշի փոխյարաբերութեամբ, բայց մէկէն ի մէկ Հայրապետեանց Դանիէլ անունով մէկը կը ցցուի նորապէս վերջանալէն քիչ առաջ, եւ այդ պատուաստումը անակնկալի կը թերէ մեզ եւ կը թուի պատահական, արուեստակեալ:

«Անուշ Միրադը» սփիւքի մէջ մուրաձ հայ մայր մը կը պատկերացնէ: Ըհնուր գեղեցիկ պատկեր մը կը գծէ՝ պատկերը Եպրաքսէ հանրմիւն: Ըհնուր կ'աղաւաղէ այդ պատկերը իր իսկ միջամտութեամբ: Տաղանդաւոր գրող մըն է Ըհնուր, բայց քիչ մը շատ կը խօսի: «Անոր, գոր ես կոչեցի Եպրաքսէ հանրմ, - Ըհնուր կը գրէ նորապէս վերջին նախադասութեան մէջ, - բայց դուն գիտես, ընթերցող, որ պնդ մը անուշ սիրտ է»: Այս կարգի միջարկութիւն թերեւս ներելի էր ասկէ հարիւր տարի առաջ, երբ Մովսսան եւ Չեխով տակաւին չէին սկսած գրել:

Մեզի՝ սփիւքի հայերուս համար դժուար է որոշ գաղափար կազմել Հայաստանի գրողներու մասին: Թերեւս կան Արազիէն կամ Բակունցէն անելի տաղանդաւոր նորապէս գրողներ: Ես միայն այս երկուքը կարողացի ու այս երկուքէն քանի մը կտորներ: Կարողացածներուս մէջ սիրեցի «Ընկեր Մուկուլը» եւ «Սեւ Տելիքի Մերմնացանը»:

## ՉԵՈՒԳԻՐ ՆՅՈՒԹԵՐ

### «ՈՒՌԲԷՆ ԳԱՐԲԻՆԵԱՆԻ ՅՈՒՅԼԵԱՆԻ ԱՌԹԻ»

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 37 համարում:

1. «Հայրենիք» օրաթերթի 1956թ. ապրիլի 1-ի համարից եւ նույնամյակի մասագրից տեղեկանում ենք, որ նույն թվականի հունվարի 29-ին Լուս Անջելիսում, փետրվարի 17-ին Ֆրեզնոյում մշտել են Ռ. Դարրինյանի (Արտաշես Չիլինգարյան, 1882-1968) գրական-հասարակական գործունեության 50-ամյա հոբելյանը: Օրաթերթի «Ռուրէն Դարրինեանի յորելինական շքեղ հանդէսը Լուս Անանելիսի մէջ» հոդվածում կա մի հատված հոբելյարի խոսքից. «Չափազանց դժուար է ինձ համար նստիլ ու իմ մասին գովասանքներ լսելը:

Մենք առհասարակ վարժ ենք միայն քննադատութեան: Անհատը առանձինն, որքան ալ մեծ ըլլայ, որքան ալ տաղանդաւոր, մեծ արժէք մը

չի ներկայացներ: Մենք բոլորս ալ դաշնակցութեան մէկ զինուորն ենք եւ մեր յօժար կամքով կը նուիրուինք, կը զօհարեմք, ոչ մէկ մարդ մեզ չի ստիպեր այդպէս ընելու:

Մեր խիղճն ու գիտակցութիւնը կը մղեն մեզ ընտրելու այդ ճանապարհը. դուք ոչ մէկ բանով պարտական էք մեզի. ձեր գնահատանքը ձեր ազնութիւնն են կու գայ:

Դժբախտ ազգերը շատ մտաւորականներ չեն կարող ունենալ, քանի որ չունին պետութիւն, ազատ, անկախ երկիր, որ հոգ տանի անոնց: Ատոր համար ալ շատ մը գրագէտներ, մտաւորականներ կ'աշխատին օտար երկիրներու մէջ՝ հարստացնելով օտար մշակոյթները: Քիչերը միայն կը հաւատան ու կը նուիրուին իրենց ազգին ու մշակոյթին:

Դարերու ընթացքին մեր ազգային ճակատագիրը կը վարէին մեր եկեղեցականները, բայց պայմանները փոխուեցան, ու անոնց տեղը երեսնակն քաղաքական կազմակերպութիւնները:

Վերջին վաթսուն տարիներուն Հ.Յ.Դաշնակցութիւնն է, որ պաշտպանեց մեր ազգային դատը եւ մղեց ազատագրութեան պայքարը:

Դժբախտաբար այսօր ալ միայն Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ կը ջանայ վերստին ստեղծել Մայիս 28ը»:

Հոդվածի վերջին հատվածում թվարկվում են շնորհավորական հեռագրեր ուղարկած ընկերների անունները. հիշատակվում է նաեւ Համաստեղի անունը:

«Հայրենիք» օրաթերթի 1956թ. հունիսի 23-ի համարից սկսած՝ տպագրված է Ռ. Դարրինյանի կյանքին, գործունեությանը նվիրված ծավալուն խմբագրականը:

1956թ. փետրվարի 7-ին Ռ. Դարրինյանը Լուս Անջելիսից գրել է Համաստեղին. «Թերեւս գիտես արդէն, որ մեր հանդէսը շատ լաւ անցաւ:

Ես շատ շնորհակալ եմ «Ասպարէզ»ի մէջ տպուած յօդուածիդ համար, ինչպէս շնորհակալ եմ միւս յօդուածագիրներուն»:

«Ասպարէզ» օրաթերթի 1956թ. փետրվարի 7-ի համարը նվիրված է այդ հոբելյանին: Դժբախտաբար Երեսնում օրաթերթի այդ համարը չի պահպանվել: Համարը չգտանք նաեւ Լուս Անջելիսում՝ թերթի խմբագրատանը:

Համաստեղն այս հոբելյանին անդրադարձել է 1956թ. մարտի 30-ին Ս. Վրացյանին հասցեագրված նամակում:

«Ասպարէզ» օրաթերթի 1959թ. փետրվարի 11-ի համարից տեղեկանում ենք, որ 1959թ. հունվարի 17-ին Լուս Անջելիսում հացկերույթ-հանդես

է կազմակերպվել՝ ի պատիվ Ռ.Դարբինյանի: 1959թ. հուլիսի 31-ին եւ օգոստոսի 11-ին «Հայրենիք» օրաթերթում տպագրված են հոդվածներ՝ նվիրված Ռ.Դարբինյանի հորեյանին, որ նշվել է Դեպոյատում, 1959թ. հուլիսի 2-ին: Հանդեսին նվիրված հոդվածում («Հայրենիք», հուլիսի 31) կարդում ենք. «Ապա խանդավառութեամբ ողջունուեցաւ ծանօթ գրագէտ ընկեր Համաստեղ, որ խօսք առնելով՝ այնքան գեղեցիկ ու ճշգրիտ վերլուծումով կարդաց «Յորելեարը եւ իր գործը» աշխատասիրութիւն մը»:

2. Համաստեղը մատիտով ջնջել է. «Նոյնիսկ իր դէմ եղած <անընթաց> պայքարները: Չմտնանք, որ ադ անձնական պայքարը չի կազմուած հոգիներու մէջ, միշտ ալ եղած է երէկ եւ կայ այսօր եւ իր գոյութիւնը կը ցուցնէ յաճախ թաքնուած երկու փոքրիկ կոտորակներով: Հիացումով դիտած են ընկ. Դարբինյանի դիրքը»:

3. Համաստեղը մատիտով ջնջել է. «մինչեւ Գողգոթայ»:
4. Չեռագրի հաջորդ 3 թերթերը չեն պահպանվել:
5. Համաստեղը մատիտով ջնջել է. «բոմաթիք շրջան մը ստեղծեցին»:
6. Համաստեղը մատիտով ջնջել է. «Յետոյ աշխատանքները եկան եւ հեռացուցին Դարբինյանը քննադատի կոչումէն եւ այդ»:
7. «Հայրենիք» օրաթերթի անգլերեն հավելվածներն են՝ «The Armenian Review», «The Armenian Weekly»:

### <ԳԵՐԱՊՍԻՒՄ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ԿՆՊՁԵԱՆ >

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 38 համարում:

1. Գերապատի Մեսրոպ Արքեպիսկոպոս Հապոզյանի (1887-1974) քահանայության 50-ամյակը նշվել է 1956թ. ապրիլի 22-ին, Նյու Յորքում: «Հանդէս Ամսօրյա»-յի 1967թ. 1-4-րդ համարի՝ «Միսիթարեան Միաբանութեան Յորելեանները» հոդվածում նշվում է, որ տարվա չորս հորեյաններին մեկը Հապոզյանի հորեյանն է: Նույն հանդեսի հաջորդ համարում տպագրված է Գերապատի Հապոզյանի շնորհակալական մամակը: Տպագրված է նաեւ հորեյարի ընդարձակ կենսագրականը:

2. Համաստեղը մատիտով ջնջել է. «գոյութիւն մըն է»:
3. Համաստեղը մատիտով ջնջել է. «Այդ հզօր ազգերէն եղած են Աստիտանը եւ Հոմմընը»:
4. Համաստեղը մատիտով ջնջել է. «ու քաղաքակրթութիւնը»:
5. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մեր պատմական Հայաստանը իր սահմաններով առաւելապէս մշակութային եղած է: Հայաստանի քարտէ-

սին գծերը հայ ժողովուրդի հոգուն մէջ գծուած էր, ուր ոչ մէկ թշնամի կրցաւ գրաւիլ»:

6. Համաստեղը մատիտով ջնջել է. «Անոնց հոգեկան ապրումներն <երազներն> էին, որ իրականութիւն դարձան, երբ առաջին անգամ գծուեցան Հայաստանի Հանրապետութեան սահմանները: Մեր ֆէտայիները, մեր կոռուդները սուրբերու անբասիր հաւատքով մահատակուեցան՝ պահելու համար հոգեկանը, որ նոյն ինքն մարդկայինն է»:

7. Համաստեղը մատիտով ջնջել է. «Այս առիթով կ'ուզեմ ըսել, որ անապատ քշուած մեր մէկ միլիոն մահատակները նոյն դերը կատարեցին, ինչ դեր որ կատարեցին Վարդանի մահատակները: Աւելի ամրացուցին հայ ժողովուրդի հոգեկանը, եւ արդէն շատ չանցած՝ հերոսական կռիւներով ստեղծուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը»:

8. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մենք կը տեսնենք, որ առաւելապէս մշակոյթը եղած է գաղտնիքը մեր գոյութեան»:

9. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ուրիշ մը. «պէս-պէս վշտօք եւ չարչարանօք գրեցի»:

10. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ինձի համար քիչ մը անելի բնական էր, երբ Վենետիկէն յետոյ կը հիմնուի Վիեննան ու կը դառնայ նոյնքան կարեւոր կեդրոն: Իր բոլոր աշխատանքներով Վենետիկը մնաց բանաստեղծ, զգացում եւ հաւատք իր «Բազմավէպ»ով, իր Ալիշանով եւ Բագրատունիներով: Կու տամ երկու անուններ միայն. Ալիշանը՝ իր համբերատար բանասիրութիւնով, իսկ Բագրատունին՝ իր հոյակապ «Հայկ դիւցազն»ով»:

### ԵԴՈՒԱՐԴ ՊՕՅԱՆԵԱՆ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 21 համարում: Էդուարդ Բոյաջյանը (1915-1966) վախճանվել է 1966թ. հոկտեմբերի 13-ին:

1. Պահպանվել են հոդվածի ձեռագրից մի քանի էջեր: Այս հոդվածի վերջին հատվածը պահպանվել է թղթի պատառիկի վրա. թվագրված է՝ 6. «Մենք կը սիրէինք անոր յանդգնութիւնը եւ անկեղծութիւնը գրականութեան մէջ, ինչ որ է՛ն կարեւոր պայմանն է գրողի մը համար»:

Եդուարդը դեռ այնքան թարմ էր ու յորդ՝ Խըտըրպէկի ջութին պէս իր արձակ-բանաստեղծական թռիչքներով: Մեղք, որ շուտ ցամքեցաւ այդ աղբիւրը: Մենք պէտք ունէինք Եդուարդին:

Համաստեղ»:

Համաստեղը տեքստը մաքրագրել է: Մեր տրամադրության տակ է հողվածի սեւագրի 2 թերթ, որոնց ընթեռնելի 1-2 էջերին հաջորդում է դժվարընթեռնելի մեկ էջ: Համաստեղը սեւ թանաքով լրացումներ է կատարել: Հաջողվեց սեւագրի տեքստով լրացնել պակաս մի հատված. «Վերջապես Մուսա լեռը, որ իր համար եղած էր Նահապետը, Արարատը՝ իմաստութեամբ եւ խոռովքով, իր ուսերուն վրայ բռնած էր ժողովուրդը 40 օր գոյամարտի ընթացքին: Անհատի մէջ գոյամարտ մը կատարուէր. ճահիճ, մուկ, ոջիլ. <անընթ.> հիւանդութիւն, որ աւելի զոհեր խլեց, քան Մուսա տաղի դիւցազնամարտը: Պատանի Եղուարդի հոգիին մէջ էր, որ կը կատարուէր այդ բոլորը, եւ կար նոյնիսկ ճահիճը, ուր ժողովուրդ մը կը պայքարեր դիմանալու եւ ապրելու համար: Ահա թէ ինչպէս ստեղծուեցաւ անոր ոճը, որ ժողովուրդինն էր: Օր մըն ալ, երբ փորձեց հեռանալ, կ'ուզէր հեռանալ ինքզինքէն մի քանի գաւաթ օղիով եւ կամ գինիով, որ առաւելապէս կապ ունէր իր հոգեկանին հետ, որ այնքան անգութ եղաւ իրեն հանդէպ: Այնքան անգութ եղաւ, որ միշտ փնտռեց իմաստ մը տալ կեանքին, ներդաշնակուիլ գեղեցկութեան, հասարակութեան հետ: Ելք մը, ճամբայ մը անտառին մէջէն դուրս գալու եւ Արեւը ողջունելու: Պայքարեց այդ ելքի համար ու ինքն անել ճամբու մը վրայ <ձգեց>:

Գուցէ այդ պայքարն էր եւ կամ տառապանքը, որ զինք հասցուցած էին մտածումի իմաստութեան: Իրն էր նաեւ մտածումի եղանակը: Ու գուցէ «ինքը» ըլլալն էր, որ չկրցաւ կեանքին մէջ ներդաշնակութիւն գտնել եւ գտնել իր խաղաղութիւնը: Ու չափաի գտներ իր խաղաղութիւնը, եթէ ապրէր, երկար ապրէր եւ անտարակոյս <անընթ.> Եղուարդին Պէյրութն էր, որ <անընթ.> այնքան կանուխ քայքայեց, եւ ան օրեր կը զգար այդ քայքայումը, որ կը կատարուէր իր մէջ անկախ իր կամեցողութենէն:

Բնութիւնը իր անգութ խաղերն ունի. ան կը լեցնէ մարմինը գեղեցկութիւնով, կը լեցնէ հոգին իմաստութիւնով՝ հետզհետէ մաս-մաս քայքայելու համար, եւ այդ եղած է ներքին պայքարը բոլոր անոնց, որոնք լեցուն են կեանքով եւ արուեստի գեղեցկութիւնով: Եղուարդի մէջ կանուխէն սկսած էր այդ քայքայումը, գուցէ ի մանկութենէն: <Անընթ.> գանգատ ունէր, երբ մանաւանդ հետզհետէ կը մահանար: Եւ միշտ ալ պայքար մնաց իր մէջ եւ մէջտեղ բերաւ կեանքի եւ արուեստի գեղեցկութիւն: Անոր յոռետես ըլլալը կեանքը իր գեղեցկութիւնով պահելու հօգոր գանգատն էր: Կեանքի մը ուժը կար անոր յոռետեսութեան մէջ: Այդ խոյանքը <ճայի> մտան, հայ ժողովուրդի խոյանքին՝ թոչունի մը պէս կեանքը իր <բոյնիմ> մէջ պահելու համար: Ժողովուրդը տեսակ մը անճակամացած էր Եղուարդին մէջ. այդ էր պատճառը, որ յաճախ զինք կը տես-

նէինք իր գծած նկարագիրներուն մէջ: Ինք անոնց մէջ կը <անընթ.> ու կը գանգատէր:

Մենք կը սիրէինք անոր յանդգնութիւնը եւ անկեղծութիւնը գրականութեան մէջ, ինչ որ կարելի էր պայման է գրողի մը համար: Դեռ այնքան քարմ էր Եղուարդը իր բանաստեղծական թռիչքներով ու գրական փափով: Խըղըրպէտի ջուրի աղբիւրին, դարաւոր կաղնիի քով...

Մեղք, որ շուտ ցամքեցաւ աղբիւրը Եղուարդին մէջ: Մենք պէտք ունէինք անոր»:

<ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՀԱՄԱՐ>

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 44 համարում:

1. Համաստեղը մատիտով ջնջել է. «որպէս անհատ, որպէս ազգ եւ որպէս հաւաքական պաշտպանութիւն»:
2. Համաստեղը մատիտով ջնջել է. «ֆիզիքական օրէնքով»:
3. Համաստեղը մատիտով ջնջել է. «որ ոչ որպէս մարդ եւ անհատ, այլ»:
4. Համաստեղը մատիտով ջնջել է. «անհատականութիւն»:
5. Համաստեղը մատիտով ջնջել է. «Գոյութիւնը պաշտպանելու համար: Ծիշդ այդպէս ալ ազգերու արուեստն է ու մշակոյթը»:
6. Համաստեղը մատիտով ջնջել է. «այնքան կարելի»:
7. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ահա թէ ինչու»:
8. Համաստեղը մատիտով ջնջել է. «որ հին, շատ հին ժողովուրդի մը հոգեկան արտայայտութիւնն է»:
9. Համաստեղը մատիտով ջնջել է. «հրեշտակը՝ Քրիստոսը»:
10. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մշակոյթը հայ ժողովուրդին մէջ հօգոր բանակներու դեր կատարած է»:
11. Համաստեղը մատիտով ջնջել է. «Գտնէ ինքզինք եւ մանաւանդ գտնէ իր ինքնությունն ոճը»:
12. Համաստեղը մատիտով ջնջել է. «որպէս կորիզ»:

<ԱՊՐԻԼԻ 24>

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 28 համարում:

1. Համաստեղը մատիտով ջնջել է. «Անտարակոյս ցեղային առողջ ժառանգութիւն է, երբ»:

2. Համաստեղը մատիտով ջնջել է. «Եւ ոչ ալ գրատախտակ»:
3. Համաստեղը մատիտով ջնջել է. «Քրիստոսն էր, որ խարազանը ձեռքին դուրս կը հանէր լուծաբանութիւնները Աստուծոյ տաճարէն»:
4. Այս հանդիպումը դարձել է Համաստեղի «Յաւիտենական ճամբորդը» պատմվածքի նյութ (Տես՝ «Համաստեղ. «Մոռացված էջեր», Ա հատոր):
5. Համաստեղը մատիտով ջնջել է. «ու ջարդուեցան քուրմերը»:
6. Հողվածի սեւագիր տարբերակից պահպանվել է 4 էջ:  
Հատվածներից մեկում կարդում ենք. «Կորիւնի, Մեսրոպ Մաշտոցի մէջ հիացումով կը տեսնենք համամարդկային ուժեղ բարոյականութիւն մը: Ան բացաւ դպրոցներ՝ վերացնելու անգրագիտութիւնը: Ճամբորդեց աշակերտներուն հետ՝ տարածելու համար Աւետարանի խօսքերը: Ան նոյն հաւատքով ստեղծեց մեր այբուբենը, թարգմանեց Ս. Գիրքը, որ մենք <անընթ. > դարձուցինք ցեղային մշակոյթ եւ նկարագիր: Այնքան <անընթ. > համամարդկային սկզբունքները, որ մտահոգուեցաւ դրացի երկիրներով եւ նոյնիսկ վրացիներու եւ աղվաններու համար յօրինեց այբուբենը ու այնտեղ տարածեց Աւետարանը:Հերոսը այն չէ, որ կը յաղթանակի առանց նպատակի: Հերոսը այն է, որ իրմէ վերջ գեղեցիկ սկզբունքները կը յաղթանակեն: Պատմութեան մէջ ճիշդ է կայ միայն <անընթ. > մը: Այն օրերուն աստուածներն իսկ միայն ֆիզիքական ուժի մէջ ըմբռնուած էին: Անոնք կայծակներու եւ որոտներու կը հրամայէին: Այդ բիրտ ուժն է, որ հետզհետէ տեղի կու տայ <անընթ. > մը եւ կամ նուրբ դէմքով Քրիստոսի մը, որ կը սկսի Երուսաղէմէն <անընթ. > լալով կայնիլ մարդկային թշուառութեանը <անընթ. >:Այդ Քրիստոսը ոչ միայն յաղթեց Հռովմին, այլև յաղթեց ամբողջ աշխարհին:Հրէայ ցեղի տաղանդաւոր մէկ գրող՝ Շուլմ Ալ, իր մէկ պատմուածքին մէջ կու տայ դուրս մը՝ հրէայ ցեղի ապրելու ուժը եւ հաւատքը արտայայտող»:
7. Համաստեղը մատիտով ջնջել է. «ապառաժներուն վրայ»:
8. Համաստեղը մատիտով ջնջել է. «Այս ժողովուրդը գիտէ յաղթանակել իր հաւատքով»:
9. Համաստեղը մատիտով ջնջել է. «յաւիտենական»:
10. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մենք պիտի յաղթենք պայքարով, որովհետեւ այդ պայքարին <անընթ. > հաւատք չէ, որովհետեւ մեր դատն արդար է»:

## ՀԱՏՎԱԾՆԵՐ ՉԵՌԱԳՐԵՐԻՑ

Չեռագրերի այս էջերը պահվում են ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 22, 30, 41 համարներում:

1. Համաստեղը մատիտով ջնջել է. «որ ստեղծագործութիւնն է մեր հոգեկան ուժին»:
2. Չեռագրի առաջին եւ յոթերորդ էջերը չեն պահպանվել:

## ԻՆՉ Է ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 10 համարում:

1. Համաստեղը մատիտով ջնջել է. «իր ճգնատրութիւնով, սինակեացներով»:
2. Համաստեղը մատիտով ջնջել է. «բանութիւն, ուսուցչութիւն ընելով մտած է այդ աշխատանքը՝ հաւատալով, որ»:

ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 25, 26, 29, 30 համարներում պահվում են այս ձեռագրի սեւագրերը: Պահպանված հատվածներից մեկը հետաքրքիր է. «Ճիգով ստեղծուած չէ այդ գրականութիւնը: Ըսել կ'ուզեմ՝ հայ գրագէտը գրած չէ վաստակ ընելու, ընդհակառակը, առանց ակնկալութեան, հազար ու մի գրկանքներով ըրած է, որովհետեւ իրմէ անկախ տարերային ուժ մը իր դերը կատարած է, նոյն տարերային ուժը, որ ձեռք առած է գրագէտին մէջ՝ Հայ գրողը անհատ չէ, ան ինքն իր մէջ ազգ է: Առանց հաւատքի չկայ ստեղծագործութիւն: Եթէ ստեղծագործեր է հայ գրագէտը, անոր հաւատքը եղած են միմիայն Հայաստանն ու հայ ժողովուրդը: Այդ պիտի ըլլայ մեր հաւատքն ու մեր սրբազան <պատմութիւնը>: Թլկատիցի, Դուրեան անհատներ չեն, եւ գործ ունին դարերուն հետ:

Յորելեանի այս խօսքով այսօր հայ ժողովուրդն է, որ եկած է իր գրագէտը գնահատելու: Ես տակաւին չեմ կրնար հաւատալ, որ իրա՞ւ լաւ բան ըրած եմ, որովհետեւ ինձի համար այնքան բնական եղած են այդ բոլորը, որքան բնական են հայ ժողովուրդը եւ գիւղը: Քննադատներ եկան ու ըսին, որ լաւ գործ ըրած եմ\*\*։ Անտարակոյս անոր համար, որ կրցած եմ տալ պարկեշտ ապրումներով, իր հաւատքով եւ իր ասանդութիւններով այն ժողովուրդը, որ անապատի մէջ իր ոսկորները ձգեց, եւ ես բան մը ուզեցի պաշտպանել:

Պաշտպանել՝ այդ եղած է առաւելապէս հայ գրագէտին դերը: Պաշտպանել <ազգութեան> նկարագիրը, ոգին՝ պաշտպանելու համար մարմինն ու գոյութիւնը:

Շատ անելի տաղանդատր գրագետներ, բանաստեղծներ եկան ու ան-  
ցան հազար ու մի գրկանքներով:

Հայ ժողովուրդը մեկ բան պիտի գիտակցի, որ իր գոյութիւնը առաւել-  
լապէս հայ գրագետին կը պարտի, ըսել կ'ուզեմ՝ իր ազգային, ոգեկան գո-  
յութիւնը\*\*\*:

Ուրեմն, սիրելի՛ հայ ժողովուրդ, փարինք գրին, գրականութեան ու  
գնահատենք հայ գրողը»:

\* Համաստեղը մատիտով ջնջել է. «Հայը անհատ չէ, ամէն մէկ հայ ազգ է: Ինքնիք  
մէջ ազգ է հայ գրողը»:

\*\* Համաստեղը մատիտով ջնջել է. «Ըրած եմ երէկ, հիմա աննպաստ պայմաննե-  
րում մէջ եւ բանտարտիւն ընելով: Այսօր դուք ալ եկած էք ըսելու, որ լաւ գործ ըրած եմ»

\*\*\* Համաստեղը մատիտով ջնջել է. «Եւ ոգեկանն է, որ առաւելապէս պահած է  
մարմնին գոյութիւնը»:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹԵ- ՆԷ ՄԻՆՉԵՒ ՄԻՋԻՆ ԴԱՐ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 11 համարում:  
Այս ձեռագիրն անվերնագիր է, իսկ նույն ֆոնդի 12 համարում պահվում է  
վերնագրված տարբերակը:

1. Համաստեղը 1959թ. «Միջնաբերդ» տարեգրքում տպագրել է «Բա-  
նաստեղծութիւնը», «Ազդակ» օրաթերթի 1959թ. մարտի 20-ի եւ «Հայրե-  
նիք» օրաթերթի 1959թ. մարտի 20-ի եւ 29-ի համարներում՝ «Հայ հին բա-  
նաստեղծութիւնը (Համաստեղի դասախօսութեան ամփոփումը)» հոդ-  
վածները, որոնք հրատարակել ենք «Համաստեղ. «Մոռացված էջեր»  
գրքի Բ հատորում:

«Ազդակ» օրաթերթում կա խմբագրական նշում, որ Համաստեղը  
1959թ. մարտի 21-ին Քենթրիջի մասնաճյուղում դասախոսություն է կար-  
դալու «Հայ բանաստեղծութիւն» անգիր դպրութենէն մինչեւ միջին դար»  
թեմայով: «Հայրենիք»-ում տեղեկություն կա երեկոյի մասնակիցների մա-  
սին. «Յարգելի գրագետին յիշած բանաստեղծութիւններէն ընթերցումներ  
կատարեցին դասախօսութեան ընթացքին օրիորդներ Սօնա Տէտեքեան,  
Վարսեն Զէշիշեան եւ դասախօսին դուստրը Լորիկ Համաստեղ: Շարա-  
կաններ երգեց Պոսթրնի Հայ ազգային երգչախումբը»:

Համաստեղի ֆոնդի 12 համարում պահվում է այս ձեռագրի սեւագիր  
տարբերակը, որի առաջին 8 էջերը հնարավոր եղավ կարդալ: Համոզված  
ենք՝ ձեռագրի համեմատաբար մաքուր տարբերակի, սեւագրի ու հրա-  
տարակած հոդվածների տեքստերի համեմատությունը հետաքրքիր  
նյութ է գրողի «ներքին խոհանոցի» հարցերով հետաքրքրվող ուսումնա-  
սիրողների, ինչպէս նաեւ ընթերցների համար. «Նախ նախաբան մը, թէ  
ի՞նչ է բանաստեղծութիւնը: Արուեստը, ըլլայ այդ երաժշտութիւն, պար,  
ճարտարապետութիւն, քանդակագործութիւն եւ նկարչութիւն, առաւելա-  
պէս հոգեկան արտայայտութիւններ են: Հոգեկան արտայայտութիւն  
ըսելով՝ մենք չենք կրնար բաժնել մեր մարմնէն ու զգայարանքներէն:  
Մենք ձեւ, կերպարանք կու տանք այն բաներուն, որ ներս առած ենք մեր  
զգայարանքներուն միջոցով: Այդ ձեւով կեանքին իմաստն է, որ կ'արտա-  
յայտենք եւ ճիգ մը կ'ընենք այդ իմաստը յաւիտեանական դարձնելու: Մեր  
հոգեկան այդ արտայայտութիւնը մահուան յաղթելու ճիգ մըն է:

Բառէն եւ խօսքէն առաջ անտարակոյս կային երաժշտութիւնը եւ պա-  
րը: Թռչումները միայն երաժշտութիւնով կ'արտայայտեն իրենց զգացու-  
մը: Կենդանիներն ունին նաեւ իրենց պարը: Դուք տեսած էք ձիու մը  
շնորհալի շարժումները բաց դաշտի մը մէջ չափական եւ գեղեցիկ:

Բանաստեղծութիւնը իր նախնական ձեւին մէջ՝ կեանքը հովանաւո-  
րելու ծառայած է, ինչպէս հողէ շինուած տունը եւ կամ այծի մազէ շինու-  
ած վերարկուն եւ կրօնը: Աղօթքն է առաջին արտայայտութիւնը բանաս-  
տեղծութեան: Զարայրներուն մէջ բնակող մարդը աղօթեց չարքերուն,  
որոնք այլերու եւ վիշապներու կերպարանք ունէին: Աղօթեց, որ խնայեն  
իր կեանքին, իր մարմնին, ուր կիներ իր նախշուն աշխարհն ստեղծած է,  
ստեղծած է տունը, սէրը, եւ որուն միջոցով մտերմացեր է նաեւ բնութեան  
հետ: Եւ մենք կը տեսնենք այդ սերը, որ կ'արտայայտուի պարին մէջ, եւ  
որուն անհրաժեշտօրէն կ'ընկերանայ երաժշտութիւնը՝ առաւելապէս  
հրապուրելու համար կիներ եւ փոխադարձաբար: Բանաստեղծութիւնը  
պարին եւ երաժշտութեան բացատրութիւնն է՝ բառերով արտա-  
յայտուած: Եւ այդ բառերը նոյնպէս առած են վանկերու չափ, յանգ եւ  
կրկնութիւն երաժշտական չափերուն հետ: Երաժշտութիւնը կրկնութիւն-  
ներ շատ ունի: Շատ նախնական աղօթքներուն, տողերուն մէջ յաճախ  
կրկնութիւններ կը տեսնենք, ինչպէս նիկրօներու հոգեւոր երգերը եւ բա-  
ռերը՝ միացած պարի ռիթմին հետ: Բանաստեղծութեան այդ չափի  
կրկնութիւնները կը տեսնենք մեր օրերու բանաստեղծութեան մէջ: Կը  
տեսնենք Վերլենի եւ Մեծարեցի մէջ եւ շատերու:

Այն նախնական աղօթքներն են, որ հետզհետե բարեշրջութեան ենթարկուած են աստուածներուն հետ ու ստեղծած են կրօնական բանաստեղծութիւնը ու երգեցողութիւնը:

Եթէ քիչ մը ւաւելի մօտենանք, պիտի տեսնենք, որ քրիստոնէական ծեսերուն եւ երգեցողութիւններուն մէջ շատ բան փոխուած չէ հեթանոսականէն, եւ որպէս այդ՝ հարուստ են հայ եւ կաթոլիկ եկեղեցին: Կրօնը բանաստեղծական ստեղծագործութիւն է: Դիցազներգութիւն է Աստուծոյ մը գոյութիւնը:

Մարդկութիւնն ալ անցած է զանազան շրջաններ՝ երախայական, պատանեկան, երիտասարդական եւ չափահասի շրջաններ: Նախնական շրջաններուն մէջ առաւելապէս զգացումով կ'ապրէին բանաստեղծական միաստութիւնով: Մեր հայ նախնիքներուն համար անտառը ոգիներու բնակարան էր. ծառերուն մէջ անոնց կերպարանքները կը տեսնէին: Ծառը ինքը ոգի էր, եւ ծառի տերեւներու սօսափիւններէն աստուածներու պատգամները փափասցող բառեր կը գուշակէին: Ոգիները կային ջուրներուն մէջ, ճամբաներուն վրայ: Աստղերու շարժումներէն ճակատագրական իմաստ կը փնտռէին: Անոնց համար աստղերը կը շնչէին, կը թարթէին, մարմին ունէին: Նոյնը չէ՞ մեր օրերու բանաստեղծներուն մէջ՝ Վարուժանի, Տերեւանի, Միամանթոյի, Դուրեանի եւ Մեծարեւնցի մէջ:

Բանաստեղծութեան համար հոգեկան է այն, ինչ որ գեղեցիկ է եւ արուեստի սահմաններուն մէջ կ'իյնայ: Եւ այդ գեղեցկութեան աղբիւրը ինքը կեանքն է: Կարելի՞ է տրամարանել պարը, երաժշտութիւնը եւ կամ հոգիի տուածը, որուն կերպարանք չենք կրնար տալ՝ ըլլայ կրօնական, ըլլայ բանաստեղծական իմաստով: Ատոր համար Աստուած մը հոգիով միայն կարելի է ըմբռնել: Այստեղ բանաստեղծութիւնը կը բաժնուի տրամաբանութենէն: Ինչ ալ ընենք, քրիստոնէական հոգին, որ կը բաժնուի մարմնէն, յափտեմական միջոցի մը մէջէն <անընթաց> երկիւնք հասնելու, հասնել՝ չափելու հոգեկան խորութիւնը եւ միշտ ալ պիտի փնտռէ այդ անծանօթը: Այդ անծանօթին մօտեցողները ւաւելի շատ արուեստագետները եղած են, որովհետեւ անոնք հաւատացած են, որ գերագոյն ուժը կեանքին մէջ է, եւ ուզած են այդ ուժը արտայայտել եւ յանդգնած են ստեղծագործել աստուծոյ մը պէս:

Յունաստանը մեծ եղաւ եւ տուաւ արուեստ, տուաւ գիտութիւն, որովհետեւ յունաց աստուածները շատ ւաւելի մարդկային էին, գերագոյնին հետ ունէին մարդկային բոլոր թերութիւնները, ունէին սէր, տարփանք, ատելութիւն, ձիերու ախտը եւ յաճախ ալ մարդոց մէջ կը պատէին, ու կիները աստուածներէն կը յղանային:

Այս նախաբանէն յետոյ ուրեմն անցնինք միօրին:

Հայ ժողովուրդը նոյնպէս ունեցած է ուրիշ կարեւոր ազգերու մման հեթանոսական ուժեղ շրջան մը, եւ նոյնպէս ուրիշ քաղաքակրթուած ազգերու մման ունեցած է ազդեցութիւններ մեր լիզուի, մեր գրականութեան ու մեր հաւատալիքներուն: Ազդուած ենք, եթէ յաղթած ենք եւ կամ պարտուած: Մեր մշակոյթին մէջ եկած, իրենց ձեռքը ձգած են հռովմեացիները, պահլանները, ասորիները, արաբները, Բիւզանդիոնը եւ նոյնիսկ թուրքը: Եւ սակայն մեր հեթանոսական շրջանին ւաւելի յարած ենք յունական մշակոյթին:

Ծանօթ է Մեծն Տիգրանի շրջանը: Մշակոյթ էր, երբ յունական աստուածները կը բերուին ու կը տեղաւորուին Հայաստանի զանազան գաւառներուն մէջ: Արքունիքին մէջ կար յոյն թատրոն յոյն դերասաններով: Թատերագիր էր Տիգրանի որդին՝ Արտաւագոյը, որ թատերգութիւններ գրած է յունական լիզուով: Կը տեսնենք, որ Երուսալէն շատ առաջ մենք ւաւելի կամոյս ըմբռնած ենք յունական մշակոյթին արժէքը: Այդ պայմաններուն մէջ անկարելի էր, որ մեր դպրութիւնը, առանձնապէս մեր դիցազներգութիւնը չազդուէր յունականէն:

Խորեմագիի «Պատմութիւնը» մեզի համար շատ ամուր հիմք էր, որուն վրայ կառուցուեցաւ մեր ազգային պատմութիւնը: Խորեմագին այդ պատմութիւնով ուրիշ շատ կարեւոր աշխատանք մը տարաւ. «կարի առասպել» մեր դիցազներգութիւններէն փոքրիկ կտորներ եւ յաճախ առասպելը խառնեց իրականութեան հետ: Ուրեմն Խորեմագի պատմութիւն ըլլալէ ւաւելի աղբիւր է մեր դիցազներգութեան, ինչպէս ըսի, սահմանափակ ձեւով տրուած: Խորեմագին այդ տեսակէն շատ ւաւելի կարեւոր գործ կատարած է:

Մեր շատ կարեւոր բանասէրներէն Էմին, Եղիշէ Դուրեան, Մանուկ Արեղեան, ուրիշներ համաձայն են, որ Խորեմագիի տուած առասպելները եղած են մասերը մեր դիցազներգութիւններու, որոնք կորսուած են որպէս ամբողջութիւն:

Մեր կարեւոր դիցազներգութիւններէն եղած է Հայկի եւ Բելի պատմութիւնը, որ կու գայ բարիի ու չարի դիցաշին կոիւներէն ու կը հասնի մինչեւ «Մասունցի Դաւիթ» մեր հոյակապ դիցազներգութիւնը:

2. Չեռագրի 1-15 պարբերութիւնները «Բանաստեղծութիւնը» հողվածի տեքստի մի մասն է՝ որոշ փոփոխություններով:

3. Համաստեղը մատիտով ջնջել է. «Այդ բոլորը տեսակ մը հրապոյթներ էին՝ կից իրեն կանչելու եւ փոխադարձաբար»:

4. Համաստեղը մատիտով ջնջել է. «յիշելու համար մի քանի անուններ միայն»:
5. Համաստեղը մատիտով ջնջել է. «Բանաստեղծութիւնը ոչ միայն կեանքի արտայայտութիւնն է, այլև արտայայտութիւնն է մեր կեանքին: Եւ որ մեր հոգիին մէջ անծանօթ ծալքեր կը բանայ»:
6. Համաստեղը մատիտով ջնջել է. «որ Աստուած լեզու ընէ»:
7. Համաստեղը մատիտով ջնջել է. «մէկ կողմ ձգելով քէմանչէն ու աշուղը»:
8. Համաստեղը մատիտով ջնջել է. «ես մանաւանդ ունի մկարագիր»:
9. Համաստեղը մատիտով ջնջել է. «Հսկայ ապառաժներ, որ երբ կ'ընկղմէին ծովին մէջ, իրենց հետ կ'ընկղմէին մառի թշնամի մառեր»:
10. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մենք կը տեսնենք, որ մեր դիցաբանութիւնը ունի բարոյական մեծ արժէք: Խորեմագիի «Պատմութիւն»ը մեզի համար շատ ամուր հիմք է, որուն վրայ կառուցուեցաւ մեր ազգային պատմութիւնը»:
11. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ահա թէ ինչո՞ւ կ'ըսենք, որ ժողովուրդի բնագոյը միշտ ալ առողջ է ու ճիշդ: Նոյն ժողովուրդը Նարեկն ալ պահեց՝ հաւատալով անոր մեծ արժէքին: Պահեց՝ հիւանդներու վրայ որպէս աղօթք կարդալով»:
12. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մեր պատմագիրները, որոնք առհասարակ կրօնաւորներ եղած են, երբեք լաւ բան ունեցած չեն ըսելիք արքունիքին մասին»:
13. Համաստեղը մատիտով ջնջել է. «Քրափոտկին ընկերային առաջին ուժեղ շարժումը պատմութեան մէջ թոնդրակեցիները կը յիշէ»:
14. Համաստեղը մատիտով ջնջել է. «Այդ պայմաններուն մէջ էր, որ մեր անգիր դպրութենէն յետոյ կը ստեղծուին մեր կրօնական դպրութիւնը եւ բանաստեղծութիւնը»:
15. Համաստեղը գրել է. «Այդ փոքրիկ կտորը պիտի կարդայ Սօնա Տէտէրեան»:
16. Համաստեղը մատիտով ջնջել է. «Բայց որ անոր բառերը, տողերը կարծես ջիղերով հիւսած են. միս ու ոսկոր կայ»:
17. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մենք կը տեսնենք, որ անապատականը իր մէջ մեղքը սպաննելով՝ կը սպաննէ կեանքը»:
18. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ան հօգոր պայքար կը տանի»:
19. Համաստեղը էջերը սոսնձել է, եւ մախադասութիւնը թերի է մնացել:

20. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ինչպէս ըսի, մեր 4-րդ, 5-րդ դարէն մինչեւ Նարեկացիի դարը՝ 10-րդ դար, շատ բան փոխուած չէր»:
21. Համաստեղը մատիտով ջնջել է. «Կիլիկեան շրջանին արեւի մօտեցած էին եւրոպական մշակոյթին»:
22. Համաստեղը մատիտով ջնջել է. «Արեւելքին եւ Արեւմուտքին կոուադաշտը եղած է»:
23. Համաստեղը մատիտով ջնջել է. «ինչպէս քիւրտերն են եւ կամ եզեւտիները»:
24. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մեր Ֆրիկը արեւի Մահարիին կարելի է մօտեցնել իր ծագումով եւ ներհայեցողութեամբ»:
25. Պահպանվել է ձեռագրի 42-րդ էջի 2 տարբերակ: Երկրորդում կարդում ենք. «սակայն կը տեսնէ, որ կրօնաւորները սնանկացուցեր են քրիստոնէական բարոյականը: Մի քանի տող միայն կրօնաւորներուն դէմ», եւ կրկնվում է բանաստեղծութեան հատվածը:
26. Համաստեղը մատիտով ջնջել է. «անկախ քրիստոնէական ըմբռումն»:
27. Չեռագիրն ընդհատվում է անավարտ տողով. «Գրեցին գրաբարով, գրեցին արուեստով մը, որ շատ էր հինգած, եւ մեր վաճառներուն մէջ միշտ ...»:

## ՄՇԱԿՈՅԹԸ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 13 համարում:

## ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 13 համարում:

1. Համաստեղը մատիտով ջնջել է. «որ կեանքը բազմակողմանի է ու գունատը»:
2. Չեռագրի 2-րդ էջը չի պահպանվել:
3. Չեռագրի մի քանի էջեր չեն պահպանվել:
4. Չեռագրի մի քանի էջեր չեն պահպանվել:
5. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մեզի համար պիղծ էր այն, ինչ որ մահմետական էր՝ ըլլայ արաբներէն եկած, ըլլայ պարսիկներէն»:
6. Համաստեղը մատիտով ջնջել է. «Եւ կ'ըսեն, որ բանաստեղծութիւնները գրել է յետոյ զիշերները անոր երաժշտութիւնը կը յօրինէր»:

7. Համաստեղը մատիտով ջնջել է. «եւ գիտական աշխատութիւնները»:

8. Համաստեղը մատիտով ջնջել է. «Արդէն ծանօթ է Ստեփան Նազարեանի, Գրիգոր Արծրունիի եւ «Մշակ»ի շուրջ հաւաքուած մտաւորականներու ուժեղ պայքարը մեր վանքերուն եւ եկեղեցականներուն դէմ»:

9. Հատված է Ա. Իսահակյանի «Յա՛ր, աչերդդ արեգական շողքով վատված ծովի նըման» բանաստեղծութիւնից (Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 1, Ե., 2003, էջ 346)

10. Համաստեղը մատիտով ջնջել է. «միջեւ, արեւի ճիշդ ըսել՝ ան ամենէն շատ իր տուրքը տուած է աշուղական գրականութեան: Աւելի շատ»:

11. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ան չունի Սայաթ-Նովայի տաղերու ծանրութիւնը: Սայաթ-Նովան կարդացած ատենդ կը զգաս, որ տողերը ոսկիի պէս սուղ են եւ ծանր նոյնպէս ոսկիի հնչումութիւնով ներդաշնակած»:

12. Համաստեղը մատիտով ջնջել է. «Չարենց իր լաւագոյն լիրիքական կտորները տուաւ Սայաթ-Նովայի հետետողութեամբ: Արդէն մեր նորելուկ բանաստեղծները ծանր ճիգ կ'ընեն դառնալու սայաթնովայական, ինչպէս Յովհաննէս Շիրազ եւ շատ ուրիշներ»:

13. Համաստեղը վերջին երկու պարբերութիւններն ընդօժել է եւ գրել ո՛չ: Էջի ձախ անկյունում Համաստեղը մատիտով գրել է. «Հայաստանի նոր գրականութեան մէջ հետեւելու աստիճան ուժեղ է Սայաթ-Նովայի ազդեցութիւնը»:

Չեռագրի մի քանի էջեր չեն պահպանվել:

Հոդվածի սեւագիր մի էջը, կարծում ենք, լրացնում է պակաս հատվածը. «Նաղաշ Յովնաթան՝ 18-րդ դար, եւ Սայաթ-Նովա՝ նոյնպէս 18-րդ դար: Յիշելու համար մի քանի կարեւոր անուններ: Նաղաշ Յովնաթանին մէջ արդէն կը տեսնուի աշուղական տաղաշափական ձեւը: 18-րդ դարը առաւելապէս <անընթաց> շրջանն է, որ մեր դպրութեան մէջ շատեր անծանօթ մնացած են եւ շատեր ալ կորսուած են թրքական, պարսկական լեզուին մէջ: Այդ երկու երկիրներն ալ անոնց համար ընդարձակ դաշտ էր, երբ ճամբու կ'իյնային՝ իրենց չօճուրով, քմանչով մէջլիսներ կազմելու եւ կեռգալներու գովքը երգելու, գովքը երգելու շահի, խանի, սուլթանի, երբ հասած է պալատական աշուղ ըլլալու մեծ պատուին: Եթէ կ'ըսենք, որ Խաչատուր Արովեան աշխարհաբար լեզուին մէջ կարեւոր գործ կատարեց: Այդ գործը եկած էր մեր 13-րդ դարէն՝ սկսած տաղասացներէն՝ միայն այն տարբերութեամբ, որ արեւի ուժեղ էր Արովեանին մէջ: Մեր ժողովրդական մօթիւները օգտագործելու, մեր «Ջան կիլումներուն» չափն ու երաժշտութեան արդէն ուրիշ

ճանապարհով հասան Աղայեան, Թումանեան, Իսահակեան: Մինչ մեր արեւմտեան բանաստեղծութիւնը պոլսականի ազդեցութեան տակ էր, եւ հարագատ ըլլալու համար մեր ժողովրդականին թրքական «բաներով» որոշ գոյն տուած են, այն գոյները, որ գործածած են մեր տաղասացներն ու աշուղները:

Նահապետ Բուչակէ յետոյ, ըսեմ, որ Բուչակը չեն դասեր մեր աշուղներուն մէջ, չենք իմացեր, որ Բուչակը երգուած ըլլայ, ան բանաստեղծ էր, ուժեղ բանաստեղծ, ինչպէս Սայաթ-Նովան՝ իր երգերով եւ քմանչով: Բուչակէն մինչեւ Սայաթ-Նովա մենք հազիւ կը հանդիպենք յայտնի եւ անյայտ աշուղներու, եւ դժուար է ըսել, թէ մեր աշուղականը աստիճանական վերելք ունեցած է մինչեւ Նաղաշ Յովնաթան եւ Սայաթ-Նովան: Կը տարուիմ ըսելու, որ Նահապետ Բուչակէն մինչեւ Յովնաթան եւ Սայաթ-Նովա մօտ երկու դար <անընթաց> անջրպետը: Գուցէ անյայտութեան մէջ կորսուած են մեր աշուղները: Նաղաշ Յովնաթանը իր լեզուով եւ երաժշտական չափերով կեցած է մեր միջնադարեան տաղասացներու եւ աշուղներու սահմանին վրայ: Գրած է սիրոյ երգեր, խրատականներ, երգիծանք, սատիրական, գուարթ կտորներ, կրօնական տաղեր, «Գովասանութիւն առ Աստուած», «Տաղ առ Տիրամայր»: Վերջին երկուքը գրած է աշխարհաբարով: Իր լեզուի եւ բարոյական խրատներու մէջ վանական կրթութիւնը արեւի շատ <անընթաց> եւ ինքը արեւի աշխարհիկ իր կեանքով: Ուտել, խմել, երգել, սիրել, որովհետեւ չգիտենք՝ վաղը ինչ պիտի տայ մեզի: Ուժեղ է անոր զանշաղ. իր շրջանի կրօնաւորներու ծաղրը՝ սուր եւ նոյնիսկ կոպիտ հեզմանքով:

Երբ կը կարդաս Նաղաշ Յովնաթան, կը զգաս, որ մեր միջնադարեան տաղերգուներէն կու գայ: Իսկ երբ կը կարդաս Սայաթ-Նովա, կը գտնես ինքնատիպ, բոլորովին ինքնատիպ բանաստեղծ մը իր ձեւով եւ բովանդակութեամբ: Եւ արդէն կ'անց կ'առնեն եւ կ'ըսեն. «Եւ արդէն ստեղծագործութիւն է»:

14. Համաստեղը մատիտով ջնջել է. «թերեւս առաջին անգամ գործածող եղաւ Յովհաննէս Պլուզ կամ Երզնկացի իր բարոյախօսական, խրատական բանաստեղծութիւններուն մէջ»:

15. Համաստեղը մատիտով ջնջել է. «Սայաթ-Նովան ընդգրկած է պարսկական գազելներու ձեւը, որուն վարպետը եղած է Հաֆըզ»:

16. Համաստեղը մատիտով ջնջել է. «Պարսկական գազելի ձեւը պահած է հարագատ որպէս օրէնք այդ ձեւի բանաստեղծութեան»:

17. Համաստեղը մատիտով ջնջել է. «որ ծանօթ է եւ մնաց որպէս հայ կիստօներու լեզուն»:



18. Համաստեղը մատիտով ջնջել է. «նման դասական բառերով»:

19. Գրականության և արվեստի թանգարանում Համաստեղի գրադարանում, պահվում է «Մայեաթ-Նովայի տաղերը» (Թեհրան, 1943) ժողովածուն՝ գրողի բազմաթիվ նշումներով և բառերի բացատրություններով:

Գրքի 7-րդ էջում տպագրված է կազմողի՝ պրոֆ. Ռ. Աբրահամյանի «Չօն Մայեաթ-Նովային» քառյակը.

Էխշեմեղ\* ջունուն\* իմ էլի Օրիան Բարա Թահերի պես.  
Տաս տարի է ման իմ գալի, ձեռիս դալամ\* շահերի պես.  
Հիմի նըստիմ իլթիզարով\* թարիսի անիմ\* մահերի պես.  
Ես մե փուրըր նավի նման, քու գովքըն ծով, Մայեաթ-Նովա:

Հողվածում հիշատակված բանաստեղծությունների վերնագրերն ու որանցից մեջքերած հատվածները տրված են «Մայաթ-Նովա, Խաղեր (Լիակատար ժողովածու)» գրքից (Երևան, 2003):

20. Համաստեղը մատիտով ջնջել է. «Չեմ գարմանար, որ «ջրկիր» ալ ըսած ըլլան, որովհետեւ նոյն բանաստեղծութեան մէջ կը գրէ.

Վո՞ր մէ դարդին կու դիմանաս, դու ջըրատար Մայաթ-Նովա...

Ըլլայ դիրկար, ըլլայ ջրատար, գործածած է որպէս սիմպոլ՝ աւելի գեղեցիկ և ուժեղ արտայայտութեան համար»:

21. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ի՞նչ պիտի ըլլայ վիճակը, երբ տարիներու թիւը 500 մը ըլլայ»:

22. Համաստեղը մատիտով ջնջել է. «Վրացիները՝ միայն 2000, իսկ մնացած 4000ը՝ պարսիկներ և թուրքեր»:

23. Համաստեղը մատիտով ջնջել է. «Իսկ հայերէնը, ինչպէս ըսինք, այն օրերու բնիկ թիֆլիսեցու բարբառն է, որ տեղական ինքնուրոյն նկարագիր ունի և օտար հոլովումներու ենթարկուած»:

24. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ինչ ալ ըլլայ, անտարակոյս, որ թուրք սուլթան Մահմուտի հովանաւորութեան արդիւնքն է «Շահնամէ»:

25. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մենք տեսանք, թէ ինչպէս»:

26. Մայաթ-Նովայի մի քանի բանաստեղծությունների տեքստերի վերջում կարդում ենք. «Էս խաղը ովոր սորվի, Դոստիի խաղի ձեռով ասէ, թէ վուր չիմանաս, հարցրու, թէ՛ «Գօզալլար յղոնաղիմա քախ դաստա քեդաստա թարփանուր»:

27. Մայաթ-Նովայի մի քանի բանաստեղծությունների տեքստերի վերջում կարդում ենք. «Դիպա ու ենգի դունիայի ձեռում. հանգն դազալի Արուֆնի ասած»:

Համաստեղը մատիտով ջնջել է. «որ <անընթ> բանաստեղծութիւն է «դաստա քեդաստա» եղանակին յարմարացած»:

28. Համաստեղը մատիտով ջնջել է. «Ամէն մէկ տող մէյնէկ գիտեր են»:

29. Խոսքը «Աշխարհս մէ փանջարա է» բանաստեղծության մասին է:

30. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մայաթ-Նովա ունի իր տողերուն մէջ այդ քարուաններու ճամբու գունագեղ նկարագրութիւնը. «Գ՛ուզիմ՝ ումբըս հենց անց կացնիմ» բանաստեղծութեան մէջ գունագեղ նկարագրութիւն կայ քարուանի և ապրանքներուն՝ անէն մէկ տող կապելով կեանքին հետ (էջ 106)»:

31. Չեռագրի 40-րդ էջը չի պահպանվել:

32. Համաստեղը մատիտով ջնջել է. «չորրորդ երգի մէջ նկարագրած կնոջ բնաւ չի նմաներ»:

Համաստեղի գրադարանում պահվող «Մայաթ-Նովայի տաղերը» գրքում (Թեհրան, 1943) չորրորդը «Վունցոր վուր դարիք բըլբուլըն մէ տարով բաղին կարօտ է» բանաստեղծությունն է:

33. «Մայաթ-Նովայի տաղերը» գրքի 135-րդ էջում տպագրված է «Կիսամուրազ մի՛ սըլպանի» բանաստեղծությունը: Համաստեղը հիշատակում է բանաստեղծության վերջին հատվածը.

Մայաթ-Նովէն իմ, ճար չունիմ,  
Յիս վարդըն իմ մին խար\* չունիմ.  
Թէ դուն ասիր՝ եադ\* եար չունիմ,  
Իդրարըդ\* էդ էր, նազանի:

34. Մայաթ-Նովայի՝ վերը հիշատակված ժողովածուի 94-րդ և 104-րդ էջերում տպագրված են «Չիս տաում, թէ լա՞ց իս էլի» և «Ես քու դիմէքըն չիմ գիղի՛ ջավահիր քարին նըման իս» բանաստեղծությունները:

35. Համաստեղը մատիտով ջնջել է. «զինքն սպաննիլն է»:

36. Համաստեղը մատիտով ջնջել է. «ամուսնացած կինը այս է, և կամ աւելի իտանական»:

## ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 14 համարում:

1. «Ասպարեզ» օրաթերթի 1966-ի դեկտեմբերի 13-ի համարում տպագրված է «Համաստեղի հուսկ բանին» հոդվածը, որտեղ նկարագրվում է գրողի հորելյանական հանդեսը Լուս Անջելեսում 1966-ի նոյեմբերի 26-ին, որը նրա կյանքում, ավա՛ղ, վերջինն էր: Հանդեսի մամրամասները, շնորհավորական ելույթները նկարագրելուց հետո մի հատված է տպագրված Համաստեղի «Ժողովուրդը եւ գրականությունը» վերնագրված ելույթից. «Ի՞նչ պիտի ըլլայ հայ գրականության ուղղությունը: Գրականությունը կանք է եւ պաշտպանություն: Գրականութեամբ կը ճանչնանք ազգը: Հայ գրագետը այդ դերն է, որ կը կատարէ: Հայ ժողովուրդը կը դառնայ մարմին, հայ դատը եւս կ'օգտուի:

Պոլիս եւ Թիֆլիս, որ հնոցներն էին մեր գրականութեան, աշտարակէն կ'ուզէին պատգամել. զարթօնքովն էր, որ ճանչուեցաւ մեր ժողովուրդը: Ազգը հաւաքական գոյութիւն եւ պաշտպանութիւն է:

Մշակոյթը իմացական աշխարհն է:

Շատ քիչ քաղաքական յարթանակի շրջաններ ունեցած ենք մեր պատմութեան մէջ. մշակոյթն է, որ յարթանակ եղած է: Հաւատք, որ ժառանգած ենք նախնիքներէն: Այդ ժողովուրդէն եկած է մեր հաւատքն ու իմաստութիւնը:

Վարդանանցը հոգեկան եւ մշակութային մեծ յարթանակն մըն էր:

Մեր ազգային պատմութիւնը կը սկսէր քրիստոնէութեամբ: Հեթանոսական գրականութիւնը ոչնչացաւ. ատոր ապացոյցն են Անիի ամբողջ մատենադարանները, մեր հին գրոյցները, Վահագնի գրոյցը...

Քրիստոնէութիւն ընդունելով՝ որդեգրեցինք Արեւմուտքի քաղաքակրթութիւնը. քրիստոնէութիւնը, ապա, աղքատներու պաշտպանութեան կրօնն էր: Հայ գրերու գիտը կը պարտինք քրիստոնէութեան: Մեր հոգետը հայրերը, մտատրականները խոտ կ'ուտէին, մշակոյթ կը կերտէին...»:

Համաստեղի վերջին ելույթի տեքստը՝ «Կարասի երգը...», հրատարակել ենք «Համաստեղ. Մոռացված էջեր» ժողովածուի Բ հատորում:

2. Համաստեղը մատիտով ջնջել է. «ըլլայ հեթանոսական, թէ քրիստոնեական»:

3. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մեր եկեղեցականութիւնը փակուեցաւ վանքերուն մէջ՝ իրեն հետ փակեց հայ ժողովուրդը»:

4. Համաստեղը մատիտով ջնջել է. «Պէտք է ըսել, որ այդ շարժումը շատ աւելի կանուխ սկսաւ Արովեսանով՝ Թիֆլիսի մէջ»:

## ԳԱՒԱՌԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 15 համարում:

1. Համաստեղը մատիտով ջնջել է. «մասնատրապէս Աւետարանի քարգմանութենէն յետոյ»:

2. Հաջորդ նախադասութեան միտքը հստակ չէ. «Եկեղեցական առանձնաշնորհուած դասակարգը եւ Աստուծոյ հետ գործ ունեցող դասակարգին համար, իսկ ժողովուրդը արհամարհուած դասակարգ էր՝ ռամիկը»: Համաստեղը մատիտով ջնջել է. «ու մենք այսօր իսկ կը տեսնենք. ժողովուրդը մեր գաղութին մէջ պաշտպանութիւն փնտռած է եկեղեցիին»:

3. Համաստեղը մատիտով ջնջել է. «Հայ ժողովուրդին մէջ աւելի շուտ զարթնեցաւ Վերածնունդը, քան Երոպայի մէջ»:

4. Հաջորդ նախադասութեան միտքը հստակ չէ. «Առաջին պահ ստեղծուեր էր արդէն, ծնունդ առած էր վաղուց ձեւ ստացած, խառնուած քարթառի եւ գրաբարի հետ»:

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Չեռագիրը պահվում է ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդի 17 համարում: Նույն ֆոնդի 29 համարում պահվում է Համաստեղի ձեռագիրը, որ վերնագրված է «Լեզուի մասին»:

1. Համաստեղը մատիտով ջնջել է. «Նախնական մարդը իր նախնական արտաքինով գուցէ աւելի թափանցիկ էր, քան մեր օրերու բանաստեղծները»:

2. Համաստեղը մատիտով ջնջել է. «իրենց կանանչ բառերով»:

3. Համաստեղը մատիտով ջնջել է. «իսկ ինչ որ եկած է ու թափած, առուներ եղած են»:

4. Համաստեղը մատիտով ջնջել է. «Կարիւրը եղած է այն, որ»:

5. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մեր ժողովուրդը ազատ չէր ցոյցներու: Կար Պոլիսը, կար Թիֆլիսը՝ որպէս գաղութ»:

6. Համաստեղը մատիտով ջնջել է. «նշխարքի գոյն ու նիհար»:

7. Համաստեղը թղթի ձախ անկյունում գրել է. «Պրովանսալ շարժումը գրականութեան մէջ»:

8. Համաստեղը մատիտով ջնջել է. «գործածելով նույնիսկ «խընայը» բառը»:

9. Համաստեղը մատիտով ջնջել է. «Մտաւորապէս այն դերը կատարեց, ինչ որ իրմէ շատ առաջ կատարած էր Խաչատուր Արովեան կովկասահայ լեզուի եւ գրականութեան մէջ»:

10. Համաստեղը մատիտով ջնջել է. «Գրողը մեր նախնիքներու կողմէն կը կանչուի»:

### ՀՈՂՎԱՏՆԵՐ ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՐԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ, «ՍՐԲԱԶԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ, ՏՈՍԱՐ ՄԱԶԻԱԿԱՆ» ՀԱՄԱՍՏԵՂԻ»

Տպագրված է «Ակօս» հանդեսի 1957թ. 9-րդ համարում:

1. Ամսագրի համարում կա ծանոթագրություն. «Հանգուցեալ Ն. Աղբալեանի ներկայ յօդուածը՝ գրուած 1941 մարտի 9-ին, մնացած է անտիպ իր թուղթերում մէջ»:

Գրուած է հեղինակին լեզուն եւ ոճը խստօրէն բնորոշող եղանակով մը՝ խիտ, կուռ ու պատկերաւոր. իր մտածումները պերճ ու վերամբարձ, ազնուական գունաւորում մը կու տան ամբողջ գրութեան:

Կու տանք նոյնութեամբ:

2. Համաստեղի «Սրբազան կատակերգութիւն կամ Տոմար մաքիական» երգիծական պոեմը առաջին անգամ տպագրված է «Հայրենիք» ամսագրի 1938թ. 4-9 համարներում: Ն. Աղբալեանը փակագծերում նշել է ամսագրի համարը եւ էջը:

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ, «ՀԱՄԱՍՏԵՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՈՆԵՐՈՒ ՄՐՆԳԱՀԱՐԸ»

Տպագրված է «Յուսարեք» օրաթերթի 1987թ. փետրվարի 7-ի համարում:

ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ, «ՀԱՄԱՍՏԵՂ»

Տպագրված է Եղուարդ Պոյաճեան, «Դէմքեր» (Պէյրուք, 1966) գրքում՝ էջ 279-284:

### ՍՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ, «ՅԱՌԱԶԱԲԱՆ»

1. Տպագրված է «Համաստեղ, Երկեր Ա հատոր» (Պէյրուք, 1966) գրքում՝ էջ 279-284: Մ. Իշխանի խոսքն ընդմիջվում է Համաստեղի ինքնակենսագրությամբ:

2. Համաստեղի ավագ դուստրը՝ Լորիկ (Լորեւտա) Համաստեղը, մեզ նվեր է ուղարկել հոր ծննդավայրին նվիրված պատկերազարդ «Բարջանն գիւղ. Համայնապատում (1600-1937) գիրքը, որ լույս է տեսել Բոստոնում, 1938թ.:

3. Նամակներից մեկում Լորիկը պատմում է մի դեպք հոր կյանքի այդ շրջանից. Վարդաթիլ գյուղի ուսուցիչ Կելենյան Համբարձումը եկեղեցում կարդում էր համապատասխան հատվածներ Աստվածաշնչից: Նա երիտասարդ էր, երեւի մի քիչ էլ սիրահարված, ու մի օր հատվածները շփոտասարդ էր, Լսվեց պատկառելի ծերունիներից մեկի դիտողությունը, թե վարժապետը շարքով օրերը շփոթել է: Լորիկն ավելացնում է, որ տարիներ անց հայրը հուժկու էր եղել ու պատմում այս դեպքը, բայց երեւի հենց այս օրն էլ որոշեց այլևս ուսուցչությամբ չզբաղվել: Տասնամյակներ անց Ն. Աղբալեանն ու Լ. Շանթը փորձեցին Համաստեղին համոզել տեղափոխվել Բեյրուք եւ դասավանդել Ճեմարանում, բայց Համաստեղն անդրդվելի մնաց:

4. Համաստեղի անճնական գրադարանի հայերեն գրքերից 704-ը պահվում են ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդում: 2007թ. մարտին առիթ ունեցանք լինելու Համաստեղի տանը. ամռոտանալի է տանիքից թափվող ջրի ու առաստաղի կտորների տակ ծվարած անգլերեն գրքերի պատկերը: Փորձում ենք այդ գրքերը նույնպէս տեղափոխել Հայաստան, եթե գրողի դուստրերը հայտնեն իրենից համաձայնությունը:

5. Համաստեղը ծրագրել էր երեքհատորանոց վեպ գրել:

6. Համաստեղի նամակները տես «Համաստեղ. Նամակների» (Երեւան, 2003) գրքում:

7. Համաստեղի դյուցազնավեպը լույս է տեսել 1952թ.:

8. Վրիպակ է. «Սրբազան կատակերգութիւն»ը եւ «Տոմար մաքիական»ը նույն պոեմի վերնագրերն են. Համաստեղի սատիրական պոեմը «Հայրենիք» ամսագրի 1938թ. 4-9-րդ համարներում տպագրված է «Տոմար մաքիական կամ Սրբազան կատակերգութիւն» վերնագրով: 1960թ. գրողը պոեմը հրատարակեց «Այծետոմար» վերնագրով: Այս վրիպակը կրկնվում է նաեւ «Յառաջարան»ի վերջում՝ Համաստեղի գրքերի ցանկում, որտեղ պոեմը անտիպ է համարվում:

9. Տիկին Համաստեղը՝ Սրբուհի Պեկյանը (1903-1966), մահացել է 1966թ. մարտի 4-ին:

10. 1960թ. մայիս-հունիս ամիսներին ԱՄՆ-ում էր գտնվում Վազգեն Ա կաթողիկոսը (1908-1994): Համաստեղը Նյու Յորքում հանդիպեց Վեհափառին և ստացավ Հայաստան մեկնելու բաց հրավեր, որը մի քանի անգամ կրկնվել է. Համաստեղը երազում էր հայրենիք գալ Հայաստանի գրողների միության հրավերով՝ որպես հայ գրող և ոչ թե որպես գրասաշրջիկ:

11. Համաստեղը մահացել է 1966 թ. նոյեմբերի 26-ին:

### ՊԱՐՄԻԿ ԳՐՈՂ ՄԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ ՄԱՍԻՆ

Տպագրված է «Յուսաբեր» օրաթերթի 1968թ. փետրվարի 2-ի համարում:

1. «Համաստեղ և Սաղեղ Հեղայեաթ. Սաղեղ Հեղայեաթ, Թափառաշրջիկ շունը» գիրքը լույս է տեսել 1967ին, Թեհրանում:

**ԲԱՌԱՐԱՆ**

արար – հայր, մեծ եղբայր  
 աղար – համեստություն, բարեկրթություն  
 այլույս – գլխաշոր  
 ասկ – ազգ, տոհմ  
 արա՛ տալ – կտրել տալ  
 արախչի – ծոպավոր լաչակ, որ փաթաթում էին գլխարկի շուրջը  
 ար – ամոթ, ինքնասիրություն  
 արբար – տանջալից, հոգեհան  
 ար-նամուս – բարոյական վարկ, պատիվ  
 բար – համեմատ, համապատասխան (բար անիլ – համեմատել, հավասարեցնել)  
 բահար – զարուհ  
 բանկալ – եկեղեցիների մոտ փոքրիկ սենյակ, որտեղ մոմ են ծախում  
 բրդշակ – ավերակ  
 բունիաթ – հիմք  
 գափ – գվարճություն, խրախճանք, ծաղրախոսություն  
 գելարան – տանջանքի (խոշտանգման) գործիք  
 գեմի – նավ  
 դար – տառապանք, ցավ, դժվարություն, նեղություն  
 դեկան – դահեկան  
 դեղճան – խարտյաշ, ոսկեզույն  
 դի – կողմ  
 դիրա – դիպակ, մետաքսե գործվածք  
 դիվան – դատ, դատատեան  
 դնդեր – մկան  
 դուրզար – հյուսն, փայտագործ  
 եադ – օտար, խորթ, անծանոթ, քշմամի  
 եանա-եանա – այրվելով, տոչորվելով  
 եավրուս – սիրելիս  
 եարսուն, եարսուն – երեսուն  
 ելկեկ – բաճկոնակ  
 գավալ – դժբախտություն, փորձանք

գար – ոսկի, ոսկեթել  
 գարբար – ոսկեհյուս, բեհեզ  
 էզի – այգի  
 էթիրուն – օժանելիք  
 էլ – օտար, ուրիշ  
 էհալ – գնալ  
 էնթարի – շապիկ  
 էշխ – սեր, ներշնչանք  
 է՞ր – ինչո՞ւ  
 ըխտիարցեր – ծերացել  
 թալցնել – ուշաթափվել  
 թախլա – պտույտ  
 թայգուլ – ծաղկեփունջ  
 թավադություն – իշխան լինել  
 թարաֆ – կողմ  
 թարիփ – գովք, մեծարանք  
 թարլա – արտ  
 թինթին – գայլի, շան քայլածք՝ վազքը  
 ժանգառք – երեկոյան մթնշաղ  
 ժըրիլ – մեծանալ, հասունանալ  
 ժմնած – չափահաս, հասուն  
 իխտիար – կանք, իրավունք, արտաճություն  
 իղրար – խոստում  
 ինթիզար – կարոտով սպասում  
 Իսնակ (Յիսնակ) – տեղական հարսանիքների շրջանը  
 իւլար – սանձ  
 լեվանթեն – արեւելքցի  
 լուքֆ – բարեհամբույր, գթոտ, սիրալիր  
 լոտա – դեզ  
 խալխ – ժողովուրդ, ամբոխ  
 խան – իջեւանատուն  
 խանատ – թել  
 խար – ա) անարգանք, բ) փուշ  
 խարար – ավեր, խախուտ  
 խափով – խաբեությանը  
 խեր – բարի, բարիք  
 խզար – սղոց

խոնջա – կերակուրի սեղան  
խորադա – գրույց, խոսակցություն  
խորոզկնչուն – արլորականչ (այգաքաց)  
խոֆած (խոօ) – զառամած ծերուկ  
խրամեք – բախտ  
կազ – կոփվ, վեճ, հակառակություն  
կաղամար – թանաքաման  
կաւառ – թու՛մք՝ ջրի հոսքը կանոնավորելու համար  
կարկաժ – դրոմ  
կարշնեղ – ջուտ, ամրակազմ, ջլապինդ  
կէտիշ – քայլվածք  
կէնճ – երիտասարդ, խակ  
կինէ – դարձյալ  
համալ – բեռնակիր  
հայա – ամոք, պատկառանք  
հայալու – համեստ, ամոթխած, պատվով  
հաւա – եղանակ  
հէնչանք ըլի – միայն թե, այնպես լինի  
հէլպէթ – անշուշտ, իհարկե  
հիչ – բնավ, բոլորովին  
հուլ – թանկագին քար՝ հեքիաթային օձի բերանում  
հուքմի – հէքիմ – տեր, դատավոր, իշխանավոր  
դազար անիլ – դատաստան անել, պատժել  
դալամ – գրիչ, վրձին  
դամաթ – հասակ  
դարդուդամիշ – ազնիվ տեսակի եղեգ  
դուլ – ծառա, ճորտ  
ճեղ – ճյուղ, ոստ  
ճրդարա – գլանակ  
ճրդմ – մանրէ, միկրոք  
ճոթոն – ջրհորդան  
մակամ – միթե, արդյոք  
մասսա – ճիպուտ, խթան՝ եզ, զոմեշ քշելու համար  
մխտել – մշտել(հրել) խթանով  
մորճ – ծառի կանաչ ճյուղ, մատղաշ  
մրեղ – մանր հարդ  
մրեղիլ – փոշիանալ

նամարդություն – տմարդություն, նենգություն  
նէֆէս – շունչ  
նըհախ – անօրեն, անարդար, անիրավ  
շար – արդարություն, օրենք, դատաստան  
շղախ – խամ հողով եւ մանր հարդով շղախ  
շըլլի (շըլիմս) – վիզ  
շոպել – շոքթել, գողանալ  
չամուռ – ցեխ  
չարըխ – ոտնաման  
չարչապալա – չարչարանք  
չարտախ – պատշգամբ  
չափար – ցանկապատ (մացառից)  
չէրշի – շրջիկ վաճառական, մանրավաճառ  
չուալ – պարկ  
պագի – երբեմն  
պաշխայ – տարբեր  
պառոշ – կաթսա  
պիլէ – անգամ, նույնիսկ  
պէրէքէթ – օրհնութիւն, առատութիւն  
պիչիմ – ձեւ, կառուցվածք  
պիթիւն – ամրողջ  
պոստել – փոթոտել՝ կնճռել (հոնքերը)  
ջալլաթ – դահիճ  
ջայր – ճախարակ  
ջունուն – խենթ, ջունուն ըլիլ – խենթանալ  
ռանգ – գույն, երանգ  
սարըր – համբերություն  
սարխոշ – հարքած, գինով  
սդառ ըլլիլ – պատսպարվել  
սեպեպ – պատճառ, միջնորդ  
սեւտա – սեր  
սէլավ – ջրհեղեղ, հեղեղատ  
սէնէղ – մուրհակ (ժամկետ)  
սըրըխ – երկար ձող, սյուն  
սհաթ – ժամ  
սմսեղուկ – ռոզրմելի, խղճուկ, կեղծավոր, նենգ  
սօթաել – քշտել, սօթաած – քշտած,

սուչ – մեղք, հանցանք  
 սուրաթ – դեմք, պատկեր, կերպարանք  
 վեր-վերան – ավերակ  
 վիրա-վիրա – արագ-արագ  
 տար – օտար  
 տարտ, տերտ – վիշտ (դարդ)  
 տառապա – պատուհանի փեղկ  
 տէտէ – հայրիկ, մեծ հայր՝ պապ  
 տինճ – հանգիստ, անտարրեր  
 տիվանա – խենթ, խելացնոր  
 տնտնալ – մտորել, դանդաղել  
 տուլ – շղարշ  
 ցուիք – տանիքի եզրը՝ պատը անձրեւից ու ձյունից պաշտպանելու համար  
 ուլնիկ ապակի – ապակե հուլունք  
 ումնիշ ընել – սպասել, ակնկալել  
 ուսուլ – կամաց  
 փէճ – ուս  
 փորթուքալ – նարինջ  
 փոնգտալ – փռտալ  
 փուտրա (ռուսերեն) – դիմափռչի  
 քար – օգուտ, արդյունք, փոխարերական իմաստով՝ քարայր  
 քարան – ազնվություն, վեհանճնություն, քարերտություն  
 քարիւղ (կազեաղ) – նավթ  
 ֆախաթ – բայց  
 Primitive – տարրական, պարզունակ

«ՀԱՄԱՍՏԵՂ ՄՈՒԱՅՎԱՍ ԷՋԵՐ» ԳՐԶԻ Ա, Բ, Գ, Դ  
 ՀԱՏՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

ԱՅՏԵՏՈՍԱՐ .....	Գ 93
ԱՂՕԹԱՐԱՆ .....	Գ211

ԱՐԶԱԿ ԷՋԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Գանկի մը հետ .....	Բ 11
Զրոյց համայնավար բարեկամի մը հետ .....	Բ 20
Էնը .....	Բ 9
Թոնին եւ Հալլէի գիսատըղ .....	Ա 72
Հարօն եւ Կարօն .....	Ա 83
Հէրեաթի մատանին .....	Գ 76
Հրեայ բարեկամս .....	Գ 63
Յալիտեանական ճամբորդը .....	Ա 88
Շէն գիւղի հին օրերէն .....	Ա 70
Սքիփին .....	Գ 74
Տիկիմներ եւ պարոններ .....	Բ 15
Փոքրիկ աղջկայ մը յուշերէն .....	Գ 80
Փոքրիկ հտալիտը .....	Գ 87
Քաջ Նազար .....	Գ 37

ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամէն անգամ, որ կ'երթամ ծանօթի մը դազադին .....	Բ 6
Աստուածամօր արցունքները .....	Գ 21
Ա՛յ, մտերիմ թիթեռնիկ .....	Բ 5
Գիտեմ՝ օր մը պիտ մեռնիմ .....	Գ 33
Եթէ .....	Գ 20
Ես կը ճանչնամ քեզ .....	Գ 5
Երեք ջահերը բոսոր .....	Ա 7
Երթանք մեհեանն հաւատքին .....	Ա 6
Երբ այն օրերուն երախայ էիր .....	Ա 13
Երբ իրկունն էր մեր գեղին .....	Գ 25

Թափօրը .....	Ա 11
Շովու տեսիլներ .....	Ա 10
Հայու ոգին .....	Բ 6
Հոգույս մեջ յոյսը վաղուան .....	Գ 28
Հին հեքիաթ .....	Գ 14
Մահուան տեսիլներ .....	Ա 12
Մայր իմ անուշ .....	Գ 31
Յոյսն անստոյգ գալիքին .....	Գ 30
Յուշ .....	Գ 30
Նազանի .....	Գ 26
Սպասում .....	Գ 27
Ստուերներ .....	Ա 8
Ստուերներ .....	Ա 9
Վերջալոյսին ներքեւ .....	Ա 9
Փոքրիկ քանաստեղծը .....	Ա 14
Քառնակներ .....	Գ 29

**ԴՐԱՍՍՏԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ ԵՎ ԴՐԱՍՍՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ**

Այծետոմար .....	Դ 84
Անձրեւը .....	Դ 65
Աղանիները .....	Դ 32
Երնէկ այն օրերուն .....	Դ 77
Համբոյրը .....	Դ 6
Ա. Սահակ եւ Մ. Մաշտոց .....	Ա 262
Տունը .....	Դ 52
Քրիստոսի երկրորդ գալուստը .....	Ա 194

**ԵԼՈՒՅԹՆԵՐ .....** Բ 55

**ՁԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ**

Գաւառը եւ Թլկատինցին .....	Ա 274
Շրջանը եւ Բաֆֆին .....	Ա 299

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Լուսեան մեջ .....	Բ 33
Եօթը իշխանուհիները .....	Բ 34
Խալի ճիպրան .....	Բ 50
ա) «Մարգարէն» գրքից .....	Բ 53
բ) «Խելագարը» գրքից .....	Բ 53

**ՀԱՍՍԱՍԵՂԻ ԾՆՆԴՅԱՆ 70 ԵՎ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 50 ԱՍՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻՑ**

Ա. Ալիքյան. «Հայ գյուղի անճաման սրնգահարը» .....	Բ 246
Առանձար. «Համաստեղի յորելանը Ուաշինկթընի մեջ» .....	Բ 252
Արամ Հայկազ. «Այց Մոնթրէալի մեր գաղութին» .....	Բ 256
Արամ Հայկազ. «Համաստեղ եւ իր գրականութիւնը» .....	Բ 266
Արամ Հայկազ. «Մեր Համաստեղը» .....	Բ 289
Բիւզանդ Կռանեան. «Վերջին 36 ժամը Համաստեղի հետ» .....	Բ 274
Շահանդուխտ. «Փունջ մը ծաղիկ Համաստեղին» .....	Բ 291
Շ. Նարդունի. «Գրագեղը, որ փնտռելու ելած էր իր ժողովուրդը» .....	Բ 286
Ս. Սարունի. «Ահա կաղնին Շանթահար» .....	Բ 281
Վազգեն Ա կաթողիկոսի ողջոյնը. Համաստեղի հորելյանը .....	Բ 245
Վրէժ Արմէն. «Մոնթրէալի հայութիւնը տօնեց Համաստեղի գրական գործունէութեան 50-ամեայ յորելանը» .....	Բ 261
Վրէժ Արմէն. «Անմոռանալի...» .....	Բ 264

**ՀՈՂՎԱԾՆԵՐ**

Ա. Ահարոնեանի մահուան առթիւ .....	Բ 67
Աւետիս Ահարոնեան .....	Բ 181
Բանաստեղծութիւնը .....	Բ 100
Գրիգոր Զօհրապ .....	Բ 119
Գուրգէնի մահուան քառասուցը .....	Բ 140
Եղիա Գասպարեան .....	Բ 70
Եղիշէ Դուրեան .....	Բ 113
Եղիա Երուանդ Սելեքեան .....	Բ 189
Ժամադրութիւն մը .....	Բ 168



Ինչպե՞ս կը գրեն մեր գրագետները .....	Բ 62
Ինչպե՞ս կը մեռնին, ինչո՞ւ կը մեռնին .....	Բ 137
Կարապի երգ... ..	Բ 192
Կ. Ջարեան բանաստեղծը .....	Դ 119
Կորիւն Մկրտիչեան .....	Բ 61
Կ. Մասունիի «Գրական գոհարներ» գրքին առիթով .....	Բ 78
1600-ամեակը .....	Բ 132
Համաստեղը Արամ Հայկազի մասին .....	Բ 138
Համաստեղը Ռ. Դարբինեանի մասին .....	Բ 191
Հայ հին բանաստեղծութիւնը .....	Բ 103
Հաւատաւորը՝ Վահան Նաւասարդեան .....	Բ 95
Հաւատաւորը .....	Բ 151
«Հաւատք քո կեցուցեն գեղ» .....	Բ 170
Մայիսաս .....	Բ 127
Մաննիկ Պերպրեան .....	Բ 110
Մենք չենք մոռնար .....	Բ 87
Մ. Օգանեանի մահուան քառասունքին առիթով .....	Բ 178
Յուշեր՝ Արամ Պետոյեանի մահուան առիթով .....	Բ 175
Նիկոլ Աղբալեան .....	Բ 64
Ն. Աղբալեանի եւ Յ. Օշականի մասին .....	Բ 72
.....	.....
Շաւարշը .....	Բ 98
«Ոսկան Երեւանցի» .....	Բ 141
Մփիւքը եւ հայ գրականութիւնը .....	Բ 91
Մողմոն Թէլիքեանի մահուան առիթով .....	Բ 107
Մա «Հարուրդտ չէր»ը .....	Բ 154
Մայաթ-Նովայի 250-ամեակի առիթով .....	Բ 160
Տարիներ առաջ .....	Բ 149
Տրդատ Գազանճեան .....	Բ 186
Տօքո. Քերթիկեանի գրքին առիթով .....	Դ 124

**ՀՈՂՎԱԾՆԵՐ ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՐԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Ն. Աղբալեան, «Սրբազան կատակերգութիւն, Տոմար մաքիական» Համաստեղի» .....	Դ 269
Դ. Անանու, «Համաստեղ, «Գիւղը» .....	Բ 235
Ռ. Դարբինեան, «Համաստեղ» .....	Բ 200

Մ. Իշխան, «Յառաջարան» .....	Դ 287
Յ. Յովակիմեան, «Համաստեղը եւ իր «Գիւղը» .....	Բ 239
Ե. Պոյաճեան, «Համաստեղ» .....	Դ 283
Յ. Օշական, «Գիւղը» .....	Բ 218
Լ. Շանթ, «Համաստեղ՝ Հայաստանի լեռներու սրնգահարը» ..	Դ 280
Ա. Զօպանեան, «Համաստեղի «Անճրեւը» .....	Բ 242
Պարսիկ գրող մը Համաստեղի մասին .....	Դ 297

**ՀՈՒՇԵՐ**

Ա. Պուլուզեան, «Համաստեղ մեր գիւղէն է» .....	Գ 261
Արամ Աֆարեան, «Մեզի հետ էր Համաստեղ» .....	Գ 293
Բ. Նուրիկեան, «Համաստեղի հետ (տպաւորութիւններ եւ մտածումներ)» .....	Գ 246
ԼԱԴՕ, «Համաստեղին» .....	Գ 277
Կարօ Մասունի, «Համաստեղի հետ» .....	Գ 253
Մ. Մարութեան, «Համաստեղի հետ» .....	Գ 286
Մ. Նուրեան, «Համաստեղ» .....	Գ 289
Յ. Կարապետեան, «Ես տեսայ Համաստեղը» .....	Գ 243
Յովիկ Օ. Էթեան, «Համաստեղ» .....	Գ 267
Ռուբէն Դարբինեան, «Համաստեղ (իր յորելեանին առթիւ)» .....	Գ 273
Մար. Սահակեան, «Համաստեղի յորելեանին առթիւ (յուշ մը)» .....	Գ 271
Մեայուհ Սիսեռեան, «Համաստեղի Տէր-Զօրեան այցելութիւնը» .....	Գ 298
Մեզա, «Ապրումներ» .....	Գ 278
Բիշըրա Պատըլեան, «Յուշեր Համաստեղէն» .....	Գ 283
Վիքթորիա Ասլանեան, «Համաստեղի յիշատակին» .....	Գ 291

**ՉԵՆԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐ**

<Ռ. Դարբինեանի յորելեանի առթիւ> .....	Դ 131
<Գերապատի Մեսրոպ Արքեպիսկոպոս Հապոզեան> .....	Դ 140
Յեղին գաւակը .....	Դ 144
<Նոր սերունդի համար> .....	Դ 146
<Ապրիլի 24> .....	Դ 150

Հատվածներ ձեռագրերից	Դ 157
Ի՞նչ է գրականությունը	Դ 168
Հայկական բանաստեղծությունը մեր անգիր դարերեն մինչև միջին դար	Դ 187
Մշակույթը	Դ 211
Աշուղական գրականության մասին	Դ 213
Ժողովուրդը եւ գրականությունը	Դ 234
Գաւառի գրականությունը	Դ 244
Հայոց լեզու	Դ 254

**ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ**

Անծանօթ տաճարը	Ա 41
Անօթինները	Ա 24
Առաջին ծիլը	Ա 59
Ave Maria	Ա 21
Գերեզմանափորները	Ա 28
Դիւահարը	Ա 19
Ecce Homo	Ա 16
Իգնատիոսը	Ա 61
Իրիկամուտ	Ա 57
Խելագարի մը ըուպայաթը	Ա 44
Կանանչ այբերով աղջիկը	Ա 54
Կարմրալանջը	Ա 55
Հեթանոս պատարագը	Ա 51
Նկարներ	Ա 34
Չարչարուած մերկություններ	Ա 16
Պանն էր անցեր իմ պարտեզէն	Ա 58
Մխալ չկար	Ա 66
Մայիտակ գիշերներ	Ա 18
Մեւ կատուն	Ա 37
Վերջալոյսին հետ	Ա 39
Փարոսը	Ա 24
Ջննադատը	Ա 63

**ՎԻՊԱԿ**

ա/ Մայիտակ լեռներու մէջ	Ա 102
բ/ Նիւ Եոթքի մէջ	Ա 131
գ/ Վերադարձ	Ա 152

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ	3
----------------	---

**ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ**

Համբոյրը	6
Աղաւնիները	32
Տունը	52
Անձրեւը	65
Երնէկ այն օրերուն	77
Այծետոմար	84

**ՀՈՂՎԱՄՆԵՐ**

Կ. Չարեան բանաստեղծը	119
Տօրը. Զերիկեանի գրքին առիթով	124

**ՉԵՌԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐ**

<Ռ. Դարբինեանի յորելեանի առթիւ>	131
<Գերապատի Մեսրոպ Արքեպիսկոպոս Հարպոզեան>	140
Տեղին գաւակը	144
<Նոր սերունդի համար>	146
<Ապրիլի 24>	150
Հատվածներ ձեռագրերից	157
Ի՞նչ է գրականությունը	168
Հայկական բանաստեղծությունը մեր անգիր դարերեն մինչև միջին դար	187
Մշակույթը	211

Աշուղական գրականութեան մասին .....	213
Ժողովուրդը եւ գրականութիւնը .....	234
Գաւառի գրականութիւնը .....	244
Հայոց լեզու .....	254

**ՀՈԴՎԱԾՆԵՐ ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՐԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ն.Աղբալեան, «Մըրազան կատակերգութիւն, Տոմար Մաքիական» Համաստեղի» .....	269
Լ. Շանթ, «Համաստեղ՝ Հայաստանի լեռներու սրնգահարը» .....	280
Մ. Իշխան, «Յառաջարան» .....	287
Ե. Պօյաճեան, «Համաստեղ» .....	283
Պարսիկ գրող մը Համաստեղի մասին .....	297

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ..... 302

**ԲԱՌԱՐԱՆ** ..... 335

«ՀԱՄԱՍՏԵՂ «ՄՈՒԱՅՎԱԾ ԷՋԵՐ» ԳՐԶԻ Ա, Բ, Գ, Դ ՀԱՏՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ	341
--	-----

**Հ Ա Մ Ա Ս Տ Ե Ղ**

**ՄՈՒԱՅՎԱԾ ԷՋԵՐ**  
Հատոր Դ

Խմբագիր՝ Սրբագրիչ՝ Էջադրումը Համակարգչային մուտքագրումը Կազմի ձևավորումը	Գոհար Օֆելյա Աննա  Նարեկ եւ Նարե Քրիստինա	ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՄԻՋԱՅԵԼՅԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ  ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
---	--	--

Հանձնված է տպագրության՝ 21.12.2007 թ. :  
Չափսը՝ 60 x 84 1/16: Թուղթ՝ օֆսէթ: Տպագրություն՝ օֆսէթ:  
Հրատ. 18.5 մամուլ, տպագր. 22 մամուլ = 20.5 պայմ. մամուլի:  
Տպարանակ՝ 500: Պատվեր՝ 115:

ԵՊՀ-ի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ-ի տպագրատուն, Երևան, Արուստյան 52

**Գալուստ Կյուլպենյան հիմնարկության հովանավորությամբ  
Երևանի համալսարանի հրատարակչությունը  
լույս է ընծայել հետևյալ գրքերը**

1. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Գ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Գ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Գ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիտական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»):
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. **Չրաչյա Գարրիեյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. **Նահապետ Քուչակի** բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Չրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:
8. **Շարական (ժողովածու)** - Աշխարհաբարի վերածեցին **Ա. Մարդյանը և Գ. Մարդյանը**, 2001 թ.:
9. **Չրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. **Բարկեն Հարությունյան** - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. **Վարդան Արևելցի** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. **Պետրոս Մարդյան** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. **Պետրոս Արզարյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. **Օայլակ Անթապյան** - Հովհաննես սարկավազ Իմաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարաո** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաթևոսյան** - Կուբան ասպագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բաղիկյան** - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. **Չրաչյա Գարրիեյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. **Չրաչյա Անառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան

- (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիտական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Պետրոսյան** - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. **Հայնրիխ Դյուրշման** - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Հայնրիխ Դյուրշման** - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Չաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգաձե** - Հայերեն-վրացերեն գրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Չրաչյա Անառյան** - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովհաննես Սարկավազ Իմաստասեր** - Լուծումը «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. **Սանդրո Մարգարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. **Կարեն Իզրաշեան** - Աարայրի ճակատամարտից դեպի Նուարակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Հարություն Ղեկայան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Հովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Անանյան** - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր-Ղևոնդյան** - Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփանյան** - Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Չրաչյա Անառյան** - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաքնություն, Շարահյուսություն, 2005 թ.:
41. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արամ մատենագիրներ Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից բարգմանությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**, 2005 թ.:
42. **Սահակ Բազյան** - Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:
43. **Ռամազ Գորգաձե** - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:
44. **Պավել Շարաբխանյան** - Հանգաբանություն, 2005 թ.:
45. **Ռուբեն Ղազարեան** - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. **Գրիգոր Զօհրապը** ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ **Ալեքսոս Շարուրեանի**, 2006 թ.:

47. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ.:
48. **Դ. Պողոս Գոճանեան** - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, 2006 թ.:
49. **Հայկազ ժամկոչյան** - Հայ ժողովրդի պատմություն, 2006 թ.:
50. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ: Աշխատությանը **Ս. Հարությունյանի**, 2006 թ.:
51. **Սաքենիկ Գեջյան** - Անի: Մատենագիտություն, 2006 թ.:
52. **Հարություն Ս. Վենետիկյան, Ջերալդ Ա. Ուորֆիլդ** - Համաշխարհային առևտրի ֆինանսավորում, 2006 թ.:
53. **Շահէ Արքեպիսկոպոս Աճեմեան**, Հայերէն Աստուածաշունչը, 2006 թ.:
54. LA MINIATURE ARMENIENNE - Collection du Matenadaran, 2006 թ., «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ
55. Արևելագիտության հարցեր (Հոդվածների ժողովածու, հատոր VI), 2006 թ.:
56. **Հակոբ Սիմոնյան** - Վերին ճավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.:
57. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, 2006 թ.:
58. **Լիլիթ Ջաքարյան** - Աղջոց սուրբ Ստեփանոս, 2007 թ.:
59. **Ալբերտ Խառատյան** - Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), 2007 թ.:
60. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Զ հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
61. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Է հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
62. Մատենագիրք Հայոց, մատենաշար, Ը հատոր, Շարական, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
63. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (Հնագույն ժամանակներից մինչև Բ. հ. 298 թվականը), հատ. 1, 2007 թ.:
64. **Ռուբեն Ղազարեան, Հենրիկ Ավետիսեան** - Նորայայտ բառեր գրաբարում, 2007 թ.:
65. **Ֆելիքս Հայրապետյան** - Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, 2007 թ.:
66. **Արմեն Մալխասեան** (կազմող) - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր 9, 2007 թ.:
67. **Ղեմի դը Ռուժմոն** - Սերը և Արևմուտքը (թարգմ. Ալ. Յուփյանի), 2007 թ.
68. **Սերոբ Ղազարյան** - Հայոց լեզվի պատմություն, 2007 թ.:
69. **Լաւրենտի Յովհաննիսեան** - Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (V դար), Ազգային Մատենադարան, հ. ՄԽ, 2007 թ.:
70. **Համաստեղ** - Մոռացված էջեր, հատոր Դ, 2007 թ.: